



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՊԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՆԱՅ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅԵՐՈՒ ՑՐՈՒՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԸ

(ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՉՆԻ ԺԱ. ԴԱՐ ԳՐԻՍՑՈՍԻ)



Գ Ր Ե Ց

ԱՐՇԱԿ ԱԼՊՕՑԱՃԵԱՆ



ՑԳ. ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

ԳԱՀԻՐԷ 1941

Printed in Egypt

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԻՔԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄԻՈՒՆԻՍԿԱԼ

ՔԱՆՈՒՅՑ

ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԻՔԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

(ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ)

1918 թ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Printed in Egypt

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԻՔԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՍԻՄՅՈՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՅՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԸ ՆՈՒՒՐԵՄ ԱՅՍ ԳՈՐԾԸ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ՏԻԱՐ ՀԱՆԻԿ ԶԱԳԸՐԻ

ՀԱՅ ՑԵՂԻՆ ԱՐԺԱՆԱԻՈՐ ԶԱՒԱԿԻՆ, ՈՐ
ԻՔՐ ԲԱՐԵԿԱՄ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՀԱՅ ԳԻՐՔԻՆ, ՀԱՃԵՑԱԻ ԱԶՆՈՒՕՐԷՆ
ՔԱԶԱԼԵՐԵԼ ԱՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՅԱԻԵՐԺԱՑՆԵԼ ՅԻՇԱՏԱԿԸ ՄԵՐ
ՑԵՂԻՆ ՎՏԱՐԱՆԳԻ ԱՑՆ ԲԵԿՈՐՆԵՐՈՒՆ
ՈՐՈՆՔ ՏԱՐԱԳԻՐ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ,
ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՏԱՌԱՊԵՑԱՆ ԵՒ
ՄԱՇԵՑԱՆ, ԵՒ ՍԱԿԱՑՆ ԿՐՑԱՆ ՄԻՇՑ
ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ՀԱՅ ԱՆՈՒՆԸ:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ը



Ահա այն երկրորդ հասորը զոր Մատուական Սպասարկութեանց Գրասեն-
եակը մտադրած էր հրատարակել եւ յաջողեցաւ ի լոյս բնծայել, մեզ Երջապա-
սող արդի դժնդակ պայմաններուն մէջ:

Աշխարհաստան դէպքերու այս զահավիժումին մէջ, ուր մարդկութիւնը
ամբողջ վաղուան անսուզութիւնը կ'ապրի եւ երբ չենք գիտեր թէ այս փլու-
զումէն յետոյ, վերակազմուած աշխարհին մէջ մեզի պէս փոքր ժողովուրդի մը
ինչ ճակատագիր կ'ուպատ, թերեւս մեր հրատարակչական այս ձեռնարկը Եսե-
րու կողմէ եթէ ոչ անխորհուրդ գործ մը՝ գէթ յանդգնութիւն պիտի համարուի,
զուցէ իրաւամբ, բայց մենք անստան հուսախորհրդ արագայ լաւ օրերու, ար-
համարհեցիմք բոլոր մեզի Երջապասող դժուարութիւնները, եւ Եարունակեցիմք
մեր գործը. այն համոզումով թէ այս դժբախտ օրերուն պիտի յաջորդեն լաւա-
գոյն ժամանակներ եւ մենք պէտք է այդ լաւ օրերուն նամար պատրաստուինք՝
այս գէտ օրերուն մէջ:

Ուրախ ենք որ մեր այս ջանքը գնահատուեցաւ եւ քաջալեր զատ. Հայ ազ-
գային Երջանակին մէջ առաջնակարգ տեղ գրաւող եւ միջազգային դիրք եւ
անուն ունեցող անձնաւորութեան մը կողմէ, որպէս է Յիւր Զաւարթ, Գահիրէի
Թեմական Ժողովի Ասեմապետ եւ Մահաբարա Վալիօններու Միջազ-
գային Ընկերութեան Եղիպտոսի եւ Պաղեստինի Ընդհանուր Տնօրէնը եւ Սուրիոյ,
Իրաքի եւ Պարսկաստանի ներկայացուցիչը, որ ինքնաբերաբար ինքն ստանձնեց
այս հասորին սպազութեան ամբողջ ծախքը՝ գնահատելով մեր գործին ազգօգուտ
հանգամանքը: Առանց այս ձեռնուտութեան զուցէ բնաւ քաջութիւնը պիտի չու-
նենայինք այս հրատարակութիւնը կատարելու եւ ասով լոյս պիտի չտեսներ Ե-
կասիրութիւն մը որ տարիներու աշխատութեան արգասիքն է:

Մեր ջանքը պիտի ըլլայ ամէն հնարաւոր գոնողութիւն բնել չընդհատելու հա-
մար մեր հրատարակչական գործը, արդի պայմաններուն մէջ իսկ, վասնզի խորա-
պէս համոզուած ենք եւ կը հուսանք թէ բոլոր գիտակից եւ իրապէս իրենց
ազգը սիրող Հայերն ալ մեզի պէս համոզուած են եւ կ'ըմբռնեն թէ այս գործին
նման լուրջ ուսումնասիրութիւններու Եատ պէտք ունի Հայ ազգը, ճանչնալու
համար ամէն բանէ առաջ ինքզինքը, որպէսզի կարենայ հարթել իր վերազարթ-
ման ուղին:

Ասոր համար կը կարօտինք օժանդակութիւններու եւ բարեացակամութիւն-
ներու, որոնք կը յուսանք թէ պիտի չզլացուին, եւ մենք պիտի զանգնեմք քաջալերու-
թիւն եւ գնահատութիւն մեր աշխատութիւններուն եւ զոնողութիւններուն համար:

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՍԳԱՍԱՐԿՈՒԹԵԱՆՑ
ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1 Մայիս 1941
Գահիրէ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ջանազան Հայ գաղութներու վրայ ուսումնասիրութիւններ, հրատարակուած են բազմաթիւ հեղինակներու կողմէ, առաւել կամ պակաս խնամեալ աշխատասիրութիւններով, սակայն ցարդ ընդհանուր Հայ գաղութներու վրայ գործ մը չէ պատրաստուած:

Իմ ամենամեծ փափաքս եղած է մօտաւորապէս 40 տարիներէ ի վեր, Հայ գաղթականութեան պատմութիւն մը պատրաստել, եւ այս նպատակին հասնելու համար, ինչպէս առիթով մը արդէն պատեհութիւն ունեցած էի ըսելու, մենամուտութիւն մը դարձուցած էի ինծի համար՝ հին դրամներու, դրոշմաթուղթի, գիրքի եւայլի հաւաքածոներ կազմողներու նման, Հայ գաղութներու մասին վաւերագիրներ, տեղեկութիւններ, ծանօթութիւններ եւ նօթեր հաւաքել (տես. Պատմութիւն Հայ Կեսարիոյ Ժ—ԺԱ):

Իմ սկզբնական մտադրութիւնս էր նախ տալ Հայ գաղթականութիւններու պատճառներուն վրայ ընդհանուր տեսութիւն մը եւ ապա լուսաբանել՝ շրջան առ շրջան՝ Հայերու աշխարհի զանազան մասերը ցրուելուն պարագաները, յետոյ ներկայացնել իւրաքանչիւր աշխարհամասի մէջ իրենց տեղական կեանքը, զարգացումը, գործունէութիւնը եւ կատարած դերը:

Ասիկա տրամաբանական պահանջն էր գործին որուն իրագործման փափաքն ու իղծը կրցան ապրիլ մէջս այսքան երկար տարիներ այնքան այլազան պատահարներու եւ փոփոխութիւններու մէջ, որոնք արգելք կ'ըլլային ոեւէ կերպով քայլ առնելու դէպի առաջադրեալ նպատակը, վասնզի դժուարութիւնները մեծ էին:

Սակայն ես ինծի համար հնարաւորը ըրած եմ հասնելու համար նպատակիս եւ այս ուղղութեամբ պատրաստած՝ մի քանի աշխատութիւններ գաղութներու մասին:

Ասոնց անդրանիկն էր ՌՈՒՄԵԼԻԻ ՀԱՅԵՐԸ, որ 1905 ին Յովսէփ Իզմիրեանց Գրական Մրցանակի Յանձնաժողովէն զնահատուեցաւ առաջին մրցանակով, եւ վերջինը՝ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՀԱՅ ԿԵՍԱՐԻՈՅ, որ գաղութներու տեղական պատմութիւններու շարքին Ա. հատորը ըլլալու սահմանուած էր, վասնզի

իրականութեան մէջ կեդրոնական Փոքր Ասիոյ ամէնէն զլիսաւոր եւ Հայաստանի անմիջական դրացի ու ամենահին ժամանակներէ իվեր հայաբնակ եւ հայաշատ նահանգին՝ Կապադովկիոյ Հայ գաղութին պատմութիւնն էր, զոր պատրաստեցի Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի վարչութեան յանձնարարութեամբ:

Իսկ հատորի չեն վերածուած այլ սակայն հրատարակուած են ԿԻՊՐԱ, ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ (Ամենուն Տարեցոյց, 1927 էջ 210-239) եւ ՊԱՂՏԱՏԻ ՀԱՅՆԻՐԸ (Պարսկահայ Տարեցոյց, 1930 էջ 71-94):

Ասոնց ծրագիրին վրայ ունիմ գրեթէ պատրաստ վիճակի մէջ բոլոր Փոքր Ասիոյ հայաբնակ շրջանակներու մեծ մասին, եւ մի քանի ուրիշ շրջաններու Հայ գաղութներու պատմութիւնները, որոնք եթէ յաջողիմ հրատարակել, պիտի տեսնուի թէ անոնք պատրաստուած են միօրինակ ծրագիրով մը որուն համաձայն, կը ներկայացուի նախ իւրաքանչիւր շրջանակի

1. Աշխարհագրութիւնը կամ բնագրութիւնը.
2. Պատմութիւնը.
3. Հայերու երկիրին մէջ հաստատուիլը եւ կատարած դերը, զանազան ժամանակներու մէջ ունեցած թիւը, եւ այլն.
4. Իրենց կրօնական հիմնարկութիւնները, հոգեւոր վարչութիւնը եւ կրօնական կեանքը.
5. Յարանուանութիւնները.
6. Հայերու իմացական եւ մտաւորական կեանքը, դպրոցները, կրթական մշակները, մշակութային մարմինները, ընկերութիւնները, լսարանները, ընթերցարանները, թատրոնները, լրագիրները եւ տպարանները.
7. Հասարակական կեանք, ազգ. կազմակերպութիւններ, խնամատարական մարմիններ, կուսակցական կեանք.
8. Քաղաքական կեանք.
9. Տնտեսական կեանք, վաճառականութիւն, առեւտուր, արհեստ ու արուեստ.
10. Ազգագրութիւն, բարբառ, վարքուբարք, սովորութիւններ, նախապաշարուածներ, եւ ժողովրդային բանահիւտութիւն.
11. Տեղւոյն վրայ գրուած գրչագիրներ:

Այս ծրագիրը, զոր Կապադովկիոյ հայոց նուիրուած «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» հատորին մէջ գործադրեցի, կարելի է կիրարկել ուրիշ գաղութներու համար ալ, երբ մանաւանդ տեղացիներ, իրենց ծննդավայրին սիրով, իրենց կարելին ընեն

Կեսարացւոց պէս, օգնելու համար տեղեկութիւններու հայթայթման համար:

Այսպէս, կարելի պիտի ըլլայ, ասկէ առաջ զանազան գաղութներու մասին հրատարակուած գործերուն հետ ունենալ Հայ գաղութներու լիակատար պատմութիւն մը:

Բայց այս աշխատութիւնները եւ անոնց նմանները, պիտի չըլլային պէտք եղածին պէս դիւրամբունելի, եթէ չպարզաբանուէին Հայերու Մայր Հայրենիքէն պարբերաբար երկրագունդին զանազան կողմերը ցրուելու եւ ճիւղաւորուելու պատճառները եւ եղանակը, եւ այլեւայլ շրջանակներու մէջ ապրող Հայ գաղութներու իրարու հետ ունեցած կապակցութիւնները: Այս տեսակ աշխատանք մը պիտի բացատրէր թէ Հայերը ի՞նչ պարագաներու մէջ լքած էին իրենց հայրենիքը, ի՞նչ պատճառներով նախապատուութիւն տուած էին այնինչ շրջանակին, ի՞նչպէս տեղաւորուած էին այդ տեղերը, եւ ի՞նչ շարժառիթներ ու ազդակներ ունեցած էին տարածուելու եւ սփռուելու աշխարհի չորս կողմը: Առանց այս սկզբնական եւ իբր ընդհանուր հիմ ծառայելու սահմանուած գործին, հարկ պիտի ըլլար իւրաքանչիւր գաղութի պատմութիւնը ծանրաբեռնել բացատրութիւններով որոնք պարտադրական պիտի ըլլային, բացատրելու համար թէ ինչպէ՛ս Հայերը այդ շրջանակին մէջ երեւցած էին, ինչպիսի՛ շարժառիթներով հեռացած իրենց երկիրէն եւ ի՞նչ ճամբով հոն եկած, մինչ շատ անգամ գաղութ մը մասնիկն է մեծ գաղթականութեան մը որ ուրիշ շատ մը գաղութներու համար իբր մղիչ ազդակ հանդիսացող պատճառներով շարժած է Մայր-Հայրենիքէն:

Բարեբախտ եմ որ այս գործին հրատարակութեամբ առիթը կ'ընծայուի ինծի տրամաբանական ուղիի մը վրայ բերելու Հայ գաղութներու ընդհանուր պատմութեան շէնքը կառուցանելու գործը, որ առանց այս հիմնական աշխատանքին՝ թերի պիտի ըլլար:

Իսկ Հայերու իրենց բնագաւառէն աշխարհի զանազան մասերը մեկնումը թուել, առանց ներկայացնելու այն պայմանները որոնց մէջ ապրած է Հայ ժողովուրդը եւ որոնք հարկադրած են զինքը իր տունը, այգին, արտը լքելու եւ հեռանալու, թերի պիտի թողուր այս պատմութիւնը, վասնզի կարելի չէ եւ ո՛չ ալ բնական, որ առանց պատճառի մարդիկ մղուին

գաղթելու. Հայերու համար այդ ազդակներուն ամէնէն զխա-
ւորը քաղաքական կեանքն էր, իր բազմազան հետեւանքներով.
Ուստի, հարկ էր ներկայացնել զանազան շրջաններու Հայաս-
տանի քաղաքական կեանքը եւ անոր հետեւանքները ժողո-
վուրդին վրայ՝ ընդհանրապէս, եւ իբր ազդակ ու պատճառ գաղ-
թականութեան՝ յատկապէս:

Ուստի, առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու,
ընդհանուր գիծերով աշխատեցայ ներկայացնել իւրաքանչիւր
շրջանի քաղաքական կեանքին պատկերը եւ բոլոր այն երե-
ւոյթները որոնք գաղթելու մղած են Հայերը, գրեթէ շարունակ
եւ անընդհատ:

Բայց գաղթականութիւնները, իրենց խորքին մէջ, արկածա-
խնդրութիւններ են, որոնք կը մատնանշեն յանդուգն, եռան-
դուն եւ անվճատ նկարագիր մը, որ արդարեւ Հայը ունի:

Այդ նկարագիրը ուրիշ տեղ չէր կերտուած այլ իր ապրած
միջավայրին մէջ, որ միեւնոյն ատեն Հայոց հոգեկան, մտա-
ւորական, քաղաքական կեանքին, այսինքն բովանդակ Հայոց
քաղաքական ու քաղաքակրթական պատմութեան աներեւոյթ
ազդակը եւ անխօս դերակատարը եղած էր:

Ասոր համար, անհրաժեշտ նկատեցի փորձ մը կատարել
Հայաստանի աշխարհագրական դիրքին եւ կազմին ազգին
նկարագիրին եւ անոր կեանքին վրայ ունեցած ազդեցութիւնը
պարզելու. ինչպէս նաեւ ներկայացնելու այն պատճառները
որոնք Հայերը մղած են գաղթելու, ինչպէս նաեւ ներկայացնե-
լու գաղթականութիւններու բացասական եւ դրական հետե-
ւանքները:

Այս քննասիրական աշխատանքը որ իբր ներածութիւն կը
գրաւէ այս հատորին առաջին հարիւր էջերը, մեր մէջ քիչ
անգամ մշակուած պատմութեան իմաստասիրութեան համեստ
փորձ մըն է որ կը յուսամ թէ բարեացակամ ուշադրութեանը
առարկայ պիտի ըլլայ բոլոր քննասէրներուն եւ Հայոց անցեալ
կեանքովը շահագրգռողներուն:

Այդ հատուածը պիտի նպաստէ հասկնալի դարձնելու
Հայաստանի ֆիզիքական պայմաններուն եւ քաղաքական
կեանքին միջեւ գտնուած յարաբերութիւնները եւ հետեւանք
իւր աշխարհագրական դիրքին՝ հոն ստեղծուած պայմաններն ու
անոնց անդրադարձութիւնները Հայ ժողովուրդին կեանքին
վրայ՝ ընդհանրապէս եւ իբր ազդակ գաղթականութեանց իրենց

ունեցած նշանակութիւնը՝ մասնաւորապէս. Դէպի հայրենիքի
սահմաններէն դուրս մարդկային ծորումը, որ մեր պատմու-
թեան ամէնէն դժբախտ այլ տեւական մէկ իրականութիւնը կը
կազմէ, չունի ցարդ ամբողջական պատմութիւն մը. Մասնա-
ւորապէս հնագոյն շրջաններէն մեզի հասած ծանօթութիւնները
դիպուածով պահուած հատուկոտոր տեղեկութիւններ են միայն
որոնք շղթայեալ ամբողջութիւն մը չեն ներկայացներ, այլ
ունին ընդհատներ (lacune) զորս լրացնելու կարող չեն մեր առ-
ծեուն ունեցած աղբիւրները. Հետեւաբար, այս քիչ շատ մշու-
շապատ շրջանին համար նոյնիսկ Հայու մը գոյութիւնը օտար
երկիրի մը մէջ ուր զինքն կանխող Հայեր չեն գտնուած, հակա-
ռակ անոր որ գաղթականութեան մը փաստը չէր կրնար նկատ-
ուիլ, աշխատած եմ չանտեսել խորհելով որ այդ մէկը՝ շատերէն
մին կրնար եղած ըլլալ. Նոյպէս տեղ տեղ հարկադրուած
եմ խօսիլ անհատներու վրայ, երբ անոնք կը յենուին հա-
ւաքականութեան մը վրայ կամ ծնունդ կ'առնէին զանգուածէ
մը եւ իրենց պէս Հայերու խումբի մը կռթնած կը գործէին:

Օրինակի համար, քիչ մը լայն տեղ տրուած է Բիւզանդա-
կան կայսրութեան մէջ անհատ Հայերու կատարած դերին,
վասնզի անոնք առհասարակ պատուանդան եւ յենարան
ունէին իրենց պէս ուրիշ Հայերու ներգործական ոյժը, եւ
զանգուածներէն վեր բարձրացած դեմքեր էին:

Ասիկա անհրաժեշտ էր իբր փաստարկութիւն, ցոյց տալու
համար թէ որքան զօրաւոր էր Հայերու դերը այդ կայսրու-
թեան մէջ եւ թէ Հայերը թիւով եւ որակով որքան կարեւոր
տեղ մը կը գրաւէին հոն:

Ասիկա ընել հարկադրուեցայ հակառակ այն ամէն զգու-
շութիւններուն որ ըրած եմ կողմնակի պարագաներու վրայ
չժանրանալու եւ խոյս տալու համար շեղումներէ, որպէսզի
այս գիրքը աւելի չստուարանար. Ուշիմ ընթերցողը արդէն
շուտով պիտի նշմարէ թէ պատերազմին պատճառով թուղթի
տարապայման սղութիւնը հարկադրած է զիս, տպագրութեան
ընթացքին իսկ ձեռք առնելու այնպիսի միջոցներ, առանց
որոնց, դարձեալ այս հատորին ծաւալը աւելի խոշոր պիտի
ըլլար. Աշխատեցայ ուստի տնտեսական պայմաններու հար-
կադրանքին հնազանդիլ՝ առանց վնասելու գործին եւ կրճա-
տումներ եւ համառօտագրութիւններ գործադրել, ինչպէս նաեւ

ջնջել յատուկ անուկներու բառարանը՝ զոր գուցէ ոմանք անհրաժեշտ պիտի նկատեն. նաեւ շատ կը ցաւիմ որ չկրցայ այս գործին կցել մի քանի աշխարհագրական գունաւոր քարտէսներ, յատկապէս այս գործին համար պատրաստուած, վասնզի անկարելի պիտի ըլլար, արդի պայմաններուն մէջ, անոնց պէտք եղած խնամով տպագրութիւնը:

Յառաջիկային եթէ պարագաները ներեն, թերեւս կարելի ըլլայ այս թերիները կերպով մը դարմանել:

Այս գործին բուն նպատակն է ժողովուրդին ծանօթութեան շրջանակը ընդլայնել, ուստի ամէն ջանք ի գործ դրուած է ամէն խաւերու մատչելի դարձնելու համար զայն: Բանասէրներ եւ մասնագէտներ, որոնք Հայոց պատմութիւնը լաւ կը ճանչնան, անշուշտ այս գործին կարգ մը մասերը պիտի գտնեն իրենց ծանօթ իրողութիւններ, սակայն անոնք աւելորդ չեն նկատուած ժողովուրդին համար որ պէտք եղածին չափ գիտակ չէ դժբախտաբար իր պատմութեան: Առանց բոլորովին անգիտակներ ենթադրելու ընթերցողները մեր պատմութեան բոլոր անցքերուն, տեղեակ գիտուններ չնկատեցի զանոնք եւ այսպէս ընտրեցի միջին ճամբայ մը:

Նոյնպէս, նկատելով որ պատմութիւն մը առանց փաստերու եւ վաւերագիրներու ոչ մէկ արժէք կը ներկայացնէ, աշխատեցայ առանց աղբիւրի կամ փաստի ոչ մէկ իրողութիւն ներկայացնել:

Աներկմիտ եմ թէ ամէն ողջմիտ անձ ինծի հետ համաձայն է թէ ասիկա ոչ միայն ամէնէն ապահով՝ այլ նաեւ ամէնէն վստահութիւն ներշնչող եղանակն է պատմագրելու, ուստի գործը ժողովրդականացնելու պատրուակով, չուզեցի անոր ճշգրտութեան վնասել:

Գլխաւոր աղբիւրները այս գործին անշուշտ պիտի ըլլային պատմագրութիւնները, որոնց մէջ նախապատուութիւն տրուած է ժամանակակիցներուն եւ յատկապէս անոնց մէջ օտարներէն անոնց որոնք կը վերաբերին այն երկիրներուն ուր հաստատուած էին գաղթական Հայերը: Այսպէս, Բիւզանդեան երկիրներու Հայոց մասին տրուած տեղեկութիւններու մէջ Յոյն պատմիչները նախադասուած են Հայերէն, ինչպէս նաեւ մեր օրերու պատմիչներուն մէջ նախապատիւ համարուած են

կարծիքները եւրոպացի համաշխարհային համբաւ վայելող հեղինակութիւններու որոնց կարծիքներէն օգտուած եմ:

Ոմանք կը խորհին թէ ժողովրդական հրատարակութեան մը համար աւելորդ է Հայ պատմիչներէն բերուած վկայութիւններու լեզուն պահել. ես պահեցի բնագիրներուն լեզուն, ո՛չ միայն հարագատութեան համար, այլ նաեւ անոր համար որ անոնց գրաբարը չունէր խրթնութիւններ եւ անհասկնալի ըլլալու ընոյթ:

Այս գործը, իր տեսակին մէջ աննախընթաց, անխուսափելի էր որ թերութիւններ ունենար, եւ գուցէ ունի շատ, սակայն կը խորհիմ թէ իբր գաղափար կամ իբր գործադրութիւն բոլորովին խոտելի աշխատանք մը պիտի չնկատուի:

Անոնց որոնց առիթը ունեցած եմ կարծիքը ստանալու, օգտակար նկատած են այս աշխատութեան հրատարակութիւնը, իբր գործ մը որ կրնայ նպաստել Հայ ժողովուրդին ինքնաճանաչութեան եւ այդ ճանապարհով ծառայել ազգապահպանութեան գործին:

Արդ, եթէ իրապէս այս աշխատութիւնը կը ներկայացնէ ռեւէ արժէք մը՝ իբր փորձ կերտելու Հայ գաղութներու պատմութիւնը, այս արժէքը իվեր առնելու պատիւը կը պատկանի ՏԻԱՐ ՃԱՆԻԿ ՉԱԳՂԲԻ, որ, ինչպէս Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի ղեկոյցէն կը հասկցուի, այս գործին հրատարակութիւնը օգտակար դատելով՝ վեհանձնօրէն ինքը հայթայթեց անոր ծախքերը եւ անոր հրատարակութեան պատճառ եղաւ:

Ասոր համար պարտք համարեցի իր պատկերով զարդարել այս հատորին մուտքը եւ գործը իր սիրելի եւ յարգելի անունին ձօնել:

Պարտիմ նաեւ յայտնել հոս հրապարակաւ իմ շնորհակալութիւններս բարեկամիս ՏԻԱՐ ՍՈԿՐԱՏ ՍԱՐԳՍԵԱՆԻ, արուեստագէտ-տպարանատէրին եւ բանասէրին, որ անձնուիրութիւնը ունեցաւ, ինքնաբերաբար յօժարելու կատարել տպագրութեան փորձերու սրբագրութիւնները, իմ աչքերէս խուսափող տպագրական վրիպակներէն փրկելով գործը:


ՆՇՄԱՐՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ց Ա Ն Կ

		ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ			
էջ	2	տող վերջին	1828	1928	Զեկոյց	Ե
>	5	> 27	նամանաւարդ	նամանաւանդ	Յառաջաբան	Է
>	10	> 27	հնդկական	հնդեւրոպական	Վրիպակներ	ԺԴ
>	13	> 22	1918ի	1919ի		
>	58	> 19	Ծավաց	Ծովաց		
>	82	> վերջնօր	բարորութիւն	բարորութիւն	ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	
>	83	> 2	բարորութիւն	բարորութիւն	Ա. Հայաստանի Աւստրիացիները ազգային Հայ պատմութեան	8
>	86	> 20	դրուցքներ	դրութիւնը	Բ. Գաղթականութեան պատճառները եւ հետեւանքները	77
>	93	> 9	Ե.	Զ.		
>	116	> 13	1935	1835		
>	154	> 15	Ներսես	Ներսէն		
>	164	> 33	119-151	149-151		
>	207	> 3	50	90	ՀԱՅԵՐՈՒ ՅՐՈՒՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ	
>	237	> 8	575	975	ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԸ	
>	242	> 25	jusqu'en	jusqu'en		
>	249	> 20	Կուրկուսաս	Կուրկուաս	Ա. Մինչեւ Արշակունեանց կործանում Հայաստանէն դուրս	
>	265	> 35	Le	Les	Հայեր. (Քր.է առաջ Զ դարէն մինչեւ 428 Քր.է յետոյ)	101-143
>	294	> 34	969-789	969-989	Բ. Սասան-Բիւղանդեան տիրապետութեան շրջանի Հայերու	
>	307	> 8	Ժականակներն	Ժամանակներն	գաղթը (428-640)	143-207
>	316	> 23	Վարագվագէ	Վարագվացի	Գ. Արաբական շրջանի Հայ գաղթականութիւնները	
					(640-1040)	207-406

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆԻ ՏՊԱԳՐԵԱԼ ԳՈՐԾԵՐԸ

1. ՄՐԲՈՒՀԻ ՏԻՒԱԼԲ *սպ. Վեներիկ 1901 զին 0.50 Ֆր. գց.*
- 2-4 ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ Ա. ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՑՈՑ 1908. 1909 և 1910 *սպ. Կ. Պոլիս.*
5. ՊՈՒԼԿԱՐԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ *սպ. Վառնա 1910 զին 2 Եգ. դհ.*
6. ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ, *իր կեանքը եւ իր գործը. սպ. Կ. Պոլիս 1919 զին. 10 Եգ. դհ.*
7. ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ, *իր կեանքը եւ իր գործը սպ. Գահիրե 1927 զին 20 Եգ. դհ.*
8. ԱԶԱՏ ՄԻՏՔ *շարաթաթերթ քաղաքական, գրական, տնտեսական. մեկ ամսական 52 թիւ. Գահիրե 1936-7 զին 40 Եգ. դհ.*
9. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ՀԱՑ ԿԵՍԱՐԻՈՑ. Ա. Ե. Բ. Հասոբ *սպ. Գահիրե 1937. զին. 120. Եգ. դհ.*
10. ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՑԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԽՐ ԺԱՄԱՆԱԿԸ *սպ. Սրուսա-դեմ 1936 զին 5 Եգ. դհ.*
11. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆ *սպ. Գահիրե 1940 զին 30 Եգ. դհ.*



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հայ ազգին այսօրուան վիճակը իր բնակչութեան վայրերուն տեսակէտովը կը ներկայացնէ անսովոր երեւոյթ մը: Հայ ազգը այսօր մեծամասնաբար կ'ապրի Հայաստանի սահմաններէն դուրս, Հայաստանը առնելով թէ՛ իր քաղաքական և թէ՛ իր աշխարհադրական կրկնակ իմաստներովը:

Այսօր Խորհրդային Հայաստանի մէջ, որ կը ներկայացնէ քաղաքական Հայաստանը, հազիւ կ'ապրին 748,000 Հայեր, 1926ի Գեղարքերեան մարզահամարին համաձայն: Իսկ աշխարհադրական Հայաստանի մէջ, — որ իր մէջ կը պարփակէ բացի արդի Վրաստանի և Ատրպէճանի Խ. Հանրապետութեանց ինչ ինչ մասերէն, պարսկական Առաքատականի և թրքական Հայաստանի ընդարձակ երկիրները — որքան որ ալ լայնագոյն տարածութեամբ առնենք անոր սահմանները, որոնք դարերու ընթացքին փոփոխութիւններու ենթարկուած են, դարձեալ այսօր հազիւ 1,000,000ի չափ Հայ բնակիչ պիտի գտնենք հայրենի բնազաւառին մէջ, մինչ անկէ դուրս կ'ապրին աւելի մեծ թիւով հայեր(*):

Աւելի առարկայօրէն ցոյց տալու համար այս ցաւալի իրողութիւնը հոս կը ներկայացնենք աշխարհի Հայ բնակչութեան այժմեայ թիւը, իր մեծ ստորաբաժանումներով և կլոր թիւերով:

(*) Այսպէս, ունենալով Հայասանի աշխարհագրական սահմաններու Հայ բնակիչներ կ'ունենանք սա պակերը:

Հայասան	748, 000
Լեռնային Ղարապաղ եւ Գանձակ	200, 000
Զաւախ, Հայկ. Բորչալու	107, 000
	<hr/>
	1, 055, 000

1.	ՀԱՅԱՍՏԱՆ	748,000	
2.	Վրաստան	307,000	
3.	Ատրպեյձան	297,000	1,352,000(*)
4.	Հիւսիսային Կովկաս	177,000	
5.	Սորհրդային միւս երկիրներ	73,000	250,000
Հայոց համագումարը Սորհրդային երկիրներու՝			1,602,000
6.	Սուրիա	120,000	
7.	Հիւսիսային Ամերիկա	120,000	
8.	Թուրքիա { Կ. Պոլիս 65,000 և Գաւառ 35,000 }	100,000	
9.	Պարսկաստան	60,000	
10.	Ֆրանսա	45,000	
11.	Ռուսաստան	30,000	
12.	Յունաստան	30,000	
13.	Պուլկարիա	25,000	
14.	Եգիպտոս և Սուտան	25,000	
15.	Հարաւային Ամերիկա	25,000	
16.	Իրաք	6,000	
17.	Անգլիա, Պելճիզա, Գերմանիա, Հունգարիա, Իտալիա, Լեհաստան	5,000	
18.	Պաղեստին և Անդրյորդանան	4,000	
19.	Կիպրոս	4,000	
20.	Հնդկաստան (Անգլ. և Հոլանտ.)	2,000	
21.	Եթովպիա	1,000	
22.	Մանչուրիա	1,000	603,000
Հայերու համագումարը աշխարհի մէջ			2,205,000

Արդ, այս պատկերէն կ'երեւայ թէ այսօր աշխարհի չորս կողմը ցրուած մօտաւորապէս 2,200,000 Հայերու հազիւ մէկ միլիոնը, այսինքն կէսէն պակաս թիւ մը կ'ապրի Հայաստանի սահմաններուն մէջ, իսկ մնացեալները կ'ապրին աշխարհի զա-

(*) Այս երեք երկիրներու Հայ բնակչութեան թիւերը նշանակուած են 1826ի Գեկեմբերեան մարդահամարին համաձայն:

նազան մասերուն մէջ: Անշուշտ Հայերու համար մեծ դժբախտութիւն մըն է որ այնքան ստուար թիւով Հայեր հեռացած են իրենց հայրենիքէն և իրարմէ և ցրուած աշխարհի չորս կողմերը:

Մայր Հայրենիքէն լաթնուող այս զանգուածները ցեղին կենսունակութեան և ուժին ջլատման և անոր անճիտումին ու տկարութեան պատճառ են անխուսափելիօրէն: Եթէ Հայերը անյիշատակ ժամանակներէ սկսեալ հարկադրուած չզգային ինքզինքնին հեռանալու իրենց հայրենիքէն և կարենային ապրիլ անոր սահմաններուն մէջ, անշուշտ Հայ ազգին վիճակը այսօր տարբեր պիտի ըլլար և ապահովաբար շատ աւելի լաւ քան այն որ է այսօր: Անիկա պիտի ներկայացնէր իր հայրենի երկիրին մէջ գէթ պատկառելի թիւ մը, որ հաշիւի պիտի աւանդէր փոխանակ արձամարհուելու և իր թիւին ստուարութեամբ պիտի կատարէր կարեւոր դեր մը, մինչ այսօր Հայ ազգը ո՛չ միայն իր բնիկ երկիրին այլ նոսեւ աշխարհի զանազան մասերուն մէջ կը ներկայանայ վատոյժ և տկար:

Այսօր և՛ Հայաստանի սահմաններէն դուրս, չկայ երկիր մը ուր Հայը երկրին բնակչութեան մէջ պատկառելի տեղ մը գրաւած ըլլայ: Բնդհակառակը գրեթէ աշխարհի ամէն մասերուն մէջ անիկա աննշան փոքրամասնութիւններ կը կազմէ, ազգուն խլիտներ, կարծես խոշոր զանգուածներու մէջ խորասուզուելու և ընկերուզուելու նախասահմանուած: Այս պատկերը նոր չէ, այսօր չէ ստեղծուած իբր հետեւանք երէկի դէպքերուն և ո՛չ ալ երէկ ստեղծուած է առջի օրուան արկածներուն և պատահարներուն պատճառով: Հնօրեայ պատկերն է ան մշտանորոգ և ամէն օր այլազան երազներով ճոխացած, այնպէս որ մարդ կը տարուի մտածել թէ անիկա ճակատագրական է այս ազգին համար: Արդարեւ հնագոյն ժամանակներէ սկսեալ բազմաթիւ Հայեր, գունդազունդ լքած են իրենց երկիրը և հեռացած՝ անկէ, այլուր փնտռելու համար հանգիստ ու անդորր կեանք մը, ինչ որ չէին կրցած գտնել դժբախտաբար իրենց հայրենիքին մէջ, որ շատ քիչ ունեցած է անդորրութեան, խաղաղութեան, բարգաւաճութեան երջանիկ ժամանակամիջոցներ, իր պատմութիւնը շղթայուած շարք մը ըլլալով ներքին ու արտաքին պատերազմներու, բարբարոս ցեղերու խուժումին, սրածուծեանց, կոտորածներու, և այս կարգի շարք մը դժբախտութիւններու, սրոնցմէ խոյս տալու համար իր բնակիչներէն շատեր նախընտրած են

հեռանալ իրենց հայրենիքէն և ցրուած՝ մօտաւոր կամ հեռաւոր երկիրներ, առժամեայ կամ մնայուն բնակութիւն հաստատելու առաջադրութեամբ և գրեթէ երկրագունդին բոլոր մասերուն մէջ տարածուած

Միջերկրականի աւազանին բոլոր երկիրները, անոր ասիական, եւրոպեան և ասիական ասիերովը, Կովկասի լեռնաշղթային հիւսիսային կողմի երկիրները մինչև Վոլկայի ակերը, Արեւելեան և Արեւմտեան Եւրոպայի զանազան մասերը, մինչև Մայրագոյն Արեւմուտք՝ Ամերիկան, ինչպէս դէպ ի Արեւելք Պարսկաստանը, Աֆղանիստանը, հեռաւոր Հնդկաստանը մինչև Մայրագոյն Արեւելք՝ Չինաստանը և Աւստրալիան իրեն անծանօթ չմնացին:

Հայերը բոլոր այս երկիրներուն մէջ տարածուեցան, հոն տեղերը հաստատուեցան, տեղաւորուեցան և իրենց համար դիրք մը շինելու աշխատեցան:

Բայց ինչո՞ւ այս տարածումը աշխարհի ամէն մասերուն մէջ:

Շատ քիչ անգամ կը պատահի որ նոյնիսկ անհատ մը կամաւորապէս լքէ իր հայրենի երկիրը և օտար աշխարհ մը երթայ բնակելու. իսկ շատ աւելի քիչ անգամ կը պատահի որ բազմաթիւ անձեր հաւաքաբար լքեն իրենց երկիրը, հողը, արտերը, այգիները, և բոլոր ինչքերը, օտար երկիր երթալու համար:

Առանց պատճառի մարդիկ, ինչ ազգի ու որ պատկանին, չեն գաղթեր:

Մեծ ազգերու ծոցէն ելած գաղութները մեկնած են ընդհանրապէս իրենց Մայր-Հայրենիքէն անոր ամէնէն բարգաւաճ չըջաններուն, երբ իրենց երկիրը նեղ եկած է այլևս իր բնակիչներուն տարապայման սնունդին համար, կամ երբ ազգային ճարտարարուեստին կամ վաճառականութեան համար հարկ զգացուած է նոր դաշտեր փնտռելու և հեռաւոր նուաճումներու և այսպէս անոնք իրենց բնաշխարհին օգտակար եղած են միշտ, անոր լեզուն, քաղաքակրթութիւնը, արուեստը և քաղաքական ազդեցութիւնը տարածելով և անոր համար հարստութեան և ամէն կարգի յաջողութեանց աղբիւրներ ստեղծելով, ինչպէս ի հունմն Հելլոսթայի, Փիւնիկէի, Հռոմի, Միջին Գարուն՝ Վենետիկի և Ճենովայի և վերջին դարերուն՝ Փորթուգալի, Ըսպանիոյ, Հոլանտայի, Տանիմարքայի, Ֆրանսայի և Անգլիոյ և այլ գաղութները, որոնք Եգիպտոսի, Բիւզանդական կայսրու-

թեան, Միջերկրականի կղզիներուն մէջ և ասիերուն վրայ, և Հնդկաստանէն մինչև Ճապոն, Ափրիկէի խորերը և մինչև Բարեյուսոյ Գլուխ ծաւարեցին իրենց հայրենիքին անունն ու փառքը և ամէն կողմ շահաստաններ բացին անոր օգուտին համար:

Փոքր ազգերու, ինչպէս Հայութեան ծոցէն կամ Հայաստանէն մեկնող գաղութները, իրենց հայրենիքէն հեռացած են ո՛չ թէ անոր համար որ անիկա յորդ բնակչութիւն մը ունէր կամ ճարտարարուեստ կամ անտեսական անօրինակ բարգաւաճում, որ հրապարակ կ'որոնէր իր արտագրութեանց համար, այլ հեռացած են առհասարակ քաղաքական դժբախտութիւններու կամ անտեսական դժուարութիւններու հարկադրանքին տակ, հալածուած՝ պատերազմներու և անոնց հետեւորդ չարիքներու և ջարդերու սարսափէն կամ սովի կամ երկրաշարժի աղէտի մը մղձաւանջէն:

Անոնք իրենց հայրենիքին փառքը այլուր փոխադրելու տեղ անոր սարսուստեցիկ դժբախտութիւններու պատկերն իրենց աչքին մէջ ունենալով հեռացած են իրենց Մայր-երկիրէն, աւելի փախստական ու սարսափահար աղէտէն խոյս տուողի հանգամանքով, յաճախ առանց նպատակակէտ ու որոշ հայեցողութիւն մը ունենալու, միայն անձնապաշտպանութեան կամ իրենց կեանքը փրկելու բնազդով, լքելով իրենց ստացուածքները, գոյքերը, տունը, արտը և հայրենի կալուածները:

Համեստ ու խաղաղ երկիրի մը բնակիչները, շատ քիչ անգամ է որ կը մտածեն գաղթելու մասին, եթէ արկածախնդիրներ չեն: Փոքր կուշտ, տուն տեղ, ապրելու միջոց կամ ապահով ապրուստ ունեցող մարդիկ չեն գաղթեր: Սակայն երբ մարդիկ անօթի են, ընչազուրկ, աղքատ նամանաւարդ երբ չունին իրենց կեանքին, ինչքին և պատիւին պահպանութեան ապահովութիւնը, և անձարակ, ինքնապատահութենէ զուրկ, ու ձախաւեր չեն, բնական է պիտի փնտռեն տեղ մը, ուր կարենան ապահովել իրենց մարդկային տարրական իրաւունքները և ապրուստի գոնէ համեստ միջոցները:

Այսպէս, կենսաշահութեան և ապահովութեան երաշխիքներ չընծայող երկիրի մը բնակիչները, կամ գոնէ անոնցմէ անոնք որ քիչ շատ ձեռներէցութիւն և ինքնապատահութիւն ունին, իրենց կեանքին սպառնացող վտանգներէն ազատելու համար բնական է որ թողուն իրենց ծննդավայրը, և փնտռեն այնպիսի

տեղեր հաստատուելու համար, ուր կարենան կեանքի, ինչքի և պատիւի ապահովութիւնը ունենալ և գանել՝ գործ կամ զբոսըղում ապրելու համար:

Եթէ աշխարհի մէջ կայ ժողովուրդ մը որ իր բնագաւառին մէջ ամէնէն քիչ վայելած է տեւական խաղաղութեան և անդորրութեան բարիքները — բացառիկ մի քանի պահերէ դուրս — ամէնէն քիչ ունեցած է կեանքի, ինչքի և պատիւի ապահովութիւնը և ամէնէն շատ աւարկայ եղած է յուզումներու, տակնուվրայութեանց, շփոթներու, դուրսէն յարձակումներու, ներսէն խռովութիւններու և կուսակցական պայքարներու, ինչպէս նաեւ կրած անակնկալ հարուածները երկրաշարժի ու սովի պէս բնական աղէտներու, եթէ կայ երկիր մը ուր բառին լիակատար իմաստովը անապահովութիւնը տեւական վիճակ մը եղած է, ան ալ Հայաստանն է, որուն բնակչութիւնը այդ իսկ պատճառով գրեթէ ակամայ գաղթական ժողովուրդ մը դարձած է:

Ուրեմն Հայերը իրենց երկիրը լքած են կերպով մը հարկադրանքի տակ, հեռանալու համար անապահով և խռովուալ աշխարհամասէ մը, ուր բազմապիսի աղէտներու ենթարկուած էին, երկիրին աշխարհագրական դիրքին պատճառով:

Արդարեւ Հայ ժողովուրդը՝ իր բնագաւառին աշխարհագրական կազմին կը պարտէր իր նկարագիրին գլխաւոր գիծերը, բնաւորութիւնը, իր ներքին երկպառակութիւնները, օտար արշաւանքներու ենթարկուելը, իր կղզիացումը, մէկ խօսքով Հայոց պատմութեան ամբողջ ընկերաբանական կողմը:

Նոյնպէս իր բնակավայրին աշխարհագրական դիրքին կը պարտէր Հայ ժողովուրդը այն դժբախտութիւնը որ իր երկիրը կռուախնձոր մը դարձած էր իր զօրաւոր դրոցիներուն միջեւ որոնք կը ցանկային զայն իրենց տիրապետութեան տակ ունենալ, և այս նպատակով շարունակ իրենց բանակները հոն կը զրկէին և պատերազմներու մշտնջենական թատերավայրի կը վերածէին զայն, և այսպէս կը կերտէին անոր քաղաքական պատմութիւնը:

Շատ ճիշտ է ուրեմն Հայ պատմագիրի մը վարանումով ըրած սա յայտարութիւնը թէ «սխալած չենք ըլլար՝ եթէ ըսենք՝ թէ Հայոց երկիրը մեզի կը ներկայանայ իբրեւ աներեւոյթ ազդակ ու անխօս դերակատար մը Հայոց հոգեկան, մտաւորական և քաղաքական բովանդակ կեանքին մէջ» (Հ. Սահակ Տէր-Մով-

սէսեան Պատմ. Հայոց 1932 Ա. 44), վասնզի անժխտելի ճշմարմարտութիւն մըն է որ Հայաստանի աշխարհագրական նկարագիրը՝ խորունկ ազդեցութիւն մը ունեցած է մեր քաղաքական և քաղաքակրթութեան պատմութեան վրայ և ինքն է աղբիւրը մեր ցեղային ակարութիւններուն և ոյժին միանգամայն, ինչպէս նաեւ պատճառը գլխաւոր աղէտներուն որոնց ենթակայ եղած է Հայ ժողովուրդը:

Արդ, նկատելով որ Հայ ժողովուրդին կեանքին դժբախտ պայմաններն էին գլխաւոր պատճառը Հայերու ցրումին աշխարհի ամէն կողմերը, և անոնք ուղղակի հետեւանք էին Հայաստանի աշխարհագրական դիրքին և Ֆիզիքական կազմին, ուրեմն Հայաստանի աշխարհագրութիւնը «պատճառաց պատճառը» կը ներկայանայ Հայ գաղթականութեան:

Հետեւաբար կը կարծեմ թէ մեկնաբանելու համար այն պատճառները որոնք Հայերը մղած են ցրուելու իրենց երկիրէն հեռու, պէտք է բացատրել թէ Հայաստանի աշխարհագրութիւնը ի՞նչ ազդեցութիւն ունեցած է Հայերու ցեղային, քաղաքական, ընկերային, և տնտեսական կեանքին կառուցուածքին — մէկ խօսքով իրենց պատմութեան — վրայ:

Այդ փոխադարձ յարաբերութիւններուն լուսաբանութիւնը, լիովին պիտի բացազրէ այն պատճառները որոնք մղեցին Հայերը իրենց բնագաւառէն բաժնուելու և այնքան հեռուները ցրուելու:

Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԴԱԿԸ՝ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա.

Հայաստանի գրաւած տեղը երկրագունդին վրայ. — Հայաստան Բառուղի ու անցք ժողովուրդներու. — Անտեսականութիւնն ցեղերու եւ իշխանութիւններու Հայաստանի մէջ. — Յեղախառնումներ. — Հայ ազգին բաղկացութիւնը. եւ անոր կասարած ցեղային իւրացումները. — Հայաստանի բնակչութեան ցեղային դիմագծութեան փոփոխութիւնը Վ.Ա. դարէն յետոյ:

Հայաստանի աշխարհագրութիւնը, — որուն վրայ կը կարծենք թէ ամէն Հայ քիչ շատ որոշ գաղափար մը ունի(*), — պէտք է քննութեան առնել երկու որոշ տեսակէտներէ:

(*) Հայաստանի աշխարհագրութեան մասին Հայ եւ օտար բազմաթիւ հեղինակներ գրած են բաւական հանգամանօրէն: Ոեւէ մէկը աշխարհագրութեան դասագիրքէ մըն ալ որոշ գաղափար մը կրնայ կազմել Հայաստանի լեռնագրութեան եւ ջրագրութեան, ինչպէս նաեւ լիներուն եւ այլին մասին: Պակաս չեն նաեւ նկարագրական, ուղեգրական եւ տեղագրական բազմաթիւ աշխատութիւններ որոնք գեղեցիկ կերպով կը պատկերացնեն Հայաստանի աշխարհագրութիւնը, այնպէս որ աւելորդ է կարծեմ մանրամասնութիւններու մտնել:

Հետաքրքիրներ կրնան կարգաւ մասնաւորապէս Հ. Ղուկաս վրդ. Իննիսեանի «Հայաստանի աշխարհագրութիւն» հատորը, եւ Հնախօսութիւնը, Ալիբանի, Յուսիկի Հայրենեացի առաջին գլուխը, եւ Այրարատ եւ Սիւսական հաստիներ եւ ժրաններէն Physiographie de l'Arménie (1870) գործը:

Ջերմապէս յանձնարարելի է անգլիագէտներու համար Լինչի J. Morganի Histoire du Peuple Arménienը եւ Fridtjof Nansenի L'Arménie et le Proche Orient գործերը, եւսլլ բազմաթիւ գործեր, որոնք գրեթէ հասարակաց աղբիւրներ են եւ յանախ միեւնոյն բաներ կ'ըսեն: Այս նպատակով ներածութեան մէջ յանախ զանց աւած են աղբիւրներու նշանակումը, բացի մի բանի մասնաւոր պարագաներէ, ուր առանձնապէս կարծիքի մը արձագանգ եղած են:

Նախ պէտք է նկատել թէ Հայաստան իբր աշխարհամաս, ի՞նչ դիրք ու վայր կը գրաւէ երկրագունդին ցամաքամասին վրայ եւ յետոյ քննել թէ անիկա բնական ու աշխարհագրական ի՞նչ առանձնայատկութիւններով կը տարբերի ուրիշ աշխարհներէ եւ ի՞նչ մասնայատուկ առաւելութիւններ ու պակասութիւններ ունի:

Նախ ուրեմն նկատի առնենք Հայաստանի դիրքը, Ասիոյ ցամաքամասին վրայ:

Առաջին ակնարկով իսկ պիտի տեսնենք թէ Հայաստան կը գտնուի քառուղիի մը վրայ, ուրիշ անցնելու պարտաւորուած են Կովկասեան լեռնաշղթայէն հարաւ խուժող ազգերը եւ ժողովուրդները, ինչպէս նաեւ կեդրոնական Ասիոյ բարբարոս ժողովուրդները՝ դէպի արեւմուտք իրենց արշաւի ճամբուն վրայ:

Նոյնպէս փոխադարձաբար Միջագետքէն դէպի հիւսիս, կամ Փոքր Ասիայէն դէպի Իրան առաջացող բանակները, պարտաւորուած էին անկէ անցնիլ:

Ուրեմն Հայաստան կը ներկայացնէր իր աշխարհագրական դիրքին բերմամբ անցք մը ազգերու, որոնք ոտնակոխ ըրած են երկիրը, եւ դասն ճեղքելով անցած, վասնզի Հայկական Բարձրաւանդակը, դժբախտաբար չըջապատուած չէր անանցանելի պատուարներով, որոնցմէ անցնիլ կարելի չըլլար չըջակայ դրացի ժողովուրդներուն: (M. Dolens et A. Khatch, Histoire des anciens Arméniens, 1907. կամ Պատմութիւն Հին Հայերի, թրգմ. Թ. Քաջրեղոսի, Թիֆլիս 1909 էջ 16):

Հայկական բարձրաւանդակի հիւսիսակողմը եւ արեւմտեան մասերը շատ մը տեղեր մեղմ զաւիւլայրերով կ'իջնեն դէպի Կուրի հովիտը եւ դէպի Կապադոկիա: Արեւելեան կողմը կան Կորդուաց բարձրաւանդակներու շարունակութիւնը, իսկ հարաւային կողմը, հակառակ անոր գահավէժ վայրէջքին դէպի Միջագետք, սակայն եւ այնպէս Տաւրոսը հոն ամէն տեղէ լայն է եւ կարող չէ արգելք ըլլալ, այլ ընդհակառակը շատ դիւրաւ անցանելի տեղեր ունի արեւելեան կողմը Զարի ու Պոթան-Սուի մէջտեղը, իսկ արեւմտեան կողմը՝ Տիարպէքիի եւ Պարբերդի միջև (նոյն): Ըստ Լինչի միայն Մերձան տաղը (Մճուր), որ կ'եղերէ Երզնկայի դաշտը եւ յենարան կը դառնայ Տերսիմի բարձրաւանդակին, կարելի է իսկապէս պատուար կոչել:

Հայաստան, հետեւաբար չէ հանդիսացած անառիկ դիրք մը

և ենթարկուած է տիրապետութեանը կամ խուժումին բանակներու և ժողովուրդներու, ինչպէս նաեւ հարաւորութիւն ունեցած է երբեմն իր սահմանները ընդարձակելու:

Այսպէս պատմական ժամանակներու սկիզբէն Հնդեւրոպական ժողովուրդներու նախնական բնակավայրը նկատուած Սեւ Մովի հիւսիսային և հիւսիս-արեւելեան եզերքներէն մինչև Վոլկայի ստորին հոսանքը տարածուող տափաստաններէն շարժող ժողովուրդներու անցման ճամբայ ծառայած է ան, ամէն անգամ որ Կովկասի կիրճերէն խուժած են այս կէս-վայրենի ժողովուրդները:

Աւելի մօտ ժամանակներու մէջ, Կեդրոնական Ասիոյ տափաստաններուն մէջ ապրող թափառիկ և վաչկատու ժողովուրդներ, որոնք Մանկուլ ցեղախումբին կը պատկանէին, նոյնպէս Հայաստանը ծառայեցուցած են իբր անցք իրենց արշաւանքներուն և դարձեալ Հայաստանը ռանակոխ ըրած են մտնելու համար բարձր մշակոյթ ունեցող երկիրներ:

Հայկական Բարձրաւանդակին աշխարհագրական դիրքը ուրեմն պատճառ եղած է, անցք ծառայելու արշաւող ժողովուրդներու, ինչ որ Հայաստանի սահմաններուն մէջ ապրող ժողովուրդներուն համար ունեցած է ճակատագրական հետեւանքներ և անոր համար այս աշխարհամասին մէջ թէ՛ ցեղեր և թէ՛ պետութիւններ երկար և տեւական կեանք չեն ունեցած երբեք:

Հայաստանէն անցնող ժողովուրդներ շարունակ խառնուած են հոն ապրող ցեղերուն հետ որոնք նորանոր խառնուրդներու ենթարկուած են: Հայաստիպ ցեղը որ Մերձաւոր Արեւելքի ինչպէս նաեւ Հայաստանի հնագոյն բնակչութիւնը կը ներկայացնէր և որ ո՛չ Հնդկական էր և ո՛չ ալ Սեմական, թէեւ աշխարհի միւս ցեղերէն աւելի զօրեղ արիւն ունէր այսօր այլեւս գոյութիւն չունի, վամնզի անիկա բաղմամբիւ ցեղախառնումներու ենթարկուած է, ինչպէս այլուր նոյնպէս նաեւ Հայաստանի մէջ:

Իր ֆիզիքական ինչինչ յատկանիշները կը մնան տակաւին պահուած Հայ ցեղին և ուրիշ մի քանի Փոքր Ասիական ազգութիւններու մէջ, սակայն իր ցեղային նկարագիրը փոխուած է այս հիմնախաւին վրայ կատարուած պատուաստներով:

Պատմական փաստեր ունինք թէ Հայկական Բարձրաւանդակին վրայ ապրած են բաղմամբիւ ժողովուրդներ, ինչպէս Ուրարտացիք—Պալլիներ—Ալարտտեանք, Մաննացիներ, Մա-

դիացիներ, Սասպիրացիներ, Պակտիացիներ, Խաղիբացիներ, Մարդացիներ, Տայեցիներ, Մակրոններ, Կատտոնացիք, Մոսքացիներ, Ուտեացիներ, Աղուանք, Իբերացիներ, Սիւնեցիներ, Սեւորդիներ, Կորդուացիք, Շակեր, Կասպիացիներ, Ասորիներ, եւայլ, որոնք գրեթէ ամբողջովին ձուլուած են Հայոց մէջ (Գէորգ Մեսրոպ. Հայասան աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետերով, Կ. Պոլիս 1919 էջ 32-38):

Հայացած են նաեւ Քրիստոսէ Ա. դար առաջ և Ա. դար յետոյ Հայաստան փոխադրուած բաղմամբիւ Հրեայ գաղութներ, Ը. դարուն Հայաստան մտած թաթար ծագումով Սեւորդիները (նոյն 38-39, ինչպէս նաեւ Hübschmann, Die altarmenischen Ortsnamen. Strasburg 1904, 61-62, L. Cahun Introd. de l'Hist. de l'Asie 160), ինչպէս նաեւ իբր աշխարհակալ կամ տիրապետ դրացի Պարսիկ, Պարթեւ, Վրացի, Յոյն, Ասորի ժողովուրդներէն մասեր (Գ. Մեսրոպ, Հայասան, 39-40), որոնք Հայաստան փոխադրուած էին:

Այսօր Հայերը կը նկատուին Հնդեւրոպական ժողովուրդ, առաւելագոյն չափով այս ցեղախումբին պատկանող ժողովուրդներու հետ խառնուած և ձուլուած ըլլալով:

Այսօրուան Հայ ցեղը հազիւ Քր.է առաջ Ա. դարուն սկիզբը լեզուով, կրօնքով և սովորութիւններով դարգացած միութիւն մը կազմած է, որ Հայկական Բարձրաւանդակին կարգ մը մասերուն մէջ ամբողջ զանգուածը կամ բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմէր իսկ քանի մը շրջանակներու մէջ ալ՝ տիրող դասակարգը, որ ապանովաբար իր ցեղային ուժին շնորհիւ պիտի յաջողէր ժամանակի ընթացքին ձուլել տակաւին քիչ շատ իրենց ինքնուրոյն նկարագիրը պահող միւս ժողովուրդները:

Հայաստան, այսպէս իբր հետեւանք իր աշխարհագրական դիրքին հնունձ չկրցաւ ունենալ ցեղային սերտ միութիւն մը:

Իսկ ԺԱ. դարէն սկսեալ Հայաստանի ցեղագրական վիճակը մեծապէս խանդարուեցաւ երբ հոն խուժեցին թաթար ծագումով ժողովուրդներ որոնք Կեդրոնական Ասիոյ տափաստաններէն կու գային: Այսպէս, ԺԱ. դարուն Սելճուկներու, ԺԳ. դարուն Էօզպէք Թաթարներու և ԺԴ. դարուն Թուրքերու արշաւանքները դէպ ի Հայաստան, կերպարանափոխ ըրած են Հայկ. Բարձրա-

Լանդակին բնակչութեան ցեղային նկարագիրը, վասնզի անոնց խոստովին իր հետեւանք երկիրին արեւելեան սահմաններէն Հայ տարրը զանգուածորէն գալթած է դէպի արեւմուտք, դէպի Փոքր Հայք և Կիլիկիա:

Այնպէս որ ժԱ. դարէն սկսեալ թաթար ծագումով ցեղերու անվերջ արշաւանքները անճիտած են Հայ ցեղը իր բնագաւառին մէջ և տկարացուցած են զայն և նոյնիոկ պատճառ եղած՝ որ անիկա տեղի տայ զօրաւորին առջև և ինքն դադրի բնակչութեան մեծամասնութիւնը ըլլալէ:

Հայաստանի աշխարհագրական դիրքը ուրեմն այս երկիրին մէջ ապրող բնակչութեան ցեղային բաղկացութեան վրայ իր ազդեցութիւնը ունեցած՝ և պատճառ եղած է որ հոն ապրի ժողովուրդը, որ կը բաղկանար զանազան ցեղերէ, որոնք հնագոյն ժամանակներու մէջ երբ հզօր Հայ պետութիւն մը կազմը ունեցաւ և ինքնուրոյն Հայ մշակոյթ մը ստեղծուեցաւ, շնորհիւ, լեզուի, կրօնքի և այլ ազգային յատկանիշներու զերզօր ազդեցութեան, միաձուլուեցան և մէկ ազգ կազմեցին:

Սակայն այնպիսի դարերու մէջ, ուր կարելի չեղաւ այս իւրացումի աշխատանքը կատարել, Հայ պետութեան քայքայումին կամ տկարութեան հետեւանքով, և լեզուի տարբերութեան և կրօնի հակառակութեան պատճառով, և կամ այն պատճառով որ ներխուժող ժողովուրդները արդէն որոշ մշակոյթ և ինքնութիւն ստացած ցեղեր էին, որոնք ձուլելու չաի ուժ չունէր այլևս Հայ ցեղը, Հայաստանի մէջ ստեղծուեցաւ դժնդակ կացութիւն մը, վասնզի քրիստոնեայ Հայուն քով բնակակից եղաւ իսլամ արաբը, թաթարը, կամ քիւրտը՝ (որ ընկճուած էր իսլամ մշակոյթէն՝ հետեւանք իսլամ տիրապետութեան): Հայը, ստիպուած էր ապրել և սոկալ այդ հակառակորդ ու թշնամի տարրերու մէջ, ամէն կողմէ շրջապատուած և չնչելու իսկ անկարող վիճակի մէջ, կամ թողուլ հեռանալ՝ իր սեղը զիջելով այս եկւոր տարրերուն, որոնք Հայաստանի աշխարհագրութիւնը հոն բերած էր:



Բ.

Հայասանի ռազմական դիրքը. — Հայկական Ռաճրուանդակը առարկայ ցանկութեան աշխարհակալ պետութեանց եւ կռուախնձոր. — Հայ պետութեան օկարութիւնը եւ օսար ազդեցութեանց գերակռութիւնը երկիրին մէջ. — Հայերու երկօտութիւնը եւ օսանումը եզօր դրացիներու միջեւ. — Հայասան միօս պատերազմի վայր:

Հայաստանի աշխարհագրական դիրքը Հայ ազգին ցեղադրութեան վրայ այս խորուկ ներգործութիւնը ձգելէ զատ, երկրորդ հետեւանք մըն ալ ունեցած է, նոյնքան ազդեցութիւնը ու վնասակար իր գոյութեան:

Ըստ Գուրկօ կըլլած ինի Հայաստան, շնորհիւ իր բնական և աշխարհագրական հանգամանքներուն, նկատուած է հսկայական բնական միջնաբերդ մը, իշխող շրջակայ երկիրներու վրայ: Ան ունէր ռազմական ամենամեծ նշանակութիւն, վասնզի անոր տիրացողը կ'իշխէր կուրի հովիտներուն, Փայտակարանի տափաստաններուն, Միջագետքի հարթութիւններուն և վերջապէս Անատոլուի դաշտավայրերուն և իրենց բարձրութեամբ աննշան բարձրաւանդակներուն վրայ (Յ. Մանանդեան Ֆեոսալիզմը Հին Հայասանում 259):

Նոյնը կը հաստատէ Ռօհրպախ (Հայասան ըստ Ռօհրպախի 1918ի տեսութեան, 10) հաւաստելով թէ Հայաստանի դիրքը Մերձուոր Ասիոյ մէջ կարեւորագոյնն է, այն պատճառով որ ան թէ արեւելեան Փոքր Ասիայի և թէ միեւնոյն ժամանակ Վերին Միջագետքի վրայ անմիջականօրէն կ'իշխէ, վասնզի անկէ կը մեկնին բոլոր Փոքր Ասիոյ լեռնաշղթաները:

Հայաստանի աշխարհագրական այս բացառիկ դիրքը, չէ վրիպած հզօր պետութիւններու ուշադրութենէն, և անոր տիրապետութիւնը իրենց համար անզուսպ ցանկութիւն մը եղած է: Ռօհրպախ նոյնիսկ պիտի ըսենք թէ ճշմարտագանցութիւն մը կամ չափազանցութիւն մը կ'ընէ երբ կ'ըսէ (նոյն. 10) թէ «կողմնակի կամ օրջառիկ բարձումներով՝ խախտել եւ կամ յարձակիլ Հայասանի դիրքերուն վրայ, անկարելի է, Տաւրոսի բարձրաբերձ լեռանց անանցանելիութեան եւ պոնտական եզրալեռնաշղթաներու շնորհիւ: Ով Հայասանի մէջ կը նստի, ինն

անձեռնմխելի է, բայց կրճայ իւրաքանչիւրին վրայ յարձակիլ, իրեն նպաստաւոր դասած մէկ պարագային: Բովանդակ Մերձաւոր Ասիան, Պարսից Ծովէն մինչեւ Միջերկրական եւ եգեական ծովերը բաժինն է այն մեծ պետութեան որ Հայաստանի կ'իջիւէ. նիւս այնպէս, ինչպէս պատմեթի մը քնդանօթներէն իջխուած բերդի զառիվայր մը: Աւելի հոյակապ դիրք մը կարելի չէ երեւակայել ընդդէմ բովանդակ արեւմտեան Ասիոյ, քան հաւաքականութիւն մը՝ Հայաստանի, Անդրկովկասի եւ հիւսիս-արեւմտեան Պարսկաստանի մէկ ձեռքի մէջ:

Ըստ J. Morgan (21) «Հայաստանի լեռնադաշտին այս բացառիկ դիրքը ոչ միայն կ'ազդէ երկրամասին կլիմային այն բարիքներու վրայ զոր հողը առատօրէն կու սայ բնակչութեան, այլ նաեւ իր ժողովուրդին կու սայ մասնաւոր կարեւորութիւն մը քաղաքական ու զինուորական արժեքի տեսակետէն, իրանական գաւառներու ու Թուրքիոյ մեծ հովիտներուն հանդէպ որոնք կը գտնուին այս միաձոյլ բարձրաւանդակին ստորոք: Հայաստան ինքնին կը ձեւացնէ իրական ամրութիւն մը որ կ'իջիւէ ամբողջ Մերձաւոր Ասիոյ եւ երկու Եփրատներու ու Տիգրիսի մեծ համբաններուն վրայ: Այս գլխաւոր առաւելութիւնը միւս ալ չէ դադրած գրգռելէ դրացի պետութեանց այս միջնաբերդը ձեռք անցնելու ցանկութիւնը: Դարեր, դարեր շարունակ Ասորեստան պատերազմ մղած է Վասպուրականի վեհապետներուն դէմ, երբ Ռուրատի քաղաւորները կ'իջիւէին լեռնային շրջաններուն մէջ որոնք յետոյ դարձան Հայերու սեփականութիւն: Վիթխարի պատուար մը, Հայկական Տաւրոսը կանգնած Նինուէցիներուն եւ անոնց հիւսիսի բեմամբներու միջեւ, Վանի քաղաւորութիւնը կը պատշապանէր Ասորի հարուածներուն դէմ: Աւելի յետոյ, երբ Պարթեւները եւ Սասանեանները մրցման մէջ էին Հռոմի հետ, իւրաքանչիւրը իր ազդեցութեան ենթարկելու համար Հայաստանը, կայսերական գրաւումներու ամրութեան վայրը (*boulevard*) կը կազմէին Նիսիայը, Տիգրանակէտը, եւ Ամիսը, Հայկական Տաւրոսի հարաւային փղանցներուն վրայ, բայց քաղաքական կեդրոնն ու բուն ռազմագիտական կայանը աւելի վերն էր, դէպի հիւսիս, լեռնադաշտին խոյ վրայ, եւ Մեծն Թէոսոս չէր սխալած Հայկական միջնաբերդի կարեւորութեան մասին երբ իր կուսակալներէն մէկուն պատժելու յանձնեց՝ այս երկրամասին նիւզ մեղսեղը կառուցանելու Էրզրում քաղաքը, որ անկէ ի վեր դարձաւ Հայաստանի սիրտը:» *Այս տեսակ տիրապետող դիրք*

մը, ընտան է որ աշխարհակալ տերութեանց ռազմադրութիւնը պիտի գրաւէր եւ մրցութեան ասպարէզ մը պիտի ըլլար:

Այնպէս որ իր հզօր դրացիներուն միջեւ կռուանալով մը եղաւ Հայաստան որ իրարու ձեռքէ յախշտակեցին իրենց գերակշռութիւնը աշխարհի այս մասին մէջ ապահովելու կամ Հայաստանը իբր անցք գործածելով հակառակորդին վրայ յարձակելու համար: Հայկական Բարձրաւանդակին ռազմագիտական այս կարեւորութեամբ կը բացատրուի Հայաստանի պատմութեան միացումը համաշխարհային պետութիւններու պատմութեան հետ, նաեւ այն յամառ, կատարի կռիւները, որ հազարաւոր տարիներու ընթացքին վարած են մեծ պետութիւնները Հայաստանի տիրանալու նպատակով (Յ. Մանանդեան, նոյն. 260): Այսպէս, Հայաստան երկար դարեր տարուբերած է նախ Հռոմայեցիներու եւ Պարթեւներու եւ ապա Բիւզանդացիներու եւ Սասանեաններու միջեւ, յետոյ դատապարտուած է կրել Արաքներու լուծը եւ ոտնակոխ ըլլալ Մոնղոլներէ եւ Թուրքերէ, մինչեւ որ բաժնուած է Օսմանեան Թուրքերու, Պարսիկներու եւ Ռուսերու միջեւ:

Այս տեւական պատերազմները կատեցուցած են միշտ եւ ազատած՝ Հայաստանի պետական զարգացման ընթացքը, ենթարկելով զայն հարեւան, աւելի հզօր պետութիւններու քաղաքական-տնտեսական շահերուն (նոյն. 260):

Այսպէս, կարելի է ըստ Յ. Մանանդեանի, դրականապէս պնդել որ քաղաքական տեսակէտով Հայաստանի նշանակութիւնը եւ գործունէութիւնը կախում ունեցած է շարունակ դրացի մեծ պետութիւններէն, սրտնք գաղտնի կամ յայտնի համաձայնութիւններու միջոցով վճռած են կանխօրոք անոր պատմական ճակատագիրը (նոյն, 260):

Պոմպէոսի յաղթութենէն յետոյ Հայաստանը, ինչպէս յայտնի է, ճանչցուելով «բարեկամ եւ դաշնակից Հռոմէական ժողովուրդին», գտնուեցաւ գրեթէ մէկ դար Հռոմի ազդեցութեան շրջանակին մէջ (նոյն):

Այնուհետեւ՝ վաթսուհական Թուրաններուն Քրիստոսէ յետոյ, Պարթեւներու ու Հռոմայեցիներու երկուստէք համաձայնութեամբ, հաստատուած էր Հայաստանի մէջ Հայ Արշակունիներու Թագաւորութիւնը, որ կը գտնուէր Հռոմի անուանական գերիշխանութեան տակ: Դարձեալ յատուկ դաշնադրութեամբ

Հայաստանը 387ին բաժանեցին իրենց միջև Բիւզանդիոնն և Սասանեան Պարսկաստանը (նոյն):

Այս բաժանումէն յետոյ՝ աշխարհակալական կռիւը Արեւելքի մէջ ստացաւ զէթ արտաքուստ կրօնական գունաւորում (նոյն):

Հայկական լեռնաշխարհի ռազմագիտական կարեւորութեան պատճառով, կռուող մեծ պետութիւնները՝ Բիւզանդիոնն և Սասանեան Պարսկաստանն, խիստ յամուտ պայքար մղեցին Հայաստանի մէջ երկրին ներքը, նպատակ ունենալով իրենց հետ միացնել Հայ քնակչութիւնը կրօնական և մշակութային ձուլման ուղիով (նոյն. 261):

Հայերը, իբր երկիրին քնակիչները, չկրցան միանամուռն նախընտրութիւն մը ընել գրեթէ միշտ տեւականօրէն երկիրին տիրապետութեան ցանկացող մրցակից ուժերու միջև և ինչպէս սովորաբար ճակատագիրն է բոլոր տկար ժողովուրդներուն, երբեմն մէկ երբեմն միւս կողմին յարեցան կամ պառակտուած՝ իրենցմէ մաս մը մէկ կողմին և ուրիշ մը՝ միւս կողմին միացաւ: Ասոր համար է անշուշտ որ Տակիտոս հռոմայեցի պատմագիրը իրաւունք ունենալ կարծեց Հայերը ներկայացնելու «նինէն ի վեր մարդերու բնաւորութեամբ եւ աշխարհի դիրքով երկրիս ժողովուրդ մը»:

Այսպէս, Հայաստան ամենայնիւ ժամանակներէ սկսեալ իր աշխարհագրական դիրքին պատճառով, սովորաբար երկու մըրցակից պետութիւններու և կամ երբեմն արշաւող ժողովուրդներու ոտքերուն տակ ընկճուած է, երկիրին համար ստեղծելով դառնագոյն կացութիւն մը՝ արդիւնք երկարատեւ՝ գրեթէ՝ անվախճան պատերազմներու:

Հետեւաբար Հայաստանի աշխարհագրական դիրքը տխուր անդրադարձութիւն մը ունեցած է անոր բարեկեցութեան վրայ և խիստ ձախող ազդեցութիւն՝ անոր քաղաքական և ներքին զարգացման վրայ և առիթ այդ ռազմական դիրքը գրաւելու համար մղուած պատերազմներուն:

Այս պատերազմները, քնական է տխուր անդրադարձում մը ունեցած են երկիրին քնակչութեան վրայ, որ երբեք հանգիստ ու խաղաղ կեանք մը չէ ունեցած, շարունակ պատերազմներու թատերավայր այս երկիրին մէջ, ուր իրենց քաղաքացիական խաղաղ աշխատանքները միշտ կը հանդիպէին խոչնդոտներու, արգելքներու, ընդհատումներու և կատուժի:


Գ .

Հայաստանի սեւական անապատները արգելք իր սեփական բարորութեան. — Հայ ժողովուրդին վրայ պատերազմներու անդրադարձումը եւ հետեւանքները. — Հողային արդիւնաբերութիւնները եւ խաւարածութիւնը հիմը Հայաստանի սեփական կեանքին. — Հայաստանի արտադրութիւններու ազգաբնակչութիւնը եւ իր սեփական վերելքին դանդաղութիւնը. — Նախնական կեանք եւ քաղաքներու բացակայութիւն. — Սելեւկեան օրջանին քաղաքներու գոյառութիւնը եւ սեփական կեանքի զարգացումը. — Հայ քաղաքներու գիւղական եւ երկրագործական բնոյթը. — Հայկական արտադրութեան սահմանափակ վիճակը. — Տեփազանքի զարգացում Բագրատունիներու օրջանին եւ անկում. — Անտիոքում մեծ քաղաքներու. — Հայաստանի սեփական զարգացման արգելքները:

Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ իբր անցք և իբր ռազմագիտական կայան, տեսնուեցաւ թէ որքան դժբախտ հետեւանքներ ունեցած էր Հայաստանի քնակչութեան վրայ, անոր զարգացման ու յառաջդիմութեան կանգ առումին պատճառ դառնալով, զի ամբողջ երկիրը մշանջնական պատերազմի դաշտի մը վիճակը ունեցած է իր դարաւոր պատմութեան տեւողութեան մեծագոյն մասին:

Անապատով ու քաղաքական շարունակական տագնապներով խռովուած երկիր մը, որպէս էր Հայաստան, որքան ալ պողաբեր ու արգասաբեր հող մը ունենար, անկարելի էր որ անտեսական բարորութեան մը բարձրագոյն մակարդակին կարենար հասնիլ, վասնզի միայն խաղաղութեան մէջ է որ կարելի էր անտեսական բարեկեցիկութեան հասնիլ, մասնաւորապէս այնպիսի երկիրներու մէջ, ուր անտեսական կեանքին հիմը հողային արդիւնաբերութիւնն է: Եւ անուրանալի է թէ Հայաստան առաւելապէս երկրագործական երկիր մըն էր և հետեւաբար ամէնէն աւելի ենթակայ՝ պատերազմներու աղէտալի հետեւանքներուն, վասնզի քաղաքացիք և գիւղացիք իբր գինուոր բանակներու մէջ գտնուելով, հողը կը զրկուէր մշակող ձեռքերէ և երկրագործութիւնը կը տուժէր:

Երկիրը ոչ նուազ կը վնասուէր այն աւարտութիւններէն և բռնի գրաւումներէն որոնք արշաւող բանակները կը կատարէին, իբր պատերազմական աւար: Այսպէս կը գրաւուէին անա-



սունները, կը կողոպտէին դաշտերուն բերքը և հունձքը, և կեանքը կը դադարէր առեւտուրին հետ, որ չարաչար կը վնասուէր:

Մասնաւորապէս երկրագործական աշխատանքներու դադարիւր և հունձքին փճացումը տեղի կու տային աւելի մեծ ողէտներու վասնզի գոյութիւն չունենալով հաղորդակցութիւններու դիւրութիւններ, անկարելի էր շուտով հեռաւոր երկիրներէ հացահատիկներ ներմուծել Հայաստան, այնպէս որ յաճախ օտար պետութիւններու դէպ ի Հայկական բարձրաւանդակը կատարած արշաւանքներուն և ներքին պատերազմներուն կը յաջորդէր սովը որ սոսկալի կոտորածներ կ'ընէր Հայաստանի մէջ, յաճախ թշնամիներու պակաս ձգածը անիկա լրացնելով:

Այսպէս միայն գլխաւորները յիշելով Հոնաց արշաւանքէն (516), Եռսուֆ Ամիրապետին սոսկալի խժգոնութիւններէն (900-917), Տուրքիի ասպատակութիւններէն (1040-1056), Լէնկթիմուրի արշաւանքներէն (1393) և տեղային պատերազմներէն (1431), Թուրք և Պարսիկ պատերազմներէն (1580-1600) և Ճիւղիներու տեւական ասպատակութիւններէն (1600-1607) և Ռուս և Թուրք պատերազմէն (1878) անմիջապէս յետոյ Հայաստանի մէջ սոսկալի սովեր տեղի ունեցած են:

Այսպէս պատերազմները և աւարտութիւնները Հայաստանի անտեսական կեանքը խանգարած են հիմնովին, արգելք ըլլալով երկրագործական աշխատանքներուն որոնք հիմը կը կազմէին անտեսական շարժման:

Հայաստանի անտեսական կեանքը իրապէս չէր կրնար ուրիշ բանի վրայ հիմնուած ըլլալ, եթէ ոչ մասնաւորապէս հողային արդիւնաբերութեան վրայ քանի որ երկիրը ունէր լաւ դաշտավայրեր:

Մուշի, Կարինի, Երեւանի, Խարբերդի, Բասենի, Բաբերդի, և Խնուսի մեծ դաշտավայրերը մշակութեան համար անագին ընդարձակ տարածութիւններ կը ներկայացնէին, առանց հաշուելու Արաքսի և Տիգրիսի լայն հովիտները (M. Dolens et A. Khatch. Histoire des anciens Arméniens թարգ. Բ. 20):

Հետեւաբար Հայաստանի բնակիչները ստիպուած էին մասնաւորապէս պարսպիլ խաշնարածութեամբ, և երկրագործութեամբ: Արդարեւ Հայաստանի հովիտները, որոնք լի էին արօսներով, կը սնուցանէին անհամար ընտանի կենդանիներ՝ ձի,

ջորի, գոմէշ, ոչխար, այծ, էշ և կով, իսկ իր դաշտերուն վրայ լայն չտիրող կը մշակուէին հացահատիկներ, բամպակ, կնճիտ, կանեփ, կտուտ, բանջարեղէններ և աւելի խոր ձորերուն մէջ՝ խաղող, թուֆ, բազմաթիւ պողոտու ծառեր, որոնք մեծ մասամբ կոսպից ծովին և Եփրատի միջեւ գտնուած գաւառներուն մէջ ծագում առած են:

Հայաստանի մէջ կ'աճէր մայրի, կաղնի, կնճնի, երբեմն ընկոյզներ, իսկ հեղեղամաններուն մէջ՝ ուռի և կաղամախի, սակայն գրեթէ երկիրին կեդրոնը, լեռներու շատ մը լանջերը, գառնավայրերը, զուրկ էին անտառներէ, ծառերէ:

Զիկանա-տաղէն սկսած, ուր Տրապիզոնի ճամբան կը կտրէ Պոնտական երկրորդ լեռնապարերը, մինչև Արարատ, և անկէ ալ անդին ամբողջ շարքովներով, կարաւանը ճամբաներ կը կտրէ, բայց չի հանդիպիր ծառի մը կամ նոյնիսկ թուփի մը՝ առանց հաշուելու ի հարկ է քաղաքներու հազուագիւտ պարտէզները (նոյն, 21): Եթէ այս վայրերու դաշտերը բնականորէն չըլլան հունձքով, և լեռներու քիչ ժայռոտ կողերը՝ ծածկուած փոշիով, մանրախիճերով և բուսահողով՝ չներկայացնեն ոչխարներ անուցանող նուրբ մարգագետիններ, այն ժամանակ մարդ պիտի կարծէր թէ երկինքի կրակով այրուած անապատի մը մէջ կը գտնուէր (նոյն):

Իր ժայռոտ լանջերը շինութեան համար ամէն տեսակ նիւթեր կը պարունակեն, ինչպէս մարմարիտն և պորփիւր (նոյն):

Ասիէ դատ, իւրաքանչիւր նահանգ կամ գաւառ իր կլիմային և երկրաբանական կազմին համեմատ՝ տեսակ տեսակ բերքեր ու հանքեր ունէր:

Հիւսիսային արեւմտեան կողմերը կու տային աղ և բիւրեղ: Աղձնիք և Տուրուբերան ունէին, պղինձի, երկաթի և կապարի հանքեր, Այրարատ և Սպեր՝ ոսկի, Փայտակարանի կողմերը՝ բամպակ, Տուրուբերան՝ գաղպէն ու մեղր: Գողթն գաւառը՝ անուշահոտ ու առատ գինի, Տայքը՝ թուզ, նուռ, սերկեւիլ ու նուշ, Ուտի գաւառը՝ ձիթենի, Այրարատը՝ որդան կարմիր: Երասխի եզերքները և Սիւնիքի ու Փայտակարանի նահանգները հարուստ անտառներ ունէին որոնց ազնիւ փայտերը կը գործածուէին պալատներու շինութեան համար:

Հայաստանի այս արդիւնաբերութիւնները հազիւ իր պէտքերուն կը բաւէին և գրեթէ շատ քիչ բան իր արտադրութիւն-

ներէն կը կազմէին արտաքին վաճառականութեան նիւթ: Ասոր համար էր որ Հայաստանի տնտեսական վերելքը շատ դանդաղ զարգացում մը ունեցած է և երկար տտեն, մասնաւորապէս Աքա- մենեան տիրապետութեան շրջանին անիկա ունեցած է չափա- զանց նախնական վիճակ մը:

Աքամենեան շրջանի համար խիստ անժխտելի և ստոյգ վա- ւերագիր մըն է Քսենոփոնի Անաբասիս գործը, որ նկարագրու- թիւնն է Նանանջ բիւրուին: Քսենոփոն որ այդ 10,000 յոյն զինուորներու պետերէն մին էր, կը պատմէ այն անցքը որ կա- տարեց այդ բանակը Հայաստանի մէջէն հարաւէն հիւսիս:

Քսենոփոնի, սկանառեսի նկարագրութիւններուն մէջ ու- շագրաւ է որ Արմենիայի մէջ չի յիշուիր և ոչ մէկ քաղաք: Յոյները դետերու հովիտներուն մէջ տեսեր էին միայն բազմաթիւ գիւղեր, որոնց տնտեսական վիճակը եղած է թէ բարձրաւոր և թէ բարելի: Գիւղերու մեծ խումբ մը կը յիշէ Քսենոփոն՝ Տե- լերոսս (ըստ Յ. Մանանդեանի, 243, Մեղ և ըստ Ալիշանի՝ Յու- ռիկ. թ. 219 Մեղուայ կամ Մեղրագետ) գետին շուրջը և ու- ըրի խումբ մը՝ Տելերոսս գետէն 15 փարսախ կամ մօտաւորա- րապէս 80 քիլոմէթր դէպի Արեւելք:

Գիւղերու այս վերջին խումբը կը գտնուէր Ամրոցի շուրջը: Հոն յոյները գտած են ամէն տեսակ պաշարներ՝ մսացու անտ- սուններ, հաց, հին անուշահոտ գինիներ, չամիչ, զանազան ըն- դեղէններ, նաեւ խոզի ճարպ, դառն նուշի և բելվեկնի իւղ և ասկէ պատրաստուած անուշահոտ իւղ:

Արածանի գետին աղուներուն մօտ, արդի Տիւտին-Բա- գաւանի շրջանին, յոյները իջեւանած էին Արմէններու գիւղե- րուն մէջ, որոնց նկարագրութիւնը մասնաւորապէս հետաքրքր- րական է:

Հոն անոնք, հասնելով գիւղ մը, աղբիւրին մօտ ամրութեան առաջ հանդիպած էին ջուր կրող գիւղացի կիներու, իսկ ամ- րութեան մէջ՝ գիւղապետին (kōmarchês): Այս շրջանի գիւղե- րուն մէջ — կը պատմէ Քսենոփոնը — «սուները գեթնափոր էին, մուսքը ջրհորի բերանի նման, իսկ ներսը ընդարձակ: Կեցակիցնե- րուն համար յատկ մուսք կար փորուած, իսկ մարդիկ կ'իջնէին վար սանդուխներով»: Տուններուն մէջ յոյները կը գտնեն առատ պաշար՝ ցորեն, գարի, ընդեղէններ և կարասներու մէջ գարիէ պատրաստուած ըմպելի, նաեւ այծեր, ոչխարներ, եզներ, կովեր,

հաւեր և խոզեր: Քսենոփոն մասնաւորապէս կը յիշէ նաեւ Ար- մէններու ձիերը, որոնք պարսկական ձիերէն թէեւ փոքր էին, բայց շատ աւելի կայտառ:

Քսենոփոնի այս վկայութիւններէն պարզօրէն կ'երևի թէ Արմէնները եղած են նստակեաց ու հողագործ ժողովուրդ մը և երկրագործական մշակոյթի տեսակէտով կը կանգնէին զարգաց- ման համեմատաբար բարձր աստիճանի վրայ: (Յ. Մանանդեան Գեոսալիզմը Հին Հայաստանում 242-4):

Հերոդոտոս Արմէնները կ'անուանէ **polyprobetoi** «հարուստ անասուններով» (Ե. 49), ուստի պէտք է ենթադրել, որ անոնք կ'զբաղուէին նաեւ խաշնարածութեամբ (Յ. Մանանդեան. նոյն 244):

Պաշարեղէնի առատութիւնը և քաղաքներու բացակայու- թիւնը կարելի է նկատել անսղղակի նշան մը, որ Քսենոփոնի ժամանակ Արմէնիան կը գտնուէր բնական տնտեսութեան զար- գացման շրջանին մէջ (նոյն, 244):

Քաղաքներու բացակայութիւնը և երկիրին նահապետական դրութիւնը կը մղէ կարծել թէ բնակչութեան դասակարգային շերտաւորումը կը գտնուէր դեռ իր սկզբնական շրջանին մէջ (նոյն, 244):

Մէկ երկու հարիւր տարիներու երկար շրջանէ մը յետոյ է որ Հայաստանի մէջ քաղաքներ զոյգութիւն կ'առնեն և առեւ- տուրը քիչ շատ զարգացման որոշ աստիճանի մը կը հասնի: Արդարեւ Հայաստանի տնտեսական վերելքը և քաղաքներու հիմնարկութիւնը կ'սկսի. Սելեւկեան տիրապետութիւնէն յետոյ, երբ Հայաստան Հելլենականութեան ազդեցութեան կ'ենթար- կուի: Այդ զարգացման յայտնի ապացոյցներն էին նաեւ Փոքր Հայքի և Ծոփքի մէջ հատանուած դրամները, դրամական շը- ջարներութեան զարգացումը և առեւտրական կեդրոններու երե- ւան գալը Ծովքի մէջ (Յ. Մանանդեան Գեոսալիզմը Հին Հա- յաստանում. 250): Մասնաւորապէս Հելլենական տիպարով այս քաղաքներուն հիմնարկութիւնը ինքնին կարեւոր փաստ մըն է, որ ցոյց կու տայ ընկերային շերտաւորման ուժեղացումը: Առեւ- տուրի և դրամի շրջաբերութեան զարգացումը կարեւոր նշա- նակութիւն կու տար դրամադրութիւն (նոյն 250):

Տիգրան Մեծի օրերէն սկսեալ է որ Հայաստան Արեւելքի համաշխարհային առեւտուրին մէջ դեր կատարել կ'սկսի և վա-

ճառականութիւնը կը բարգաւաճի և մեծ քաղաքներ երեւան կու գան, վասնզի Հայաստան այդ շրջանէն սկսեալ կը ծառայէ իբր տարանցիկ (քաւնաիթ) առեւտուրի ճամբայ մը, փոխանցիկ երկրամաս մը, ինչպէս չինական մետաքսի, նոյնպէս նաեւ ուրիշ թանկագին արտադրութիւններու համար, որոնք կ'արտածուէին դէպի Արեւմուտք՝ Չինաստանէն, Միջին Ասիայէն և հիւսիսային Հնդկաստանէն և որոնք Հայաստանի ճանապարհով կը ղրկուէին դէպի Սեւ Մովի նաւահանգիստները:

Հայաստանի արտածութեան նիւթերը այնքան սակաւ էին որ անոնք արտակրկեայ շատ համեստ առեւտուրի մը նիւթ կազմելու միայն կրնային ծառայել, որով բնիկ վաճառականներու թիւը այնքան մեծ չէր:

Այս պատճառով է անշուշտ որ Հայաստանի մէջ վաճառականները կամ առեւտրականները մասնաւոր դաս մը չէին կազմեր և հետեւաբար կարեւոր տարր մը չէին նկատուեր (Յ. Մանանդեան Ֆեոսալիզմը Հին Հայաստանում 214-5):

Ընդունելով որ առեւտուրը և արհեստները բաւականաչափ զարգացած էին Հին Հայաստանի քաղաքներուն մէջ, պէտք չէ գերզննատել քաղաքներու նշանակութիւնը պատմական այս շրջանին մէջ և վերագրել անոնց անտեսական ու քաղաքական այն մեծ դերը, որ ունէին Արեւմտեան Եւրոպայի քաղաքները Միջին Դարուն (Յ. Մանանդեան նոյն. 231):

Արտաշատը և Դուինը, որ այդ շրջանին միջազգային առեւտուրի խոշոր կեդրոններ էին, չէին կորսնցուցած իրենց գիւղական և երկրագործական բնայթը և անոնց բնակչութեան ստուար մէկ մասը կը շարունակէր զբաղիլ երկրագործութեամբ (նոյն, 231):

Ասոր դիւտուր պատճառը ապահովաբար այն էր որ Հայաստան ինքն չունէր առատ արտադրութիւններ որոնք նիւթ կազմէին արտաքին առեւտուրի կամ արտածութեան:

Արդարեւ, արտածութեան նիւթերը շատ սահմանափակ էին:

Յ. Մանանդեան (նոյն 225-6) կատարած է մասնաւոր քնննութիւն մը արտահանութեան նիւթերու շուրջ և օտարազգի և Հայ պատմագիրներէն խղճմտութեամբ հաւաքած է բոլոր այն նիւթերը որոնք կը յիշուին իբր Հայաստանի բերքերը: Նախ Պլինիոսէ իր «Բնական Պատմութեան» մէջ կը յիշուէին, *adaman-tis* բոյսը, *laser*՝ որ հիւթն էր *laserpittium*ին, որ կը բուսնէր

Պարսկաստանի, Մարաստանի և Հայաստանի մէջ և իբր բժշկական բոյս՝ Հոմը կը ղրկուէր, ներկ մը Հայաստան պատրաստուած, որ նկարիչները *orobitis* կը կոչէին, *Armenium* կոչուած քար մը որ *chrysocolla*ի պէս կը ներկէր, *Alumen* չիպ և սրոցաքարեր: (C. Plinii Secundi Naturalis Historiae XIX 15. 2. XXIV. 102. 2. XXXIII. 27 1. XXXV. 28. 1. և 52. 2. XXXVI. 47. 1. տես. հրատ. Littré. T. I-II Paris 1883):

Յետոյ կը յիշէ բժիշկ Դիոսկորիդի (Ա. դար Գր.ի) մէկ վըկայութիւնն թէ «ամենալու *amomum*ը կը համարուէր Հայկականը», և թեալզոնիկէի մետրապոլիտ Եւստաթիոսի այն խօսքը որուն համաձայն հին աղբիւրներ կը վկայէին թէ Հայերը կ'արտածէին քարեր, որոնց վրայ կը փորագրուէին և կը պատրաստուէին կնիքներ:

Բժշկական բոյսերու և «որդան կարմիր» ներկի մասին, որոնք կը ծախուէին և թերեւս նաեւ կ'արտածուէին, Ղազար Փարպեցի կու տայ տեղեկութիւններ (Ղազար Փարպեցի, Ա. դպ. է. գլ.):

Բացի օտար աղբիւրներու և Փարպեցիի մէջ յիշատակուած ներկերէն, բժշկական բոյսերէն և քարերէն՝ հաւանական է նոյնպէս, որ Հայաստանէն կ'արտածուէին ձիեր, ջորիներ և գինիներ ոչ միայն Աքեմենեան Պարսկաստանի տիրապետութեան շրջանին այլ նաեւ հետագայ տարիներուն: Ասկէ զատ ուրիշ նիւթեր չեն յիշուած (Յ. Մանանդեան նոյն, 225-6):

Նոյնիսկ Բագրատունեանց շրջանին, որ Հայաստանի առեւտրական և անտեսական կեանքին վերածննդեան շրջանն է, ուր բազմաթիւ շահաստաններ երեւան կու գան, մասնաւոր հոյակապ Անին, իսկական քաղաքը, Հայաստանէն կ'արտածուէին միայն հացահատիկներ, շինութեան փայտ, ձի, մետաղ, աղ, գորգ, ներկեր. եւայլ (Յ. Մանանդեան, (Ռուսերէն) Հայաստանի առեւտուրին եւ քաղաքներու մասին. 1930 Երեւան) և ինչպէս նաեւ ոչխար, որ կ'ենթադրուի թէ հնագոյն ժամանակներէ սկսեալ կ'արտածուէր դէպի Դամասկոս և Կ. Պոլիս, քանի որ Հայաստան 40,000,000 ոչխարներ ունէր (Histoire des anciens Arméniens, Թրգ. 46):

Այս նիւթերը բաւական չէին Հայերը արտակրկեայ խոշոր առեւտուրի մը մղելու, որ երբեք չունեցաւ Հայաստան, որուն քիչ շատ անտեսական բարորութեան և բարգաւաճումի հասնիլը

կը յապաղի մինչեւ Բագրատունիներու շրջանը, ուր Հայաստան՝ Արար ընդարձակածաւալ պետութեան հովանաւորութեան տակ, և մասնակից անոր անասման տարածութեան մէջ տիրող առեւտրական ընդհանուր շարժման, ինքն ու կ'ունենայ փայլուն շրջան մը: Այս ժամանակամիջոցին, ըստ սկոնաստես պատմագիրի մը՝ Ստեփանոս Ասողիկի, Աշոտ և Սմբատ Բագրատունի թագաւորներու իշխանութեան շրջանին, «եւ խաղաղութիւն յաշարհիս Հայոց ըստ մարգարէութեանն հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որքով իւրով եւ ընդ թղեմաւ: Եւ այսպէս ազատակաց աւանացեալ, եւ աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ եւ ընչեղութեամբ, մինչեւ հովուաց եւ անդեորդաց մեծախեղազգեմով պատմուեան» (Ասողիկ, տպ. 1859 Փարիզ. 147): Այսպէս ուրեմն Հայաստանի դաշտերը գիւղերով կը լեցուէին, գիւղերը հարուստ և բազմամարդ քաղաքներ կը դառնային և երկիրը այնքան բարորութեան և տնտեսական բարգաւաճումի մէջ էր որ հովիւներն իսկ մետաքսէ հագուստներ կը հագնէին, եթէ ստիկա ըսելու ձեւ մը չէր:

Այս միեւնոյն շրջանին վերջը՝ ուրիշ պատմագիր մը՝ Արիստակէս Լաստիվերացի, Արծնիի և Անիի կոտորածներուն առթիւ ընդարձակօրէն կը նկարագրէ այդ քաղաքներուն նիւթական բարգաւաճ վիճակը և անոր անխուսափելի նեղեւանք տնտեսակ կենցաղը այս երկու քաղաքներուն, որոնք աստուածային պատուհասի ենթարկուած կ'ուզէ տեսնել:

Արծն «նոյակապ եւ ականաւոր եր ամենայն աշխարհաց, իբրեւ զքաղաք որ ի վերայ լեռինն կայցե. եւ ծով եւ ցամաք երկնէր եւ առասանայր կրել ի սմա զգորութիւն իւր...: ... Բարեացն առասուրբեամբ պսակեալ եր, ամենայն ինչ ըստ մտի եր սորա եւ նման իմն եր նորահարսն կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ՝ եւ զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն» (Արիստակէս Լաստիվերցի 1844 Վենետիկ, 53):

Եւ խօսելով անոր երբեմնի վիճակին վրայ, կ'ըսէ «իբիանք սորա էին մարդասերք, եւ դասաւորքն արդարադասք եւ կաշառուցն ներողք: Վանառականք՝ եկեղեցւոյ շինողք եւ զարդարիչք, կրօնաւորաց օրելանք եւ հանգուցիչք, եւ առ աղբասս ողորմածք եւ դարմանիչք: Ոչ գոյր խաբէութիւն ի վանառան, եւ ոչ նեղութիւն ի տուր եւ առիկ փոփոխումն: Ընդ բամբասանօք եր վաշխից եւ տկոսեացն անհն, եւ խոտեալ եւ անարգեալ եր ՚ի նուրա

ընծայից պատարագ նոցա: ... Վանառականք սորա փառաւորք, եւ օգնողք քաղաւորք ազգաց: Եւ իբրեւ ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մեջ ամենայն քաղաքաց, ամենեւին գեղեցիկ, բոլորովին զարգարուն» (նոյն):

Բայց իբր թէ յետոյ սպականեցու և «ամենայն համեսութիւն կարգաց զառածեալ՝ յանկարգութիւն դարձաւ: Իբիանք սորա գողակիցք եղեմ գողոց, վրիժագործք եւ արժարոյ ծառայդասաւորք սորա կաշառառուք եւ վասն կաշառաց գողանային զիրաւունս եւ դասասան արքոց ոչ առնէին, յիրաւունս այրեաց ոչ խոնարհէին: Վաշխից եւ տկոսեաց օրեմք եղան, եւ ցորեմոյ բազմապատկութեան, ... Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, եւ որ յափեսակէր՝ ասէր. Ես հօգօր եմ: Զտունս ցնակից՝ աղբասացն, եւ զսանմանս անդասանաց նոցա յափեսակէին մեծասունքն, ... Եւ այլ» (նոյն. 54):

Նոյն ներկայից «սիեզերահուշակ քաղաք» կը կոչէր Անին (նոյն. 108) և ցոյց տալու համար անոր մէջ տիրող իր բմբռնութեամբ ամբարիշտ կեանքը «մանաւանդ ամուրն Անի եւ որ շուրջ զնովաւ դասերք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ երկնից կայքս հարկանէին» (նոյն. 109):

Այս տողերը ինքնին փոստ են թէ այս շրջանին բարգաւաճ քաղաքներ գոյութիւն առած էին Հայաստանի մէջ: Բայց շատ կարճ տեւած է Հայաստանի այս տնտեսական բարգաւաճումի շրջանը, վասնզի Հայաստան վայրենի հրոսներու ներխուժումին առջեւ ընկճուած իր անկախութիւնը կորուսած է և օտար տիրապետողներ սկսած են կեղեքել Հայերը, որ ըստ իրենց սովորութեան փոխանակ դիմադրելու և իրենց տիրապետութիւնը սպառնալից, սկսած են ամէն ինչ լքել և ուրիշ երկիրներ սպաստանիլ:

Անիշխանութեան շրջանին ժ. Գարէն սկսեալ Անին, Արծն և ուրիշ շատ կարեւոր քաղաքներ, կամաց կամաց կը մեռնին, հարուստ ոստանը կը վերածուի գիւղի, իսկ աւելի ուշ աւերակներու կոյտի:

Այսպէս Քր. է առաջ Ե. Գարէն սկսած մինչեւ ժ. Գար Քր. է յետոյ, Հայաստան տարանցիկ առեւտուրի ճամբաներէն մէկը ներկայացնելով հանդերձ, շատ քիչ ատեն միայն կարեւոր դեր կրցած է կատարել համաշխարհային առեւտրական շարժման մէջ, և իր առեւտուրը և տնտեսական զարգացումը՝ շատ անգամ

գանալիժօրէն ընդհատուած, չտիագանց յամբ վերելք մը ունեցած է, վասնզի Հայաստան իր աշխարհագրական դիրքին բերմամբ իսկ, չէ կրցած ունենալ իր հազարաւոր տարիներու պատմութեան ընթացքին լիակատար անկախութիւն — շատ կարճատեւ շրջաններէ զատ — և հոն միայն կրցած է կազմուիլ «արգելակ պետութիւն» (Etat tampon) մը: Հոն մեռած, ոչնչացած են իր դրացի մեծ հակառակորդներուն բախումները, սակայն ինքն ալ չէ կրցած զարգանալ իր ընդունակութիւններուն և ձգտումներուն համաձայն (Hist. des Anciens Arméniens), վասնզի իր աշխարհագրութեան բերմամբ երկիրին մէջ ստեղծուած էր կացութիւն մը որ բնաւ ձեռնտու չէր տնտեսական ու առեւտրական շարժման բնականոն պայմաններու մէջ զարգացման:

Դ.

Հայաստանի Ճիզիբական նկարագիրին, կլիմային, աօխարհագրական կազմին եւ երկրաբանութեան ազդեցութիւնը Հայ ժողովուրդին կեանքին վրայ. — Հայաստան լեռնաստան. — Երկիրին ելեւէջները եւ կլիմայական այլազանութիւնները. — Հայկական սուկայի ձմեռը. — Հայաստանի ցրագուրութիւնը. — Հայաստանի երեք արդիւնաբերական բաժանումները եւ իրենց առանձնաշաղկապութիւնները եւ անոնց ազդեցութիւնը բնակչութեան վրայ. — Հայաստանի բնական կազմը արգելք միաձայն եւ համանման բարեբերով ու նկարագիրով ազգի մը կազմութեան:

Հայաստանի տեղը մեր երկրագունդին վրայ, ինչպէս տեսնուեցաւ, ճակատագրական դեր մը կտարած է Հայ ազգին կեանքին վրայ:

Նուազ չէ եղած ազդեցութիւնը Հայ ժողովուրդի կեանքին վրայ, Հայաստանի Ֆիզիքական նկարագիրին, կլիմային, աշխարհագրական կազմին և երկրաբանութեան:

Ինչ որ Հայաստանի բնական աշխարհագրութեան մէջ ամէն բանէ առաջ աչքի կը զարնէ, անիկա սա է որ Հայաստան լեռնային երկիր մըն է առաւելապէս և կարելի է ըսել նոյնիսկ գերազանցապէս, և է գագաթը Մերձաւոր Ասիոյ սոսոցման դրութեան: Էլիզէ Ռէկլիւ, կ'ըսէ «Հայկական Ալպերու հսկայ բա-

ւիւր, որ կը տարածուի Կուրի աւազանէն մինչեւ Սեւ ծով ու Վերին Եփրատ, մինչեւ Վանի լիճն ու պարսկական սահմանները... իր բարձրաբերձ լեռներով ու խորխորասներով... մի վայրենի, գրեթէ սարսափելի տեսք կ'առնէ իր մեծութեան մէջ» (E. Reclus. Asie Antérieure):

Սակայն Հայաստանի լեռնային հանգամանքը ոչ միայն այս սարսափելի պատկերը կու տայ երկիրին այլ նաեւ կլիմայական խոշոր հակազդեցութիւն մը կը բերէ:

Արդարեւ, Հայաստան ունի կլիմայ մը որ համապատասխան չէ իր լայնութեան աստիճանին վրայ գտնուող Իտալիոյ, Յունաստանի, Սպանիոյ և Ասորեան կղզիներու մեղմ կլիմային, վասնզի երկիրի մը ծովային կամ հասարակածային կլիմայ ունենալուն համար բաւական չէ, որ անիկա ծովին շատ մօտը ըլլայ կամ լայնութեան այնպիսի աստիճանի մը վրայ գտնուի որ զգալի չտարբերուի մօտենայ արեւադարձային գօտիին:

Հայաստան եթէ լեռնային երկիր մը չըլլար իր լայնութեան աստիճանին վրայ գտնուող երկիրներու զմայելի գաղջ կլիման պիտի ունենար, սակայն իր Ֆիզիքական կազմով, այսինքն մասնաւորապէս իր ծովին մակերեւոյթէն մօտաւորապէս 2000 մէթր կամ 5000 ոտք միջին բարձրութեամբ լեռնադաշտ մը ըլլալու հանգամանքով, իր կլիման բոլորովին կը տարբերի, և ունի ձմեռներ որոնք բեւեռային ըսուելու աստիճան սաստիկ են:

Վրաստան աւելի հիւսիս ըլլալով հանդերձ Հայաստանի չափ ցուրտ չէ, որովհետեւ մէկ կողմէն կովկասը անանցանելի պատուար մըն է հիւսիսային ցրտաշունչ քամիին (aquilon) առաջ, մինչ Հայաստանի լեռները իրենց ուղղութեամբ կը դիմադրեն արեւմտեան և հարաւային քամիներուն և ազատ կը թողուն հիւսիսային քամիները (bise), և միւս կողմէն՝ Հայաստանի միջին բարձրութիւնը շատ աւելի է Վրաստանէն, ինչ որ առաջ կը բերէ ցամաքային ճառագայթում (radiation), և այդ իսկ պատճառով պարզապէս ցամաքային կլիմայ, որ իրապէս բարեխառն է, ամառը տաքանելի չէ, արեւը՝ չոր և այրող ըլլալով հանդերձ թեթեւ է: Բայց բնութեան մէկ անհասկնալի կատակով Հայաստանի կլիման այսպէս կերպարանափոխ ընող լեռնային նկարագիրը՝ միօրինակութիւն չունի:

Հայկական Բարձրաւանդակը իր ամբողջութեամբ հարթ հաւասար մակերեւոյթ մը չունի, այլ ընդհակառակը անհամար

ելեւէջներ, բարձրաւանդակի երեսէն վեր զցուած վիթխարի գազաթններ, լեռնային զանգուտներ, շղթաներ և պարեր ունի, որոնք այդ մակերեւոյթին վրայ կ'ստեղծեն կլիմայական այլազանութիւն մը, գրեթէ աշխարհի ոչ մէկ կողմը տեսնուած:

Հայաստանի մէջ խիստ ցուրտէն, եղեմներէն, յանկարծ եղանակը կը փոխուի այրող ամառուան: Արեւադարձային գուլաւանները, և վեց ամիս շարունակ սառչոյցներով պատած դաշտերը, այնքան մօտիկ են իրարու, որ ոչ մէկ տեղի հետ կարելի է համեմատել:

Նոյնպէս անսովոր երեւոյթ մըն է ուրիշ երկիրներու մէջ, որ 1500 մէթր բարձրութեան վրայ ցորեն հասնի և 2000 մէթր բարձրութեան վրայ գարի, ինչպէս որ Հայաստանի մէջ կը հասնի:

Այնպէս որ երբ մէկ կողմէն Հայաստանի բազմամարդ և մշակույթ գաղտերը, որոնցմէ սկիզբ կ'առնեն Եփրատ, Տիգրիս, Կուր և Արածանի, աւելի բարձր են Եւրոպական լեռներու ամենէն բարձր գագաթներէն և իր եղերքներուն վրայ հաստատուած բազմաթիւ գիւղերով Սեւանայ լիճին մակերեսէն շատ վար են Սիմբլոնի, Կենեսոսի և Սոկոբարտի Ալպեանց համալուար կիրճերը, միւս կողմէն Հայաստանի ինչինչ մասերուն հողային մակերեւոյթը կու գայ կը խոնարհի մինչեւ ծովին մակերեւոյթին հաւասարելու աստիճան և նոյնիսկ սնկէ ալ վար, ինչպէս Կոսպից ծովուն ափերը, որոնք 25 մէթր աւելի վար են քան Սեւ ծովին մակերեւոյթը (*):

(*) Հետեւեալ ցուցակին մէջ նշանակուած են Հայաստանի զանազան դաշտերուն ծովին մակերեսէն ունեցած բարձրութիւնները:

Սիւնեաց (Ղարապազի) լեռնադաշտ	տւրջ	2450-2600	մէթր
Ալսուն դաշտ	»	2240-2300	»
Վանի դաշտագետիկ	»	1989-2130	»
Սեւանի սափասաններ	}	»	1980-2000
Կիլիկի կամ Քարաեազրի դաշտ			
Ճորոխի դաշտ	»	1920-2070	»
Արագածոտնի դաշտ	»	1920-1980	»
Կարնոյ եւ Բաւեհի դաշտագետիկ	»	1740-1830	»
Պայազիսի սարասպիեր	}	»	1525-1675
Խնուսի լեռնադաշտեր			
Ալաշկերտի			
Ապաղայի (Վանի) դաշտ			

Այս անհամեմատ խորզուբորզութիւնները, այսինքն անոր բարձր լեռները, խոր հովիտները և ընդարձակ դաշտերը պատճառ են որ անոր կլիման երբեք միօրինակութիւն չունենայ և սաքը և ցուրտը հոտ իրարու դէմ մաքառին: Եթէ ոչ Հայաստանի արեւը իբրեւ բարեխառն դառի արեւ այնքան կիզիչ է որ կը հարկեցնէ Տիարպէքիւրի շէնքերը ծածկող կապարները, ինչ որ անհաւատարի է նկատելով այն վեց ամիս և աւելի տեւող սոսկալի ցրտութիւնը:

Հայաստանի մէջ ձիւնը շատ առատ կ'ըլլայ:

Բաղէշի մէջ Յունվարին ձիւնին խորութիւնը հինգ մէթրի կը հասնի:

Արարատի յաւիտենական ձիւնի հաստութիւնը առնուազն 610 մէթր պէտք է ըլլայ:

Զմեռը, կը տեւէ ութ ամիս Սեպտեմբերէն մինչեւ Յունիս: Թէեւ Յունիսին, Էրզրումի մէջ նոյնիսկ Յուլիսին ձիւն տեղալը տեսնուած է ըստ Էլիզէ Ռէկլիւի: Զիւնը կը տեղայ հըսկայական առատութեամբ և իր բարձր շերտերուն տակ կը ծածկէ ամբողջ երկիրը: Ճամբաները կը փակուին և հաղորդակցութիւնը կ'ընդհատուի:

Այս սպիտակ տարածութենէն վեր բարձրացող մուխի ծրւէններ միակ նշաններն են թէ այդ համատարած ամայութեան տակ ծածկուած գիւղեր կան ուր մարդիկ կ'ապրին: Իսկ քաղաքներու մէջ ճամբաները կը ծածկուին սառոյցի հաստ շերտով, որ երբեմն մէկ մէթր խորութեան կը հասնի: Քիչ գոր-

Մանազկերտի դաշտ	}	տւրջ	1370-1525	մէթր
Բաբերդի				
Արսազի (Մակու)				
Շիրակի եւ Վանանդի	}	»	1225-1525	»
Արալասականի				
Երզնկայի				
Մուշի	»	»	1075-1225	»
Նախիջեւանի	»	»	915-1075	»
Խարբերդի	»	»	915-1000	»
Արարատեան	»	»	800-1075	»
Տիարպէքիւրի	»	»	550-610	»
Մուղանի (Դարանդաշտ)	»	»	33-60	»

ծածական ճանապարհները ամբողջապէս կը լեցուին տանիքներէն թափուած ձիւնով: Այլեւս ոչ ձիեր կ'երեւին և ո'չ ջորիներ, միայն ուղտերու կարաւաններ, այն ալ շնորհիւ ուղտերու երկար ստեւին, որով ամէն տեսակ խտուածիւններու կրնան դիմադրել: Երբեմն ալ եզներ կ'երեւին, որոնք թեթեւ սահնակներ կը քաշեն: Բարեխառնութիւնը մինչեւ գերոյէն 30-35 աստիճան վար կ'իջնէ:

Հին ատեն այս եղանակին մէջ կարաւաններ հետեւին կ'առնէին խանձր մուշտակներ, կտրել անցնելու համար ձիւնի եւ սառոյցի խաւերու տակ պնդացած լիճերը և գետերը, որոնք համածածկ պատեանին ներքեւ սեւէ զանազանութիւն չէին ներկայացնէր:

Սովորական պատահարներ էին տարիին այդ տխուր եղանակին մէջ հիւսիսային մրրիկներու և ձիւնի փոթորիկներու հետեւանքով ամբողջութեամբ թաղուելը և կորսուելը կարաւաններու դեռ ժէ. դարուն, ինչպէս կը վկայեն Հայաստան շրջող ճամբորդներ:

Ըստ Ստրաբոնի հին ատեն Խորձեն (Տերսիմի հարաւային կողմը), զաւառին մէջ այնպիսի ծայրայեղ չափերով ու յանկարծակի ձիւն կու գար, որ ճամբորդները երկար ձող մը կը տանէին հետեւին, որպէսզի եթէ ձիւնի հիւսնի տակ թաղուելու ըլլային կարենային այդ ձողով իրենց գերեզմանէն ծակ մը բանալ օդ առնելու և իրենց կեանքի փրկութեան համար անցորդներէն գթութիւն և օգնութիւն հայցելու:

Հայաստանի ձմեռը — Ոսկերերանի քառերովը՝ որ անձամբ ենթարկուած էր անոր խտուածեանը՝ իր քաջորին մէջ — յաճախ վախ պատճառուած է աշխարհակալներու և առակ եղած է հին պատմիչներուն, Քսենոփոնէն սկսեալ մինչեւ մեր օրերը: Այսպէս Տակիտոս, հռոմայեցի պատմիչը, դժնդակ կ'անուանէ Հայաստանի ձմեռը և Որատիոս բանաստեղծը նպատ լեռը սասկասառոյց կը կոչէ: Կարնոյ դաշտին ձմեռը ստուգուած է թէ Աէն-Պէռնարի լեռան ցուրտէն նուազ չէ, թէպէտ Կարնոյ լայնութեան աստիճանը 5 աստիճան և բարձրութիւնն ալ 500 մէթր պակաս է քան Ալպեանց այդ հռչակաւոր վանքը:

Այսպէս Կարնոյ մէջ 1902-3ի ձմեռը հարիւրամասեայ ջերմաչափը իջած է մինչեւ -39°ի աստիճան և մի քանի ամիս ջերմու-

թիւնը մնացած է -10°ի և 20°ի միջեւ, հակառակ անոր որ արեւը յաճախ կը փայլէր, բայց՝ անկարող էր օդը տաքցնել:

Նոյնպէս Ակոռիի ձմեռը, 39 աստիճան լայնութեան տակ, և 1760 մէթր բարձրութեամբ, հաւասար է Հիւսիսային Գլուխի (ստոււցեալ գօտիի տակ՝ Եւրոպայի հիւսիսային ծայրը) ձմեռուն: Երեւոնի մէջ տեսնուած է որ ամառը շուքին մէջ ջերմութեան աստիճանը բարձրացած է 30° (Ռէօմիւր) և ձմեռը իջած է մինչեւ 40° (Ռ.) գրոյէն վար: Ասանկ զգալի տարբերութիւն մը միայն ստուուցեալ գօտիի տակ, կրէօլանտա կղզիի մէջ կրնայ տեսնուիլ:

Էլիզէ Ռէկլիւ Հայաստանի վրայ խօսելով կ'ըսէ «Գարուն չկայ հոն, կան կլիմայի ծայրաբեւեռներ, մերք կասաղի սառնամանիք, մերք կիզիչ՝ հասարակածային սառ»: Կլիմայական այս սոսկալի ծայրայեղութիւնները տառապեցուցած են Հայաստանի բնակչութիւնը որուն ամբողջութիւնը վտանգուած է այս կերպով:

Այսպէս Երեւանի մէջ ամառն անտանելի կը դառնայ և մանաւանդ վտառողջ, վանդի տենդի բոյն մը կ'ըլլայ: Այս պատճառով է որ Հայկական առակ մը ստեղծուած է որուն համաձայն «Տփղիսի մէջ երիտասարդները չեն զանազանուիր ծերերէն. Երեւանի մէջ ողջերը՝ մեռելներէն»:

Հայաստանի կլիմային այսպանութիւնն ա'լ աչքի կը զարնէ երբ զարնան դիտուի: Տակաւին լեռնագաւառը ձիւներու տակ ծածկուած, կտտարեալ ամայութիւն մը կը ներկայացնէ երբ զինքը Պոնտոսէն բաժնող լեռներէն անդին նորինջիններ իրենց ծաղիկներու բուրումովը անուշահոտութեամբ կը լեցնեն օդը Պոնտոսի ափանքներուն վրայ, ուր արդէն հասած են ծիծեռնակներ, Հայաստանի վրայէն անցնելով՝ առանց հոն ոտք կոխելու, մինչդեռ ուրիշ կողմ մը՝ հոն ուր լեռները կը խոնարհին և աւազուա դաշտերու մէջ կարծես կը խորասուզուին, ինչպէս օրինակի համար Մուսուլի մէջ, արդէն սառոյց կը ծախեն, տողակացուցիչ ջերմութիւնը բարեխառնելու համար: Եւ սակայն Տրպալզոնէն Մուսուլ Հայաստանէն անցնելով ուղիղ գիծով, աւելի չէ քան 6-7 հարիւր քիլոմէթր, այնպէս որ շագեկառք մը կրնայ կտրել այդ տարածութիւնը, արշալոյսէն մինչեւ վերջալոյս և ճամբորդը միեւնոյն օրուան մէջ վայելիլ դարնանային առտու մը, սաստկաշունչ և սառուեցուցիչ կէս օր մը և հեղցուցիչ ամառնային իրիկուն մը:

Նոյնիակ հայրենի հողին վրայ անհարթ կլիմայական զանա-
 զանութիւններ պակաս չեն: Արարատի ստորտը տարածուած
 ընդարձակ Մուղանայ դաշտը, զոր կը կտրեն կ'անցնին Երասխ
 և Կուր, իրարու հետ խառնուելէն թէ սռաջ և թէ հտեւ, ամէն
 ժամանակ ձմեռը կենդանիներու ապաստանարան մը եղած է իր
 բարեխառն կլիմային համար: Ամառը խոպան անապատ մըն է
 և արեւէն այրած խոտերուն տակ կը պահէ խորամանկ օձեր,
 որոնցմէ Պոմպէոսի բանակը աւելի նեղութիւն կրեց, քան թէ
 Ասիոյ բոլոր թշնամիներէն: Սակայն այս դաշտը՝ ձմեռը արօտա-
 տեղի և ճշմարիտ ապաստանի կը փոխուի: Այս վերջին եղա-
 նակին՝ հաղիւ թէ թափանցիկ բարակ ձիւն մը կը նստի: Մու-
 զան կը շէննայ, թռչնալից միջավայր մը ներկայացնելով:

Միջին դարու թաթարական արշաւանքներուն ատեն այդ
 դաշտը անոնց ծառայած է իրր զրօլա (ձմեռանոց), ինչպէս մո-
 տակայ Արատաղի (= Ծաղկոց կամ Ծաղկէոյ լեաներ) զովանցիկ
 բարձրութիւնները իբր եալլա (ամառանոց, հովոց):

Եւ նկատելի է որ Հայաստանի ջրային դրութիւնը՝ եթէ ո՛չ
 բովանդակ ջրադրութիւնը, կլիմային մեղմութիւնը և հողին
 արգասաւորութիւնը աւելի պակասած է քան թէ աւելցած, վա-
 սընդի Հայաստան, որ երբեմն այնքան հարուստ անտառներ ու-
 նէր վերջերը գուրկ էր անոնցմէ և իր լեաները մերկ էին:

Այս պատճառով է որ երկիրը ամբողջապէս դարձած էր մը-
 ռայլ և խոժու:

Փայտի չդոյութեան հետեւանօք երկիրին մասնաւորապէս
 գիւղացի կամ երկրագործ տարրը ստիպուած էր կենդանիներու
 թրիքով տաքնայ և այս պատճառով իր արտերը զրկուած էին
 պարարտացուցիչներէ:

Նոյնպէս դիտուած է որ Հայաստան հետզհետէ աւելի
 երաժշտ ու չոր երկիր մը կը դառնար:

Հայաստանի ձորերը, հովիտները, որոնք փորուած են ձիւ-
 նահալի հետեւանօք ջուրերու զօրեղ հոսանքէն, կը հաստատեն թէ
 նախապէս երկիրին ջուրերը մեծ ծաւալ ունեցած են և հին
 ատեն այս ջուրերը շատ աւելի հարուստ ու կանոնաւոր եղած
 են: Ասոր իբր ապացոյց բաւական է յիշել Խալդական և Ասոր-
 րեստանեան ջրաբաշխական գրութիւնները որոնցմով կը ջրուէին
 դաշտերը և քաղաքներու պէտքերուն գահացում կը տրուէր:

Հայկական լեաներու անտառազրկութիւնն է միայն որ պատ-

ճառ եղած կրնայ ըլլալ այս երկիրէն բխող գետերու, ջուրերու
 նուազութեան, ինչ որ կը հաստատուի նաեւ ուրիշ փաստերով:

Այսպէս Ստրաբոն կը յիշէ որ Եփրատ և Տիգրիս գետերէն
 առաջինը աւելի ջուր կը բերէր իր խառնարանը (այսօրուան
 Շատ էլ-Արաբ) քան թէ վերջինը, մինչ հիմա հակառակն է: Այս
 փաստ է թէ Հայաստանը, ուր կը սնանի Եփրատը աւելի չորցած
 է քան Միջագետքը: (Hist. des Anciens Arméniens. Թրգ. Բ. 24.)

Միւս կողմէ Ստրաբոնի Հայաստանի ձիւնին նկարագրու-
 թիւնը և անոր վրայ ճամբորդելու համար իր ժամանակ ձեռք
 առնուած նախազգուշութիւնները — ինչպէս որ վերը բացատ-
 րուեցու — որոնց այսօր պէտք չէ մնացած, փաստ է թէ ձիւնի
 քանակութիւնը զգալի կերպով պակասած է:

Ասոնք ցոյց կու տան թէ հնագոյն ժամանակներէ սկսած
 ձիւնի և անձրեւի քանակը առաջատուական կերպով պակասած է,
 անտառներու պակասելուն համեմատութեամբ:

Օդի ծայրայեղ վիճակէ մը դէպի միւսը եղած փոփոխու-
 թիւնները, տատանումները և նոյնիակ չորութիւնը կը բնորոշեն
 միմիայն Հայաստանի կեդրոնական մասը, որ երկիրին կէսէն
 աւելին կը բռնէ և որ, ինչպէս ըսինք՝ իր կարգին պիտուած և
 կտրտուած է անհամար լեաներով և պարերով, ոչնչպէս որ
 ջուրի բազմութիւ ընթացքները մեծ մասամբ անպէտ կը դառնան
 և հողերը ոռոգելու չեն ծառայեր, որովհետեւ անոնք կը գահա-
 վիժին և կը սեղմուին այնպիսի ժայռուտ զանգուածներու մէջ,
 որոնց բարձրութիւնը ուղղակի վերէն վար չափելով երբեմն
 հինգ հարիւր մէթր է, ինչպէս Եփրատի ափերն են, երբ այդ
 գետը վար կ'իջնէ Երզնկայէն: Ճամբաներն ալ շարունակ չեն
 կրնար հետեւիլ գետերու եզերքներուն: Գետերու չորցած ան-
 կողինները, ինչպէս Ճորոխը և ուրիշ զանազան հեղեղներունը,
 ամառ ժամանակ, բազմութիւ գաւառներու մէջ իբր ճամբայ կը
 ծառայեն: Այսպէս Եփրատի վերին արեւմտեան ձիւղը՝ Գարա-
 Սուն (= Գայլ գետ) Հայաստանի մէջ միայն երկու կամ երեք
 դաշտ կ'ոռոգէ, իսկ անոր ներքին արեւմտեան ձիւղը՝ Մուրատ
 Սուն (= Արածանի ըստ նախնեաց) աւելի օգուտներ կու տայ,
 որովհետեւ աւելի երկար է, սակայն ընդհանրապէս ան ալ միեւ-
 նոյն բնոյթն ունի:

Հայաստանի մէջ լեաներէն անթիւ առուներ կը հոսին,
 որոնք սովորաբար մէկ քիլոմէթր երկարութիւն ունին: Ասոնք

հիանալի մարգագետիններ կը բուսցնեն հեղեղատներուն մէջ և ջրաղացներու անիւները դարձնելէ յետոյ պատրաստուած առուներով, ջրանցքներով կ'երթան դաշտերը ոռոգելու:

Ֆիզիքական այս վիճակը վայրկեանապէս կը փոխուի, երբ մարդ կեդրոնական այս բարձրաւանդակին աստիճաններէն վար կ'իջնէ:

Հետեւելով այս բարձրաւանդակի էջքին, կ'անցնինք Արածանիի մանրախիճերով ծածկուած երկար ճամբան սկսեալ Ալատաղէն (= Ծաղկաց կամ Ծաղկէոյ լեռ) (*), ուրկէ՝ Արարատին ստորոտը, սկիզբ կ'առնէ այս գետը: Անկէ յետոյ արդէն Բալուէն սկսեալ մինչեւ իր խառնարանը Արածանին կը տարածուի շարք մը բուսականութեամբ ճոխ ձորերու մէջ, մասնաւորապէս Խարբերդի շրջանակներուն մէջ ուր բուսականութիւնը որոշ չափով տաք երկիրները կը յիշեցնէ:

Քիչ մը վարը Տաւրոսը աղեղնաձեւ կը կտրուի որպէսզի ճամբայ բանայ այս գետին, որուն ջուրը արդէն կրկնապատկուած կ'ըլլայ այս երկու ճիւղերուն միացումով:

Հայաստանի տարածութեան վրայ ընդհանուր ակնարկ մը նետելով հոն պիտի տեսնենք աւելի կամ նուազ յստակ երեք գլխաւոր բաժանումներ, որոնք իրարմէ կը զանազանուին բաւական բնորոշ գիծերով (հմտ. Hist. des Anciens Arméniens. Թրգ. Բ. 33-46):

Այս երեք բաժանումներն են.

1. Կեդրոնական մասը, որ կը բաղկանայ Արաքսի վերին հոսանքէն և Կարսի նահանգին հարաւակողմէն: Կը ներկայացնէ ժայռուտ մակերեւոյթ մը, որ ընդհանրապէս նպաստաւոր չէ երկրագործութեան: Ունի կանոնաւորապէս ոռոգուած նեղ հովիտներ և չափազանց ընդարձակ դաշտեր, որոնք կը կերակրեն չափազանց ցանցառ կերպով ցրուած գիւղերու և քանի մը ոչ-բազմամարդ քաղաքներու բնակչութեան 3/4 ը: Իր արտադրութիւններն են ցորեն, որ կը մշակուի գրեթէ հաւասար չափով թէ՛ իբր նաց և թէ՛ իբր կերակուր, գարի և ձմեռուան խստ կենդանիներուն համար:

(*) Իր լեռնագագաթներն են Նպաս, Քոնդրակ ալ կոչուած է եւ 10,000 ոսկ բարձրութիւն ունի:

Կեդրոնական քաղաքներուն շուրջը կը կատարուէր նաեւ բանջարեղէնի մշակութիւն:

Այս շրջանակին ամբողջ մակերեւոյթին գրեթէ 8/10 ը հրաբլիտային կլոր բլրակներու, ժայռոտ լեռնամասերներու, բոլորակ բլուրներու, լեռներու հանդիպագծափններու և մանրախիճային և մոխրային լեռնասանարներու անասման, անորոշ շարք մըն է: Այս բարձունքները տարբեր են այն գագաթներէն, որոնք առնուազն մակերեւոյթին երրորդական մասն կը գրաւեն և բացարձակապէս անբերի են, և տեսքով մերկ ու տխուր: Անոնց ստորոտները կմայլաքի պէս լերկ են դարձած, ո՛չ ծառ կայ, և ո՛չ նոյնիսկ մացառ մը, բայց՝ ընդհանրապէս անոնք ո՛չ ժայռեր կը ներկայացնեն և ո՛չ ալ լաւաներ: Շատ հազուագիւտ են գեղատեսիլ վայրեր, այլ կը տիրէ միօրինակութիւն մը, որ հեռուէն դիտուած՝ վեհաշուք տեսարանի մը երեւոյթը կ'ստանայ և երկիրին հարստութեան գլխաւոր աղբիւրն է:

Քիչ են խոշոր քարերը, իսկ մշակելի, փափուկ հողը՝ շատ և միապազաղ տարածուած փոքրիկ խճակոյտերու միջեւ: Այդ հողը կը հասցնէ լաւագոյն ինքնարոյտ խոտը որ նուրբ է և չոր, և ձմեռ ժամանակ ձիւնի բարակ շերտի մը տակ թաղուելով՝ լաւագոյն կերպով կը սնուցանէ արջառները և ոչխարները: Ամբողջ երկիրը այսպէս գարնան վերջերէն մինչեւ աշնան կէսերը ծածկուած է խոշոր դմակաւոր ոչխարներու, սեւ այծերու և բաւական լղար կովերու հօտերով:

Որքան որ խորը փորես հողը այնքան աւելի արդիւնք կուտայ առանց ուրիշ ծախքերու և աշխատանքի:

2. Հարաւային գօտին՝ որ կը պարունակէ իր մէջ Հայաստանի հարաւ-արեւմտեան մասը, Կորդուաց լեռներէն Եփրատ (Խարբերդ-Մալաթիա) տարածուած երկիրները, մէջն ունենալով Քղին և Սղերդը, կը փայլի բնութեան յորդառատ բեղմնաւորութեամբ: Լեռները տեղ տեղ հոս ծածկուած են ծառերով, որովհետեւ ձմեռը այս մասին մէջ այնքան խիստ չէ: Խոտերը հոս աւելի կը բարձրանան վասնզի ձիւնը քիչ է և շուտ կը հալի, իսկ լեռնամասերը այլևս տափակ և քարոտ կերպարանք չունին: Գալով հարաւային Եփրատի, Վերին Տիգրիսի, Քղի-Սուրի և Պոթան-Սուրի հովիտներուն՝ անոնք լաւ ոռոգուած և ծածկուած են քիչ հրաբլիտային բուսանողով: Հոս արեւը կը փայլի իր

ամբողջ թափով, նոյնիսկ կ'այրէ Տիարպէքիւրի գաւառը, որ արդէն Միջագետքի մէջ կը գտնուի: Այս ընդարձակ տարածութիւնները ուրկէ կ'անցին Պարսից ծոց թափուող Եփրատ և Տիգրիս երկու գետերուն ջուրերը, քամիներ կ'ուղարկեն դէպի այս կողմ և Իսկէնտէրունի ծոցէն հոս կը հասնի Միջերկրականի խոնաւ օդը, որ Տաւրոսի, Անդիտաւրոսի և Հայկական Տաւրոսի յղկուած լանջերէն անցնելով, կը մաղուի, կը թարմանայ, վաւրնդի այս լեռները կը ծծեն իր գոլորշիները:

Հայաստանի այս մասը նման է Սեւ ծովի և Միջերկրականի հրաշալի եզերքներուն, առանց նկատի առնելու որ 3/4 ը անտառներէ զրկուած է կեդրոնական բարձրաւանդակին պէտքերուն գոհացում տալու համար: Այս գօտին կը կազմէ Փոքր Ասիոյ պարտէզը, արտադրելով հացահատիկներ, պտուղներ, բանջարեղէններ և բարեխառն կլիմաներու ամենահարուստ ծաղիկները:

Կ'արտադրէ զօրաւոր գինի մը, որուն պատրաստութեան եթէ քիչ մը խնամք սարուի առաջնակարգ կրնայ ըլլալ: Եթէ եւրոպական երկրագործութիւնը (agronomie) և պարտիզպանութիւնը (horticulture) հոն ներմուծուած ըլլային, բուսական և կենդանական տեսակները կրնային կատարելագործուիլ և այն ատեն աշխարհի ոչ մէկ մասին մէջ աւելի ընտիր բրինձ, աւելի համեղ դեղձ և սեխ, և միտով ու բուրդով աւելի հարուստ ոչխար կրնար տալ: Տեսակներու ընտրութեան (selection) և մարգագետիններու մշակութեան ազնուացման միջոցով հեշտութեամբ կարելի է ոչխարի (ovine) և սրջառի (bovine) հրաշալի ցեղեր ստանալ:

Հոս բնութիւնը իսկապէս յորդառատ բեզմուտորութեամբ մը օժտուած է:

3. Երրորդ գօտին՝ այն որ պատշաճ է կոչել հիւսիս-արեւելիան, կը տարածուի Վանի լիճին և Արարատի միջեւ, ուրկէ բարձրանալով դէպի հիւսիս Արաքսի հովիտները և մեղմ զառիվայրերով դէպի Կուր գետն իջնող բարձրաւանդակը, իր լեռնային մասերով նմանութիւնը կը բերէ առաջին գօտիին կլիմային, իսկ լիճերուն եզերքը և գետերուն ափերը՝ երկրորդին:

Այս գօտիին կլիման միւս երկու գօտիներու խիստ ծայրերուն խառնուրդն է: Հոս կան բաւական երկրորդական լիճեր, ինչպէս Արարատի հարաւային կողմը Պալըզ-կէօլն (= Գայլա-

տուայ լիճ) (*) (2255 մէթր) որ լի է ձուկերով, իսկ հիւսիսը Սեւանայ լիճ(**) (6300 ոտք = 1933 մէթր): Ասոնցմէ զատ՝ կան ուրիշ շատ կարեւոր ջուրեր, որոնք կոպիտ ժայռերով չըջապատուած են: Ահա մասամբ այդ ներքին փոքրիկ ծովերուն — որոնց աղբեցութիւնը աւելի եւս կ'աճի ոչ-հայկական ամենաընդարձակ լիճին՝ Ուրմիոյ լիճին(***) դրացնութեամբ — պէտք է վերագրել արեւելքի և հիւսիս-արեւելքի բարեխառն կլիման:

Արարատը առանձին կամ իր այն լեռնաշղթաներով, որոնք կ'երկարին դէպի արեւմուտք, կը կազմէ ջուրերու բաշխման կեդրոնը, և դէպ ի Կասպից ծովը, դէպի Վանի լիճը գետեր կը զրկէ, որոնք ուղղակի իրմէն կախում ունին:

Արարատի այս երկու ուղղութեամբ թեքումները հնարաւորութիւն կ'ստեղծեն սր գոլորշիացման այս երկու աւազաններէն թարմ ու խոնաւ օդ ստացուի:

Այս շրջանին մէջ բուսականութիւնը ինքնարոյս, խիտ և բազմազան է, բայց կարող չէ հասցնել հարաւի բոլոր պտուղները: Վանի շուրջը ձմեռը կարճ և թեթեւ է, ամառը հեղցուցիչ տաք չ'ընէր շնորհիւ իր բարձրութեան (1825 մէթր լիճին մակերեւոյթէն), որ կը բարեխառնէ արեւի ճառագայթումը: Նոյն վիճակը ունի նաեւ Արաքսի հովիտը: Առաջին դաշտը, որ այս գետը Արարատեան լեռներու(****) հիւսիսային կողմը կը կտրէ, այսինքն Ալթուն դաշտը, 2235 մէթր բարձրութիւն ունի, իսկ միջին հովիտը, սր կ'երթայ Արարատի նահանգին մէջ մօտաւ-

(*) Այս լիճը կի գտնուի Ադրի-Տազի վրայ, ծովէն 7400 ոտք բարձրութեամբ: Իր ջուրը անու է:

(**) Նաեւ կոչուած է Գեղարձուցեաց ծով, ինչպէս նաեւ Գեղամայ ծով: Թուրքերը կը կոչեն Կեօֆէ շէնիզ եւ Պարսիկները՝ Յիրիայի-Շիրիս: Երկայնքը 71,000 մէթր, լայնք՝ 42,090 մէթր, խորութիւն՝ 128 մէթր. ջուրը անու է: Այսօր Խ. Հայաստանի ջուրի մեծագոյն մթերանցը:

(***) Կոչուած է նաեւ Կապուսան ծով, Ծով Հայաց, Ծով Գալբեժու, Սպաւսա լիճ, Ուրումիէ, Ուրմիա շէնիզի անուններով: Ծովէն 4100 ոտք բարձր է: Երկ. 128,000 մէթր. լայնք՝ 38,000 մէթր, խորութիւն 15-17 մէթր: Ջուրը աղի:

(****) Մեծ Մասիսէն դէպի հիւսիս-արեւմուտք երկարող լեռնաշղթան, մինչեւ Բասենի եւ Կարնոյ դաշտերը կը կոչուի այսպէս: Թուրքերը գայն կոչած են Ադրի կամ Էջրի օտազ:

րապէս 1000 մէթր է: Հոս նոյնպէս ձմեռն այնքան խիստ և երկարատեւ է, որքան լեռներու միւս երեսը, Ալաշկերտի դաշտին մէջ, որ 1677 մէթր բարձրութիւն ունի, ասկէ զատ՝ Արաքսի լայն անցքերուն ուղղութիւնը, որ դէպի արեւելք երթալով կը յանգի ընդարձակ անմշակ դաշտերու, հնարաւորութիւն կու տայ լաւ քամիներ ստանալու, միւս կողմէն՝ ասքութիւնը մեղմ ու բաւարար է, այնպէս որ կարող է հրաշալի հունձք հասցնել և շատ տեղերուն մէջ նոյնիսկ խաղող և պտաղատու ծառեր: Իսկ Արարատեան նահանգին մնացեալ մասերը՝ մինչև Սեւանայ լիճ և Կարսի բարձրաւանդակը, որ Կարնոյ չափ ցուրտ է, շատ հարուստ են և կու տան բարեխառն կլիմայի բոլոր բերքերը, նոյնիսկ տաք երկիրի բերքերէն բրինձ, բամպակ, թուփ, միայն սակայն այն տեղերուն մէջ որոնց դիրքը բաւական ցած է և հողը՝ արեւընդդէմ:

Այս երեք մեծ, ընդհանուր գոտիներէն զտա, կան բազմութիւ վայրեր, որոնց բնութիւնը մասնաւորապէս ժպտած է և մեծ առաւելութիւններով բաժնած է իրենց բերտ, զաժան շրջապատէն: Այսպէս են հիւսիսային կողմը, Կիւմիւշխանէի և Թորթուսի հովիտները, որոնք ամբողջ կեդրոնին պտուղները կը մատակարարեն:

Կեդրոնն ալ իր կարգին ունի հրաշալի վայրեր, ինչպէս Երզնկայի և Խնուսի շրջաններուն մէջ: Այս բացառութիւնները առաջ կու գան տեղի ցածութիւնէն:

Ասոնք բոլորը կու գան հաստատելու թէ Հայաստան իր բնագրութեամբ կը ներկայացնէ երկիր մը ուր քով քովի եկած են բազմազան և խառն, իրարու հակառակ բնական նկարագիրով և կլիմայով նահանգներ, որոնց բնակիչները բնական է իրենց գաւառին աշխարհագրական միջավայրին ազդեցութեան տակ իրարմէ տարբեր նկարագիրներ և խառնուածքներ պիտի ունենային, վասնզի ինչպէս անհատներ իրենց միջավայրին, նոյնպէս նաեւ ազգերը իրենց բնակավայրին կլիմային և աշխարհագրական նկարագիրին խորունկ դրոշմը կը կրեն, մասնաւորապէս իրենց ազգային ընդհանուր յատկանիշներուն կազմութեան մէջ:

Հասարակածային տաք կամ բևեռային ցուրտ կլիմայի մէջ ապրող մարդիկ անկարելի է որ միեւնոյն նկարագիրը կամ բարքերը ունենան, քանի որ չափազանց տաք կամ արիւն ցամքեցնող ցուրտը կամ կը ջլատեն կամ կը մեղկացնեն մարդը, այնպէս որ

շատ բնական է որ բարեխառն կլիմայի մէջ ապրողներ՝ իրենց չափաւոր կիրքերով և չափաւոր յոյզերով, աւելի ընդունակ ըլլան քաղաքակրթութեան, վասնզի չափաւոր ցուրտ մը ժիրութիւն կու տայ և չափաւոր տաքութիւն մը զուարթութեան և դրօսասիրութեան կը մղէ մարդը: Միգամած երկիրի մը բնակիչները՝ իրենց վարքովը միգային քօղ մը ունենալ կը թուին, մելամաղձոտ և ծանրաբարոյ բարքով մը, ինչպէս են Անգլիացիք և Հոլանտացիք: Այսպէս ալ և թերեւս ա՛լ աւելի ալ երկիրին կազմուածը և դիրքը ազդեցութիւն ունին և տպաւորութիւն կը թողուն բնակչութեան վրայ:

Թաթարիստանի ընդարձակածաւալ չոր անապատներուն բնակիչները և Իտալիոյ կամ Ամերիկայի հարաւային բարեբեր դաշտերուն բնակիչները՝ բնական է որ տարբեր բնաւորութիւն ունենան, մէկը միշտ մշակութիւն ընելով երկիրին կը կապուի և հաստատուն բնակութիւն կ'ուսենայ, ամէն առատութիւն և բարեկեցութիւն գտնելով հողին արդիւնքին մէջ, իսկ միւսը անդադար լերկ ու մերկ երկիրն վրայ ստնելով կ'անցնի կամ ման կու գայ իր հօտերով և երամակներով՝ անոնց ճարակ գրտնելու համար, որով մէկը շինարար, գործօն և բարեկարգ ազգ մը կը հանդիսանայ, իսկ միւսը թափառիկ, աւարառու, տնաւեր, և քանդիչ տարր մը:

Չուիցերիոյ լեռնաշատ և լճաշատ և նկարչական գեղեցկութիւններով օժտուած լեռներու և հովիտներու բնակիչները, հարկ է որ զմայլին իրենց հայրենիքին բնական գեղեցկութիւններուն վրայ որ ամէնէն տխուր եղանակին մէջ ալ իր չնորհքը ունի, որչափ եւս աւելի գեղեցիկ եղանակին մէջ:

Յոյներու և Իտալացիներու գեղարուեստական զարգացման առաջին պատճառը իրենց հայրենի երկիրին բնական նկարագիրը, բարեխառն կլիման, առատ բուսականութիւնը, պէսպիսութեամբ լի տեսարանները և մանաւանդ գիրենք շրջապատող ծովն է: Մասնաւորապէս ծովին ազդեցութիւնը մեծ եղած է իր եղերքներուն վրայ բնակող ժողովուրդներուն վրայ: Իր ծփանքները և իր կատաղութիւնները զարմնալի նկարագրութիւններ ունեցած են, Յոյներու, Վինետիկցիներու, Անգլիացիներու, Բրիտոններու, և վերջապէս այն ամէն ազգերու վրայ որոնց երկիրը բախտաւոր եղած է գոնէ մասամբ ծով տեսնելու: Ծովին ազդեցութիւնը աւելի խորունկ է կղզիներու բնակչութեան վը-

րայ վասնզի ձեռներէցութեան, յանդգնութեան, խիզախութեան և բարատանգութեան ոգի կը ներշնչէ կամ ճարահատեալ մարդերը դէպի այն կը մղէ:

Անգլիա իր կղզի դիրքին կը պարտի իր բարձր վաճառականութիւնը և ծովերուն տիրապետելու աներեւակայելի յանդգնութիւնը, միտնգամայն այդ ազգը կ'օժտէ գոռոզութեամբ որմէ նաեւ անմասն չեն եղած յունական կղզիներուն բնակիչները, իրենց մէջ կրելով նաեւ աշխոյժ և ժիրութիւն:

Ինչ որ ճշմարիտ է ծովերէ շրջապատուած և կղզիացեալ ժողովուրդներու համար, դարձեալ ճիշդ է այն երկիրներու բնակիչներուն համար որոնք ուրիշ բնական արգելքներով՝ զրկուած են հարեւան ազգերու հետ հաղորդակցութենէ և կղզիացեալ կ'ապրին լեռնակղզիներու մէջ, ունենալով նոյն ոգին որ կը յատկանշէ կղզիներու բնակիչները: Իսկ բնութեան շնորհներէն զուրկ ապառաժուտ երկիրներու բնակիչները, կ'արտացոլացնեն այն չոր ու խոժոռ նիւթերուն առթած կերպով մը չոր տպաւորութիւնը՝ որ իրենց բարքերուն և շարժումներուն վերայ խորապէս տպաւորուած է:

Հայաստան որ ունէր բեւեռային սաստկաստուոյց ցրտութեամբ նահանգներ, ինչպէս նաեւ բորեխառն ու մեղմ կլիմայով գաւառներ, սրոնց բնակիչները բնական է չէին կրնար ունենալ իրենց միջավայրին ազդեցութեամբ՝ միեւնոյն նկարագիրը: Անոնցմէ ոմանք մեղկ և ոմանք խիստ բնաւորութիւն մը ստացած պէտք էր ըլլային, ինչպէս նաեւ ոմանք նախաձեռնարկ ու յանդուգն, և ոմանք անճարակ ու շուարուն նկարագիր մը, ըստ իրենց բնակավայրին բնական նկարագիրին:

Այս երեւոյթը չափազանց բնական էր, վասնզի անկարելի էր որ այնքան այլապան կլիմայ ունեցող երկրի մը բնակիչները ունենային միեւնոյն նկարագիրը և կեանքի միեւնոյն ըմբռնողութիւնը: Ըստեցաւ արդէն թէ Հայաստան դերազանցապէս լեռնային երկիր մըն էր, ինչ որ չէր կրնար անհետեւանք մնալ: Աւելի շատ նոս քան այլուր միջավայրը ստեղծած է այնպիսի ազդեցութիւններ որոնց կնիքակայ են ընդճանրապէս բոլոր լեռնական ժողովուրդները:

Առաւելապէս ինչ որ կը չեչտուի անոնց մէջ այն անընկճելի յարուսն է իրենց աւանդութիւններուն, և այն մեկուսացումն է որ անոնք ցոյց կու տան բոլոր օտար ազգերու հանդէպ: Այն-

պէս որ կարծես Հայաստան իր կամքով կղզիացած էր և ուրիշներուն թողած օտարներուն համար դիւրամատչելի դաշտերը կամ ծովեզերեայ և գետափնեայ տեղերը շահագործելու վտանգը և օգուտը: Ան Պոնտացիներուն լքած էր Սև ծովու հարուստ կղերքները և Պարսիկներուն՝ Կասպից ծովի եզերքներուն նաւթարեր հողերը, և հզօր ժողովուրդներու՝ Միջագետքի փարթամ ցորենի դաշտերը:

Հայաստան, այնպէս ինչպէս բնութիւնը ստեղծած է, առանց շահագործող արուեստներու և գիտութեան, ինքն իրեն գոհացում կամ բաւարարութիւն կու տար: Իր ոչխարներուն բուրդը միշտ ալ կը մատակարարէր հազուատեղէնը, չնայելով գործուածքին անկատարելութեանը, իր հանքերը կու տային իր տարրական պէտքերուն գոհացում տուող մետաղներ, (մասնաւորապէս պղնձագործութիւնը միշտ յառաջադէմ եղած է), վերջապէս՝ ամէն տեսակի քարահանքերը ծնունդ տուած են լաւ մեծ որմնադիրներու, որոնք ժամանակ մը շատ աւելի ճարպիկ էին: Այսպէս անիկա ստեղծած էր իրեն համար ինքնաբաւութիւն մը: Եւ Հայերը գուցէ՝ այս մեկուսացումին կը պարտին իրենց տեւականութիւնը եթէ ոչ շատոնց խորտակուած պիտի ըլլային իրենց հզօր դրացիներուն պէս:

Այս ընդհանուր նկատողութենէն զատ դիտելի է որ Հայաստանի զանազան գօտիներուն մասնաւորութիւնները ոչ նուազ այս գաւառներու վրայ ազդեցութիւն թողած են:

Հայաստանի կեդրոնական մասը (Արաքսի վերին հոսանքը և Կարսի նահանգին հարաւային կողմը) ուր առաւելապէս լեռնային է և նպաստաւոր չէ երկրագործութեան, ապահովաբար պիտի չունենար նստակեաց բնակչութիւն մը եթէ անթիւ նեղ հովիտներ և չափազանց ընդարձակ դաշտեր չ'ունենար:

Իր քանի մը ոչ-բազմամարդ քաղաքներու բնակիչները կ'ապրէին տարանջներու փոխադրութեամբ:

Այս շրջանին բնակիչները հազուադէպ կերպով քիչ մը միտով կը անանէին և իրենց ոչխարները սահաբին քանակութեամբ կ'արտածէին: Իրենց կովերուն տուած խիստ առատ կաթէն կը պատրաստէին մածուն, — որ հացին հետ իրենց էական անուսղն էր — և անհամ պանիր մը: Այս մարդիկը գրեթէ մեկուսացած մնացած էին շատ յետադէմ կամ նախնական վիճակին մէջ, նոյնիսկ դարերու երկար ժամանակամիջոցէ մը յետոյ, և չէին կրցած արդիա-

կան մշակութեամբ մը, իրենց դաշտերէն և հովիտներէն առաւելագոյն արդիւնքը ստանալ: Ողորմելի էր, այդ վայրերու հունձքին տեսքը, և այն արօրը, որով կը կատարուէր մշակութիւնը: Ան հասարակ երկար փայտ մըն էր ծայրը ունենալով երկաթէ կարթ մը, ճիշդ հին ասորեստանցիներու արօրին նման:

Այս շրջանակին քաղաքները ընդարձակուած գիւղեր էին, որոնք այդ տեղի գիւղերուն պէս, կը նմանէին խորանարդ ժայռի կոյտերու, փոշիով և մոխիրով ծածկուած, միապաղաղ կերպով գորշ, և կարծես թէ բորոտութենէ կրծուած: Անոնց տուները ունէին հարթ տանիքներ, ուր ամառը դեղին խոտ կը բուսնէր եթէ հոն ամառ չէր դիզուած կամ խոտի խուրձեր չէին փռուած արեւի տակ չորնալու համար:

Հազուագիւտ ու նեղ պարտէզներու մէջ այս ու այն կողմ բուսած քանի մը կաղամախիները տեղ տեղ կը խանգարէին երբեմն այս փարթամ փոքրիկ քաղաքներու միօրինակ մեկամաղձոտութիւնը:

Երկար օրեր ձիով ճամբորդող յոգնած դիտողի մը առջեւ այսպիսի ընկճող, միօրինակ պատկեր մը կը ներկայացնէին արեւելեան կողմը Պայագիւտը, Մուշը, Բաղէշը, կեդրոնին և արեւմուտքին մէջ՝ Բաբերդը, Կարինը, Երզնկան, Սեբաստիան: Միայն Բաղէշն լաւ կոփածոյ քարերէ շինուած էր: Այս շրջանի ժողովուրդը առաւելագոյն չափով պահպանած էր նահապետական կեանքի բարքերը, այդ ալ շնորհիւ տակաւին գոյութիւն ունեցող կէս-թափառական, անհաստատ կեանքին, որուն՝ գարունէն մինչեւ ձմեռ ենթակայ էր հովիւ ժողովուրդը:

Իսկ երբ կ'անցնինք Հարաւային գօտին, բոլորովին տարբեր նկարագրով մարդերու կը հանդիպինք: Հոս բնակիչները այլեւս չունին այն կոշտ դիմագիծերը, թախծալի կամ խորամանկ բնաւորութիւնները, որոնք բարձրաւանդակին բնակիչներուն դէմքին վրայ տխրութիւն դրոշմած են: Հոն ապրող Հայերուն, Թուրքերուն և Գղըլպաշներուն — որոնք կը կազմեն բընիկ տարրը — դէմքերը կ'արտացոլացնեն բնութեան զուարթութիւնը: Անոնց արտայայտութիւնը իրենց հողերուն նման լիառատ՝ ուրախ կեանքի մը գոհունակութիւնը ցոյց կու տայ:

Այս շրջանակը բնորոշուած է Հայաստանի կլիմաներէն բոլորովին առանձնայատուկ կերպով, ինչպէս տեսնուեցաւ Միջերկրականեան հովերու ազդեցութեան տակ:

Այս գօտիին մէջ գտնուող քաղաքներէն Մալաթիան իր արեւմտեան դիրքին շնորհիւ փոքր եւրոպական քաղաքի մը կը նմանի, իր կղմինարեայ կտուրներով և բազմաթիւ լուսամուտներով տուներով, սակայն Գղին, Սարրերդը (շինուած տւելի քան 1000 մէթր բարձրութեան վրայ), Տիարպէքիւրը (ստոր գաշտը Հայնի լեռան բոլորովին մօտէն չափելով հազիւ 900 մէթր բարձրութիւն ունի) և Սղերդը կեդրոնին քաղաքներուն տձեւ, խոժոռ կերպարանքն կ'ստանան: Բայց մարդոյ ձեռքով շինուած այս քաղաքներու տխրութիւնը, նոյնպէս նաեւ Սղերդին, ուր շէնքերը նուազ չափով ասորեստանեան ճարտարապետութեան աւանդական ձեւը կը յիշեցնեն, կը փարստի բնութեան յորդառատ բեղմնաւորութեամբ: Բնակչութեան մեծամասնութիւնը՝ այգեգործ է, մինչ երրորդ գօտիին մէջ մշակ՝ առաւելագէս, և ստիպուած՝ ծանր աշխատանք թափել, որ սակայն հարիւրապատիկ կը վարձատրուի, վասնզի հողը հարուստ է և բեղմնաւոր, ինչպէս բացատրուեցաւ: Այս պատճառով իսկ բնակչութիւնը այս շրջանին մէջ գործունեայ է, խաղաղասէր, աշխատանքի մէջ անվհատ:

Միջին Դարուն՝ իսկական Հայուն այս տիպարն էր որ վանի լիճին շուրջը և Արաքսի հիւսիսային կողմը կերտեց կրօնական և երբեմն աշխարհիկ անթիւ յիշատակարաններ որոնք վկայ են չափազանց զարգացած քաղաքակրթութեան մը: Հոն Արաքսի վրայ էր ամենահին մայրաքաղաքը Հայաստանի՝ Արտաշատը և քիչ մը տւելի անդին՝ Շիրակի բարեւից բարձրաւանդակին վրայ Միջին Դարուն կը ծաղկէր նոր մայրաքաղաքը՝ Անին:

Այս շրջանին մէջ են Վանը, Լենինականը (երբեմն Ալեքսանդրապօլը) և Երեւանը, որոնք մինչեւ վերջը կարեւոր կեդրոններ էին, սակայն քիչ էին փոքր ինչ կարեւոր քաղաքներ, որոնք այս պտղաբեր երկիրը կրնար սնուցանել:

Այս տեսակ քաղաքներ երբեմն աւելի շատ էին: Հայերը՝ իրենք ալ գիտակից ըլլալ կը թուին թէ այս շրջանը իրենց երկիրին ամէնէն գեղեցիկ մասն է: Հայկական ասացուածք մը կ'ըսէ «Այս սեղձ Վանը, իսկ երկնում՝ դրախը», ինչ որ չափազանցութիւն մըն է վասնզի եւրոպացիին համար այս քաղաքը արժանի չէ այդ համբաւին, սակայն Հայաստանցին աւելի լաւը չունէր:

Այսպէս բարեխառնութեան, բուսական թագաւորութեան և

անոնց հետեւանք՝ աշխատանքի տեսակի և հետեւաբար բնակիչներու բնաւորութեան տեսակէտով զգալի չափով տարբերութիւններ ունին Հայաստանի երեք գլխաւոր գօտիները, որոնց խոր հովիտները և բարձր բարձրաւանդակները կլիմայական տարբեր բնոյթներ ունին, ինչ որ կը պահանջէ առանձին տեսակի մշակութիւն և կեանքի մասնաւոր կերպ:

Այսպէս Ա. ծովեզերքները և այն հովիտները, որոնք բաց են ծովային մեղմ հովերուն առջեւ, ինչպէս Կուրի հովիտը, պարզապէս Միջերկրականի կեանքի գիծերը երեւան կու գան: Բ. Հայկական Բարձրաւանդակին վրայ, Պարխար լեռներէն մինչեւ Տաւրոս, կլիման կը ներկայացնէ ծովային և ցամաքային կլիմաներու խառնուրդ մը և Գ. վերջապէս Միջագետքի մէջ, ծովերէն շատ հեռու, կարծես Կեդրոնական Ասիոյ նկարագիրն է որ երեւան կու գայ:

Հայաստան, այսպէս գուրկ է միօրինակութենէ և հետեւաբար նաեւ միօրինակ նկարագիրով ժողովուրդէ:

Տոքթ. Լեփսիուս, իրաւամբ դիտել կուտայ թէ՛ «Հայկական բարձրաւանդակը իր աշխարհագրական դիրքով ու պատմութեամբ, սահմանուած էր ունենալու ուժգնօրէն շեշտուած արտօնակութիւններ եւ խիստ հակասութիւններ, քան անասլիական քերակղզին, որ արեւմուտէն կը միանայ:

Հայաստան կը պարունակէ անծառ լեռնաեղջերաներու ընդարձակ երկրամասեր, որոնց վրայի բուսահողը շատ բարակ շերտաւորուած մը ունի եւ աննպաստ մշակութեան եւ դարձեալ մեջ ընդ մեջ զափաստաններ ունի, որոնց հողը այնքան հարուստ է եւ կլիման նպաստաւոր, ինչպէս աշխարհի մեջ ուրիշ տեղեր: Գետերու խորունկ փորուածքներ կան, ինչպէս Մուրաս-Սուն, որ մերթ լեռնամասերը եւ մերթ դաւաճալիքները կտրելով կ'անցնի: Կան հրաբուխներ ինչպէս Սիփանն ու Նեմրուսը, եւ ծովամասեր ինչպէս Վանայ ծովի աւազանը: Նախնական ժամանակներէն այս երկիրը աշխարհագրականօրէն բաժնուած էր խաւնարածներու եւ երկրագործներու համեմատաբար հոծ նստակեաց դաւաճալիք բնակչութեան եւ ցրուած քաղաքական լեռնական ցեղերու միջեւ, մեկ կողմին վրայ քաղաքակրթութիւն եւ յառաջդիմութիւն, միւսին՝ յետադիմ բարբարոսութիւն: Քիւրսերն եւ Հայերը ո՛չ միայն այլազան ազգութիւններ են, անոնք ճեշտապէս ալ իրարու հակադիր ժո-

ղովորական տարբեր են, ու այս հակասութիւնն արդէն գոյութիւն ունենէ՛ նախ քան քրդական ներխուժումը:» (Լեփսիուս, Հայ ժողովուրդին աշխարհագրական տարածականութիւնը պատմութեան մէջ և ներկայիս, Ռօհրպախ, էջ 19-20)

Չափազանց պարզ էր որ Հայաստանի բնակիչները իրենց սպասած միջավայրին բերմամբ պիտի չկարենային կազմել միաձոյլ, միօրինակ նկարագիրով և բարքերով ու սովորութիւններու կատարեալ համամասնութեամբ ազգ մը, այլ ընդհակառակը իրենց տարբերութիւններով շատ անգամ իրար ալ պիտի չհասկընային և իրարու դէմ պիտի կանգնէին և իրարու հետ պիտի մտքառէին:

Ե.

Հայաստանի մահանգներու բնակչութեան մեկուսացումը իբր հեռեւանք երկիրին աշխարհագրական կազմին.— Ջրային ու ցամաքային մանապարհներու չգոյութիւնը եւ դժուարացանելիութիւնը.— Աւաստական իօխանութիւններու գոյութիւնը իբր հեռեւանք երկիրին բնական կազմին.— Եւրաֆասիայ օրջանակի մէջ բարբերով, սովորոյթներով եւ նոյն իսկ լեզուով իրարմէ տարբեր բնակչութիւններ.— Յանուէրներու օտուր բոլորուած ինքնապահ հաւաքականութիւններ.— Կեդրոնական եւ մահանգային իօխանութիւններու փոխ-յարաբերութիւնները եւ անոնց պատմական հեռեւանքները Հայ քաղաքական կեանքին վրայ:

Հայաստանի աշխարհագրական նկարագիրը միայն Հայ ազգին միաձոյլ զանգուած մը և բարքով ու նկարագիրով միօրինակ ցեղ մը կազմելուն արգելք չէ եղած, այլ նաեւ պատճառ եղած է որ իրարմէ տարբեր կլիմաներով տարբեր նկարագիր ստացած զանազան զաւառներու բնակիչները անհաղորդ մնան իրարու իրենց նախնիներուն մէջ մեկուսանալով:

Հայաստան ինքնին ընդարձակ լեռնադաշտ մը կամ լեռնակղզի մըն է, գրեթէ մեկուսացած շրջակայ երկիրներէն և առանց նկատի առնելու իր բազմաթիւ անհարթութիւնները Հայկական ամբողջ բարձրաւանդակը, կը կազմէ աշխարհագրական ամբողջութիւն մը, որ շատ նպաստաւոր է միատարր, համազգի ժողովուրդ մը կազմելու համար (Histoire des anciens Arméniens Թրգ. Բ. 15):

Դժբախտաբար Հայաստանի աշխարհագրական կազմը կամ ֆիզիքական նկարագիրը հոս ալ ժխտական դեր մը կատարած է, և այս միութիւն մը ներկայացնելու սահմանուած երկրամասը, ենթարկած է բաժանումներու, որոնց գլխաւոր ամբարտակները լեռներու շղթաները և ջուրերու ընթացքներն են:

Հայկական Բարձրաւանդակը (Plateau Arménien) իր ամբողջութեամբ Սեւ ծովի և Կասպից ծովի մակերեւոյթէն 2000 մէթր կամ 5000 ոտք միջին բարձրութիւն մը ունի, որուն վրայ ցըցուած լեռները, մինչեւ 5000 մէթրի կը հասնին: Ասոնք այնքան առատ կանոնաւոր չեն սակայն և շղթայեալ հանգամանք մը չունին:

Երկիրը կարծես թէ խառնարան մըն է ուր կու գան իրար միանալու մէկ կողմէն մինչեւ Ասիայի խորերը և միւս կողմէն դէպի Եւրոպայի սահմանները երկարածգուող կանոնաւոր լեռնաշղթաներ, որոնք իրենց կարգաւորեալ շղթայումը կը կորսընցնեն Հայաստանի մէջ: Այդ ցիրուցան կատարներուն մէջ բարձրագլուխ կը կանգնի կարծես իբր կեդրոնավայր կամ մեկնակէտ բազմաթիւ լեռնային շղթաներու, Մասիս կամ Արարատ (5185 մէթր) որ ազգային խորհրդանշաններէն մէկն եղած է Հայաստանի բնակիչներուն համար: Այս գլխաւոր լեռան շուրջը նուազ չեն նաեւ ուրիշ ձիւնապատ գագաթներ և լեռնային հըսկայ զանգուածներ որ երկրին մակերեւոյթին առաջին որոշիչ նշաններն են, զի լեռներն են որ ծնունդ կու տան ջուրերու ընթացքին և զանոնք կը բաժնեն զանազան աւազաններու ջրագրութեան (hydrographie) տեսակէտով:

Լեռնային երկիրներու մէջ գիտուած է որ ջուրերու ընթացքը երկու որոշ հանգամանք կ'ունենայ, որոնցմէ զսւրկ չեն նաեւ Հայաստանի գետերը: Նախ խորունկ գետածոր կամ անկողին (lit) կ'ունենան և յետոյ արագ կամ շուտիկ ընթացք, մանչող կատաղութեամբ և ամենի զնացքով մը յատկանշուած: Այսպէս Մերձաւոր Ասիոյ բոլոր գետերը որոնք Հայկական Բարձրաւանդակէն ծնունդ կ'առնեն, կը ներկայանան այս հանգամանքներով: Երասիս, Տիգրիս և Ճորխ, արդէն երեւելի են իբր մուտ գետեր և Եփրատ՝ այս նշանաւորագոյն գետը, որուն սկը 9000 ոտք բարձր է ծովին մակերեւոյթէն 300էն աւելի ջրվէժներէ կ'անցնի և սակէ դիւրին է հետեւցնել իր ստացած արագութիւնը: Եփրատի արեւելեան օժանդակը՝ Արածանի,

Մշոյ Ս. Կարապետի վանքին մօտ միաձոյլ անկմամբ կը թափի դէպի վար (այս տեղը կը կոչուի Կուրկուռ) և բնական է թէ այդքան սոսկալի անկումէ մը յետոյ երագեալ ընթացք կ'ստանայ:

Հայաստանի մէջ ջուրի ընթացքներու առատութիւնը իրապէս գոյութիւն ունի, սակայն դժբախտաբար այդ ջուրերը լեռներու անկանոն գետեղումին և երկրին խորթուրտ նկարագիրին բերմամբ, նուազագոյն չափով մը միայն օգտակար են:

Անոնք առհասարակ նաւարկելի չեն, որովհետեւ խութեր, խարակներ, գահավէժներ անհամար են անոնց ընթացքին վրայ, որ ինչպէս տեսնուեցաւ չափազանց երագեալ է: Օրինակ Ճորխի վրայ լաստ մը Արդուինէն մինչեւ Պաթում 6-7 ժամէն կը հասնի, մինչդեռ Պաթումէն մինչեւ Արդուին հազիւ կարելի է 6-7 օրէն հասնիլ:

Կուր և Երասիս չափազանց սրընթաց են և վայրենի: Երասիս գետին արագընթացութիւնը մատնանշելու համար վիրգիլիոս գայն կոչած է «կախուրջընկեց Երասիս» (pontem indignatus Araxes), վասնզի անոր վրայ կամուրջ ձգելու ջանքերը որոնք Հոռմայեցիք ի գործ կը դնէին ապարդիւն կ'ըլլային: Ասոր համար լատին բանաստեղծը կ'ըսէր «լաշիններուն համբերութիւնը Արաքի կամուրջն է»:

Այս տեսակ գետերու վրայ անշուշտ նաւարկութիւնը չափազանց դժուար էր թէեւ Հայերը հնագոյն ժամանակներէ սկըսեալ կը նաւարկէին Եփրատի և Տիգրիսի վրայ լաստերով, ինչպէս կը պատմէ Հերոդոտոս, որ Բարսիլոնի վրայ խօսած ատեն կ'ըսէ թէ «պիտի խօսիմ ուրիշ հրաշալիքի մը մասին, որ քաղաքէն (Բաբելոնէն) յետոյ՝ այդ երկիրին զարմանալիքներուն ամենամեծն է: Այն լաստեր, որ հոսանքն ի վար գետով (Տիգրիս) կ'երթան դէպի Բաբելոն, կ'որ ձեւ ունին եւ շինուած են կաշիէ: Հայաստանի մէջ, որ Ասորիսանի հիւսիսակողմը կը գտնուի, մարդիկ կը կրտեն ուրիշ նպոսներ եւ անոնցմով կը շինեն լաստերու կամալները: Ապա, դուրսի կողմէն կը պատեն կաշով, որ ջուրը ներս չբախանցէ: Լաստ ոչ ցուկ ունի, եւ ոչ խել, այլ բոլորովին կ'որ է, վահանի նման: Նաւը կը լեցնեն յարդով, կը բռնաւորեն ապրանքներով եւ յետոյ հոսանքն ի վար կը փեն: Բեւը բաղկացած կ'ըլլայ մեծ մասամբ գինիով, լեցուած կամիր կաւէ շինուած կարասներու մէջ: Երկու մարդ կը վարէին նաւը՝ երկու ձողերու

օգնութեամբ: Նաւաւարները ուղիղ կանգնած կ'ըլլային լասիկ մէջ՝ մէկը ձողը կը ձգէր դեպի ինքը, իսկ միւսը կը հրէր: Այս նաւերը զանազան մեծութեամբ կ'ըլլային:

Ամենամեծերը կը կրէին մինչեւ հինգ հազար տալանթ(*) ապրանք: Ամէն մէկ նաւու վրայ կը գտնուէր եւ մը, իսկ մեծերուն վրայ՝ աւելի: Երբ անոնք բեռը բարելոն կը հասցնեն եւ ըստ պահանջերուն կը յանձնեն, կը ծախեն նաեւ նաւին կախար ու մէջի յարդր: Իսկ կաւին կը բեռնեն եւ վրայ եւ այսպէս նորէն Հայաստան կը դառնան: Վասնզի անկաւելի է այլեւս հոսանքն ի վեր երթալ (նաւով), քանի որ գետը շատ արագահոս է: Այդ պատճառով է որ լասերը կաւին կը շինեն եւ ոչ թէ փայտէ: Երբ անոնք իրենց հետով կրկին Հայաստան կը հասնին, կ'սկսին նորէն այդպիսի նաւ մը շինել: Անա այսպէս են պատահաբար անոնց նաւերը:» (Հերոդոտոս Ա. 194):

Այս նկարագրութիւնը մեզի պէտք չէ այն պատճառով որ այս թէ Տիգրիս և Եփրատ գետերը ամենահին ժամանակներէ սկսեալ ծառայած էին արտաքին ոգեւորեալ յարաբերութիւններու, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ ներքին երթևեկի:

Այս երկու գետերը Հայաստանի սահմաններուն մէջ աննաւարկելի էին, նկատի ունենալով իրենց անցած ճամբան այս երկրամասին մէջ: Անոնք նաւարկելի կ'ըլլան երբ Բարձրաւանդակէն կ'իջնեն այն դաշտավայրերը որոնք այլեւս Հայաստանի մաս չեն կազմեր: Հետեւաբար անոնք նաւարկելի կը դառնան Հայաստանի սահմաններէն սկսեալ և անկէ դուրս:

Ուստի Հայաստանի մէջ սոսկ ցամաքային էին ճանապարհները: Ո՛չ ծովերու և ոչ գետերու վրայ կարելի չէր նաւարկել: Երբ շատ հեռու էին, լիճերը՝ շատ նեղ, իսկ գետերը՝ շատ խորտուրթ ու տաք եղանակներու գրեթէ կը ցամքէին (Histoire des anciens Arméniens թրգ. Բ. 49):

Կան բնական ճանապարհներ, որոնք առաջ եկած են ֆիզիքական պայմաններէն և ժողովուրդը, օգտուած է անոնցմէ ձգողութեան կեդրոնները նետուելու համար:

Հայաստանի մէջ այս տեսակ ճանապարհներ առաջ եկած են, երբ գետերը բաւական լայն հովիտներ ունեցած են և տաք եղա-

(*) Մօտաւորապէս 10,000 ֆիլակրամ:

նակին ջուրերու դաշտերը ցամքած: Մեծ դաշտերը պարանոցներու միջոցով հաղորդակցութիւն պահպանելով նոյնպէս դարձած են ճանապարհներ և վերջապէս լեռներու անցքերը այս տեսակ ճանապարհներ եղած են (նոյն. էջ 51):

Հայաստանի լեռնագրութիւնը (orographie) և ջրագրութիւնը (hydrographie) որոշ ցոյց կու տան թէ երկիրը մէկ ծայրէն միւսը կը ներկայացնէ խորտուրթ մտկերեւոյթ մը, ուր եթէ անանցանելի պատուարներ չեն կազմեր Ալպեանց, Պիրենեանց կամ Կովկասեան լեռնաշղթաներուն պէս, զայն կտրատող լեռնաշղթաները, սակայն նուազ դժուարութիւն չեն պատճառեր միջգաւառային յարաբերութեանց տեսակէտով, մասնաւորապէս ձմեռը, երբ ձիւնի թանձր խաւ մը գրեթէ համայնատարած սաւանի մը պէս կը ծածկէ աշնան սկիզբէն մինչեւ գարնան սկիզբները, լեռ, ձոր, սարուքար, դեռ ու վտակ և ամէն ինչ, տարուան մէկ խոշոր շրջանին մէջ՝ գրեթէ ամէն մարդ և ամէն բան իր եղած տեղը գամելով և ամէն ինչ անշարժութեան դատապարտելով:

Իրապէս հաղորդակցութիւնները ձմեռը շատ տառապելի էին, թէև ըտլորովին չէին ընդհատուիր: Զնայած որ այժմ ալ հետիոտ երթևեկող անխոնձ ճամբորդը Հայաստանի ամենաբարձր անցքերուն, ինչպէս Ալպեան լեռներուն մէջ, կրնայ բռնուիլ մահաբեր մրրիկի, բայց և այնպէս ոչ մէկ տեղ պէտք չկայ այն նախազգուշութիւններուն որոնք Ստրաբոնի ատեն իբր թէ կը կատարէին ճամբորդելու համար: Զմեռուան ամենախիստ օրերուն իսկ կարուստներ կը շարունակեն երթևեկել մեծ ճանապարհներու վրայէն լեռնային կածաններ բանալով: Միայն Զիկանայի մօտ գտնուող Վակուկի կիրճին և Տէվէ-պոյունի մէջ, Պայազիաէն դարձին, երբեմն ուղտերը կ'ընկճուէին, ոչ թէ փոթորիկին ուժէն այլ աւելի ցուրտին սաստկութենէն:

Երբ ձիւնի բարակ սաւան մը կը պատէ երկիրին երեսը՝ այն ժամանակ ամէն տեղ գիւղացիները առանց վախի կ'երթևեկեն գիւղերէն քաղաքները եղներով կամ ձեռքով քաշուող սահնակներով: Միայն Բաղէշ է որ իբր բացառութիւն, ինչպէս ըսուեցաւ, ձիւնը շատ խոր կ'ըլլայ և այդ պատճառով ալ այս շրջանին մէջ ոչ մէկ կենդանի չի կրնար դուրսը քալել ձիւնին վրայ (Hist. des Anciens Arméniens թրգ. Բ. 25-26):

Եթէ հին ատեն, Հայաստանի ձմեռը աւելի խիստ էր եւ

դեպքերը աւելի շրջառտ, անտառներու առատութեան բեր-
մամբ, — ինչպէս բացատրուեցաւ — սակայն բոլորովին հողոր-
դակցութիւնները դադարելու աստիճան չէր ձիւնի և ջուրի ա-
ռատութիւնը:

Ձիւնաձալի ժամանակի հեղեղներուն կը յաջորդէին երաշ-
տութեան ամիսները, երբ ջուրի գրեթէ բոլոր հոսանքները կը
չորնային, այնպէս որ դարնան անհնարին կ'ըլլայ ճամբորդել,
իսկ Յունիսէն մինչեւ Հոկտեմբեր կտրելի է ամբողջ Փոքր
Ասիան, Միջագետքը, և այլ շրջագայի և բոլոր ջուրերը ոտքով
անցնիլ, վտանգի սչ մէկ տեղ ջուրը չի հասնիր մարդոց մին-
չեւ մէջքը:

Նոյնիսկ Եփրատ և Տիգրիս ունին այնպիսի հուներ և ժայ-
ռեր, որոնք աւելորդ կը դարձնեն կամուրջներու շինութիւնը:
Հայաստանի բնակիչները հետեւաբար ոտքով դիւրաւ կ'անցնէին
գետերը, նոյնպէս դիւրաւ կը մագլցէին ամէն տեղ բազմաթիւ
խիստ գառիվայրերէն վեր մինչեւ լեռներու գագաթները:

Չամ գետեր թէ որքան հաւանական է այն ենթադրութիւնը
թէ Հայերը խուսափելու համար թշնամիներէն, չէին ցանկար
Հռոմէական կամուրջներուն նման կամուրջներ ունենալ, որոնք
անոնց աչքին միայն արշաւանքներու դուռ կրնային բանալ-
սակայն ամէն պարագայի մէջ, որոշ է թէ ենթադրեալ այն կա-
մուր որ մեկուսացումը բոլորովին ալ երեւակայական չէր և այդ
մեկուսացումին ուրիշ ազդակներ գոյութիւն ունէին:

Միեւնոյն հեղինակը որ կ'ենթադրէր թէ Հայերը կամուրջ-
ներ չէին կանգնեցնէր արշաւանքներէ հեռու մնալու համար ինքն
կը հաւատտէ դարձեալ թէ Բարձրաւանդակին բոլոր լեռները
կանոնաւոր կերպով իրարմէ ոչ-հեռու, շրջագիծի վրայ կը սահ-
մանաւորեն փակ երկրամասեր (compartment), որոնք ունին մէկ
կամ երկու կիրճ և կը ներկայացնեն սեղանի նման հորիզոնական
ընդարձակ տարածութիւններ:

Ինչպէս այս դաշտերը, որոնք յատկանշական են և անընդհատ
տարածուած Եփրատէն և Տիգրիսէն դէպի Արաքսի և Կուրի առա-
ջին ճիւղերը, նոյնպէս նաև Ճորոխի, Պիթլիս Սուի և Քղի-
Սուի ավերը, նոյնպէս ուրիշ փակ հովիտներ՝ առաջ բերին
աւատական ուժեղ, նախանձոտ իշխանութիւններ, որոնք շատ
օգտակար էին, երբ անոնց պետերը կը հնազանդէին կեդրոնա-
կան իշխանութեան, այսինքն թագաւորներուն, բայց՝ յաճախ

կը դառնային խիստ վնասակար աղգային գոյութեան տեսակէ-
տով (հմմտ. Histoire des anciens Arméniens. Թրգ. Բ. 46):

Այս բաժանումներուն մէջ ուրեմն մեծագոյն դեր կատարած
է Հայաստանի աշխարհագրութիւնը, որ թոյլ տուած է այդ փակ
երկրամասերուն մէջ գոյառութեանը զանազան նկարագիրներով
դաւառական բնակչութեան մը, կերպով մը՝ ինքնակաց և ինք-
նապահ, իր սեփական նկարագիրով, քանի որ այդ շրջանակնե-
րէն ամէն մէկը ունէր գրեթէ իրեն յատուկ աշխարհագրական
կազմ և կլիմայ, զի մին ծովեզերեայ էր, միւսը լեռնային և մէկ
ուրիշը դաշտային, մէկը՝ տաք և միւսը՝ ցուրտ, մին՝ չոր ու
առողջապահիկ, միւսը՝ խոնավ ու վատառողջ:

Այս գաւառները, ուրեմն, իբր արդիւնք իրենց միջա-
վայրին, զանազան փակ երկրամասերու մէջ, ծնունդ տուած են
բարձրերով, սովորոյթներով, և նոյնիսկ ազգութեան առաջին
յատկանիշը և կապը եղող լեզուով՝ իրարմէ քիչ ու շատ տար-
բերութիւններ ունեցող բնակիչներու:

Ասոր մէկ կարկառուն ապացոյցը կու տայ Թովմա Արժրուհի
(Բ. դպ. է. գլ. Կ.) Սասունի լեռնցիներուն վրայ խօսելով, երբ
կ'ըսէ թէ «բնակեմ, առանձին ըստ տունս ազգաց, եւ այնչափ
'ի բացեայ եմ 'ի միմեանց, մինչ թէ ոք յարաց զօրաւորաց 'ի բարձ-
րաբերձ սեղեաց ուժգին խանչիցէ, հազիւ թէ ուրեք կարիցէ առ-
նուլ զբովիւն ձայնին, իբրեւ 'ի վիմաց ինչ արձագան լինելոյ
կարծիս բերելով, եւ կեսքն վրիպեալ 'ի բնական հայրենի լեզու-
ւեմ, յազազս հեռաբնակ լինելոյ եւ անհամբոյբ միմեանց հան-
դիպեալի, եւ խօսս միմեանց եղեալ կարկասուն մուրացածի բա-
նիւ: Եւ այնքան խրքնի անձանօք պատահեմ առ միմեանս, մին-
չեւ բարգմանաց անգամ կարօտանան, եւ զպէս կերակրոցն վնա-
րեմ 'ի սերմանց ինչ. առաւել 'ի կորեակ կոչեցեալ սերմանեմ, զոր
ովանք 'ի սով ժամանակի հաց անուանեմ, եւ զնոյն ոռոգեալ
ոսիւք ի միջոցս պրակացն, կամ երկմասնի փայտատով սերմանեալ,
եւ է զգես ցոցա ասուիս 'ի ծածկոյթ մերկութեանն, եւ օդ ոսիցն
հնարաւորեմ զձեւ կոպկաց, 'ի մորթոյ այժից կազմեալ եւ միով
կերակրով եւ միով հանդերձիւ բաւականանան զամառն եւ զձմեռն.
Եւ եմ սացեալ զհնս աւետայս հանապազ կրելով ընդ ինքեանս,
'ի պատրաստութիւն զազանացն որք ի լերինն բնակեմ...: Իսկ վասն
ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յաւայոյն 'ի վայր գեղեալ
լինին, հնարաւորեալ իւրեանց փայտս իբրեւ զանուրս չուանօք

պարունակեալ շուրջ գոսամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրեւ ընդ ցամաք երկիր: Եւ են գազանաբարոյ՝ արիւնարբուք, առ ոչինչ համարելով՝ զսպանումն եղբարց հարազատաց, նա եւ զանձանց եւս, եւ կոչեն սոքա մեկնազեմք սուրհանդակք բնակեալք, ՚ի լեբին որբաժանէ ընդ Աղձնիս եւ ընդ Տարօն: Եւ յաղագս խրթնի եւ անհետագօտելի խօսիցն եւ բարուցն կոչին խուք. յորոց անուն եւ լեառնն խոյք անուանի»:

Պատմագիրին այս նկարագրութիւնը բնական է թէ միայն յատուկ չէր Սասունի լեռնցիներուն: Կորդուաց լեռնաշղթային բնակիչներն ալ իրենց առանձնայատկութիւններովը երեւելի հասնողիսացած են և Հայաստանի շատ մը գաւառներն ալ իրենց գաւառին բնական կազմութեանը և կլիմային առանձնայատկութիւններովը քիչ շատ իրարմէ տարբերած են: Այդ տարբերութիւնները ինչպէս թովմա Արծրունիի սքանչելի նկարագրութեանէն տեսնուեցաւ նոյնիսկ լեզուին վրայ ալ ներգործութիւն ունեցած էին, այնքան խոր և նշանակելի, որ դրացի գաւառի մը Հայը՝ միւս գաւառին Հայուն խօսած հայերէնը հասկնալու համար թարգմանի կը կարօտէր:

Այսպէս, կը տեսնուի թէ ինչպէս որ Հայաստանի դիրքը, պատճառ եղած էր որ Հայաստան բազմաթիւ ցեղերու ներխուժումին առարկան ըլլար և խառնուրդ ցեղ մը կազմուէր, երկիրին բնական նկարագիրն ալ պատճառ եղած էր որ այս խառնուրդ ցեղը որ մշակոյթով ու քաղաքակրթութեամբ ճակատագրուած էր միակ ազգ մը կազմելու, ազգային միութեան մէջ մտնելով հանդերձ, զանազան նահանգներու մէջ տեղական առանձնայատկութիւններով նկարագիրներ ցոյց տար, և առիթ՝ ստեղծելու ազգին մէջ անհասկացողութիւններ և անմիաբանութիւններ, որոնք չսփայտնց աղէտալի հետեւանք ունեցած են մեր ազգին ճակատագիրին վրայ, և մեր երկիրը դարձուցած են պառակտումներու և ներքին պայքարներու երկիր մը: Հայոց մէջ խիստ զարգացած էր անձուկ միտքով իր քաղաքին կամ գիւղին կամ աւելի լայն միտքով իր գաւառին սէրը, քան իր ազգին սէրը. և ստեղծուած՝ տեղական այլամերժութիւն մը, որ խորունկ ազդեցութիւն ունեցած էր Հայաստանի ընկերային և կառավարական կազմին վրայ, ծնունդ տալով ամէն մէկ նահանգի բնական սահմաններուն մէջ պետի մը շուրջ բոլորուած հաւաքականութեան մը կամ տանուտիրութեան մը: Ասիկա նը-

պատած կամ աւելի ճիշդ պատճառ եղած է աւատական կարգերու ստեղծումին, ուղղակի հետեւանք՝ երկրին աշխարհագրական կազմին, որ թոյլատու էր այսպէս մէկ երկրամասի մէջ ամիոփելու իրարու աւելի մօտ նկարագիրով և խառնուածքով Հայ մարդիկը վաղնչական աւանդութիւններով կապուած՝ ազդեցիկ տանուտիրական ընտանիքի մը: Ամենահին ժամանակներէ սկսեալ իբր անջատ միութիւններ, երկիրին զանազան մասերուն մէջ, գոյութիւն առնող այս միութիւնները, կը կազմէին մեծ ու փոքր իշխանութիւններ որոնք, իրենց գլուխը ունէին Տանուտէր նախարար մը, որ հողին տէրն էր և միեւնոյն ատեն կենաց ու մահու հեղինակութիւն ունէր իր հողերուն մէջ ապրող բնակչութեան վրայ, հնօրեայ միանեծան վեհապետի մը պէս:

Այս նախարարները իրենց անձով կապ մըն էին իրենց կալուածներուն մէջ ապրող բնակչութեան և երկիրին կեդրոնական իշխանութեան՝ այսինքն թագաւորին միջեւ, որուն իրենց սեփական բանակով եթէ կ'ուզէին կ'օգնէին և եթէ չուզէին՝ ոչ:

Իրենց ամուր դիրքերուն մէջ ամրացած այս իշխաններուն գրուած տեղը պետական ընդհանուր կազմին մէջ, այնքան ինքնավար էր որ յաճախ անոնք անջատողական հակումներ ցոյց կու տային, և ազգային միութեանէն բաժնուելու տրամադրութիւն, ձգտելով կեդրոնական իշխանութեանէն՝ այսինքն թագաւորէն անկախ ըլլալու:

Արարատեան թագաւորները որչափ որ աշխատեցան, չկէրցան կատարելապէս նուաճել այս կէս-անկախ իշխանութիւնները որոնք իրարու դէմ ալ կը պայքարէին երբեմն: Հայոց թագաւորները գլխաւորապէս անոր համար չկրցան ընկճել այդ իշխանները, վասնզի անոնց դիրքերը նպաստաւոր էին ընդդիմութեան համար և երկրորդ՝ անոր համար որ Հայոց թագաւորները ստիպուած էին մէկ կողմէն այդ իշխաններուն դէմ մաքառիլ, միւս կողմէն դրացի զինուորական հզօր պետութեանց դէմ պայքարիլ:

Ընդհակառակը ներքին երկպառակութիւնները, որ հետեւանքն էին երկրին աշխարհագրական կազմին ծնունդ այս բաժանումներուն, որոնք Հայոց թագաւորութեան միազանգուած տէրութիւն մը կազմելուն և Հայոց տէրութեան լիակատար կազմակերպութեան, արգելք եղան, և ընդհատեցին պետութեան զարգացումը:

Այսպէս Հայաստանի վարչաձեւը իր աշխարհագրական կազմին հետեւանօք եղաւ աւատական և հետեւաբար թոյլ և ոչ միազանգուած և այս իսկ պատճառով Հայաստանը այն կարճ շրջաններուն իսկ ուր կրցաւ անկախութիւն ձեռք բերել, եղաւ տկար պետութիւն մը, որ չկրցաւ ուժգնօրէն դիմադրել արտաքին թշնամիներուն, հակառակ անոր որ երկիրին լեռնային դիրքը հիանալիօրէն ձեռնտու էր ինքնապաշտպանութեան համար, եթէ Հայերը կարենային կուրծք տալ արտաքին թշնամիներուն, մէկ սիրտ, մէկ հոգի:

Յաճախ երկու հզօր ուժերու մէջ սեղմուած Հայաստանի Տանուտէր-Նախարարները, որոնք անջատողական արամադրութիւններ ունէին և առանձին առանձին հակուճմներ, երկու կուսակցութիւններու բաժնուած, իրարու հետ պայքարեցան և երկիրը ալ աւելի տկարացուցին և նպաստեցին անոր վրայ ծանրացող լուծը հեազհետէ աւելի ճնշիչ դարձնելու, վասնզի դժբախտաբար նախարարները՝ այս կամ այն կողմին յարած աստե՛ն յաճախ անտեսեցին, արքայական գահուն և ազգին ընդհանուր շահերը, տեղական և անձնական մասնաւոր օգուտ հետապնդելով և չըմբռնեցին կեդրոնական իշխանութեան սպառնացող վտանգի մը իրենց վրայ ունենալիք անդրադարձութիւնը:

Հայաստանի աշխարհագրական կազմը ուրեմն ունեցաւ, նաեւ իր խորունկ ազդեցութիւնը երկիրին ընկերային — քաղաքական կազմին վրայ, ծնունդ տալով աւատական վարչաձեւով կառավարութեան մը, ուր կեդրոնական իշխանութիւնը իր հեղինակութիւնը պարտադրելու համար հարկադրուած էր շարունակ կռիւ մղել իր ճորտերուն դէմ և ճորտերը՝ աւելի իշխանութեան համար մաքառիլ իրարու հետ կամ գերադաս իշխանութեան դէմ, և պատճառ դառնալ օտարին դէմ տկար իշխանութիւն մը ունենալու և երկիրը շարունակ արիւնայեղութեանց վայր մը դարձնելու, և մեր պատմութիւնը վերածելու եղբրական ու ողբալի դրուագներու շարքի մը:

Զ.

Հայաստանի երկրաբանական կազմը եւ իր կառուած ժխական դերը երկիրին զարգացման վրայ.— Հայաստանի երկիրը հաճախ հանգամանք.— Յաճախապէս երկրաբաններ եւ բնական ուրիշ աղետներ, որոնք ժողովուրդը կ'ահաբեկեն:

Հայաստանի աշխարհագրական նկարագիրին մաս կը կազմէ նաեւ իր երկրաբանութիւնը, կամ հողային կազմը, որ իր կարգին երկիրին քաղաքակրթութեան և զարգացման վրայ դժբախտաբար կրկին ժխտական դեր մը կատարած է, վասնզի շարունակ իրարու յաջորդող երկրաշարժներ, քանդող և աւերող դեր մը կատարած են, և միշտ կործանած են Հայուն ձեռակերտ շինութիւնները և զայն սարսափի մատնած:

Կարգ մը պատմագիրներէն, երկիրին ամէնէն հին մասը և մարդուն առաջին բնակավայրը դաւանուած Հայաստանը, երկրաբաններու համար նորագոյն հողային կազմուածքով երկիր մը կը ներկայացնէ, որ նոյնիսկ պատմական ժամանակներու մէջ բազմաթիւ փոփոխութեանց ենթարկուած մտկերես մը ունի: Եւ իրաւամբ Հայաստանի հրաբուխներէն շատերուն բորբոքումը պատմական ժամանակամիջոցներու մէջ պատահած է, նոյնիսկ 1000-2000 տարուան հնութիւն մը հազիւ ունեցողներ պակաս չեն: Մինչեւ հիմա յայտնի կը տեսնուին լաւայի դոյնադոյն հեղեղներ, որոնք անճոռնի օձերու պէս ոլորուած են հրաբուխներուն խառնարանին բոլորափքը և ստորտար: Լաւայի այդ զանգըւածները իրենց արտաքին երեսին վրայ տակաւին կը պահեն թարմ փայլ մը, մամուռը չէ կրցած տակաւին քոստնալ այդ խաւին վրայ, ինչ որ ցոյց կու տայ անոնց հոսման ժամանակին նորութիւնը: Նոյնը կը հաստատեն նաեւ աւանդաբար պատմուած զրոյցներ: Այսպէս կը պատմուէր Մեծ Լեռան փլշիլը և Աւազ Մասեաց կողին վրայ մէկ մղան երկայնութեամբ խոր պատուածքի մը գոյութիւնը: Այս դժոխային վիճը միայն մեր ազգային քերթողներուն զարմանք պատճառած չէ իր ահարկու երեւոյթովը, այլ ուշադրութիւնը գրաւած է Պոյուրնի և Սոււմէի որոնք երկրաբանական զննութեամբ մը կրցան

հետեւցնել թէ Մասիսի ծոցը լի է պոռթկալու ենթակայ տար-
րերով: Եւ իրաւամբ 1840ին բորբոքում մը տեղի ունեցաւ և
ծուխի սեւ ամպեր, շագախ, քար և ջուր դուրս պոռթկաց և
բոլոր Արարատեան դաշտը դղրդեցաւ: Նոյնպէս պատմական Ժա-
մանակներու մէջ կ'իյնայ Վանի լիճին արեւմտեան կողմը գըտ-
նուող Ներքով լեռան (== Նեմրուտ տաղ) վերջին հրդեհումը որ
1441ին կը յիշատակուի, իսկ Սիփան, որ նոյն լիճին հիւսիսա-
կողմը գրեթէ չորս հազար մէթրէ աւելի բարձր կանգնած է,
մինչեւ հիմա ծծմբախառն թեթեւ շոգի մը կ'արձակէ: Արևել-
եան կողմը՝ Վարազ, օտար չէ հրաբխային կազմուածքէ:

Միւս կողմէ գիտենք թէ Վանի ծովին ջուրերը աւելի լեղի
են քան աղի, մանաւանդ եզերքները բորակային բաղադրու-
թիւններով այնքան խառն են որ իբր մոխիր-ջուր կտաւներ
լուսլու կը գործածուին:

Իսկ Սեւանայ լիճին հրաբխային կազմութեան վրայ բնաւ
տարակոյս չկայ, նոյնիսկ կրնանք ըսել թէ հրաբխային խառ-
նարաններու մեծագոյնն է, սեպացուալ և կոնսոձեւ քարածոյու-
լեաներով շրջապատուած, որոնցմէ տասերկուքէն աւելին՝ իրենց
առանձին բաժակներն ունին ջուրով լեցուած կամ պարապ:

Ասոնց ետին կը բարձրանայ դէպի արեւմուտք վիթխարին՝
Արագած (Ալուկէօզ) բոլորովին անջատ: Ասիկա Հայաստանի լեռ-
ներուն ամէնէն լայնանիստը և Մասիսէն վերջը ամէնէն բարձրն
է: Արագածի կատարը չորս գագաթ ճեղքուած և ցցուած է,
որոնք իր խառնարանին եզերքը պահակ կեցած են և զուտ ու
անխառն ծծումբ ունին իրենց կողերուն վրայ: Կ'երեւի թէ
Քրիստոսի թուականին առաջին դարերուն մէջ դեռ ասոր
պատուածքներէն ծուխ կը ցնդէր, վասնզի ԺԴ. դարու դիւ-
րահաւան մատենագիրներէն ոմանք կը պատմեն թէ լեռան խորը
քարանցու մը կայ, ուր Լուսաւորիչ մատուռ մը շինած և կոն-
թեղ մը կախած է, որ մինչև աշխարհիս վախճանը վառ պիտի
մնայ:

Գերման ճամբորդ մը, ԺԹ. դարուն առաջին կիսուն մէջ
Հայաստանէն անցած ատեն երեք գիշեր յաջորդաբար կը տեսնէ
Արարատի լեռներուն վրայ ցոլացեալ լոյս մը: Տեղացիք սաի-
կա կը սեպեն հաւաստի նշան մը Պարսկահայաց կողմերը պատա-
հած գետնաշարժի մը և իրաւամբ նոյն օրերը Դաւրէժ շարժ
կ'ըլլայ:

Ատրպատական, որ կը նշանակէ արդէն սեղի կամ աման
հուրի, ուրիշ լեռներէ զատ ունի նաեւ Մաւալանի հրաբխային
լեռը, որ գրեթէ Ալպեանց Մօն Պլանին հաւասար բարձրութիւն
ունի:

Բայց Հայաստանի և բոլոր առաջակողմեան Ասիոյ մէջ ա-
մէնէն կենդանի հրաբխային զօրութիւն և նշան ունեցող լեռն է
Թանաքէկ (==Թոնդրակ==Թանտուրէկ) (*) որ 10,000 ոտք բարձ-
րութիւն ունի և Պայազիտ քաղաքէն երեք կամ չորս փարսախ
հեռու է, դէպի Վանի ծովը. որուն գագաթը կը նմանի ճիշդ
Վեսուվին, բաժակը շատ ընդարձակ և խոր, յատակը մեծամեծ
քարեր և բիւրեղացեալ ծծումբ և շատ տեղէն անդադար ջրա-
յին և ծծմբային գոլորչիներ կ'ելլեն:

Լեռան մէկ կողմը կայ սուրիշ բաժակ մըն ալ ջրալից և ա-
նոր մօտ տեղէ մը մեծ ուժգնութեամբ աղբիւրի պէս շոգի կը
ժայթքէ, ուր կ'երթան բժշկութեան համար: Աւելի զարմա-
նալի են լեռան ներքեւէն ելած որոտմնային ձայները, որոնք
Ռուս-թուրք 1856ի պատերազմին մահառիթ դրուագներուն մէկ
զուարճալի կողմը երեւան հանեցին: Երկու թշնամի բանակները
Պայազիտի երկու կողմը բանակած էին երբ գիշեր մը այս բը-
նական պատահարը տեղի ունեցաւ և այդ որոտմունքը թնդա-
նօթի ձայներու հետ չիոթելով գիշերային անակնկալ յարձակ-
ման մը սողկումով, զէնքերու շաշիւնը սկսաւ մինչ քիչ յետոյ
հասկցուեցաւ թէ ընութեան մէկ կատակն էր որ այս անակըն-
կալը ըրած էր:

Այսքանը կարծեմ բաւ է ցոյց տալու համար թէ Հայաստան
հրաբխային կայան մըն է և բնական և գիտական երեւոյթներու
գիտակ ամէն մարդու համար անձանօթ իրողութիւն մը չէ թէ
այն ամէն երկիրները որոնք հրաբխային կազմութիւն ունին,
ենթակայ են երկրաշարժի:

Եւ Հայաստանի տարեգրութիւնները շատ հարուստ են երկ-
րաշարժներու խոշոր աղէտներով(**):

(*) Ծաղկաց լեռներու կամ Ալա սաղի մաս:
(**) Պասմուքնէն քաղաքը սեղեկութեանց համաձայն կը յիշուի բուա-
կանի կարգով հետեւեալ աղէտայի շարժեր:
341ին Արարատեան դաշտին կողմերու:
614ին Տարսնի

Երզնկա քաղաքը միայն ժԱ. դարէն մինչև ժԸ. դար, 20 անգամ կը յիշուի երկրաշարժէն վնասուած և քանդուած:

Ըստ Կ. Կոստանեանցի շարժի երեւոյթը մեր երկրին մէջ, իր յատուկ ժամանակագրութեան հոսանքն է ունեցած: Թէ աւելի հին դարերու մէջ ո՞ւր և ե՞րբ է տեղի ունեցած այդ երեւոյթը, մասամբ կը տեսնուի սարեգրութեան յաջորդական թիւերով:

Թ. դարուն երկրաշարժի նկարագրութիւնները առաւելապէս Գուինի և անոր շրջակայքին վրայ կեդրոնացած են: Ասկէ կարելի չէ ի հարկէ եզրակացնել, թէ այդ շրջանակէն դուրս միևեւրոյն ժամանակ երկրաշարժներ չեն եղած: Անկէ յետոյ ժԱ.

- 728ին Կարինի եւ Սիւնեաց
- 735ին Վայոց ձորի (ողջ ողջ գեցիցն ցակ անցած են 10,000 մարդ)
- 854ին Գուինի (մէկ գիւղերուան մէջ մեռած են 12,000 մարդ)
- 858ին Գուինի
- 862ին Արարատի եւ Երեւանի
- 869ին Գուինի (մէկ արի սեւած է եւ 120,000 մարդ զոհուած են)
- 893-4ին Գուինի
- 995ին Հաւսենից, Խորհենայ, Ծավաց, Բալուի, Պաղնայ (եօթը ամիս սեւած է
- 1011ին Երզնկայի
- 1045ին Անիի եւ Երզնկայի
- 1114 Մայիս 19ին. Միջագետքի, Տարոնի, Կիլիկիոյ, Եփրատացոց, Սամասի, Հիւսնի—Մանսուրի, Քեսունի, Ռապանայ եւ Մարաշի եւ Երզնկայից
- 1131ին Անիի:
- 1165ին Երզնկայի
- 1219ին Չանազան սեղերու
- 1236ին Երզնկայի
- 1251ին »
- 1268ին » (15,000 մարդ մեռած է)
- 1275-6ին Վասպուրականի (Վան եւ Ախլաթ)
- 1281ին Երզնկայի
- 1287-89ին »
- 1319ին Արարատեան դաւոյթի
- 1441ին Վանի եւ Ախլաթի
- 1458ին Երզնկայի (32,000 անձ զոհ գացած)
- 1482ին » (30,000 » » »)
- 1578ին »

դարէն մինչև ժԷ. դարը շարժի հարուածներուն ենթակայ եղած է Երզնկա քաղաքը և իր գաւառը:

ԺԳ-ԺԸ դարու նոյն աղէտին ենթարկուած է Վան քաղաքը իր շրջականերով, ապա ժԷ-ի դարուն էրզրումը և ժԹ-ի դարուն Շամախին:

Շատ բնական է, որ այդ քաղաքներու և գաւառներու երկրաբանական պատճառներն են որ յառաջ բերած են երկրաշարժ և այդ կողմէն շատ հետաքրքրական է ուսումնասիրել այն փրատակները, որոնք շարժի տեղերուն մէջ կը պատկերացնեն մեր երկիրին ներքին կազմութեան այս կամ այն յատկութիւնը:

Սակայն առանց այս հետազոտութեանց մէջ մանելու միայն արդիւնքը նկատի առնելով, կրնանք ըսել թէ Հայաստան երկրաշարժներու ենթակայ երկիր մը եղած է և հոն ան պատճառած է, մեծ աղէտներ, ու մեծ աւերածութիւններ, յաճախ կարգ մը

- 1584 Յունիս 17ին. Երզնկայի (15,000 անձ զոհ գացած)
- 1641ին Դավրէժի եւ Երզնկայից (երեք ամիս սեւած է)
- 1646ին Վանի եւ Դավրէժի
- 1648-9ին Վանի եւ Ախլաթի
- 1659ին Կարինի եւ Սիւնեաց
- 1678-9ին Երեւանի
- 1681ին Արարատեան դաւոյթի
- 1701ին Վանի
- 1704ին »
- 1715ին »
- 1791ին » Կարինի եւ Դավրէժի
- 1806ին Շամախիի
- 1819ին Արարատեան դաւոյթի
- 1827ին » »
- 1828ին Շամախիի
- 1840ին Արարատեան դաւոյթի
- 1847-8ին Շամախիի
- 1850-52 Կարինի
- 1359ին Դավրէժի եւ Շամախիի
- 1860-61ին Կարինի
- 1869ին Շամախիի
- 1872ին Դավրէժի, Շամախիի եւ Արարատեան դաւոյթի
- 1901-2 Կարինի
- 1902ին Շամախիի
- 1926ին Լէնինականի

շրջաններու բնակչութիւնը մատնելով յուսահատութեան և յուսալքումի, երբ մէկ կողմէն իրենք շինած ու շէնցուցած են և միւս կողմէն բնութիւնը քանդած ու աւերած է:

Իբր բնական աղէտ ու պատուհաս այս յաճախազէպ երկրաշարժներուն հետ պէտք է յիշել նաեւ աղէտաբեր կարկուտները, ինչպէս 763ինը, որ բոլոր երկիրին բերքերը փճացուց, և սաստիկ խիստ ձմեռները, ինչպէս 1058ինը, որ տարեգրութիւնները սոսկումով արձանագրած են:

Այս բոլոր ձախողութիւնները և աղէտները, միշտ պատահած են: Սակայն ճիշդ չէ դադրած Հայաստանի գարմանալի բնակչութեան մէջ: Ընդհակառակը, յամառ ու տոկուն աշխատութեամբ ցեղը մշտապէս հակադրեր է իր զարհուրելի միջավայրին տարօրինակութիւններուն դէմ: Անիկա ցոյց տուած է յարմարելու կամ համակերպութեան արտակարգ ձիրք մը:


Շարունակական և բեղմնաւոր ճիգերով Հայութիւնը յաջողեր է գէթ մասամբ յաղթահարել բնութեան այդ անակնկալներուն և սարսափներուն, յաջողեր է իր անառիկ, անանցանելի լեռներուն մէջ իսկ՝ որոշ մղում տալ քաղաքակրթութեան գործին:

Իր դաշտերը երբ խոնձած են երաշտութենէ, ան առուներ փոխադրած է հեռաւոր վայրերէն՝ մեծ դժուարութիւններով և ոռոգած է զանոնք:

Իր կարուստները թողուած են ձիւնի մէջ, սակայն ան վերատին և անվնաս նորերը կազմակերպած է և սառնապատ անդունդներու վրայէն Պարսկաստան և Միջերկրական գացած:

Եւ այս բոլորը ի՞նչ ահաւոր վտանգներով, ի՞նչ սոսկալի քաղաքական վարչաձեւերու տակ, ի՞նչ դաժան անապահովութեան մէջ:

Բռնութիւնը և բնութիւնը կը սեղմէին, կը կաշկանդէին իր թափը, բայց ան իր յամառ, քրտնաջան աշխատանքով, ի վերջոյ յաղթող է հանդիսացած (հմմտ. Մ. Վարանդեան, Հայկ. Շարժման Նախապատմութիւն, Ա. 132):



է .

Սգրակացութիւն՝ աշխարհագրութեան աննպաստ հետեւանքներու.— Մեծայլին միւս կողմը.— Հայաստանի լեռնային բնագրութեան օգտակար կողմը.— Լեռները ապաստան Հայութեան սգիին:

Հայաստանի աշխարհագրութիւնը ինչպէս տեսնուեցաւ ցարդ մէջ բերուած փաստարկութիւններով, չափազանց բացասական կամ ժխտական դեր մը կատարած է մեր ազգին ճակատագիրին վրայ:

Ան պատճառ եղած է որ՝

1. Հայ ազգը կազմէ ցեղային միութենէ զուրկ խառնուրդ ժողովուրդ մը, շարունակ ներքին անհամաձայնութիւններով երկպառակ ու ուժասպառութեան ենթակայ:

2. Հայ ազգին բնակավայրը շարունակ ոտնակոխ ըլլայ կիսավայրենի և բարբարոս ժողովուրդներու, որոնք աւեր ու կոտորած սփռելով Հայկական Բարձրաւանդակէն անցած են կամ ան դառնայ պատերազմի թատերավայր մը և մրցադաշտ մը իր զօրաւոր դրացիներուն համար, որոնք Հայաստանի ուղղմական դիրքին տիրապետութեան կը ցանկային:

3. Բնագրապէս աննպաստ կազմութեամբ երկիրը արուստական միջոցներու կիրարկումով չկարենայ անտեսական բարգաւաճումի հասնիլ և բնութեան ժխտութիւնը մասամբ դարմանել, ինչպէս նաեւ բնական աղէտներ, մասնաւորապէս երկրաշարժները, հարուածեն երկիրին բնակչութիւնը, որուն զարգացումը և քաղաքակրթական վերելքը խոչնդոտներու հանդիպած է:

Սակայն անարդար պիտի ըլլար և միակողմանի, դիտել չտալ թէ Հայաստանի աշխարհագրական դիրքը իր բացասական արդիւքներուն հետ ունեցած է նաեւ օգտակար կողմեր այլ և միայն աղէտներու ու դժբախտութեանց պատճառ չէ եղած:

Հայերը, իրենց թոյլ ազգային միութեամբ և նոյնքան թոյլ պետական կազմակերպութեամբ — աւատական դրութեամբ տոնմապետութիւններով — բոլորովին ընկճուած և ջնջուած պէտք էր ըլլային այն աղէտներու և դժբախտութիւններուն հետեւա-

նօք որոնք մեծամասնաբար կը պարտէին Հայաստանի աշխարհագրութեան:

Սակայն անիկա չէ եղած, վասնզի նոյն այդ աշխարհագրութիւնը, եթէ տուած է բացասական քայքայիչ արդիւնքներ տուած է նաեւ առաւելութիւն մը՝ իր անմատոյց լեռնազաւառները՝ զանոնք ընծայելով իբր սպաստանի վայրը Հայ մշակոյթին ու ցեղային ինքնուրոյնութեան:

Carl Ritter, մասնաւորապէս կը շեշտէ թէ, հնագոյն ժամանակներէ սկսեալ Հայ ցեղը, գետեղուած ըլլալով անդուլ արշաւանքներու թատերալայրին մէջ, ասով հանդերձ կրցած է պահպանել իր ազգութիւնը: Եւ կը բացատրէ այս երևոյթը երկիրին դիրքով «Բնութեան պատկանուած Հայ երկիրը — կ'ըսէ ան — իր հարիւրաւոր բարձրաբերձ հովիթներով ապաստան է եղած Եւս հայաձեւայներու» (Erdkunde Ժ. հտ. 584):

Միքայէլ Վարանդեան (Հայկական Շարժման Նախապատմութիւն Ա. 133). այս վկայութեան անմիջապէս կը կցէ հետեւեալ խորհրդածութիւնները՝ «Այո, այդ անաւոր բնութիւնը, որ անբաւ հարսութիւններով եւ աշխարհագրական իր դիրքով Արեւելիի եւ Արեւմուտքի միջեւ, հրապուրել է միշտ բնամիտերի բնաջնջող հորդանքը, որ իր դաժան կլիմայով, իր անհամբոյր պատկերով, աշխարհակալի ու վասակալի իր դժուարին պայմաններով, միացած քաղաքական անցանելի հանգամանքներին, դարեր շարունակ խորք մօր պէս քշել է իր սահմաններից իր հարազատ զաւակներին, որոնք գնացել, բուն եւ դրել աշխարհի շոքս կողմերում, ստանալով հրեռութեան պէս քափառական ցեղի հուշակ — այդ աղետաւոր բնութիւնը, միւս կողմից, պայման է եղել ցեղի անսահման Ֆիզիկական յարստեւորութեան, նա պահպանել է ազգութեան կորիզը, սուրբանցը: Երբ նաեւ փորձել է դիմադրել բնամու յորձանգներին, մրցման մտնել նրանց հետ, նրան կորուստով յետ եւ քշել, բայց չեն կարողացել բնաջնջ անել կա՛մ յետ մղել, որովհետեւ նա միշտ ամուր ապաստան է գտել իր անառիկ լեռնավայրում»:

Արդարեւ Հայաստանի այդ լեռնային մասերը, իբր բնական անմատչելի և անառիկ ամրոցներ, մեր ցեղային առանձնայատկութեանց պահպանութեան վայրերը եղած են, ուր Հայ ցեղը իր տեւականութիւնը ապահոված է, գոյութեան դժուար պայքար մը մղելով օտար յարձակումներու և սպառնացող փոթորիկներու դէմ, հետու մնալով օտար ազդեցութիւններէ:

«Ո՞վ գիտէ... Չլինէր Հայկական բնաշունչ լեռնասանր, չլինէր այդ վիթխարի եւ անառիկ «լեռ-կղզի» — ինչպէս անուանում է մի այլ մեծանուն աշխարհագրէ, Կարլ Ռիտտեր — գուցէ Հայաստանն էլ — վաղուց արդէն փոթեմար, իբրեւ ազգ ու հայրենիք, ինչպէս որ փոթեցել են ուրիշ, հասակակից, աւելի քաղաքակիրք ժողովուրդներ» (Մ. Վարանդեան, նոյն. էջ 132):

Հոն այդ սարերուն վրայ ծուարած ապրած է Հայ ցեղին ոգին և շունչը: Հոն է որ ապրած է Հայութիւնը, մանաւանդ երբ յարձակող բանակներու արշաւողիկին վրայ գանձող քաղաքներու և դաշտավայրերու բնակիչները ընկճուած են թշնամիին տաջեւ սրախողող աւլուելով կամ լեղապատառ խոյս տալով: Այդ դժուար շրջաններուն, այդ լեռներուն վրայ Հայերը իրենց գոյութիւնը կը պահէին, փոթորիկին անցնելէն յետոյ այդ բարձունքներէն վար իջնելու և դաշտերն ու քաղաքները լեցնելու և աշխատանքով և քրտինքով աւերակներուն կեանք տալու համար:

Հայերը յաղթուեցան Հռոմայեցիներէն, Բիւզանդացիներէն, Արաբներէն, Թուրքերէն, որովհետեւ նախ թիւով քիչ, և երկրորդ՝ չտիրազանց բաժան բաժան էին, սակայն հակառակ անոր որ գիտակ էին իրենց տկարութեան, հնագոյն ժամանակներէ սկսեալ, ողջմտութեամբ իրենց համար աւանդութիւն ըրած էին սպառնացող հարուածներէն աւելի խուսափել քան թէ խիզախ լեռնականներու նման կռուիլ մինչեւ մահ կամ յաղթութիւն, ցոյց տուած են կրաւորական դիմադրութեան ոյժ և հիմնալի յամառութեամբ մը մնացած են մեծամասնաբար հաստատ իրենց երկիրին մէջ միշտ կա՛մ իբր ճորտ կա՛մ իրենց գահուն վրայ օտար թագաւորներ բարձրացնելով, սակայն գործնականապէս պահելով իրենց անկախութիւնը:

Այս շնորհը անոնք կը պարտէին իրենց այդ դիմադրական ոյժին, որուն գլխաւոր կեդրոնը այդ լեռնազաւառներն էին: Անոնք միշտ այնքան յոգնեցուցին իրենց տիրապետողները, որ անոնք տեւական պատերազմի մը հարկադրանքը կլիմայակոծ խիստ աննպաստ պայմաններու մէջ, չտիրազանց ծանր համարելով գոհացան անուանական հնագանդութեան մը արտաքին ցոյցերով: Այսպէս Հայերը կրցան ապրիլ երկար ատեն կէս-անկախ, վայրենի հրոսներու խուժումէն յետոյ ալ նոյնիսկ, անմատոյց վայրերու մէջ, պզտիկ իշխանութիւններ պահելով, մինչեւ որ

Օսմ. կայսրութիւնը նախ վերջ տուաւ իրեն կէս-անկախ իշխանութիւններուն և ապա 500 տարիներու ընթացքին բոլորովին բնաջնջեց Հայերը իրենց հայրենիքին մէջ:

Հայ պետութեան ժԱ. դարուն կործանումէն յետոյ երբ Հայաստան երկար դարեր կը մնար օտար և կեղեքիչ իշխանութիւններու լուծին տակ, այնպիսի դժբախտ պայմաններու մէջ, ուր անհատին ո՛չ կեանքը, ո՛չ ինչքը և ո՛չ ալ պատիւը երաշխաւորուած էր, բնական է դարձեալ Հայաստանի լեռնագաւառները հանդիսացան այն վայրերը, ուր Հայերէն շատեր, կերպով մը իրենց կաշին կրցան պահել և այսպէս ապահովել իրենց գոյութիւնը Հայ աշխարհին մէջ, հակառակ դժնդակ պայմաններուն որոնք տիրապետող բարբարոս ժողովուրդները ստեղծած էին:

Այս դժնդակ ու դժբախտ շրջաններուն, Հայ ազգին բարացուցական բարոյական ուժը և յենակէտը եղած է, Հայ Ազգային Եկեղեցին, Հայ միտքին այս սքանչելի ստեղծագործութիւնը, որ հզօր ազդակը եղած է իր ազգայնական դրոշմովը, ազգապահպանութեան և միակ հոգեկան կապը, որով իրարու զօգուած են Հայերը, և կրցած են այնքան փոթորիկներու և հալածանքներու տոկալ:

Այդ հոյակապ բարոյական շէնքը որ տեսակ մը Հայութեան հովանին ու վանանը եղած է, Հայերը կը պարտէին դարձեալ կերպով մը իրենց աշխարհին շրջակայ դաշտավայրերէն մեկուսացած դիրքին որ իր վրայ ապրող ժողովուրդին ալ կարծես փոխանցած էր մեկուսանալու և իր ինքնութիւնը պահելու բռնազգ մը, տեսակ մը անջատողականութեան հակում, որ բարեբար դեր մը կատարած է:

Այսպէս, Հայաստանի աշխարհագրական դիրքին լեռնակղզիի հանգամանքը և անով ստեղծուած մեկուսացումը, և անոր արգասիք՝ իր սեփական առանձնայատուկ կրօնքը կամ Եկեղեցին, որ հոգեկան գերզօր կապը եղած է Հայերը իրար միացնող, երկու յենակէտներ էին, մին Ֆիզիքական և միւսը բարոյական, որոնք ապահովեցին Հայ ազգին տեւականութիւնը իր բնագաւառին մէջ, հակառակ անոր որ անիկա հանգիստ ու անդորր կեանք չունէր և ամէն ատեն կ'ապրէր կեղեքումի, հարստահարութեան և ջարդերու սարսափին տակ:

Ը.

Հայաստանի աշխարհագրութիւնը ինչպէս իր ֆազաֆական նոյնպէս ֆազաֆալիքական ու մօակոսային պատմութեան ազգակ.— Այդդէմածին կամ բնիկ ֆազաֆալիքութիւնը եւ անոր օտար մօակոսին հետ օփումը.— Հայաստանի աշխարհագրական դիրքին երկիրին բերած նպաստը իբր անց կամ նախապահ առեւտրական.— Ցարանցիկ առեւտուր միջոց օտար ազգերու հետ օփումի.— Օտար գաղութներ ՚ի Հայաստան.— Հայ առեւտրական նօսաւոր ֆազաֆներ եւ անոնց դերը համաշխարհային առեւտրական օւրժման մէջ.— Հայաստանի առեւտրական ուղիները.— Հիլլեմականութիւնը ՚ի Հայաստան,— Հայաստան վայր Արեւելեան եւ Արեւմտեան մօակոսին բաժանման կամ ներդաշնակման.— Հայերու հակումը դէպի Արեւմուտ:

Ինչպէս տեսնուեցաւ ցարդ ըստածներէն Հայաստանի աշխարհագրական դիրքը, իր բնագրութիւնը, կլիման, ինչպէս նաեւ հանքային, հողային և կենդանական հարստութիւնները, որոնք այնքան սերտ կապ ունին երկիրին աշխարհագրութեան հետ աներևոյթ ազդակները եղած են, ինչպէս Հայ քաղաքական պատմութեան, նոյնպէս նաեւ անոր այդրէնածին (autochtone) կամ բնիկ քաղաքակրթութեան:

Հայաստանի Ֆիզիքական նկարագիրն է որ կերտած էր Հայ ժողովուրդին ազգային նկարագիրը, ինչպէս նաեւ իր քաղաքակրթութիւնը: Իր աշխարհագրութեան արգասիքն էին իր կառավարական վարչաձևը, իր կրօնական մեկուսացումը կամ ընդունած կրօնքներուն ազգայնացումը, իր լեզուն բաղմաթիւ գաւառաբարբառներու բաժնուած ըլլալը, մէկ խօսքով իր բոլոր մշակոյթը:

Աշխարհագրութիւնն էր ծնունդ տուողը իր ինքնուրոյն ճարտարապետութեան: Կլիման էր կերտողը Քսենոփոնի նկարագրած գետնափոր բնակարաններուն, ինչպէս նաեւ իր քարաշէն հաստակաւոր այդային յիշատակարաններուն:

Երկիրի Ֆիզիքական նկարագիրն էր ստեղծողը իր նախնական ճարտարարուեստին և սամոնափակ տուրևուսին:

Վերջապէս ընդհանուր կերպով ինչպէս Հայ քաղաքական պատմութիւնը նոյնպէս նաեւ քաղաքակրթականը՝ իր բոլոր

մարզերուն և ստորագելիներուն մէջ, ազգակ ու շարժաւիթ ունեցած էր առաւելապէս և գերադրապէս երկիրին աշխարհադրութիւնը, որուն անժխտելի դերը և ազդեցութիւնը ուրանալ կարելի չէ:

Բայց ինչպէս յայտնի է ազգերու քաղաքակրթական պատմութեան մէջ դիտուած երեւոյթ մըն է որ ոչ մէկ ազգի քաղաքակրթութիւն, անխառն և զուտ իրեն սեփական դրոշմով մը մնացած են առանց շփում և յարաբերութիւն ունենալու դրացի ժողովուրդներու մշակոյթին հետ և անոնցմէ առանց պատուատ ընդունած ըլլալու:

Հայ մշակոյթը և քաղաքակրթութիւնը չէր կրնար այս տեսակէտով բացառութիւն կազմել, մանաւանդ երբ նկատի ունենանք երկիրին աշխարհագրական դիրքը, որ ինչպէս տեսանք, անցք մըն է կամ արշաւուղի մը ինչպէս բարբարոս ժողովուրդներու նոյնպէս քաղաքակրթապէս մենէ աւելի բարձր մշակոյթ և զարգացում ունեցող պետութեանց բանակներուն համար:

Եթէ այդ ժողովուրդները որոնք անցած են Հայաստանէն և բանակները՝ որոնք կոխտած են Հայկական Բարձրաւանդակը, աղէտ, մահ և աւեր սփռած են յաճախ երկիրին մէջ, սակայն միեւնոյն տակն իրենց բարբերէն, սովորութիւններէն, մշակոյթէն տարբեր ալ փոխանցած են երկիրին բնակիչներուն կամ անոր բնիկ ժողովուրդին քաղաքակրթութեան նպաստ մը կամ խթանում մը բերած են:

Այնպէս որ Հայաստանի իբր ճամբայ ընծայած յարմարութիւնը եթէ մէկ կողմէն փնասակար եղած էր երկիրին, — ինչպէս բացատրուած է — այլապէս ալ օգտակար եղած է, վասնզի երկիրը չիման մէջ դրած է օտար աշխարհներու և օտար ազգերու քաղաքակրթութեան հետ:

Հետեւանք աշխարհագրական պատճառներու, Հայաստանի կռուախնձոր մը ըլլալու հանգամանքը, զինքը իր հզօր դրացիներուն հետ պատերազմի առիթով գոնէ անխուսափելիօրէն յարաբերութեան դրած ըլլալը այնքան ակներեւ է և այս առթիւ Հայերու կրած ազդեցութիւնը այնքան բացորոշ, որ այս մասին տարակուսիլ կարելի չէ: Սակայն ինչ որ պատերազմով և բռնութեամբ կը ներմուծուի ենթակայ է ընդգիծադրութեան հանդիպելու: Այս երեւոյթը՝ լեռնական ժողովուրդներու մէջ, ինչպէս էին Հայք, աւելի չեշտեալ ձեւով երեւան կու գար: Հետեւաբար

Հայերը խաղաղ թափանցումով եղած ներարկումներու ներգործութիւնը աւելի հեշտութեամբ կրած են քան թէ բռնակալ պետութիւններու զէնքի ուժով իրենց պարտադրած կրօնքը, լեզուն եւն. ընդունած են, թէեւ բոլորովին աննշանակ և անազդեցիկ եղած չըլլան, այս զինեալ ոյժերու և տիրակալող պետութիւններու կատարած արշաւանքները և դործադրած բռնութիւնները:

Հետեւաբար բարբարոս և քաղաքակրթ ժողովուրդներու Հայաստանէն անցքը իբր պատերազմիկ որչափ որ իր ազդեցութիւնը ունեցած է Հայաստանի վրայ և Հայ աշխարհը չիման մէջ դրած է օտար աշխարհներու հետ, սակայն նոյնքան աւելի հզօր ազդեցութիւն ունեցած են Հայոց վրայ խաղաղ յարաբերութիւնները, մանաւանդ առեւտրականները, որոնց համար ոչ նըւազ յարմարութիւններ կը ներկայացնէր մեր աշխարհը, որ ինչպէս արդէն բացադրուեցաւ, ինչպէս ազգերու անցք նոյնպէս տարանցիկ (թրանզիթ) առեւտուրի իբր պողոտայ ծառայած է:

Արդարեւ տարանցիկ առեւտուրի տեսակէտով Հայաստան ամբողջ Մերձասոր Ասիոյ ամենայայտնող անցքը կը կազմէր և քանի որ Արեւելքի և Արեւմուտքի միջև տարանցիկ առեւտուրը պէտք մըն էր, Հայաստան անոր կը ծառայէր, մանաւանդ այն ժամանակէն յետոյ երբ Միջագետքի արուեստական մշակութիւնները մեծ մասամբ ոչնչացած էին և այդ երկիրը դարձած էր դժուարանցանելի, քանի որ ան եզերուած էր Ասորիքի անապատով, որ անկարելի կը դարձնէր մեծ տարանցիկ առեւտուրը և գերեզմանը կը դառնար բազմաթիւ արշաւող բանակներու:

Ինչպէս տեսնուեցաւ Հայաստանի արտադրութիւններէն անոնք որոնք կ'արտադրուէին այնքան քիչ էին որ անկարելի էր առանց տարանցիկ առեւտուրին, որ Հայաստանի ուղիով կը կատարուէր, Հայաստան կարենար առեւտուրի մտնել օտար աշխարհներու հետ, մինչ չնորհիւ իր իբր անցք ունեցած յարմարութեան անիկա ծառայեց իբր առեւտրական ուղի՝ մասնաւորապէս Մեծն Տիգրանի օրերէն սկսեալ:

Այնպէս որ ինչպէս վաչկատու ժողովուրդներ նոյնպէս նաև առեւտրական կարաւաններ նախամեծար կը համարէին Հայաստանէն անցնիլ և այս պատճառով Հայաստանի մէջ կ'ստեղծէին առեւտրական շարժում մը, որուն Հայերն ալ կը մասնակցէին, սակայն առաւելապէս օտար առեւտրականները, որոնք գաղութ-

ներ հաստատած էին Հայաստանի մէջ, և կերպով մը օտար միտքը կամ մշակոյթը յարաբերութեան կը դնէին Հայ միտքին հետ: Այս կերպով քաղաքակրթական թափանցում մը կը կատարուէր դէպի Հայաստան:

Քանի՜ դարեր Միջերկրականը առեւտրական ամենամեծ զարկերակն էր, և հաղորդակցութեան մեծ ուղին արեւմտեան, արեւելեան և հարաւային սղգերու համար: Արեւմուտքէն, դորձուած ապրանքներ կը հասնէին ստիական եզերքները և այն անդէն կը տարուէին կարուսաններով՝ կովկասի և Հայաստանի ճամբով դէպի Պարսից ծոց, Հնդկաստան ու Չինաստան:

Արդարեւ, Մեծն Տիգրանի, ինչպէս նաեւ Արշակունեաց թագաւորութեան շրջանին, երբ տարւոյնցիկ առեւտուրին հիւսիսային գիծը Հայաստանէն կ'անցնէր Հին Հայաստանի առեւտրական կեանքին մէջ ղեկավարող դեր կը կատարէին ոչ թէ Հայերը, այլ սեմական գաղութները, մասնաւորապէս Հրեաները և Ասորիները (Յ. Մանանդեան Ֆեոսալիզմ 215), ինչպէս կը հաստատուի մասնագրական անդեկութիւններով (նոյն. 216, հմմտ. Փաւստոս Դ. դպ. ԻԳ. և ՄԵ. և Խորենացի Բ. դպ. ԺԶ. ԺԹ. և ԽԹ.):

Այսպէս, սեմական ժողովուրդներ յարաբերութեան կը մըտնէին Հայ երկիրին հետ, ուր հաստատուելով առեւտրական պատճառներով, անշուշտ իրենց հետ հոն կը ներմուծէին իրենց մշակոյթէն տարրեր, խաղաղ թափանցումի ուղիով, քանի որ անոնք մասնաւորապէս հաստատուած էին երկիրին առեւտրական շարժման այդ մեծ ուղիին վրայ գտնուող Հին Հայաստանի առեւտրական նշանաւոր քաղաքներուն՝ Արտաշատի, Դուինի, Երուանդաշատի, Զարհնաւանի, Զարիշատի և Թէոդոսուպոլիսի մէջ. (Յ. Մանանդեան, 212):

Այս յարաբերութիւնները միայն Ասորիները և Հրեաները Հայաստան բերած չեն, ուրիշ ժողովուրդներ ալ առեւտրական շարժառիթներով հրապուրուած են Հայաստան գալու կամ անոր հետ յարաբերուելու գէթ առեւտրական պատճառներով:

Մասնաւորապէս, դիտելի է, որ Արտաշատը և յետոյ Դուինը, ինչպէս կը յայտնուի Յուստինեան օրինագիրքի 408/9 թուականներով Ռնորիոս և Թէոդոս Բ. կայսրերու կարգադրութիւններէն (Cod. Justin IV. 63,4) միջազգային առեւտուրի կեդրոններ էին (Կ. Գուտերբոք ՀԱ. 1910. 15):

Այս վաւերագիրին քննութիւնը նոյնպէս կը հաստատէ թէ Սասանեան Պարսկաստանի հետ համաձայնութիւն գոյացած էր հաւանօրէն, 387ի դաշնագրութեամբ, Հայաստանի բաժանումէն յետոյ, Արտաշատը իբր միջազգային առեւտուրի գլխաւոր վայրերէն մէկը նկատել, ինչ որ փաստ մըն է թէ, սնիկա նոյնպէս միջազգային նշանակութիւն ունեցած պէտք է ըլլայ նաեւ Արշակունեանց թագաւորութեան ժամանակ (Յ. Մանանդեան, նոյն, 213): Արտիշատը և յետոյ Դուինը, իբր յատուկ վայրեր, ուր թոյլատրուած էր Բիւզանդացի և Պարսիկ վաճառականներուն, առեւտուր ընելու, քնականաբար, պիտի ստանային միջազգային կեդրոններու բնոյթ (նոյն):

Պրոկոպիոսի վկայութեամբ, «Հնդկաստանէն, դրացի Վրաստանէն, Պարսկաստանի գրեթէ բոլոր ժողովուրդներէն, նաեւ Հռոմեական որոշ մասերէն, կը բերուէին Դուին ապրանքներ եւ հոն կը վաճառուէին» (Պրոկոպիոս, De bello persico. II. 25) և առեւտրականները կ'ապրէին Դուինի շրջակայ բազմամարդ գիւղերու մէջ, որոնք կը գտնուէին իրարու մօտ (նոյն):

Դուին, իբր ապրանքներու մթերանոց և առեւտրական փոխանակութեան համար որոշուած վայր, եղած է, անշուշտ, Սուսանեան Պարսկաստանի գլխաւոր մաքսային կեդրոններէն մէկը:

Բիւզանդական կայսրութեան կողմէ միջազգային այս առեւտուրին վրայ հսկողութիւն կը կատարէին յատուկ պաշտօնականներ, որոնք կը կոչուէին **comites commerciorum** (Cod. Justin IV, 63. 6):

Մենանդրի պատմութիւնէն յայտնի է նոյնպէս, որ առեւտրական հաղորդակցութեան այս վայրերը կ'անուանուէին **δεκατευτηρια** այսինքն «տասներորդարաններ», Կ. Գուտերբոքը **δεκατευτηριον** (=տասներորդ) յունարէն բառէն կը հետեւցնէ որ «երկու պետութեանց համար ալ որոշուած էր ներածութեան մաքսը վաճառքի արժէքին տասը առ հարիւրը» (ՀԱ. 1910, 16):

Ուրեմն մինչեւ Հայաստանի սիրտը կը յառաջանային Բիւզանդացի և Պարսիկ առեւտրականները, և հոն կը յարաբերէին Հայոց հետ շահու և առեւտուրի պատրուակով:

Աւելի ուշ Միջին Դարուն, ինչպէս կ'ըսէ Ռեկլիւ, ձեռնովացի վաճառականներ ալ կ'անցնէին Սեւ ծովի եզերքներէն, կը մըտնէին Հարաւային կովկասի խորքերը, կը հասնէին մինչեւ Կասպից ծով:

Միեւնոյն ժամանակ եւրոպացի ճամբորդներ, մասնաւորապէս իտալացիք, կ'երթեւեկէին Փոքր Ասիոյ գիծերով:

Այնպէս որ անժխտելի է որ Հայաստան առեւտրական յարաբերութեան մէջ էր իրմէ անցնող վերոյիշեալ պողոտայով օտար երկիրներու հետ, և օտար ժողովուրդներու հետ. որոնք սնուչու չուշտ կ'օգտուէին նաեւ ներքին Հայաստանի հաղորդակցութեան ուղիներէն ալ, քանի որ Հայաստան երկիրին դիրքին բերմամբ, կը հանդիսանար արեւելքէն արեւմուտք և փոխադարձ՝ երթեւեկի երկիրը, և անկարելի էր որ առեւտրականներ չօգտուէին երկիրին երկրորդական ճամբաներէն ալ:

Հնագոյն վաւերագիրները որոնք մեզի հասած են այդ ճամբաներուն մասին, են **Tabula Peutingeriana** = Պետինգերեան Տախտակներ, որուն հեղինակը ըլլալ կը թուի 3 րէին կամ 361-363ին **Castorius** (*) (Բրոֆ. Յ. Մանանդեան. Հին Հայաստանի Գլխաւոր ձանապարհներ, 1936 Երեւան, 5-7):

Հայաստանի մեծ ճանապարհները ըստ այս Գ. Դարու — այսինքն Հայ գրական աղբիւրներու գոյութենէ առջի շրջանին — պատկանող վաւերագիրին, հինգ էին:

Այս հինգ մեծ ճանապարհներուն միացման ու հանդիպման կէտն էր Արտաշատ մայրաքաղաքը, որ Արշակունեանց շրջանին, Հայաստանի առեւտրական գլխաւոր կեդրոնն էր:

Այս հինգ ճանապարհներն էին,

1. Արսաւս-Բագուան-Սասաղ՝ Փոքր Հայոց սահմանին վրայ
2. Արսաւս-Տիգրանակեթ (==Ֆարխին) Միջագետաց սահմանին վրայ
3. Արսաւս-Սեբաստպոլիս (==Փոթի) Սեւ ծովու եզերք
4. Արսաւս-Խոյ-Համասան՝ Պարսիկ սահմանին վրայ
5. Արսաւս- (Արմասիկա)

Այս հին ճանապարհներով կը կատարուէին նաեւ մեծ մասամբ Հայկական, Պարթեական, Հռոմէական, նաեւ Բիւզանդական և Սասանեան զօրքերու տեղաշարժները (Մանանդեան. նոյն. 10):

Այս ճամբաները պէտք է պահած ըլլան մինչեւ Արաբներու Հայաստան արշաւանքը իրենց կարեւորութիւնը, որմէ յետոյ բովանդակ Արաբական շրջանին և Բագրատունեանց իշխանու-

(*) 670ին Անանուն Ռավեննացի մը օգտուած է այս գործէն (տես. նոյն):

թեան տեւողութեան նշանաւոր դեր կատարած է Դուին-Պարսաւ ճամբան, որ Արեւմուտքի և Արեւելքի հաղորդակցութեան ուղին էր:

Հայաստան այս տեսակէտով իրեն ճակատագրուած դերը կատարած է յետոյ ալ, միշտ Արեւելքը և Արեւմուտքը յարաբերութեան դնելով, ինչպէս շատ գեղեցիկ կերպով նկարագրած է Ռոնրպոխ: Ան կ'ըսէ թէ «Ո՞վ որ կ'ուզէ Հայաստանին մեջէն՝ արեւելէն-արեւմուտք ու հակառակը՝ անցնիլ, շատ դիւրաւ կը գտնայ շարք մը բացուած հովիտներ եւ դիւրանցանելի անցքեր, իսկ հիւսիսէն հարաւ եւ հակառակը՝ (անցնիլ ուզողը) բազմաթիւ բարձր ու դժուար լեռնաշղթաներ պէտք է բարձրանայ:

Երկրին մակերեսին կազմութեան այս տեսակէտով դրոշմը նմանապէս որոշած է իր պատմական ճակատագիրը: Հայաստանը Արեւելի մեջ Ասիոյ իրանա-թուրանական երկրներու եւ Արեւմուտքի մեջ Փոքր Ասիոյ եւ Միջերկրականի ցամաքներու միջեւ սահմանեալ անցքի երկիրն է: Բնութեան ցամաքային ճակատագրուած հաղորդակցութեան գլխաւոր ճամբան կ'անցնի անմիջականօրէն Արարատէն հարաւ: Հայ-իրանական լեռնաշղթային, Պայաղիսի վրայով կը հասնի Կարնոյ դաւաթ, անկէ Երզնկա՝ արեւմտեան Եփրատի եզերք եւ ասկէ ալ դեպ ի Սեբաստիա՝ Ալիս գետին եզերք, Փոքր Ասիոյ պատկանող առաջին եւ կարեւոր փողոցը: Հոս ճամբան կը միանայ դեպի Անգուրա եւ Կ. Պոլիս: Հարաւային ճամբայ մը Ուրմիոյ աւազանէն կը սանի դեպի Վանայ ծովը: Հոս, ծովին արեւմտակողմի վերջաւորութեան վրայ ճամբան երկուքի կը բաժնուի, որոնցմէ մէկը Բաղէի ժայռանաստիներու միջով՝ դիւրաւ կ'անցնի հայկական Տաւրոսը եւ դեպի Տիգրիսի հովիտը կ'առաջնորդէ, իսկ երկրորդը, Մոյ դաւաթէն կ'անցնի եւ անկէ ալ ամայի լեռնամասերու միջով՝ Բալուի վրայէն դեպի Խարբերդ եւ Մալաթիա կը հասցնէ, Միացեալ Եփրատի անցքին միւս կողմը: Խարբերդէն Արդրնի-Մասէն կիրճով եւ Տաւրոսի վրայով՝ Տիգրանակեթ (Տիգրիսի վրայ), իսկ Մալաթիայէն ուրիշ ճամբայ մը կը սանի դեպի հիւսիս արեւմուտք՝ Սեբաստիա, ուրիշ մը արեւմտակողմէն՝ Կեսարիա, ուր կը միանայ Փոքր Ասիական ճամբաներու ցանցը:

Արաբսի հովիտը, Վանայ աւազանը, Մոյ, Կարնոյ եւ Ալաւկեթի դաւաթերը, Մուրաս Սուի ակունքներուն մօտիկ, ինչպէս նաեւ Երզնկային, ասոնք նախապէս եղած են ամենալաւ բնակուած եւ

մշակելու ամեն կարելիութեամբ օժտուած՝ Հայասանի ամենարն-
սիր գաւառները:

Արախի հովիտին միջին մասին վրայ է գետեղուած Երեւանը,
Հայասանի Կովկասեան մասի այսօրուան մայրաքաղաքը, որ մօ-
տականերն է երբեմնի արաքական Վաղարշապատին (Արքախարա),
Արարատի աչերունց սակ եւ ուր շինուած է Էջմիածինը, Հայ եկե-
ղեցու պէտ՝ Կաթողիկոսին արժանիստ վանքը:

Վանը իր արջակներով կը բուր ըլլալ Հայասանի մշակոյ-
թին եւ քաղաքակրթութեան ամենահին որոշանքը: Իննն, Վան քա-
ղաքը, ծովահայեաց եւ անառիկ ժայռաբերով, անսարակոյս Հայ
աշխարհի հիմնաուրց առաջին քաղաքն է» (Հայասան րոս Թոմար-
պախի 1919ի տետրէան, 9):

Թոմարպախի այս նկարագրութիւնը որ ունի մօտ ժամանակ-
ներու կը պատշաճի, ցոյց կու տայ ըստ անոնց որոնց վրայ
կարելի է երթեւեկել արեւելքէն արեւմուտք Հայաստանի մէջ,
ինչպէս երբեմն հին դարերու մէջ կը կատարուէր այդ անցքը,
կարուաններով որոնք թե՛նստարուած էին Ասիական հեռակայ
երկիրներու սպարանքներով:

Հառեւարար Հայաստան «գտնուելով հաղորդակցութեան մեծ
համբու վրայ, Արեւելի եւ Արեւմուտքի միջեւ, Հայ երկիրը եղել
է միշտ բարձրան փոխադրութեան քառաւախ ոչ միայն գրանա-
պատ եւ գիշարի լեզուներէ համար, այլ եւ ապրանքներէ՝ որոնք
բարձր եւ Ասորեստանից, Պարսկաստանից, արդիւնաբերութեան
այլ վայրերից դեպի Սեւ ծով եւ այնտեղից դեպի Արեւմուտք: Եւրո-
պէս եւ Հայասանի վրայով ապրանքներէ հետ՝ եւ մտեր, գաղա-
փարներ, բարձր եւ, կարող են ասեմք, ամբողջ հնադարեան
կուլտուրան. քաղաքակրթութիւնը: Երբ Հայասան փուլած չլինէր
հին աշխարհի միջազգային հաղորդակցութեան այդ մեծ համբու
վրայ, դժար թէ նա ունենար արդէն երոզը, չորրորդ դարում՝
պատկառելի քաղաքակրթութիւն Հայ արքա դժար թէ կարողա-
նար ստանձնել որեւէ կուլտուրական նախաձեռնութիւն ու Մես-
րոպներէ ու Սանակներէ, Եգիպտոսներէ ու Եգիպտոսներէ հայրենիք
դժար թէ կազմակերպէր» (Մ. Վարանդեան Հայկ. Եւրոպայի
Նախապատմութիւն, Ա. 134):

Այս ուղիները, եղան ուրեմն առիթ է միջոց որ օտար գա-
ղութներ, ինչպէս նաեւ գաղափարներ եւ քաղաքակրթութիւն-
ներ թափանցեն Հայաստան:

Ասոր գլխաւոր փաստը չէ՞ր արդեօք այն իրողութիւնը որ
Հին Հայաստանի առեւտրական կեանքին ղեկավարները Հայերը
չէին այլ Սեմական գաղութներ, մասնաւորապէս Հրեաներ եւ
Ասորիներ. ինչպէս նաեւ Յոյներ, որոնք նոյնիսկ Հայ թագա-
ւորներ փոյթ ունեցած էին Հայաստան փոխադրելու երկիրին
վաճառականութեան զարկ տալու համար:

Այսպէս պատմական անժխտելի իրողութիւն է որ Մեծն
Տիգրան Հրեաներ փոխադրած էր Հայաստանը(*)

Նոյնքան պատմական է սա իրողութիւնը թէ օտար այս գաղ-
թականները —ինչպէս որոշ կը տեսնուի Փաւստոսի խօսքերէն—
խտացած էին առեւտրական կեդրոնավայրերու մէջ, եւ որքան
որ չափազանցուած ըլլան անոնց թիւերը որ կու տայ Փաւստոս,
սակայն աներկբայելի է որ անոնք կը կազմէին քաղաքներու
քնակչութեան ստուար մասը (Յ. Մանանդեան, 219) որով կ'ե-
րեւի թէ Հայաստանի առեւտրական քաղաքացիներու մեծ մասը
օտար գաղթականներ էին եւ Հայք նախ քան Արշակունիները եւ
Արշակունեանց շրջանին, առեւտրական մարզին մէջ կարեւոր
տեղ մը գրուած չէին:

Սեմական գաղութներէն զատ Հայաստան ընտրուած են նաեւ
հելլենացած քաղաքներու քնակիչներ, որոնք նոյնպէս Հայաս-
տանի անաստական կեանքին մէջ կարեւոր դեր կատարած են:

Ամէն տարակոյսէ դուրս է որ Մեծն Տիգրան ս'չ միայն Հը-
րեաներ, այլ նաեւ կապագովկեան 11 հելլենական քաղաքներու
քնակիչները փոխադրած է Հայաստան, մասնաւորապէս իր նո-
րակառոյց մայրաքաղաքը՝ Տիգրանակերտ, առաւելապէս Հո-
յաստանի հելլենականացման եւ մշակութային զարգացման նպաս-
տելու համար, սակայն այդ տեղահանուած քնակչութիւնը, նը-

(*) Յ. Մանանդեան (նոյն, 219) Հրեաներուն Հայասան փոխադրութիւնը
հաւանական կը համարէ ոչ միայն Մեծն Տիգրանի արեւմտեաններուն եւ նուա-
նումներու արջանից, այլ նաեւ անոր որդոյն Արաւազի քաղաքներէն ժա-
մանակ (56-33թ.է առաջ): Կրասոսի պարտութենէն յետոյ (53 Քր.է առաջ) ինչ-
պէս յայնի է, Պարթեները դաւանակից Հայերուն հետ միասին պատերազմներ կը
վարեն Ասորիի սահմաններուն վրայ: 40ին անոնք Հրեասան կը խուժեն եւ կը
վերցնեն քաղաքի գերիներ, որոնց մէջն էր նաեւ Հիւրկանոս քահանայապետը:
Հաւանօրէն գերիներուն մէջ մարտուած են դաւանակից Հայերուն, որոնք Պար-
թեներուն հետ միասին մասնակցած էին այս արեւմտեաններուն (Յ. Մանանդ-
եան. 211):

պատած է նաև մեծապէս առեւտուրին բարգաւաճման, ինչպէս նաև արհեստներու և արդիւնազործութեան զարգացման (Յ. Մանանդեան. Ֆեոսալիզմը Հին Հայաստանում, 230):

Այսպէս Արշակունեանց թագաւորութեան ժամանակէն սկսեալ Հայաստան շքման եկած է օտար ազգերու հետ և օգտուած անոնցմէ:

Մօտաւորապէս եօթը դար տեւած է Հայաստանի խաղաղած այդ կարեւոր դերը չինական և Միջին Ասիական տարանջներու համաշխարհային առեւտուրին մէջ — մօտաւորապէս մինչև Զ. դարը Քր. թ. թուականին: Այս ժամանակներուն (Զ. դար) ասաի-ճանաբար դադրած է չինական մետաքսի ներածուածը՝ Բիւզանդիոն և միտոմոմանակ սկսած՝ Բիւզանդիոնի անընդհատ պատերազմները, նախ Պարսկաստանի, իսկ յետոյ Արաբներուն դէմ: Այդպէս Հայաստանի տարանցիկ նշանակութիւնը մեծապէս ինկած է: (Յ. Մանանդեան, Հայասանի առեւտուրի եւ քաղաքներու մասին, ին ժամանակներու համաշխարհային առեւտուրի կապակցութեան մէջ Ե. դարէն սկսած Ն. Ք. Քր. մինչև ԺԵ. դար Քր. թ. յետոյ. Երևան 1930. ռուսերէն, 81-82):

Անիկա եղած է նաև Հայաստանի անտեսական անկումը, վասնզի իր արտաքին առեւտուրին գլխաւոր հիմը իսկապէս տարանցիկ առեւտուրն էր, որ կը պարտէր իր աշխարհագրական դիրքին, քանի որ Հայաստան կը գտնուէր անցքին վրայ առեւտրական ուղիներուն:

Սակայն Արաբական տիրապետութեան շրջանին ինչպէս նաև Բագրատունեանց իշխանութեան բոլոր տեւողութեան Հայաստան չգաղթեցու համաշխարհային առեւտրական ուղի ծառայելէ և այս պատճառով թէ՛ նիւթապէս բարգաւաճելէ և թէ՛ բարոյապէս օգտուելէ, յարաբերելով քաղաքակիրթ աշխարհին հետ և ընդօրինակելով անոնց կեանքը և ծնունդ տալով, Անիի, Արծնի պէս քաղաքներու, որոնք սակայն անշքացան երբ վայրենի հրոսներ, Հայաստանի ճամբով արշաւեցին Արեւմուտք:

Այսպէս, անիշխանութեան շրջանին ԺԲ. դարէն սկսեալ Անին և սերիչ շատ կարեւոր քաղաքներ, կամաց կամաց կը մեռնին, նարուստ ոստանները կը պարպուին և կը վերածուին գիւղի, իսկ աւելի ուշ աւերակնորու կոյտի:

Անոնց տեղը կը բռնեն ուրիշ կեդրոններ, ինչպէս Երզնկա, Խլաթ, Կարին եւլն, որոնք տարանցիկ առեւտուրի կայանները

կ'ըլլան Հայաստանի մէջ, մինչև որ ԺԵ. դարուն վերջերէն սկսած միջազգային առեւտուրը Հնդկաստանի և Չինաստանի հետ կատարուել կ'սկսի հիմնովին տարրեր ճամբաներով, այսինքն ծովային ճանապարհով և ցամաքային ճանապարհները կը լքուին:

Հայաստան, բնականաբար կը կորսնցնէ իր տարանցիկ-միջ-նորդի դերը՝ միջազգային առեւտուրին մէջ:

Այսպէս Քր. է առաջ Ե. դարէն սկսած մինչև ԺԵ. դար Քր. է յետոյ, Հայաստան տարանցիկ առեւտուրի ճամբաներէն մէկը ներկայացնելով հանդերձ, շատ քիչ տեսն միայն կարեւոր դեր կրցած է կատարել համաշխարհային առեւտրական շարժման մէջ:

Սակայն այդ քիչ ժամանակամիջոցն ալ բարերար դեր մը կատարած է Հայաստանի համար, զինքն յարաբերութեան դնելով օտար երկիրներու հետ, որոնց քաղաքակրթութիւնը և մշակոյթը այդ առեւտրական ուղիներու վրայէն թափանցած է Հայաստան, որ նախանձախնդիր ըլլալով հանդերձ իր ինքնապահ կղզիացման, ժամադրաւայրը եղած է, իր դիրքին բերմամբ, արեւմտեան և արեւելեան քաղաքակրթութեանց, որոնք չոն իրար դիմաւորած են, ինչպէս ծովի հովերը և կեդրոնական բարձրաւանդակի փոթորիկները հոն իրարու կը բախէին:

Հայաստան այսպէս կարծես բնութենէն ստանձնած է երկու տարրեր մշակութային հասանքները բաժնողի կամ ներդաշնակողի դերը:

Պատմական անվտակի իրողութիւն մըն է որ Հայերը ենթարկուած են հնագոյն ժամանակամիջոցներու արեւելեան զանազան մշակոյթներու ոգիին ու ձևերուն, միեւնոյն տեսն աւոր խառնել ջանալով յունական արուեստ իստեղծագործութիւնները: Եւ առիկա կատարեցին ո՛չ այնքան յաջողութեամբ որքան լաւ նախաձեռնութեամբ (His des Anciens Arméniens թրգ. Բ. 31):

Քրիստոնէութեան ընդունելութենէն յետոյ, յոյն-լատինական դադափարները աւելի լայնօրէն թափանցեցին Հայաստան, սակայն երկիրին կղզիացած վայրերուն բնակիչները առաւելապէս արեւելցի մնացին՝ և քիչ հազորդ հռոմէական և հելլենական ազդեցութեան:

Սակայն ընդհանուր կերպով Հայերը իրենց ձգտումներով և ոգիով, միշտ ծարաւի եղած են նիւթական շահու, մտաւոր և բարոյական լոյսի, և որովհետեւ չէին ձեռք կրնար բերել իրենց բնավայրին մէջ, հետեւաբար ստիպուած էին օտար աշխարհներ ուղղել իրենց սկնորիկը:

Այսպէս բնութեան արձաւրոյի և ընդհանրապէս աննպաստ պայմաններուն հանդէպ — յառաջդիմութեան և քաղաքակրթութեան տեսակէտով — անգնահատելի առաւելութիւն մը կ'ընծայէր դարձեալ երկիրին աշխարհագրական դիրքը:

«Հայ ժողովուրդը, Հայասանը, հին դարերէ սկսեալ, զտնուելով կարաւանի ամենակարեւոր նամբուն վրայ, ծառայելով իբրեւ տեսակ մը մթերանոց, ուրիշ անցած են հին աշխարհի ապրանքային հարստութիւնները, ինքն եւս նետուած է, իբրեւ գործօն, հրահրող, արգասաւոր ազդակ մը, այդ նիւթական եւ միանգամայն գաղափարական շարժման յորձանքին մէջ, իր զանգուածային ընդհանրութեամբ՝ անձնատուր եղած է երկրագործական աշխատանքներու, փարած է սրբազան աւիւնով ու գորովանով իր մանին ու արօրին, իր նուիրական, քեւել յանախ ողբալի տեսնութեան, իսկ իր խիզախ եւ նախաձեռնարկ փոքրամանութիւնը՝ ընդգրկած է առեւտուրի եւ արկածալի բափառումներու ցուպը, դարձած է ժամանակի ընթացքին այն կարեւոր եւ ազդեցիկ ոյժը, որուն աշխարհը տուած է նախանձելի եւ պատուաւոր տիպոս մը՝ «Միջնորդ Ասիոյ եւ Եւրոպայի միջեւ» (Հմմտ. Մ. Վարանդեան, Հայկ. Շարժ. Նախապատմութիւն, Ա. 135):

Բ.

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Ա.

Հայը՝ զաւակը իր միջավայրին. — Իր երկիրը խռովայոյզ եւ անապահով. — Պատերազմներ եւ անոնց հետեւանքները. — Գերաուր ինքններ. — Հայերու փախուստը:

Հայաստանի աշխարհագրութիւնը, ինչպէս տեսնուեցաւ վերոգրեալ ընդարձակ տեսութեան մէջ, իրապէս կը հանդիսանար աներեւոյթ ազդակը և անխօս դերակատարը Հայոց բովանդակ հոգեկան, մտաւորական, ընկերային, տնտեսական և քաղաքական կեանքին, մէկ խօսքով կերտիչը Հայոց պատմութեան, որուն մանրախոյզ ստուգամասիրութիւնը պիտի դնէր մեզի զարմանալի անակնկալներու առջեւ:

Միքայէլ Վարանդեան շատ իրաւամբ դիտել կու տայ թէ «պատմութեան փիլիսոփայութիւնը մեկից աւելի հակասորինութիւններ (antinomie) պիտի գտնէ հայկական նախազգի բազմադարեան եւօլիսիօնի մէջ:

Մի կեանք, որ բաւաւել է անդուլ հալածանքի ու բնաջնջման ալիքներում — եւ սակայն յարատեւել է ... մի անօրինակ, առեղծւածային կենսունակութեամբ:

Մի ժողովուրդ՝ այնքան՝ էչուր իր բուն, մի միջավայր՝ այնքան՝ յանախ ենթակայ աշխարհաւեր հեղեղների, մի բնութիւն՝ այնքան՝ դաժան, անհիւրընկալ կլիմայական պայմաններով, կտրուած քաղաքակիրթ Արեւմուտքից անագին անջրպետներով, — եւ սակայն մեկ տեսնում ենք այդ ամենի եւ բխուցնել բնութեան մէջ, այդ անհամբոյր եւ դժնդակ միջավայրում դեռ ամենահին ժամանակից պրօգրեսի, յառաջախաղացութեան զօրաւոր ցոլեր, նիւթական եւ իմացական քաղաքակրթութեան բողբոջներ, որոնք

սասնեակ դարեթի արիւնակուռ ու արսաւացող սարածութեան վրայ աստիճանաբար շեշտելով ու փոխանցելով սերունդներին, մղել են այդ ուշագրաւ ցեղը — սանջանքի եւ անգաղութի մահա- ուռմի ճանապարհով — դեպի ազգային ինքնանաւաչութիւն եւ դեպի ազգային — ազատագրական շարժումներ...» (Հայկ. Շարժ. Նախապատմութիւն. Ա. հտ. 118-119):

Արդարեւ Հայ ժողովուրդին պէս դժբախտ ազգ մը, որ իր բնակավայրին աշխարհագրական դիրքին ու կազմին — անսըր- բազրելի եւ անխորտակելի բնութեան — հետեւանօք, թէ՛ իր ցե- ղային բազկացուցութեամբ, թէ՛ իր պետական կառուցուածքով, թէ՛ իր մշակոյթով կը ներհայացնէր ազգային այնպիսի կերտուածք մը, որ իսկապէս **antinomie** ներուժէջ պիտի թողարկէր պատմու- թեան փիլիսոփայութիւնը, այսքան դժբախտ պայմաններու մէջ տեւող ապրող ազգ մը գտնելով իր դէմը:

Ասիկա հրաշք մըն էր իրապէս, վասնզի ինչպէս տեսնուե- ցաւ, մասնաւորապէս երկիրին աշխարհագրութիւնը, զօրուոր մէկ ազգակը եղած էր բոլոր այն ներքին անհամաձայնութիւն- ներուն, զժառութիւններուն, կուսակցական կամ տանուտիրական պայքարներուն, որոնց հոլովոյթին մէջ ապրելու հարկադրուած էր այս խեղճ ժողովուրդը, իր ներքին՝ առանին կիսնքին մէջ, եւ հանդէպ օտարին՝ որ իր տիրապետութիւնը հարկադրել կ'ու- զէր իր բնակավայրին վրայ՝ շահագործելու համար անոր բազ- մական տուակելութիւնը, եւ չարաչար կ'օգտագործէր իր ներքին երկպառակութիւնները կամ անխաբանութիւնները, արծարծե- լով իսկ զանոնք ներքնապէս սկարացնելու համար Հայ ժողո- վուրդը, որուն իրարու հետ կզուրտող, իրարու հետ հասկցու- ղութիւն եւ համերաշխութիւն չունեցող տանուտէր-վարիչները, երկմիտ ու տատանող, չէին կրնար համերաշխիլ քաղաքական միօրինակ շարժուղի (**orientation**) մը ընտրելու եւ օտար սանդ- բանքներու գործիք կը ծառայէին՝ շահուելով դրացի հզօր պե- տութիւններէն:

Այսպէս Հայաստանի մէջ ստեղծուած էր իրապէս անհան- դուրժելի կացութիւն մը տեւականօրէն, բայց ի մի քանի կար- ճատեւ շրջաններէ, ուր Հայաստան վայելած է ապահովութիւն եւ անդորդութիւն:

Այս տեւական անապահովութիւնը, միացեալ բազմաթիւ ուրիշ անպատեհութեանց եւ տառապանքներու պատճառ մըն էր

որ մեծ թուով Հայեր նախամեծար համարէին հեռանալ իրենց ծննդավայրերէն եւ հայրենիքէն ու օտար սատղերու տակ փնաը- ուէին հանգիստ եւ ապահովութիւն:

Այս փոխուստը ամենաբնական տկարութիւն մըն էր չարա- մարանող զանգուածներու կամ ամբոխներու համար որոնք մի- այն անձին փրկութեան տարրական բնազդով կ'ապրին: Անսո- վոր եւ տարօրինակ պիտի ըլլար եթէ Հայերը միահամուռն՝ յա- մառօրէն կառչած մնային իրենց հայրենիքին, որ ինչպէս տես- նուեցաւ իրապէս պատերազմի մշտական դաշտ մը եղած է իր դարաւոր պատմութեան շրջանին, թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին պատերազմներու հետեւանօք:

Եւ ասիկա իր կարգին նուազ տխուր անդրադարձումը չէ ունեցած Հայ ազգին ճակատագիրին վրայ եւ գլխաւոր պատճառ- ներէն մէկը՝ անոր աշխարհի ամէն կողմը ցրուելուն:

Պատերազմներու մասնաւորապէս նոսրեայ ձեւերը եւ եղա- նակները նկատի ունենալով, անշուշտ դիւրին է երեւակայել թէ տեւական պատերազմներու թատերավայր եղող երկիր մը ինչ վիճակ կրնար ներկայացնել:

Հին պատերազմներու մէջ սովորական երեւոյթներ էին, անլուր խժոճութիւններ, աւարտութիւններ, սրածութիւն- ներ, ծանր տուրքեր եւ սոսկալի կոտորածներ, ինչպէս նաեւ բռնի գերառութիւններ, որոնց հետեւանքներէն Հայաստան չա- րաչար տուժած է եւ մեծ թուով Հայեր Հայաստանէն այս ձեւով հեռացած են:

Նոյնպէս ամէն անգամ որ երկու մրցակից զօրութիւններէն մէկը յաղթած է, Հայերը ստիպուած են սկամայ խոնարհիլ յաղ- թականին առջեւ, ինչ որ գրգուած է պարտեալը, որ առաջին անգամ որ յաջողի Հայաստանի մէկ մասին կրկին տէր դառնալ, իբր տիրադրուած է տիրանինգ՝ Հայերը պատժէ: Այս պատճառով պարտապ տեղը ո՛չ միայն բազմաթիւ Հայերու արիւնը թափուած է անինայ եւ անչափ, այլ շատեր, վերահաս վտանգին վախով գաղթած են, մասնաւորապէս անոնք որ անխոհեմութիւն ունեցած են, մէկ կամ միւս կողմին յարելու կամ կողմերէն մէկուն գոր- ծակցելու կամ անոր սեւէ կերպով օգնելու կամ ձեռնառու ըլլա- լու, փորձառարար գիտնալով իրենց սպասող վտանգը, խոհե- մութիւն համարած են լքել իրենց երկիրը եւ մեկնիլ այն պետու- թեան հողերը, որուն ծառայած էին:

Նոյնպէս սկամայ այս պատերազմներուն մէջ տարադրուած

են կամ աքսորի ենթարկուած՝ բազմաթիւ Հայեր որոնք բռնի վերցուած են իրենց բնակավայրերէն երկիրը դատարկացնելու և թշնամիին անապատ և անշէն վիճակի մէջ ձգելու համար հողը, կամ իբր պատժական միջոց հեռացուած են իրենց քաղաքներէն և գիւղերէն:

Գերաութիւններն ալ որոնք մասնաւորապէս Արաբներու և Պարսիկներու և Թուրքերու տիրապետութեան շրջանին դործադրուած են, մեծ առիթ մը եղած են, բազմաթիւ Հայերու իրենց հայրենիքէն խլուելուն և Դամասկոսի, Պաղատսի, Եգիպտոսի, Սպահանի և Կ. Պոլսոյ շուկաներուն մէջ վաճառուելուն:

Այսպէս, Հայաստանի խռովայոյզ վիճակը, ներքին ու արտաքին պատերազմները, մէկ խօսքով երկիրին անապահով վիճակը, գլխաւոր և մայր պատճառներէն մէկը եղած է Հայերու շարունակ իրենց երկիրէն գունդադուռդ հեռանալուն:

Բ .

Հայերու գաղբը հարստահարութեանց պատճառով.— Կեղեքուցներէ, հարկապահանջութիւններէ, աւարաւութիւններէ խուսափելու միջոց՝ գաղբը:

Հայերու իրենց երկիրէն հեռանալուն երկրորդ գլխաւոր պատճառը եղած են հարստահարութիւնները որոնք Հայաստանի տիրապետող օտար իշխանութիւնները գործադրած են:

Հայերը Հայկական Բարձրաւանդակին վրայ հասատուուն կերպով ապրած են որքան ստեն որ կրցած են դիւրաւ ապահովել իրենց կեանքը և ապրուստը, չնորհիւ տիրողներուն իրենց ընծայած տգատութեան, որ միշտ չէ տրուած:

Տիրապետող իշխանութիւններ, մասնաւորապէս այն երկիրներու մէջ ուր իրենց գրաւումը երկար ստեղծուած համար ապահովուած չէ, իրենց բոլոր ուշադրութիւնը կը կեդրոնացնեն կողոպտելու երկիրը այնքան սրբան որ կարելի է և այնքան անխնայ որ զայն իրենց ձեռքէն յախչտակողը այլեւս բան մը չգտնէ, ինքն ալ իր կարգին կողոպտելու:

Հայաստանի տիրապետութիւնը հինէն ի վեր հզօր մրցումի մը առարկայ, իր զօրաւոր դրացիներուն միջեւ, դժբախտաբար

մշտնջենական հանգամանք մը ունենալ չէր թուեր սեւէ տիրապետողի համար, վասնզի յայտնի մրցակից մը միշտ պակաս չէր զայն ետ մղելու համար:

Հետեւաբար կողոպուտը և աւարաւութիւնը սովորական էին, այն պատերազմներուն մէջ որոնք Հայաստանի տիրապետութեան և Հայերը հազանդութեան մէջ պահելու համար մղուցին իր զօրաւոր դրացիները, ինչպէս, Հռոմայեցիք և Պարսիկները, Բիւզանդացիք և Սասանեանք կամ Արաբներն ու Թուրքերը:

Ասոնցմէ մասնաւորապէս Արաբները, աւարը և կողոպուտը միայն բաւ չհամարեցին այլ նաեւ հարկերու տակ ժողովուրդը ընկճելով իրենց տիրապետութիւնը մշտնջենաւորելու ջանացին:

Ասիկա Արաբական տիրապետութեան բնորոշ յատկանիշներէն մէկն էր, ինչ որ աւելի կը ծանրացնէր Հայերու անտեսական քայքայումը, վասնզի մէկ կողմէն պատերազմներու պատճառով շահելու դիւրութիւնները կը կորսնցնէին — քանի որ վաճառականութիւնը, երկրագործութիւնը, կենդանաբուծութիւնը և այլ շահու և վտասակի աղբիւրները կը դադրէին — և միւս կողմէն կ'ենթարկուէին չափազանց ծանր տուրքերու, զորս հայթայթելու արտասովոր ջանքեր ընելու պարտաւոր էին, քանի որ անոնք որ չէին կրնար տուրքերը հատուցանել խժգժութեանց աւարկայ կ'ըլլային:

Երկրագործական լծականները և հողագործական գործիները քմանածոյքին ձգուած էին տիրապետող կառավարութեան պաշտօնատարներուն, որոնք երկիրին բնակիչները իրենց ինչքերէն կը կողոպտէին:

Այս դժնդակ պայմաններուն մէջ շատ անգամ պէտքէն մղուած ականայ կ'ստիպուէին ամէն բան թողուլ և հեռանալ երկիրէն:

Խիստ հարկապահանջութեան ամէնէն երեւելի դէպքերն են 763ին Արաբներու այս պատուակով տուած նեղութիւնները, որոնք յետոյ բոլոր իրենց իշխանութեան տեւողութեանը շարունակուեցան:

Բաղրատունեանց կործանումէն յետոյ (1045) երբ Հայաստան Բիւզանդական տիրապետութեան տակ մտու, դարձեալ հարկապահանջութեան ենթարկուեցաւ, սակայն շատ կարճ տեւեց այս շրջանը՝ վասնզի Սելջուկները շուտով երեւացին և կորզեցին Հայաստանի մեծ մասը Բիւզանդացիներու ձեռքէն:

Թաթարներու տիրապետութեան շրջանին, Հայաստանի ամբողջական գրաւումէն անմիջապէս յետոյ (1242) երբ արիւնասեղու թիւնները նոր դադրած, աւերուած վայրերը նորոգուած և հաստատուն կառավարութեան սկիզբ դրուած էր, Մանգոյ Խանին հրամանովը իր եղբայրը Հուլաղու Հայաստան եկաւ և ընդհանուր աշխարհագիր ըրաւ (1254): Այս մարդանամարը ամենամեծ խտուրթեամբ կատարուեցաւ, տասը տարեկանէն վեր բոլոր բնակիչները հարկի ենթարկուեցան, բացի կիներէն և կղերականներէն: Ով որ հարկերու ծանրութեան համար փախչիլ փորձէր, բռնուելով կ'սպաննուէր, իսկ ով որ կարող չէր նշանակուած հարկը վճարելու, պարտաւոր էր իր զաւակները տալու պարտքի փոխարէն: Տուրքը կ'առնուէր դրամով և մանաւանդ բերքերով: Իւրաքանչիւր անհատ պարտաւոր էր հատուցանելու մէկ սպիտակ (դրամ), հարիւր գրիւ ցորեն, 50 գլուխ գինի, 2 գլուխ բրինձ, 3 տոպրակ, 2 պարսն, նետ մը, պոյս մը, նոյնպէս նաեւ քսան կենդանիներէն մէկը և 20 սպիտակ, առանց հաշուելու կարգ մը կաշառքները և անիրաւութեամբ խլուած կենդանիները, մանաւանդ գրաստները, որոնք Թաթարներու մէջ շատ յարգի էին: Ասկէ զատ երկիրին ծովակները և լիճերը, երկաթահանքերն ու աղահանքերը տիրապետողներու ձեռքն էին և ինչպէս պատմագիրը կ'ըսէ՝ սպորուստի բոլոր դուռները ժողովուրդին առաջ փակուած էին:

Տարբեր չէր դրութիւնը Պարսիկ և Թուրք պետութիւններու տիրապետութեան շրջաններուն, երբ հաւասարապէս կը կեղծէին և Հայոց վաստակին ու աշխատութեան դէմ արգելքներ կը յարուցանէին:

Հայերը, թէ՛ խոյս տալու համար այս տեւական հարստահարութիւններէն և թէ՛ կենսաշահութեան համար գացին աշխարհի բոլոր կողմերը ուր կարելի էր գործ մը գտնել և աշխատիլ, և այսպէս հեռացան իրենց բնաշխարհէն մեծ թուով և հաստատուեցան օտար երկիրներու մէջ:

Գ.

Հայաստանի հեռու զոհացում օպի ժողովուրդին բարոնութեան ձգտումներուն.— Արհեստներու եւ արուեստներու մախնակամուրիւնը.

— Հայ վաճառականութիւն.— Անապահովութիւնը արգելք օճեսական բարոնութեան.— Ի խնդիր նիւթական բարեկեցութեան զաղթող Հայեր:

Հայերու գաղթին մէկ ուրիշ պատճառն ալ ալ իրենց երկիրին աշխարհագրական և կլիմայական պատճառներով դաժան երկիր մը ըլլալն է, որ չէր կրնար լիովին գոհացում տալ բարութեան ձգտող ժողովուրդի մը: Ուստի, իր վրայ սպորող ժողովուրդէն՝ անոնք որոնք թռիչք ու նախաձեռնութիւն ունէին բնական է իրենց համար գործելու տապարէղ և նորիզն պիտի փնտռէին և պիտի հեռանային այդ աշխատելու, վարդանայու, հարստանայու աննպաստ միջավայրէն:

Հայաստան, դժբախտաբար կը ներկայացնէր աննպաստ միջավայր մը: Հոն կարելի չէր որ ծաղկէին արուեստներ և արհեստներ, ո՛չ միայն անոր համար որ երկիրը նպաստաւորուած չէր բնութենէն, այլ ինչպէս տեսնուեցաւ, անիկա շարունակ խռովեալ էր: Այնպէս որ հոն երաշխաւորուած չէր սպանով զարգացումը, նոյնիսկ ամէնէն նախնական գործերուն, որպիսիք են երկրագործութիւնը և խաշնարածութիւնը, որոնք կը կաղմէին Հայաստանի տնտեսական կեանքին շիւթը և խարխալը:

Չեմ խօսիր ճարտարարուեստներու զարգացումին վրայ, վասնզի երկիրին քաղաքական դրութիւնը դժբախտաբար բնաւ ձեռնառու չէ եղած յասուկ միջոցներ ընծայելու գոնէ նողին ընթերքին մէջ ծածկուած հարստութիւններէն օգտուելու համար:

Հետեւաբար Հայերը երբեք չկրցան, իրենց երկիրին կաղմին, ինչպէս նաեւ անոր դիրքին հետեւանօք ստեղծուած պայմաններուն բերմամբ, ո՛չ ՚ին Յոյներու և ո՛չ ալ Հռոմայեցիներու և ո՛չ ալ նոր դարերու մէջ արեւմտեան ազգերու նման ձեւափոխել ընթացքին արուեստի ստեղծագործ ու յանդուգն աշխատութեամբ: Հայուն հայրենիքը մնացած էր այնպէս ինչպէս որ էր բնութենէն և Հայերը օգտուած էին իրենց երկիրին այն հարստութիւններէն միայն, որոնք մէջտեղն էին կամ քիչ աշխատանք կը պահանջէին շահագործուելու համար (նմառ. Hist. des anciens Arméniens, թարգ. 65):

Հետեւաբար ճարտարարուեստական կեանք չունէր գրեթէ, իսկ իր վաճառականութիւնը այնքան մեծ փայլ մը չունէր վասնզի Հայաստան բնութենէն զրկուած և աղքատ իր արտա-

դրութիւններով (տես. վերը էջ 19-20), չէր կրնար արտածութեան խոշոր առեւտուր մը ունենալ:

Ստիպան ասիկա ըսել չէ թէ Հայաստան բոլորովին արտաքին աշխարհին նետ առեւտուր չէ ըրած: Որոշ է որ նոյնիսկ ամենահին ժամանակներու մէջ Հայերը ցամաքային ճանապարհով վաճառականութիւն ըրած և դրացի ժողովուրդներու նետ բերքերու փոխանակութիւններ կատարած են:

Յետոյ կամոց կամոց սկսած են հեռուոր երկիրներ երթալ և աւազակներու յարձակումներէն ազատ մնալու համար կարաւաններով, այսինքն բազմութեամբ ճամբորդել՝ սալորութիւն որ մինչև այսօր կը պահէ Արևելք:

Հայ վաճառականները, բոլոր Ասիական երկիրները կ'երթեւեկէին: Անոնք կարաւաններով կ'երթային Կապոզովկիոյ ճամբով Փիւնիկէ, ուր կը հասցնէին Հայաստանի և շրջակայ երկիրներու բերքերը: Տիւրոսի և Տարսոսի շուկաներուն մէջ կը ծախուէին Հայոց երկիրին ձիերը և ջորիները — որոնց վրայ Ս. Գիրքն ալ յիշատակութիւն կ'ընէ — և յետոյ կը տարածուէին դրացի երկիրներ, մանանանդ Պողեստին: Այդ կենդանիներուն տեղ Հայաստան կը բերէին ոսկի, արծաթ, գոհարեղէն, ազնիւ կտակեղէններ և ներկեր, իւղ և մեղր:

Խորհնացի կը հաւաստէ թէ «մերոնք յանախ պոյոյներ կը կասարէին Յունական (= Միջերկրական) եւ Կասպից ծովերու շուրջը» անտարակոյս առեւտրական նպատակներով: Նոյնը կը հաստատեն Ստրաբոն, ինչպէս նաեւ շատ մը ուրիշ Յոյն և Հռոմայեցի պատմիչներ:

Հայաստան եղած է Արևելքի և Արևմուտքի միջև առեւտրական յարաբերութիւններու տեսակ մը կեդրոն:

Հերոդոտոս կը նկարագրէ թէ ինչպէս Հայերը կ'երթեւեկէին Նինուէ և Բարսելոն, ուր եփրատ և Տիգրիս գետերու միջոցով կը տանէին Հայաստանի գինին, մրգեղէնները, փայտը, տոխտակը, և ուրիշ վաճառքները և անոնց տեղ կը բերէին Բարսելոնի գոյնզգոյն կերպանները և գորգերը:

Հայերը կ'օգտուէին այդ երկու գետերէն նաեւ Պարսիկներու նետ առեւտուր ընելու համար: «Եփրատով անոնք կ'երթային Բարսելոն պղինձէ կլոր եւ բեթե նաւերու մէջ... Կասպից ծովը եւ Պոնտոս կը հայրաքիւն Հայերուն ապրանքներ, զորս անոնք կը ծախէին Պարսիկներուն:

Այդ նաւերով ո՛չ միայն Հիւսիսի առեւտուրն կը մղուէր Պարսկաստան, այլեւ Հնդկաստանին ու Չինաստանին, որոնց ապրանքները Ռֆոսս գետով կը բերուէին դէպի Կասպից ծով, այն տեղէն Կուրի նաւերով կը տարուէին դէպի Սեւ ծով, ուրկէց կը տարածուէին ամբողջ Եւրոպա» (Huet. Histoire du commerce et de la Navigation des anciens. 1716. 52-53):

Այնպէս որ կարծեմ թէ Արշակունեանց շրջանէն առաջ և անոնց շրջանին, շատ ցանցառ թուով Հայեր միայն կրնան առեւտրական և վաճառականական շարժառիթներով, դրացի և հեռուոր երկիրներ մեծ երթեւեկներ ունեցած ըլլալ: Նոյնքան կազմակերպ չըսելու համար բոլորովին անհաւանական է մտածել թէ այդ ժամանակամիջոցներուն անտեսական նուաճումներու իբր անմիջական հետեւանք գաղթաւորութիւններ կատարուած ըլլան Հայաստանէն դուրս:

Բագրատունիներու շրջանին է — ինչպէս տեսնուեցաւ — որ Հայաստան ունեցաւ անսխալական բարգաւաճումի շրջան մը, որ ստիպան չափազանց կարճ տեւեց, վասնզի վայրենի հրոսներ Փլ. Կարուն սկիզբը արշաւեցին դէպի Հայաստան, ու անոր կարճատեւ բարգաւաճումին վերջ տուին, երկիրին քաղաքակրթական զարգացման թռիչքը կասեցնելով. և նոյնիսկ անշքացնելով իբր միջազգային առեւտուրի ճանապարհ իր ունեցած կարեւորութիւնը և նշանակութիւնը:

Հայաստանի արտածութեան առեւտուրին գլխաւոր նիւթերը՝ ինչպէս արդէն բացատրուեցաւ, երկրագործական արդիւնքներն ու արջառները և ձիերն էին, այսինքն արտաքին վաճառականութեան հիմը երկրագործութիւնը և խաշնարածութիւնն էին, երկու խիստ ամօտանք պահանջող գործեր, որոնք որքան աշխատանքի նոյնքան խաղաղութեան կը կարօտէին: Իսկ ներածութեան և արտաերկրեայ (քրանզիթ) վաճառականութիւնը, առաւելապէս կապ ունին երկիրին խաղաղութեան նետ, որ ինչպէս տեսնուեցաւ, շատ քիչ վայելած է մեր երկիրը:

Ապահովութիւնը և խաղաղութիւնը, երկու գլխաւոր սիւները երկիրի մը բարգաւաճումին, զլացուած էր դժբախտաբար Հայաստանի բնակչութեան ո՛չ միայն իր դրացի ցեղերու և պետութիւններու յարձակումներուն, և ազգային ներքին անհամաձայնութեանց հետեւանք՝ կիրքերու բորբոքման պատճառով, այլ նաեւ այն անյաղթելի և անընկճելի զօրութենէն որ

քնուծիւն կը կոչինք: Բացատրուեցաւ արդէն թէ ինչպէս Հայաստան երկրաշարժներու ենթակայ երկիր մը եղած է և ինչպէս այս պատճառով սարսափի ու անտեսական ու նիւթական վնասներու ենթարկուած են իր բնակիչները, որոնք յուսահատ իրենց քաղաքներու շարունակական քանդումներէն, լքած են իրենց երկիրը և հեռացած՝ անոր սահմաններէն, երթալ օտար երկիրներ շնչոյնով համար: Հետեւաբար բոլոր այն Հայերը, որոնք իրենց մէջ առեւտրական ձեռներէցութեան սղի զգացած են կամ վաճառականական ընդունակութիւն, դուրս նետուած են այս դաժան ու աննպատակ միջավայրէն, սւր մարդիկ ու քնուծիւնը կարծես զինակցաբար պատուար կը կանգնէին մարդկային առաջդիմութեան և անտեսական բարորութեան և կ'երթային օտար աշխարհներու մէջ վնասուել, ինչ որ չէին կրնար գտնել իրենց հայրենիքին մէջ:

Գ.

Հայասանի աննպատակ պայմաններ և անոնց հետեւանք բոլոր դժբախտութիւնները պատճառ գաղթականութեան և դատարկացման երկիրին.— Հիւժուժը և սպառումը Հայ բնակչութեան.— Սկսուող ժողովուրդներու գալուստը.— Հայ գաղութներու տեղը տեղ փոխադրուելու և չորացած տեղերու պէս Հայ բունէն փրփիլը:

Այսպէս Հայաստանի աշխարհագրական կազմը և իր շրջապատը, հաւասարապէս և յարակցաբար արգելք եղած են երկիրին բնակչութեան անտեսական բարորութեանը և մշակութային զարգացման, և պատճառ անոր դատարկացումին և յետամնացութեան:

Չարտադանց արդար է այն տեսութիւնը թէ «Նորագոյն և հին պատերազմները, հեթանոսական հնուօրեան տրտման փառապանական բազմաթիւ գոտիները, քրիստոնէական տրտման յունական կայսրութեան փառապանական և մանաւանդ կրօնական ազդեցութեան դեմ ցոյց տուած ընդհանրութիւնը, Հայասանի հին և նոր բնակիչներու — առանց ցեղի խտրութեան — սակաւին նահապետական և անփոյթ ոգին, օտար պետութիւններու կեղեքումները, որոնք հին աստիճանի վրէժներէն քաշուելով ազատաւիտ են, բայց՝ յետոյ մոլեռան-

տութեան դարձան կեղեքողներ, իսկ վախեն՝ արիւնաբուներ, վերջապէս՝ հապէս խաղաղ բնաւորութիւնը Հայերու, որոնք երբեք սեան քէ իրենց փառապանութիւնը արդէն վնասներ կը բերէ Հոռմայեցիներու ժամանակ տուտով հանդարեցան և քրիստոնէական դարերուն ընդհանրապէս ապստամբութեան գերադաս համարեցին հայրենիքին հեռանալը, գլխաւոր պատճառներն են այն յետամնացութեան որուն մէջ խոր կերպով քաղուած էր այն երկիրը:» (Hist. des anciens Arméniens, Թարգ. Բ. 47-48):

Շատ դիւրին է կարկանդակել թէ բոլոր այս դժբախտ իրադարձութիւնները, որոնք մեր պատմութիւնը կը կազմեն, իրենց տարրը թեան մէջ, ուժաթափ ու արիւնաքամ ըրած են և իսկապէս արգելք եղած Հայաստանի մէջ զօրաւոր պետութեան մը կազմութեան և այդ ոյժին հովանաւորութեան և պաշտպանութեան տակ՝ Հայ մշակոյթին զարգացման: Արդարեւ ժողովուրդ մը ուր այսպէս ճգնուած էր փառապետութեան, մոլեռանդութեան և քաղաքականութեան սոսկալի հարուածներուն տակ, չէր կրնար ուժ հաւաքել, զօրաւոր միութիւն մը կերտել և սերտ ներքին համերաշխութիւն մը պահպանել, որպէսզի կարենար փրկել իր անկախութիւնը, մանաւանդ որ իր ամէնէն բարգաւաճ օրերուն իսկ հաւանօրէն 6-7 միլիոնէն աւելի չէ եղած թուով (*):

Հետեւաբար Հայաստանի աշխարհագրական դիրքին ու բնագրական կազմին հետեւանօք ստեղծուած բոլոր աննպատակ պայմանները, բարբարոս հրոսներու յաջորդական արշաւանքները, դրացի հզօր պետութեանց Հայկական Բարձրաւանդակին տիրապետութեան համար մղած պատերազմները, երկիրին ներքին վարչութեան աւանդական կազմը և անոր հետեւանօք քաղաքային պատերազմները և գոտիները, օտար աշխարհակալ պետութիւններու կեղեքումները, և կրօնական հայրամանքները,

(*) Բրժ. Ա. Խաչատրեանի և Տոլէնի տեսութիւնն է այս: Գեորգ Մետրոպ (տես. Հայասան, աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետով, 1919 Վ. Պոլիս, 43-50) այլոց կարծիքները մէջ բերել յետոյ — որոնք 30էն մինչեւ 9 միլիոնի միջեւ կը տարբերէին Հայերու թիւը ամենաճշդ կերպով ժամանակներուն, կը կարծէ թէ եղած է ժամանակ երբ աւելի քան քսան միլիոնի թիւ մը կը ներկայացնէին Հայերը (էջ 46) և հաստատելու համար իր այս վարկածը կը ներկայացնէ փաստեր որոնք վնասական չեն, թէեւ բոլորովին ոչ զուրկ արժէք:

աննպաստ էին ինչպէս ցեղային ու պետական ամուր միութեան մը կերտումին և իբր ազգ և իբր պետութիւն օտար ոյժերու յարգանք ու պատկառանք ներշնչող ոյժի մը գոյուութեան, նոյնպէս նաեւ աննպաստ էին Հայ մշակոյթին ինքնուրոյն դրոշմ ստանալուն և բնականոն պայմաններու մէջ զարգացման:

Ահա թէ ինչպէս մեր երկիրին աշխարհագրական դիրքը բացասական դեր մը կատարած է և պատճառ եղած է այնքան աննպաստ հետեւանքներու որոնց կարգին, չէ կարելի աննկատ թողուլ գաղթականութեան, այսինքն երկիրին դատարկացման ազդեալը, որ Հայաստանի աշխարհագրական աննպաստ դիրքին բոլոր բացասական արդիւնքներուն հետ յորակցաբար և միասնաբար և առանձնապէս ալ աղէտալի հետեւանք ունեցած է Հայ ազգին ճակատագիրին վրայ, վասնզի անիկա գլխաւոր պատճառներէն մէկը եղած է ազգային զօրութեան քայքայումին և ցրումին:

Արդարեւ, ամենամեծ աղէտ մը եղած է գաղթականութիւնը որուն զիմած է Հայ ժողովուրդը, փրկարար լաստի մը կառչելու պէս, խոյս տալով այն դժնդակ ու անտանելի միջավայրէն որ իր «Գրախտավայր Երկիրը» կը ներկայացնէր: Եւ այսպէս կը տկարանար Հայ ժողովուրդը իր բնակավայրին մէջ, կը հիւժէր ու կ'սպառէր:

Այսպէս, մասնաւորապէս Քրիստոնէութեան Հայաստան մուտքէն յետոյ արիւնաքամ եղած է Հայկական Բարձրաւանդակը՝ իր ամէնէն ընտրելագոյն զաւակներէն զրկուած: Հայաստան պարպուած է իր Հայ բնակչութենէն անընդհատ Ե—Չ. դարէն սկսեալ մինչեւ ՓԱ. և ՓԲ. դար և ստով դիւրացած է բարբարոս ցեղերու գործը, որոնք կեդրոնական Ասիոյ տափաստաններէն իրենց ընտանիքներով և գոյքերով եկած են Արևմուտք և շուտով գրաւած են ուժաթափ ու տկարացած մեր երկիրը և տեղաւորուած այն տեղերը որ Հայերը լքած էին, իրենց կուսկածոս և վախկատ նկարագիրին հետեւանօք, որ անընդունակ դարձուցած էր զիրենք միասիրտ և միակամ բոլորը միասին կորովի գործ մը կատարելու: Առանց ազգին ապագային համար ունենալիք հետեւանքներուն վրայ մտածելու Հայերը անհատապէս նախընտրած են նստակեաց կեանքը և այս պատճառով միշտ հանգիստ ու ապահով միջավայրի մը ձգտած են, և ստոր համար շարունակ հեռացած են իրենց երկիրէն, և որովհետեւ վաչկա-

տու ժողովուրդներու պէս, որոնց շարժական վրանը միակ օճախըն է, չէին կրնար թափառիկ կեանքով մը ապրիլ, կ'ուղէին հողին կապուել մշակութեամբ կամ քաղաքներու մէջ հաստատուել որպէսզի կարենան ի գործ դնել իրենց առեւտրական և ճարտարուեստական ճարպիկութիւնները:

Հայերը ունենալով բոլոր պահասութիւնները և առաւելութիւնները խաղաղասէր ժողովուրդի մը, յաճախ լքած և հեռացած են այն հարիւրաւոր բերդերը որոնք շինած էին իրենց երկիրը պաշտպանելու համար և հաղարաւոր տաճարները — հեթանոս և քրիստոնէայ — որոնք կանգնած էին իրենց խորհրդապաշտ (միսիսի) հակումներուն գոհացում տալու համար, ոչ թէ հեռուն պանդխտութեան մէջ աշխատելու և դրամ հաւաքելով դառնալու նպատակով, այլ մշտապէս հաստատուելու համար օտար երկիրներու մէջ, իրենց ընտանիքներով և ստացուածքներով, հոն նոր Հայաստան մը կազմելու համար, հոգիով և միտքով, մինչեւ այն տեսն որ նոր դէպք մը հարկադրէ զիրենք դարձեալ նոր տեղ որոնելու (հմմտ. Hist. des anciens Arméniens թարգ. 64):

Այսպէս անիկա տեղէ տեղ փոխադրուած է իր հետը տանելով հայրենիքէն մասնիկ մը, և միշտ իր նայուածքը յառած մնալով դէպի Արարատ, բայց միշտ բան մը պակսեցնելով ուժէն և կենսունակութենէն Հայ ազգին, որ իր երակներուն դատարկացման թալուկը զգացած է իր բնաշխարհին մէջ, գաղթականութիւններու հետեւանօք. մասնաւորապէս երբ այդ հեռացող զանգուածները, հետզհետէ հոգեկան կապերու թուլացումով՝ գունաթափուած, և օր մըն ալ աշնանային տերեւներու պէս թափած են Մայր Ծառէն՝ Հայ Ազգութենէ փրթելով:

Ե.

Հայ գաղթականներու դիմած վայրերը.— Աննպասակ փախուս.— Բռնի ճեղահանութիւն.— Առեւտրական գաղութներ.— Առխարհահայեացք եւ գաղթվայր:

Իսկ թէ ո՞ւր կը դիմէին այդ փոխատական Հայերը: Բացարձեցաւ թէ Հայերը Քրիստոնէութիւնը ընդունելէ յետոյ

իրենց սկնարկը սեւեռած էին դէպի քրիստոնէայ Արեւմուտք։
 Գաղթականութիւններն ալ նոյն ուղղութիւնը ստացան, վասնզի մասնաւոր ձգողականութիւն մը ունէր Արեւմուտքը Հայոց համար ուր կը դիմէին արդար և նոյնիսկ անհետեւ պատճառներով, առանց շատ մտածելու, առանց ընտրութիւն մը ընելու, և նոյնիսկ կրնամ ըսել թէ առանց գիտնալու թէ ո՞ւր կը դիմեն և ինչո՞ւ կը դիմեն։

Բնական է արշաւող բոնակի մը տաջեւէն հապճէպով խոյս տուող կամ բնական յանկարծառաս աղէտէ մը փրկուելու մտաստանջութեամբ փութանակի ու անխորհուրդ իրենց տուներէն և բնակավայրերէն խուճապահար հեռացող զանգուածներ, չէին կրնար հեռուոր տպագայի մը մտաստանջութիւնները ունենալ և նախատեսութիւններ և նախազգուշութիւններ ընել, կամ խորունկ հաշիւներու մէջ թողուիլ, երբ մանաւանդ այդ ճգնաժամին միայն անձին պաշտպանութեան բնազդով կը շարժէին և ցեղին տեւականութեան մտահոգութիւնը իրենց հաշիւներուն մէջ գրեթէ տեղ չունէր։

Այս աղէտահար ու տհաքիկ զանգուածները հետեւաբար դիմած են հո՛ն ուր իրենց անմիջական ճամբուն վրայ կը ներկայանար, հո՛ն ուր իրենց աշխարհահայեացքին սահմաններուն մէջ կ'իյնար, հո՛ն ուր իրենց մտաւոր մշակոյթին զարգացումը թոյլ կու տար կարծել թէ պիտի գտնէին այն հոնդիստոն ու փրկութիւնը որ կ'որոնէին իրենց հայրենիքէն շտապ մեկնումէն յետոյ։

Ասոր համար է որ Հայերը գլխաւորապէս իրենց կամաւոր զանգուածային գաղթերու ժամանակ դիմած են դրացի քրիստոնէայ Բիւզանդական տիրապետութեան տակ գտնուած երկիրները, ուր իրենց կ'ապասէր դժնդակ ճակատագիրը անէացման, մասնաւորապէս Օրթոտոքս կրօնքին անհանդուրժողութեան և պետութեան ընդգրկած համաձուլումի քաղաքականութեան հետեւանօք։

Իսկ բռնի տեղահանուած Հայերը, որոնց թիւը ո՛չ նուազ էր, ոեւէ նախընտրութիւն ընելու, բնական է, ազատութիւնը չունէին։ Անոնք փոխադրուած են հոն ուր կը տանէին տեղահանողները, որոնք յաճախ ընտրած են այնպիսի վայրեր ուր տեղափոխուողները դիւրին ձուլի կարելի ըլլայ և յաճախ յաջողած են իրենց այս անխիղճ նպատակին հասնիլ։

Գալով այն Հայերուն որոնք անտեսական պատճառներով և

տաւարական ձեռներէցութեամբ, 'ի ինդիր բախտի ու հարստութեան, Հայաստանէն հեռացած են, անոնց թիւը շատ քիչ է բաղդատմամբ միւսներուն, մանաւանդ հնագոյն ժամանակներու մէջ։

Անոնք բնական է ընտրութիւն մը կրնային ընել կամ սա կամ նա երկիրը նախամեծար համարել, բայց բացարձակապէս անտեղի է խորհիլ թէ, մասնաւորապէս շատ հին ժամանակներու մէջ, կեանքի պայքարի իբր հետեւանք և տնտեսական նուաճումներու հեռագատկերով, Հայեր գտնուած ըլլան, որ մեկնած ըլլան Հայաստանէն, ուր անտեսական շարժումը չափազանց նախնական վիճակ մը ունէր, ինչպէս առիթ ունեցանք տեսնելու (տես. վերը 18-26)։

Այս շրջանին երբ տակաւին ժողովուրդը նախարարի մը կամ հողատէր-տանուտէրի մը ամբոցին շուրջ համախմբուած գեղջուկներէ կը բաղկանար և ամէն ինչ նախնական էր, զանգուածը՝ իր մտածութիւններով՝ նեղ և ծանօթութիւններով՝ չափազանց անհորիզոն, հեռու էր նոյնիսկ դրացի նահանգներու որպիսութեան գիտակ և հաղորդ ըլլալէ, ո՛ւր մնաց դրացի և մանաւանդ հեռուոր օտար երկիրներու։

Եթէ ամուտէր-նախարարներ սչխարի հօտերու պէս իրենց մշակները քշէին՝ գուցէ խոշոր գաղթականութիւններ մեկնէին Հայաստանէն, սակայն դիտելի է որ երկիրին քաղական վիճակը և նախարարներու դիրքը գէթ մինչեւ Քրիստոնէութեան մուտքը, այնքան անկեալ չէր և տակաւին բաւական ուժ ունէին տոկալու համար։

Այնպէս որ այդ նախնական ու նեղ աշխարհահայեացք ունեցող զանգուածներուն մէջ տարակուսելի է որ գաղթելու գաղափարը գետին գտած ըլլար, ինչպէս այսքան տնտեսական նախնական պայմաններու մէջ սպորող ժողովուրդ մը շատ ու շատ խնդրական է որ անտեսական սուր պայքարի մը լծուած ըլլար և տընտեսական ընդարձակ նուաճումներ կատարելու ընդունակ։

Հայերը օտար աշխարհներու հետ յարաբերութեան մտան, մտաւոր և հոգեկան հաղորդակցութեամբ, Քրիստոնէութեան Հայաստան մուտքէն և մանաւանդ գիրի գիւտէն յետոյ, որոնք մեծագոյն յեղաշրջումին ենթարկեցին Հայ միտքը, որուն առջեւ րացուեցան, մինչեւ այն ստեն իրեն անժանօթ հորիզոններ, և Հայաստանը յարաբերութեան դրին օտար աշխարհներու հետ, թէ՛ քաղաքական թէ՛ կրօնական և թէ՛ մշակութային մարդե-

րու մէջ: Քրիստոնէութիւնը խողովակ մը եղաւ Արիստոտելի ու Պլատոնի փիլիսոփայական հայեացքներուն Հայ միաքերու մէջ ալ տեղաւորման և այդ տեսութիւնները սերտելու համար ուսանողական խումբեր, սնունց աղբւրքին դիմելու համար ճամբորդութիւններ կատարեցին և օտար երկիրներու ծանօթացան:

Քրիստոսի քարոզած տիեզերական եղբայրութիւնը, որ Քրիստոնէութեան առաջին դարերուն, Տիեզերական միակ Եկեղեցիի մը մէջ կը պարփակէր բոլոր քրիստոնէայ ժողովուրդները, Հայաստանի լեռներու բնակիչներուն ծանօթացուց, հեռուն, անծանօթ երկիրներու մէջ սպրոզ սուրբեր և Եկեղեցւոյ Հայերը, միեւնոյն ժամանակ ընդարձակելով Հայերու աշխարհածանօթութեան շրջանակը:

Մասնաւորապէս Հայաստանի արեւմտեան սահմանագլուխէն՝ Եփրատէն անդին տարածուող աշխարհամասը՝ Կապադովկիա, ուրկէ Հայաստան ստացիր էր իր լուսաւորութիւնը և որ բաւական ատեն իր կրօնական հեղինակութեան տակ պահեր էր Հայաստանի քրիստոնէաները, ծանօթ շրջանակներ դարձան Հայերու համար, որոնք նոյնիսկ կրօնական պատճառներով ընդարձակ յարաբերութիւն ունեցան այդ Անդրկարապետան երկիրներու հետ, ուր յետոյ սպաստանիլ նախընտրեցին, երբ հարկադրուեցան, վասնզի անիկա դրացի էր, մօտ՝ իրենց միտքին և ծանօթ իրենց՝ գէթ կրօնական ուսմանց խողովակով:

Քաղաքական յարաբերութիւնները՝ նոյնպէս Քրիստոնէայ Արեւմուտքին հետ, ինչպէս նաեւ հեթանոս Արեւելքին հետ, նըպաստած են աշխարհածանօթութեան, վասնզի անընդհատ երթեւեկ կատարուած է, դէպի Բիւզանդիոն և դէպի Տիգրան, ինչպէս նաեւ դէպի Դամասկոս և դէպի Պաղատա:

Հայերը հետևորար իրենց քաղաքակրթական վերելքին և մտաւոր զարգացման աստիճանին բարձրացման հետ զուգընթաց, աշխարհի իրերու մասին իրենց ծանօթութիւնները ընդարձակած և նոր աշխարհներու իրենց առջեւ բացուելը տեսած են, և գողթական Հայերը իրենց ընտելացած ու իրենց միտքին մէջ տեղ գրաւած վայրերը դիմած են, աւելի կամ պակաս ապահովութեամբ և վատահոլութեամբ և նաեւ ընտանութեամբ, կերպով մը այդ վայրերը նկատելով երկրորդ հայրենիք մը ուր քրիստոնէայ տիրողներու իշխանութեան տակ կը յուսային իրենց խափեալ էութիւնը հազեցնել, մինչ դժբախտարար նոն

կը գտնէին իրենց նուիրական զգացումներուն վիրաւորումը, կրօնական հալածանքներով, սրտնք նպատակ ունէին Բիւզանդացի գարձնելու Հայերը, երբ արդէն բազմաթիւ աղբեր և ժողովուրդներ հելլենականութեան գրոշմով՝ Օրթոսոքս քրիստոնէութեան շրջանակին մէջ իրարու միացուցած էին և այդ կարգին իրենց տիրապետութեան սահմաններուն մէջ տեղաւորուած Հայերը ձուլելու համար ոչ մէկ բան պակաս ձգելու պիտի վարանէին:

Ե.

Հայ գաղթականը հանդէպ օտարին եւ անոր անհանդուրժողութեան. — Իր յարուճը դէպի իր նախնական բնակավայրը եւ իր անցեալ մօակոյթը. — Իր գոյութեան պայտաբ. — Իր պարօտքիւնը եւ իր ձուլումը:

Հայերը այսպէս կը հեռանային Հայաստանէն և գունդ առ գունդ կը դիմէին մասնաւորապէս քրիստոնէայ երկիրներ, նոն փնտռելու համար կեանքի, ինչքի և պատիւի ապահովութիւնը:

Անոնք խիզախ նախաձեռնութեամբ մը կը դիմէին օտար երկիրներ, տեսակ մը անստոյգին դիմելու արկածախնդրութեամբ, և ստրատիլի արհաւիրքներու մէջէն կը հաթթէին իրենց ճամբուն: Անոնք իբր քաղաքակրթութեան դրօշակիրներու կարաւաններ, կ'ընթանային անխափ և անվնաս, Հայ վաճառականին առաջնորդութեամբ, չէզոքացնելով — կրաւորական համբերատար դիմադրութեամբ — թէ՛ բնութեան և թէ՛ մարդոց անթիւ և անհամար խոչընդոտները:

Անոնք իրենց հաստատուած երկիրներու մէջ իրենց դէմ կանգնած կը տեսնէին օտարներու ատելութիւնը, մասնաւոր կրօնական անհանդուրժողութիւնը, որ խիղճերը կը վրդովէր այդ տարագրեալ բազմութիւններուն, որոնք կ'ուզէին պահել իրենց պատկանական հաւատքը, իրենց հայրենի եկեղեցին կամարներուն տակ ապրեցնելով իրենց բնագաւառը և անոր կեանքը:

Այսպէս հալածական և տրտուած ամենուրեք, հանդիպելով շարունակ հարուածներու ու անարգանքներու, բայց «կըլելով» ու մարտելով անմուռնչ, սարկային համակերպութեամբ, անոնք կը քալէին:

«Անոնք կը քանդեն ամենուրեք կարգին ու հնազանդութեան ոգի մը, որ սովորաբար կու սար անոնց վարկ ու հարսութիւն: Առ ոչինչ համարելով հոգեքը, յոգնութիւնը եւ նոյնիսկ ստիճանը եւ նախասինքը (humiliation et outrage), անոնք կը հաւաքեն պատկառելի հարսութիւններ, առանց մտածելու ամեն ճշտակ վստահներու մասին, որոնք կը քոչապատեն զանոնք այդ երկիրներուն մէջ» *մասնաւորապէս Միջին դարուն, (Jaubert Voyage en Arménie, 110):*

Յարմարելով իրենց նոր միջավայրին պայմաններուն, անոնք գոյութեան կռիւը կը մղէին, հնարազարտութեամբ, խորամանկութեամբ, և մասնաւոր յամառութեամբ իրենց աչքերը սեւեռած պահելով դէպի Արարատ, որուն ստորտը գերագոյն ճիւղով և անսովոր տոկոսութեամբ իր գոյութիւնը քաշքշող Հայութիւնը, և իր կրօնական կեդրոնը՝ Էջմիածինը, և իր միւս պատմական ու նուիրական վայրերը, միշտ իբրև կենդանի տեսիլք մը անոնց աչքին մէջ կ'ապրէր, անկէ եկած պատգամ մը կամ խօսք մը, ոգի ու շունչ կու տար և իրենց տոկալու և տեւելու ուժ կը ներշնչէր:

Եւ որքան ատեն որ այդ ներշնչող ազդակները իրենց գոյութիւնը կը պահէին և Եկեղեցիով, լեզուով և մշակութային ուրիշ տարրերով անոնք կատարած կը մնային բնազատաւոր մէջ ապրող զանգուածին, Հայութեան ոգին կ'ապրէր իրենց մէջ, և Հայ կը մնային:

Սակայն դժբախտաբար դարերը կրժած ու մաշեցուցած են յաճախ այս կապերը և բազմաթիւ գաղթականներ, որոնք Հայաստանէն հեռացած են մասնաւորապէս կեանքի, ինչքի և պատիւի ապահովութեան կամ իրենց տնտեսական քայքայուած դրութիւնը վերականգնելու նպատակով, թէև իրենց բնազատաւոր մէջ իրենց ապառնացող կտրմիւր ջարդէն ձուլուած՝ սակայն դարձեալ անէացած են իրենց նոր բնակավայրերուն մէջ, Հայութիւնէ դուրս ելլելով, սպիտակ ջարդերու հետեւանօք:

Իրապէս Հայերը հակառակ անոր որ ամենահին ժամանակներէ սկսած ցոյց տուած են մեծ տոկոսութիւն և իրենց բնաւորութեան ամէնէն ակնաբախ գիծերէն մէկը եղած է ազգային աւանդութիւններու մէջ յարատեւելու յամառութիւնը՝ հակառակ ամէն խոչընդոտներու, չեն կրցած մշտապէս պահել իրենց գոյութիւնը և հազիւ մի քանի սերունդ յետոյ յաճախ կորսուած

են Հայութեան համար, խառնուելով և ձուլուելով իրենց հաստատուած երկիրներու բնակիչներուն հետ:

Յամուռ, պնդադուլ, համբերատար լեռնական, Հայը, այնքան մեծ եռանդով պահած է իր բարքերը, իր լեզուն, իր կրօնը, իր պատմական յիշողութիւնները, որ իրեն համար ըստած է թէ «իւ անցեալին պատշաճութեամբ ունի, որ իսկապէս ըսելով, կ'արգիլէ անոր ներկան հասկնալ» (His des Anciens Arméniens, թրգ. 67): Այս ժողովուրդը, հակառակ իր մեծ ճիգերուն որպէսզի պահէ գէթ օտար աշխարհներու մէջ իր կրօնքը և լեզուն, որոնք մասնաւորապէս կը յատկանշէին զինքը, չէ կըրցած երկարատեւ իր կրաւորական դիմադրութեան մէջ յաղթական կանգնիլ և երբեմն բռնութիւններու տակ և երբեմն այ գրեթէ անզգալաբար, կորուսած է իր ազգային դրոշմը և օտարացած:

Հազուադէպօրէն անիկա յաջողած է յաղթական կանգնիլ այս պայքարին մէջ որ անզգալաբար կամ տարրերային բնազդով մը ծնունդ կ'ունէր գաղթական Հայուն և իրեն հաստատուած տեղերուն տիրապետներուն միջեւ, կա'մ ցեղային, կա'մ կրօնական և կա'մ մշակութային պայքարին դիմագծութիւններով անջատաբար կամ հաւաքաբար: Եւ որովհետեւ տիրողները յաճախ թուով աւելի բազմաթիւ և մշակութով աւելի բարձր եղած են, Հայ ցեղը ընկճուած է և իր ազգային ինքնուրոյն նկարագիրը չէ կրցած պահել և ձուլուած է:

Բազմաթիւ Հայ գաղութներ այսօր պատմութեան էջերուն մէջ միայն կը յիշատակուին:

Այսպէս հակառակ իր տոկոսն նկարագիրին ու դէպի իր ազգային աւանդութիւնները ունեցած պինդ յարեմին Հայը չէ կրցած իր բնազատաւոր դուրս շատ տեղեր պահել իր ազգութիւնը ու անոր դիմաւոր յատկանիշները, բարքերը, սովորութիւնները, լեզուն ու աւանդութիւնները:

Ասիկա մեծագոյն շարիքը եղած է որ Հայ գաղթականութիւնները պատճառուած են Հայ ազգին:

Կենսունակ ու կենդանի ոյժեր, անտեսապէս բարգաւաճ, մոտաւորապէս աւելի զարգացած, աշխարհայեացքով աւելի լայնախոհ, անդարձ կորսուած են, և հայրենիքին համար նեցուկ ըլլալէ դադարած: Սակայն ասիկա բնական երեւոյթ մըն էր երէկ և վաղուան համար ոչ մէկ ապահովութիւն ունինք թէ մեր այ-

սորուան ստուար գաղութները նոյն բնական երեւոյթին զսները պիտի չըլլան:

Օտար ցեղերու և ժողովուրդներու մէջ ցրուած փոքրիկ հասուածներ — ինչպէս են Հայերը — կարելի չէ որ պանպանէին իրենց ազգային ինքնութիւնը: Ժողովուրդ մը փոքրիկ խումբերով երբ խորասուզուած է օտար ազգերու ծոցը, երկար ժամանակ չի կրնար պանպանել իր ազգային առանձնայատկութիւնները, մանաւանդ երբ զինքը հեռաւոր հայրենիքին զօղող կապերը, ժամանակի ընթացքին կը թուլնան օտար զօրաւոր ազդեցութիւններու տակ և զինքն կենսաւորող բնատոնմիկ ներշնչումները կը գաղբին գայէ հեռաւոր Մայր-Հայրենիքէն, անկէ իրեն եկող նոր գաղթականներով կամ Մայր-Հայրենիքին մէջ ուռճացած գրականութեան ուղիով: Երբեմն նոյնիսկ ազգային զգացումները արթնցնող ներարկումներ և ուժ ու ոգի ներշնչող ազդակներ, անզօր եղած են հակազդելու կարգ մը գաղութներու մէջ, երբ անոնք իրենց Հայութեան գլխաւոր յենակէտը եղող Հայ Եկեղեցիէն դժբախտ պարագաներու տակ բաժնուած են կամ օտար միջավայրի մէջ իրենց դարաւոր բնականութենէն յետոյ կորուած են բոլորովին իրենց մայրենի լեզուն կամ զայն հազիւ կրցած են պանել եկեղեցական պաշտամունքներուն համար:

Այս պայմաններուն մէջ ձուլումը անխուսափելի էր, և այդ անխուսափելին կատարուած է բողոքութիւ երկիրներու մէջ:

Այս պատճառով, Հայերու իրենց հայրենիքէն հեռանալը եթէ իրենց համար երբեմն անձնական կամ անհատական շահու կամ օգուտի տեսակէտով, նպաստաւոր եղած է առժամաբար, ընդհանրապէս վնասակար եղած է Մայր-Հայրենիքին համար, վասնզի անոնք բոլորովին կորած են իրենց ազգին համար, ինչպէս Լեհաստանի, Հունգարիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ եւայլ Հայ գաղութները, որոնց անցեալ դոյութենէն այսօր հազիւ քանի մը գերեզմանաքարեր կամ եկեղեցիներու արձանագրութիւններ կը մնան եւ կարգ մը յիշատակութիւններ պատմական հնախօսութեան մէջ:

Այս տեսակէտով թերեւս բացառութիւն կազմեցին միայն թուրքիոյ եւ Պարսկաստանի մայրաքաղաքներուն մէջ եւ շուրջը եւ անոնց քանի մը նաւահանգիստներուն եւ ցամաքային կարեւոր քաղաքներուն մէջ կազմուած Հայ գաղութները, որոնց

առաւել կամ նուազ տեւողութեամբ և յաջողութեամբ ունեցած փայլը կը բացատրուի աւելի տիրող երկիրին կրօնքին տարբերութեամբ կամ բնիկ տարրերուն քաղաքակրթական խեղդող զօրութենէ մը զուրկ լինելու իրողութեամբ:

է:

Հայ գաղթականութեան նպաստաւոր կողմերը.— Հայ մտին լուսաւորութիւնը գաղութներու միջոցով.— Հայկական նկարագիրից ցայտուն կողմերը օւռնացած օտար երկիրներու մէջ.— Հայ գաղթականութեան արտաքաղաքական լուսաւորութեան.— Հայ գաղթականը կը գործէ Հայաստանի համար եւ անոր վերածնութեան կ'աշխատի.— Հայ գաղութներու պատմութիւնը լրացուցիչ Հայոց պատմութեան.—

Սակայն ինչպէս ամէն դժբախտութենէ բարիք մը կը ծնի, Հայ գաղթականութիւնն ալ իր վնասակար և կործանարար արդիւնքին հետ՝ առիթ և պատճառ եղած է նաեւ այնպիսի իրողութիւններու որոնց համար Հայերը հպարտանալու իրաւունք ունին:

Հայաստան շատ հեռու էր զարգացած կեդրոններէ, մոռցուած, զուրկ հողորդակցութեան ուղիներէ և ամէն տեսակ ապահովութիւններէ: Հայերը այդ աշխարհագրապէս անպատեքելի մէջ, արիւնարբու ցեղերէ ոտնակոխ, զինուորական բռնապետներու ահաւոր ձեռքին տակ ճնշուած, սգէտ, նախապաշարուած ու խաւարի մէջ թողուած տարր մը կը ներկայացնէին, որոնք նոյնիսկ իրենց գոյութիւնը պահելու համար գերմարդկային ջանքեր ընելու ստիպուած էին:

Այդ բռնաւորական լուծը խորտակելու, այդ ճնշող ճիրաններէն ճողոպրելու համար մօքի լուսաւորութեան կը կարօտէր Հայը և իր երկիրը ձեռնտու չէր այդ բանը ստանալու համար: Հայերու ապագան, յոյսը և ակնկալութիւնը հիմնուած էր իրենց զարգացմանը վրայ և ստոր համար իրենց ուրիշ միջոց չի կար, եթէ ոչ օտար ազգերու հետեւիլ:

Ինչպէս կրնար կարելի ըլլալ այդ տեսակ հսկայ ծրագիր մը գործադրել, գէթ մասամբ, այն պայմաններու մէջ, ուր սարիլ հարկադրուած էին Հայերը իրենց բնագաւառին մէջ: Եթէ գաղութները գոյութիւն չունենային Հայերը գուցէ մինչեւ այսօր

մնացած պիտի ըլլային այն ասիական խաւարին մէջ, անշարժ, լճացած, մտաւորական պաշարէ զուրկ ժողովուրդ մը, ինչպէս են այսօրուան Քուրդերը, Եզդիները, Չէրքէզները, Լէզգիները և նոյնիսկ մինչեւ երէկ՝ Պարսիկները:

Գաղթականութիւններն էին որ Հայը փրկեցին այս կիսամեռ վիճակէն զայն եթէ ոչ քաղաքակիրթ ազգերու շարքին՝ գէթ անոնց հետեւողներու կարգին մէջ դնելով: Գաղթականութիւնները նպաստեցին Հայերու իրենց երկրին սահմաններուն մէջ կղզիացած չմնալու: Գաղթելով հայերը կը հեռանային ահաւոր և սարսազողոթեցիկ իրականութենէ մը և կը մտնեային քաղաքակրթութեամբ երջանիկ աշխարհին: Այնտեղ անոնք կը տեսնէին և կը տրվէին կեանք մը՝ տարբեր իրենց ապրածէն և անհամեմատ աւելի յառաջընթաց, ամէն մարգերու մէջ: Ուստի անոնք իրենց կարգին քաղաքակրթական եռանդ, նախաձեռնարկ ոգի և մրցող աշխոյժ ցոյց կու տային: Իբրեւ ճարպիկ ու ժիր վաճառական, Հայերը միջնորդ հանդիսացան, Արեւելքի և Արեւմուտքի միջեւ, ընդարձակ տարածութիւններ կտրեցին կտրաւաններով և մէկ երկիրէն միւսը զանազան երկիրներու առանձնայատուկ ապրանքները և բերքերը փոխադրեցին:

Գժուարութիւններու տոկալու կարողութիւնը, անսպաս համբերատարութիւնը, չարքաշուքիւնը, անխոնջ ու յամառ հետապնդութիւնը իր նպատակներուն, Հայերու նկարագիրին նշանակելի գիծերն էին, որոնք օտար հողի վրայ աւելի շեշտուեցան: Յաճախ անիկա յաջողեցաւ անանցանելի պատուարներ խորտակելով հասնիլ այնպիսի բարձրութիւններու որոնք նոյնիսկ բնիկներու համար չատ պատուաբեր և նախանձելի պիտի կրնային համարուել:

Այն ամէն տեղերուն մէջ ուր Հայերը կրցած են անտեսական յաջողութիւն մը ձեռք բերել, անոր անմիջապէս զուգորդուած է մտաւորական շարժում մը, որ կրնանք ուզակի արգասիքը համարել Հայ գաղթականներու ընդօրինակելու կարողութեան և միջավայրէն ու պարագաներէն իր երկիրին և ժողովուրդին բարեք մը ապահովելու ցանկութեան:

Այսպէս գործ փնտռող Հայուն հետ ծնունդ առաւ նաեւ լոյս փնտռող Հայը և այս երկուքը ձեռք ձեռքի տուած հայկական վերածնունդի մը յատուկ նախնական ասաղձները պատրաստեցին: Կարծես թէ գաղթական Հայը տեսակ մը առաջապահ էր և

բանաքաղ մը որ օտար հողի վրայ կեանք կը փնտռէր, զայն իր բնիկ հողին վրայ փոխադրելու համար:

Կեանքը՝ լոյսէն և իմաստութենէն միայն ծնունդ կրնար առնել, այդ լոյսը օտարէն պիտի ստանայինք և շատ հեռու այն սահմաններէն ուր չէ թէ լոյս ծնունդ չէր կրնար առնել այլ նոյնիսկ բերուածը և փոխադրուածը կարծես թէ խեղդուելու, մարելու և փճանալու դատապարտուած էր: Եւ իրականապէս գաղթականութիւնները մատուցին այդ ծառայութիւնը Մայր Հայրենիքին, անոր վերածնունդին նախնական տարրերը հայթայթելով:

Հայերու մտաւորական շարժումը Հայաստանէն դուրս ծագում առաւ, սակայն այդ դուրսը մշակուած ուժը անշուշտ հայրենիքին համար էր որ կը գործէր: Այսպէս հեռաւոր Հնդկաստանի Հայ գաղթականները միշտ պահած են իրենց ազգին սէրը, անոր աւանդութիւնները, անօր կենդանի կալօթը, իրենց ծոցէն հանած են ազգին վրայ մտածող և անոր համար գործող դէմքեր, ազգին կրթութեան նպաստող մեծ բարեբարներ և այդ շրջանակին մէջ՝ ծնունդ առած է առաջին անգամ Հայ մամուլը, այսինքն ժողովրդական գիտակցութեան կենդանի զգայարանը:

Անոնք նոյնիսկ հեռուէն իրենց բնաշխարհի սգատագրութիւնն իսկ ձեռք բերելու համար նիւթական և բարոյական դոհողութիւն ընելու աշխատեցան: Երկար ատեն, դարեր ամբողջ գաղթական Հայը շատ աւելի շահագրգռուած է Հայաստանի վիճակով, քան նոյնիսկ Հայաստանի սարաւանդներու անտաշ բնիկը իր իսկ վիճակով:

Այս իրողութիւնները ի վեր կը հանեն սա բացայայտ ճշմարտութիւնը թէ Հայ գաղթականութիւններ իրենց մեաւակար կողմերուն հետ ունեցած են նաեւ իրենց օգտակար կողմերը և նա մանաւանդ սա շատ նշանակելի իրողութիւնը թէ Հայ գաղթականութիւնները մեծ դեր մը ունեցած են ազգին ճակատագիրին բարելաւման նպատակով տանուած քայլերուն մէջ և այդ ուղղութեամբ տակաւին իրենց պաշտօնը չէ աւարտած:

Միւս կողմէն նկատելով իրենց ազգեցութիւնը և դերը, չէ կարելի ուրանալ սա ճշմարտութիւնը թէ սոսանց այդ գաղթականութիւններու պատմութեան Հայերու վերջին դարերու պատմութեանը, անոնց քաղաքակրթական քայլերուն, վերածնութեան փորձերուն, մտաւորական զարգացման համար ըրած ճիգերուն:

ազգային ու քաղաքական ձգտումներուն, իրենց ինքնուրոյն նկարագիրը պահպանելու համար թափած ջանքերուն, պայքարներուն, մաքսուհաններուն և դիւցազնութիւններուն, իրենց վաճառականական հակումներուն, իբր առեւտրական ժողովուրդ իրենց նախաձեռնարկ, յանդուգն ու յարստեւող նկարագիրին, ինչպէս նաեւ իրենց քարքերուն, սովորութիւններուն, ընտանեկան և ընկերային կազմակերպութիւններուն, աշխատատէր ոգիին, տոկունութեան և ուրիշ առանձնայատկութիւններուն վրայ գաղափար մը կազմել կարելի չէ:



ՀԱՅԵՐՈՒ ՑՐՈՒՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՁԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԸ

Ա.

ՄԻՆԶԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԿՈՐԾԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՈՒՐՍ ՀԱՅԵՐ

(Քր.է առաջ Զ. դարէն մինչեւ 428 Քր.է վերջ)

Քրիստոսէ առաջ Զ. դարէն սկսեալ, ուր վերջապէս Հայ ազգը իր մասնաւոր դիմագծութիւնը կ'ստանար, Արմէնական վերնախաւին Հայաստան մուտ գործելէն յետոյ, մինչեւ Արշակունեաց հարստութեան վերջը (428 Քր.ի) շատ ճոխ չեն մեր տեղեկութիւնները, վասնզի Հայ գիրը՝ հազիւ Արշակունեաց վախճանէն երկու տասնեակ տարի առաջ գոյութիւն կ'առնէր:

Այս շրջանին վերաբերեալ տեղեկութիւնները մեզի հասած են առհասարակ օտար մատենագիրներէ և շատ մասնակի են: Սակայն կան ինչ ինչ իրողութիւններ որոնք մեր գաղթականութեան պատմութեան արշալոյսը կը պատկերացնեն և այս տեսակէտով ունին անուրանալի կարեւորութիւն մը:

Այսպէս, Հերոդոտոս, որ իր գործը Քր.է 450 տարի առաջ գիրի առած պիտի ըլլայ, կը վկայէ թէ Հայերը կը մասնակցէին համաշխարհային առեւտրական շարժման՝ մինչեւ Բարելոն ապրանք տանելով (վերը 47 և 84) և Ս. Գիրքը կը հաստատէ թէ Հայեր կը վաճառէին ձիեր և ջորիներ Տիրոսի և Տարսոնի շուկաներուն մէջ (վերը 84):

Քսենոփոնի ակննտեսի նկարագրութիւնը (վերը 20—21) ցոյց կուտայ թէ Հայաստանի տնտեսական դրութիւնը 400—401ին (Քր.է առաջ) չափազանց նախնական էր, սակայն ամէն կողմ առատութիւն կը տիրէր և Հայ շինականին տունը լեցուն էր ամէն տեսակ պաշարներով: Ասիկա փաստ մըն էր թէ առեւտրական շարժում և արտածութեան հետ ներածութեան առեւտուր մը կար որ դարձեալ արտածող վաճառականներու ձեռքով կը կատարուէր: Հայ վաճառականներուն անձանօթ չէր նոյնիսկ Հնդկաստանի ճամբան, վասնզի Քսենոփոն իր Կիւրամարզի (Ք. գ) մէջ, ոչ անշուշտ բոլորովին քմածին կերպով, այլ հիմ մը ունենալով կը

պատմէ թէ՛ երբ Պարսիկ թագաւորը ուզեց դեսպան ղրկել Հնդկաստան, դիմեց Հայոց, իբր ճամբան լաւ գիտցող մարդոց, և առաջարկեց ուղեցոյց ըլլալ:

Այսպէս, գէթ ցանցառ թուով Հայեր, եթէ ոչ իբր գաղթականներ, այլ իբր առեւտրական ուղեւորներ, հեռաւոր երկիրներ, երթեւեկ ունեցած են:

Հայերը, նոյնպէս Ա. քեմենեան շրջանին, իրենց երկիրէն հեռու վայրեր երթալու հարկադրուած էին զինուորական պատճառներով, վասնզի Հայաստանի ընդի իշխանները երբ խաղաղութեան մէջ էին սատրապներուն հետ, զինուորական ոյժ կը արամադրէին կամ վալ ձկան զինուորներ կը հայթայթէին, որոնք իրենց առանձին գունդերով, Արքայից Արքային բանակին արշաւանքներուն կը մասնակցէին:

Հերոդոտոս իր պատմութեան մէջ կը յիշէ Արմէնները պարսիկ բանակներուն օժանդակող ազգերուն մէջ, իր նկարագրած Մարկսն պատերազմներուն մէջ: Անոնք, համանման տարագով Փոլեզացիներու և Պափլագոնացիներու հետ, կը գտնուէին միակ հրամանատարի մը՝ Արտոք մէսի (Պարսի փեսան և Քսերքսէսի քեռայրը) առաջնորդութեան տակ: Քսենոփոն իր Կիւրամարգին (Բ. ք) մէջ կը պատմէ թէ Կիւրոսի բանակներուն կ'ընկերանային՝ Տիգրան Հայոց թագաւորին գահամասնագ որդին, իբր հայ հեծելազօրքին հրամանատար և Եմբաս հայ զօրավարը՝ հետեւակազօրքին, երբ Ա. քեմենեան վեհապետը Սարդիկէն և Բաբելոնը կը գրաւէր:

Այս տեղեկութիւնները, որոնք քաղուած են Հերոդոտոսի պատմութենէն և Քսենոփոնի վիպասանութենէն, կրնան ճիշդ չըլլալ, սակայն չեն կրնար բոլորովին անհիմն ըլլալ: Իսկ բոլորովին պատմական է որ Ազքսանդր, իր արշաւանքին ի զուր դիմադրող ժողովուրդներու զօրքերու շարքին գտաւ նաեւ Հայերու վաշտերը Իսոսի ճակատամարտին մէջ (331 Քր. է առաջ): Ասկէ յետոյ, երբ Ազքսանդր Ասորիքը, Եգիպտոսը և Բաբելոնը գրաւեց, Ասորեստանի Արբելայի դաշտին մէջ պատերազմ մղեց, նոյն Հայերը Պարսից կայսրութեան ամենաընտիր ուղմիկներուն հետ միասին կուտակուած էին անոր դէմ: Սակայն հայկական զօրքը շատ չէր, 4000 հետեւակ և 700 հեծեալ (Georg Kurt. Աղեփանդրի Պատմութիւն Ա. հտ. 272.): Վաճառականական և զինուորական-պատերազմական պատճառներով պարսիկ ընդորձակածաւալ կայսրութեան մէջ շրջող Հայերէն զառ, Ա. քեմենեան հարստութեան տեւողութեան, շատ հաւանական է որ Հայեր պետութեան զանազան մասերուն մէջ հաստատուած ըլլան, թէեւ առիկա վճարար պայտուցանել կարելի չըլլայ:

Պարսի (521—486 Քր. է առաջ) իր արձանագրութիւններուն մէջ կը յիշէ Բատարչէս Հայը, որ զօրագլուխն էր ըմբոստացած Հայաստանը նըւաճելու զրկուած Պարսիկ բանակին (519 Քր. է առաջ): Այս Հայը սպարապետար Արքայից Արքային անմիջական շրջապատին մէջ էր և անոր մայրաքաղաքը՝ Պերսեպոլիս կ'ապրէր, հակառակ պարագային, անկարելի

էր որ այնքան մեծ վստահութեամբ պատուուած՝ պարսիկ թագաւորէն զրկուէր՝ իր ազգակիցները նուաճելու:

Կայսրութեան կեդրոնին մէջ առաջացող այս Հայը անշուշտ միակը չէր և իրեն պէս ուրիշներ, պաշտօնի և իշխանութեան հետամուտ, հոն գիմած պէտք էր ըլլային: Պէհեստուհի արձանագրութիւնները կը յիշեն ուրիշ Հայ մը, Արախա անուն (Հայրիտայի որդի), որ կ'ապստամբի Բաբելոնատանի Դուրալա երկիրին մէջ, ինքզինքն Նաբուգոդոնոսոր կեղծելով: Իրեն կը միանայ բաբելոնական զօրքը Դարեսէն սպստամբելով: Ան կը գրաւէ Բաբելոնը, ուր թագաւոր կ'ըլլայ:

Այս բախտախնդիրը կենազրաւ կը քաւէ իր յանդգնութիւնը, վասնզի իր վրայ զրկուած Վենտափրա զօրավարը կը գրաւէ Բաբելոնը 512ին, (Քր. է Ա.) և կը ձերբակալէ Արախան իր կուսակիցներով, որոնք Բաբելոնի մէջ խաչ կը հանուին: Սակայն, կրնայ մտածուիլ որ, Արախա այդ օտար ու հեռուոր աշխարհին մէջ այդքան մեծ թուով կուսակիցներ ճարած ըլլալու համար, շատոնց հոն հաստատուած մէկը ըլլալու էր, եթէ իր ազգակիցներէն ալ հետեւողներու խումբ մը ունեցած ըլլալու հաւանականութիւնը՝ յանդուգն սակայն ոչ շատ անհեթեթ ենթադրութիւն մը համարուի:

Պատահականօրէն պատմութեան անցած Հայաստանէն դուրս սպորող այս Հայերու գոյութիւնը կարելի է փաստ համարել որ պարսիկ պետութեան բովանդակ տարածութեան վրայ Հայերը սփռուած էին, կամ գէթ անոր ինչ ինչ մասերուն վրայ որոշ թիւ մը կը ներկայացնէին: Մասնաւորօրէն՝ Եփրատէն մինչեւ Ալիս տարածուող երկիրներուն մէջ, ինչպէս նաեւ Պոնտոսի, Կապադովկիոյ, Կոմմագենէի, Կիլիկիոյ և թերեւ Փոքր Ասիոյ ինչ ինչ մասերուն մէջ, շատ հին ժամանակներէ սկսեալ, ստուարաթիւ Հայեր գոյութիւն ունեցած են. այնպէս որ, կարելի չէ այսօր ճշդիւ անոնց տեղափոխութեան ժամանակը և թիւը, պատճառը և ձեւը, անուամբ և զարգացումը:

Այդ հնագոյն շրջանին, դեռ Հայ ազգը իր վերջնական ազգային նկարագիրը և ուրոյն և սեփական դրոշմը չէր ստացած, ուստի, այդ վայրերուն մէջ՝ ուր Հայաստանի պէս բազմաթիւ ցեղեր գրեթէ համանման պայմաններու մէջ իրարու ձուլուած և ծնունդ տուած էին նոր ազգութիւններու և համապատասխան նոր պետութիւններու, Հայերը վերնութաւի մը դերը միայն կրնային կատարել, և նախասահմանուած էին տեղացի դառնալու, ինչպէս որ ալ եղան: Եփրատի արեւմտեան կողմը, Հայեր անյիշատակ ժամանակներէ ի վեր բնակած ըլլալուն փաստը կը հայթայթեն հին բազմաթիւ աշխարհագիրներ և պատմագիրներ (տես՝ Պատմութիւն Հայ Կեսարիոյ, 1937, Գրահիրէ, 150—7 և այլն):

Իսկ թէ Ա. քեմենեան պետութեան սահմաններէն դուրս ուրիշ վայրերու, ինչպէս հեռուոր Հելլադա, Եգիպտոս, և այլն, կային Հայեր հաստատուած, անշուշտ հաւաստել կարելի չէ, սակայն պատմութիւնը կը բերէ մեզի գէթ յիշատակութիւնը միակ անձի մը որ Հելլադա փոխադրուած

էր Հայաստանէն: Քսենոփոն իր Նահանգին մէջ կը պատմէ թէ՛ որդի Հայաստանի գիւղապետներէն մէկուն — որուն նկատմամբ անիրաւ եղած էր իր զօրապետներէն մէկը՝ Քիրիսոփ — իր հօրը գիշերանց յուսաց բանակէն փախուստ առնելու յետոյ, ինք մնացած է հոն և ինքնակամ գացած անոնց հետ Յուսաստան և հաստատուած է Ամփիպոլիս, տունը իր տիրոջ Եպիթոնէսի, որուն միշտ հաւատարիմ մնաց (Քսենոփոն. Անափապս. կամ Ալիշան. Յուստին. Բ. 224): Թէ Հայը անծանօթ մը չէր Հելլադայի մէջ և նոյնիսկ իր յարալէզներու աւանդութեան արձագանգը հոն հասած էր, կերպով մը կը հաստատէ Քսենոփոնի ժամանակակից և անոր պէս Սոկրատի աշակերտ՝ Պլատոն իմաստասէրը (430—348 Ք.է առաջ), որ իր Հասարակապետութիւնին մէջ կը պատմէ էր անուն Հայու մը դարձը ի մեռելոց և տեսիլքը: Պլատոն անոր համար կ'ըսէ թէ սղզով Հայ և ծննդեամբ Պամփիլիացի էր (ԲՁՄՊ. ԺԴ. 341 կամ Ալիշան. Յուստին. Բ. 235):

Այս քանի մը շատ փոքր յիշատակութիւնները կրնան նշաններ համարուիլ թէ Հայերը Աքեմենեան շրջանին արդէն իսկ յարաբերութիւններ հաստատած էին օտար աշխարհներու հետ, պահելով միշտ իրենց տրեւելիսն նկատագրերը:

Աղեքսանդր Մակեդոնացիի աշխարհակալութիւնները (336էն 323) Ասիան կերպարանափոխ ըրին և հոն ասարածեցին Հելլէն քաղաքակրթութիւնը, մինչ Հայերը իրենց անմատոյց լեռներուն և ձորերուն մէջ առանձնացած, ո՛չ միայն անկախութեան ձգտեցան, այլ իրենց ազգային միութիւնը իրագործեցին: Ըստ Կուրիանիոս Կուրտիոսի և Ապպիանոսի, Մակեդոնացի աշխարհակալը միայն Փոքր Հայքի կրցած է տիրել, և հազիւ անուանական հնազանդութեամբ մը Հայաստան գլուխ ծռած է Մակեդոնացոց: Այն կռիւններու միջոցին, որ Աղեքսանդրի զօրավարները իրարու դէմ մղեցին գրեթէ երկու տասնեակ տարիներ, պատեհութենէ օգտուող առաջին երկիրը եղաւ Հայաստան, որ իր անկախութեան տիրացաւ գլխաւորութեամբ Արդուարդ Թագաւորին (Գրոսուր Սիկիլիացի), որ հաւանօրէն միակ իշխողը չէր Հայկական Բարձրաւանդակին վրայ, ուր իր ժամանակը և իրմէ յետոյ՝ երեւան կու գան ուրիշ իշխանութիւններ, որոնք կա՛մ բնաւ չէին ճանչնար Աղեքսանդրի յաջորդներուն իշխանութիւնը, կա՛մ միայն անուանապէս կը հնազանդէին անոնցմէ մէկուն:

Իսպոսի ճակատամարտէն (301) յետոյ, Հայաստան ձգուեցաւ Սելեւկեանց, որոնք նախամեծար համարեցին այս երկիրին տէր դարձած բնիկ իշխաններուն հպատակութեամբ բաւականանալ և զայն թողուլ իր օթագաւորներուն ժառանգական իշխանութեան տակ, զանոնք նկատելով իբր սատրապներ կամ կուսակալներ, իրենցմէ կարգուած, վասնզի զանոնք նուաճել դժուար էր և չոտմի վտանգը՝ վերահաս շեռեւորար, Սելեւկեանք անհանգիստ չըրին տեղական իշխանները կամ թագաւորները: Միայն աշխատեցան որ անոնք միանալով մեծ միութիւն մը չկազմեն: Այնպէս որ, Սելեւկեանք երբեք չկրցան հաստատուն կերպով տեղաւորուիլ

այս լեռնոտ նահանգին մէջ, ուր Պարսկականութիւնը (Persisme) աւելի խոր արմատներ ձգած էր (Ք. Բէյնախ. Միհրդատ Եւպատր 101): Հայաստանը իրապէս նուաճել կը խորհի առաջին անգամ Մեծն Անտիոքոս (227—187), որ հոն կը մտնէ և Եփրատէն արեւմուտքը՝ Փոքր Հայք կոչուած մասը գատելով՝ կու տայ ոչ-հայազգի սատրապի մը, իսկ Մեծ Հայքի կառավարութիւնը կը յանձնէ բնիկ արքայական Հիւստոնեան տունէն Որոնտ անուն մէկու մը (Կ. Տիշոյեան. Հայաստանի Կոչնակ. 1933. 1016): Անտիոքոս 193ին Մեծ Հայքն ալ երկուքի կը բաժնէ և Մոփաց կամ Արեւմտեան Հայաստանի իշխանութիւնը կը յանձնէ Զարեհի (193—158) և Արեւելեան Հայաստանը՝ Արտաշէսի, որոնք իր զօրապետներն էին՝ բայց Հայեր (Դուրեան. Հայոց Պատմ. 50):

Ասիկա կը հաստատէ թէ Հայեր գտնուած են Սելեւկեան բանակներուն մէջ և Անտիոք՝ այդ պատուութեան կեդրոնը՝ Հայ գաղթականներ ընդունած էր: Կարելի է ենթադրել թէ այս երկու Հայ զօրավարները Սելեւկեան բանակին՝ գուցէ կը պատկանէին բնիկ արքայական ընտանիքներու և գերիշխան պատուութեան բանակին մէջ ծառայած էին:

Մագնեսիոյ ճակատամարտէն յետոյ (5 Հոկտ. 190 Ք.է առաջ), երբ Անտիոքոս հարկադրուեցաւ հրաժարիլ Տաւրոսէն անդին գտնուող երկիրներէն և երբ չոտմի աջակցող սպստամբ երկիրները իրենց անկախութիւնը ձեռք բերին, Հայ երեք անկախ թագաւորութիւններ երեւան եկան. 1. Մեծ Հայք՝ Երասխի հովտին մէջ՝ Արտաշատ մայրաքաղաքով, 2. Մոփս՝ Հայաստանի հարաւ-արեւմտեան կողմը՝ Արշամուշատ մայրաքաղաքով, 3. Փոքր Հայք՝ Եփրատի արեւմտեան եզերքը (Ստրաբոն. ԺԲ. 3. 18) կը գտնուէր այն աշխարհամասին մէջ, որ երբեմն Կապադովկիոյ մասը կը կազմէր և որ իր այս կոչումը ստացած էր Հայոց ստուար բազմութիւն մը բնակիչ ունենալուն համար:

Շեռեւորար. Փոքր Հայք անուանով ճանչցուիլ կ'սկսէին 190 թուականէն (Ք.է առաջ) սկսեալ Գայլ կամ Լիկոս (Lycos) և Հալիս կամ Ալիս (Halys) գետերուն վերին հովիտները, Եփրատեան իրենց դրացիներով (J. Laurent. L'Arménie entre Byzance et l'Islam. 1910 Paris. 301):

Ուրեմն, Փոքր Հայք առաջին նուաճուած երկիրը կ'ըլլար Հայ ցեղէն և առաջին հայախօս նահանգը, որ պարսկական միապետութեան անկուսմէն յետոյ կը վերստանար իր ազգային անկախութիւնը (Laurent. ցոյց):

Ստրաբոն և Պլինիոս ալ կը խօսին Փոքր Հայաստանի մը վրայ՝ Փոքր Ասիոյ մէջ, որ Եփրատի հիւսիս-արեւմուտքը կը գտնուէր և հարուէն իրեն սահման ունէր Գայլ գետին հովիտը:

Ասոնք ամէնը ցոյց կուտան թէ այդ դարաշրջանին այս երկիրները բնակուած էին Հայերէ և հին ասեաներէ օկսեայ կազմուած էր Փոքր Հայքը, անշատ Մեծ Հայքէն և Եփրատով անկէ բաժնուած (Հիւպսման. Հին Հայոց տեղւոյ ամուսններ. 1907. Վիեննա. 26): Ստրաբոն կը հաւատէ թէ «Փոքր Հայք ունէր ... միջ բազաւորներ եւ տոմայիս իշխաններ որոնք դաւեակից էին յաճախ բուն Հայոց թագաւորներուն... եւ իրենց իշխա-

նուրբան օակ ունեին Խաղաղիք եւս (Մտրարոն ԺԲ. 3. 18): Հոս Թէոտոր Բէյնախի, Միհրդատ Պոնտացիի ժամանակ եւս Փոքր Հայք անուշով կը ճանչցուէր նոյն շրջանակը (Միհրդատ Եւպատր 79), որուն համար աղիտաբեր եղաւ իր կողքին զարգացող և զօրացող Պոնտական թագաւորութեան զբացնութիւնը: Արդարեւ, Պոնտոս իւրացուց Փոքր Հայքը (Ստրաբոն. ԺԲ. 3. 18) որ յետոյ Պոմպէոսի կարգադրութեամբ տրուեցաւ Գալատիոյ Դիոտարոս թագաւորին (53—34 Քր. է առաջ) (Տօքթ. Հ. Յ. Աստուրեան. Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռոմի մայ, 1912 Վենետիկ. 23 և 92) և ի վերջոյ, Օգոստոս կայսեր ատեն, կը ցուցաւ Կապադովկիոյ այդ երկիրը, զոր Հայերը իրենց թիւի գերակշռութեամբ հայացուցած էին:

Եփրատի արեւմտեան կողմը, Հայերու այնքան մեծ թիւ մը, 300էն 190 (Քր. է առաջ), բնական է հարիւր տարիէն քիչ մը աւելի ժամանակամիջոցի մէջ յանկարծ չգոյացաւ:

Աւելի հաւանական է մտածել թէ՛ հին ժամանակներէ ի վեր այդ երկիրներուն մէջ ապրող խառն բնակչութեան մէջ գանձուող Հայ տարրն էր որ քաղաքակրթական նուաճում մը գործադրած էր՝ իր գերակշռութիւնը զգալի ընելով և իր մէջ ձուլելով ուրիշ ցեղեր:

Ժամանակը և այդ ժամանակին յատկանիշ եղող պատերազմելու մեթոտներն ալ նուազ դեր կատարած չեն անշուշտ ժողովուրդներու տեղափոխման մէջ, որ կատարուած է իրր տեսակ մը դերառութիւն:

Այնպէս որ, շատ անգամ մեզի անյայտ պատճառներով, Հայաստանի արեւմտեան սահմանը համարուած Եփրատէն անդին՝ հայաբնակութիւնը խտացած է Մեծն Ազեքսանդրէն (322 Քր. է առաջ) մինչև Մեծն Տիգրանի ժամանակամիջոցին (95—55):

Անոնք մշակոյթով ալ աւելի բարձր ըլլալ կը թուին՝ աւելի մօտէն չփռւմ ունեցած ըլլալով Հելլենական մշակոյթին հետ: Անոնց սերունդներէն էր ապահովարար Փոքր Հայքէն Տիրան անուն Հայը, որ Հոտտոսի մէջ աշակերտած էր Դիոնիսիոս Թրակացիին:

Ասիկա պատմութեան մէջ անուն ունեցաւ, վասնզի Լուկուլլոսի գերիներուն հետ տարուեցաւ Հոտմ, ուր առաջին անգամ գրաստուն մը բացաւ և գրավածառութեամբ զբաղեցաւ: Սուրտաս կը վկայէր թէ 30,000 գիրք (ըստ այլոց 3000) հաւաքած էր: Տիրանի շնորհիւ, կ'ըսեն, ազատեցան կորուստէ Արիստոզէլի քաղաքական գրուածները: Բայց Տիրանի փառքը կը կազմէ Կիկերոնի (146—43 Քր. է առաջ) գրատան կարգաւորումը՝ որուն համար Մեծ Հոտմայեցի միշտ շնորհապարտ էր և կ'ըսէր թէ «տունս կարծես թէ միտք մը աւելցուց»: Քաջ գրագէտ էր Տիրան և Կիկերոն իր ասոյ մէջ նաստատեց վարժարան մը, ուր Տիրան քերականութիւն կը սորվեցնէր Հոտմայեցի տղոց: (ԲՁՄՊ. 1932. 196. և 1927. 170—1 և Ռօլէնի Հնայաստութիւն. հտ. Զ. 114):

Նոյնպէս, այս նօրեայ գաղթականութենէն առնուած էին ապահովարար Միհրդատ Եւպատորի զօրքին մէջ գանձուող 10,000 հեծեալ զինուոր-

ները զորս Կապադովկիոյ Արիարաթ թագաւորը հաւաքած էր 88ին (Քր. է առաջ) Փոքր Հայքէն (Ապպիանոս Միհրդատ 17), որ անշուշտ ստուար հայութիւն մը ունէր իրր բնակիչ՝ 10,000 հեծեալ տալու համար Հայոց այս գունդը ազգային զօրքի թիւին մէջ չէր հաշուուեր ըստ Մեմնոնի և Ապպիանոսի, ինչ որ ենթադրել կու տայ թէ Փոքր Հայքը այն ժամանակ միացած էր Կապադովկիայի, որուն թագաւորը՝ Արիարաթ՝ յանձն առած էր 10,000 ձի հաւաքել Փոքր Հայքէն, ինչ որ չէր կրնար եթէ ան իր իշխանութեան տակ եղած չըլլար (Ն. Դօլինս և Ա. Յաչ. Պասմ. Հին Հայերի Գ. 28): Այս զինուորներուն զուլին էին դարձեալ Հայ զօրավարներ:

Այսպէս, Միհրդատ Եւպատորի զօրավարներուն մէջ կը յիշուին Միհրաս (Միհրան) և Բագաւոս (Բագուաս), որոնք իր բանակները առաջնորդեցին Կապադովկիա 90ին (Քր. է առաջ), և Նեմանէս (Ապպիանոս. Պասմ. Միհրդ. ԺԲ.), որ 88ի գարնան Հոտմէական զօրքը Չարդող բանակին հրամանատարներէն մէկն էր: Նոյնպէս կը յիշուի Տաքսիլ Հայ զօրավարը, որ մեծ ծառայութիւն մատոյց Միհրդատի, երբ Յունաստանի մէջ Միլլայի դէմ կը կռուէր 87ին: Հաւանօրէն ասոնք ամէնը Փոքր Հայքէն էին, մասնաւորապէս վերջինը, վասնզի անիկա կը վարէր Փոքր Հայքի գունդը Պոմպէոսի դէմ պայքարին ատեն (Ապպիանոս Bell Civil. Բ. 7. Ն. Դօլինս և Ա. Յաչ. Պաս. Հին Հայերի Գ. 30):

Ասոնք մեծ ապացոյցներ են թէ Փոքր Հայք և Թերեւս Պոնտոս այն ատեն ունէին Հայ պատկառելի թուով բնակչութիւն մը:

Մեծն Տիգրանի (95—55) աշխարհակալութիւնները, Հայերու բնակութեան շրջագիծը աւելի պիտի ընդարձակէին: Անիկա Ասիոյ գերիշխան պետութիւնը դարձնելով Հայոց թագաւորութիւնը, ո'չ միայն Հայ ազգը միակ պետութեան մէջ պիտի ամփոփէր, այլ նաեւ Հայոց տիրապետութիւնը պիտի տարածէր Հայաստանի սահմաններէն դուրս՝ դրացի երկիրներու վրայ: Առաջին և վերջին անգամ ըլլալով, Հայ բանակներ պիտի նուաճէին և Հայոց թագաւորին հպատակեցնէին ո'չ միայն ընդարձակ տարածութեամբ երկիրներ, այլ նաեւ Հայոց թագաւորին գերիխանութեան ենթարկէին բազմաթիւ թագաւորութիւններ: Տիգրան, Սրեւմուտքի կողմը նուաճելէ յետոյ Կապադովկիան, հնազանդեցուց Մեծ Մարաստանը, Կորդուիքը, Ատրպատականեան Մարաստանը, Աղիաբենիոյ (Մուսուլի շուրջ) մէջ մինչեւ Նինուէ և Արքայա և անոնց թագաւորները հորտ դարձուց, ինչպէս նաեւ Վրաց և Աղուանից թագաւորները, որոնք ճանչցան իր գերիշխանութիւնը: Ասկէ յետոյ արշաւեց դէպի հարաւ տարածուած երկիրները: Գրուեց հիւսիսային Միջագետքի երկու. Ժողկեալ նահանգները, Միզդոնիան (Մծբին = Նիզիպին) և Ոսրոյնիան (Ուոհայաստան = Յդեսիա կամ Ուրֆա = Osroene): Մտաւ Սելեւկեան թագաւորութեան երկիրները, որուն բնակիչները քաղաքային պատերազմներէն տաղտկացած, գրեթէ առանց դիմադրութեան ընդունեցին Տիգրանը իրր ազատարար և զայն հաշակեցին «Թագաւոր Ատորուց» (83 Քր. է առաջ): Ան, Սուրիայէն անցաւ

Կիլիկիա, որուն դաշտային մասերը գրաւեց: Արշաւեց նաեւ Փիւնիկէ և մինչեւ Հրէաստանի սահմանները:

Տիգրան մաքառեցաւ և ճակատեցաւ Հոռոմէական պետութեան պէս հզօր ու պատկառելի զօրութեան մը դէմ, իբր արժանաւոր հակառակորդ մը, իրեն զինակից ունենալով այդ ժամանակներու ամէնէն յանդուգն ու ամէնէն խիզախ աշխարհակալներէն մին՝ Պոնտոսի Միհրդատ Յւպատոր թագաւորը (123—63), որ Հոռոմէական լուծէն Ասիան փրկելու իր մեծ գաղափարը իրագործելու համար իրեն աջակցութեան դիմեց: Երկարատեւ պայքարէ մը յետոյ, երկու զինակիցներն ալ ընկճուեցան և Տիգրան կորսնցուց իր բոլոր նուաճած երկիրները և իր պետութիւնը ամփոփուեցաւ Հայաստանի սահմաններուն մէջ և կերպով մը ճանչցաւ Հոռոմի գերիշխանութիւնը, քանի որ Հայոց թագաւորը համարուեցաւ Հոռոմի ժողովրդեան բարեկամներու և նիզակակիցներու շարքին մէջ և Տիգրան յանձն առաւ որ իր յաջորդները իրենց գահակալութեան ատեն Հոռոմի հաւանութիւնը ստանան:

Ըստ Կիլիկերոնի «Ասիոյ մեծագոր» և ըստ Ապպիանոսի «սահաւոր» թագաւոր Մեծն Տիգրանի կայսրութիւնը այսպէս շուտով ընկճուեցաւ և քայքայուեցաւ:

Հայերու անկախութենէն հազիւ դար մը յետոյ, այս կայսրութեան կազմութիւնը՝ անկարելի էր որ իր հետեւանքները չ'ունենար: Կայսրութեան մը մէջ՝ ուր Հայեր, Ասորիներ, Կիլիկեցիներ, Միջագետքիներ, Փիւնիկեցիներ, Յոյներ, արաբական ցեղեր և ուրիշ հատուածներ խառն կ'ապրէին մէկ մականի տակ, որքան որ ալ քիչ կապ ունենային իրարու հետ ու քիչ շահերու համերաշխութիւն և զգացումներու միութիւն, գոնէ իրարու հետ յարաբերելու և իրար ճանչնալու առիթ պիտի ունենային: Սակայն անոնցմէ միութիւն մը կազմելու անհրաժեշտ ժամանակը դժբախտաբար չտրուեցաւ Հայ կայսրութեան և անոր տիրող ցեղը ըլլալու սահմանուած Հայ ազգին, որ այն ատեն տակաւին չունէր այն կենսունակութիւնը և ոյժը իրագործելու համար այդ ձուլումը, քանի որ ինքը հազիւ ինքնորոշման ճամբուն մէջ մտած սողմ մըն էր, որ կը տարուբերէր արեւելքի և արեւմուտքի քաղաքակրթութեանց միջեւ՝ անկարող՝ նախընտրութիւն մը ընելու:

Հայաստան, որ մինչեւ այն ատեն կը գտնուէր Արեւելքի ուղղակի ազդեցութեան տակ և կէս-բարբարոս վիճակ մը ունէր և հազիւ թէ Հելլենական մշակոյթին հետ դոյզն չփուժ մը ունեցած էր, կարծես թէ Տիգրանի ատեն ուղղակի հելլենականութեան յարում ցոյց կուտայ: Տիգրան կը հաստատէ իր հարստութեան և յորդութեան պահուն (77 Քր.է առաջ) նոր մայրաքաղաք մը՝ Տիգրանոկերտը՝ որ իբր երկրորդ Անտիօք սահմանուած էր Հելլենական մշակոյթին կեդրոնավայր և Հայաստանի մտաւորական կեդրոնը հանդիսանալ: Ան կամուրջ մըն էր որուն վրայ Արեւելք կ'ողջուներ Արեւմուտքը: Հոն, արեւելեան պերճութեան մէջ կը ծաղկէր Հելլէն միտքը իր բոլոր փայլով, վասնզի իր բնակչութիւնը կը

բողկանար մասնաւորապէս Փոքր Ասիայէն, գլխաւորապէս Մաժակէն և Կապադովկեան և Կիլիկեան 11 քաղաքներէ տեղափոխուած 300,000 հելլենացած գաղթականներէ: Տիգրանի պալատը ժամանակին յոյն իմաստասէրներուն և գրագէտներուն գլխաւոր ժամադրավայրերէն մէկը գարնաւացած էր իր կիներէն մին՝ հելլենական կրթութեամբ դաստիարակուած և անոր սիրահար Կղէոպատրան, Միհրդատ Պոնտացիի աղջիկը: Հոն դաստիարակուեցաւ Արտաւազդ Արքայորդին (յետոյ Արտաւազդ Բ. թագաւոր 55—34. գլխատուած 30ին) յոյն գիտուններու ձեռքին տակ և գրեց յուսնարէն լեզուով ճառեր, պատմական գործեր և ողբերգութիւններ, որոնք մինչեւ Բ. դարու սկիզբը կը ներկայացուէին Հոռոմէական բեմերու վըրայ՝ ըստ Պլուտարքոսի: Տիգրան իր մայրաքաղաքին մէջ կանգնած էր հոյակապ թատրոն մը, ուր յատկապէս բերուած յոյն դերասաններ տակաւին ներկայացում չէին տուած՝ երբ Լուկուլլոս քաղաքը գրաւեց (69ին):

Հելլենական քաղաքակրթութիւնը և մանաւանդ յոյն լեզուն որ իր նուաճման սահմանները արդէն մինչեւ Եփրատ՝ Հայաստանի արեւմուտքը՝ տարածած էր, Աղեքսանդրէն մինչեւ Տիգրան սահող ժամանակամիջոցին, անխուսափելիօրէն պիտի նուաճէր նաեւ Հայաստանը, Պոնտոսի և Կապադովկիոյ նման, և երկիրը պիտի հելլենանար առաւելագոյն չափով, եթէ Տիգրանի կայսրութիւնը այնքան չուտով չքայքայուէր:

Սակայն իր աշխարհակալութիւնները անհետեւանք չմնացին, քանի որ երկիրը յարաբերութեան մէջ դրին բազմաթիւ ազգերու և մանաւանդ չիման մէջ՝ Հելլէն բարձր քաղաքակրթութեան հետ: Երկիրը արեւմտապէս ալ նպաստաւորուեցաւ, վասնզի Տիգրան տէր դարձած էր Արեւելքի վաճառականութեան բոլոր գլխաւոր ճամբաներուն: Տիգրանակերտ եղաւ առեւտրական կեդրոնը Հայկական կայսրութեան: Զիւտմա, Նդեսիա, Մծբին և Արթւիա կը կապէին զայն Միջագետքի, Ասորիքի և Մարաստանի հետ՝ կանգնած իրար խաչաձեւող ճամբաներուն վրայ և իշխելով առեւտրական այն մեծ պողոտային՝ որ իբր միութեան գիծ կը ծառայէր Հայաստանի և Տիգրանէն նուաճուած հողամասերուն միջեւ և հին աշխարհի միջազգային բոլոր վաճառականութեան անցքերուն վրայ: Եփրատի անցքը և կարաւաններու մեծ ճանապարհը իր իշխանութեան տակ էին: Անապատէն տեղափոխուած արաբ ցեղերը յատ օգտակար եղած էին վաճառաշահութեան (Պլուտարքոս, Վարի Լուկուլլոսի 21. Ստրաբոն ԺԶ. 2.27. Պլինիոս. Զ. 28.142): Տիգրան գրաւեց նաեւ Պիերեան Սեւիւկիան՝ Անտիօքի նաւահանգիստը՝ առեւտրական յարաբերութեանց մեծ միջոցներէն մին:

Հայը, այսպէս, Տիգրան Մեծի շրջանէն սկսեալ, յարաբերութեան մտաւ օտար ազգերու և երկիրներու հետ: Մասնաւորապէս Տիգրանի որչառող բանակներուն Հայ զինուորները ծանօթացան օտար աշխարհներու, ինչպէս Փոքր Ասիոյ, Ասորիքի, Միջագետքի, որոնք համաշխարհային նշանակութեամբ կեդրոններ էին: Մեծն Տիգրան, որ այնքան մեծ

յարուժ և կարեւորութիւն ընծայած էր Հելլենական մշակոյթին և իր երկիրին մէջ վաճառականութեան զարկ տալու համար՝ այնքան ջանքեր ի գործ դրած, անկարելի էր որ նմանօրինակ միջոցներ կիրարկած չըլլար Հայ զանգուածը շարժման մէջ դնելու և իր նուաճած երկիրներուն մէջ Հայ տարրը չզգտեզելու համար: Ասոր անժխտելի փաստն է Տիգրանի ժամանակէն սկսեալ Հայ ժողովուրդին դէպի հարաւ մեծ ծաւալումը: Կրասոսի արշաւանքին պատմութենէն կը տեսնենք թէ. կ'ըսէ, Ե. Տիշոյեան (Կոչնակ. 1939. 737), Սառանէն ոչ շատ հեռու, դէպի հիւսիս, բլրաշարքերը արդէն հայաբնակ գիւղերով և աւաններով լեցուն էին: Տիւնացի Ապոզոնիոս (*) երբ 44ին Քր. է յետոյ, դաշտային Միջագետքի մէջ կը համբորդէր, հոն բողոքաբիւ հայաբնակ գիւղեր կը գտնէր արարական վաշկատուն ցեղերուն մէջտեղ (Gutschmid Kleine Schriften. III. 64):

Արդարեւ, Աղձնիքէն հարաւ, ինչպէս տեսնուեցաւ՝ Տիգրան՝ Պարթեւներէն առած էր Միջագետքի երկու ծաղկած նահանգները՝ Միգդոնիան (**) (Mygdonie) և Ուրոյնիա (***) (Սարաբոն. ԺԱ. 14. 13) և իր դերայրը՝ Գուրասը դրած է հրամանատար Մծբինի (Պլուտարքոս): Այս վայրերուն մէջ, Հայերու բնակութիւնը կը հաստատուի Քր. ի թուականին առաջին դարերուն՝ մասնաւորապէս Գ. դարէն սկսեալ:

Այսպէս, Եդեսիայի Եկեղեցիին ամէնէն նշանաւոր անձնաւորութիւններէն մէկը՝ Բարդեսանէս (+222 կամ 223) յայտնի Գնոստիկեան աղանդաւորը, որ Ասորական քրիստոնէութիւնը Եդեսիայի մէջ հիմնաւորողն ու խորացնողը եղած է և 216—217էն յետոյ Հայաստան ալ եկած էր քա-

(*) Իր մասին մանրամասն տեղեկութեանց համար տես, Baur. Apollonius Von Tyana und Christus. Գաւ. Պատմ. Հայ Եկեղեցի. 235—6:

(**) Կը բաղկանար Փաւսոսի (Գ. ծ եւ Ե. ք) եւ Ագաթանգեղոսի (628, 650) նաշիրական եւ Մահկերտուց կոչած վայրերէն: Կը ներկայացնէր Միջագետքի հիւսիս-արեւելեան մասը եւ կ'երկարէր մինչեւ Տանկաց (=աբսենոն) սահմանները: Երկար ասեմ Հայ Արեւելունեաց հնագնդած է: Միջագետքին հիւսիսային մասը Տիգրանէն առաջ Հայոցն էր եւ Տիգրան կցեց միայն Ուրոյնիան՝ ուս Գաբրնեանի (Յիւնգ. Պատմ. Ա. 589 եւ Բ. 78): Տիգրան է որ սիրած է Մծբինի, իրմէն առաջ կարելի չէր, Բանի որ Ադիաբենէ եւ Կարդուի անկախ էին եւ Պոնտոս—Սու հարաւային սահմանն էր Հայաստանի: Լուկուլլոս գրաւեց Մծբինը 68ին (Քր. է առաջ) (Գիսն. Կառ. Լ. Ե. 7), սակայն շուտով կորոյս: Այս քրոջանակին մէջ էրն նաեւ ձգրիէ եւ Մեթոն (նախնեաց Գգերան կամ Զարսան կամ Պէգարսան):

Սեբէոս (սպ. 1912. 59) յայտնապէս «Ասորոց, կողմեր կը համարէր Արեւաստան եւ Նաբոսականը: Այս վերջինը մասնակցեցաւ Արեւկի ասեմ տեղի ունեցած ապստամբութեան եւ Պապի ասեմ նուաճուեցաւ. սակայն Գ. դարուն վերջերս պարսկական երկիր եղաւ (Հիւլիոսն. Հին Հայոց տեղւոյ անուանները 179—181, Մարկուարդ Սրանջահր. 23):

(***) Ասոր կեդրոնն էր Եդեսիա, որուն համար Փաւսոս (Ե. իր) կը հաւատէր թէ Արեւելունի բազաւոր մը շինած է, սակայն չ'ըսէր թէ ո՞վ: Այս քրոջանին մէջ, Սելեւկեանց քրոջանին կազմուած է փոքր բազաւորութիւն մը (137 Քր. է առաջ), որ մինչեւ 217 Քր. է յետոյ տեսնուած է: Ասեմ մը Տիգրանի հնագնդեցաւ եւ յետոյ Հռոմի, որ վերջապէս նահանգի վերածեց զայն:

քոչուրեան, Հայ էր՝ ըստ Հիպպոլիտի (Philosophumena. VII. 31) և Հայաստանէն Եդեսիա փոխառու տուող ընտանիքի մը զաւակը՝ ըստ Միքայէլ Ասորիի (Michel le Syrien Թարգմանութիւն Chabotի Paris 1899—1900. Ա. 110) (*):

Հայոց դէպի հարաւ այս տարածումէն զատ՝ իբր հետեւանք Տիգրանի աշխարհակալութիւններուն, Հայք դէպի Արեւելք ալ տարածուած պէտք է ըլլան, վասնզի Պարթեւները յատուկ դաշնադրութեամբ Տիգրանի տրամադրութեան տակ դրած էին իրենց հիւսիս-արեւմտեան բոլոր հին աւատաւորները (Յուստինոս. ԺԱ. 1) և մոնաւանդ Մեծ Մարաստանի ամենաուժեղ, ամենամեծ սատրապ թագաւորը (հաւանօրէն Դարեհը. Ապպիանոս. Միհր. 106), որ տեսաւ թէ ինչպէս Հայերը հասան Եկրատանի գետները և այրեցին իր պալատը (Իսիտոր Կատաքսացի. 6): Ծանչցան նաեւ Տիգրանի գերիշխանութիւնը Հայաստանի բոլոր շուրջ բոլորի իշխանութիւնները, ինչպէս Ադուանից և Վրաց, Մարական Ատրպատականի (**), Կորդուաց և Ագիտաբենիոյ թագաւորները, որոնց երկիրները Հայեր հաստատուած ըլլալը նաեւ այս շրջանին չափազանց հաւանական կը թուի, վասնզի աշխարհաչէն աշխարհակալը պէտք է սնուցած ըլլայ իր միաբնի մէջ իր գրաւած երկիրները հայացնելու ծրագիր մը: Առանց անոր ալ, սակայն, Հայերը, որոնք այդ երկիրներուն ծանօթացած էին, կրնան այդ տեղերը գացած ըլլալ:

Տիգրան Մեծի Հռոմի կողմէ պարտութեան մասնուելէն յետոյ, ստեղծուեցաւ Հայաստանի համար տխուր կացութիւն մը, վասնզի՝ Հռոմ՝ Հայաստանի վրայ իր գերիշխանութիւնը հաստատելէ յետոյ, իր սղոցեցութիւնը և հեղինակութիւնը պահելու համար այս երկիրին վրայ, զոր նըւաճելու դժուարութիւններ ունէր, անոր աշխարհագրական կազմին և Պարթեւներու ընդդիմութեան պատճառով, հոն կիրարկեց իր անյղիկ սղոցանքը, որ էր «Բաժանեա զի տիրեցեաց» և առանց Հայաստանի անկախութիւնը ջնջելու՝ անդամահատեց Հայաստանը, Հայկ. Բարձրաւանդակին վրայ Մեծ Հայքի (Armenia Magna), շուրջը կազմելով Հայաստանէն կորզուած աշխարհամասերուն մէջ այլևայլ Հայ կամ կէս-Հայ իշխանութիւններ, Փոքր Հայքի (Armenia Minor), Մոփաց աշխարհի, Կորդուիքի, Ատրպատականի և այլնի մէջ, թագաւորներու կամ իշխաններու տիրապետութեան տակ: Հռոմի բոլոր ջանքը եղաւ նպատակը որ Հայ պետիկ թագաւորութիւնները իրարու չմիանան և անոնց գլուխը գտնուին Հռոմի նազանդ թագաւորներ, որպէսզի զանոնք իբր գործիք ծառայեցնէ իր

(*) Բարդեսանէի մասին ընդարձակ տեղեկութեանց համար տեսնել, Երաւեղ վրդ. Տէր Միմասեանց Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիներին հետ. Ելիթաթին. 1908. 6—9. ուր իր մասին օտար հեղինակաւոր անձերու ռեսուսմասիւրութիւններն ալ բուռուած են:

(**) Միհրդատ՝ երկիրն բազաւոր՝ ամուսնացաւ Տիգրանի աղջիկներէն մէկուն հետ (Գիսն. Կատաք. Լ. Զ. 16):

հետապնդած նուստողական նպատակներուն և տիրապետութեան ծաւալումը մին Եփրատէն դէպի Արեւելք:

Արտաշատի դաշինքով (66 Քր.է առաջ), Հոռոմ ո՛չ միայն քանդեց Հայկական կայսրութիւնը, այլ նաեւ քայքայեց Հայերու ազգ. միութիւնը, ոչ միայն ազգին մէջ ցանկելով պառակտումի մը սերմերը իրեն կուսակիցներ ու բարեկամներ շահելով, այլ նաեւ բաժնելով Հայաստանի ծայրագաւառները, որոնք օտար ազդեցութիւններու ենթարկուեցան և հայնալու տեղ օտարացան:

Իր սահմանները կրճատուած Մեծ Հայքի մէջ, բնիկ արքայական տոհմը պահեց իր գոյութիւնը կէս դարէ աւելի ժամանակ մը (55 Քր.է առաջ—14 Քր.է յետոյ) տակաւին, երկիրը Հոռոմի գերիշխանութեան ենթարկուելէն յետոյ, սակայն արդէն խողայիք ըլլալ սկսած էր Հայաստանի իր հզօր դրացիներուն՝ Հոռոմի և Պարթեւներուն միջեւ:

Հոռոմ կ'ուզէր տիրել Տիգրիսի և Եփրատի հարուստ հովիտներուն, Արաքսի հիւսիսակողմը տարածուած երկիրներուն, ինչպէս նաեւ Խուստանի (արդի Պարսկական Արապիստան) և տէր դառնալ մետաքսի երկրի ճամբուն, որ Պարսից Մոցէն և Սուրիսայն կ'անցնէր և Հայաստանը իբր անցք կ'ուզէր գործածել՝ յարձակելու համար Պարթեւներուն վրայ, որոնք ամէն ջանք ըրին որ Հոռոմ Հայաստանի ռազմական դիրքէն չօգտուի:

Հայերը չկրցան նախընտրութիւն մը ընել այս երկու մրցակից ուժերուն միջեւ և իրենց ճակատագիրը անոնցմէ մէկուն յանձնել, այլ, ինչպէս սովորական է բոլոր տկար ժողովուրդներուն, երբեմն մէկ և երբեմն միւս կողմին յարեցան և ինչ որ աւելի գէշն էր՝ պառակտուած՝ իրենցմէ մաս մը՝ մէկ կողմին և մաս մը՝ միւս կողմին միացաւ:

Իրաւ է որ Հայ ազգը իր ստուար զանգուածով կը մնար արեւելեան՝ իր սովորութիւններով, բարքերով և աւանդութիւններով, դաստիարակութեամբ, մտաւորականութեամբ, ընկերային սարքուածով, նոյնիսկ որսի և այլ զբօսանքներով և աւելի յարած էր իր արեւելեան դրացիներուն՝ Պարթեւներուն (Գ. Ֆրոնտին. ԱՆԱՀԻՏ 1928. 1. 114) որոնց նրկատմամբ իր համակրութիւնը աւելի զօրաւոր էր նախապէս Իսկ Հոռոմի նկատմամբ Հայերու համակրութիւնը մեծ չէր մինչև Սասանեան պետութեան հաստատութիւնը. վասնզի ո՛չ զգացումներու, ո՛չ բարքերու, ո՛չ լեզուի, ո՛չ կրօնքի միութեան կապեր ունէին Հայք Հոռոմայեցոց հետ: Եթէ Հոռոմ գտաւ կուսակիցներ, անոնք շահուած էին ասկիով և նենգութեամբ, թէեւ շատ ասկաւաթիւ էին նախ, վասնզի, ինչպէս Կորբուզն կը հաստատէ իր արշաւանքին ատեն (58 և 59 Քր.է վերջ), Հայաստանի ամէն կողմը Պարթեւաց կողմնակիցներ գտած է: Բայց պառակտումը ծնած էր և հետզհետէ աւելի շեշտուեցաւ, վասնզի ստեղծուեցան երկու կուսակցութիւններ, որոնց պայքարը տկարացուց երկիրը և մանաւանդ կեդրոնական իշխանութիւնը՝ վասնզի նախարարները այս կամ այն կողմին յարած ատեն՝ յաճախ սնտեսեցին, արքայական զահուն և ազգի:

ընդհանուր շահերը, և տեղական ու անձնական մասնաւոր շահեր հետապնդեցին և չըմբռնեցին կեդրոնական իշխանութեան սպառնացող վտանգի մը իրենց վրայ ունենալիք անդրադարձութիւնը: Հետեւանք եղաւ Հայկական բնիկ արքայական տոհմերու ջնջումը և սպասարկու օտար թագաւորներու երկիրին գլուխը դրուելը՝ դրացի երկու մեծ պետութիւններու կողմէն, որոնցմէ, անգամ մը մէկ կողմը և անգամ մը միւս կողմը յողթական դուրս կուգար, և իրեն հաւատարիմ մէկուն կը պարզեւէր Հայոց գահը, և երբեմն ալ բացառաբար համաձայնութեամբ անոր վրայ մէկը կը նստեցնէր:

Այսպէս, օտար թագաւորներու շարք մը կառավարեց Հայաստանը Քր.ի 15—193 թուականներուն, առանց տեւական իշխանութեան, և ժառանգական ըլլալու: Անոնք պարզ պաշտօնատարներ էին, կուսակալի մը նման, և իրենց իշխանութիւնը կախում ունէր գիրենք անուանող պետութեան ոյժէն, որ եթէ տկարանար՝ իրենք կը վանուէին, տեղի տալու համար միւս զօրացող պետութեան նշանակած թագաւորին: Եղան կարճ չըջաններ եւս, որ պարզ նահանգի ալ վերածուեցաւ Հայաստան: Սակայն Հոռոմէական կայսրութեան տկարացումէն և 192ին պայթած քաղաքային պատերազմներէն օգտուելով, Հայերը յաջողեցան վանել Հոռոմի կողմէ նըշանակուած օտարական թագաւորն ու Հոռոմէական պահակազօրքը, և Հայաստանի գահը բարձրացուցին բնիկ կամ պահլաւ իշխան մը, որուն սերունդները կառավարեցին երկիրը մինչև 428, նոյնանալով երկիրին և ժողովուրդին հետ, իբր բնիկ արքայատոհմ մը, Արեակունի անունով ծանօթ: Ան ամբաստանուեցաւ, օգտուելով նպաստաւոր պարագաներէն, մանաւանդ Պարթեւներու հետ համերաշխութենէն: Հայոց թագաւորը «երկրորդ Պարսից տէրութեան» և «եղբայր» կը հռչակուէր՝ որով ձեռք կը բերուէր ասիական ազգերու միութիւնը՝ ընդդէմ Հոռոմի: Այս վիճակը որ կ'ապահովէր Հայաստանի խաղաղութիւնը և ասիական ազգերու միջեւ ներդաշնակութիւնը, խանգարուեցաւ այն մեծ յեղաշրջումով որ յարոյց Արտաշիր Սասանեան, տապալելով Պարթեւ հարստութիւնը և հաստատելով նոր արքայական տոհմ մը (226), որ քիչ յետոյ (231ին), Հոռոմի հետ պայքարի պիտի մտնէր, անկէ ետ առնելու համար գրաւուած պարսկական երկիրները: Այս նոր պայքարը՝ որ չորս դար պիտի տեւէր, Հայաստանը դարձեալ կը դնէր տատանող վիճակի մը մէջ, երկու հզօր պետութեանց միջեւ, որոնք ոտնակոխ կ'ընէին փոխ ի փոխ երկիրը, զայն ենթարկելով պատերազմներու բոլոր սղէտայի հետեւանքներուն:

Մասնաւորապէս Գ. դարուն վերջը կամ Դ.ի սկիզբը Հայոց, քրիստոնէութեան յարեւելն յետոյ, երբ կրօնական ատելութիւնն ալ եկաւ խառնուել քաղաքական պայքարին, Հայաստանի վիճակը աւելի տագնապալի եղաւ և շատ մը Հայեր երկիրէն հեռացան և դրացի երկիրներ անցան:

Այս դժբախտ իրողութիւնը կը բացատրուի այն քաղաքական և պատմական հանգամանքներով, որոնց մէջ գտնուեցաւ նոր քրիստոնէայ դար-

Հած Հայաստանը: Որչափ ատեն որ Հայերը հեթանոս էին և բարեկամ Պարթևներու, սերտօրէն կապուած էին Պարսիկներու հետ քաղաքակա- նապէս և կրօնապէս, բայց երբ Գ. դարուն՝ Պահլաւունիներու տեղ Սա- սանեանց հարստութիւնը տիրեց Պարսկաստանի մէջ, և Գ. դարուն սկիզ- բը քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայոց աշխարհին մէջ. Հայերը, ս- րոնք մինչև այն ժամանակ ասիական ազգերու հետ միացած՝ Հռոմէա- կան աշխարհակալութեան դէմ կը մաքատէին, անկէ յետոյ բոլորովին իրենց աչքերը դարձուցին դէպի Արեւմուտք, որ շատ քիչ անգամ կըր- ցաւ իրական օգնութիւն մը ընծայել, սակայն առիթ ընծայեց պարսիկ- ները գրգռելու:

Այսպէս, քրիստոնէութիւնը մտեցուց Հայերը՝ Հռոմայեցւոց, միեւ- նոյն ատեն սաստկացնելով Սասանեանց ատելութիւնը հանդէպ անոնց, որ սոսկալի եղաւ, երբ, Հայերը քրիստոնէութիւնը ընդունելէ յետոյ, քրի- ստնեայ Հռոմի օգնութեան դիմեցին:

Հայաստան, այսպէս, երկարատեւ յարաբերութիւններ ունեցաւ, երկի- րին տիրապետութեան համար մրցակից պետութիւններու հետ: Ասոնք անհետեւանք շիւտացին, ընդհակառակը Հայերը կրեցին իրենց Արեւելեան և Արեւմտեան դրացիներու հզօր քաղաքակրթութեանց ազդեցութիւնը և տարուբերեցան անոնց միջեւ, ինչպէս քաղաքակաւանապէս ալ տարուբե- րեցաւ իրենց տէրութիւնը՝ այդ երկու ոյժերուն միջեւ: Իրապէս, Հա- յաստանի մէջ դէմ դիմաց կու գային Պարսիկ-Պարթեւ-Պահլաւական և Հելլէն-Սելեւկ-Հռոմէական քաղաքակրթութիւնները, որոնք յաճախ ի- բար կը չեզոքացնէին:

Մասնաւորապէս քրիստոնէութեան պատճառով, Հայերու դէպի Հռոմ ցոյց տուած հակումը, առիթ եղաւ որ Պարսիկներու միտքին մէջ տեղ գտնէ սա զաղափարը թէ Հայերը բաժնելու համար Հռոմէն, պէտք էր զանոնք Զրադաշտականութեան դարձնել: Առիկա, իր կարգին, պատճառ եղաւ որ Հայերը աւելի սերտ ու անքակտելի յարաբերութիւններ ունենան արեւմտաքի հետ և իրենց կրօնական և իմացական կեանքին տան ա- րեւմտեան ուղղութիւն մը: Հայերը՝ սիրեցին իրենց ճակատագիրը կապել արեւմտեան քրիստոնեայ պետութեան և անոր հաւատարիմ «դաշնակից ու բարեկամ» մնալ, և անոր քաղաքակրթական ազդեցութեան ենթար- կուիլ, ինչպէս նաեւ մտաւորական յարաբերութիւններ ալ ունենալ՝ Ա- րեւմուտքի հետ:

Այսպէս, կուռախնձոր Հայաստան. պայքարի ասպարէզներէն մէկը ե- ղաւ երկու պետութիւններու, մին՝ եւրոպական-քրիստոնեայ և միւսը՝ ա- սիական-հեթանոս, որոնք հոն ճակատեցան իրենց բանակներով, ինչպէս նաեւ իրենց քաղաքակրթութեամբ: Հոն մղուած պատերազմներուն մէջ կատարուեցան բոլոր այն երեւոյթները որոնք հնօրեայ պատերազմներու մէջ սովորական էին (վերը՝ 79): Գործադրուած են ուրեմն՝ գերաուութիւն- ներ, փոխուստներ՝ վերահաս վրիժառութիւններէ, և բռնազաղթեր՝ եր- կիբը գատարկացնելու համար:

Կատարուած են, ապահովաբար նոյնիսկ Մեծն Տիգրանի անմիջական յաջորդներուն ժամանակ, աւելի բռնի քան թէ կամաւոր զաղթականու- թիւններ, որոնց յիշատակութիւնները յաճախ մեզի հասած չեն, սակայն հառածները բաւական են համոզելու համար որ անոնք կատարուած են յաճախ:

Այդ յիշատակութիւններէն մին է, Քր. ի 37 թուականին տեղի ունե- ցած Հռոմի կուսակից նախարարներու զաղթը դէպի Փոքր Հայք, Պար- թեւներու ձեռքը չիյնալու համար, վասնզի անոնք յաջողած էին Վրացի զօրքով և Հռոմի հաւանութեամբ Հայաստանի գահը յափշտակող Միկրդատ թագաւորը (35—37 և 45—51) փախցնել և Հայաստանի վրայ Պարթեւ մարզպաններ (37—45) դնել:

Գահակալութեան մը տագնապին ատեն պատահած այս զաղթը, կարելի չէ հաւատալ թէ միակն էր, երբ գիտենք թէ Հռոմէական և Պարսիկ բա- նակներ փոխն ի փոխ թագաւորներ հարկադրած են Հայաստանի, և այդ պատճառով, ապահովաբար, երկու կողմերուն անձնուէլները ստիպուած են թողուլ երկիրը և փախչիլ, կամ նոր իշխողները՝ իրենց անհամակիր և անբաղձալի նկատած տարրերը հեռացուցած են երկիրէն: Դժբախտա- բար այս տեսակ դէպքեր չեն արձանագրուած պատմագիրներէ, մինչև Արտաշիր Սասանեանի (222—241) Պարսիկ գահը յափշտակելուն պատ- ճառով, Հայոց և Պարսից միջեւ ստեղծութեան և հակասակութեան ոգիին բորբոքիլը, մանաւանդ անոր համար որ, Հայք, իբր Պարթեւներու բարե- կամ, կ'օգնէին վտարուած Պարթեւ արքայական ընտանիքին անգամներուն և Հռոմին՝ որ հասարակաց թշնամիին դէմ, կուգար գործակցիլ Հայոց և Պարթեւաց, 232ին:

Արտաշիրի յաջորդը՝ Շապուհ Ա. (241—272), սակայն, կը մտնէ Հա- յաստան 253ին և կը վանէ Տրդատ Բ.ը (218—253), որ կը փախի Հայաս- տանէն և կ'ապաստանի Հռոմէական երկիրներ, առանց դադրելու կռուելէ իր գահուն համար:

Շապուհ՝ Հայաստանի վրայ «թագաւոր» դրաւ Սրտաւազդ անուն մէկը, որ 260ին Հայ օգնական զուեղերով օգնեց Շապուհի, անոր Վաղերիանոս կայսեր դէմ մղած պատերազմին մէջ (259—260), որ վերջացաւ Պար- սիկներու յաղթանակով, վասնզի Հռոմի կայսրը գերի ինկաւ:

Հռոմէական կայսրութիւնը պահ մը այնպէս կարծուեցաւ թէ կազ- մալուծուած էր, վասնզի երեւան, եկան նահաւակալի կամ զաւառական կայսեր, որոնք առանց անշտտուելու կայսրութեան միութենէն, զայն ի- րենց մէջ բաժնեցին: Անոնցմէ նշանաւորագոյններէն մէկն էր Բալմի- րայի Ոտենատոս իշխանը, որ առաւ Սպարապետ Արեւելի տիտղոսը: Ա- նիկա հիմնեց ասիական կայսրութիւն մը, որ իր այրին Զենոբիա ընդար- ձակեց գրաւելով Սգիպտոսը և գրեթէ բոլոր Փոքր Ասիան, և բոլորովին անկախ Հռոմէն, կառավարել սկսաւ՝ «Թագուհի Արեւելքի» տիտղոսը առ- նելով:

Երբ Աւրելիանոս կայսրը (270—275) Արեւելք եկաւ Զենոբիային

դէմ, անիկա դիմեց Պարսից և Հայերուն, որոնք խոտաւցան իրեն օգնել, սակայն չկրցան, վասնզի Շապուհի մահուան (270) հետեւանօք պետու-
թեան մէջ խռովութիւններ ծագած էին:

Աւերելիանոս՝ վանեց Հայաստանէն Արտաւազդը և անոր տեղ թագա-
ւոր դրու Սոսրով Ա.ը (271—288), որուն դէմ Պարսիկները պայքար մը-
ղեցին, սակայն չյաջողեցան: Այն ատեն սպաննեցին զայն զաւով՝ 288ին:

Ազաթանգեղոս՝ որ այս Սոսրովը ժամանակակից կը դէ. Արտաշիրի,
կ'ըսէ թէ «Իբրեւ լուաւ զայս թագաւորն Պարսից, զուարեանայր, զուարթա-
նայր, սոն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն. եւ բազում ուխտ ասու-
սանայցն կասարէ: Զօրածողով լինէր, խաղայր գնայր, ասպասակ սփռէր
զկողմաւրբ Հայաստան աշխարհին. զիսուուն եւ զանասուն, զծեր եւ
զօղայ, զերիսասարդ եւ զմանուկ առհասարակ խաղացուցանէր ի գերու-
քիւնս: (Ազաթանգեղոս. 1935 Վենետիկ. 41):

«...Եւ զերկիրն Հայոց այնուհետեւ եկեալ արեւոյն Պարսից յիւր անուն
զօղիսն անուանէր. եւ զօրսն Յունաց փախստական առնէր, հալածական
օսանէին մինչեւ ի սահմանն Յունաց: Վիհս փոսացուցեալ սահմանս հաս-
տատեին եւ տեղոյն անուն եղեալ գրունս փոսից առ տեղեան՝ որում Ոյծ
կոչէին: Եւ զայլ (զայր?) մարդիկ երկիրն խաղացոյց և զաշխարհն յինքն
գրաւեացա: (Ազաթան. 42):

Սակայն չկրցաւ հոն ամուր մնալ և հարկադրուեցաւ շուտով լքել
Հայաստանը՝ ուր Հռոմ թագաւորեցուց Սոսրովի որդին՝ Տրդատ Գ.ը
(288ին), որուն դէմ պարսիկները չդադրեցան կռիւ մղելէ: Ներսէ՛ 295ին
Նոյնիսկ նուանց Հայաստանը և հարկադրեց Տրդատ Գ.ը որ ապաստանի
Հռոմէական երկիրներ:

Դիոկղեաթիանոս հաշտութիւն կնքեց Պարսից հետ (297), որուն տրա-
մադրութեամբ, Տրդատ Գ. վերահաստատուեցաւ իր գահուն վրայ 297ին
և Տիգրիսը երկու կայսրութիւններու սահման եղաւ:

Այս խաղաղութիւնը 40 տարի տեւեց, և Հայաստան եւս օգտուեցաւ
անկէ, (Աստուրեան Հայաստան եւ Հռոմ. 261): Սակայն Հայաստանի մէջ
կատարուած նսկայ յեղաշրջութիւն մը նոր կացութիւն մը ստեղծեց հոն:
Հայաստան, Դ. դարուն սկիզբը, քրիստոնէութեան յարեցաւ պաշտօնապէս
և իր կապերը ասով խզուեցան բոլորովին՝ Արեւելքի հետ, մանաւանդ
այն թուականէն յետոյ, որ իր արեւմտեան գրային՝ Հռոմ ալ քրիստոնե-
այ եղաւ:

Նոր կրօնքը պատճառ եղաւ նաեւ որ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին
յուզումներ ծնունդ առնեն: Նախարարներէն սմանք քրիստոնէութեան
համակիր չէին և ներքուստ նեթանոս մնացած՝ քրիստոնեայ դարձած ար-
քուներէն դէմ կը մաքաւէին:

Սոսրով Բ. կոտակ կամ Փաքր (311—328), սպարապետ Վաչէ Մամի-
կանեանի քաջութեան շնորհիւ յաջողեցաւ այս ներքին ըմբոստութիւն-
ները զսպել:

Սոսրովի կը յաջորդէ Տիրան (328—339) և ասոր Արշակ Բ. (340—

363), որ Հռոմայեցիներէն Յովիանոսի (363—361) ամօթալի գաշինքով
(363), Պարսից մատնուեցաւ և ձերբակալուած՝ Անյուշ բերդը նետուեցաւ,
ուր անձնասպան ըլլալով մեռաւ, և երկիրը Պարսից տիրապետութեան
նեթարկուեցաւ (363—370):

Արշակի որդին՝ Պապ՝ Հռոմէական զօրքով տիրեց երկիրին 370ին և
երեք տարուան (370—373) կարճ թագաւորութենէ մը յետոյ սպաննուե-
ցաւ և իրեն յաջորդեց Վարազդատ (374—380)՝ դարձեալ Հռոմի օժանդա-
կութեամբ գահակալելով, սակայն Պարսկաստանէն Մանուէլ Մամիկոնեան
գալով Հայաստան, վանեց զինքը և դրաւ երկիրը Պարսիկ հովանաւորու-
թեան տակ, գահ բարձրացնելով Արշակ Գ.ը (380—385) և Վաղարշակը
(380—385), բայց ժամանակ մը յետոյ Պարսից դէմ ելաւ և ջարդեց
Պարսիկ զօրքը և երկիրը դրաւ Թէոտոս Ա. (379—395) կայսեր հովա-
նաւորութեան տակ: Իսկ 385ին ալ Բիւզանդացոց դէմ ապստամ-
բելով, Հայաստանը դրաւ Շապուհ Գ.ի (383—388) իշխանութեան ներ-
քեւ:

Շապուհ Գ. Հայաստան զրկեց իբր Հայոց թագաւոր՝ Սոսրովը (385—
387), Պարսիկ խնամակալով և բանակով: Արշակ Գ. փախաւ իր հետե-
ւորքներով Բիւզանդական հող:

Պարսիկներն ալ, Բիւզանդացիք ալ, այլեւս ձանձրացած, փոխանակ
իրարու դէմ պայքարելու, կը համաձայնին Հայաստանը իրենց միջեւ
բաժնելու, իրենց շահերուն աւելի համապատասխան գտնելով Հայաստա-
նի տիրապետութեան համար պատերազմելու տեղ, իրենց միջեւ անոր
բաժանումը:

Պարսիկները իրենց բաժինը նախ կը յանձնեն Առուանին (387—400),
յետոյ ընկ Արշակունի թագաւորի մը (Վուամշապուհ 400—409), և յետոյ
կրկին Պարսիկ մարզպաններու (409—420), որոնցմէ մէկն էր Շապուհ
Պարսիկը (415—419):

Իսկ վերջին Արշակունի թագաւորը եղաւ Արտաշէս (421—428), զոր
պարսիկներէն կ'ստանան Հայերը և անոնց ձեռքով կը տապալին:

Տրդատ Գ.էն մինչեւ Արտաշէս սահող այս ժամանակամիջոցը, որ հա-
զիւ հարիւր տարուան շրջան մը կ'ընդգրկէ, և բրուն համար իբր
թէ կարծեցեալ ժամանակակից (Ազաթանգեղոս) և ժամանակով շատ
մօտ ապրող (Փաւստոս) պատմագիրներ ունեցած ենք, դժբախտաբար բա-
ւական խառնակ վիճակ մը կը ներկայացնէ՝ պատմագրական տեսակէտով,
վանզի Հայ պատմիչները յաճախ համաձայն չեն իրապէս ժամանակակից
օտար պատմիչներու և դրամներով և այլ փաստերով հայթայթուած տե-
ղեկութեանց հետ, մանաւանդ ժամանակագրական տեսակէտով:

Մասնաւորապէս դիտելի է որ Փաւստոս, որ Ե. դարուն գիրի առած է
իր պատմութիւնը, նազիւ 100—150 տարի առաջ պատահած դէպքերը, հի-
ներէն լսելով և աւանդութիւններէ քաղելով ու յիշողութեամբ գրած
ըլլալով, դէպքերը և անունները իբր կը խառնէ և ետեւ առաջ կը պատ-
մէ, սակայն իրողութիւնները կը մնան իրողութիւն:

Հետեւաբար, որչափ որ ալ արտաքին և ազգային պատմիչներու ժամանակագրութիւնը համաձայն չըլլայ, իրենց պատմածները չեն զսղրի հիմ ունենալէ:

Այս տեսակէտով, Հայ ժողովուրդին Հայաստանէն՝ դանդաղաբային և մասնակի գաղթումներուն մասին իրենց պատմածներուն մէջ ալ, ստիպուած ենք ընդունիլ թէ իրողութիւն մը կայ, և բոլորովին յերիւրածոյ չէ: Այնպէս որ, հարկ կը դատեմ թէ՛ օտար և թէ՛ հայ պատմիչներու այս կարգի յիշատակութիւնները հոս ներկայացնել, այն վստահութեամբ թէ կրնան անոնք ժամանակի սխալներ և չափազանցութիւններ պարունակել, սակայն անպատճառ հիմ ունին:

Այսպէս, արտաքին աղբիւրներ կը հաստատեն թէ Կոստանդիանոսի մահէն (337) յետոյ, Հայոց երկիրին մէջ յուզումներ պատահած են: Պարսիկները 338ին և 339ին երկու անգամ Հայաստան արշաւած են և մեծ շարիքներ պատճառած՝ Հայ ժողովուրդին (Աստուրեան 60յն. 273): Հայերէն շատեր ապստամբելով Հռոմայեցիներէն, Պարսիկներու կողմը անցած են, և երկիրին իշխողը (Սոսրով կամ Տիրան թագաւոր) ստիպուած է իր կուսակիցներով Հռոմէական երկիր փախչիլ (60յն):

Կոստանդ (337—360)՝ Կոստանդիանոսի երեք որդիներէն այն որուն վիճակեցաւ Արեւելքը, 339ի գարնան անձամբ եկած է Հայաստան, — դարձեալ ըստ օտար տեղեկութեանց — և ընկճած՝ պարսկական կուսակցութիւնը, կամ յաջողած է շահիլ անոր պետերը, որոնք պատճառ եղած էին թագաւորին փախուստին, և փոխանակ խտրել պատժելու՝ Հռոմէական երկիրներ փոխադրած է (Աստուրեան. Հայաստան եւ Հռոմ. 274) և Հայոց թագաւորը հաստատած՝ կրկին իր գահուն վրայ և Հռոմի կուսակից նախարարները՝ իրենց իշխանութեան մէջ (60յն): Փախչողները կը խրախուսուին և խաղաղութիւնը կը վերահաստատուի (Յուլիանոսի Ա. Ճառ. Ներքող Կոստանդիայ. Դուրեան, Ազգ. Պատմ. 225)

Փաւստոս (Գ. ի) կը նկարագրէ Տիրանի ձերբակալութիւնը. Պարսից Շապուհ թագաւորին հրամանով, և անոր աջակցութեամբ խարանուիլը. և ապա կը յարէ «եսաղայր գնայր հեպով իբխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ արքայի եւ ամենայն գերութեամբն յերկիրն Պարսից եւ երբայր յԱսորեստան առ սեքն իւր յարքայն Պարսից»: Նոյն պատմագիրը կը պատմէ թէ Տիրանի գերութեան շրջանին երբ Ներսէ՛ս (*) Հայաստան կ'արշաւէ, այն ատեն, «ազատագործն նախարարացն Հայոց առեալք գիւրաքանչիւր բնօսանիս, լինեին փախստականք, ի կողմանս Յունաց անգանեիքն, զոյժ օային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն» (Փաւստոս Գ. իա): Հայերը իսկոյն Հռոմայեցիներու օգնութեան կը դիմեն (Փաւստոս Գ. իա): և Հայ և Հռոմէական ուժերը կը յաջողին կասեցնել Ներսէ՛ր և նոյնիսկ

(*) Փաւստոս Պարսից բազաւոր կը ներկայացնէ, պիտի ըլլայ Ներսէս զօրավար բաւառուրեանի (Յոյն 281): Սակայն նկատելի է Անանուհ (Սերյոյս. 1912. 26) նոյնպէս «Ներսէս արքային պարսից» կը վերագրէ այս զործերը:

յաղթութիւն մըն ալ տանիլ անոր վրայ և հարկադրել արձակել Տիրանը և անոր հետ տարուած գերիները և Հայոց գահը բարձրացնել Արշակ Բ.ը՝ համաձայնութեամբ (Անանուհ տես. Սերյոյս 1912, 25 և Փաւստոս Գ. իա):

Սորենացի (Գ. լա) կը յիշէ թէ, Արշակ Բ. ի իշխանութեան ատեն, Արշակաւանի կործանումէն յետոյ, նախարարներուն գլխաւորին՝ Ներսէ՛ս Կամսարականի գերդաստանը, խաբէութեամբ ամբողջ կոտորել տուած է: Այս կոտորածէն ինքն Ներսէ՛ս Կամսարական՝ Գաղաւոն և Շաւարշ գաւակներովը՝ կրցած է ճողոպրիլ և Յունաստան փախչիլ: Ամմիանոս Մարկելինոս պատմիչը (9. 20), որ պահանառու մըն է, մանրամասնութեամբ կը պատմէ թէ ի՛նչպէս 359էն սկսեալ վերստին Պարսիկներուն կողմէ պատերազմը սկսաւ, թէ ի՛նչպէս Արշակ Հռոմի յարեցաւ Կոստանդիոս կայսեր (337—360) հետ Կեսարիոյ մէջ տեսնուելով (360), և յետոյ, թէ ի՛նչպէս Արշակ՝ Յուլիանոսի (361—363) չօգնեց, և թէ ի՛նչպէս Յովիանոսի (363—364) կնքած ամօթալի դաշինքով Պարսիկներուն մասնուեցաւ, քանի որ անիկա յանձն կ'առնէր չօգնել Արշակի՝ երբ Պարսիկները անոր վրայ յարձակէին: (Ամմիանոս. 25. 7. 9—12. Փաւստոս Գ. իա. Զոսիմոս 3. 31. Աստուրեան. 294):

Շապուհ, դաշինքին այս տրամադրութենէն օգտուեցաւ և 364ին յարձակեցաւ Հայաստանի վրայ, որ փառաւոր դիմադրութիւն մը ցոյց տուաւ, ինչպէս կը նկարագրեն Փաւստոս և Ամմիանոս:

Շապուհ՝ իրեն գործիք կը ծառայեցնէ երկու ուրացեալ Հայ նախարարներ՝ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնեանը (*), և ասպատակ կը սփռէ Հայաստանի վրայ: Անոնք «յանկարծօրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնեին... զորս օային ի կոխումն փղաց, եւ զկանայս ընդ ցից սայլից հանեին. առնուին կոտորեիին զամենայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց», մինչեւ որ Վասակ Մամիկոնեան սպարապետը, զօրաժողով կ'ընէ և կը փոխալ Պարսից դէմ: Պարսիկները երբ ասիկա կ'իմանան, «զմնացորդս ասխարհին գերփեցին գերեցին առին եւ փախեան յաբարհն իւրեանց նեպով սագնապաւ», սակայն Վասակ կը հասնէր անոնց ետեւէն: Պարսիկ զօրք քրոլին զգերին, եւ փախստական լինեին... եւ քափեք աճչափ եւ անբիւ զամենայն զառեալ գերութիւնն» (Փաւստոս Գ. իգ):

Պատմագիրը կ'ըսէ թէ՛ այս ձախողութենէն յետոյ, Մերուժան կը գրգռէ Շապուհը, որ զօրաժողով ընկելով, Մերուժանը ասպատակելու կը զրկէ Հայաստան, և կ'աւերէ Աղձնիքը, Մոփքը, Անգեղ տունն և այլն:

«Այրացաւեր առնեին, եւ զանթիւ մարդիկ արկանեին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս եւ զմանկսի հանեին ընդ ցից սայլից, զկեսս զոր ի ներքոյ կամացն արկեալ կասուին: Եւ զարանց բազմութիւնս օային ի կո-

(*) Հասին ժամանակակից պատմագիր Ամմիանոս, այս երկու նախարարներ կիւլապետ և Արտաւան կը կոչէ, ըստ Օրմանեանի իրենց ուրացութենէն յետոյ ստացած անուններով:

խումն փղաց եւ զառանց բուռյ զմասաղ մանկօյն, զայն ի գերութիւն վարեին. եւ զբազում ամուրս քանդեցին, եւ զբերդս աւերեին զամուրս: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ ի գաւառին Աղծնեաց յիօխանութեան բոլորին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետեայն ի գերութիւն խաղացուցին» (Փաւստոս. 7. 17) (*):

Ըստ Դուրեանի (Ազգ. Պատմ. 272. Աստուրեան. 300) Արշակի գերութենէն անմիջապէս յետոյ և ըստ այլոց (Ինչպէս Օրմանեանի. Ազգապատմ. 204—5) Պապի Թագաւորելէն յետոյ (**): Շապուհ Հայաստան կը զրկէ Ձիկ և Կարէն (***) անուն Պարսիկ իշխանները, անշուշտ ընկերակցութեամբ Մերուստանի և Վանանի, որոնք աշխարհին ամէն կողմերը կ'աւերեն և բազմաթիւ գերիներ կը տանին Պարսկաստան:

Արտագերից բերդն ալ, ուր ամրացած էր Փառանձեմ, կը պաշարեն և վերջապէս առնելով կը կողոպտեն և գերի կը վարեն Փառանձեմ Թագուհին և անարգ մահով կ'սպաննեն զայն:

Արտաքին պատմիչներէն Ամմիանոս (27. 12) նկարագրած է այս անցքերը (Դուրեան Ազգ. Պատմ. 274—278), առանց սակայն խօսելու այն գերառութիւններուն վրայ զորս կը յիշատակեն Փաւստոս և Խորենացի:

Այսպէս, Փաւստոս (7. 36) կ'ըսէ «եկին ի քաղաքն մեծ յԱրսաւա, եւ առին զնա, եւ կործանեցին զպարիսպ նորա. առին անսի զգանձս մթերեալս՝ որ կային, եւ գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրսաւա ի քաղաքն ինն հազար տուն երդ հրեայս, զոր ամեալն եր գերի Տիգրանայ արքայի Արեակունոյ յերկրէն Պաղեստինացոց. եւ քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրսաւա քաղաքն խաղացուցին» (նոյն 7. 36):

Արտաշատէն յետոյ, պարսիկները «Առնուին եւ զՎաղարշապատ քաղաքն, քանդեցին բրեկն զքաղաքն ի հիմանց քաղաքին, եւ խաղացուցանեցին յայնմ եւս քաղաքն ինն եւ տասն երդս հազար», առանց ճշդելու թէ որքանը Հայ և որքանը Հրեայ էր, ինչ որ հաւանորէն սկզբնական բնագործին մէջ նշանակուած պէտք էր ըլլար, ինչպէս կը կարծէ Մ. Արեղեան (տես. Հայ ժողովրդական առասպելներ. Վաղարշապատ. 1901. էջ 560):

Փաւստոս յետոյ կ'ըսէ թէ՛ Պարսիկները «առնուին եւ զմեծ քաղաքն զԵրուանդաւա եւ խաղացուցանեցին անսի երդս տասն հազար Հայ եւ երդս երեսուն հազար Հրեայ, եւ զքաղաքն ի հիմանց քաղաքեալ բրեալ յասակեին»:

(*) Ամմիանոսի ալ ծանօթ է Ամիդի գրաւումը որուն պատկան բանակին մէջ զբնուած է ինն (Ասուրեան. Շոյն. 286—287):

(**) 2. Ակինեան Արեակի մահը 363ին կը նշանակէ եւ 12 տարուան Պարսիկ տիրութենէն մը յետոյ, Պապը բազաւորած ցոյց կու տայ, ինչ որ հիշող կը բուի, հիմնուելով Ամանուի սա տղերուն վրայ. «Ամբռնի Արշակ Հայոց արքայ ի Շապուհ արքայէն Պարսից: Եւ արիւր Շապուհ ի վերայ Հայոց ամա ժԲ. սրով եւ կրով եւ գերութեամբ» (Սեբեոս. 1912. 26):

(***) Ըստ 2. Ն. Ակինեանի (Յղիշէ. 484) Ձիկ եւ Կարէն պատկան անուններ են, իրենց անունն էր Առաւան եւ Կիւլակէս:

Ապա առնուին եւ զքաղաքն Բագրեւանդայ Զարեհաւան, եւ խաղացուցանեցին անսի հինգ հազար երդ Հայ, եւ ութ հազար երդ Հրեայ եւ քաղաքն ի հիմանց քաղաքին յասակեին: Առնուին եւ զքաղաքն մեծ Ջարթուս՝ որ եր ի գաւառին յԱղոյնովսի, չորեքսուսան հազար երդ Հրեայ եւ տասն հազար երդ Հայս, եւ զնա ի հիմանց քաղաքեալ ասակեցին: Առին եւ զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տողբայ. եւ հրձիգ արարեալ, քաղաքն զհիմունս նորա եւ խաղացուցանեցին անսի երդս հինգ հազար Հայ, եւ ութ եւ տասն հազար երդ Հրեայս (*):

... Ապա առին եւ զնա (զՆախնաւան) քաղաքին, անսի երդս Հայս երկուս հազարս, եւ Հրեայ երդս վեցասուս հազարս անսի խաղացուցին զնացուցին ամենայն գերութեամբն հանդերձ» (Փաւստոս 7. 36):

Այս իրողութիւնը կը հաստատէ նաեւ Խորենացի (7. 16), ըսելով թէ «ի նմին ժամու եհաս հրաման ի Շապուհ արքայէ, զի քաղաքեալ աւերեցեն զամբուրիւն ամենայն քաղաքաց, եւ զՀրեայս խաղացուցեն ի գերութիւն, եւ զայն Հրեայսն, որ նովին հրեութեան օրինօք կային ի Վանն Տոսպայ, զորս ամեալ եր Բարզափրանայ Որբունոյ յաւուրս Տիգրանայ, զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան: Գերեցին եւ զայն Հրեայսն որք յԱրսաւա եւ ի Վաղարշապատ, զորս ամեալ եր նոյն Տիգրանայ արքայի. որք յաւուրս սրբոյն Գրիգորի եւ Տրդատայ հաւասարեալ էին ի Բրիտանոս»:

Յետոյ Շապուհ կրկին յարձակեցաւ Հայաստան: Պատմագիրը կ'ըսէ «հասեալ ասպասակեին յերկիրն Հայոց, եւ առնուին զամենայն գերին ի մի վայր ժողովեցին: Եւ բազում ի նախարարացն Հայոց թողուին զկանայս իւրեանց եւ զորդիս եւ զբնասնիս, եւ փախեան ընդ այս ընդ այն գնացին: Իսկ զամենայն կանայս նախարարացն Հայոց. զոր թողին եւ փախեան, ասպասակն ժողովեւ, եւ ամին զնոսա առ Շապուհ արքայ Պարսից» (Փաւստոս 7. 37):

Այն տարուած գերիները, Փաւստոս Բիւզանդացիի վկայութեամբ, «տարան բնակեցուցին որ յԱսորեստան եւ որ յերկիրն Խուժաստան» (7. 36) և ըստ Խորենացիի (տես. վերը) Ասպահան, մինչ մէկ մասն ալ ներքին իրացնելով պալատի մէջ ծառայութեան գործածեցին, իսկ նախարարաց արկիւններէն շատերը Շապուհի կիրքերու զոհերն եղան:

Սակայն օտար ազգիւրներ ուրիշ տեղեկութիւններ կու տան: Այս գերիները որոնք Շապուհ Բ. Հոռմէակոսն երկիրներէն և Հայաստանէն վերցուցած էր (Ամմիանոս 20. 6. 7. և Փաւստոս 7. 37. հմտ. Th, Noldke.

(*) Թովմա Արծունի (1852. Կ. Պոլիս. 68—69) Վանի գրաւումը ինն ալ կը պատկանէ, տարուած գերիներուն թիւը այսպէս կը նշանակէ «հինգ հազար զՀրեայսն եւ ութ եւ տասն հազար զԳրիտանոսայսն»: Խորենացիէն առնելով անոնց տարուած տեղն ալ Ասպահան նշանակած է: Անցողակի կը յիշէ նաեւ Վաղարշապատի եւ Արսաւաի գրաւումը եւ կ'աւելցնէ «եւ զՀրեայսն որ յաւուրս սրբոյն Գրիգորի հաւասարեալ էին ի Բրիտանոս, վարեն ի գերութիւն, աւելի վատեց հասուցանելով նոսա՝ քաղաքաց Հրեայսն» (նոյն):

Tabari. Leiden. 1879. 59) գործածած է շինելու շատ քաղաքներ. և անոնց մէջ՝ հաւանօրէն նաեւ արքունի պալատներ և դաստակերտներ (Noldke. նոյն. 57—59), որոնք Շապուհ զարդարած է գեղարուեստական յիշատակարաններով, թալանուած՝ յիշեալ երկիրներէն (Հ. Ն. Վ. Ակինեան ՀԱ. 1938 էջ 21—22):

Այս աշխարհաւեր խառնակութեան միջոցին, Հայաստանի մեծամեծները «իւրեանց առեալ զկանայս եւ զորդիս՝ փախեան յաւիտեան Յունաց» (Պորենացի Գ. 16):

Այս ամէն աւերները և վայրագութիւնները կը գործէր Շապուհ՝ իբր թէ ներսէնի վրէժը լուծելու համար, սակայն իրականութեան մէջ, այս հակառակութեան բուն շարժառիթը քրիստոնէութիւնն էր որ պաշտօնապէս Հայոց կրօնքը եղած էր:

Պարսիկները Հայոց իրենց դէմ սնուցած հակակրօնական պատճառ քրիստոնէութիւնը կը նկատէին և ասոր համար կրօնական հալածանքներ ալ գործադրել սկսած էին: Այս հալածանքները սկսած են 339էն և տեւած են նոյն սաստկութեամբ մինչեւ Շապուհ Բ.ի մահը (379 Օգոստոս 19), ինչպէս կը հաստատեն բազմաթիւ օտար պատմիչներ, (Հ. Ն. Ակինեան ՀԱ. 1931. 402, Labourt. Le Christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide (224—632) Paris. 50. և P. Peeters. Le «Passionnaire d'Adiabène» Analecta Ballandiana. 43 (1925) 261—304), իսկ մերիններէն՝ Պորենացի (Գ. 12) կ'ըսէ թէ՝ Շապուհ «զամենայն կարգ ֆրիսոնեութեան զանայր խափանել»:

Սպիտակոյտները և քահանաները ձերբակալել տալով Պարսկաստան կ'աքսորէր, յունարէն գիրքերը կը ժողվէր և կ'այրէր, յունարէն խօսիլ և յունարէնէ թարգմանել կ'արգիլէր և Յունաց հետ հաղորդակցութիւն չէր ներեր, ուղելով «խափանել զֆրիսոնեութեան ուսումն» (Պորենացի 12) «նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի բուն արկանէին, բողոլ զասունածապաւսութիւն եւ ի պաւսօն դառնալ Մազդեզանցն» և թէ «իբրեւ ոչ մի ոք յանձն առնուի ըստմալ ի ֆրիսոնեութեան շարաման սպանանքին զամենեսեան»:

Նոյնիսկ Պարսիկ պատմագիրի մը վկայութեամբ, Շապուհի պաշտօնապէս հրատարակած հալածանքը քրիստոնէութեան դէմ, մինչեւ 200,000 քրիստոնէից նահատակութեան պատճառ եղած էր (Dictionnaire Universel et Complet des Conciles par l'abbé Ad. Ch. Peltier. Paris. Բ. 904):

Քրիստոնէականները դէմ հալածանքին մէկ ուրիշ փաստն է Արտաշատի երէց Զուրիթայի նահատակութիւնը: Անիկա գերիներուն հետ գացած էր Պարսկաստան խրատելու համար որ քրիստոնէութեան փարին, սակայն Շապուհ «հրամայեաց չարչարել զԶուրիթայ... զի թողլէ՛ զհաւաս ֆրիսոնեութեան, որում ոչ հաւանեալ, կատարեցաւ» (Պորենացի. Գ. 16):

Հայերը՝ — որոնց միամիտ յարումը դէպի իրենց արեւմտեան քրիստոնէայ դրացիները, աւելի գրգռած էր Պարսից հակառակութիւնը և սաստկացուցած անոնց ատելութիւնը — դարձեալ օգնութիւն խնդրեցին

Բիւզանդիոնէնս Վաղէս (364—378) Հայաստան դրկեց Պապը (368) բանակով մը, որուն կ'ընկերանային Արշակի բանտարկութենէն յետոյ Բիւզանդական երկիրներ ապստամանող նախարարները (Պորենացի Գ. 12. և 13. և Փաւստոս Ե. ա), սակայն շատ չանցած, երբ Հայաստան երկուքի բաժնուեցաւ, թագաւորէն սկսեալ յետին շինականը՝ աւելի նախամեծար համարեցին Յունական բաժինին մէջ ապրիլ՝ քան թէ՛ Պարսկականին: Այսպէս, Պորենացի կը պատմէ թէ «բողեալ Արեւիայ զբուն յազաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ, եւ զամենայն մասն բաժնին Պարսից՝ գնաց սրել արեւմտայ կողմանց աբխազիս մերոյ, որ ի մասն ի բաժնին Յունաց. ոչ միայն մօրն աղագաւ, որ էր ի կայսերական ֆաղափն, այլ լաւ համարեալ նուազ կողմանն սրել՝ եւ ծառայել ֆրիսոնեայ բազաւորի, քան յովից իբիւլ՝ եւ մտանել ընդ լծով հեթանոսաց: Գնացին զհետ նորա հանդերձ կանամբք եւ ողբովք եւ նախարարութիւնք որ ի բաժնին Շապուհ, բողոլով զիւրաքանչիւր արարս եւ զգիւղս եւ զղասակեթս»: (Պորենացի Գ. 16.):

Շապուհ զանոնք չափի կը փորձէ և կը յաջողի կէս-պառնական և կէս-չահեցողական միջոցներով դարձնել իրենց տեղը, բացի մէկ քանիէն (Պոր. նոյն). բայց «լաւ համարել նուազ կողմանն սրել եւ ծառայել ֆրիսոնեայ բազաւորի, քան յովից իբիւլ՝ եւ մտանել ընդ լծով հեթանոսաց»ը, եղաւ քաղաքականութիւն մը Հայ ազգին համար: Տոլննս և Պաշ (Հին Հայերի Պատմ. Ա. 48) ընորոշ տեսութեամբ մը, կ'ըսեն թէ, Հայերը էսպէս խաղաղ բնաւորութիւն ունենալով, երբ տեսան թէ իրենց փառասիրութիւնը վնասակար կը դառնայ, Հռոմայեցոց ժամանակ շուտով խողովեցան և քրիստոնէական դարուն ընդհանրապէս ապստամբութենէն գերադաս համարեցին հայրենիքէն հեռանալ, մանաւանդ դէպի քրիստոնէայ երկիրներ, կարծելով թէ հոն խաղաղ կեանք պիտի ունենան: Այս ձգտումը աւելի պիտի շեշտուէր Արշակունեաց կործանումէն յետոյ (427) և պիտի բացուէր նոր էջ մը մեր ազգային տարեգրութեանց մէջ:

Հռոմ-Հայաստան քաղաքական յարաբերութիւնները, որոնք Քր. է առաջ 190 թուականէն կ'սկսին, ինչպէս տեսնուեցաւ, խիստ ճակատագրական ազդեցութիւն մը ունեցած են Հայաստանի վրայ, որ քաղաքական յարաբերութիւններու առընթեր՝ ունեցաւ տարբեր առնչութիւններ և շփումներ ալ Հռոմի հետ, վասնզի Հայաստանէն դեսպաններ, պատուիրակներ, պատերազմական գերիներ, ուսանողներ և գինուորներ՝ Հռոմ տիեզերակալ կայսրութեան մայրաքաղաքը գացած, և անկէ Հայաստան եկած են: Այսպէս, կը տեսնենք թէ Հայաստան, 190ին (Քր. է առաջ), Հռոմի թելադրութեամբ Սելեւկեան լուծը հաղիւ թօթափած, խիստ հաւանական է որ առաջին անգամ դեսպանութիւն մը Հռոմ դրկած է, ինչպէս կը մականբերուի Պողիւբիոսի մէկ խօսքէն (ԻԲ. 1. 7. 16 կամ դոկտ. Հ. Յ. Աստուրեան. Հայաստան եւ Հռոմ. 19.):

Այս դեսպանութիւնը անշուշտ առաջինն ու վերջինը չէր և շատ մը

ուրիշ պատուիրակութիւններ զրկուած են, թէեւ շատ քիչ անգամ յիշուած ըլլայ, սակայն առիթներ ալ պակաս չէին (*), քանի որ Հոռոմէն կը զրկուէին յաճախ Հայաստանի թագաւորները, իբր գերի և իբր պատանդ, հոն տարուած և հոն դաստիարակուած բազմաթիւ արքայազուններէն առնուելով:

Հոռոմէական կայսրութեան մայրաքաղաքը գացած են նաեւ Հայ թագաւորներ անձամբ, իրենց հպատակութիւնը և յարգանքը յայտնելու կայսրերուն, ինչպէս նաեւ իբր գերի տարուած են բազմաթիւ գահընկէց թագաւորներ և անոնց արքայազունները, որոնցմէ յատել, յետոյ, Հայաստանի թագաւոր արուած են: Այսպէս, Հայ գահուն հետ իբր թագաւոր, իբր նախկին թագաւոր և իբր արքայազուն, կապ ունեցող բազմաթիւ դէմքեր Հոռոմի մէջ ապրած են, գոնէ ժամանակաւորապէս:

Թուելով ժամանակագրական կարգով, ըսենք թէ Տիգրան Մեծի ապաշնորհ որդին՝ Տիգրան Կրտսեր, իր կնոջ և աղջկան հետ (**), չղթայի զարնուած, Պոմպէոսէն տարուած է Հոռոմ (61 Քր. է առաջ), ուր Փլուտոս ձերակուտականին հեղոցութեան յանձնուած է (Աստուրեան, 60 յ 88—90):

Նոյնպէս, Արտաւազդ Բ. ի գաւազնները Աղեքսանդրիսէն Հոռոմ փոխադրուած են և Օգոստոս կայսեր ատեն տակաւին հոն էին: Արտաշէս Բ. (34—20), իր եղբայրները Օգոստոսէն խնդրեց, սակայն ան չուզեց զստնք դարձնել, ապահովաբար ծառայեցնելու համար իր շահերուն, նոր նոր թագապահանջներ յարուցանելով: Անոնցմէ մէկն էր Տիգրան Գ. (20—15 Քր. է առաջ), որ Հայոց իսկ խնդրանքով՝ Հոռոմէն եկաւ Հայաստանի թագաւորութիւնը ստանձնելու համար:

Իսկ մէկ ուրիշն էր Արտաւազդ (2—3 Քր. է վերջ), որ Օգոստոս իբր թագապահանջ Տիգրան Գ. ի դէմ հանեց, սակայն չյաջողեցաւ զայն Հայոց գահը բարձրացնելու, վասնզի Տիգրան Գ. և Պարթեւները զայն վանեցին և ասոր ընկերացող Հոռոմէական գունդերը՝ կոտորեցին: Այս Արտաւազդ աւելի հոռոմէական քան հայկական կրթութիւն ունէր (Աստուրեան, 130):

Արիաբարզան՝ Մարաց թագաւորին որդին, որ Հայոց թագաւոր կարգուեցաւ Օգոստոսէն (3—4) 12 տարի Հոռոմ բնակած էր: Տիգրան Ե. (5—14) գահընկէց ըլլալէն շատ յետոյ, Հոռոմի մէջ սպանուեցաւ (36 ին): Միհրդատ՝ 37 ին գահընկէց ըլլալէ յետոյ, իբր գերի Հոռոմ տարուած է, և 45 ին վերստին զրկուած է Հայաստան:

Տիգրան Զ. (60—62), նոյնպէս Հոռոմէն Հայաստան եկած է: Տրդատ թագաւոր (53—59 և 62—67) 65 ին գացած է ցամաքի ճամբով, 3000

(*) Ամէն անգամ որ Հայերը դէպի Հոռոմ կը դարձնէին իրենց աչքը եւ ընդդէմ Պարթեւներու Հոռոմի աջակցութիւնը կը խնդրէին, անուրէ՛ր դեսպաններ եւ պատուիրակներ կը զրկէին Հոռոմ, ինչպէս 54 ին՝ Ներոն կայսեր, խնդրելու համար Հռոմի մէջ վարչիսն անուրէ՛ր (Աստուրեան, 166) եւ այլն:

(**) Պլուտարխոս, որ Պոմպէոսի յարակաւն մտեցն է Հոռոմ կը նկարագրէ, այդ բարբոս մէջ կը յիշէ նաեւ Մեծն Տիգրանի կիներ՝ Զոզան, որ Հայ պատմութեան անձանց է:

հեծեալներու ընկերակցութեամբ, իր գաւազններուն և կնոջ հետ և ընդունուած է Ներոն կայսրէն արտասովոր պատիւներով:

Սոյնմ որ երեք անգամ Հայաստան բերուեցաւ և վանուեցաւ (139—143, 154—159 և 163—185), Հոռոմ ապրած ձերակուտական մըն էր: Բազուր (160—164) գահընկէց ըլլալէ յետոյ Հոռոմ գացած և հոն ապրած է կայսերական ընտանեաց մէջ: Տրդատ Բ. Արշակունի (218—253) Հոռոմի մէջ ապրած է նախապէս, իսկ իր մայրը՝ 11 ամիս գերի մնացած է Հոռոմի մէջ: Իր յաջորդներէն Սոսրոյ Ա. (271—288)՝ Հոռոմի կողմէ նշանակուած, Հոռոմէն կամ Հոռոմէական երկիրներէ պէտք է եկած ըլլայ: Տրդատ Գ. (288—295 և 297—311) Հոռոմէական երկիրներ ապաստանած էր և իր պատանեկութիւնը և երիտասարդութիւնը հոն անցուցած էր Հոռոմէական գաստիարակութիւն ստանալով:

Տիրան (328—339) թագաւոր երբ Յուլիանոս զօրք և պատանդ պահանջեց, իր երրորդ գաւազնը՝ Տրդատը իր կնոջ և գաւազններուն հետ և թուր՝ Տիրիթը՝ պատանդ տուաւ: Յուլիանոս զանոնք Պոլիս փոխադրեց և հոն պահեց: Ասոնցմէ Տրդատ սպանուեցաւ Վաղենտիանոսի հրամանով՝ իր եղբորը՝ Արշակ թագաւորին կայսեր հանդէպ բռնած ըմբոստ դիրքին և դէպի Պարսիկները ցոյց տուած հակումին համար:

Թէոդոս կայսրը (379—395) Մեծն Ներսէսի միջնորդութեամբ արձակեց Տրդատի ընտանիքը և Տիրիթը, որուն մասնաւորապէս հիւպատոսութեան աստիճան տուաւ՝ իր հօրը անիրաւ սպանութեան ի փոխարինութիւն:

Պուպ (368—373), Արշակի որդին, որ Բիւզանդացուց օգնութեամբ նախքան իր հօր գահը բարձրանալը Պոլիս կը գտնուէր, երբ զինքը թագաւորելու համար Հայաստան կը զրկէին, պատանդ կը թողուր հոն իր կինը՝ Զարմանդուխտը և իր երկու որդիները՝ Արշակը և Վաղարշակը:

Վարազդատ (378—380), իր յաջորդը, հաւանօրէն Հոռոմէական երկիրներէն եկած էր, և դարձեալ հոն փախաւ: Արշակ Գ. և Վաղարշակ տեսնեց թէ իբր պատանդ Պոլիս էին և անկէ եկան: Բոլոր այս թագաւորները որ Հոռոմէն զրկուեցան Հայաստան, Հոռոմէական բարքեր և սովորութիւններ բերին Հայաստան, վասնզի անոնք անշուշտ առանձին չէ որ ապրած էին Հոռոմի և Կ. Պոլսոյ մէջ, այլ ունէին իրենց հետեւորդները, որոնք նոյնպէս ընտելացած էին Հոռոմէական կենցաղին, և զանոնք կը փոխադրէին արեւելք:

Այս արքունական յարաբերութիւններէն զատ, Հայաստան Հոռոմի հետ ունեցած է նաեւ զինակցական յարաբերութիւններ և այս պատճառով Հայ զինուորներ հեռաւոր տեղեր գացած և ծանօթացած են օտար նոր և հեռաւոր աշխարհներու, որոնք թերեւս իրենց հրապոյրը կ'առնենային Հայեր քաշելու: Հայ զինուորներ, ծառայելով Հոռոմի, Հայաստանի մէջ Հոռոմէական բարքերու ներմուծման միջնորդ հանդիսացած են:

Հայերը, այն շրջաններուն որ Հոռոմի դաշնակից կամ անկէ հովանաւորեալ եղած են, օգնական բանակներ յղած են, երբ իրենցմէ՛ պահանջ

Ղուած է: Այսպէս, Հայկական գունդեր ոչ միայն Ասիոյ մէջ, Տիգրիս-Եփրատեան սահմանագլուխին վրայ Պարսիկ պետութեան դէմ կռուած են, այլ նաեւ Հռոմէական կայսրութեան հեռաւոր սահմաններուն վրայ:

Այսպէս, կը յիշուի թէ Մարկոս Աւրելիոս կայսրը (161—180) Գաւառի վրայ պաշարուած էր 174ին՝ երբ «Մելիտինէ կոչուած զօրագունդէն» քրիստոնէայ զինուորականներու աղօթքովը տեղացող փրկարար անձրեւով մը յաղթութիւնը ստացաւ՝ ըստ քրիստոնէայ շատագով Ապոլինարիոսի, (Paul Allard. La persécution de Dioclétien p. 307. Եւսեբիոս Ե. Ե. Դրոն Կասիոս. Հռոմէական Պատմութիւն. Ծե. 23. Տերտուլիանոս. Զատագով. Ե. նաեւ Հայ-Կեսարիա. 245—5): Այս գունդը որ կը կոչուէր «Շանթահարաց» կամ «Շանթաձիգ» ԺԲ. լեզէոն (թերեւս աւելի ճիշդ «Շանթահարեալ»), կեդրոն ունէր Մելիտինէն և «զօրակազմներու մեծամասնութիւնը Փոքր Հայքէն էին» (Դրոն Կասիոս ԿԱ):

Դար մը յետոյ, Դեկոսի ատեն, 258ին կամ 259ին այս գունդէն ազնուական Հայագոյի հարիւրապետ մը՝ Ս. Պողիկոսոս՝ նահատակուած է (ԲՁՄԳ. 1928. 99—100. Ալիշան. Յուլիոյ. Բ. 239. Մկրտիչ եպ. Աղաւունք. Հայկ. հին վանքեր եւ եկեղեցիներ. 131—133. Թորգոմ Պատր. Գուշակեան. Correspondence «Պողիկոսոս Հայ վկայ» ողբերգութեան թարգմանութիւնը, Երուսաղէմ. 1935, «Նահապետի նօթ մը» ներածական հատուածը):

Նոյնպէս, իբր թէ Հոյ թագաւոր մը՝ Սոսրոյ՝ մինչեւ եգիպտոս եկած է և Թէբէի մէջ Յունարէն արձանագրութիւն մը թողած է, գրելով «Խոսրով Հայ տեսնելով զարմացալ» (Corp. inser. grec. 4821. հմմտ. Gutschmid ի ZDMG հատ. 31. 49. Աստուրեան Հայաստան եւ Հռոմ. 225) (*):

Նոյնպէս, երբ Սեւերոս Աղեքսանդր կայսրը Հռոմ դարձաւ (233ին), որպէսզի կայսրութեան հիւսիսային սահմանները Գերմաններու դէմ պաշտպանէ, իր հետը բերաւ նաեւ Հայ աղեղնաձիգ գունդեր, որոնք 238ին, Մուքսիմիանոսի ժամանակ ալ, թշնամիին դէմ տարուեցան (Աստուրեան

(*) Աստուրեան (225) այս արձանագրութիւնը կը վերագրէ այն Հայ թագաւորին որ 198ին Սեւեր կայսեր նուէրներ եւ պատանդներ դրկեց եւ իր չեզոքութիւնը ապահովեց երանհիպ Արեւելի եկաւ Պարթեւաց դէմ: Ասոր իբր հիմ կ'առնէ Խորենացիի (Բ. հե) մէկ յիշատակութիւնը, որուն համաձայն Կարակալայի ժամանակ Հայոց թագաւոր մը՝ Խոսրով անուամբ, հայր Տրդատի, չեզոք մնացած էր կայսեր եւ Պարթեւաց վաղաք թագաւորին միջեւ տեղի ունեցած պատերազմին: Աստուրեան կ'ըսէ թէ Խորենացի իր այս տեղեկութիւնը մեծաքաւ օրինակած է կեսարիոյ եպիսկոպոս Փերմիլիանոսի (իբր 230) գրած մէկ վկայաբանութեան, զոր Խորենացի՝ առանց հաւատարմութեան մէջ կը բերէ:

2. Ներսէս Ակինեան, այս արձանագրութիւնը կը վերագրէ Խոսրով Ա.ի (271—288) եւ կ'ենթադրէ թէ Չեմոսիայի դէպի եգիպտոս կատարած արշաւախումբին մասնակցած պիտի ըլլայ, իբր համաձայն Հայ զօրագունդին: Ժամանակագրական պզտիկ անհամաձայնութիւն մը երբ գոյութիւն չունենաւ, այս երկրորդ տեսութիւնը աւելի հաւանական պիտի ըլլար: 2. Սարգիս Վ. Բարսեղեան (Ազգաբնակչութեան եւ իւր բազմադարեան գաղափար. 1890 Վեհեթիկ 38) բոլորովին կը մերժէ Խոսրովի թագաւոր մը ըլլալը, գուցէ իրաւամբ:

Հայաստան եւ Հռոմ. 239): Հետեւաբար Հայ գունդեր կայսրութեան Եւրոպական բաժինին մէջ առնուազն հինգ տարի տեւական ընտանութիւն ունեցան:

Նոյնպէս, 350ին երբ Արեւմուտքի մէջ Մագնենտիոս սպանեց Կոստաս կայսրը և անոր գահը յափշտակեց, Կոստանդիոս՝ Արեւելքի կայսրը՝ զնաց մարդասպանին և յափշտակիչին դէմ, իրեն հետ տանելով Արեւելքի բանակէն բուական մեծ մաս մը: Անիկա իրեն հետ տարաւ նաեւ Հայկական այրուձիի ստուար գունդեր, իբր քաջ աղեղնաձիգներ, զորս Տիրան թագաւոր իբր դաշնակից ստիպուած էր տալ կայսեր, բայց Շուպուէ յետոյ զայն իրեն պիտի չնկերէր:

Կոստանդիոս՝ Մուրասի քով փառաւոր յաղթութիւն մը տարաւ, Մագնենտիոսի վրայ: Այս ճակատամարտի մէջ Հայոց հեծեալ աղեղնաձիգները շատ նշանաւոր և գրեթէ վճռական դեր մը խաղացին (Զոսիմոս. 2. 51. 52. հմմտ. Յուլիանոս ճառ Ա. 36 D. Բ. 57 CD. 60 A. Աստուրեան, Հայաստան եւ Հռոմ 279):

Չինուորական գործակցութեան ուրիշ ապացոյցներն են Յուլիանոսի Արշակ Բ.ի զրկած պատուէրը (363ին) որպէսզի քաջազէն գունդեր պատարաստ ունենայ և սպասէ հրամանի, երթալու համար այն տեղ՝ ուր որ կը հրամայուի, և Հայկական գունդերու գոյութիւնը այն բանակներուն մէջ որոնք Հռոմայեցիք Դանուբը անցնելի փորձող բարբարոսներու դէմ զրկած էին, Արշակ Գ.ի (380—386) ժամանակ (տես. Թեմիսդիոս. Ծառ. ԺԶ. 207 A. հմմտ. Sievers. Studien. 330. Աստուրեան 314):

Նոյնպէս, Հռոմէական բարձրու Հայաստան ներմուծումին նպաստած է Հռոմայեցի զօրքը, զոր Հռոմ սովորութիւ ըրած էր Ա. դարէն սկսեալ ժշտատեւ կերպով պահել Հայաստանի մէջ, Հայոց թագաւորին պաշտպանութեան համար:

Հայ թագաւորութիւնը, Հռոմէական և Պարթեւական պետութիւններու միջեւ իբր պատուար, թշնամի Պարսիկներուն ոչ միայն մատոյց մեծ ծառայութիւն, այլ նաեւ միակ ճամբան հանդիսացաւ Միջերկրականի՝ Կեդրոնական Ասիոյ հետ վաճառականութեան, երբ խզուեցան Տիգրոնի և Հռոմի յարաբերութիւնները: Այս միջնորդի դերը անշուշտ նաեւ Հայերուն համար նպաստաւոր եղաւ վաճառականական տեսակէտով, վասնզի Դուինը դարձուց վաճառականական միջազգային կեդրոն մը ուր կը բերուէին նոյնիսկ հեռաւոր Հնդկաստանէն, դրացի վրաստանէն, Պասկաստանի ամէն մասերէն, ինչպէս նաեւ Հռոմէական պետութեան որոշ շրջաններէն սպարանքներ, և որոշ կարգադրութիւններով կը վաճառուէին (Պրոկոպիոս, Մենանդր, և վերը. 69. 74. 84.):

Հայաստան կրեց նաեւ Հռոմէական մշակոյթին ազդեցութիւնը Արտաշատի կրկին (66ի և 183ի) շինութիւններուն առթիւ, որոնք Հռոմի դրամով և անոր արհեստաւորներուն ձեռքով կատարուեցան, ինչպէս նաեւ Հռոմ և իրեն ենթակայ երկիրներ գացող ճամբորդներու, իբր վաճառական, իբր ուսանող, իբր զինուորական, իբր պատուիրակ երթեւեկող

Հայերու միջոցաւ, որոնք ապահովարար շատ նորութիւններ տեսած են այդ տեղերը:

Այս երթեւեկները կրնային գաղթերու համար գետին հարթարել՝ սակայն գաղթականութիւններ չէին:

Գաղթականութիւններ կատարուեցան միայն պատերազմներու պատճառով, այսինքն, երբ յաղթական բանակներ բռնի տեղահան ու տարագիր ըրին Հայաստանի բնակչութիւնը, հին վայրերն սովորութեան մը համաձայն: Արդարեւ, եղան պահեր որ Հռոմ լքեց Հայերը Պարսիկ ճնշումին տակ և քաշուեցաւ մինչեւ Եփրատ, իր բանակներուն հետ տանելով իրեն կուսակից և համակիր Հայերու բազմութիւններ:

Նոյնպէս, ամէն անգամ որ Հռոմի կուսակիցները նեղ դրութեան մատնուեցան, անշուշտ Հռոմէական երկիրներ ապստամբեցան: Դարձեալ Հռոմի հակառակորդները, երբ անոր լեզունները Հայաստան կը մտնէին, կը պատժուէին երկիրէն հեռացուելով կամ տարագրուելով:

Այսպէս, զանազան պատճառներով Հռոմէական երկիրներ անցած են շատ Հայեր, որոնք Եփրատէն մինչեւ Վոսփոր տարածուող Բիւզանդական երկրներու մէջ սփռուած են, շատ խիտ զանգուածներով, Հայաստանի սահմաններուն մօտ վայրերու մէջ կեդրոնանալով և հետզհետէ ցանցառանալով՝ անոր սահմաններէն որքան որ կը հեռանային:

Տիգրան Մեծէն սկսեալ, Հայերը, մասնաւորապէս երկիրին քաղաքական անհաստատ կացութեան և տեւական պատերազմներուն պատճառով, սկսած են գաղթել դէպի արեւմուտք, Եփրատէն անդին արեւմտեան երկրներ, ուր աւելի կանուխ թափանցած էր Յոյն-Հռոմէական քաղաքակրթութիւնը, որ մինչեւ քրիստոնէութիւն՝ ցեղերը իրար միացնող միակ ուժն էր: Եւ որովհետեւ Հայերը տակաւին չունէին վերջնական դրոշմ ստացած ազգային նկարագիր և հազիւ թէ Հայկական Բարձրաւանդակի հայացումը իրագործման ճամբու մէջ էր, այդ Հայերը շուտով կը ձուլուէին տեղացիներու հետ:

Այս ձուլումը շատ աւելի արագ կատարուեցաւ երբ քրիստոնէութիւնը՝ վերջապէս Գ. դարուն հաստատուեցաւ՝ բովանդակ Մերձաւոր Ասիոյ մէջ և հանդիսացաւ մեծ ազդակ մը ցեղերու միախառնումին: Այս իսկ պատճառով, այս աշխարհամասը հիմնովին կերպարանափոխ եղաւ ազգային դիմազոնութեան տեսակէտով, և շատ մը ցեղեր ընկլուզուեցան Բիւզանդականութեան մէջ: Քիչ չէր նաեւ թիւը Հայերուն որոնք ձուլուեցան և կորսուեցան Հայութեան համար, Բիւզանդացի-Յոյն դառնալով:

Փոքր Հայքը, այսինքն Սեւ Մովու դրացի նահանգները և արեւմուտքը և հիւսիսը Մելիտանէին (Laurent. l'Arménie entre Byzance et l'Islam. 190), ինչպէս նաեւ մերձակայ Կապադովկիան և Կոմմազենէն, գէթ մինչեւ Գ. դար, Հայ և Հայ ծագումով բնակչութեամբ լեզուն էին:

Քրիստոնէութեան տարածումէն շատ առաջ կարճ միջոց մը Հայոց

տիրապետութեան ենթարկուած Փոքր Հայքը (*), մինչեւ Գ. դար քրիստոնէութեան, իր սահմաններուն մէջ բուսական խոշոր թիւով Հայեր եթէ պահած չըլլար, Ս. Բարսեղ (+379) Սատաղ ճամբորդութիւն ըրած ատեն Հայերէն լեզուն գիտցող մարդիկ պիտի չփնտէր, նոյն գուռաին եպիսկոպոսական աթոռներուն համար (Migne. Patrologie. 32. 502):

Եթէ հոն Հայ խիտ բնակչութիւն մը գոյութիւն չունենար, հոնկէ առաջ պիտի չգային բազմաթիւ անձեր որոնք պատմութեան անցած են տիեզերական համբաւով՝ իբր Հռոմայեցի:

Այսպէս, Գ. դարուն կը յիշուի Պրոյսերսիոս (Proisérios) կամ Պարոյր Հայկազն (272—363) նշանաւոր հոեւորը (**), որ Կոկիսոն (***) ծնած էր: Ինքն և իրեն ժամանակակից հեթանոս հոեւոր Լիբանիոս ունեցած են Աթէնքի մէջ բազմաթիւ աշակերտներ, որոնք գուցէ աւելի Փոքր Հայքէն և Փոքր Ասիայէն էին, թէեւ ենթադրողներ ալ կան որ արքունի ծախքով բուն Հայաստանէն ղրկուած էին (Աստուրեան. Հայաստան եւ Հռոմ. 299):

Այս ուսանողներէն մին էր, ապահովարար, Հայագի Սուրբ Արշակը (Sant' Arsacio Armeno), որ ըստ Liber Notitix Sanetorium Mediolaniի ծանօթութիւններուն, Միլանի Արքեպիսկոպոսական աթոռը բարձրացած էր «պատուական հոգեւոր հօր եւ քաջ հովիւի մը» համբաւով փոստուորեալ (Յար. Ունճեան. Արեւ. 10 Ապրիլ 1929):

Պարոյրին աշակերտած էին Ս. Բարսեղ Կեսարացի և Գրիգոր Նազիւնզացի, երկու Եկեղեցւոյ Ս. Հայերը, որոնց նախնիքը Հայաստանէն եկած էին և հետեւաբար ծագումով Հայ (***) դասընկեր ունենալով ուրիշ Հայեր, որոնց անունները դժբախտաբար անծանօթ կը մնան:

Անոնցմէ ոմանք կը ճանչնային Բարսեղը, վասնզի մէկ քանիները Կեսարիոյ մէջ իր աշակերտակիցներն եղած էին, իսկ տարիքոտները իր

(*) Եփրատի արեւմտեան կողմը գտնուող Փոքր Հայքը (Armenia Minor) Պոմպէպի կարգադրութեամբ Հռոմէն անկախ պատկանեալ տէրութիւն մը եղաւ պահ մը:

(**) Իր ուսումը առած է ճախ Անտիոք, Ուլպիանոսի ճարտարապետութեան Լատրանի մէջ եւ ապա Աթէն՝ ուր աշակերտած է Յուլիանոս Կապադովկիացիին, որուն վեց յարդներէն մէկը եղած է եւ հատուցած՝ անճամար բուով աշակերտներ: Նախանձարդներու զրպարտութեամբ անտրուեցաւ, սակայն դարձաւ Աթէն, ուր իր գերագոյն կարողութիւններ ցոյց տուաւ: Կոստանդի կայսր զայն Յրաքսոս հրախրեց ճախ եւ ապա Հռոմ դրկեց, ուր ճերմոյեայ մը խօսեցաւ Հռոմի վրայ եւ գարմանք պատճառեց: Հռոմայեցի կանգնեցին իր պիսիճէ արձանը սա արձանագրութեամբ Regina rerum Roma, Regi Eloquentiae (Քաղսիսի Հռոմ թագուորին Բանին): Հռոմէն դարձաւ Աթէն, եւ իր մահէն հինգ տարի առաջ Յուլիանոս Ուրացորը (361—363) չճերմոյեալ համար հրաժարեցաւ իր դասախօսք պատճառէն: Մեռաւ 95 տարեկան:

(***) Կոկիսոն հիմա Կէօփու, Հանքի եւ Ջէրմի հիւսիսակողմը եւ մեծ էր Կապադովկեան Կոմմաչի: Ոմանք Մովսէս աշխարհի մաս կը նկատեն:

(****) Այս պարագան կը յիշեցնէ Գր. Նազիանզացի, Ս. Բարսեղի ուղղուած նամակի մը մէջ, Յուսեպ իսկ գարմանք պատճառելով (Հ. Գ. Նախապետեան. ԲՁՄԳ. 1931. 12):

հօրը դասերուն հետեւած էին: Բայց այս յիշատակները փոխանակ անոնց մէջ համակրանք ստեղծելու անոր հանդէպ, ընդհակառակը անոնց նախանձը կ'աւելցնէին: Հայ և Կապադովկիացի աշակերտներուն միջեւ խուչ հակառակութիւն մը կար: «Հայ ուսանողները պարզ եւ անկեղծ չեն» կ'ըսէ Գրիգոր Նազիանզացի (ԼՈՅՄ. 1905. 705):

Նոյնպէս, կը յիշուի Անտիոքի մէջ Լիբանիոս սոփեստ և ճարտասան, որուն հոչակը Անտիոք կը քաշէ ամէն կողմէ, մասնաւորապէս Փոքր Ասիայէն և Մերձաւոր Ասիայէն, աշակերտներ (Christ. Geschichte des Griechischen Literatur. II. 2. S. 1212. և ՀԱ. 1935. 506): Անոր աշակերտներուն մէջ նշանաւոր հանդիսացած էին Յովհ. Ոսկեբերան, Մեծն Բարսեղ, Գրիգոր Նազիանզացի, և Թէոդորոս Մոպսուեսթիացի, և ապահովաբար շատ մը Հայեր և Հայածին Փոքր Ասիացիներ, և նոյնիսկ մեր Ս. Մաշտոցը, որ ըստ Հ. Ակինեանի հաւանօրէն 380 ին աշակերտած պէտք է ըլլայ Լիբանիոսի՝ Անտիոքի մէջ (ՀԱ. 1935. 506):

Լիբանիոսի աշակերտներուն մէջ էր նաեւ Ղեւոնդիոս Հայկազն, թեոքրեւս բուն Հայաստանէն, որ իբր սոփեստ և բանաստեղծ անուանի եղաւ և Ն. դարու երկրորդ տասնեակին (այսինքն 410—420), Աթէնքի համալսարանին ուսուցչապետութեան կոչուեցաւ (Christ. ցոյց և Հ. Ն. Ակինեան. ցոյց):

Նշանակելի է որ Հայ ծագումով և Կապադովկիացի Գրիգոր Նազիանզացի «Աստուածաբան», նոյնիսկ բազմած է Պոստոյ Օրթոտոքս տիեզերական պատրիարքութեան ակթոն վրայ (379—381): Իսկ աւելի ուշ (417 ին), նոյն ակթոն վրայ բազմած է Ատտիկոս պատրիարք՝ ազգով Հայ և Սեբասացի:

Բ., Գ. և Դ. դարուն, այս ընդարձակ երկիրներուն մէջ Հայերը եթէ գերակշիռ թիւ մը չունենային, ինչպէ՞ս պիտի մեկնուէր Մելիտինէն կեդրոն ունեցող Շանքահարաց (կամ Շանքահարեայ) լեգէոնին զինուորներուն մեծամասնութեամբ Փոքր Հայքէն և Հայեր ըլլալը (տես. վերը 126) և կամ Թէոդոս կայսեր 378էն 386 ի տեղները այս շրջանակներէն երկու վարչական բաժանումներ կազմելը, Առաջին Հայք (գլխ. քաղաք Սեբաստիա և Սատաղ) և Երկրորդ Հայք (գլխ. քաղաք Մելիտինէ) անուններով, (Guterbock. Romisch-Armenien S. 5223. Հիւպչման. Հին սեղւոյ անունները էջ 75), դուրս Հռոմեական Հայաստանէն, որ կը բաղկանար գլխաւորապէս Փոքր Հայքի դրացի Եկեղեցաց գաւառէն, Դերջանէն, Խորձեանէն, Կարինէն և ինչ Հռոմեական սատրապութիւններէն, ինչպէս Մոփքէն, Անգեղ Տունէն և այլն:

Այս երեքնեկապադովկիոյ մաս նկատուած ընդարձակ երկիրներուն Հայք կոչուած ստանալը՝ չէր կրնար ուրիշ ոեւէ իրողութեան արդիւնքը ըլլալ, եթէ ոչ բնակչութեան մեծամասնութեան Հայեր ըլլալուն, որուն ապացոյցները բազմաթիւ են:

Ասոնց մէկ գլխաւորն ալ այն էր որ, Սեբաստիոյ, Նիկոպոլսոյ, Սատաղի, Կողոնիոյ եպիսկոպոսները ընդհանրապէս Յոյն կրթութիւն ստա-

ցած և անուշով ալ յունացած՝ ծագումով Հայեր եղած են: Նիկիոյ տիեզերական Ս. Ժողովին (325 ին) մասնակցած են Եւլալիոս՝ Սեբաստիոյ, Նիկիտիոս (=Յուսիկ)՝ Կոմանայի, Եւթիոս՝ Սատաղի և Սատիկէս եպիսկոպոսները՝ չորսն ալ Հայ:

Եւթիոսէն վերջ, Սատաղի եպիսկոպոս եզաւ Կիւրեղ, որուն դէմ ժողովուրդը զրգռուած և ըմբոստացած էր և Կապադովկեան եկեղեցւոյ նշանաւոր պետը՝ Հայ ծագումով Ս. Բարսեղ, ստիպուեցաւ անձամբ երթալ Սատաղ և հաշտեցնել հօտը իր հովիւին հետ (Պատմ. Հայ Կեսարիոյ. 290): Նաեւ կը յիշուի Ս. Բարսեղի ժամանակակից Սեբաստիոյ Եւստաթիոս եպիսկոպոսը, նոյնպէս ազգով Հայ, որուն հայրը Կեսարիոյ արքեպիսկոպոս եղած էր (Սոկրատ. Եկեղեցական Պատմութիւն):

Եւստաթիոս, կը համարուի Հայաստանի, Պափլագոնիոյ և Պոնտոսի վանականութեան գլխաւոր զարգացնողը (Սողոմոնոս. Եկեղեցական Պատմ. Դուրեան. Ազգ. Պատմ. 255) (*):

Խստաբարոյ Եւստաթիոս նշանաւոր հանդիսացած է իբր ճարտար, գործունեայ, յաջողակ այլ յեղյեղուկ, ըմբոստ և անհանդարտ եկեղեցական մը (ԲՉՄՊ. 1932. 352): Գրիգոր Նազիանզացի դայն կը կոչէր «խուժաղուժ Հայ»:

Դարձեալ Դ. դարուն (362 Օգոս. 18), կը կատարուի ի Կանչի (Չուգուրհիւար, Ֆունուզի մօտ) Ստեփանոս Ունեցիի վկայաբանութիւնը — որուն վաւերականութեան վրայ կարելի չէ պնդել — որ փաստ մըն է թէ Հայերով լեցուն էր լեռնային Կիլիկիան, սւր ծնած էին Սուրբը և վկայակիցները, և կը բնակէին Կոկիսոն (Օրմոնեան. Ազգապատմ. 187—188. Յայսմաւուր. 1730. 20. Աւգէրեան. Վարք Սրբոց Ե. 89. Ալիշան. Սիւուան. 184):

Ասոնք ամէնը ցոյց կու տան թէ՛ Եփրատի արեւմտեան կողմը, Մելիտինէ (=Մալաթիա) և Սեբաստիա իրենց շրջականերով, ինչպէս նաեւ Կապադովկիա, մասնաւորապէս Կեսարիա՝ իր շրջակայքով, մինչեւ Կիլիկիա, մեծ թուով Հայ բնակիչներով լի էին, Հռոմեական տիրապետութեան սկիզբէն մինչեւ Ն. դարուն սկիզբը: Ասոնք յետոյ կրօնական միութեամբ բոլորովին ձուլուեցան տեղացի տարրերու հետ և Բիւզանդացի դարձան (**): Այսօր կարելի չէ որոշ և պատմական վաւերագրիչներով խօսիլ իրենց վրայ՝ Քրիստոնէութիւնը ջնջած է անոնց մէջ ազգային ոգին և տիեզերական եղբայրակցութեան իր գաղափարականովը ընդհանուր միութեան մը մէջ ձուլած է զանոնք, այնպիսի շրջանի մը մէջ երբ հայերէն գիր և դպրութիւն գոյութիւն չունէր դեռ:

Ասոնք թէեւ կը պահէին իրենց լեզուն, սակայն կը յարաբերէին և կը խառնուէին և իբր եղբայր կ'ապրէին՝ առանց ոեւէ խտրականութեան

(*) Բրոժ. Լոօժա կը կարծէ թէ Սողոմոնոսի Հայաստանը այս պարագային Բիւզանդական Հայաստանն է:

(**) Այս վայրերու վերջին ժամանակներու Հայեր ցառ վերջ կրկին գաղթած են Մեծ-Հայքէն:

տեղացիներու հետ, որոնց հետ պիտի խառնուէին և ձուլուէին անշուշտ, առանց Բիւզանդական պետութեան կողմէ քիչ յետոյ ընդգրկուած ներքին անտեղիտալի քաղաքականութեան որուն նշանաբանը եղաւ պետութեան բոլոր բաղկացուցիչ տարրերը ձուլել և կազմել նոր ազգ մը՝ Բիւզանդացին, մէկ կրօնքով և մէկ լեզուով միացած:

Բիւզանդիոն արդէն ցոյց կու տար իր ձգտումը նոյնիսկ Ծ. դարուն սկիզբը, Հայ գիրերու գիւտէն յետոյ, արգիլելով Հայերէն լեզուին ուսուցումը և պարտադրելով՝ Յունարէնը, ինչպէս նաեւ արգելք դնելով Հայոց կաթողիկոսին իր հոգեւոր իշխանութիւնը գործադրելու Հայաստանի Յունական բաժնիի Հայոց վրայ: Հակառակ այս բացորոշ հայածանքներուն, սակայն, Հայերը միշտ Բիւզանդական երկիրներ գաղթած են, երբ ինքզինքնին հարկադրուած զգացած են իրենց Մայր-Հայրենիքէն հեռանալու:

Այսպէս, հետզհետէ անոնց թիւը շատցած է և Ծ. դարուն, Փոքր Հայքի և Եփրատէն Ալիս և Կիլիկիա տարածուած շրջաններուն մէջ, սնկասկած, հայկական ծագմամբ բնակչութիւնը ո՛չ միայն մեծամասնութիւն կը կազմէր, այլև տակաւին կը պահէր իր լեզուն ու ազգութիւնը:

Նոյնիսկ Բիւզանդական պետութեան մայրաքաղաքը՝ Կ. Պոլիս, հաւանօրէն ունէր Հայ բնակչութիւն, մեծ մասամբ արքայազուն և նախարարական պատանդներ, ինչպէս կը յիշատակուի 364ին Ներսէս Պարթեւ Հայրապետի Կ. Պոլիս այցելութեան առթիւ:

Մինչև մայրաքաղաք յառաջացող այս գաղթականներու զաւակներն էին որ Ծ. դարուն սկիզբէն սկսեալ գործօն դեր մը կատարել կ'սկսին Բիւզանդական կայսրութեան մէջ իրենց զինուորական տաղանդը ցոյց տալով:

Այսպէս, կը յիշուի Հայ զինուորական մը՝ Arbazacius անուն, որ Ծ. դարուն սկիզբը պետութիւնը ծանր տաղնապէ մը կը փրկէ:

Գոթերուն ոչնչացումով, Արեւելքը գրեթէ առանց բանակի ձգուած էր և Իսաւրոսցի յելուզակներ կ'ահարեկէին արեւելեան Փոքր Ասիան և Սուրիան, ուր անոնք աէր կը դառնային Սելեւկիայի (403 Փետր.) և նոյնիսկ մինչև Կիպրոս կ'անցնէին: Arbazacius կարգ մը յաջողութիւններ կ'ունենայ անոնց դէմ, սակայն իբր կաշառակեր կասկածի կ'ենթարկուի և 404ին ետ կը կոչուի, բայց կը յաջողի պատիժէ զերծ մնալ՝ շէնորհիւ Եւտոքսիա կայսրուհիին ազդեցութեան (E. W. Brooks. Cambridge Kings Collegeի Բիւզանդագէտ ուսուցչապետը. տես. The Cambridge Medieval History. Ա. ԺԵ. 461):

Ահա թէ ինչպէս Հայ և օտար, մասնաւորապէս Յոյն և Հռոմայեցի պատմիչներու տուած մասնակի տեղեկութիւնները, որոնք հեռի են լիակատար ըլլալէ և սոսկ ընդհանուր գաղափար մը կու տան, մեզի կը համոզեն թէ որքան ստուար թուով գաղթած էին Հայերը. դէպի արեւմուտք, Բիւզանդական կայսրութեան հողերը, Ծ. դարուն սկիզբները, երբ Արշակունեաց թագաւորութիւնը կը կործանէր:

Իսկ երբ հարց կը ծագի որոնելու Հայաստանէն դէպի արեւելք, մասնաւորապէս Պարսկաստան գացող կամ տարուած Հայերու կեանքը, զժբխտաբար գործը աւելի կը դժուարանայ, վասնզի մեր տեղեկութիւնները շատ աւելի սահմանափակ են և ոչ-շարայարեալ, վասնզի, ինչպէս յայտնի է, Պարսիկ-Պարթեւ աղբիւրներ գրեթէ գոյութիւն չունին և հին շրջաններու համար՝ առասպելներէ և զրոյցներէ դուրս ուրիշ ոչինչ հասած են մեզի Հայ պատմագիրներու միջոցաւ, իսկ Յոյն և Հռոմայեցի պատմիչներէ՝ դոյզն և անուղղակի տեղեկութիւններ միայն: Հետեւաբար, դէպի Արեւելք, այսինքն Պարսկաստան տարուած Հայ գաղթականութիւններու կամ բռնի տարագրեալներու գոյութիւնը անխուսափելի նկատելով հանդերձ մինչև Սասանեանց տիրապետութիւնը (226 Քր. է յետոյ), զժբխտաբար ո՛չ մէկ հետք կամ մատենագրական տեղեկութիւն մեզի հասած է յետնագոյն ժամանակներէ, որոնք մեզի ընձեռեն այդ գաղթականութիւններուն վրայ ամենադոյզն տեղեկութիւն մը և գոնէ ոեւէ ազօտ գաղափար մը տան անոնց կեանքին և որպիսութեան վրայ:

Աւելորդ է կարծեմ կրկնել թէ Հայք շատ աւելի սերտ յարաբերութիւններ, առնչութիւններ և հանդիսութիւններ ունեցած էին Պարթեւներու հետ և իրենց միջև լեզուի, բարձի և նկարագիրներու կապեր կային:

Այնպէս որ, Հռոմի հետ յարաբերութիւններու բերմամբ եթէ Հռոմի և Պոլսոյ հետ երթեւեկ գոյութիւն ունէր, աւելի հաւանօրէն նոյն երթեւեկը կար նաեւ Տիգրանի հետ, որ մինչև 226՝ Սասանեանց հաստատութիւնը, Հռոմի դէմ մաքառող ուժն էր Հայաստանի տիրապետութեան համար և իր կարգին, անընդհատ, Հայոց զահուն վրայ իրեն հնազանդ և անձնուէր վեհապետ մը դնելու աշխատած է՝ հակառակ Հռոմի կամքին, ինչպէս են Վոնոն Պարթեւ (16—17) (*), Արշակ (34—35)՝ Պարթեւաց Արտաւան Գ. Թագաւորին որդին, Պարթեւ մարզպաններ (37—45), Տիրիթ (53—60 և 62—75)՝ Պարթեւ Թագաւորին եղբայրը, Աշխադար—Արտաշէս (95—113), Պարթեւ Բակուր Բ.ի (78—108) որդին, Պարթամասիր (113—114), Պարթեւաց Խոսրով Բ.ի (108—121) որդին, Բակուր (162)՝ եղբայրը Պարթեւաց Պերոզ Թագաւորին (148—190), և այլն:

Իսկ Սասանեան պետութեան հաստատութենէն յետոյ, ինչպէս տեսնուեցաւ, բռնապաղթեր անընդհատ կատարուած են, պատերազմներու միջոցին կամ անջատաբար (**): Իսկ ինքնակամ մեկնողներու յիշատակու-

(*) Ասիկա՝ թէև Պարթեւ՝ Հռոմէն նշանակուած էր եւ յետոյ Հռոմ փախաւ:

(**) Տեսնել վերը՝ Փաւսոսի եւ Խորենացիի բոլոր յիշատակութիւնները որոնք կը բուէին Շապուհի կասարած սարգուսթիւնները: Խորենացի (Գ. ծգ), անոնցմէ զոս, կը յիշէ թէ՛ Շապուհ Պարսիկ. Հայաստանի վրայ չորս անգի (416—419) բազաւորել յետոյ, երբ հօրը հիւանդութեան լուրը առնելով կը փախայ Պարսկաստան շիրուստ տեղակայի՞ն երա՛մայելով գորտզիլի ունին զվեծամեծս Հայոց եւ տանիլ ի Պարսս, ինչ որ կը նշանակէ թէ առանց պատերազմի ալ այս սեռակ բաներ կ'ըլլային:

թիւնը չունինք և շատ ալ հաւանական չէ, վասնզի քրիստոնէութենէն յետոյ, Հայերը նախընտրած են մանաւանդ քրիստոնէոսայ երկիրներ երթալ, ինչպէս տեսնուեցաւ նոյնիսկ Հայ պատմիչին վկայութեամբ, (վեբը 123):

Բայց արքունիքներու յարաբերութիւնները չեն դադրած, վասնզի Սասանեանք փորձած են Հայաստանը կառավարել իրենց կողմէ նշանակուած թագաւորներով կամ մարզպաններով:

Առաջինը անոնց եղաւ Արտաւազդ «թագաւոր» (254—270?), զոր Սասանեանք դրած էին Հայաստանի վրայ և որ հաւանօրէն Պարսիկ մըն էր: Ետպուն Բ. (309—379) կը փորձէ իր ներսէն եղբայրը Հայոց թագաւոր դնել 310ին, սակայն չի յաջողիր, Հայոց ընդդիմութեան պատճառով:

Քանի մը անգամ եւս կը փորձեն Պարսիկները ուղղակի կառավարել Հայաստանը (Առաւան Հազարապետ 387—400 և Պարսիկ մարզպաններ 409—421), մինչեւ որ 428ին վերջ կու տան Հայոց թագաւորութեան:

Իսկ գտնուած են բնիկ Հայ թագաւորներ, ընդդիմադիր Հռոմի, ինչպէս Վաղարշ (117—139), որ յետոյ Պարսկաստան գոցած է, և Հռոմի բարեկամ թագաւորներ, ինչպէս Տիրան (328—339), Արշակ Բ. (339—363), Փառանձեմ թագուհին (363), և այլն, որոնք Պարսկաստան փախած կամ իբր գերի հոն առաջնորդուած են:

Այս ամենաերա յարաբերութիւնները, բնական է ստեղծած են երթեկներ Տիրոսի և Հայաստանի միջեւ և Հռոմէական տիրապետութեան հակառակորդ նախարարներէն շատեր յաճախ իբր փախստականներ գացած են Պարսից դուռն: Այսպէս, պատմութիւնը կը յիշատակէ թէ Մանուէլ Մամիկոնեանը՝ որ Վարազդատի ատեն (374—380) Պարսկաստանէն կու գայ և կ'ատանանէ սպարապետութիւնը ինքնաբերաբար և կը վանէ Հռոմէն զրկուած Վարազդատը:

Ինչպէս Հռոմայեցւոց, նոյնպէս նաեւ Պարսիկներուն հետ, Հայերը ունեցած են զինուորական յարաբերութիւններ: Ինչպէս Հռոմ Հայաստանի մէջ բանակ պահած է, նոյնպէս նաեւ այն շրջաններուն որ Հայաստան Սասանեան հովանաւորութեան տակ գտնուած է, Հայաստանի մէջ Պարսիկ զօրք պահուած է: այսպէս, Սուրէն Պարսիկ 10.000 ձիաւոր զօրքով Հայաստան եկած է 380ին, Զարմանդուխտ թագուհիին պաշտպանութեան համար, ինչպէս Առաւան (=Ձիկ) իբր խնամակալ Սոսրով Գ.ի (385—387) Հայաստան եկած է բանակի մը հետ:

Հայերը, ինչպէս Հռոմայեցւոց նոյնպէս նաեւ Պարսիկներուն երբ բարեկամ և դաշնակից եղած են, հաւանօրէն զինուորականապէս իրենց օժանդակութիւնը չեն զլրացած և այս առթիւ Պարսիկ բանակներուն հետ հեռուոր ու անձանօթ երկիրներ գացած են: Թէեւ մինչեւ Ս. դարուն երկրորդ կէսը յիշուած չէ, սակայն շատ հաւանական է որ, ինչպէս այդ թուականէն յետոյ, Հայ հպատակներու բանակները իրենց ծառայութիւնը մատուցած են, նոյնպէս նաեւ անկէ առաջ, Հայ նախարարներու ձեռքին տակ՝ Հայ զինուորներ՝ գացած են կուսակալ Պարսիկ բանակին հետ, պե-

տութեան սահմանադրութիւններուն վրայ, որոնց վրայ Հայ զաղթականներ զիսկողուած են, Պարսիկ թագաւորներու կարգադրութեամբ, անշուշտ թէ՛ Հայաստանը գատարկացնելով տկարացնելու և թէ՛ պետութեան սահմանադրութիւնները ամրացնելու կրկնակ դիտումներով: Այսպէս, ինչպէս արքէն տեսնուեցաւ, կատարուած են բազմաթիւ բնակչութեան տեղափոխութիւններ դէպի Պարսկաստանի երկու վտանգուած սահմանադրութիւնները, որոնք էին Եփրատ-Տիգրիսեան շրջանակը (*) և Թուրքաստանի անապատներուն սահմանները (**):

Առաջինը Բիւզանդական կայսրութեան, իսկ երկրորդը՝ Սկիւթացի կամ Քուշանք կոչուած բարբարոս ժողովուրդներու յարձակման վտանգին տակ կը գտնուէր:

Ս. դարուն, Սագաստանի և Վրկանքի կողմերը հաստատուածները՝ զինուորականութեամբ, իսկ ինժեանստան բնակողները՝ արքունի հողերու մշակութեամբ կ'զբաղէին (Եղիշե. 1893. 349. 356—9 և այլն), այնպէս որ, մահաբերաբար կրնանք խորհիլ թէ աւելի առաջ փոխադրուածներն ալ հոն տեղերը, պէտք է նոյն նպատակին ծառայած ըլլան:

Քրիստոնէութենէն առաջ Պարսկաստան տեղափոխուած Հայերը, աւելորդ է ըսել թէ Պարսիկ զանգուածին մէջ կորսուած են, վասնզի Հայ և Պարսիկ ազգերու մէջ կրօնքի, լեզուի և բարուց նմանութիւնը չափազանց շեշտուած էր, և անկարելի էր որ Հայերը տոկային: Քրիստոնէութենէն յետոյ է որ երկու ազգերուն միջեւ խրամ բացուեցաւ և կրօնական հակառակութիւն առաջ եկաւ:

Հայերը երբ իրենց ակնարկը արեւմուտք դարձուցին, Պարսիկները չհանդուրժեցին, և աշխատեցան Հայերը դարձեալ իրենց կրօնակից ունենալ: Այդ նպատակաւ իսկ, փորձեր ըրին կրօնական գետնի վրայ Հայերը կրկին իրենց միացնելու և անոնց դէպի արեւմուտք ունեցած հակուածին դէմ պայքարելու, հետեւաբար, իրենք ալ ճնշողական միջոցներ կիրարկեցին Բիւզանդացւոց նման, Հայերուն իրենց լեզուն պարտադրելով և մասնաւորապէս յունարէնի ուսումը և գործածութիւնը արգելելով (363—369) և կրօնական հալածանքներ գործադրելով (տես. վերը 132):

Տիրող այս պայմաններուն մէջ, բնական է ենթադրել թէ շատ քիչ Հայեր կամաւորապէս Պարսկաստան գացած են Սասանեանց հաստատութենէն յետոյ, թէեւ բռնի տեղափոխութիւններ եղած ըլլան:

(*) Մեր նախնիք կը կոչէին Ասորեստան եւ Խուստան, որոնք կը համապատասխանեն այսօրուան Պարսասի եւ Մուսուլի (=Ասորեստան) եւ Պարսիսի եւ Ծոփ (=Խուստան) երկրներին: Հնագոյն արեւմտագրութեան մէջ Susiana, Cissia, Elami անունով յիշուած նահանգը մեր նախնիք Ծոջաստան կը կոչէին:

(**) Այս երկիրները նախնիք կը կոչէին Սագաստան (այսօր Խորասան, Աճղանիստան եւ Թուրքաստան) մասամբ) եւ Վրկանք (այսօր Մագանդարան): Եղիշե սեղ մը (359) կ'ընէ Քաշուրի յիւստակոյրիները, որ եթէ Թուրքաստանի համանուն բաղաձայն է, յայտնապէս գրեւորուած կ'ըլլայ այն սահմանը որ Սագաստանի կը տրուի:

Այս Հայ գաղթականները, ցաւալի է ըսել թէ անհետ կորուսած են յետոյ, յաջորդ դարերուն, Գարսիկ զանգուստին մէջ խառնուելով:

Մինչեւ Արշակունեաց կործանումը, Հայերը տարածուած են նաև մասամբ դէպի հիւսիս Արդէն Քր. է առաջ 190 ին երբ Արտաշէս և Զարեհ տէր դարձան Հայաստանի, Արտաշէս իր երկիրը ընդարձակելու համար, ի մէջ այլոց, գրաւած է «ի Վրաց՝ գլեռնակողմն Պարիադրեայ, զԽորգնէ եւ Գոգարենէ յայնկոյս Կուր գետոյ» (Ստրաբոն. ԺԱ. 14. 5), ինչ որ, ըստ Հիւլաշմանի մեկնութեան, կը համապատասխանէր Տայքի, Կղարջքի կամ Կաղարջքի և Գուգարքի շրջաններուն (*), այնպէս որ, երկու ժողովուրդները այդ նահանգներուն մէջ իրարու խառնուած են և ունեցած՝ առանձնայտուէկ նկարագիր մը, առանձին ազգ մը նկատուելու աստիճան, ինչպէս Յովհաննէս կաթողիկոս (1867 Երուսաղէմ. 34. 85. 115. 177) կ'ընէ յաճախ Գուգարացիները, Եգերացւոց, Վրաց և Ուտէացւոց հետ յիշելով իբր դրացիք «դրացիք մեր եւ ազգք որ շուրջ զԵսոփ են» (Յովհ. Կաթ. 321):

Հետաքրքրական է որ, Հայերը, որոնք այդ նահանգները իրենց տիրապետութեան տակ առած էին 190 ին, միշտ զանոնք Հայաստանի մասերը կը համարէին, մինչ Վրացիք ալ իբրև հին բնիկները երկիրին, իրենց հայրենիքին անբաժան մասը կը համարէին այդ գաւառները: Կուր գետը իբր սահման ընդունուած է երկու երկիրներուն միջեւ, սակայն ասիկա շատ անհաստատ սահման մըն էր, վասնզի երբեմն Հայերը անցած են Կուրը և երբեմն ալ՝ Վրացիք:

Քր. ի Ա. դարուն վերջերը, ամբողջ Վրաստան Հայաստանի կը հնազանդէր (**), (Brosset. Histoire de la Georgie. Ա. 65), իսկ փոխադարձաբար, երբեմն ալ Հայաստան ունեցաւ իրեն Վրացի թագաւորները (Գաթրճեան Բ. 107), ինչպէս Միհրդատ (35—37 և 45—51)՝ Վրաստանի Փարսման թագաւորին որդին, որ Վրացի գործով եկաւ տիրել Հայոց գահուն, և Հուգամիդա կամ Հուամիդա (51—53), որ Հուսէն զրկուեցաւ Հայաստան:

Հայ և Վրացի յարաբերութիւնները շատ սերտ եղած են և երկու ազգերը, իբր անմիջական դրացիներ, ունեցած են շատ մեծ շփումներ իրարու հետ, ոչ միայն սահմանազուլի վրայ իրարու հետ խառնուելով, այլ նաև՝ կրօնական, քաղաքակրթական և մշակութային: Ն. Մառ (Երգ Երգոցի մեկնութեան վրացերէն քարգմանութիւնը. 1902. 4), ինչպէս նաև

(*) Խորենացի (Բ. ը) կ'աւանդէ թէ Վաղարշակ Ա. կը կարգէ շահապաշտութիւնը և զիստ ազգն և ճանապարհուստեան անուց կարողայ բոլորիս Գուգարացւոց: Marquart կ'ըսէ թէ Տայք, Գուգարք եւ Կղարջք միացեալ՝ այս բոլորսն են քակայ էին: Խորենացի (Բ. ծ) համաձայն, անոր իշխանութիւնը մինչև Պոնտոս կը տարածուէր:

(**) Խորենացի (Բ. կ) 330 ին կը յիշէ Միհրան «առաջնորդ Վրաց եւ բոլոր Գուգարացւոց», մինչ Միհրան քաղաւոր էր Վրաց ընդ գերիխառնութեամբ Հայոց:

(Հայ-Վրացական յարաբերութիւնների մասին անցեալում. ՄՈՒՐԺ. 1898. և ԱՐԱՐԱՏ 1897. 75—8) կ'ըսէ՝ Վրաց «Տարեգրութեան» մէջ կը պատմուի թէ երբեմն Վրաց լեզուն Հայերէն եղած է, բայց յետոյ բազում ազգերու խառնուելով՝ Վրաց լեզունով խօսելու սկսած են: Մառ կը յարէ թէ «Գիտութիւնը, արդէն յայնի է, Հայոց լեզուն ճանչցած է որպէս արիական (Հնդիկ-Եւրոպական) եւ իրաւամբ: Մեր լեզուագիտական աշխատութիւններուն մէջ մեզ անելի հեռուն գացինք եւ այն համոզման եկանք որ Հայոց լեզուն մէջ կայ խաւ մը որ ցեղակից է Վրացերէնին եւ այդ խաւը բնաւ Վրացիներէն չէ առնուած. ստորալուծելու համար՝ Վրացերէնը իբր հիմնական նշանակութիւն ունի: Վրացերէնի եւ Հայոց լեզուներու այդ գեներիկական կապը ցոյց կու տայ ո՛չ թէ Վրացիներու մեակութային ազդեցութիւնը Հայոց վրայ եւ ընդհակառակն, այլ այն՝ որ յանձինք թէ՛ Հայերու եւ թէ՛ Վրացիներու՝ մեզ կը տեսնենք սերունդները երկու եզրայր ազգերու, որոնք յետոյ, բաժնուեցան այլեւայլ ազգագրական եւ լեզուաբանական, մասամբ նաև մեակութային եւ քաղաքական ազդեցութիւններու հետեւանով»: Տայեան (Ուսումն Գասակոց Հայերէնի. 486.) և Աճառեան (ԱՐԱՐԱՏ. 1898. 311 և այլն և ՎՏԱԿ. 1901. 233—4), երկուքն ալ կեղինակաւոր դէմքեր, համաձայն են հաստատուելու թէ Կովկասեան լեզուներէն շատ քիչ բան մտած է Հայերէնի մէջ, մինչ անթիւ են Հայերէն բառեր Վրաց լեզունին մէջ:

Ասիկա իսկ փայլուն փաստ մըն է թէ Հայոց ազդեցութիւնը անելի մեծ եղած է Վրաց վրայ, և ասիկա, շնորհիւ այն հանգամանքին որ Հայերը յաճախ Կուրի հիւսիսային կողմը անցած և Վրաստանի անելի խորագոյն աշխարհները և ներքին գաւառները նուաճած, և մեծ հաւանականութեամբ, հոն տեղերը հաստատուած են: Վրաստանի ամէնէն զուտ-վրական վայրերն են Մցխէթա՝ հին մայրաքաղաքը և Քիֆլիս՝ նոր մայրաքաղաքը, որոնք այնքան մօտ են Գուգարքի որ, կրնանք առանց սխալած ըլլալու ենթադրել թէ՛ ամենահին ժամանակներէ սկսեալ Հայ բնակիչներ պէտք է ունեցած ըլլան:

Նոյնպէս Աղուանից աշխարհը, որուն սահմանին վրայ էին Արցախ, Ռատի և Փայտակարան նահանգները, պահած էր իր օտարացի և օտարալեզու բնակիչները, մինչեւ որ քրիստոնէութիւնը զանոնք Հայացուց թողորովին: Սիւնիքէն անդին տարածուող երկիրները թէև Հայաստան նկատուած են երբեմն, սակայն իրապէս Հայ ցեղին տիրապետութեան տակ չեն ինկած:

Արշակունեաց սկիզբը կը սահմանափակուէր այդ երկիրը Կուր և Արազան գետերու և Կովկաս լեռներու և Կասպից ծովու միջեւ (Պորեհացի Բ. ը. և Մովսէս Կաղ. Ա. հա. դ.): Զանազան ցեղերու (Գուգարացիք, Գարդմանցիք, Ուտիացիք, Մովդէացիք, Կասպիական ցեղեր, Լփնիք, Ծիղրք և այլն) բնակավայր եղող այս բաւական ընդարձակ երկիրն մէջ, Հայերը հաստատուած են ամենահին ժամանակներէ սկսեալ, մասնաւոր այն մասերուն մէջ որոնք երբեմն Հայոց տիրապետութեան տակ

եղած են: Քրիստոնէութիւնը՝ Հայոց միջոցով այս երկիրին մէջ տարածուած ըլլալով, խորունկ եղած են երկու ազգերու յարաբերութիւնները և փոխադարձ առնչութիւնները:

Հայաստան, ունեցած է նաեւ սերտ յարաբերութիւն Պոնտոսի հետ, որ իր ծովային յարաբերութեան ուղին և իր դրացի երկիրներէն մէկն էր, որուն հետ քաղաքական յարաբերութիւններ ալ ունեցած է Մեծն Տիգրանի ժամանակ:

Հայերը հոն եթէ ոչ շատ մեծ թուով, զոնէ որոշ չափով մը անպատճառ պէտք է հաստատուած ըլլան:

Եգեթացիք, որ արդի Լազերու նախնիքը կը համարուին, Հայերու միջոցով քրիստոնէացած են և այս պատճառով ալ յարաբերութիւններ ունեցած են երկու երկիրները:

Հայերը՝ դէպի հիւսիս իրենց ծաւալումին մէջ՝ միայն Վրաստան, Աղուանից աշխարհ և Պոնտոս հաստատուելով չեն բաւականացած: Նոյն իսկ քրիստոնէութենէն առաջ, առեւտրական հաղորդակցութիւններ ունեցած են Կասպից և Սեւ ծովերու եզերքները բնակող ժողովուրդներու հետ, որոնց կը ծախէին Հնդկաստանի և Բաբելոնի թանկագին ապրանքները: Ինչպէս արդէն տեսնուեցաւ (վերը 84), Պորթնացի և Ստրաբոն կը հաստատեն թէ Հայերը կը դեգերէին Կասպից ծովուն շուրջը:

Հայերու յարաբերութիւնները «Հիւսիսայնոց Աշխարհ» կամ «Սարմատացիք» կոչուած շրջանակներուն հետ աւելի եւս զարգացան, երբ քրիստոնէութիւնը Հայոց միջոցով մուտք գաւաւ Աղուանից երկիրը և այնտեղէն ալ Հոնաց աշխարհը տարածուեցաւ: Այս սերտ յարաբերութիւններուն հետեւանօք է անշուշտ որ աւելի ուշ ժամանակներու մէջ Հոնք նաեւ գտնուեցան Հայոց դաշնակիցներուն մէջ և Հայոց հետ կուռեցան Պարսից դէմ կրօնական պատերազմներու միջոցին:

Գալով Հայաստանի հարաւային կողմին, արդէն տեսնուեցաւ թէ Մեծն Տիգրան ինչպէս իր պետութիւնը ընդարձակած էր դէպի հարաւ, և այս պատճառով, այդ օրերէն սկսեալ Հայաստանի հարաւային կողմը գտնուած երկիրներուն մէջ Հայեր հաստատուած էին: Առեւտրական ուղիներու վրայ գտնուող, ինչպէս նաեւ իբր երկրագործական երկիրներ մեծ նշանակութիւն ունեցող այս շրջանակներուն մէջ Հայերու բնակութիւն հաստատուած ըլլալը անժխտելի իրողութիւն մըն է, քանի որ Հայերը, ամենահին ժամանակներէ սկսեալ, իբր վաճառականներ անժխտելի ձեռնհասութիւն և ապրանքներու փոխադրութեան մէջ մեծ ճարպիկութիւն ցոյց տուած են:

Ուստի, անկարելի է որ այս երկիրներուն հետ յարաբերութիւն ունեցած չըլլան, երբ Հնդկաստանի ճամբան իսկ իրենց անձանօթ չէր՝ նոյն իսկ Աքեմենեանց իշխանութեան առաջին օրերէն, այսինքն Քր. է 4—5 դար առաջ (վերը 101—2):

Հայաստանի կարաւանները կու գային Պոնտական Կոմանայի շուկան Քափեղ իրենց վաճառքի բեռները (Ստրաբոն), որպէսզի այն տեղէն եր-

թային կամ դէպի Սինոպ, կամ դէպի Եփրատ (Ն. Տոլնս և Ա. Խաչ. Հից Հայերու Պատմ. Ա. 57):

Երեւոյթներ կան որոնք հաստատել կը թուին թէ Հայաստան եւս ուղիներէն մէկը եղած է Հնդկական ապրանքներու. որոնք Հայաստանի ճամբով արեւմուտք կը բերուէին: Պրոկոպիոսի վկայութիւնը (վերը. 69), ինչպէս նաեւ Արտաշատի և Գուլիսի՝ իբր միջազգային առեւտուրի կայան շեշտուած նշանակութիւնը, մանաւանդ 387 թ. դաշինքէն յետոյ, (վերը. 68—9) մեզի կրնան մտածել տալ թէ Հայ վաճառականներ նոյնիսկ անձամբ Հնդկաստան գացած են:

Հայ և Հնդկ յարաբերութեանց տեսակէտով հետաքրքրական է որ քրիստոնէութեան Հնդկաստան քարոզութեան գործին մէջ Հայաստանի անունը կը խառնուի: «Մեր ազգային յիսուսակներուն մէջ վաղուց պատմականացած այն աւանդութիւնը թէ Հնդկաց Առաքեալը Թովմաս, Ասորիքն եւ Հայաստանէն անցած է՝ Հնդկաստան երթալու համար. առաջին գիծը կը մասնացէ Հնդկահայ ամենահին յարաբերութեանց հաւանականագոյն իրողութիւն մը, զոր վերջերս գիտօրէն ջանացած եր հաստատել Կալկաթայի համալսարանին Հնդկի ուսուցչապետներէն մին:» (*) (Քորգոմ Արքեպ. Գուշակեան. Հնդկահայք. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ. 1929. 9):

Ուրիշ աւանդութեան մը համաձայն, որուն Ազոնց (Աւստրի. 1805. Գ. 119—120), Ալիշան (Սիսական. 466) և E. Gibbon (The Decline and fall of the Roman Empire. 1913. Ե. հտ. 54—55) արձագանք կ'ըլլան, մեծահարուստ Հայ վաճառական մը, Մար Թովմա Կանա, Գ. դարուն, քրիստոնէութիւնը տարածած է բնիկներուն մէջ և բերել տուած է եպիսկոպոսներ և քահանաներ Անտիոքի Եւստաքէս պատրիարքէն ձեռնադրուած, ինչպէս նաեւ քրիստոնեայ Ասորի և այլ զաւթականներ ու շինած՝ Մատրասի մօտ, թոյլտուութեամբ տեղւոյն Մալապար իշխաններուն, որոնք Փերուճալի տոհմէն էին Գրանակար քաղաքին մօտ՝ Մահաճէվա-Բատամ (=Մեծի Աստուծոյ քաղաք) փոքրիկ քաղաքը՝ եկեղեցիով և դպրոցով: Եւ որովհետեւ այդ եկեղեցականները ասորի կամ ասորական

(*) Հայ Յայմաւուրէիս համաձայն (Ոգոս. 25), Յիսուս ծախած է Թովմասը Արքաքէս Հնդկի վաճառականին: Լաթիս աւանդութեան համաձայն, Յիսուս զայն դրկած է Հրնդկաստան՝ Արքան կամ Ալպսնէս բազաւորին հետ, որ հարստացած մը փնտելու համար Կեսարիա (Պաղեսիսի) եկած էր: Յովհ. վրդ. Ծորճոբեցի Թովմաս Առաքեալը կը ճերկայացնէ աւետարանիչ Պարթեւաց, Մարաց, Պարսից եւ Հնդկաց եւ ցահասակուած ցոյց կու տայ Քալուսիէս Բալասիսի մէջ Մոթնի բազաւորէն: (Մկրտիչ եպ. Աղաւունցի. Սուրբ Երկրից սրբազայրերու աւանդութիւնները 1936 Յրու.՝ 129—130):

Կարապետ Եփր. (Հայոց եկեղեցւոյ պատմութիւն. 1908 Մաղարեպոս. Ա. 34) կը հաստատէ թէ շառնուակն Գ. դարի սկզբին բիսոսնեմեր կային Հնդկաստանի հիւսիս-արեւելեան մասում: Պանթոս, Աղեփանդեան դպրոցին հիմնադիրը, կը հաստատէ որ Հնդկաստանի մէջ տեսած է Հրեայ զաղթականներ որոնք Քրիստոսի մասին զաղափար ունէին եւ կը պահէին Բարբոլիմէոս առաքեալի ձեռնով իրենց հասած Մասթոսի երայեցեան աւետարանը: Կարապետ Եփր. կը կարծէ թէ Պանթոսի Հնդկաստանը Հարաւային Արաքիան է (Յոյն):

գրականութեամբ կրթուած կրօնաւորներ էին անտարակոյս, ասորիքէն կամ քաղաքական լեզուն և գրականութիւնը կը տարածեն հոն, ծնունդ տալով այսպէս Հնդկաստանի ասորական եկեղեցւոյն, որուն հետեւող բընիկները ցարդ կը կոչուին Ս. Թովմասի քրիստոնեայք (Ալիշան. 60յն և Քորգոմ Արքեպ. 60յն) (*):

Հ. Ղ. Ալիշան, առնելով *Journal Asiatique*էն, կը հաւաստէ թէ Ք. դարուն Քովմաս Գանակ անուն ուրիշ Հայ վաճառական մը սիրելի ըլլալով Գոչինի թագաւորին, քրիստոնէական վարդապետութեան նորոգիչը կ'ըլլայ Հնդկաստանի մէջ:

E. Gibbon (60յն) անշուշտ այս վերջին Քովմասներուն վրայ խօսելով կ'ըսէ. «L'as հին աւանդութեան մը, Հնդկաստանի մէջ Աւեստաւանք բարոյութեամբ է Ս. Թովմասի կողմէ Ք. դարուն վերջերը: Ս. Թովմաս, Հրեղեկասանի Աւեստաւանքը, առաքել մը, Մանիքական մը կամ Հայ վաճառական մը, (La Croze. *Christianisme des Indes*. Ա. 57—70) հանրաճանօր էր, 60յնիսկ Յերոնիմոսի ժամանակին չափ կանուխ: Մարթո Քոլո, սեղւոյն վրայ իմացած է որ ան մարտիրոսացած է Malabar կամ Meliapour քաղաքին մէջ, միայն մէկ փառախ հեռու Մասրատէն (D'Anville. *Eclaircissements sur l'Inde*. 125) ուր Փորթուկալցիք բնած էին եպիսկոպոսական եկեղեցի մը Ս. Թոմէ (St. Thomé) անունով եւ ուր սուրբը սարեկան հրաժար մը կը գործէր. մինչեւ որ լոնց անգլիացիներու անհաւաստ դրացնութենէն ազդուած»:

Այս նահատակին գերեզմանը կը գտնուէր Մատրասի մօտերը: Gibbon այս կերպով կը հաստատէ Գ. դարուն Քովմաս անուն Հայ վաճառականի մը քարոզչութիւնը:

Մետրոպ Սեթ եւս իր *History of the Armenians in India* (1895. 22—23) և *Armenians in India* (1937. 612) գործերուն մէջ կը խօսի Քովմաս Գանայի մը վրայ, իբր առաջին Հայուն, որ Հնդկաստան ոտք դրած է, Վասքո տը Գամայէն եօթը դար առաջ, 780ին, հասնելով Մալապարի երկրքը, Sheo Ramի տան և հաստատուած Գրանկանոր: Հոն, Քովմաս արժանանալով երկիրին տիրոջ համակրանքին, կարեւոր հարստութիւն մը գիզեց մուսուլմանի և համեմեներու վաճառականութեամբ, որուն համար արդէն Հնդկաստանի ճամբան որոնած էր: Մետրոպ Սեթ, 1895ին կ'անգլիասանայ անոր աւետարանչի դերը: Ամէն պարագայի մէջ, ասոնք ինքնին փաստեր են թէ Հայերը ամենահին ժամանակներէ սկսեալ երթեւեկ ունեցած և վաճառականութեամբ հաստատուած են Հնդկաստան:

Հայերը, քրիստոնէական առաջին դարերուն, հաւանօրէն Գ. դարէն

(*) Եր Փորթուկալցիք առային անգամ գտնուած Հնդկաստանի ծովային ճամբան, Ս. Թովմասի քրիստոնեաները դարեւ ի վեր հաստատուած էին Մալապարի հովիտին մէջ եւ իրենց դիմագիծին ու զոյնին սարքերուփէն կ'ապացուցանէր անոնց մէջ օտար ցեղի մը խառնուրդ: Անոնք օտար սեպակեցներով կը գերազանցէին բնիկները՝ ըստ E. Gibbonի (*The Decline and fall of the Roman Empire*. Ե. 54—55):

սկսեալ առաւելապէս, թէեւ ոչ այնչափ մեծ թուով, հաստատուած են նաեւ Պաղեստին, որուն հետ մեր երկիրը, Քրիստոսէն շատ առաջ՝ մահաւանդ Տիգրան Մեծի օրերէն սկսած, յարաբերութեան մէջ եղած է, ինչպէս Հռոմէական պետութեան այլ նահանգներուն հետ, որոնք քրիստոնէութեան որորան եղան: Մասնաւորապէս այդ դարուն, Երուսաղէմի մէջ գիւրջ ու կարեւորութիւն ունեցած են Հայերը, ըստ Դուրեան Եղիշէ Պատրիարքի (Յուսաբեր. ԺԳ. տարի թ. 106. 1927 Օգոստ. 4):

Երուսաղէմ և անմիջական շրջակայքը հաստատուած այդ Հայերը առաւելապէս կրօնաւորական պարտաւորութիւններ կամ անապատականի հակումներ ունեցած ըլլալ կը թուին: Ասիկա կը հաստատէ Յերոնիմոս (331—420), որ իր նամակներէն մէկուն մէջ (Մէ. նամակ) կ'ըսէ թէ. «Ի՞նչ պիտի ըսենք Հայաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եթովպիոյ, Պոնոսի եւ Կապարովկիոյ վանականներով նոխարեալ երկիրներու մասին. ասոնք կը հաւասարին Եգիպտոսի, Խորին Ասորուոց, Միջագետքի բոլոր այն միայնակեաց խումբերուն որ Արեւելքէն դրկուած են, եւ անոնք են որ մեզ կ'ընծայեն ամէն առաքինութեանց սեսակները. լեզուն արբեր է, բայց բառապատկերները նոյն է. որքան ազգեր կան աշխարհի մէջ, գրեթէ նոյնքան խումբեր՝ որ կը սողմոսեն յերուսաղէմ: Այս քաղաքին մէջ այնքան աղօթքի տեղեր կան որ մէկ օր չի բաւեր անոնց այցելութիւն տալու համար» (F. Lagrange. *Lettres choisies de S. Jérôme*. 160. կամ Մկրտիչեպ. Աղաւնուէի. Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ սուրբ երկրին մէջ. 1931. Երուսաղէմ. 363):

Նոյնը կը միտին հաստատել Գ. դարուն իսկ գոյութիւն ունեցող հայկական վանքերը՝ Երուսաղէմի մէջ, թէեւ շատ որոշ կերպով ապացուցուած չըլլայ անոնցմէ ոմանց հաստատութիւնը այդ դարուն, սակայն ոմանք անտիտեղի կերպով այն ժամանակամիջոցէն են:

Հայ աւանդութիւններ նոյնիսկ Ս. Լուսաւորիչը կը տանին Երուսաղէմ և անոր եկեղեցիներ կառուցանել կու տան անդ (Մկրտիչեպ. Աղաւնուէի. Հայկ. հին վանքեր եւ եկեղեցիներ 340—343 և Միաբանք եւ այցելուք Հայ Երուսաղէմի. 1929 Երուսաղէմ. 75—76, Սուրբ երկրին սրբավայրերու աւանդութիւնները 12, 333, 421—4. 428—9.) հաւանականութենէ զուրկ են անշուշտ այս աւանդութիւնները, սակայն կարելի չէ անհաւանական նկատել կարգ մը Հայ վանքերու գոյութիւնը Երուսաղէմի մէջ Գ. դարուն:

Այսպէս, Ս. Պողոտոսի անունով Հայ վանքի մը գոյութիւնը այդ դարուն Երուսաղէմի մէջ խիստ հաւանական է (Աղաւնուէի. Հայկ. հին վանքեր 133—137), ինչպէս Գաղաւտի վանքը՝ յանուն Ս. Կուսանաց Հրեթիսիմէի և Գայիանէի, նոյն դարուն շինուած ըլլալ կը թուի (60յն. 142—143):

Նոյն դարուն Հայերը ունէին, կամ խառն ուրիշ ուղղերու, իրաւատէր էին Ձիթենեաց լեռան վրայ Ս. Յովհաննէս Կարապետի կամ Պանտայ վանք ըսուած վանքին, որ ըստ Անաստաս վրդ. ի «արժունի ծախիւք օրնեալ» էր,

այսինքն Արշակունեաց կործանումէն (428էն) առաջ՝ «արբուցի ծախիւք ըլլալու համար» (նոյն. 159—160): Նոյնպէս Ձիթենեաց լերան վրայ կար Հայոց Աւետման վանքը որ կուսանոց մըն է, Գ. դարէն ի վեր հաստատուած (Աղաւնունի. նոյն. 165):

Անժիտեալի է որ 405ին Երուսաղէմ գացած է Մեծն Եւթիմէոս, Հայ ազգի և ազնուական անապատականը, որ 377ին ծնած էր Մելիտինէի մէջ. Եւթիմէոս ապրած է 405էն մինչեւ 473՝ իր մահը. Երուսաղէմի մէջ:

Իրեն աշակերտած են ի մէջ այլոց Հայեր (Աղաւնունի. նոյն. 337), իր ծննդավայրին մէջ աշակերտած էր Հայազգի ազնուական Միտոնիոսի, որ Մելիտինէի եպիսկոպոսական ընծայարանին ուսուցիչն էր:

Միտոնիոս. 337ին, իր երեք եղբորորդիներուն՝ Ստեփանոսի, Անդրէասի և Գոյիանոսի հետ, Մելիտինէն այցելութեան կու գայ Եւթիմէոսի:

Իր եղբորորդիները կը մնան Եւթիմէոսի մօտ և կը գրուեն նշանաւոր գիրքը՝ Անանգմէ Ստեփանոս՝ Յաւիտայի (Յաֆայի և Գազայի մէջտեղը քաղաք մը) և Անդրէաս՝ Մասապայի (Արաբիոյ մէջ) եպիսկոպոս կ'ըլլան իսկ երբորդը՝ Գոյիանոս՝ Ս. Մինաս Վկայի մատրան (***) վանահայր:

Ե. դարուն կիսուն (***), Մելիտինէցի 400 ուխտաւոր Հայեր (****) կ'այցելին Երուսաղէմի Ս. Տեղերը և իրենց հայրենակիցին (F. Raymond Genier. Vie de Saint Euthyme le Grand. 377—473. և Աղաւնունի. նոյն. 329—339):

Այս ժամանակները, քրիստոնէութեան մէջ բաժանումներ գոյութիւն չունէին դեռ և մէկ եկեղեցի կը կազմէին ամէնքն: Լատին հեղինակը կը հաստատէ թէ վանքին վանահայրը Յոյն էր, սակայն բոլոր յիշատակութեան, շրջապատուած էր սն գիտուն Հայ վանականներով ալ (Յուսաբեր. նոյն):

Ասիկա կը նշանակէ թէ Արշակունեաց կործանումին ատեն, Հայերը

(*) Գ. դարուն Պալլասիոս կը գրէ (Hist. Laus. Ch. XLIV) «Յուլիանոս Ուրացողէն յետոյ, Իննովկեմաիոս Բահաճան սուրբ լիբան վրայ շինեց 385ին մատուռ մը, ուր կը պահուէր Սերասաիոյ հերացոսներուն վանտալութեանը գերծմնացած Սուրբ Յովնանու Կարապետի մատուցեցերը»: Պալլասիոս մէկ տարի (412—413) ապրած է Ձիթենեաց լիբան վրայ (Աղաւնունի. նոյն. 160): Սերասակից ծագումը հայկական ծագումին հաւաստի կրնայ նկատուիլ:

(**) Հուանօրէն մեր Ս. Յակոբեանց վանքին մէջ գտնուող համանուն հնօրեայ սրբատեղի:

(***) Դուրեան Պատրիարք (Յուսաբեր. նոյն) եւ Քորգոմ Պատր. Գուսակեան (Արբու. p. 1011) համաձայնաբար 428 թուականը կը նշանակեն:

(****) Յուսաբեր Դուրեան Պատրիարքի բերանը կը դնէ «800 ձիաւոր Հայ ուխտաւորներ» բառերը, մինչ Քորգոմ Պատրիարք 400 թիւը կը պահէ, եւ կը յարէ թէ «Երուսաղէմէն Յորդանան գացած ասեցեցիք, Սրիֆովի մօտերը վանք մը գացին, իրենց հայրենակից վարդապետի մը այցելելու համար, աճառչա Հայ վանք մըն էր»: Դուրեան Պատրիարք իր խօսքերուն ազգիւր ցոյց տուած է Լատին հեղինակ մը, իսկ Քորգոմ Պատրիարք՝ Յոյն հեղինակի գործ՝ Ս. Եւթիմէոսի կենսագրութիւնը:

կարեւորութիւն մը և դեր մը ունէին Երուսաղէմի Ս. Տեղեաց մէջ (նոյն), իբր տիեզերական եկեղեցւոյ մասնակից և կանուխ քրիստոնէացած ժողովուրդ մը: Այս բոլորը կու գան հաստատել թէ Հայերը մինչեւ Ե. դարուն սկիզբը, արդէն առեւտրական, մշակութային, կրօնական, ինչպէս նաև քաղաքական, զինուորական և բռնազաղթերու պատճառներով, ընդհանուր կերպով Մերձաւոր Ասիոյ, Պարսկաստանի և նոյնիսկ Հնդկաստանի մէջ քիչ շատ ամենուրեք տարածուած էին, և Ասիոյ ցամաքամասէն դուրս շատ մասնակի կերպով՝ քաղաքական և կրօնական առընչութիւններու բերմամբ Յուստատանի, Հոռմի և Բիւզանդիոնի մէջ հասանօրէն ժամանակաւոր փոքրիկ գաղութներ ունեցած էին:



F.

ՍԱՍԱՆ-ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՇՐՋԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԳԱՂԹԸ
(428—640)



Արշակունեաց հարստութեան կործանումէն մինչեւ Արաբներու Հայաստանի սահմանները հասնիլը՝ Հայաստան Բիւզանդեան և Սասանեան տիրապետութեան տակ մնացած է: Այս երկու հարիւր տարիներէն քիչ մը աւելի ժամանակամիջոցին մէջ, աւելի մեծ թափով մը շարունակուած է Հայաստանի ընկալութեան ցրուումը, որ արդէն սկսած էր Արշակունեաց հարստութեան վերջերը, երբ երկիրը երկու հզօր պետութեանց միջեւ կը տարուբերէր:

Այս երկու պետութիւնները՝ Բիւզանդիոն և Պարսկաստան, 386ին իրենց միջեւ բաժնեցին Հայաստանը, և քիչ յետոյ, 390ին, Բիւզանդիոն, իսկ 428ին՝ Պարսկաստան, ջնջեցին իրենց սեփական բաժիններուն անուանատէս անկախ Հայ թագաւորութիւնները:

Բիւզանդացիք իբր կառավարիչ դրին Comes Armeniae մը և Պարսիկները՝ Մարզպան մը, առանց երկիրին վարչական դրութեան մէջ արժանապատիւ փոփոխութիւն մը մտցնելու, վասնզի Հայ նախարարները կը պահէին իրենց տանուտիրական իրաւունքները և երկիրը կը կառավար-

ուէր բացառիկ վարչութեամբ և տեղական օրէնքներով, որոնք հետզհետէ ջնջել և իրենց երկիրներուն ընդհանուր օրէնքներովը և կարգերովը փոխարինել ուզեցին: Քէ՛ Բիւզանդացիք, թէ՛ Պարսիկները, ասով աչքբաւականացան և ջանացին Հայերը կրօնապէս ալ իրենց հպատակելու: Բիւզանդացիք՝ աշխատեցան Հայերուն ընդունել աւա Քաղաքեղոնի ժողովին դաւանանքը, իսկ Պարսիկները՝ պարտադրեցին Զրադաշտականութիւնը, և այսպէս, երկու աղգերն ալ վիրաւորեցին Հայոց կրօնական զգացումները և զանոնք ըմբոստութեան մղեցին:

Նշանակելի է որ, երկու պետութիւնները շարունակ իրարու հետ կռուեցան Հայաստանի մէջ, կամ անոր շուրջը կամ քիչ մը հեռուն, հարկադրելով իրենց հպատակ Հայերը օգնել իրենց Հայ գունդերով: Այս պատերազմները, որոնք ակամայ եղբայրասպան հանգամանք մը կ'առնէին Հայոց համար—քանի որ երկու բանակներուն մէջ Հայեր կային—երկիրը կը մատնէին աւերածութեան. թշուառութեան, կոտորածներու, գերեվարութեանց, բռնազաղթերու, և կ'ստեղծէին վիճակ մը երկիրին մէջ, որ կը մղէր բնակչութիւնը՝ խաղաղութեան, անդորրութեան, ապահովութեան և բարեկեցութեան ի խնդիր՝ հեռանալու իր բնիկ հայրենի երդիքներէն և օտարութեան մէջ փնտռելու ինչ որ իր երկիրին մէջ չէր գտներ:

Շրջանին վրայ նետուած ակնարկ մը ցոյց կու տայ թէ իրապէս 428էն 640, Հայաստան եղած է թատերավայր խառնակութիւններու և ողէտներու, որոնք հետեւանքն էին՝ Ա) իր բնակչութեան ըմբոստացումին և ապստամբութեան՝ ճնշումներու և հարստահարութեանց պատճառով, և Բ) պատերազմներու՝ որոնք կը մղուէին Հայ հողին վրայ՝ Հայաստանի երկու մասերուն տիրապետողներուն կողմէ՝ երկիրը մատնելով աւարի և աւերի:

Այսպէս, Հայկական ապստամբութիւնները, որոնցմէ հազիւ թէ մէկը մասնակի յաջողութեամբ պակուած է, ընդհանրապէս ձախողած շարժումներ են և առհասարակ առիթ ընծայած՝ տիրողներու զայրոյթը հրաւիրելու և դժբախտ հետեւանքներու պատճառ տալու:

1. Հայերը ապստամբեցան առաջին անգամ Պարսից դէմ 450—451ին երբ Յակոբա Բ. (438—457), Հայերու իրենց միջեւ ունեցած նախանձին և ընտանեկան ստեղծութիւններուն (*) պատճառով թելադրուեցաւ զրա-

(*) Հայաստանի մարզպան ճեմակուած էր 448ին Վասակ Սիւնեաց իւխանը, որուն ձեռքը եւ կառողարիւնները գոզուած են (Պորթիս 1894 Վեներիկ 23): Ան քաջութեամբ էր Ս. Մաքրոսը իր օճուհիութեան սանձանի մէջ սակաւին ապրող հեթանոսութիւնը բառնալու համար: Իր անուանումը, սակայն, հաշտ աչքով չդիտուեցաւ Հայ նախաբաններէն մի քանիներուն կողմէ, մասնաւորապէս Մամիկոնեաններէն, որոնց օճուհիներն եւ ժամանակին սպարապետն էր Վարդան, այն որ Յակոբի բաճակին մէջ ծառայած էր եւ մեծ ակնկալութիւններ ունէր: Ուստի վիրաւորուեցաւ Վասակի ընծայուած պախիւն համար: Վասակ հակառակ իր օտերը սիրող չկամութեան, իր իւրաքանչիւր վարեց խաղաղութեամբ եւ հզօր նախաբանը (Փարպեցի 108): Ահա նաեւ վեց մը՝ Վասակի եւ իր

աշտականութեան հրուէր ընել Հայոց և մերժումի հանդիպելով՝ բուռն միջոցներու դիմեց և ճնուեղ տուաւ տազնապի մը որ յանգեցաւ Աւարայրի կռիւին (451 Մայիս 26), ուր ընկճուեցաւ ապստամբութիւնը, պարտութեան մատնուած Հայ ոյժերու ցիրուցան ըլլալովը՝ Նդիշէ անտրառու է հերոսամարտի մը նկարագիրը (*):

Հայաստանի վիճակը թերեւս աւելի դառնագոյն պիտի ըլլար՝ եթէ Հոնորը իրենց արշաւանքով Յազկերտը չհարկադրէին իր զօրքերը այլուր փոխադրելու (Kevork Aslan, Etudes Historiques sur le peuple Armenien. 1928 Paris. 246):

Ասով հանդերձ, այս ապստամբութեան հետեւանքը կրեց երկիրը ծանրօրէն, վասնզի բազմաթիւ նախարարներ և եկեղեցականներ Տիգրան զրկուեցան, ձերբակալեալ, և դատաստանի ենթարկուեցան և 8 եկեղեցականներ և 37 նախարարներ աքսորուեցան Վրկունք (Մազանդարան) և հոն պահուեցան «խիս կապանօք», և միայն արձակուեցան բանտէն՝ Յազկերտի մահէն յետոյ Պերոզի (457—484) կողմէ, սակայն ի Հրեւ (Հարեւ—Հերաթ) Պարսիկ բանակին մէջ ծառայութեան կոչուեցան, և միայն 462ին արտօնուեցան դառնալ Հայաստան, աւելի քան տասը տարիներ անգլուխ ձգելով երկիրը որ կրեց այս ապստամբութեան աղէտալի հետեւանքները: Իսկ Պարսիկները Հայոց ուժգին դիմադրութեան և յամառութեան առջեւ համոզում գոյացուցին թէ զանոնք կրօնափոխ ընել կարելի չէր:

2. Հայ նախարարները, որոնք կը պահէին իրենց տանուտիրական իշխանութիւնը Բիւզանդեան Հայաստանի մէջ, 475ին սպստամբեցան երբ Զենոն կայսրը (474—491) վանուեցաւ զահէն՝ Բասիլիսկոսի կողմէ: Զենոն երբ 477ին վերահաստատուեցաւ, նուաճեց Հայ նախարարները, և զրկեց զանոնք իրենց տանուտիրական իրաւունքներէն. միայն մէկու մը տալով այդ գերագոյն պատիւը՝ իբր իշխողի, և օրէնք դրաւ որ այլեւս

փեսին Վարզազանի միջեւ ծագած՝ պատճառ եղաւ որ փեսան ապաստանի Պարսկաստան եւ ընդունի մագսեական կրօնը՝ պատկանութիւն գտնելու եւ վրէժ լուծելու համար (Փարպեցի 107—108): Ան կը յաջողի ճանապարհով Յազկերտի նախաբանին՝ Միհր-Ներսէի մոլոնանդութիւնը, խոստանալով Հայեր կրօնափոխ ընել, պայմանաւ որ իրեն տուի Հայոց մարզպանութիւնը: Ահա այս եղաւ պատճառը Յազկերտի ձեռնարկին:

(*) Թէ ո՞ր աստիճան անպատճառ էին Հայերը այս կռիւին, կը բաւէ ըսել թէ Հայ բանակը որ 60,000 զօր ունէր, Աւարայրի մէջ 276 անձ կորսնցնելով պարտուած է: Կամ տելի ճիւղ, ինչպէս Փարպեցի (212) կ'ըսէ, փախուստ տուած է «չերկնից բարութեանց ցանկացեալք» եւ ճանապարհով յաճախու չըլլալով: 760 հոգի յաջող օրերուն երկիրն զանազան վայրեր սպաննուած են եւ ընդհ. գումարը մեղեալներուն 1036ի յանգած է, ինչ որ մեծ թիւ մը չէ, մանաւանդ երբ ճիւղի աւերներն որ նոյն Յազկերտը հազիւ քանի մը տարի առաջ, 446ին, 12,000 հոգի ցանաւորուած էր Պարսիկ քրիստոնէաներէն: (Hoffmann. Auszüge 50—59, Labourt. Le Christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide 226—632. Paris 105—115. 2. ներսէս վրդ. Ակիմեան Նդիշէ Բ. 529—580):

անոնցմէ ոչ ոք ազատօրէն տանուտիրական իշխանութիւն գործադրէր: Սակայն, ինչպէս Պրոկոպիոս կը վկայէ, անոնք իրենց գաւառներուն մէջ, պահեցին իրենց իրաւունքները և իրենց տոհմերուն կ'առաջնորդէին և կայսերական բանակին զօրքերուն չէին խօսնուիր, մինչև Յուստինիանոս Ա.ի ժամանակ (Պրոկոպիոս. Եթն Յուս. Գ. 1., Չամիչեան Պատմ. Հայոց Բ. 155): Ուրեմն այս ապստամբութիւնն ալ իր տխուր հետեւանքը ունեցած է Հայոց նկատմամբ և անոնց իրաւազրկման պատճառ եղած:

3. Երկրորդ անգամ ապստամբեցան Հայերը Պարսից դէմ 482ին, Պերոզի Հայաստանի մէջ գործադրած ապականիչ և անբարոյացնող ուղղութեան հետեւանօք: Ապստամբութեան գաղափարը երկնուիլ սկսած էր արդէն կանուխէն Գիւտ կաթողիկոսի (461—478) քաջալերութեամբ: Վահան Մամիկոնեան, այս ապստամբութեան հոգին և վարիչը. հակառակ իր խոհականութեան և հեռատես նախահոգութիւններուն, անյոյս պայքարի մը մտած էր և իրեն ալ պիտի վիճակէր Վարդանի ճակատագիրը եթէ Պերոզ չմեռնէր Հեփթաղներու դէմ մղուած կռիւի մը մէջ և սնանկացած պետութեան գահին վրայ Վաղարշի (484—491) բարձրացումը յանկարծական փոփոխութիւն մը յառաջ չբերէր Սասանեան քաղաքականութեան մէջ: Վաղարշ ամէն գինով ուզեց խաղաղեցնել Հայաստանը և Վահան Մամիկոնեանը մարզպան կարգեց Հայաստանի (485) և երկիրին տուաւ այն ամէն ազատութիւնները որոնց համար 451ին ապստամբած էին Հայերը:

4. Վահան Մամիկոնեան 491ին հարկադրուեցաւ կրկին զէնքի դիմել և պաշտպան կանգնել կրօնի ազատութեան, վասնզի Վաղարշի գահընկէցութենէն յետոյ երբ յաջորդեց Կաւառ Ա. (491—496 և 501—531), Հայաստանի մէջ կրկին ջանաց քարոզել տալ մազտէական կրօնը (P. Martin. Chronique de Yosué le Stylite écrite vers l'an 515. Texte et traduction. Leipzig. 1876): Նոյնիսկ կ'ըսուի թէ Անաստաս կայսեր դիմում ըրած է 495ին (Ազգապատմ. 499): Այս անգամ ալ Պարսկաստանի ներքին կռիւները նպաստեցին Հայոց: Կաւառ գահադուրկ եղաւ 496ին իր եղբորը Ջամասպի կողմէ և երբ Կաւառ Հեփթաղներու թագաւորին օգնութեամբ յաջողեցաւ իր գահուն տիրանալ 501ին, այս անգամ ընդգրկեց Վաղարշի քաղաքականութիւնը՝ Հայաստանի նկատմամբ՝ տալով կրօնի ազատութեան նոր հրովարտակ մը (Ակինեան. ՀԱ. 1931. 142, 409—411): Հայաստան, ուրեմն, մօտաւորապէս 10 տարիներու նոր տաքնապ մը անցուց, իր բոլոր հետեւանքներով:

5. Յուստինիանոս Ա. իր գահակալութենէն անմիջապէս յետոյ Բիւզանդական Հայաստանի վարչական և զինուորական առանձնաշարհները ջնջող կարգադրութիւններ ըրաւ, Հայերը զինուորագրելով Բիւզանդական բանակին մէջ և Հայաստանը՝ վարչապէս ենթարկելով Բիւզանդական օրէնքներու: Այս որոշումը գործադրելու համար, Հայաստանի կառավարիչ կը կարգուի Սիտաս կամ Միտաս քաջամարտիկ զօրավարը և հռչա-

կաւոր Հայը, կայսեր ազգական, որուն կը յաջորդէ, 535ին, Համազասպ որդի Սիմէոնի (Բրոֆ. Ն. Ադոնց. Հայրենիք 1929. Թ. 11), որ զոհ կ'ըլլայ քրտթեան Ա.կալիոսի, որ ինքն կը դառնայ Հայաստանի կառավարիչ և այնքան կը ճնշէ ժողովուրդը որ, համբերութիւնը սպառած կ'ապրատամբի Արտաւան Արշակունիի գլխաւորութեամբ և կ'սպաննէ զայն: Սիտաս վերստին Հայաստան կը ղրկուի, սակայն Հայերը զայն ալ կ'սպաննեն: Իր յաջորդը՝ Բուզ կամ Վուզ, կը զսպէ Հայերը և սաստիկ կը հալածէ զանոնք (Kevork Aslan նոյն. 261—2): Հայերը 539—540 չնանդուրժելով կրօնական ճնշումին, կ'ըմբոստանան և կը դիմեն Սոսրով Ա.ի օգնութեան (Բրոֆ. Ն. Ադոնց. Հայրենիք. 1929. Թ. 11, 98—99): Այս գիմումը պատճառ կը դառնայ երկու պետութեանց միջեւ երկարամեայ պատերազմի մը (Ակինեան. ՀԱ. 1931. 134) և բնական է անհետեւանք չի մնար երկիրին վրայ, վասնզի Բիւզանդացիք անկարելի է որ ներողամիտ աչքով դիտած ըլլան Հայերու այս շարունակական ըմբոստութիւնները:

6. Երբ 543ին Բիւզանդական բանակը Հայաստան մտաւ և սկսաւ երեք թեւերով առաջանալ դէպի Դուին, շատ մը Հայ նախարարներ, նախ քան պարսկական զօրքերուն ժամանումը, դաւեցին Պարսիկներուն դէմ ու Բիւզանդացոց կողմը անցան (Պրոկոպիոս, Իպատմ. վ. Անց. Բ. 24): Նոյնպէս, Հայերը, նոյն թուականին, որովհետեւ Պարսից արքային պաշտօնատարները կը կեղեքէին Հայաստանը, այլապէս ալ դաւեցին Պարսիկներուն դէմ: Երբ Սոսրով՝ իր որդւոյն ապստամբութեան և զօրքին Պագուի մէջ ժանտախտէ կոտորուելուն պատճառով նեղը ինկած, կը հրամայէ Պարսիկ Հայաստանի զօրավար Նախապետի որ Քրիտտափոր կաթողիկոս Տիրառիջին (539—545) իբր խաղաղութեան բռնագնաց Բիւզանդական Հայաստանի Ստրատելատին ղրկէ (Պրոկոպիոս. Պարսկ. Պատմ. Բ. 24), Հայոց կաթողիկոսը և իր ընկերները փոխանակ ուղղամբութեամբ իրենց վստահուած պաշտօնը կատարելու, Բիւզանդացի զօրավարին՝ Վալերիանոսի՝ կ'ըսեն որ «Արքայից Արքան» նեղ կացութեան մէջ է և յարմար առիթն է զայն ընկճելու (Պովլիա ԱրժուՅի. Բ. Բ): Բնական է այս արարքը իր անդրադարձութիւնը ունեցաւ և Պարսիկները վրէժխնդիր եղան:

7. 565ին, Սոսրով, որ մինչև այն ատեն մեղմութեամբ վարուած էր քրիստոնէից հետ և քրիստոնեայ կին և անկէ ծնած և քրիստոնեայ մեծցած Անուշապատ անուն որդի մը ունէր, որ 553ին Հայոց բողոքները նրկաթի առնելով անոնց գոհացում տուող բարեկարգական կարգադրութիւններ ըրած էր, պարտադիր հռչակեց Զրադաշտականութիւնը բովանդակ Պարսիկ պետութեան՝ մասնաւորապէս անոր Հայաստանի պէս շրջաններուն մէջ, ուր կասկածելի էին ժողովուրդին հաւատարմութիւնը և մեծ՝ անջատողական հակումները՝ քրիստոնեայ դրացիին՝ Բիւզանդիոնի հրապոյրներուն պատճառով (Ակինեան. ՀԱ. 1931. 134):

Հրամանը դիւրին իրագործելի չէր, ուստի խստութեանց դիմեց:

Հայաստանի մէջ խանգարեց վարչական կարգերը, տուրքի ենթարկեց ապահարկ կրօնաւորները և աւելցուց ժողովուրդին հարկին քանակը և զայն հաւաքելու գործը 552ին յանձնեց Պարսիկ գործակալներուն՝ մագերէն առնուած շրջանին գատաւորներու» հսկողութեան տակ: Դատական իշխանութիւնը եկեղեցականներէն առնելով մողերու յանձնեց (Ա. կինեան. ՀԱ. 1931. 142—160). Ինչպէս Պարսիկներու տուաւ Հաղարայեանին պաշտօնը: Երկիրին մէջ շինուել սկսան Ատրուշաններ: Հայերը յիշեցուցին նախորդ անյաջող փորձերը և կրօնական ազատութեան հրովարտակները: Մարզպանը, ոչինչ լսեց, այլ նուեւ «եհայր բնդ կանայս ազասաց, ոչ առնելով զայրն սեր կնոջ իւրոյ» (Ասողիկ. 85) և գանակոծեց քանանները: Ժողովուրդը երկար ատեն հանդուրժեց, սակայն բաժակը յորդեցաւ երբ Մանուէլ Մամիկոնեան սպանուեցաւ Սուրէն մարզպանի կողմէ: Ռամիկները ոտքի ելան և զինուեցան: Նախարարները և եպիսկոպոսները միութիւն ուխտեցին և Դուինէն դուրս զօրահանդէս կատարեցին: Յովհաննէս Կաթողիկոս Գարեղեան (557—574) և նախարարները անգամ մըն ալ ներկայացան մարզպանին և սպառնացին: Ոչ մէկ օգուտ: Այն ատեն, վարդան Մամիկոնեան յարձակեցաւ Դուինի վրայ, սպանեց Սուրէնը (572 Փետր. 2), կոտորեց Պարսիկ զօրքերը և քանդեց Ատրուշանը: Հայերը «առին զաւար բազում եւ գնացին ի ծառայութիւն Յուսէպ» (Սեբիոս Ա.) և Բիւզանդիոնի օգնութեան դիմեցին, բոլորովին կատաղութիւնը գրգռելով Սոսրովի, որ աճապարեց արիւնի մէջ խեղդել ապստամբութիւնը, Բիւզանդացուց միջամտելէն առաջ: Պարսիկ բանակը, 572ին ամառը, առանց դիմադրութեան հանդիպելու, հասաւ Դուին: Հայերը քաշուեցան Կարին, ուրկէ շարժումին զեկավարները անցան Բիւզանդիոն և Բիւզանդական բանակներու հետ կռուեցան Պարսիկներու դէմ, յաջորդ տարիներուն:

Դառն ու սոսկալի վիճակ մը ստեղծուեցաւ Հայաստանի մէջ, ուր 575ին մաւա 20,000 զինուորով և շատ փիղերով, Միհրան Միհրեւանդակ Պարսիկ զօրավարը (Սեբիոս Ա.) և սոսկալի ջարդ մը տուաւ Հայոց, վասնզի հրաման ունէր Սոսրովէն «գի աննեսս արասցեն զարս ի յաւիարհեմ Հայոց՝ խլել՝ բել՝ յասակել, անխնայ յերկիր կործանել» (Սեբ. Բ.):

Սոսրով՝ Հայաստանը նուաճեց վերջնապէս 577ին և հռչակեց ընդհանուր ներում, որմէ սակայն պիտի չկարենային օգտուել Բիւզանդիոն ապստամուղները:

8. Հաղիւ կարճ անդորրութենէ մը յետոյ, երբ Սոսրով Բ. Ապրուէզ (590—627), Հայաստանի մեծագոյն մասը ի նշան երախտագիտութեան թողուց Մօրիկ կայսեր (582—602), ասիկա որ ծագումով Հայ էր և սակայն կատաղի Քաղքեղոնական մը, Հայերը եւս դարձնելու համար նոյն դաւանութեան, Հայ եկեղեցիին գործերուն միջամտեց, Մուշեղ Մամիկոնեան, որ Պարսկաստանը ձգելով Բիւզանդական երկիր անցած էր և բանակին մէջ կը ծառայէր, և իր հաւատարիմն էր, կրօնական մարդի մէջ կայսեր դէմ կանգնեցաւ և հաւատարիմ իր եկեղեցիին, զգուշացաւ

կայսեր հետ այս մասին սեւէ բանակցութեան մտնելէ, այլ խնդրեց որ «եմարտութիւնը Հայ վարդապետներու մօտ որոնեմ»: Մօրիկ՝ Մովսէս Կաթողիկոսը կանչեց, ոչ թէ ճշմարտութիւնը ուսանելու՝ այլ բռնադատելու համար կայսերական դաւանանքը ընդունելու: Սակայն Հայ եկեղեցւոյ իմաստուն պետը, որ Պարսկական Հայաստանի մայրաքաղաք՝ Դուին կը գտնուէր, մերժեց կայսեր մօտ երթալ և պատասխանեց թէ «բաւ լիցի ինձ բնդ գեսն Ազաս» (*) անցանել կամ զբխեալն ի փոսն ուտել, կամ ի զերմոյ արբեմալ» (Արշակ Տէր-Միքայէլեան. Հայաստանեայց եկեղեցին եւ Քիւզանդեան ժողովոց պարագայք. 1892 Մոսկուա. 112 և Հ. Ն. Վրդ. Ա. կինեան. Կիւրիոն Կաթողիկոս Վրաց. 1910 Վիէննա. 120): Մօրիկ զայրացած, հրաման հանեց Քաղքեղոնական դաւանանքը Հայ եկեղեցիներուն մէջ քարոզելու և պառակտեց Հայ եկեղեցականները և գանոնք բոլորովին ջլատելու համար Դուինի հանդիպակաց Աւան գիւղին մէջ հակաթոռ կաթողիկոս դրաւ 590ին՝ Յովհաննէս Բագարանցին (+611) և այսպէս վիրաւորեց Հայոց կրօնական զգացումները և պատճառ դարձաւ դժգոհութեանց խմորումին:

Իբր թէ ասիկա բաւական չըլլար, Մօրիկ, Հայերու ձուլումը աւելի յաջողութեամբ և դիւրաւ իրագործելու համար՝ ծրագրեց գանոնք տեղահան ընել Հայաստանէն: Հետեւաբար, Սոսրով Բ. ի հետ ունեցած բարեկամութենէն օգուտ քողելով, Սոսրովի ներկայացուց ծրագիր մը, ըսելով որ Հայերը «ազգ մի խոսոր եւ անհնազանդ են... կան ի միջի մետում եւ պղտորեն: Բայց եկ՝ ... ես զիմս ժողովեմ եւ ի թրակե զումաբեմ, եւ դու զբոյժ ժողովե եւ հրամայե յերեւելիս օսնել: Զի եթե մեռանին, քեմամի մեռանին, եւ եթե սպանանեն՝ զքեմամիս սպանանեն եւ մեք կեցցուց խաղաղութեամբ: Զի եթե դո՛ւս յերկրի իւրեանց լինիցին, մեք հանգչել ոչ լինի» (Սեբիոս. Զ.):

Սոսրով որ երախտապարտ էր Մօրիկի, հաւանեցաւ, ուստի կայսրը հրաման արձակեց Թրակիա փոխադրել ժողովուրդը: Բիւզանդական Հայաստանի նախարարները Մօրիկի Սոսրովի հետ ունեցած համաձայնութեան անգիտակ, սկսան Պարսիկ Հայաստան անցնել: Սոսրով ընդունեց գանոնք «մեծարեմաւ եւ մեծամեծ պարգեւս քան զկայսր պարգեւեր նոցա, մանաւանդ իբրեւ սեսաներ զփախուսս նոցա ի կայսերէն՝ եւս առաւել մեծապէս սիրով կամեք կորցել առ ինն» (Սեբ. Զ.), բայց երբ Հայերը տեսան թէ Վասպուրականի Համարակարը (=հարկահաւաք) իրենց վրայ կը զրկուի «հանդերձ գանձու բազմաւ եւ մեծամեծ պատուով, զի այնպէս նուաճեալ անցե գնոսա ի ծառայութիւն» Սոսրովի (Սեբ. Զ), տնոր դէմ ելան Արապատականի սահմանին վրայ և գանձերը գրաւեցին, զայս եղեալ ի «սի՝ եթե գանձուց այդորիկ զՀայաստան մեր արասցուք, եւ աւեալ ի նոցանէ աւզնութիւն՝ պատերազմեցուք բնդ երկոսին քաղա-

(*) Ազաս գետը սահմանադրուիւն էր այն ատեն, վասնզի Տիգրիս, Գառնի, Ազաս գետ, Մաքի, Առեասն աւան, Վանի ծով, Ընծախաւ, Մծրին գիծը կը կազմէր սահմանը:

ւորդ, եւ բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուցուի: Այսպէս, Հայերը, կամ անոնցմէ մաս մը, 590ին ապստամբած եղան միանգամայն ընդդէմ Բիւզանդիոնի և Տիգրոնի:

Այս ապստամբութեան ղեկավարներն էին Սամուէլ Վահեուունի, Ասաս Սոսրոսուունի, Մամակ Մամիկոնեան, Ստեփանոս Սիւնի, Կոսիտ Ամատունի և Քէոզորոս Տրպատունի, որոնց 2000 հեծեալները (Սեբ. Զ.) Նախիջեան հաւաքուած էին, սակայն հոն պառակտեցան, և իրարու չհաւատարմով, բաժնեցին իրենց գրաւած գանձը և բանակեցան Զահուկի:

Ոտորով այս ապստամբութիւնը զսպելու համար Համարակարը վերստին Հայաստան դարձուց, միեւնոյն ատեն Մորիկին դիմեց և օգնութիւն խնդրեց: Մորիկ հրամայեց Հայաստանի կառավարիչ Հերակլ զօրավարին (յետոյ Ափրիկէի էքսարք և հայր՝ Հերակլ Ա. կայսեր, 610—641) օգնութեան երթալ: Բիւզանդեան և Պարսիկ զօրքը միասին հասան Նախիջեան և հրաւիրեցին Նախարարները պարսպ արիւնահեղութեան պատճառ չըլլալ և հնազանդիլ, երդմամբ խոտանալով թէ իրենց վնաս մը պիտի չհասներ. ո՛չ Բիւզանդիոնի և ո՛չ Պարսիկ թաղաւորներէն (Յոյն):

Մամակ Մամիկոնեան, Կոսիտ Ամատունի և Ստեփանոս Սիւնի սեպյի եւս ընդ նոսա՝ գանձինս անվնաս ցուցանելով համարակարին, նուանցին զգաւրս իւրեանց ի ծառայութիւն արքային Պարսից: Իսկ Ասաս Սոսրոսուունի եւ Սամուկի Վահեուունի գաւրաւն իւրեանց փախսական գեացին ընդ հալաբուզեղն կոչեցեալ Սաւղայ և անցան Կուր գետը Հոնացքով ապաստանելու համար, սակայն չվտանգելով անոնց իրենց ետեւէն մինչեւ Կուր գետ յառաջացող Բիւզանդական զօրավարէն ապահովութիւն պահանջելով, Մորիկի նազանդութիւն յայնեցին: Մորիկ՝ Ասաս Սոսրոսուունին «Պարսիկ» ի տիպոսով պատուելով, իր զօրքով զրկեց Քրակիս:

Իսկ անոնք որ Պարսից նազանդեցան, դարձան իրենց երկիրները, և Համար-կարը ժողովելով բոլոր Հայ իշխանները և զօրքը, սեպյց բանհիւճ յորդորեց և ամենքը միացուց, գունդ գունդ բաժնեց, և մէկ մասը թողուց Հայաստան, ըսելով թէ իրենց մասին հրաման պիտի բերէ որ մեան:

393ին, այս Նախարարները, որոնց եօթը գլխաւորներն էին Գազիկ Մամիկոնեան, Գապ Բագրատունի, Սոսրով Վահեուունի, Վարդան Արժրունի, Մամակ Մամիկոնեան, Ստեփանոս Սիւնի, Կոսիտ Ամատունի, իրենց զօրքերով կոչուեցան Տիգրոս և հոն վար գրուեցան (Սեբ. ԺԱ.):

Արքայն Պարսիկապատանէն բազմաթիւ Նախարարական առններ տեղանս եղան և Մորիկի խորհուրդը զործադրուեցաւ Նախ այդ բաժնին մէջ, իսկ Բիւզանդական բաժնին մէջ՝ թէեւ Ասաս Սոսրոսուունի իր զօրքով նամակներով էր երթալու Քրակիս, բայց Սամուէլ Վահեուունի Հայաստան կը մտար Եւ ինչպէս կ'երևի, իր վրայ ալ նշում ի գործ կը

գրուի, Հայաստանէն հեռանալու: Անիկա իրեն համախոհներ գտնելով (Սեբ. Է), կ'ապստամբի և կը փորձէ սպաննել Բիւզանդական Հայաստանի սկուրատորքը (=խնամակալ կամ վերակացու) Կարնոյ Չերմուկին մէջ (Յոյն): Ապստամբները կ'ապստամին յետոյ Կորդուաց լեռները, ուր զիրենք կը հետապնդեն Հերակլ կայսերական կուսակալը և Համազասպ Մամիկոնեան՝ Հայ զօրքերու զօրավարը: Նախարարներէն ոմանք կռիւին մէջ կը մեռնին, մի քանին գերի իյնալով կը գլխատուին, մէկը Պարսից սանձանը կ'անցնի՝ բայց բռնուելով Յունաց կը յանձնուի:

Մորիկ կը շարունակէ բռնագաղթը, վասնզի այն թշնամիները որոնք Քրակիոյ սանձաններուն վրայ կանգնած էին, նոր յարձակումով մը կ'սպառնային Պոյսոյ, բայց Ասիոյ կողմը ապահով էր, քանի որ Սոսրովի հետ բարեկամ էր: Ուստի կը ձեռնարկէ խոշոր զօրաթողով մը Արեւելքի մէջ և «հրաման ետ անցուցանել զամենեսեսն ընդ ծով եւ գումարել ի կողմանս Քրակացոց ընդդէմ քեցամուոյն» (Սեբ. Ը): Այս ատիւ կը հրամայէ «ժողովել... զամենայն այր եւ ձի ի Հայաստանեայց եւ զիւրեանս նախարարացն... զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ... կազմել զուճու... եւ զիճու վառեալ... անցուցանել զամենեսեսն յաշխարհն Քրակացոց» (Յոյն): Հաւաքուած այս զօրքին հրամանատար կը կարգուի Մուշեղ Մամիկոնեան և Քրակիս կը տարուի:

595ին, Մորիկ նոր զօրաթողով մը եւս կ'ընէ Հայաստանէն և կը հաւաքէ 2000 սպառազէն ընտիր այրեւծ որոնք 1000 անձերով երկու գունդի կը բաժնուին, իւրաքանչիւրին գլուխը դնելով Սահակ Մամիկոնեանը և Սմբատ Բագրատունին (Սեբ. Ժ): Սահակ ուղղակի Բիւզանդիոն կ'երթայ, իսկ Սմբատ կը վարանի և կայսրէն ապահովութիւն ստանալով թէ վերստին իր երկիրը պիտի դառնայ, ինքն ալ կը համակերպի:

Սմբատ Բագրատունի արդարեւ կը դառնայ Հայաստան և կը թելադրէ «միաբանել մնացեալ նախարարն Հայոց, եւ խնդրէին ի բաց կալ ի ծառայութիւնն Յունաց բազաւորին, եւ նսուցանել իւրեանց բազաւոր, զի մի եւ նոցա հասցէ մեռանել ի կողմանս Քրակացոց, այլ կեալ եւ մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց» (Սեբ. Ժ. նաեւ Բրոք. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՒՔ. Թ. տարի. Թ. 11. 113):

Եւ որովհետեւ միարան չէին, նախարարներէն ոմանք այս խորհուրդը Բիւզանդիոն տեղեկացուցին և Սմբատ Բագրատունի եօթն ընկերներով ձերբակալուեցաւ և Պոլիս տարուեցաւ (Սեբ. Ժ):

Մորիկ, ասկէ յետոյ է որ աւելի զայրացած, կ'ըսէ. «Երեսուն հազար հեծեալ վզեակալ ե... իմ ի վերայ աշխարհին Հայոց: Սրդ՝ ԼՌ (30,000) երդաւոր ժողովեցին իճձ անցի եւ նսուցին ի Քրակացոց աշխարհին» (Սեբ. Ի): Եւ այս 30,000 տուճուորը փոխադրելու համար՝ Հայաստան կը զրկէ Պրիսկոս անուն պաշտօնեայ մը, որ հաղիւ գործի ձեռնարկած՝ անա Պոլիսէն կը հասնի Մորիկի եղբերական մահուան լուրը (602) և Պրիսկոս իր գործը կիսաս ձգելով կը մեկնի (Յոյն):

9. Մորիկի մահէն յետոյ Պարսիկ-Բիւզանդական թշնամութիւնները

վերական: Հայաստան ալ պատերազմի դաշտ եղաւ: Հայերը, յայտնի չէ թէ ինչու, իրենք ալ Հայաստանի զանազան մասերուն մէջ զէնքի կը դիմեն, և Պարսից զէմ կը կռուին: այս կերպով անսպասելի օգնութիւն մը ընծայած կ'ըլլան Բիւզանդացւոց:

Սերիոս (ԻԲ և ԻԳ) կը նկարագրէ թէ ինչպէս Եղեվարդ, Հոռոցմարդ, Ականիցղաշտ, Արգինա, Անգղ, Մխնկերտ արիւնով կը ներկուին 607—608 թուականներուն, մինչեւ որ Հայաստան վերստին Պարսիկ լուծի կ'ենթարկուի:

Սոսրով, որուն կինը՝ Շիրին՝ եռանդուն քրիստոնեայ էր, Հայերը շահելու համար կը վերահաստատէ կրօնի ազատութիւնը, հրաման արձակելով որ «մի ոք յանաւրիմաց իբխեսցէ դառնալ ի քրիստոնէութիւն եւ մի ոք ի քրիստոնէից դարձցի յանաւրիմութիւն, այլ իւրաքանչիւր ոք յիւր հայրենի յաւրէնս պիտի կացցէ» (Սերիոս. Դ):

Այսպէս, այս ապստամբութիւնը ծանր հետեւանքներ չունեցաւ:

Այս բոլորը ցոյց կուտան թէ՛ 438էն 640 տարիներուն մէջ Հայերը Ծ անգամ ապստամբած եւ աւելի քան 60 տարիներ պարբերաբար պայքարի մէջ եղած են իրենց արեւելային բռնակալներուն դէմ, երախտաբար կրկին վրայ ապստամբական խռովութիւններու բոլոր ետեւանքները:

Հայաստան, 428—640 շրջանին, թատերաբեմ եղած է նաեւ Պարսիկ-Բիւզանդական պատերազմներու, որոնք բազմազան աղէտներ և դժբախտութիւններ պատճառած են Հայ աշխարհին: Արչակունեաց կործանումէն քիչ առաջ, 422ին կնքուած խաղաղութեան հարիւլ ամեայ դաշինքը յոր կողմ տար թէ երկարատեւ խաղաղութիւն մը պիտի վայելէր Արեւելք: Հազիւ 22 տարի անցած էր սակայն, երբ դաշինքը եղծեց Յազկերտ Բ., բռնաբարելով Բիւզանդական սանձանները և այրելով ու սուրբելով եկեղեցիներ, և այլն: Թէոդոս Բ. (408—450), որ փափաքող չէր պատերազմի հարկադրուած պատերազմի պատրաստուեցաւ. սակայն նախ քան երկու բանակներուն բախումը, հաշտութիւն գոյացաւ, Պարսիկ քրիստոնեաները յանձնելու և սանձանազուխին վրայ ունէ ամրութիւն չկառուցանելու պայմանով (Kevork Aslan. Etudes Historiques sur le Peuple Arménien. 1929. Paris. 244):

450ին ալ երկրորդ անգամ պիտի խզուէր դաշինքը Թէոդոս Բ.ի կողմէ՝ եթէ իր մահը վրայ չհասնէր (450 Յուլիս 2), վասնզի խոստացած էր Հայոց օգնել (Փարպեցի 184—5 և 217. Յղիթե 133—4): Իր յաջորդը՝ Մարկիանոս՝ Ասիական բանակին Սպարապետին՝ Անատոլիոսի և Սրբունիքի պաշտօնատարներէն Փլորենտ Ասորիին խորհուրդով, չմտաւ պատերազմի (նոյն) և խաղաղութիւնը պահուեցաւ ամբողջ Ծ. դարու ընթացքին, իսկ Զ. դարու սկիզբէն կ'սկսին երկարատեւ և մշտնջենական պատերազմներ, որոնք գրեթէ մնացեալ 500—640, տարիները ամբողջ կը գրաւեն:

1. Առաջին անգամ պատերազմի մտան Բիւզանդացիք և Պարսիկները 501—2ին և մինչեւ 532 Սեպտ. իրարու դէմ կռուեցան (Գեղեցիք. 77—

78, Güterbock. ՀԱ. 1909. 53): Այս աւելի քան 30 տարի տեւող պատերազմին Հայերն ալ մասնակցած են, իբր հպատակ Պարսիկ բանակին ընծայելով իրենց օժանդակութիւնը, իսկ Հայաստան կրած է անոր հետեւանքները, մանաւանդ անոր 501—506 տեւող շրջանին, երբ ան մղուած է Հայկական Բարձրաւանդակին վրայ և շուրջը:

Վահան Մամիկոնեան, մարդպան, «իբր ճիզակակից» Կաւատի, Պարսիկ բանակին հետ էր Հայ հեծելազօրքով, երբ ան 502ին գրաւեց Թէոդուպոլիսը (Կարին)՝ Բիւզանդական Հայաստանի գլխաւոր քաղաքը, և 503ին՝ եռամսեայ պաշարումէ մը յետոյ, մտաւ Ամիթ (Տլարպէքիթ)՝ Միջագետքի գլխաւոր ամրոցը (Հ. Գեղեցիք. 42—43. Միջայէլ Ասորի 1871. 214—6. Չամբի. Բ. 232): Վահան, Ամիթի գրաւումէն յետոյ ազատեց մեծ թուով քրիստոնեաներ, վասնզի Չաքարիա Հոռոց (109) կ'ըսէ թէ «քրիստոնեայ զօրավար մը Հայասան (Arrân) երկրէն, խնդրեց քաղաւորէն եւ փրկեց Քառասուն Մարտիրոսներու մեծ եկեղեցի կոչուածն, որ լի էր մարդիկներով»: Միջայէլ Ասորի (216), որ կոտորուածներուն թիւը 80,000 ցոյց կուտայ և անհամար՝ գերի տարուածները, կ'ըսէ թէ «բայց միայն զի մեծ եկեղեցից լցեալ էր ժողովրդեամբ, խնդրեաց զօրագլուխ Հայոց եւ քողաւայն»: Այդ զօրավարն առանց տարակոյտի Վահան Մամիկոնեանն էր (Ա. կինեան ՀԱ. 1931. 412):

Անաստաս կայսրը (491—518) կրցաւ թշնամութեանց դադար մը ձեռք բերել 506ին, 11,000 ռակի տուրքի մը վճարումով:

Պարսիկները համակերպեցան, վասնզի Հոնները կովկասը անցնելով Հայաստանի վրայ խուժած էին և մինչեւ Տարոն յառաջացած՝ հարկադրելով թէ՛ Պարսիկները և թէ՛ Բիւզանդացիները վանել այս բարբարոսները (Kevork Aslan. Etudes Histor. 252):

Մինչեւ Անաստասի մահը (518) խաղաղութիւնը պահուեցաւ Յուստինոս Ա. (518—527), ընդհարում մը ունեցաւ Պարսից հետ, վասնզի Կողքիս և Իպերիա՝ Կաւատի հարստահարութիւններուն դէմ կայսեր օգնութիւնը խնդրած էին: Բելիսարիոս՝ մտաւ Պարսկական Հայաստան և սուրբեց, սակայն չուտով պարտաւորուեցաւ դառնալու Միջագետք՝ պաշտպանելու համար Դարան, որպէսզի Պարսիկները չառաջանան: Կաւատ հաշտութեան բանակցութեան կ'սկսի 525ին, սակայն երկու տարուան բանակցութենէ յետոյ, 527ին, Յուստինիանոսի գահակալութեան տարին, կը վերսկսին թշնամութիւնները, և կոիւր կը շարունակուի Միջագետքի մէջ. ուր Պարսիկ բանակը, որ անցած էր Մփրատը (531ին) և կ'առաջանար դէպի Անտիոք, Բելիսարիոսի ճարտարութեամբ պարտութեան կը մատնուի: Սոսրով Ա. Անուշըռուանի գահակալութենէն (531) յետոյ, կը կնքուի 532ի խաղաղութիւնը, նախկին սանձանները անվտիտի պահուեցու պայմանով (Kevork Aslan. նոյն. 252—3, Գեղեցիք. 77):

2. 532ի դաշինքը սոսկ զինադադար մը եղաւ, զի 540ին Սոսրով Ա. Անուշըռուան (—Անմահ), որ գոռոզ, ինքնահաւան, պատերազմասէր վահագետ մըն էր, Յուստինիանոսի Արեւմուտքի մէջ զբաղած ըլլալէն օգ-

տուեցիով, առանց պատերազմ հրատարակելու մտաւ Բիւզանդական հող և 22 տարի տեւող պատերազմի մը տեղի տուաւ: Միջագետք և Ասորիք, մինչև Անտիոք, հուրի և սուրի մասնուեցան: Հարստահարուեցան այն քաղաքները որոնք անկարող էին դիմադրելու և նուաճուեցան բռնուեթեամբ անոնք՝ որոնք համարձակեցան դիմադրութեան: Անոնց բնակիչները կոտորուեցան և գերի վարուեցան: Պատերազմը յաջորդ տարիներուն Միջագետքի մէջ շարունակուեցաւ փոփոխակի յաջողութիւններով:

Այս պատերազմը փոխադրուեցաւ նաեւ Հայաստանի հողին վրայ 543ին, վասնզի Բիւզանդական բանակը երեք թեւերով առաջացաւ դէպի Դուին: Հայոց այրուծին՝ Վասակ Մամիկոնեանի և Սրտաւան Արշակունիի գլխաւորութեամբ՝ կը գործակցէր Պարսիկ բանակին, մինչ ուրիշ նախարարներ կը լքէին Պարսիկները և կը դաւէին անոնց դէմ (տես վերը 147):

Ներսէս Հայ զօրավարը կռիւին մէջ կը մեռնի և Բիւզանդական բանակը անգլուխ կը նահանջէ և Բիւզանդացիք կ'ստիպուին 545ին հինգ տարուան համար զինադադար կնքել, դուրս թողլով Լազիստանը՝ ուր կռիւը կը շարունակուի (Güterbock. ՀԱ. 1909. 83. Հ. Գեյցեր. 79): Այս զինադադարը երկու անգամ նորոգուելէ յետոյ, 562ին վերջապէս յիսնամեայ խաղաղութեան դաշինքի մը կը վերածուի (ՀԱ. 1909. 175—6):

3. Խոսրով, 565ին, Յուստինիանոս Ա.ի մահէն անմիջապէս յետոյ, երբ իր պետութեան մէջ գտնուող բոլոր քրիստոնէից դէմ հալածանք հանեց, Յուստինոս Բ. (14 Օգոստ. 565—578 Հոկտ. 5), որ դաշնակցած էր Թուրքերուն հետ ընդդէմ Պարսիկներու և պատրուակի մը կ'սպասէր, երբ Հայոց կողմէ 572ին դիմում եղաւ օգնութեան, պատերազմի ձեռնարկեց (*):

573ին Բիւզանդացիք անյաջող կերպով պաշարեցին Մծբինը, մինչ Պարսիկները գրաւեցին նշանաւոր Դարան (Մերաինի մօտ) և ամբողջ Ասորիքը աւարի տուին:

Թուրքերը, որոնց վրայ յոյս դրած էր Յուստինոս, ոեւէ օգնութիւն չկրցան ընծայել: Բիւզանդացիք հարկադրուեցան 574 Փետր-Մարտին մէկ ասարուան ամօթալի զինադադար մը կնքել, դուրս ձգելով Հայաստանը, ուր կռիւը շարունակուեցաւ: Զինադադարին լրանալուն, Խոսրով գերագոյն ճիգով մը, 575ին, Հայաստանէն արշաւեց մինչև Կապադովկիա և կրակի տուաւ Սեբաստիան և Մելիտինէն, բայց Պարսիկ բանակը երկու անգամ ջարդ կրեց Բիւզանդական աւելի գերազանց ուժերէ և Խոս-

(*) Güterbock (ՀԱ. 1911. 150) կ'ըսէ թէ Յուստինոս դժգոհ 564ի դաշինքէն եւ փափաճօ ճանչու Արեւելիի քրիստոնեաներ՝ աղէն որոշած էր Պարսից վրայ յարձակիլ եւ Հայերու ապստամբութեան օգուեցաւ եւ ոչ թէ Հայոց համար օտրեցաւ: Ասիկա աւելի հաւանական կը թուի, վասնզի որոշ է թէ քիչ առաջ Կովկասեան ժողովուրդներն ալ դիմում քրած էին եւ ինք չէր օգնած (Հ. Գեյցեր. 99):

րով հազիւ կրցաւ Եփրատը անցնիլ՝ Թագուհին թշնամիին ձեռքը ձգելով (576) (Սեբիոս Ա.): Եփրատի ափերուն վրայ, Մելիտինէէն ոչ շատ հեռու, Խոսրով կը ճակատի Վարդանի հետ և կը պարտուի և իր բանակին տկար մնացորդով կը փախի Աղձնիքի ճամբով (Սեբ. նոյն): Դարձեալ զինադադար կը կնքուի երեք տարուան համար, կրկին Հայաստանը դուրս ձգուելով, որով ան այդ երկարատեւ պատերազմին դառնութիւնները սմէնէն աւելի կը կրէ (Հ. Գեյցեր. 100 և Güterbock. ՀԱ. 1911. 153—154): Խոսրով Հայերը պատժելու համար Հայաստան կը զրկէ զօրուոր բանակ մը, իսկ Բիւզանդիոն, իր կարգին, կը հրամայէ իր բանակին մտնել Հայաստան՝ 576ին: Երկու հակառակորդ բանակները իրարու կը հանդիպին Սաղամախիքի մօտ (Սեբ. Բ.): Պարսիկ բանակը կը խորտակուի և Հայ-Բիւզանդական բանակները, Սիւնեաց Փիլիպոս նախարարին դէպի Հայաստան փորձած արշաւանքը կասեցնելէ յետոյ, կը յառաջանան մինչև Սիւնիք, Աղուանք և Ատրպատական: Բիւզանդացիք կը գրաւեն բովանդակ Հայաստանը և Վրաստանը (Güterbock. ՀԱ. 1911. 154): Թողթութեան լուրերը կը խանդավառեն կայսրը և Պոլիս ապստամբած Հայ փախստականները, մինչ Խոսրով կը ցնցուի և կը խոստանայ Հայերուն ամէն զիջում, բայց անոնք հաւատ չեն ընծայեր: Խոսրով՝ 577ին Տամ Խոսրով մարզպանը բանակով մը կը զրկէ Հայաստան, որուն Բիւզանդական բանակը — իր կեղեքիչ արարքներով ստելի եղած Հայոց — կը քայքայուի և կը ցրուի, վասնզի իր մէջ ինկած էր պառակտում և ըմբոստացած՝ ոռճիկներու անկանոն վճարումին պատճառով (ՀԱ. 1931. 142—160): Արեւելեան Հայաստանը կրկին Պարսիկ տիրապետութեան կ'ենթարկուի: Խոսրով կը շարունակէ կռիւը, անհամար զօրքով մտնելով Միջագետք և գրաւելով Դարան:

Կայսրը Արեւելքի հրամանատար կ'անուանէ Մօրիկը, որ 578ի աժառը, վերջնական հաշտութեան մը համար 575էն ի վեր կատարուող բանակցութիւնները երբ կը խզուին և Եփրատի երկիրներուն վրայ արշաւանքը կ'սկսի Պարսից կողմէ, Տիգրիսը կ'անցնի և Պարսկաստան կը մտնէ, կը գրաւէ Դուինը և հարուստ Արզն գաւառը և բազմաթիւ ամբուրթիւններ:

Խոսրով, երբ Յուստինոս կը մեռնի (578), նորէն բանակցութեան կը մտնէ խաղաղութեան համար Տիգրիսոս կայսեր (578—582) հետ, սակայն իր մահը (579) վրայ կը հասնի: Տիգրիսոս կը շարունակէ պատերազմը Խոսրովի որդւոյն Որմիզդ Գ.ի դէմ (579—590) և 581ին Կոստանդինի մօտ փառաւոր յաղթութիւն մը կը շահի (Հ. Գեյցեր. 100—1), սակայն չի կրնար պատերազմը վերջացնել:

Իր յաջորդը՝ Մօրիկ (582—602)՝ նոյնպէս կը շարունակէ պատերազմը փոփոխական յաջողութիւններով: Բիւզանդական զօրքը քանի մը յաղթութիւններէ յետոյ, 589ին կը գրաւէ նշանաւոր Մարաիւրոպոլիսը (Նփրկերտ) (Հ. Գեյցեր. 102), ճիշդ այն ժամանակ որ անակնկալ փոփոխութիւն մը Պարսիկ պետութեան ճակատագիրը Պոլսոյ կայսեր կը յանձնէ:

Սոսրով Բ. Ապրուէզ (=Յաղթող) (591—628), լքուած իր զօրքէն, փախստական կ'ապաստանէր Բիւզանդական երկիր և Մօրիկի օգնութիւնը կը խնդրէ (Սեբէոս Բ.): Մօրիկ կը հրամայէ Արեւելքի հրամանատար մեծաազանդ Հայ զօրավարին՝ Ներսէս Պատրիկի և Հայաստանի կուսակալ Յովնան Պատրիկի, որ օգնեն Սոսրովի (նոյն): Բիւզանդական բանակին կը միանան նաեւ Տարոնի իշխանը՝ Մուշեղ Մամիկոնեան և Սմբատ Բագրատունի, Հայ գունդերով:

Կը խորտակուի ապստամբ Վահրամ Միհրեանդակի (Չոփին) ոյժը (592) և Սոսրով Բ. կը տիրանայ Պարսիկ գահին:

Պարսիկ երախտապարտ թագաւորը Հայաստանի մեծագոյն մասը՝ Տայքը, Այրարատը (առանց Գուշի), Տուրուքերանը և Աղձնիքը կը թողու Մօրիկի և ետ կուտայ Գարան և Նփրկերտը, միայն իրեն պահելով Մծբնը, և թշնամիները՝ ընդհատներով՝ 573էն 591 տեւող պատերազմէ մը (Հ. Գեղցեր. 100) յետոյ, կը դառնան բարեկամ և զինակից, այնպէս որ Սոսրով «Հայր» կը կոչէր Մօրիկը:

4. Պարսիկ-Բիւզանդական բարեկամութիւնը շատ կարճ կը տեւէ: Երբ Մօրիկ 602ին կը գլխատուի Փոկասի (602—610) կողմէ, Սոսրով՝ Մօրիկի վրէժը լուծելու և գահը անոր զաւակին՝ Թէոդոսի ապահովելու համար Բիւզանդիոնի դէմ պատերազմի կ'սկսի:

Անձամբ կը յարձակի Գարայի — սահմանագլուխի ամէնէն գլխաւոր ամրոցին — և Եղեսիայի վրայ և Ասորիքն ու Միջագետքը ոտնակոխ կ'ընէ: Ներսէս Կրտսեր մեծ Հայ զօրավարը և Պարսիկներու սարսափը, Եղեսիոյ մէջ կ'ապստամբի և կը փորձէ միանայ Սոսրովի, սակայն դաւաճ կը ձերբակալուի և խարոյկի կը դատապարտուի (605): Սոսրով աներեւակայելի յաջողութեամբ մը Փոքր Ասիայէն անցնելով 60էին, կը հասնի Բիւզանդիոնի հանդիպակաց եզերքը: Փոկաս ժողովուրդին կատաղութեան զոհ կ'երթայ և Հերակլ քահ կը բարձրանայ (610):

Այս պատերազմի միջոցին Հայաստան դարձեալ ոտնակոխ կ'ըլլայ: Նախ Փոկաս կու գայ «զօրօք բազմօք ի Բասեան, առ բնդ իւրեաւ զՀայասթանեայս նուանել» (Յովն. Կաթ. 94) և ապա «Առոս ոմն հրամանաւ խորովայ հասեալ ի Հայս եւ դիմեալ ի վերայ՝ խորակեք զզօրսն Յուճաց, զի ոչ ինեք թիւ սպանանելոցն ի դասօթն, եւ ինքն կալեալ գործ պատերազմի բնդ Կարնոյ քաղաքի՝ առնոյր զճա եւ յեք երկեամ մի ամաց զբնակիչս քաղաքին յիմասան փոխեք» (Յովն. Կաթ. 95): Կը գրուուի նաեւ Կթաւիճ, Սատաղ, Նիկոպոլիս, և այլն:

Բիւզանդացիք կը վանուին հեռու Հայաստանէն և հակառակ Հերակլի ջանքերուն, Պարսիկները կրկին կ'անցնին Եփրատը և 611ին կը գրաւեն Անտիոքը, Ապամէան (=Համա), Եմեսան (=Հոմա) և Կեսարիան (Միխայել Ասորի. 292. Սեբէոս ԻԳ. Վարդան 61): Հերակլ՝ նկուճ՝ կը ջանայ խաղաղութիւն կնքել, սակայն խրոխտ Սոսրով կը մերժէ, այն յոյսով թէ պիտի կարենայ վերջնականապէս նուաճել Արեւելեան Կայսրութիւնը, որուն օրհուրը հասած կը թուէր:

Իրապէս, կացութիւնը յուսանատական էր, վասնզի Պարսիկներու ձեռքը կ'իյնային հեռզնեաէ Գամակոսը (613), Երուսաղէմը (614) և շատ մը ուրիշ քաղաքներ, որոնց բնակիչները գերի կը վարուէին: Պարսիկները 615ին դարձեալ կ'առաջանային մինչեւ մայրաքաղաքին դէմ՝ Քաղքեզոն: Փիլիպպիկոս զօրավարին յարձակումները Հայաստանի վրայ՝ թէեւ ստիպեցին Պարսիկները առժամապէս ետ քաշուիլ, սակայն 619ին կրկին խոյսցան մինչեւ Փոքր Ասիոյ սիրտը՝ Անկիւրիա և իշխեցին՝ մայրաքաղաքը Ասորիքի և Ասիոյ հետ կապող հաղորդակցութեան գիծերուն: Եգիպտոս՝ որմէ կը պարենաւորուէր Պոլիս, ինկաւ Պարսից ձեռքը (Հ. Գեղցեր. 112—3):

Պարսիկ պետութիւնը նոր փոյլ ստանալով՝ կ'սպառնար կործանել Բիւզանդական կայսրութիւնը, որ յուսահատական և ճգնաժամային բուրգներ կ'անցընէր:

Այս տագնապալի կացութիւնը գերապոյն ճիգի մը մղեց Հերակլը և իր շուրջը գտնուողները. որոնք Պարսիկներուն դէմ անօրինակ ոգեւորութեամբ մը զինուած, Սուրբ Պատերազմի մը ձեռնարկեցին, (622ին: Հերակլ, կարճ ժամանակի մէջ Անատոլուէն: Պարսիկները հետացնելով 624ին, վերստին յառաջացաւ մինչեւ Հայաստան և զայն ճեղքելով՝ արշաւեց մինչեւ Մարաստան և Խորպատական և կործանեց Գանձակի մեծաճաշակ կրակատունը (Գեղցեր. 114—5): Հերակլ շարունակեց յաջողութեամբ պատերազմը երեք տարի եւս (նոյն. 115) և վերջապէս Մժէժ Գնունի Հայ զօրավարին գործակցութեամբ տաժանելի յառաջխաղացումէ մը յետոյ, 627 Դեկտ. 12ին Նինուէի մօտ վճռական յաղթանակ մը չահեցաւ և Պարսիկ բանակը խորտակեց: Սոսրով մեռաւ (628 Փետր. 25ին) և որդին՝ Շէրօ (Կաւաս Բ. 628+) խաղաղութիւն խնդրեց: 630ին Պարսիկ զօրքը հեռացաւ Բիւզանդական հողերէն՝ ընդ որս Հայաստանէն, որ 28 տարի անընդհատ թատերավայր եղած էր պատերազմներու:

Այս սակէ յետոյ, Պարսիկ պետութիւնը գահակալական կռիւներով սկիւրացած, անգամ մըն ալ չփորձեց Բիւզանդիոնի դէմ պատերազմի մտնել:

Այս չորս երկարատեւ պատերազմները, որոնք Բիւզանդիոն եւ Պարսկաստան մղած են իրարու դէմ 498էն 640 շրջանին, այդ 919 տարիներու զրբէ կէտը (103 տարին) կը գրաւեն:

Հայաստանի մասնակի տիրող և սակայն միշտ ամբողջական տիրապետութեան ցանկացող երկու մեծ պետութիւններու այս գրեթէ մշտապէս պայքարին ընդհատումի տարիները բոլորովին անբաւական էին զպատերազմին աղէտները և անոր պատճառաւ թշուառութիւնները և տընտեսական քայքայումը դարմանելու համար, այնպէս որ, երկիրը շարունակ դէպի անշքացում և սւեբում դիմած է: Ետս պարզ է ուրեմն մակարեւի թէ, իբր հետեւանք այս դժնդակ կացութեան, Արշակունեաց կործանումէն առաջ իսկ սկսած զաղթելու հոսանքը շարունակուած է դարձեալ:

Այնպէս որ, 428էն 640, Հայաստան շարունակ պարպուած է իր բնակչութիւնէն, որքան բռնի նոյնքան ինքնակամ, հեռացողներու մեծ թուով: Մասնաւորապէս գողթային հոսանքը դէպի քրիստոնեայ կայսեր երկիրները — որոնք կը մնային դարձեալ Հայոց նախընտրած վայրերը — աստեղացած է այս շրջանին, մասնաւոր այն օրերուն երբ Պարսիկները Հայերը հալածած են կրօնական պատճառներով: Այսպէս, 451ին, Վարդանանց շարժումէն առաջ և յետոյ, որոշ է թէ մեծ թուով Հայեր անցած են Բիւզանդական երկիր, խուսափելու համար հալածանքէ: Նոյնիսկ շարժումին վարիչը՝ Վարդան Մամիկոնեան՝ ապստամբութենէն առաջ իր ընտանիքով և հետեւորդներով ճամբայ ելած է դէպի Բիւզանդիոն՝ ճառայելու համար կայսեր և Վասակ մարզպանի խնդրանքով է որ հրամարած է այդ մտադրութենէն (Փարսիցի. 165—167), իսկ ապստամբութեան ճախողելէն յետոյ, երբ երկիրը ասպնապի մատնուեցաւ և անգլուխ մնաց՝ նախարարներուն տարագրութեան պատճառով, շատ հաւանական է որ շատեր Հայաստանէն հեռացած ըլլան, որքան որ մեր պատմագիրները լուռ մնացած ըլլան այդ մասին:

Միայն թովմա Արծրունի (Բ. Բ) կը հաւատաւ — չենք գրտեր որքան ճշգրտութեամբ — թէ այդ շրջանին Բիւզանդիոն դիմած են Արծրունիներ, «Վասակ... հայր Աղանայ սբոյ առեալ զՏանաս եւ զԳոսեբ զեգբայր իւր զնաց առ կայսր, մեկուսի եղեալ ի Եփրատեաց պարսկական վեղովմանցն եւ աւերման աօխարհին» և արագաւորն Մարկիանոս (650—457) բնկալաւ զնոսա սբոյ ի խաղաղութեան՝ մեծաբոյ պատուով ի բարձր եւ ի պատի յառաջ անեալ իբրեւ զհազարամարտի սխոյեանս որ ի վերայ եկեղեցիաց Բրիտանիա եւ սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան եւ զխոստովանողական անուն ձայն ի վերայ եղեալ կարգալին: Հոն, զժամատարար, կ'ենթարկուին կրօնական ճշուածներու և իբր թէ կը բողոքեն որ ինչու կայսրը իր գումարած Քաղաքապետի ժողովին Հայերը չէ նրաւորած, և իբր թէ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսին խորհուրդով նոստատ պահելով իրենց կրօնքը, կ'ապրին Պալեստինայի Լեւոն Ա.ի (457—474) տան: Իրենցմէ Վասակ և Տանատ հոն կը մեանին, իսկ Վասակի Աղան որդին կը գառնայ հայրենիքը (Արժուեք. Բ. Բ): Ասիկա փոստ մըն է որ ուրիշ շատեր ալ — ոչ անշուշտ ամէնքն ալ իշխանական տուներէ — այս շփոթներու տանն անցած են Բիւզանդական երկիրներ, ուր քիչ յետոյ Հայոց գիրքը գերակշիռ կ'ըլլայ, անշուշտ իրենց թիւին շնորիւ, որ այս անումին կրնար նոստ ըլլալ միայն գողթերով:

Հոսմէական կայսրութեան բաժանումէն յետոյ, անոր Արեւելեան կամ Բիւզանդական մասը բաւական տան պահած է իր արեւմտեան-նամէական նկարագիրը, որ յետոյ անգի առած է յունական-անաստիանին, միշտ ունէջ պահելով Հելլենականութեան ոգին՝ որ երբեք չընկճուեցաւ որքան որ բարբարոս ցեղեր եկան խառնուիլ բնակչութեան: Անոնք իրենց սուղ արիւնով երկաստորգացողին կայսրութիւնը, վաճաղի նոր

այժերուն առջեւ բաց էին բանակին, վարչութեան, դատարանի և եկեղեցիին դուռները: Բիւզանդիոն ունեցաւ Հայ, պարսիկ և ոչաւ ծագում ունեցող զօրավարներ, իտալացի, պուլկար և ՀԱՅ պաշտօնատարներ և վերջապէս նախարարներ՝ որոնք Արաբ կամ Թուրք դաւանափոխներ էին (մտ. Շառլ Տիչ. Բիւզանդական կայսրութեան կառավարութիւնը եւ վարչութիւնը. Cambridge Medieval History. Գ. հտ. ԻԳ. 736):

Հայերը, որոնք կու գային լեցնել Անատոլուն, անշուշտ դեր մը չէ այլ ընդհակառակը՝ նոյնիսկ առաջնակարգ դեր մը կատարեցին կայսրութեան մէջ, Աւարայրի տուամէն գրեթէ անմիջապէս յետոյ, զգալի ընելով իրենց գոյութիւնը: «Ջարմանալին այն է որ օսար ցեղի մը զաւակներուն այն խաղաղ թեւակոխումը, արժանիքի գնանաթումը՝ որ ուրիշ նման պարագաներու սերունդներ անցնելու կը կարօտի, ցաւ ցաւ տեղի ունեցած է Բիւզանդիոնի մէջ, գրեթէ առաջին օրէն» (Գառնիկ Յնագլեան. Հայ իսխանաւորք ի Ռավկենա եւ Բիւզանդական կայսրութեան մէջ. ԱՄ ԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ. 1926. 361):

Յուստինիանոսի ժամանակակից պատմիչը՝ Պրոկոպիոս, որ երեւելի հետոր, իրաւագէտ և վարչական մարդ մըն էր և իբր խորհրդական որում էր Բիւզանդիոն հռչակաւոր զօրավարին, երբ ան կ'երթար Պարսից դէմ, իր գործերէն մէկուն մէջ կ'ըսէ. «Մուլարիոս կոչուած զօրախումբ մը կար թուով իբր 3500 հոգի որ սկիզբէն՝ կայսերական պալատան պահապան անձնապահ գունդի պատճոհ ունէր, եւ աւելի մեծ թուակ կ'ստանար քան բանակին մնացեալ մասը: Առաջ՝ ասոնք կ'ընտրուէին Հայերէ, իրենց բարձրագոյն արժանիքին համար որ զիրենք կը քանէր կը հասցնէր այս պատիւին, բայց յետոյ, Ձեմոն կայսեր (474—491) օրէն ասդիք, ռեւե անարժան, անարի, վասասիթս մարդու թոյլ տրուեցաւ մտնել այս զօրախումբին մէջ, եւ նոյնիսկ գերիներ դրամ ռոժով կրցան մուտ գործել»: Եր տեսնուի բացայայտ հակադրութիւնը. ոչ թէ դրամ կամ լոկ Ֆիդիք անդամանք (անձնեայ, թիկնեղ, արքեանի հասակ, կերպարանք և այլն) կու տար Հայոց նախապատուութիւն, այլ միայն իրենց բարձր յատկութիւններով (որոնց մէջ էր անշուշտ քաջութիւնը) լաւագոյնները ըլլալն է որ զիրենք կը հասցնէր այս նախանձելի դիրքին: Այս՝ Ձեմոն կայսեր ժամանակէն իսկ առաջ՝ Չ. դարուն, Յուստինիանոսի օրով, 4000ի մօտ կապաղովկիացիներ և մասնաւոր Հայեր (առաջիկաներուն մէջ եւս շատ Հայեր կային) կը կազմէին պալատան պահապան այս զօրախումբը» (The Roman Empire from 81 to 1081, by. F. W. Bussell. London. 1910. 354 և Գ. Յնագլեան. Հայագիրներ ի Բիւզանդիոն. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ 1935. 125):

Այս «3500 հոգինց «Մուլարիոս» զօրախումբին ամբողջ Հայերէ բաղկացած ըլլալը հետեւցնել կու տայ թէ Հայաստանէն կամ գոնէ Յունաց իսխանութեան անցած Հայաստանի մասէն Բիւզանդիոն գաղութի մղումը զկամ ըլլալու է այն օրէն երբ Հայաստանի բաժանումը Բիւզանդիոնի եւ

Պարսկաստանի մէջ համաձայնութեամբ տեղի ունեցաւ, որ է 386ին» (Գ. Ֆնտզլեան. Հ. ԿՈՉՆԱԿ. 1935. 125):

Ուրեմն Հայեր արդէն Գ. և Ծ. դարերէն սկսած՝ բաւական մեծ թուով մուտք գտած էին Բիւզանդիոն և այդ կանուխ օրերէն իսկ գնահատուած էր իրենց բարձր արժանիքը (Գ. Ֆնտզլեան. նոյն. ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ. 1926. 361):

Հայոցս համար նշանակելի են ըստ Գ. Ֆնտզլեանի (Հ. ԿՈՉՆԱԿ. 1935. 125) որ «Ա. Հայրենիքի ծայրագոյն սահմանի մէջ՝ Արեւաց մեծ ուժով՝ Զբաղաւեսականութեան բռնաբար տարածման — ինքնաձեռն անօգնական դեմ դնելու գերագոյն ճիգին ասեմ՝ անդին Բիւզանդիոն հազարաւորներ իր լաւագոյն զաւակներէն — բարձրագոյն արժանիքով, բնօրհանի — նուիրուած են Բիւզանդիոնի կայսրը եւ իր պալատը անվրդով պահպանելու: Բ. Բիւզանդիոն տարողեմ գազող Հայերը լոկ ազնուականներու (ազաւանի, սեպուռի) դասէն չէին, այլ ժողովուրդէն ալ սեուար բուով գաղթողներ կային: Գ. Եւ այս ամէն կարգի Հայերը հաւասարապէս համարուիմ, յարգանք կը վայելէին, նշանաւոր, գերադասելի տար կը նկատուէին, եւ յօժարուկամ կը դուռէին կայսրութեան ի սպաս, ուրեմն չէին համարուեր անպէտ, աննշան, ողորմելի գաղթականներ, տառապեալներ»:

Նոյնքան ուշադրաւ է որ Հայերը գնահատուելի կ'սկսէին ժամանակամիջոցի մը երբ Գերմանները դեռ զօրքին մէջ կը պահէին գերակշիռ ազդեցութիւն և իրարու յաջորդող կայսրերը հին Հռոմայեցի սերունդէ էին: Հայ զինուորական տաղանդին գործօն մասնակցութիւնը Բիւզանդիոնի կեանքին, Ծ. դարէ յետոյ աւելի պիտի շեշտուէր, վասնզի Հայոց թիւը պիտի բազմանար Հայաստանի մէջ նոյն դարուէն կէսերը պատահած դժնդակ դէպքերուն հետեւանօք, որոնք դժբախտաբար անցողակի բնոյթ մը չունեցան:

Հազիւ Վարդանանց տաղանակը փակուած Ծ. դարուն վերջին քառօրդին, տեսանք թէ ինչպէս Պերոզի (457—483) նենգութիւններով Հայաստան նոր տաղանակներու ենթարկուեցաւ և ինչպէս ի զուր իր ազերսարկու ակնարկը սեւեռեց դէպի Բիւզանդիոն:

Նոյնիսկ սպասամբութեան պայթելէն առաջ, երբ Գիւտ կաթողիկոսին հետ Պարսիկ տիրապետութենէն դժգոհ Հայ նախարարները զաղանի ժողովներ կ'ունենային, անոնք կը խորհէին «երբեմն փախչել յօտուրքիւն եւ երբեմն ի խնդիր լինել օգնականութեան եւ ապստամբել», ուստի «առաքէին գաղտ եւ պատգամաւորս միանգամ եւ երկիցս առ քաղաւորն Յունաց Լեւոն, որոյ քեպեսեւ յանձն առեալ կամեր օգնել, յերկարէր ժամն եւ խափանէին խորհեալին» (Փարպեցի. 341):

Լեւոն կայսրը (457—474) զինուորական գործողութեամբ մը Հայերը չպաշտպանեց, բայց կ'ըսուի թէ Բիւզանդիոն դիմողներուն բնակութեան վայրեր և հովանաւորութիւն խոստացաւ: Այս գաղթի հրաւերին պատասխանեցին Հայ նախարարներէն Արտաւան — որ Վարդան Մամիկոնեանի Հմայեակ եղբորը մէկ աղջիկը կնութեան առած էր — և անոր եղբայրը՝

Քաղրիկ և ուրիշներ, որոնք ձգեցին իրենց երկիրը և դացին Պոլիս, ուր Լեւոն զանոնք իբր արքայազուններ ընդունեց և յետոյ տեղափոխեց, հաւասօրէն 465—7ին տեսնենք, Մակեդոնիոյ Նիկիա կամ Նիգի (հիմա Նիշ) քաղաքը: Բրօֆ. Ադոնց, Կոստանդին Միրանաձինի (=Պերփիւտոսէն) (Բ) և Կեդրենոսի (557 և 437) տեղեկութիւնները (տես. Չամբիշեան. Պատմ. Հայոց Բ. 148) կը համարէ առասպել որ Կոստանդին կայսր-պատմագիրը և Վասիլ կայսեր թոռը, յօրինած է սպացուցանելու համար թէ իր մեծ հայրը «ի գաւառէն Մակեդոնիոյ ունէր սկիզբն եւ վերաբերէր առ Հայոյ Արեւկուցիս ազգաւ» Այս վաւերականութիւնը ինդրական առասպելին համաձայն՝ Արշակունիներու մէջ ծագած խոսվութեան մը մէջ Արտաւան և Կլիէն (Kleines) (*) ոչ միայն զրկուեցան հայրական իշխանութենէ, այլ և զգացին որ իրենց կեանքը վտանգի մէջ էր, ուստի ձգեցին իրենց հայրենի երկիրը և չուեցին դէպի Պոլիս: Լեւոն կայսրը, ընդունեց փախստական իշխանները, սիրալիր վերաբերում ցոյց տուաւ և իրենց ազնուական ծագման վայել բնակութիւն և ապրուստ արամադրեց մայրաքաղաքին մէջ:

Երբ Լեւոն իմացաւ որ Պարսից թագաւորը կ'ուզէ զանոնք ետ դարձնել, խոստանալով տալ իրենց սեփական իշխանութիւնը, որպէսզի չյաջողի, իբր աւելի հեռու և ապահով տեղ՝ «փոխադրեաց զնոսա ... ի Նիգի քաղաքն Մակեդոնիոյ՝ հանդերձ որդով եւ կանամբք, քանզի զկնի բերեալ էին եւ զնոսա» (Կոստ. Միրանաձին):

Իսկ Հերակլի ժամանակ (610—641), արաբներու կողմէ եղած նմանօրինակ փորձի մը պատճառով, կայսրը հրամայած է Նիգիէն տեղափոխել Մակեդոնիոյ Փիլիպպոս քաղաքը (**), Յետոյ անոնք անցան Ադրիանուպոլիս, աւելի մեծ կեդրոն մը: Ըստ Կոստանդին Միրանաձինի, տարիներ յետոյ, Կոստանդին կայսեր և Իրենէի ժամանակ (780—797), իբր թէ Maiktes անուն մէկը՝ Արշակի արիւնէն, դեսպանութեան թէ ուրիշ գործի պատճառով, եկաւ մայրաքաղաք և հոն պատահեցաւ Լեւոն անունով Հայու մը և տեսնելով որ ան եւս հասարակ մէկը չէ այլ ազնուական նշանաւոր ծագում ունի, մտերմացաւ հետը: Լեւոն ընդունեց զայն իր ընտա-

(*) Կլիէն (Kleines) խոր եւ խաբարուած անուն մըն է: Պատմութեան մէջ կը յիշուին Artavanes (=Արտաւան) եւ Cylaces (=Կլակ) (ուղղելի Gylaces=Քլակ) իբխաններ, որոնք սպանեց Պապ թագաւորը (Ամմարնոն 29. էջ. 31. 1): Ատոնք կը համապատասխանեն Փաւսոսի Մուսեղ Մամիկոնեանին եւ Քլակ Մարդպետին եւ ի հաւել չեն կրնար նոյնանալ Արտաւանի եւ Կլիէնի հետ: Արտաւան Արեւկուցի ժամանակակից Չ. դարուն յիշուած է ուրիշ Gylakios (=Քլակ) Հայ իբխան մը՝ Բիւզանդական բանակին մէջ: Կրնայ առասպելին հեղինակը օգտուած ըլլալ այս անուններէն. Քլակը՝ Քեղակ, սխալ ընթերցումով անցելով (Բրօք. Ն. Ադոնց. Հայրենիք Գ. տարի. ք. 10. 114):

(**) Ըստ մանց՝ արդի Փիլիպպոս=Քլովսիւր եւ ըստ այլոց՝ Քալապոլի արեւմուտք գտնուող Փիլիքի (նախկին Քիսթրոպոլիս) քաղաք, հիմա սուրբակ (F. Charlandon. Essai sur le Règne d'Alexis I. Comnène, Paris. 1900. 37): Պոլսու Առաքել քաղաքն է այս վերջին քաղաքին մէջ:

նիքին մէջ և վերջը փետայացուց: Այս ամուսնութենէն իբր թէ ծնած էր Վասիլի հայրը, որ ըստ այս առասպելին, Ադրիանուպոլսոյ մէջ կ'ամուսնանայ Կոստանդին Մեծի սերունդէն աղջկան մը հետ: Նոյնիսկ պատմողն ինքն ալ անհաւանական և անհաւատարի համարելով Արտուսանի և Կլիէնի սերունդներուն Հայ մնալը օտար միջավայրի մէջ, դարերու ընթացքին, ցրուելու համար տարակոյսը, կ'ըսէ թէ Արշակի սերունդները պահած էին իրենց ազգութիւնը Ադրիանուպոլսոյ մէջ՝ հակառակ խառն ամուսնութեան դէպքերու (Vita Bas. 212):

Ընդունելով հանդերձ Բրոֆ. Ն. Ադոնցի (Վասիլի Հայազն. ՀԱՅՐԵՆԻՔ. Թ. տարի. Թ. 10. 112 - 114) տեսութիւնը այս առասպելին մասին, անուրանալի է սակայն որ Լեւոն Ա., որ ծագումով Յոյն-Օրթոտոքս և Թրակացի էր, Փերմաններու գերակշիռ ազդեցութիւնը խորտակող առաջին Բիւզանդացի կայսրը եղած է. Փոքր Ասիայէն՝ մասնաւորապէս Իսաւրիայէն՝ նոր զօրք հաւաքելով: Անիկա կը թուի քաջալերած ըլլալ նաեւ Հայերը, որոնցմէ կ'առնուէին արդէն «Սկուլարիոս» կոչուած պալատին զօրքերը: Հետեւաբար անհաւանական չէ որ եթէ ոչ Կոստանդին Միլիանաճինի և Կենդրենոսի պատմած ձեւովը, բայց այլապէս Հայ զօրքեր և զօրավարներ, այդ շրջանին Բիւզանդական բանակին մէջ մտած և որոշ գեր մը կատարած ըլլան, պետութեան սանձանագլուխներուն վրայ, ինչպէս էր Նիշ՝ այն ատեն:

Բարբարոս ժողովուրդներ, կայսրութեան հիմնարկութեան օրերէն սկսեալ՝ Դանուբը՝ երկիրին այդ բնական սահմանը, ոտնակոխ ընել փորձած են և երբ յաջողած են զայն անցնիլ, այս անգամ ալ փորձած են Հեմուսի (Պալքանեան լեռներ) կիրճերէն դուրս սպրդիլ և երբեմն անօրինակ յաջողութիւններ ձեռք բերած: Բիւզանդիոն այս բարբարոսներու արշաւանքին դիմադրելու համար պէտք ունէր զինուորական մեծ ոյժերու զորս Փերման վարձկաններով չէր կրնար հայթայթել: Հետեւաբար պարտաւորուած էր դիմելու ասիական լեռնաբնակ կռուող ժողովուրդներու օժանդակութեան: Այս պատճառով, նախ Իսաւրացիք և ապա Հայերը իբր զինուոր պետութեան եւրոպական բաժինը բերած է: Այսպէս վերջ գտած է գերմանական զինուորական գերակշռութիւնը և սկսած՝ Հայ զինուորական գունդերու և զինուորական պետերու յիշատակութիւնը:

Այս բարբարոս ժողովուրդներու խուժումին դէմ, որ անակնկալ կերպով կը կատարուէր, իբր նախաճգ կարգադրութիւն, մշտապատրաստ մնալու պարտք կը ծանրանար Բիւզանդական պետութեան պէտքերու հարգաւորեալ կառավարութեան մը վրայ, որ այս պատճառով միշտ կարեւոր բանակներ պետութեան սանձաններուն վրայ կը պահէր և զինուորականներուն հաստատուն բնակութիւն կու տար, որպէսզի անակնկալ չգայ, վանձի այդ բարբարոսները յանկարծ կը յարձակէին, անխնայ կը կոտորէին, կ'աւերէին, մահ կը սփռէին և բազմաթիւ գերիներ առած՝ կը հեռանային: Եւ որովհետեւ Բիւզանդական պետութեան բանակը վարձկան

զինուորներէ կը բաղկանար, զինուորականութիւնը ասպարէզ մըն էր որուն կը նուիրուէին ապահովաբար շատ Հայեր որոնք ամէն ինչ լքած, յաճախ կը հարկադրուէին հեռանալ իրենց հայրենիքէն, չհանդուրժելով անոր խռովակոծ ու տագնապներով լեցուն վիճակին, որ ինչպէս պարզուեցաւ, գրեթէ մշտապէս հանգամանք մը ունէր 428էն 640 տեւող շրջանին:

Եթէ մի քանի խողաղութեան կարծատեւ պահեր ունեցաւ Հայաստան, միջանկեալ կռուներու, անոնց ընթացքին դժուար է մտածել թէ անգամ մը թափ առած գաղթի հոսանքը ընդհատուած ըլլայ, երբ մանաւանդ նկատի ունենանք թէ Բիւզանդիոնի և Պարսկաստանի համար, որոնք Հայաստանի մէջ կամ անոր շուրջը կը մտքստէին, Հայը որքան պիտի նոյնքան ալ կասկածելի տարր մըն էր, որքան ատեն որ անիկա կրօնական միութեամբ մը ձուլուէր չէր համակերպեր, և իրեն վրայ ի գործ դրուած ճշուններուն իբր փոխադարձութիւն՝ պատերազմիկ կողմերէն մէկուն յարելով, կրնար միւսին վտանգ սպառնալ:

Ասոր համար է որ Յուստինիանոս և իր յաջորդները, Հայերը—որոնց կրօնական հաստատամտութիւնը կը զայրացնէր գիրենք— բաժնելու համար իրենց կրօնքէն, խորհած են զանոնք ցրուել ցանուցիւր Թրակիոյ գաղութներուն մէջ և անկէ տեղահան ընել Պուլկարները որոնք կը փոխադրէին Մելիտինէի և Ծոփոց նահանգները (Kevork Aslan. նոյն. 263) և Այսպէս, Բիւզանդացիք զանազան պատեհութեամբ բռնագաղթի ենթարկեցին Հայաստանի բնակչութիւնը:

Հակառակ անոր որ Հայաստանի Բիւզանդական մասին Հայերը, ինչպէս նաեւ Փոքր Հայքի, Դ. Հայքի, Պոնտոսի, Կապադովկիոյ և ընդհանուր կերպով Փոքր Ասիոյ յունագաւան Հայերը—այն ժամանակի Հայ-Հռոմները— որոնք Արմենակ կամ Արմանեակ կը կոչուէին (Վարդան 42. և Յովհաննէս Վարդ. 23) խղճմտութեամբ կը կատարէին առհասարակ իրենց հպատակի պարտականութիւնը և կը կռուէին Բիւզանդական բանակներուն մէջ, Բիւզանդացիք դարձեալ գահ չէին, այլ կ'ուզէին որ Պարսկական բաժինին մէջ գտնուող Հայերն ալ իրենց յարած մնային և իրենց օգնէին, զաւելով իրենց տիրողներուն դէմ: Այնպէս որ, ամէն անգամ որ Հայերը իրենց հպատակի պարտականութիւնը կատարելով Պարսիկ բանակին մէջ կռուած են Յունաց դէմ, գրգռուած և չարաչար վրէժ լուծած են, ինչպէս, 504ին, Ամիդի մէջ ըրին, երբ յաջողեցան վերագրաւել քաղաքը: Անոնք, իբր վրէժխնդրութիւն Հայոց Պարսիկներուն ընծայած օժանդակութեան, ոչ միայն բազմաթիւ Հայեր կոտորեցին, այլ Պոլիս փոխադրեցին 18,500 հոգի, որոնցմէ նշանաւոր զինուորականներ էլան (Ասսեմանի Ա. 26): Նոյնպէս այն օրերուն է որ Արովբենդ անուն Յոյն զօրավար մը մտաւ Դ. Հայք և կոտորեց 10,000ի չափ Պարսիկ և Հայ և գերի տարաւ չտակր:

Նոյնպէս Յուստինիանոս Ա., 542ին, երբ Պարսիկներուն յաղթեց, Հայ նախարարական այն առնները որոնք Պարսիկները լքելով իր կողմը անցած

էին, իբր թէ «մարդասիրութեամբ ընդունեց» (Պրոկոպիոս. Ի պատգ. Վանս. Բ. 24) և ամբողջ իրենց պարագաներով ու զինուորներով փոխադրել տուաւ Պոլիս, Քրակիա և Մակեդոնիա:

Այդ նախարարները Յունաց գէմ դառնացած (անշուշտ անոնց կրօնական քաղաքականութեան պատճառով), Պարսից բաժինը անցած էին: Խոսքով անոնց հետ ազէկ վարուած չէր, ասոր համար անոնք դարձեալ Բիւզանդական հող ապաստանած և հաւանօրէն անցած էին Դ. Հայոց Մելիթինէ (*) քաղաքը, ուրկէ կայսրը զանոնք փոխադրած էր Պոլիս, վառընդի անոնց Գաղթեդոնականութեան դէմ հակակրօնութիւնը իրեն քաջ ծանօթ էր, ինչպէս կը բացատրէ Պրոկոպիոս:

Մօրիկ, այն որ յետոյ Հայաստանը Հայերէ դատարկացնելու դժոխային ծրագիրը պիտի յղանար, տակաւին կայսր չեղած, երբ 572ին Տիբերիոս կայսեր հրամանով կրկին իբր Սպարպետ Արեւելք ղրկուեցաւ, Բիւզանդացի զօրավարներու ներքին անհամաձայնութիւնները բառնալու համար (Norman Bagnes. The Cambridge Medieval History. Բ. 275), բանակին մէջ կարգապահութիւն հաստատելէ յետոյ, երբ մեծ յաջողութեամբ պատերազմի դաշար Պարսիկ հողին վրայ փոխադրեց, իր առաջին գործերէն մէկը եղաւ կայսեր ղրկել 10 000 զեքի: Իսկ երբ 576ին Հայ հեծելազօրքին օժանդակութեամբ գրաւեց Պարսկահայաստանի մէկ մասը — զոր երկու տարի յետոյ պիտի պարտաւորուէր պարպել — այդ կարճ ժիրպետութեան միջոցին, Մօրիկ, որ իբր ազատարար ընդունուած էր, գէշ վարուեցաւ Հայոց հետ, զանոնք նկատելով թշնամիներ և հերետիկոսներ: Աւելի մարդկային չեղաւ իր վարմունքը Աղձնիքի քրիստոնեայ ընկերներուն նկատմամբ՝ որոնց հրամայեց իբր շնորհք Կիպրոս բնակիլ (577ին) (Theophylacte Simocatta. 1887 Պօս. Գ. Ժգ. 148, Յովհ. Եփեսացի. Զ. ԺԵ. 34):

Նոյն Մօրիկ՝ աւելի վերջը, 582ին, երբ գործակցութեամբ ներսէս Կրասեր Հայ զօրավարին — ժամանակին ամէնէն ճարտար և յանդուգն զօրավարներէն մէկը և 16,000 Սկիւթացի զինուորներէ բաղկացեալ բանակին կազմակերպիչը, որ երբեմն Յուստինոս Բ. կայսեր զինակիրը եղած էր (Չամ. Բ. 297—9 և 308—9) — մինչև Կասպից ծով առաջացաւ (վերը 155), դարձին դէպի Բիւզանդիոն, իր յաղթականի թափօրին մէջ ունէր 6000 զեքիներ: Իսկ կայսր դառնալէն յետոյ, տեսնուեցաւ (վերը 119—151) թէ որքան անգութ եղաւ Հայաստանի նկատմամբ, և ինչպէս ծրագրեց, գործակցութեամբ Պարսից թագաւորին, Հայաստան մը ունենալ առանց Հայու:

Միւս կողմէ, պակաս չէին քաղաքական ապաստանեալներ, այսինքն փախտականներ, որոնք Պարսիկ պետութեան ձեռքը չիյնալու համար կ'անցնէին Բիւզանդական սահմանը, ինչպէս կարելի է հետեւցնել երկու պետութեանց միջեւ կնքուած դաշինքներու պայմաններէն:

(*) Միլիթինէն Պոլիս բերուած ըլլալին ուրիշ պատճառներ ալ յիշած են:

Այսպէս, 563ի դաշինքին մէջ, որովհետեւ «երկու պետութեանց մեջ ալ պատերազմէն ի վեր օտս մը փախստականներ կը գտնուէին, որոնց մէկ մասը դասալիք էր, միւսը՝ անձեր, որ քաղաքական եւ կամ կրօնական պատճառէր դրդեալ բեմամի երկիրին ապաւինած եւ հոն ապաստան գտած էին» (Կ. Գիւտերբոք Բիւզանդիոն եւ Պարսկաստան. 104—107), պայման կը գրուէր Բիւզանդական երկիր փախչողները յանձնել (Ակինեան. Եղիսե. ՀԱ. 1931. 134):

Արդարեւ, Բիւզանդական արքունիքին մօտ ապաստանած էին բազմաթիւ Պարսիկ և Հայ անձեր, ինչպէս Պարսիկ Կաւաստ իշխանը, որ իբր գահի հետամուտ՝ Խոսրովի դէմ դաւաճանութեան մը մասնակցած և յետոյ ներսէսի հրամանին տակ, Բիւզանդական բանակին մէջ գտնուած էր երբ ան Գոթաց դէմ կ'երթար: Նոյնինքն ներսէս, Պարսկահայ մը, բազմաթիւ համախոհներու հետ փախուստ տալով ազատած էր Պարսկական իշխանութենէն և ապաստանած Բիւզանդիոն, Յուստինիանոս կայսեր քով (Գիւտերբոք. ցոյց 104—105 և ՀԱ. 1931. 471—2): Նոյնպէս Խոսրով Ա., անշուշտ 573—578ի ապստամբութեան հետեւանօք, Բիւզանդիոն ապաստանած Հայերը (*), մասնաւորապէս փախստական Հայ նախարարները վերադարձնելու պայմանը, 578ի հաշտութեան դաշինքին մէջ մտցնել ուղած է, սակայն Բիւզանդացիք մերժած են, և ընդհակառակը նոյնիսկ պահանջած՝ որ Հայաստան մնացած Բիւզանդիոնի կողակիցներուն արգելք չէրուի Բիւզանդական երկիրներ գաղթելու (Güterbock. ՀԱ. 1911. 154):

Սակայն դժուար է ունէլ կերպով ապացուցանել կամ փաստարկել թէ ինչպէս Հայեր գտնու առ գտնու գացած են Բիւզանդեան երկիրներ իբր հետեւանք Հայաստանի անապահովութեան և խռովայոյզ վիճակին: Իսկ թէ միայն Յունաց բաժինին մէջ գտնուող Հայերը չէին Բիւզանդիոն դիմողները, այլ Մեծ Հայքէն (Պարսից գերիշխանութեան տակ գտնուող մասէն) աչքերնին Բիւզանդիոն դարձնող և հոն քրիստոնեայ թագաւորութեան մէջ, իրենց ապահովութիւն, բախտ և գործունէութեան ասպարէզ փնտրող Հայեր եղած են, շատ կանուխ ժամանակներէ, յայտնի է անկէ որ Զ. դարուն, հազիւ կէս դար յետոյ, Լեւոն Ա. կայսրը ասիական տարրերը Բիւզանդեան բանակի մէջ առած էր. Յուստինիանոս (527—565), որ կայսրութեան պիտի տար իր ամենամեծ ծաւալը և ամէնէն մեծ փառքը, իր գործակիցներուն մէջ ունէր բազմաթիւ նշանաւոր Հայ զինուորականներ, որոնք այդ փառաւոր շրջանին գլխաւոր դէմքերը հանդիսացան, երբ կայսրը անկուռ կորովով մը կը ջանար վերակազմել Հռոմէական մեծ կայսրութիւնը, անոր արեւմտեան և արեւելեան մասերը միա-

(*) Սեբիոս (Բ) 575—8ին Պարսիկ մեծ բանակի մը Հայաստան արուստանքից նկատուած մէջ, կ'ըսէ թէ՝ երկիրից բնակիչներ ամօր առջև ստատմած, կ'ապաստանին անմտոյ ամրոցներ կամ կը փախին շեռտուոյն աշխարհներ: Այդ աշխարհներ հաւանորէն Բիւզանդական երկրներն էին:

ցընելով: Ասոր համար կայսրը չվարանեցաւ ձեռնարկել զէպի Արեւելք, զէպի Իտալիա, զէպի Կարթագոն, զէպի Սփորտոս, զէպի Սիկիլիա բարձրաձայն մեծ արշաւանքներու, որոնց մէջ կարեւոր դեր կատարեցին Հայ և Արմենակ զորքեր և զօրապետներ:

Ասոնց մէջ բարձրագույն կը կանգնի անփոխարինելի զէմքը Ներսէս Հայ զօրավարին, որ «իբրև արեւելի գանձին վերակացուն, իբր կայսերական բարձր պատգամատար, իբր խոհեմ փոխարեայ-կառավարիչ (է. սարգ) համայն Իտալիոյ, և մանաւանդ իբր ռազմագէտ զօրավար՝ մեծամեծ յաղութիւններ տարաւ ամենեւնի քաղաքացիական պատերազմով ցեղերու վրայ որոնք Իտալիան ասպատակած և մասամբ գրաւած էին, իր հաւատարմ չէ ունեցած Քրիզանդեան կայսրութեան մէջ, ոչ իսկ մեծահռչակ Քելիսարիոսը, որ Իտալիոյ մէջ վաղանցուկ յաջողութիւն միայն ունեցաւ, քեպէս կայսրութեան արեւելեան սահմանները անբաւական ուժերով պատկանելու մէջ նստաւոր հանդիսացաւ:

Ներսէսի քաղաքական կեանքը: Կ'սկսի՝ իբր Յուսիսիանոսի պալատին մէջ ներկայացած սենեկապան որ կայսեր հաւատարմութեան արժանացած էր և գանձը ունէր իրեն վստահացուած: ... Քեքե հասակով կարն և ոչ յապրանդամ կամ անձնագեղ, կանուխ ցուցուցած ըլլալով բարձր ձրեմ, սուր միտք, զօրեղ կամ և ժիր գործունեութիւն, Յուսիսիանոս պատգամատար անոր բնկերելու Քելիսարիոսի՝ երբ կ'երթար Իտալիա բարբարոսները վաճելու: Այս կարող ռազմագէտին հով, տուտով ստացաւ՝ իր բնածին հանձնարով՝ պատերազմական արուեստը, և երբ Քելիսարիոս զարձաւ Քրիզանդոն և իր մեկնումէն խրախուսուած, Գորքեր վերստին մտան Հոմ, Ներսէսի յանձնուեցաւ Գորքեր նուանելու և Իտալիայէն վաճելու դժուարին գործը: Ներսէս պատգամ և բաւականաչափ զինուորական ոյժ կազմակերպելով (օժանդակ վարձկաններով հանդերձ), բեռնաժին հարկադրեց մեծ ճակատամարտի մը և 552ին բոլորովին ջախջախեց Գորքաց քաղաքը՝ Տոսկա, Կապուայի մօտ, և գրաւեց Հոմը: Երկուէն երեք տարի յետոյ Յրաններու և Ալեմաններու միացեալ զօրութեամբ Իտալիա արշաւանքը կատարեց, խորհակելով այս երկուին միացեալ ոյժը: Քիչ յետոյ, Սիլվանոսներու ասպատակութեան վերջ գրաւ: Ու այսպէս, ամեն ցեղէ բարբարոսները նուանելէ ու գապելէ և Իտալիան Քրիզանդոսի կրկին հպատակեցնելէ ետք, ճաստ, այս բազմադիր արշաւանքներէն աւերած, ամայացած երկիրը խաղաղելու իմաստուն վարչութեամբ, և բարգաւանելու իրեն կայան բնակելով ծովահայեաց հոյակապ Ռավեննա քաղաքը: Եւ 13 տարիներ կառավարեց ամբողջ Իտալիան իբր փոխարեայ-էսարգ(°): Արդէն ունէր Պատրիկ սթազոսը, որուն վրայ աւելցաւ Գուգա = Գուկե = Dux, առաջնորդ սթազոսը, «Patricius et Dux in Italia» յաջորդումը ստանալով:

(°) Հայ Յ. Մարտի (Médaille du peuple Arménien 287) Ներսէս Պատրիկ վարչապետը Արեւմտեայ կառավարած է 549է 563, պարիսն 26 տար:

Յուսիսիոս Բ. կայսրը և Սոճի կայսրուհին, լսելով չարամիտ բանասիրեանց, իբր թէ իրեն անձնական մեծ հարստութիւն դիզած ըլլայ՝ անձուն հարկերու կեղեքումով, հրաժարեցուցին զինքը (°). յաջորդ անուանելով Լոնգինոս, թոյլ և ապկար մեկը. որ գրեթէ բոլոր Իտալիան Լոնգինոսացիներու յանձնեց: Իսկ Ներսէս՝ դառնացած ու սրտնեղած՝ չզնայ Բիւզանդոն՝ արհամարհելով արեւելիքի առջեւ ինքզինքն պատկանել, այլ Լոնգինոսը Նափոլի ուր մեռաւ 572ին:» (Գ. Յնագլխան. Հ. ԿՈՉԵԱԿ 1935. 221):

Իր մահէն առաջ, գերագոյն միտքարութիւնը ունեցաւ Հոմի Պապը սենեկով՝ Հոմէն Նարոլի եկած՝ աղերսաւոր, որպէսզի Հայ քաջը անցնի քանակին գլուխը և փրկէ Իտալիան: Ներսէս հաւանեցաւ դառնալ Հոմ, սակայն մահը վրայ հասաւ (Historian's History of the World. Հատ. Է. 455, Հ. ԿՈՉԵԱԿ. 1935. 581):

Ներսէս, որուն մասին հիացումով խօսած են Յոյն և Լատին բազմաթիւ պատմիչներ և «որուն զինուորական բարձր հանձնարիս առաջ բոլորը կը խոնարհեին կամովին» (Հ. Գեյցեր. 74), ոչ միայն ռազմիկ մը, այլ շեշտարար ձեռք մը եղած է, և որչափ ատեն որ Ներսէս Իտալիա էր, «բովանդակ Իտալիա յարազուարճ խնդութեան մէջ էր» (Անաստաս գրապետ): Ան է հիմնադիրը հիւսիսային Իտալիոյ մայրաքաղաքին՝ Միլանի, և զարգարողը Ռավեննան՝ էքսարքիս նստոցը, հոյակապ շինութիւններով: Ինք շինած է հոն Ս. Ապոլլինար (Sant' Apollinare) Մայր Եկեղեցին, որուն մէջ 550 թուականով զետեղուած է արձանագրութիւն մը ի պատիւ Ներսէս Պատրիկի, իբր պերճախօս վկայ Յուսիսիանոսի փոխարքային մեծագործութեանց, որուն մէջ ուրիշ վկան է, իր օրով, Յուլիան սեղանաւորին ձեռքով կառուցուած գեղեցկաշէն և գունազեղ մօզաիկներով ճարտար Սան Վիտալէ եկեղեցին (527—547ին)՝ ի յիշատակ Ռավեննայի վերաբարձումին: Հ. Ալիշան (Հայ-Վեցե. 1896, 12) կը հաւատայ թէ Ներսէս օգտուած ըլլալով Վենետիկեան նաւերէն, նոր բարգաւանդի սկսող Վենետիկ քաղաքին մէջ շինած է եկեղեցիներ և գրատուն մը: Իրեն կը վերադարձի նաեւ Միլանի San Lorenzo հիանալի եկեղեցիին շինութիւնը:

Ներսէսէն զատ կը յիշատակուին, «իբր քաջ զօրավար, Յուսիսիանոսի բանակին հրամանատար Ներսէս (Կամսարական), որ Արեւելք դրկուած և հոն ճակատամարտին մէջ պատերազմելով մեռած է (տես վերը 154): Բայց այս

(°) Պատմագիրներէն ոմանք կ'ըսեն թէ չարամիտ են իր մասին թէ Գորքաց միտքով և անոնց քաղաքը դառնալով, Իտալիան անոնց պիտի մատէ, և ասոր համար է որ Յուսիսիոս զայն պատգամով քրտն է 567ին: Մասնաւորապէս Սոճիա քաղաքին զայն նախատ է գրելով թէ «գործի» տուն կանանց հետ բուրդ մանելու գործին: Կր պատմուի թէ Ներսէս, սաստիկ զայրացած, կր պատասխանէ թէ «այնպիսի մանած մը պիտի մանեմ որ մ'չ կայսր և ոչ քաղաքին կարեան ծայր զօն և բակել» և հրաւեր կ'ընէ Լոնգինոսացիներուն որ զան Իտալիոյ սիրեն և կու գան: Հ. Գեյցեր (98) Լոնգինոսացիներու իր հրաւերով զարկ վերջին ժամանակներու մէջ սեղանուած առաւապի մը կը համարէ:

միակը չէ, Յուսիֆիանոսի կայսրութեան վերջին տարիներուն կազմուած բանակացուցակը ակնյայտ ցոյց կու տայ... Հայերու տիրողութիւնը, (pre-dominance), անուշաբազմաթիւ Հայագրի հրամանատարներ պարունակելով 540ին, ... Սփրասի վրայ, Իւրայի պահակագործը — կարելու ուղղակի-տական կեդրոն մը — Հայ ունի հրամանատար, նոյնպէս Քրակիոյ նախորդ-միւր: Սեպու տարի յետոյ, 542ին, մեծահոյակ Քելիսար Արեւելք զրկուած բարձր պատերազմութիւն մը կը վստահի Աղոյիոս Հայուն: 543ին, դեմ դնելու համար խորով Պարսից բազաւորին, որ Պարսկահայաստանի նամ-բով սուրբ երկիրը յարձակել կը խորհէր, 30,000 զօրով Յոյն բանակը կը գրուի վերագրեալ Ներսէն Կամարականի հրամանատարութեան ներքեւ, եւ Սահակ՝ Աղոյիոսի եղբայր՝ նոյնպէս կը կարգուի հրամանատար: Քայե-Յոյն վերին հրամանատարութեան սովորական բուլուրբենէն երկու նիգա-կայից Հայ զօրավարները չունէին յաջողելու պատեհութիւն, բայց կայսր, ի փոխարէն, աւելի մեծ չափով օգտուեցաւ իր Հայերուն բարեմիտ եւ ան-նանուէր ծառայութենէն հեռու երկիրներու մէջ: Սահակ Կամարական՝ եղբայր վերագրեալ Ներսէն զօրավարի, Գոսկ (Գլակ?) իր հայրենակից-ներու փոքր խմբով, «որ իր բնիկ լեզուէն՝ հայերէնէն զատ ուրիշ բան չէր գիտեր» (ըստ Պրոկոպիոսի աներկբայելի վկայութեան — Նեանակի իր-դութիւն), Վարազ՝ իր ուրբուն հետեւորդներով՝ Խալիոյ մէջ կայսրու-թեան ծառայող քան զինուորականներ էին Հայ»: (Հմմտ. F. W. Bussell. The Roman Empire from 81 to 1081. London. 1910. 359):

Յիշելու է նաեւ այս Զ. դարուն մէջ (535ին) Ներսէս Կամարականը, որ կառավարիչ եղած էր Կոստանդիա (Քոստանէնէ) քաղաքին: Կայսրու-թիւնը այս Զ. դարուն միտ օգտագործեց Հայոց քաջատարութիւնը Ափրիկէի մէջ: 543ին, Յովհաննէս Արեւելոսի երկու որդիները, Յովհաննէս եւ Ար-տաւան, հոն զրկուեցան: Ապստամբ Մարիանոսի ցուտ սպաննեցիկ Յովհաննէսը, բայց Արտաւան աւելի վիպական եւ բազմաբազմեան կեանք մը ունեցաւ: Իր եղբորորդիին՝ Գրեգորի (Gregoras) եւ Արտաւանի (Artaxerxes) հետ Կարթագինէն բռնակալող Գոնթարիսի միանալ կը ձեռացնէ, եւ դիպուկ առիթ մը գտնելով՝ կ'սպաննէ ապստամբը եւ կայսր հպատակ-ութեան կը դարձնէ վերստին գաւառը:

Իբր հասուցում իր այս ծառայութեան, թոյլ կը տրուի իրեն թողուլ իր պատգոհաններին եւ դառնալ Քիւզանդիոն, զի հրապուրուած կայսրական ընտանիքին պատկանող Պրեքեքթա (=Պրիեկդա) իշխանութիւն, կը ցանկար իրեն կրթութեան առնել: Այս ամուսնութեան դէմ արժուութիւն (Քեոգորայէն) հանուած արգելք զինքը կը մոյզգնէ եւ իր փառասիրածին դեղեւանային դառնացած՝ զաւաղորդ կը դառնայ 548ին: Արտաւան կը միանայ ուրիշ դառնացածի մը՝ իր ազգական Արեւիկին, եւ միասին կ'որոշեն մահափորձ Յուսիֆիանոսի վրայ (*): Դաւաղորդները կը յայտնուի, բայց կայսրը հեղո-րէն թէ մեծանձնորէն, կը բաւականանայ կապելով զիրենք իրենց ստի-

(*) Յուսիֆիանոսի գահը յափճակելու համար (F. W. Bussell. The Roman Empire. 361):

նանէն եւ ժամանակ մը պալատին մէջ բանտարկել պահելով: Բրոժ. Պրսըլ գիտել կու տայ թէ կայսրական այս մեծահոգի ներողամտութեան մէջ թե-րեւս մաս ունի՝ Հայ ազգու եւ զօրեղ քիկունք տարը վիրաւորելու եր-կիւղը: (Գ. Ֆրոպիան. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ. 1935 էջ 125—126):

Արտաւան, որ իր հաւատարմութեան ի վարձ «Դուք Ափրիկէի տիրողութիւնը ընդհանուր Ապարապետ եղած էր, իր շնորհազրկու-մէն քիչ յետոյ «Հիւպատոս» տիրողութիւնը եղաւ բանակին հրամանատար (Բրոժ. Ն. Արտ. ՀԱՅՐԵՆԻՔ. 1929. Թ. 11. 103 էտյն) եւ 549ին ան-տանուեցաւ Քրակիոյ ընդհանուր Ապարապետ եւ զրկուեցաւ Սիկիլիա, ուրկէ վանեց Գոթերը եւ տասը տարի կառավարեց կղզին:

Յուսիֆիանոսի օրով պէտք է յիշել Հայոց դեռ ուրիշ ծառայութիւն-ները որոնց համար կայսրութիւնը երախտապարտ պէտք է ըլլայ Հայոց յԱփ-րիկէ կասարածուն համար: Վերոյիշեալ Արտաւանին յաջորդողը եղաւ զարձեալ իր հայրենակիցներէն մէկը. Յովհաննէս Տրոպիսա, Կրեկոնիոս Կորիպոսի դիւցազնավեպին հերոսը: Սոյն այս Յովհաննէսին եղբայրն է Պապոս (Հայ Պապ ծանօթ անունը, Հայ Արեւելոսիներէն մէկուն պատկա-նող): Իշխանութիւնը մը զաւակն էր: Ասի գաղափար մը կու տայ Ափրիկէի մէջ Հայ քաջագործութեանը»: (Հմմտ. Պր. ըլ. 361):

Միւս կողմէ, Արեւելոսի կողմը Բիւզանդական աշխարհին, դարձեալ Հայերն են գլխաւոր հրամանատարները:

542ին, Ափրիկայի տիրու ապստամբութիւնը զսպելու համար զրկուած բանակին մէջ նշանաւոր դեր կատարած է Յովհաննէս Քոլմայիան, մական-տանեալն Քոս կամ Գուլազ, որ Ափրիկայի շարժար պարտութեան մասնաւոր է:

557ին, շահաւոր Կամարական — Արեւելոսի՝ հրամանատարն է՝ Ար-մենեան եւ Իլիոնեան զօրախումբերուն: Նոյնպէս Հայեր են հրամանատար-Վովկասի մէջ Միսիլեաններուն եւ Մաներուն (ձան—ձանիւս—ձանիկ գա-ւառի բնակիչ) ապստամբական շարժումները զսպելու զրկուած բանակ-ներուն: Հայագրի Վարազան (Վարազ) կը հրամայէ բանակին — Վարազ Շահունի, Վարազ իշխան Գիւլաֆսեից:» (Գ. Ֆրոպիան. Հ. ԿՈՉՆԱԿ. 1935. 173):

Թուել ըտրը Հայ զինուորական ղեկները որոնք Յուսիֆիանոսի շրջանին փառքը հանդիսացան, շատ երկար պիտի ըլլար: Անոնք տան-տակներով կը հաշուուին:

Յուսիֆիանոսէն յետոյ, հակառակ անոր որ այլեւս իր փառքն ու-ժայլը կը կորսնցնէ կայսրութիւնը եւ անկաման նշաններ կը տեսնուին, սակայն պատմութեան զինուորական եւ քաղաքային վարչութեան մէջ զործոն մասնակցութեամբ երեւելի հանդիսացող Հայերու շարքը չընդ-հատուիր: Անոնցմէ ամէնէն նշանաւորներէն մի քանին միայն յիշած ըլ-լալու համար՝ տանք անունը Մորիկ Հայկազնի (*), որ Հայաստանէն Արա-

(*) Իբր Կապադովկացի, իր հայկական ծագման մամբանս փաստարկութիւնը:

բիտոս գաղթող ազնուական ընտանիքէ մը կը սերէր: 539ին ծնած, Յուստինիանոսի շրջանին ասպարէզ կու գար և Յուստինոս Բ.ի և Տիրեբիոսի շրջանին զանազան աստիճաններէ և փայլուն զինուորական ասպարէզէ մը անցնելէ յետոյ, կայսր Կ'ըլլար Բիւզանդիոնի և 20 տարի (582 - 602) կը կառավարէր կայսրութիւնը:

Յիշենք նաեւ Հերակլ զօրավարը, երբեմն Հայաստանի կառավարիչ, որ մեծ ծառայութիւններ մատոյց Մօրիկի, անոր Պարսից դէմ պատերազմներուն մէջ և կայսրը ի վարձատրութիւն զայն նշանակեց Ափրիկէի ընդհանուր կառավարիչ—էքսարք: Ան Կապադովկիոցի Հայ հարուստ և ազնուական ընտանիքի մը շառաւիղներէն մէկն էր ըստ Charles Diehlի և «բերելս ազգական եր Մօրիկի» (Morgan. Histoire du peuple Arménien. 282), ինչ որ փաստ մըն է թէ Հայ էր:

Հերակլեանք, այսինքն Հերակլ ծերունին, անոր զուակը՝ Flavius Հերակլ, եղբայրը՝ Գրիգոր և անոր զուակը Նիկիտոս, ամէնքն ալ Կարքեղոն հաստատուած, անսահման ժողովրդականութիւն կը վայելէին հոն, վասնզի երկիրը բարգաւաճ և խաղաղ շրջան մը կը բոլորէր: Բնիկները քրիստոնեայ դարձած էին: Գրեթէ աղքատ չի կար: Ժողովուրդը աշխատասէր, կ'ըբազէր վաճառականութեամբ: Նոյնիսկ միւսիւրման պատմիչները, հիացմամբ կը խօսին Բիւզանդական Ափրիկէի վրայ:

Մին անոնցմէ. Ան-Նովէրի, կը գրէ. «Քրիբոլիէն միցիւ Թանճեք, ամբողջ երկիրը միակ պուրակ մը եւ գիւղերու իրեայաջորդ տարուցակութիւն մըն եր»:

Հայ Պատրիկներու այս սերունդը գրեթէ կէս դարէն աւելի կառավարեց Ափրիկէն, ջանալով զայն խաղաղ և բարգաւաճ պահել:

Մերունի Հերակլն էր որ դէմ ելաւ Մօրիկի յաջորդ Փոկաս կայսեր (602—610): Ան Կարքեղոնի մէջ վար դրաւ ցորենով բեռնաւոր նաւատորմիցը (608ին), որ ըստ սովորութեան տարեկան բերքը Պոլիս պիտի տանէր և յետոյ շարժման մէջ դրաւ իր նաւատորմիցը և բանակը: Նիկիտաս՝ իր Գրիգոր եղբօրը որդին, ցամաքի ճամբով արշաւեց Եգիպտոսի վրայ և տիրեց Աղեքսանդրիոյ, յետոյ Պաղեստինի և Սուրիոյ ճամբով քալեց Պոլսոյ վրայ:

Միւս կողմէ, իր Flavius Heraclius որդին, Ափրիկեան նաւատորմիցով ուղղակի եկաւ Բիւզանդիոն և 610 Հոկտ. 6ին տապալեց Փոկասը, որ զո՛ր գնաց ժողովրդեան կատաղութեան: Հերակլ ծերացած ըլլալով, իր ազան կայսերական ծիրանի հագաւ և հռչակուեցաւ Օգոստոս, և եղաւ Բիւզանդիոնի Հայ ծագումով փառաւոր կայսրերէն մէկը:

Մերունի Հերակլ մեռաւ 611ին, մինչեւ մահը պահելով էքսարքի պաշտօնը:

հիմնուած իր ժամանակի եւ հետագայ Յոյն պատմագիրներու, Հայ հիմ եւ քա ժամանակագիրներու, ինչպէս նաեւ Եւրոպացի գիտնականներու եւ պեղումներու յայտնագործութեանց վրայ սեսնել Պատմ. Հայ Կեանքից 392—4:

Անոր մահէն յետոյ, Ափրիկէի էքսարքութեան գլուխը անցաւ իր եղբայրը Գրիգոր, որ Եգիպտոսի կառավարիչ նշանակած էր իր տեղը Նիկիտասը (619—629):

Հերակլի նշանակելի շրջանին (610—641), կայսրութեան այս փրկիչը նոյնպէս շրջապատուած էր Հայ զինուորական ղեմքերէ և Հայ պաշտօնատարներէ, որոնք կը պաշտպանէին երկիրին սահմանագլուխները և կը կառավարէին կայսրութեան ամէնէն կարեւոր նահանգները. ինչպէս Ափրիկէն, Իտալիան և նոյնիսկ Հայաստանը: Այսպէս, նշանաւոր զինուորական մըն էր պոնտֆոնտաբիս հրամանատարը՝ Վաղենտինոս Արշակունցի(*) կամ Վաղենտին Պատրիկը, որ Հերակլի մահէն յետոյ ծնունդ առնող գանակալական պայքարներու մէջ ամենանշանաւոր դեր կատարեց (Քեոփանես Ա. 6136): Ասոր ժամանակակից մըն էր Թէոդոր անուն Հայ մը որ 646ին իբր զինուորական հրամանատար Վաղենտինոսի յաջորդած է և որ նոյնպէս մասնակցած է գանակալական պայքարներուն (Brooks. Cambridge Med. His. Բ. 381. և 391): Այս երկու կարող զինուորականները, յետոյ Արաբներու դէմ մղուած կռիւներուն մէջ ալ կարեւոր դեր կատարեցին: Վաղենտինոս քիչ մնաց որ կեսար հռչակուէր (Յոյն. 391): Հերակլի ժամանակակից էր, դարձեալ Արշակունցի տունէն. Մասնուէլ անուծ զօրավար մը, ըստ Սեբիոսի (ԼԳ) «այր աուաֆիցի», որուն աղջկան հետ ամուսնացած էր Սմբատ Բագրատունի՝ Վարազտիրոցի որդին և Սմբատ Բագրատայրի թոռը:

Բայց ասոնց գործունէութիւնը առաւելապէս արարական շրջանի պատկանելով, պիտի խօսուի անոնց վրայ, յաջորդ շրջանին, այն զօրականներուն հետ, որոնք Հերակլի ժամանակէն իսկ ճակատած են Արաբներու դէմ:

Հերակլի պալատն ալ լի էր հայերով: Վարազտիրոց Բագրատունի — որ Հայաստանի պարսկական բաժինին մարզպանն էր 628էն 638, և վախճալով Ատրպատականի նախկին մարզպան Սոտոխ Որմիզդի և անոր որդւոյն և յաջորդին՝ Ռոստոմի դաւաճանութենէն, իր պաշտօնը լքելով, անցած էր Բիւզանդական երկիր և պատուով ընդունուած Հերակլէն և թողած «ապարանս քաղաւորականս եւ գահոյս արժաթի եւ զանա բազումս յոյժ» (Սեբիոս ԻԹ հմմտ. Յովհ. Կար. 103) — և իր որդին Սմբատ — որ կայսերական սենեկապաններուն մէջ առնուած էր — Հերակլի դէմ սարքուած դաւադրութեան մը մասնակից ըլլալու ամբաստանութեամբ աքսորուեցան Ափրիկէ, ուրիշ շատերու հետ, որոնց մէջ էր նաեւ Հայ իշխան մը՝ Վահան Սորխոտունի:

Իսկ նահանգային աւագ պաշտօնատարներուն մէջ, որ Հերակլի ատեն երեւելի եղան, նշանաւոր է Գրիգոր, Հերակլեան ընտանիքէն Ափրիկէի

(*) Յոյն պատմիչներ զայն կը համարեն Վաղենտինոս Հայ կոչումով առանց Արաւուցի մականունին, որ Սեբիոս (ԼԳ) կը պահէ (եկարգէ ի վերայ զօրաց իւրոց զարավարս զՎաղենտինոսս, որ կոչէր Պրշակունցի): Հայ լրատը կը հաստատէ նաեւ E. W. Brooks. Cambridge Med. History. Բ. 391):

վերջին էքսարքը, և կայսեր հօրեղբայրը, որ փառասէր իշխան մըն էր՝ վարդապետներու բարեկամ:

Անիկա իր նահանգը — որուն միացած էին նաեւ Սարտենիա և Քօրօսիքա — Օրթոտքս դաւանանքին գլխաւոր կեդրոնը դարձուցած էր, երբ Հերակլ և իր յաջորդները՝ Սերգիոս Պատրիարքի քիչ մը երկասյրի դաւանաբանութեամբը կ'ուզէին սիրաշահիլ Արեւելքի միաբնակները: Իր իշխանութեան տակ ապաստան գտած էին Արեւելքի տիրապետուած նահանգներէն շատ մը փախտականներ, հաւանօրէն նաեւ Հայեր: Իրեն վիճակեցաւ Ափրիկէի վերջին քրիստոնեայ պետը ըլլալու դժբախտութիւնը: Անիկա ինքզինք կայսր հռչակած էր 646ին Պոլսոյ մէջ իր եղբոր-որդի Կոստանդին Բ. ի սպանութենէն (641 Մայիս 26) զայրացած և թողլով Կարքեղոնը, հաստատուած էր Սուֆուլթուլա հարուստ և մեծ քաղաքին մէջ, երբ Արաբները որ 640ին Եգիպտոսը գրուած էին, արշաւեցին գէպի Կարքեղոն 647ին: Գրիգոր կռիւին մէջ կ'սպանուի և Բիւզանդական Ափրիկէն անդարձ կը կորսուի և Բիւզանդ-Քրիստոնէական քաղաքակրթութիւնը, որուն վերջին պաշտպանը եղած էր Հերակլեան Գրիգոր Հայ կայսրը, կը խորտակուի, տեղը տալու համար Արար-Իսլամականին: Այսպէս, կայսրութենէն կը բաժնուէր բարգաւաճ ու արգասաբեր նահանգ մը, որ Յուստինիանոսի օրով Հայ զօրավար մը կայսրութեան կցած էր, վերջ տալով Վանտալներու գերիշխանութեան, և ուր, երկու դար շարուանակ, ամէնէն պատասխանատու պաշտօնները Հայերը վարած էին:

Գալով Իտալիոյ էքսարքութեան, որ ինչպէս Ափրիկէինը՝ Հայ զինուորական տաղանդը հիմնած և կառավարած էր, Սպանիոյ Բիւզանդական քաղաքներուն կորուստէն յետոյ Հերակլի իշխանութեան շրջանին տակաւին Բիւզանդիոնի կը հնազանդէր: Հերակլի ժամանակ հոն էքսարքի պաշտօն կը վարէր դարձեալ Հայ մը, Թավէննա նստող 18 էքսարքներուն Ցրդը, Իսահակ Հայկազն, որ 625ին կոչուեցաւ այս պաշտօնին, յաջորդելով ներքինի Ելեւթերիոսի մը:

Իսահակ Հայկազնի հոյակապ գերեզմանը տակաւին կը մնայ ի Ռավէննա, Սան-Վիտալէ եկեղեցիին մէջ: Հանրահռչակ է հոն նրբարուեստ արեւելեան ոճով տապանը իր բարձրաքանդակ փորագրութեամբ, Դանիէլի, Ղազարոսի, և Արեւելքի երեք արքաներուն՝ որոնք փութկոտ քայլերով կ'առաջանան դէպի Տիրամօր ծուկին հանգչած մանկիկը:

Մարմարեայ կափարիչին վրայ կը կարդացուի մինչեւ հիմա՝ յունարէն արձանագրութիւնը որ սա խրոխտ արտայայտութեամբ կ'սկսի «Ես՝ Սահակ՝ մեծապայծառ սահմէ՝ զարդ եւ փառք մեծ ամեհայն Հայոց՝ էի մարտակից արհաներաւ» և կը շարունակէ պատմել թէ ինչպէս խորտակած է ապստամբութիւն մը՝ ի Հոռոմ, կառավարած՝ Արեւմուտքը 18 տարիներ (625—643), իր մեծափառ կայսեր համար (Morgan. 287—8):

Իր քովը թալուած է իր կինը՝ Եուլան, որ նոյնպէս Ռավէննա մեռած է: Այս մեծ դէմքերը, իրենց հետ ունին ուրիշներ, որոնք կարելի չէ մի առ մի թուել:

Թերեւս առարկուի թէ՛ Բիւզանդական կայսրութեան փառքին գորշաւոր այս Հայերը որքան ձեռներէց՝ նոյնքան արկածախնդիր անհասունք են, որոնք դիպուածօրէն ինչպիսի կայսրութեան մայրաքաղաքը, պատմութիւն գտած են փայլելու, իսկ Հայերը կասկածելի է որ մեծ թիւ մը կամ զանգուածային բնակութիւն մը ունեցած ըլլան Բիւզանդական երկիրներու մէջ:

Բայց ինչպէս մեկնել նոյնիսկ Յուստինիանոսի օրով կազմուած նոր վարչական բաժանումներուն արուած Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք և Մօրիկի օրով՝ յաւելուածարար այս չորսին՝ Մեծ Հայք Հիւսիսային, Մեծ Հայք Արեւելեան, Մեծ Հայք Հարաւային, Խորագոյն Հայք, Ներքնագոյն Հայք (Յովհ. Կար. 88, Պատմ. Հայ Կես. 348) անուաները՝ այնպիսի երկրամասերու, որոնք մեծ մասամբ Հայաստանէն դուրս էին, վաստիկ իրենց մէջ ունէին ոչ միայն Պոնտոսեան երկիրները, այլ նաեւ Ալիսի գետահովիտին ներքնակողմեան գաւառները և Կիլիկեան հողամասին կիսակողմեան երկիրները (Սատաղա, Նիկոպոլիս, Կողոնիա, Տրապիզոն, Կիրասոն, Ջիլէ, Սերաստիոս, Սերաստուպոլիս, Մելիտինէ, Արկա, Արաբիսոս, Արիարաթէ, Կոմանա և Կոկիսոն): Միթէ ասիկա կարկառուն փաստ մը չէ՞ր թէ անոնց բնակչութիւնը ինչ ծագում ունէր և թէ որքան Հայք այդ տեղերը շեշտուած կարեւորութիւն մը ունէին. որպէսզի մեծագոյն մասամբ բուն Հայաստանի մաս չեղող այդ երկիրները, Յուստինիանոսի և Մօրիկի պէս ազգութեան թշնամի կայսրեր հարկադրուած ըլլային զանոնք Հայաստանի մասեր համարելու (*): Իսկ եթէ նկատի առնուի «Հայկական» կոչումով բանակաթեմին տարածութիւնը, զանազան ժամանակներու մէջ, (տես. Հ. Գեղեցիկ. Ազգբնակութիւնի Բիւզանդական բանակաթեմերու դրութեան. Թրգ. Հ. Գարեգին Գարանֆիլեան. 1903. Վիեննա), անշատ վարչական բաժանումներէն, պիտի տեսնուի թէ ո՛ր աստիճան ընդարձակ տարածութեան մը վրայ հայկական ծագումով մեծամասնութիւն մը կ'ապրէր զանգուածային կերպով. անշուշտ անոնցմէ՛

(*) Յուստինիանոս, մէկ կրօնով և մէկ վարչութեամբ պետութիւն մը կերելու գաղափարով առաջնորդուած, հազիւ զան ելած 528ին, ցնցեց Բիւզանդական Հայաստանի ինքնավար վարչութիւնը, վերջ տալով Հայոց իշխանին պատճենի և դրացի խառն բնակչութեամբ երկիրները (Պոնտոնեան Պոնտոսը եւ ազգաց զվարերը = յետոյ Գ. Հայք բուսած նահանգի Խոզարի, Բեւերիի եւ Տերափի խառն բնակչութեամբ օրջանները) անոր կցելով յաննեց իշխանութիւնը գորավարի մը որ կը կրէր *Magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes* տեսնուի: Այս փոփոխութիւնը իբր թէ հետեւանք էր Արեւելի պայմաններուն եւ պէտքի մը եւ կատարուած էր իբր թէ այլեւայլ պատճառարեւութիւններով (տես. Պատմ. Հայ Կեսարիոյ 345—6) որոնք սուկ պատճառակներ էին Ջիւղուրական այս կարգադրութեան հետ, բաղաձայն վարչութիւնն ալ փոխեց եւ այս նորակազմ բանակաթեմը կուսակալութեան վիճակի բարձրացնելով իբր կուսակալ Գահերեց (præses) մը կարգեց: Սակայն ասիկա նախափորձն էր ակնյի մեծ փոփոխութեան մը գորկարը կատարեց ուրբ 643ին, կազմակերպելով իր պետութեան արեւելեան սահմանին վրայ Ա. Հայք, Բ. Հայք, Գ. Հայք եւ Դ. Հայք անուններով չորս կուսակալութիւններ (տես. Պոլս. 346):

է որ վեր կը կանգնէին այդ հզօր անհատականութիւնները — մասնաւորապէս զինուորական — որոնք յաճախ շրջապատուած էին զինուորներով՝ դարձեալ Հայեր:

Այսպէս, կը յիշուին Բիւզանդական բանակին մէջ զուտ Հայ զօրագուններ, որոնք կ'երթային հեռաւոր տեղեր իբր կռուող սյժեր և երբեմն ալ պահակազօրքի հանգամանքով մնայուն բնակութիւն կը հաստատէին:

Սրինակի համար, Ներսէս Պատրիկ իր Իտալիա գտնուած շրջանի միշտ իր քովը ունեցած է Հայ գունդ մը որուն պետը Յոյները խեղաթիւրմամբ խանութանգ կը կոչէին փոխանակ նախաբար ըսելու: Ռովէն նայի մէջ, որ Իտալիոյ էքսարքութեան կեդրոնն էր, կը մնար հայկական գունդ մը, Numerus Armeniorum, ի պահպանութիւն Իտալիոյ և քաղաքի ծովագերեայ թաղերէն մին «ի պատճառս նսոցի եւ ազգի գօրականին» կը կոչուէր Classis և Armenia» (Հ. Դ. Ալիշան. Հայ-Վեներ. 13):

Ներսէսի «օրէն մինչեւ երկու դար՝ քարուքարէն Հայ ձիաւորներու երեք հեծելագուններ կը կենային պահակ ի Ռովէնա, որեւէ անկարգութեան, ներքին կամ արտաքին վտանգի դէմ պատշապան կամ նախաշարժի ըլլալու պատճառ» (Գառնիկ մատգլեան. ԱՍԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ. 1926. 358):

Ներսէս Բասենցին (*), որ Աղեքսանդրիոյ կուսակալ եղած է, Սգիպոս գացած է Հայ զօրքով և հոն նշանակելի պաշտօնավարութիւն մը ունենալէ յետոյ. 538ին Իտալիա անցած է՝ Ներսէս Պատրիկի բանակին մէջ գտնուող Հայ զօրքերուն իբր հրամանատար:

539ին երբ անիկա դարձաւ Պոլիս, Արտաւազ՝ Ներսէսին ազգականներէն մին՝ յաջորդեց իրեն իբր Հայոց գունդին հրամանատար և Վերոնա քաղաքին գրաւման մէջ մեծ դեր կատարեց իր հրամանին տակ զընտուող զինուորներուն հետ: Երբ ան մեռաւ պատերազմի մէջ՝ 550ին՝ Հայ կական գունդին հրամանատար եղաւ Գղակ անուն Հայ զինուորական մը (Պրոկոպիոս. Պոլս. Պատ. 3. 26):

Յուստինիանոսի ատեն, 545ին, Լիբիա զրկուած Ստիբիլիոյ Մերակուականին բանակին մէջ կար Հայ զօրագունք մը, որուն հրամանատար էր վերոյիշեալ Արտաւան Արշակունին (տես վերը 168—9):

Նոյնպէս կը յիշատակուի թէ Յուստինիանոս իր ընդարձակածաւալ պետութեան հիւսիսային սահմաններուն պաշտպանութեան յատկացուած բերդերուն մէջ բնակեցուցած է Հայկական զօրագունդի և գաղթականներ: Պուլկար ծանօթ պատմագէտ Բրոք. Գոնթ. Իրէչէք (ազգով Չեխ) իր մէկ երկասիրութեան մէջ (Cestz pa Bulharsxa) կը յիշատակէ Չիլիպէի բերդին առաւելապէս Հայ զինուորներէ բաղկացած պահակազօրքի պարագան (Փիլոսոփ. Ա. տարի 1929 Սեպտ. 29. Թ. 21, և Ներսէս Գաղարեան. Ակնարկ մը Պուլկարեան զաղուրթի անցեալին եւ ներկային

(*) Ըստ Յնգլեանի, Կամարական, (տես. վերջ 164 եւ 167—8):

վրայ. ՀԱՅ ՄԱՄՈՒՆ 1937 Յունիսի թիւերը): Այսպէս, կը տեսնուի թէ Յուստինիանոսի ընդարձակ կայսրութեան ամէն կողմերը տարածուած էին Անատոլեան նահանգներու Հայերը, մասնաւորապէս իբր զինուորական գաղութներ, և Չ. դարու սկիզբէն իսկ արեւելեան-յուզական նկարագիր ստացած կայսրութեան խառն բնակչութեան մէջ նշանակալի դիրք ու դեր կատարող տարրերէն մէկը դարձած էին. արմենեակ տարազով սակաւին զատորոշուած, սակայն Բիւզանդականութեան մէջ ընկրուող եւ յու նախասահմանուած Հայերը:

Saint-Martin կը հաստատէ թէ բազմաթիւ Արշակունիներ կային Արքունեաց մէջ՝ Յուստինիանոսէն սկսեալ, և թէ Պոլսոյ մէջ ամէնէն բարձր ընտանիքները Հայ ազնուականներէ կը բաղկանային (ԲՉՄՊ. 1905. 559), թէև պատմութիւնը կը յիշատակէ առաւելապէս Հայերը իբր ընտրելագոյն զօրք և կը բերէ մեզի՝ ինչպէս տեսնուեցաւ՝ յիշատակութիւնը Հայ զօրավորներու և Հայ զօրքերու քան թէ ուրիշ դասակարգերու:

Ենթադրելով իսկ թէ Հայերու նախասիրութիւնը զինուորական ապարէզն էր, որով արդէն եկած էին խառնուելի Բիւզանդիոնի կեանքին և հոն ի յայտ բերած մեծ ընդունակութիւն, կայսրութեան մղած պատերազմներուն մէջ իրական արդիւնքներ ցոյց տալով, կարելի է մտածել թէ Հայերը ուրիշ ապարէզներէ բոլորովին հեռու մնացած ըլլային. երբ այնքան մեծ թիւ մը ունէին կայսրութեան մէջ և շարունակ ալ դիպի հոն կը նրապուրուէին և միշտ հոն կը տեղափոխուէին: Անոնք մէջ անշուշտ կային երկրագործներ, առեւտրականներ՝ փերեզակ կամ վաճառական, արհեստաւոր կամ բանուորներ, որոնք բացառիկ փայլով մը շողացող կայսրութեան մէջ պատեհութիւններ ունէին իրենց ձիրքերը և ընդունակութիւնները երևան հանելու:

Արդարեւ «Ձ. դարուն Հռոմեական Արեւելեան կայսրութիւնը ակնհայտ փայլով մը կը շողար: Երբ Արեւմուտք Գերման բարբարոսներու սօքին սակ կը հեծէր, Յուստինիանոս՝ Արեւելքի հզօր կայսր, մէկ կողմէն կը զուլկուէր ու ետ կը մղէր Պարսիկները, Պուլկարները, Օսթրոկոթները, Վիզիկոթները, միւս կողմէն ամբողջ Հիւս. Ափրիկէն կը գրաւէր Վանսայնեան ձեռքէն: Յուստինիանոս իր զինուորական յաջողութիւններուն վրայ ուզեց աւելցնել նաեւ օրհնագիրի, նարտագետի եւ արուեսագետի փառքը, ու իր նպատակին ալ հասաւ: Իր խիբաբար օրհնագիրքը զեռ հիացում կ'ազդէր արդի իրաւաբաններուն: Իր կանգնած յիւստինիանոսներ մեծ մասով ասպարէզ կը կարգան քանդիչ ժամանակին եւ անխառն գնահատանք կը խլեն այցելուներէն: Բիւզանդիոնի իր կայսերական պալատը գլուխ գործոց մըն է, իսկ Այս-Սոֆիայի եկեղեցին, Բիւզանդական արուեստի կատարելութեան այս հոյակապ սիպարը, ա՛յլ աւելի գեղեցիկ է:

Այս հոյակապ ոստանին մէջ հարսուրթներ հեղեղի պէս կը հոսէր: Ամէն կողմ ոսկեղօծ գլխարկներ, օճեղ բնակարաններ, յաղթական կամարներ, ձիարձակարաններ, անդաստակներ, բազմիքներ, բազմեանց մօզայիքներ,

փողոսերով եւ ոսկիրով դրուագուած եւ քանկագին քարերով զարդարուած քարասիներ, վառ գոյներով կերպասներ, օճեղ գորգեր, եւայլն, եւայլն: Արդարապէս քաղաքներն ու հանրային պահեստի տնտեսականները զարդարուած եւ պալատներուն հետ զիրար կը խաչաձեւէին հինգ հազար հոյակապ տուներու մէջտեղը կանգնուած, ուրկէ չորս հարիւր փողոցներ Յաղթական պողոտային կու գային միանալու:

Հարիւր քառասուն հազար ձեռագիր գիրքերով ճոխ մասնագիտական մը մէջ — սրբազան աւանդ — մարդկային միջին ամենեւեց հազուագիւտ գանձեր կը պահպանուէին:

Այն թուականին, աշխարհի ամենեւեց աղուոր անկիրճին վրայ, գիրքահան զարդի մը պէս կանգնած, երեւ ծովերու մէջտեղը, մարգագետիններով օրջապատուած եւ ծաղիկներով բուրումնաւեց Բիւզանդիոնը աշխարհի քաղաքն էր...:

Ռուսիանոսի հանձնարին, վարչագետի եւ կառավարողի յատկութիւններուն ճնորհիւ եւ որ այսօր ճոխութիւն ծնունդ առաւ յայտնաբերուած հաստատուած այս կայսրութեան մէջ: Իր իշխանութեան օրով, հարաւարտուած եւ առեւտրը, առասպելական յառաջդիմութիւններ գործեցին: «Բիւզանդիոնի առաւելաներ»ը այսօրուան «Քարիզի առաւելաներ»ուն (article de Paris) համբար կը վայելէին ամեն կողմ: Բիւզանդիոն ամեն կողմ կ'արժանէր իր մեծաբն կերպաները, գորգերը, զարդարուն զենքերը, գոհարեղէնները ու անեղնագործութիւնները» (Ռ. Էմիլ Լոսան. «Օգտուիմ Գաստուրեան» L'Exportateur Français):

Այս բոլոր շքեղանքին, ճարտարութիւններուն, արուեստներուն եւ առեւտրին մէջ Հայերն ալ գեր մը ունէին, թէ անոնք միայն զինուորական ասպարէզի մէջ սահմանափակուած էին: Կարելի չէ վճռական ըլլալ: Սակայն նկատի ունենալով իրենց մեծ թիւը եւ իբր զինուորներ կատարած դերը, ինչպէս նաեւ Հայոց բնածին ընդունակութիւնները՝ մասնաւորապէս առեւտրի մարդին մէջ, դժուար է ընդունիլ թէ անոնք ոեւէ բաժին չեն ունեցած այս բոլոր պերճանքին եւ շքեղութեան մէջ: Հայկական նախաձեռնարկ ոգին ինքզինքը հակասած պիտի ըլլար: Իր թափառութիւն մըն է որ հին պատմագրութիւնը քիչ կարեւորութիւն ընծայած ըլլալով այս բաներուն, չէ արձանագրած Հայուն դերը:

Բիւզանդագէտ մը, Շարլ Տիւլ, հիմնուած անշուշտ փաստերու վրայ, խօսելով Բիւզանդական առեւտրին մասին, կ'ըսէ թէ Բիւզանդացի վաճառականներ — Սուրիացիներ — մասնաւորապէս Զ. եւ Է. դարերուն — եւ Հայեր մասն Ափրիկէ, Իտալիա, Սպանիա եւ Տրանսա (Բիւզանդական քաղաքները պատմութեամբ կը հաստատուէին Հայ ձեռներէջ վաճառականներ, կ'երթեւեկէին Բիւզանդական կայսրութեան բոլոր տարածութեան վրայ եւ անոր սահմաններէն ալ դուրս, Իրանսայի եւ Սպանիոյ պէս Հայաստանէն այնքան հեռու աշխարհներու մէջ: Ասիկա ապացոյց մըն է թէ Հայերը ուրիշ ասպարէզներու մէջ ալ գործն դեր մը կատարած են Յուստինիոս

հոսեան փառաւոր շրջանին, ուր իրենք կը քաշուէին զրեթէ հրապուրուելով Բիւզանդեան պետութեան, որ գրկարաց ընդունելութիւն մը կ'ընէր Հայ գործունեայ ժողովուրդին եւ անոր բնակութեան տեղեր կու տար:

Յուստինիանոս — ինչպէս տեսնուք — ասով կը հետապնդէր իր Բիւզանդացի մանկապետները: Ինք որ գլխաւոր մշակողն էր այդ քաղաքականութեան, մասնաւորապէս 553էն յետոյ, նոյնիսկ բունական միջոցներու դիմելու չէ վարանած, Քաղաքիոնի ժողովը իր բոլոր հաստակներուն պարտադիր գործնելու համար Հայկական աղբիւրէ առնուած գրութեան մը համաձայն, Պոլսոյ Հայ գաղութը կ'երեւայ թէ համակերպած է կայսեր բունութեան: Այս գրութեան համաձայն «եղիւ ժողով մեծ ի Կոստանդինուպոլիս ընդդէմ հերետիկոսաց ոմանց, գոր կոչեմք Հինգերորդ ժողով (553): Եւ զի միաբանեցան (Հայ) ընդ նոսա, կոչեցին զուրբ Գրուս սրբոյն Սոփիայ կից յանուն նոցա, որ եւ մինչեւ ցայսօր անուանեալ կոչի Գրուս Հայոց» (Narratio de rebus Armeniae. Migne. Patrologie Grecque հտ. 132. 1245): Այսպէս կը հաստատուէ թէ Յուստինիանոս կերպով մը իր նպատակին հասած է, թէեւ նոյն աղբիւրը կը հաստատէ թէ անոնք որ ընդունած էին Յուստինիանոսի հարկադրած դաւանանքը «իբրեւ դարձան ... յաշխարհն Հայոց» ոման մեզդիւր յօժարութեամբ բնկալան զմիաբանութիւնն, իսկ այլ բնդդիւ դարձան (*), յաւուրս Յովհաննու կաթողիկոսի» (նոյն) եւ կը պատմէ Հայոց՝ Վրաց եւ Աղուանից հետ, այս առթիւ, ունեցած խնդիրները:

Ինչպէս կը տեսնուի այս անցքերէն, Յուստինիանոս եթէ Հայոց գաղութը քաջաբերած է, պարզապէս իր առաջադրած նպատակին հասնելու միջոց մը նկատած է զայն:

Ասիկա պէտք էր պատճառ մը ըլլար որ Հայերը, որոնք այնքան նախանձախնդիր էին իրենց կրօնական անկախութեան, զգուշանային Բիւզանդական երկիրներ գաղթելէ, կրօնական հալածանքի չեն թարկուելու համար: Բայց դժբախտաբար Յուստինիանոսի մահէն (565) յետոյ, Պոլսով Անուշըռուանի կողմէ, Յուստինիանոսի հետեւելով՝ իր պետութեան մէջ միակ կրօնք մը տիրապետող դարձնելու համար գործադրած հալածանքները եւ անոր հետեւանքով 572ին Վարդան (Բ.) Մամիկոնեանի փորձած ապստամբութիւնը եւ անոր դժնդակ վերջաւորութիւնը, պատճառ եղան որ Հայերը իրենց կրօնքը հալածող երկու ոյժերուն միջեւ քրիստոնեային նախընտրութիւն տան եւ նուազագոյն չարիքը համարելով օրթոտոքսանալը, դարձեալ գաղթեն մեծ խումբերով Բիւզանդեան երկիրներ, վասնզի, ինչպէս Ասողիկ (86) կը նկարագրէ. երկիրը դժնդակ դարձաւ մէջ էր: «Ժամանակի մարտից, երկառակութեանց, անթիւ սպան-

(*) Հաւանորէն Գուրի Բ. ժողովին (554ին) զուսման գլխաւոր արձանաթիւններէն մէկը այս էր, որ Օրմանեան չէ կրցած ի վեր առնել (Ազգագրագետ. 545—7):

մանց, գերութեանց, առից, խռովից, կապանաց, ցեղութեանց, պակասութեանց, խիստ սովու, սրոյ եւ մաքրամահու, աւերելոյ աւանից, հրդեհից օքնուածոց եւ ամենայն վնասուց բազում աօխարհաց» էր և այս տեսակ գեհնէնէ մը խոյս տուող ժողովուրդ մը անշուշտ չէր կրնար շատ հաշուող ըլլալ:

Նոյնիսկ ապստամբութեան զեկովարը՝ Վարդան Մամիկոնեան, Հայ թուրք ուժերը ի սպաս դնելէ յետոյ Բիւզանդեան բանակին, ի վերջոյ պարտուած, 577ին ապստամեցաւ իր բանակով և ընտանիքով, Բիւզանդիոն, իրեն հետ ունենալով շատ մը նախարարներ և եկեղեցականներ, որոնք հաստատուեցան, մասնաւորապէս Անատոլուի արեւմտեան ծայրը՝ Պէրկամա (ՀԱ. 1931. 142 - 160), ուր կազմեցին Հայկական գաղութ մը, ուրկէ նշանուոր զօրավարներ և կայսրեր ծնունդ կ'առնեն յետոյ, ինչպէս Նիկեփորոս Պատրիկը և իր որդին Վարդան Փիլիպպիկոսը (Հ. Գեղցեր. ՀԱ. 1907. 225. Kevork Aslan. Etudes. 258. Օրմանեան. Ազգապատմ. 575):

Գերման Բիւզանդապէտ Հէնրի Գեղցեր, իր մէկ աշխատութեան մէջ (Pergamon unter Byzantinern und Osmanen, ուրկէ հասուած մը թարգմանուած է 'ի ՀԱ. 1907. 225), կը բացատրէ թէ ինչպէս Հայերը, այդ շրջանին, բովանդակ կայսրութեան մէջ տարածուած էին և ինչպէս Պուտոյ մէջ կը կազմէին առանձին հասարակութիւն մը — Ահա իր բառերը. «Արդէն Յուսիսոս Բ.ի (565-578) ժամանակ երբ Հայոց պատմութեան Անանուս քաղաքապետը կարելի ըլլայ հաւաստի ընծայել, իտարով Անուսը ունի դեմ պայսամբած Հայ նախարարներու բազմութիւն մը բազմաթիւ ազաներով. վարդապետներով եւ ցեղակիցներով Հոսմական երկիրը փախան: Իրենց առաջնորդը, Բարտաս (=Վարդան), որ պարսիկ Սուրեն Մարզպանը սպանած էր. Կ. Պոլիս եկաւ իր ընկերաց հետ եւ Սոփիա եկեղեցւոյն մօտերը բնակութիւն ընդունեցաւ «այս Աստուծոյ տան դռնէն քիչ մը անդին, որ մինչեւ ցայսօր Հայոց դուռ կը կոչուի:» (*):

Չայս կը հաստատուի Յովհաննէս Սփեսացի(**). որ իբր 570ից, մեզի կը հաղորդէ թէ Դուրիսի կաթողիկոսը, շատ մը եպիսկոպոսներ եւ ազաններ, ինչպէս նաեւ քանի մը նախարարներ, Պարսկահայաստանի պայսամբու-

(*) Սեփանոս Առողիկ (86) կ'ըսէ թէ շատ վարդապետ, առեալ զընտանիքիս եւ զայլ պայսամբուս՝ փախաւեայ անկանի յաշխարհն Յունաց ի բազաւարեայ քաղաքն Կ. Պոլիս: Եւ երբեայ յանդիման լինէր ... Յուստինիանոսի որ զՍուրբն Սոփիա շինեաց և ևաղորդի ընդ մեա օրինաց, և յիւր անուոն անուանէ զաւագ դուռն Սուրբ Սոփիայ, որ մինչև ցայսօր կոչի Դուռն Հայոց (Տեալ տես. Չամիչեան Բ. 287. եւ 521-2 և Իճնհեան. Աշխարհագրութիւն. Ե. 126): Ինչպէս տեսնուեցաւ (վեր 177), Narratio de rebus Armeniis յուստինէն պատմական գրութի մը համաձայն, Սուրբ Սոփիայի «Հայոց Դուռն» 553ին այսպէս կոչուած էր Հիմնաքարի ժողովի զամբարումէն յետոյ Պոլսոյ Հայերուն Քաղեղանականութեան համակերպութեան առիտ:

(**) Սեփեցական Պատմութիւն. Բ. 18-24:

րեան պատճառով մայրաքաղաք եկած են: Հոս ընդունուած են կայսերական զարգեցներ եւ պատիւներ, իշխանութիւններ եւ կայսերական պալատան մէջ իրենց աստիճանին յարմար բնակարան: Գաւառներու մէջ զաղթող Հայերն ալ իշխանական տիրոջներով և թոշակով պատուեցան: .. Սյս կերպով բազմաթիւ ընտանիքներ Յունական գետնի վրայ հաստատուեցան: Այսօրուան պէս նոյն ասեմ ալ զլիաւոր քաղաքներէն շատերը Հայ զաղութիւն սը եկեղեցական հասարակութիւն մը ունենին»:

Յովհաննէս Կաթ. Գարեղեանի հետ Պոլիս իբր պատգամաւոր եկող նախարարներու գլխաւորը՝ Վարդան Մամիկոնեանն էր որ իրեն զիրք մը շինելու համար, թէեւ ուղղակի կայսերական բանակին մէջ զօրավարութիւն ստանձնեց (Kevork Aslan. Etudes 258), սակայն եկեղեցական հազարութեան հետու մնաց: (Հմմտ. Փոս Պատրիարքի Զաքարիա Կաթողիկոսի գրած թուղթը. և Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորուց եկեղեցիներին հետ. 115), մինչ կաթողիկոսը և Հայ եպիսկոպոսները, նախ միաստութեամբ հազարութեան Քաղեղանականներու հետ և յետոյ այս բանը անոնց երկիրին մէջ լսուեցաւ, զայն բացան անոնց դեմ թէ՛ մնացած եպիսկոպոսներ եւ թէ՛ երկիրն բնակիչները եւ անոնք խիստ (բաներ) գրեցին ասոնց» (Յովհաննէս Սփեսացի Բ. 23): Միջոյն Ասորի կը լուսարանէ այս տեղեկութիւնները, յաւելուածարար գրելով թէ «բոլոր եպիսկոպոսները սպանացան կաթողիկոսին եւ անոր հետ զսնուողներուն որ, եթէ դուք կը խաւովիք Քաղեղանականներու հետ եւ անոնց հետ կը հաղորդուիք... մենք ալ ձեզ այլեւս չենք ընդունիր, այլ մինչեւ անգամ կը նզովենք» (Chronique de Michel le Syrien. Թրգ. J. B. Chabot. Paris 1899. 344):

Յովհաննէս Գարեղեան այս անարդանքէն խուսափած է 573-4ին Պոլիս վախճանելով (Յովհ. Սփեսացի. հմմտ. նաեւ Միխայիլ Ասորի 265): Իսկ եկեղեցականները մեկնած են, բայց բազմաթիւ նախարարներ և իրենց տիկիններէն ոմանք, բնակութիւն հաստատած են մայրաքաղաքին մէջ Այա-Սոփիայի մօտերը, Հայաստանի խռովութեանց շրջանին. թերեւ իրենց մօտ պահելով երէց մը կամ վարդապետ մը, վաճաղի Յովհ. Սփեսացի կը պատմէ թէ այս առթիւ Հայերը բաժնուեցան և առանձին համայնք կազմեցին (Երուանդ վրդ. Տէր Մինասեանց. նոյն 114), հաւանօրէն յատուկ եկեղեցի մըն ալ ունենալով Պոլսոյ մէջ (Օրմանեան. Ազգապատմ. 566), թէեւ շատ հաւանական ըլլայ որ Բիւզանդական մոլիտանդութիւնը, որ Յուստինիանոսէն յետոյ աւելի կը շեշտուէր, մայրաքաղաքին մէջ Հայ եկեղեցիի մը գոյութեան հանդուրժած ըլլայ, մասնաւոր Մօրիկ Հայկազնի (582-602) ասեմ, որ մոլիտանդութիւնը իր գերագոյն ստորադասին հաստատուած էր, ինչպէս տեսնուեցաւ: Ան էր որ իտարով Բ.ի հետ իր ունեցած բարեկամութիւնը օգտագործեց, անոր ներկայացնելով Հայաստանը դատարկացնելու և Հայերը անճիտելու գտնէ ծրագրելը, զինուորական պարտականութիւն կատարելու պատրուակին տակ, Հայերը Հայաստանէն տա-

նելու համար հետու վայրեր, որպէսզի հոն կուռին պետութեան թշնամի- ներուն դէմ և կամ ջարդեն, կո՛մ ջարդուին:

Մօրիկ. որ գրեթէ մշատաւ կուռի մէջ էր Հոմպարտացուց (584), Սլաւոններու (586) և Աւարներու (591—593) դէմ, այս բարբարոսներուն, մասնաւորապէս Աւարներու դէմ, որոնք պետութեան եւրոպական բաժինը ոտնակոխ ըրած՝ մայրաքաղաքին կ'սպառնային, կուռելու համար, Քրա- կիա և Կիպրոս փոխադրեց մեծ թուով Հայեր, անգութ բռնութիւններով (Սեբիոս 2. և Յովհաննէս Սփեսացի 2. 15. 34): Հայերը. քրիստոնէու- թեան անունով զինաթափ ընելու համար, երբ խաչ ու խաչուառով կը դիմաւորէին Մօրիկի անգութ պաշտօնատարները, անոնք «լրբութեամբ ընկենուին զխաչսն ի գեթին, եւ մերկացուցանէին զեկեղեցականսն եւ զու- խարհականսն սպանանէին եւ զերէին, եւ զհաւատար կուսանսն խայա- ռակիին եւ զգինդս կանանցն ականջօքն կորդէին եւ այլ բազում չարս գործէին եւ առեալ աւար դարձան ուրախութեամբ որպէս ի մեծ յաղբու- րենե» (Միջոյէլ Ասորի. թրգ. Chabot. 274), այսինքն ճիշդ այնպէս կը վարուէին Հայոց հետ, ինչպէս միաբնակ Ասորիներու և Սպարսներու. որոնց չարչարանքներու նկարագրութիւնները սոսկում պատճառելու բնոյթ ունին:

Մօրիկ կազմեց նաեւ բանակ մը Հայերէ Մուշեղ Մամիկոնեանի — որ Յովհան Պատրիկի և Ներսէս Կրտսերի հետ Սորսոյ Բ.ի օգնութեան գա- ցող բանակին մէջ գտնուած և ըստ Հայ պատմիչներուն վահրամ Չորինը սպաննած էր — հրամանատարութեան տակ և Աւարներու դէմ զրկեց (Սե- բիոս 2): Բայց Մուշեղ (ըստ Յունաց Մուսլակ կամ Մուստակ), Դանուբի եզերքն առաջին յաջող յաղթանակէ մը ետք պարտուելով, թշնամիին ձեռքը գերի ինկաւ և սպանուեցաւ: Իրեն հետ ինկան նաեւ ուրիշ Հայեր, «եւ բազմութիւն նախարարացն եւ զաւրացն Հայաստանայոց յաւուր յայն- միկ կործանեալ սասակեցան» (Սեբիոս 2):

Մօրիկ 595ին նոր զօրաժողով մըն ալ ըրաւ Հայաստանէն՝ այս ան- գամ հրամանատարութեամբ Սահակ Մամիկոնեանի և Սմբատ Բագրա- տունիի, որոնցմէ վերջինը, ինչպէս տեսնուեցաւ (վերը 151), ապստամ- բութեան թելադրեց Հայերը, որպէսզի հակառակին իրենց երկիրէն հե- աանալու, սակայն դժբախտաբար մասնուեցաւ:

Իսկ Քրակիա փոխադրուած Հայերը, որոնք Բիւզանդիոնի թշնամի- ներուն դէմ կուռեցան, կազմեցին զինուորական գաղութներ, որոնք Հա- յաստանէն և Փոքր Ասիայէն աւելի ուշ տեղափոխուածներուն հետ իրենց գոյութիւնը պահեցին մինչեւ ժ.Ա. դար, մինչեւ որ Յունական մոլեռան- գութիւնը վերջնապէս կուլ տուաւ զանոնք:

Հայերը միայն պետութեան մայրաքաղաքին՝ Պոլսոյ մէջ, կամ Փոքր Ասիա, Կիպրոս, Քրակիա փոխադրուած չէին, այլ նաեւ Ափրիկէ, վասնզի այն երկու դարերու տեւողութեան, որ Բիւզանդիոնի տիրապետութիւնը Հիւսիս. Ափրիկէի վրայ տեւեց, կը թուի թէ Հայ գաղութ մը գոյու- թիւն ունէր Ափրիկէի մէջ, ինչպէս Բիւզանդական պետութեան միւս մա-

տերուն մէջ: Այսպէս կը թուի թէ է. դարուն, Հայ գաղութը արդէն մեծ թիւ մը ունէր: Եգիպտոսի և Ափրիկէի հիւսիսին մէջ: Հատին և Յոյն ար- ձանագրութեանց մէջ յաճախ կը հանդիպուի Հայերու. որոնք եկեղեցի- ներ, հանրային շէնքեր շինել տուած են: (Հայկազն Հապէշեան. Ափրիկէն Աբաբ. սիրապետութեան նախընթացին. ԱՆԱՊԱՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ Ա. 113— 116):

Արդարեւ, բովանդակ կայսրութեան մէջ Հայերը ամենուրեք էին. և ռազմական պարզ նւարտութիւն մըն է թէ բանակաթմբուցն եւ գլխա- տրապէս Արմենեակ եւ Անատոլիկներուն ձեռքն էր երկար տեսն կայսրու- րեան բախսը. ասոնց սասար ու քիլուցի բլլալն ալ՝ հակառակ պայման էր տեւ հարսութեան գանի վրայ կարեմալ մնալու: Յուսիսիանոսի օրէն իսկ, անընդհատ պատերազմներով եւ համաճարակներու քրած կոտորածով՝ մինչեւ Հերակլ կայսր եւ իր յաջորդներուն Պարսկաց դէմ արիւնահեղ սպառիչ ոգորումներուն հետեւանօք Բիւզանդական կայսրութեան բնակչու- րեան անօտրանալը դուռ կը բանար Հայ սարհին՝ մուս գործելու կայսրու- րեան սահմաններէն ներս: Հայ մարտավար նախարարներ. ազատսնի ի- տեցն զօրականներով, հետեւորդներով, շինականներով կու գային հաստա- ութի Արմենեակ եւ Անատոլիկ բանակաթմբուցն հողերը: Հայաստան ամե- ցեն արգիւնատու հողն էր զօր հաւաքելու համար, եւ ամենէն քաջամար- տիկ տեսակէն: Դահակալներ ու գանի բեկնածուներ անպակաս են Հայ ցե- ղէն, ամէն անգամ որ թափուր է գանը, կամ վեճի տակ՝ յաջորդութիւնը: Այս ցեղն էր որ բերաւ Բիւզանդիոնի աւանդական իօսոցներու ռազմիկ կորովը, եւ լեռնցի առոյգ, յամառ եւ գործնական ոգին. ճիշդ այն տեսն էր ծայրայեղ կեդրոնացումով յառաջ եկած էր անձեռներէց պատճօնա- տրներու մարմին մը, անոնցմէ բոլորովին անջատ ու գերակայ եկեղեցա- կան դասը, արեճամարտն եւ աններող ամէն բանի որ ճշդիւ չէր համա- կերպեր Օրթոդոքսութեան, նախանձոտ հակառակորդ զինուորական ձեռքի մէջ կեդրոնացած խիստ իօսանութեան, եւ կայսրութեան սահմաններ կո- խող բնամիներու դէմ ոգորում յոգնած ու ուժասպառ ժողովուրդ մը: Եւ անա Հայ ցեղին հոսանքն է որ կու գայ լեցնել պակասած շարքերը, նոր առուզութիւն մը բերել, զինուորական ուժեղ վարչութեան եւ բնորոշագ- րութեան յամառ ոգիով ամբարցնել կայսրութիւնը՝ որուն Ասիական կալ- ուածները այնչափ լաւ կը ճանչնար ան, եւ իբր բնիկ այդ երկիրն՝ սերտիւ յարած էր զանոնք աւերող խուժգում անօրէն բեճամիներուն դէմ:

Այս Հայ ցեղն է, որ իր բնածին յասկութեան անջնջելի դրոսը կը ռազմաբար Բիւզանդական կայսրութեան վրայ եւ նոր ջիղ ու արիւն՝ անոր պարսաս սմ մարմնին: Կ'երկարէ անոր կեանքը դարեքով, մինչեւ որ կա- տիկ կ'ընէ Կոմենենուներու եւ Պալեոլոգներու միջոցաւ վերածարձուրը, դեռ իբր 500 տարի մըն ալ տեւել տալով «բում» իօսանութիւնը:

Բայց Հայ բանակագին արիւնի այս անվերջ նորոգումը փրկաւե՛ս՝ ա- տիւն չձգեց ներմըկեց Մայր-Հայրենիքի երակները: Նորէն բսնմ, մեկ դա- սակարգի, քանի մը հարիւր բնօսանիքի, քանի մը հազար հօգրի տեղափո-

խուրիւն չէր աս. անընդհատ եւ յարսնուն հոսանք մըն էր ցերզադրի: Բիւզանդական Կայսրութեան նորագոյն պատմիչներէն Բրօժ. Պրարլ «Կէսէն աւելի, բնակչութեան տեղը բռնեց» կ'ըսէ, համեմատութիւն զոր բնութիւնը կը դժուարի մտադ (*): Եւ երէ նոյնիսկ մտաւորապէս ճիշդ ըլլայ աս, օտարան կը բացատրէ հողին վրայ մնացողներուն Հայաստանի անկախութիւնը պահպանելու դժուարութեանց ու հերոսական ճիգերուն ճկասմամբ: Զփազանցութիւն մը պիտի չըլլար հաւաստի թէ Ն. դարէն ետքը Մեծ Հայք կրնար զտնուիլ Եփրատի ակունքն ու Արեւելք, բայց մեծ Հայերը կը զրօնուէին Արեւմուտք: Բիւզանդական կայսրութեան մէջ» (Գրական Գնահատում. ԱՄՆ.ՈՒՆ ՏԱՐՈՑՈՅՑԸ 1926. 362—363):

Արդարեւ, արաբական արշաւանքին սկիզբը, Հայերը Փոքր Ասիան կը լքեն էին, Պոլսոյ մէջ վարիչ հեղինակութիւն ունեցող դասը կը շերտաւորուէին, և սամանագլուխներու վրայ իրր պահակազօրք, գլխաւոր ոյժերը կը կազմէին և նոյնիսկ Ափրիկէի և Իտալիոյ ափերուն վրայ տիրական դեր կը կատարէին:

Պէտք է նկատել որ անոնցմէ անոնք որ հնուց գաղթած էին և Օրթոտոքս դաւանանքը ընդունելով Հայ-Հոռոմ կամ այն ժամանակի բացատրութեամբ Արմենիակ դարձած էին, կերպով մը «Բիւզանդացի» եղած էին և տիրող տարրէն ոչ մէկ կերպով ետ կը մնային: Սակայն կային նաեւ Հայեր որոնք յամառօրէն կառչած կը մնային իրենց կրօնքին և հակառակ հարածանքներու, կը պահէին իրենց համոզումը և կը կազմէին սամաններ համայնքներ: Զ. դարուն կէսերէն սկսեալ՝ Պոլսոյ մէջ Հայեր կային և Զ. դարուն վերջին քառօրդին հոն՝ Յովհաննէս Գարեգեան կաթողիկոսի նախնականութեամբ՝ անջատ հասարակութիւն մը կազմած Հայ գաղութը, թերեւս կը պահէր իր գոյութիւնը Է. դարու ընթացքին եւս, հակառակ սաստիկ աններողութեան և մանաւանդ մոլեռանդութեան և անհանդուրժողութեան, որ կը տիրէր Բիւզանդեան կայսրութեան մէջ այդ օրերուն: Ասոր համար կը յանդգնիմ Քրի 600 թուականով Գրիգոր Եպիսկոպոսի մը կնիքը, «Կոստանդնուպոլսոյ Հայոց» եպիսկոպոսի մը սեփականացնել, թէեւ այս հաւանականութիւնը զայն քննողներու կողմէ ընդունուած չըլլայ բնաւ (տես. ՉԱ. 1902. 97—98), և անորոշ ըլլայ տնոր ո՞ր ձէսի, Հայկականին թէ Յունականին պատկանելու հարցը: որ, եթէ տարազէն դատել պէտք ըլլայ, Հայկական չի թուիր (տես. նոյն կրօնիքին պատկերը): Սակայն եթէ Պոլսոյ մէջ Հայկական եկեղեցւոյ կան վարչութեամբ անջատ համայնքի մը գոյութիւնը կասկածելի է, աներկբայի է հոն ոչ-օրթոտոքս Հայերու գոյութիւնը, որոնց թիւը նոր տարրերով բազմացած և զօրացած էր Մօրիկի սպանութենէն (602) յետոյ, երբ Բիւզանդ-Պարսկական սաստիկութեամբ վերսկսած պատերազմէն զարձեալը Հայաստանը արիւնահեղ դէպքերու հանդիսավայր կը դարձնէին և հետե-

(*) W. E. Boussell. The Roman Empire from Domitian (81 A. D) to Nicesphorus III (1081. A. D). London 1910, P. 465.

ւարար նոր գաղթերու տեղի կու տային, և Հայերը կը տարածուէին բոլոր կայսրութեան մէջ, Կիպրոս, Եգիպտոս, Պաղեստին, Իտալիա, և քիչ մը ամենուրեք:

Անանիա Շիրակացի՝ Տրապիզոն երթալէն առաջ կըր Պոլիս կու գայ է. դարուն, կը գրէ թէ «Ինձ պատահեցան իժանօքից իմոց որք անդ էին»: Ո՞վ գիտէ թէ որքան էին իրեն անձանօթ Հայերը, ժամանակով իրմէ կանուխ գաղթած և հոն տեղաւորուած:

Ասոնք ամէնը ցոյց կու տան թէ 428էն 640, այդ փոթորկոտ շրջանին, Բիւզանդեան տիրապետութեան ենթարկուած բոլոր երկիրներուն մէջ, առաւելապէս զինուորական և պետական պաշտօնատարներէ, ինչպէս նաեւ հաւանօրէն առեւտրականներէ և արհեստաւորներէ բաղկացեալ Հայ գաղութներ գտնուած են կենսունակ կեանքով մը և բեղմնաւոր գործունէութեամբ մը:

Միայն չլիջեցինք կրօնական, բարեպաշտական և ճգնաւորական նըպատակներով Բիւզանդեան երկիր դիմող Հայերը, որոնք մասնաւորապէս Բիւզանդական իշխանութեան տակ գտնուող Պաղեստին հաստատուած են ինչպէս արդէն տեսնուեցաւ (վերը 140—3), սկսեալ Դ. դարէն, Հայեր կրօնական զգացումներէ մղուած, համախմբուած էին Ս. Երկիրին մէջ, և մինչև Ն. դարուն սկիզբը, հոն դիրք մը գրաւած՝ վանքերու հիմնարկութեան մասնակցելով և անոնց մէջ միաբաններու բաւական մեծ թիւ մը ունենալով, ինչպէս նաեւ Պաղեստինի և Արաբիոյ եպիսկոպոսական սթոնները բարձրանալով:

Երուսաղէմի մէջ, Ն. դարուն Հայերու դերը աւելի կը շեշտուի և աւելի գործունեայ կեանք մը կ'ունենան: Մար-Սարա (ծն. 439ին) Կապադոքիկացի, աշակերտ Մեկիտիսէցի Հայազգի մեծ անապատական Եւթիմէոսի, անոր իսկ յանձնարարութեամբ 456ին կու գայ Երուսաղէմ և 483ին կը հաստատէ իր վանքը, նշանաւոր իր կեանքով և ամենազգի միաբանութեամբ (*): Հոն կը փայլի Ն. դարուն Հայաստանցի Յովհաննէս Լուսկաց (454—553 Մայիս 13+) երբեմն Նիկոպոլսոյ եպիսկոպոս (481—491), որ իր պաշտօնը ձգելով գացած է Երուսաղէմ և մինչև իր մահը Մար-Սարայի վանքին մէջ մնացած (Աղաւնունի եպ. Հայկ. հիմ վանքեր. 352): Յովհաննէս Լուսկաց, իր տեսակին մէջ միակը չէր, այլ բազմաթիւ էին ուրիշ Հայեր, որ Երուսաղէմ եկած էին Հայաստանէն և յարած անապատի զանազան վանքերու եղբայրութեանց, պահելով իրենց լեզուն և կրօնական ինքնուրոյն կեանքը (նոյն. 355): Կիւրեղ Սկիւթուպոլսեցի կը հաստատէ թէ Դ. և Ն. դարուն Ղուղիպայի, Եւթիմիոսի, Թէոդոսի (Տէյր Տօզի) և Մար-Սարայի գլխաւոր վանքերուն միաբանները եկած էին Յունաստանէն, Փոքր Ասիայէն և Հայաստանէն: Անոնցմէ ոմանք Յոյն էին, ոմանք Կապադոքիկացի և այլք Հայաստանցի և նորեկները ընդհանրա-

(*) Մար-Սարայի վանքին մէջ մինչև ժ. դար կային ամենազգի միաբաններ, ի մէջ այլոց Հայեր (Աղաւնունի եպ. Հայկ. հիմ վանքեր եւ եկեղեցիներ. 358—9):

պէս բարձր իմացականութեան տէր անձեր էին (Raymond Génier. Vie de St. Eutyme le Grand. 49. Աղաւնուհի նոյն. 355): Սկիւթուպոլսեցի նաեւ կը պատմէ թէ 490ին «հոգեւոր շնորհներով պայծառացած ասուածարեալ մարդ մը Երեմիա անուն, ազգաւ Հայ» և իր երկու աշակերտները՝ Պետրոս և Պողոս, կ'այցելեն Սարայի վանքը, և անոր կը միաբանին: Մար Սարա անոնց կը յատկացնէ փոքրիկ խուց մը և փոքրիկ աղօթատուն մը, «որպէսզի կիրակի եւ ճաշի օրերը՝ իրենց լեզուովը կատարեն սովորական փառաբանութիւնները» և «այդ օրէն եր ուր Հայերը ընդունուեցան մեծասանին մէջ»: Դիտելի է որ յետոյ ճառաջին ասուածաւեկն ճանաչեց եկաւ եղբայրներու ժողովման եւ աղօթարանին մեծութիւնն ալ չբաւեց Հայոց բազմութեան»: Սարա ուրիշ չէնք մըն ալ շինեց 501ին տառաւել վայելուչ և մեծ և զայն նուիրեց Աստուածածնի և յանձնեց զայն Հայերուն որպէսզի հոն ժողովուին և Հայոց բազմութիւնն ալ նոյն տաճարը փոխադրեց, «որպէսզի քրիստոնէական փառաբանութիւնները եւ Աւետարանը իրենց լեզուովը կարդան»:

Այսպէս, կը հաստատուի թէ վանքը ունէր Հայ բազմութիւ միաբաններ (Աղաւնուհի. նոյն. 356—7):

Հայերը, ինչպէս կը թուի, հիմնած են նաեւ իրենց յատուկ վանքեր, ինչպէս վերոյիշեալ Հայազգի Երեմիան, որ Մար-Սարայի վանքին մէջ տան մը մնալէ յետոյ, 532ին կը հեռանայ և կեդրոնի Ձորին հիւսիսային եզերքը Սրէլիոն (Քարայր) կոչուած վանքին մօտ, դէպի հիւսիս, կը շինէ Երեմիայի վանքը, նոյնիսկ Մար-Սարայի նիւթական և բարոյական ձեռնառութեամբ (Raymond Génier. Vie de St. Eutyme le Grand. 30—31. Աղաւնուհի. նոյն 357): Այս վանքը հաւանօրէն նոյնն է Անաստաս վարդապետի ցուցակին մէջ յիշատակուած ալլ վանք Սիւնեաց ի Ձորն Սարայի»ի հետ (Աղաւն. 358):

Մար-Սարայի ժամանակակից է նաեւ Կապադովկիոցի Արքայ Թէոդոս (423— 529 Յունուար 11+) որ 451ին Երուսաղէմ եկած և ժամանակ մը Գաթիգմայի վանքին ընդհանուր վարիչը ըլլալէ յետոյ, 460ին հաստատուած էր Մոզերու Այր կոչուած վայրը և հոն հիմնած էր, 476ին, իր անունով կոչուած Արքայ Թէոդոսի վանքը, որ մինչեւ 400 միաբաններ ունեցած է (Աղաւն. 362): Սկիւթուպոլսեցի կը յիշէ որ ան իր վանքին մէջ հիմնած էր արեւելեան վանականաց համար ուրոյն եկեղեցիներ՝ ուր անոնք իրենց լեզուով կը կատարէին պաշտամունքը: Ասոնց մէջ մեծ թիւ մը կը կազմէին անժխտելի կերպով Հայերը, վասնզի իբր վանահայր Թէոդոսի անմիջական յաջորդը եղած է Հայ մը՝ Սոփրոնիոս (542 Մարտ 21+) որ «վանական բարեկարգութեան մէջ յայնի հոչակ ունեւ... Սեբաստիոյ մեծապալատութեան ենթարկուած Ձովմերի կոչուած գիւղին»:

Անիկա, դեռ երիտասարդ, կու գայ Երուսաղէմ և զանազան վանքերու կեանքն ուսումնասիրելէ յետոյ կը մտնէ Թէոդոսի վանքն ուր մեծ ծառայութիւններ կ'ունենայ: 15 տարիներ երկրորդ եղաւ հոն և Թէոդոսի վանքի մտնելէն յետոյ՝ անոր հաւանութեամբ՝ վանահայր Սոփրոնիոս քառաս

պատիկ կ'ընդարձակէ վանքը նուէրներովը իր հօրեղբորը՝ Մամասին որ Պոլիս Անաստաս կայսեր սենեկապանն էր և յետոյ՝ հրամանատար: Ան շինեց եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին^(*) և եռապատիկ բազմացուց վանականներու թիւը (Աղաւնուհի. նոյն 365—6):

Ինչպէս վերոգրեալ վանքերու նոյնպէս նաեւ այդ ժամանակները գոյութիւն ունեցող ուրիշ վանքերու — որոնցմէ մէկն էր Քոզիբայի վանքը (տես. Աղաւնուհի. Հայկ. հիմ վանքեր. 369—375) — մէջ ապրած են Հայ միաբաններ, որոնք իրենց սեփական եկեղեցիներուն մէջ իրենց լեզուով կը կատարէին պաշտամունքը, կ'աղօթէին, կը սաղմուսէին, կը հեռեւէին ձեռնական աշխատանքի և գրչութեան արհեստին:

Եւ ինչպէս ինչ ինչ նշաններ ցոյց կու տան, նոյնիսկ Ե. դարուն երկրորդ կիսուն Երուսաղէմի մէջ գոյութիւն ունեցած է Հայ դպրոց մը՝ այսինքն Հայ մտաւարդական շարժում (Հ. Ներսէս վրդ. Ակինեան. Գո սական Հայերէնը եւ Վիկենական Միսիբարեան դպրոցը. 1932 Վիէնա. 69—70. Խ. Ս. Գուրեան. Երուսաղէմեան դպրոցը. Արեւ. 1940. Թ. 6612. 6618. 6624): Հոն կատարուած են թարգմանութիւններ («Քուղթ Իգնատիոսի» տպ. 1783 Պոլիս, «Վարժ Անտոնի եւ Մակարայ», «Խրատ Նեղոսի» տպ. 1855 Վենետիկ և այլն) որոնցմէ մէկուն յիշատակարանը՝ պահուած 1403 թուին գրուած Ոսկեփորիկի մը մէջ, Անտոնի վարժին կից, կը յայտնէ թէ թարգմանութիւնը կատարուած է Երուսաղէմի մէջ 450ին (բարգմանուեցաւ զիս այս իսուրբ քաղաքին, յԵրուսաղէմ յամի Ներոզի Սերոզի (=450) (**): գալստեան տեղուն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամին յուրմ հանգեալ քաղաքն քան ի Սաբոն» — ԵՐԵՂԱԿ. 1858. 43.):

Ըստ Հ. Ակինեանի «յես դասական օրջանի առաջին բարգմանական դպրոցը՝ հիմնուած Երուսաղէմի մէջ. համեմատութեամբ իր բոյր դպրոցին (***) աւելի հասկնալի էր, վասնզի ուսեալ էին բարգմանիչները վանական օրջանակի մէջ եւ կը խօսէին հասարակաց՝ պարզախօս եւ անսրբեւեր» (ՀԱ. 1932. 129):

«Աւերիւ, քեպէս նուազ վասնելի աղբիւրէ ալ ծանօթ է քե քաղաքիս (Երուսաղէմ) մէջ կը գործէին Հայ բարգմանիչները: Օրհնութիւնաբեր ցու-

(*) Այս եկեղեցիին անուանները են J. Strzygowski որ իր «Հայկական ճարտարապետութիւն» (1918) գործին մէջ (502—4) կը հաստատէ անոր հայկական օրջ:

(**) Նաեւկուած բուականք սակայն ճշիւ չի համապատասխաներ Մառոնի մահուան տարւոյն (+ 17 Փետ. 439 կամ 440) եւ հրատարակիչին կատարած սրբագրութիւնը՝ ՆՅ ՆՅ, կարգալու համար աս արդարացուցիչ չի բուիր: Հ. Ակինեան բաւական փաստարկութեամբ կ'առաջարկէ Մառոնոցը կարգալու Մաիբոս, ինչ որ իմ նիւթս հետ առնչութիւն չունի, եւ անոր համար չեմ ներկայացներ. (հեռաբերներ քաղ դիմեմ. Գառնական Խայրէճը եւ այլն հասար. 70—71):

(***) Բոյր դպրոցը՝ Հունական Հայաստանի դպրոցն էր, ուր, ըստ Ակինեանի «աշխարհիկներն էին բարգմանիչները տեղեւելի եւ Խայրէճի եւ յաւատարմի» (ՀԱ. 1932. 129):

ցակին մեջ կը նշանակուի թէ Քարսղի Զորհեցից կանոնը խոսքով բարգ-
ճանիչ բերած է Երուսաղէմէն՝ Ս. Սահակի հրամանաւ. դարձեալ թէ Ա-
պաթարող արգիլելու եւ արձակելու կանոնը Յոյն տեղեկ Արգեւան (Ար-
ձան) եւ Կորնէն բարգմանիչներ բերած են Հայաստան (Zeitschrift für ar-
menische Philologie. I. (1903). 218—219 եւ Հայաստան 153): Զ. դա-
րուն ընթացքին օտս Հայ վանքեր եւ Հայ միաձուցի ինչպէս նաեւ ուխտա-
ւորներ կը յիշուին Երուսաղէմ: Այդ միջավայրէն եկած է Հայաստան շա-
տոց գիրքը, որ Երուսաղէմեան Եկեղեցւոյն համար յորինուած էր: Ուստի
զուրկ չէ ամէն ճառագանգութեան, երբ ընդունինք թէ օտար մը եկեղեցական,
յաջակապէս վանական կեանքի համար գրուածքներ, որոնք գոյութիւն ունին
Հայ հին մատենագրութեան մեջ ընթեր լեզուով, Երուսաղէմեան դպրոցի
արտադրութիւնները կամ բարգմանութիւններն ըլլան» (Պատկան Հայերե-
ցր. 72 կամ ՀԱ. 1932. 266):

Երուսաղէմ Ս. Տեղիքը այցելած են ըստ աւանդութեան Ծ. դարու
Քարգմանիչներէն Խոսրով, Արղեւան (=Արձան?), Կորնէն, Մովսէս (Ա-
զաւնուէնի. Միաբանք եւ այցելուք. 1929 Երուս. 151) և Գաւրիթ Անյալթ,
որ «Քարձացուցեք» ճառը խօսած է Երուսաղէմի մէջ (Յոյն), ինչպէս Ծ-
ղիչէ վարդապետ, որուն ճառերէն կը յայտնուի թէ այցելած է Երուսա-
ղէմ և շրջակայքը (Հ. Ներսէս Ակիւնեան. ՀԱ. 1930 368): Իսկ Զ. դա-
րուն «յաջակապէս 582ի Պարսիկ-Քիւզանդական խաղաղութեան դաժնադ-
րութեան հետք. սկսած էին ուխտագնացութիւններ դեպի Երուսաղէմ: Հա-
յաստանէն, Սիւնիքէն եւ Աղուանից աշխարհէն կային հոն արդէն վանա-
կաններ, սեփական վանքերով, որոնցմէ մաս մը յարած էր երկարեակու-
րեան կամ համամիտ եւ համակարծիք էին տեղւոյն Յոյն վանականութեան
ի դաւանաբանական: Կը յիշուի այս ուղղութեամբ եղած ըլլալ Աղուա-
նից Պանսավանքը, որուն վանականը՝ Քովմաս՝ խաղաց այնքան ակնառու
դեր Զ. դարու Բ. կեսին Հայոց, Աղուանից հետ ունեցած դաւանաբանա-
կան խնդիրներու մեջ, հանդիսանալով միջնորդ արեւելիք եւ Երուսաղէմի
մեջ» (Հ. Ն. Ակիւնեան. Քուրդ Մակարայ Բ. Երուսաղէմի Հայրապետի առ
Վրթանէս Եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց Եկեղեցւոյ. ՀԱ.
1930. 537):

Արղարեւ, Զ. Գարուն Երուսաղէմ այցելած են Գրիգոր եպ. Արձրուն-
եանց, որ Տեառնընդառաջի առթիւ թուղթ մը գրած է (Ակիւնեան.
Յոյն և Մաւարանեանց. Պատմ. Երուսաղէմի. 238), Գրիգոր Սարկաւազապետ,
որ Ս. Գրիգոր Հուսաւորիչի վրայ ճառ մը խօսած է Երուսաղէմի մէջ (Ա-
զաւնուէնի. Միաբանք եւ Այցելուք. 93—4):

Նշանակելի է որ հակառակ անոր որ Ծ. դարուն կրօնական վէճերը
խանգարած էին քրիստոնէայ եկեղեցիին միութիւնը և պառակտումներ
ու հերձուածներ սկսած՝ եկեղեցիին մէջ, և Առաքելական Գարեբու տիե-
զերական եղբայրութեան գաղափարը եղծուած ու քանդուած էր, Երու-
սաղէմի և շրջակայից մէջ Քաղքեղոնի ժողովին առաջ բերած բաժա-
նումները ամէնէն ուշ արձագանգ գտած են, զի ամէն ազգէ պատրիարք-

ներ անխորարար իրարու յաջորդած և վանքերու մէջ զանազան ազգերէ
միաբաններ խառն ապրած են, առանց դաւանարանական և ազգային վէ-
ճերու, մինչեւ 553 Պոլսոյ Հինգերորդ ժողովը (տես. վերը 177):

Այդ թուականէն յետոյ, վէճերը Երուսաղէմն ալ խոռովել կ'սկսին,
սակայն դեռ հոն բաժանուած վերջնական ձեւ չէր առած և քրիստոնէայք
թէեւ լեզուով և սոցալութեամբ իրարմէ կը բաժնուէին, ինչպէս նաեւ
գաւանանքով թերեւս տարբեր համոզումներու կը ծառայէին, բայց հա-
ժախմբուած կը մնային հայրապետական միակ իշխանութեան մը տակ,
ինչպէս բացայայտ կ'երևի Արձրունեանց Գրիգոր եպ.ի և Յովհաննէս
Կաթողիկոսի (45) խօսքերէն, և երկար ատեն Երուսաղէմի եկեղեցին պա-
հած էր միաբնակ դաւանանքը, այլ սակայն տատանումներն ալ պատահե-
ցած էին և այս պատճառով նաեւ ծանր արիւնահեղութիւններ և անկար-
գութիւններ. (Ազաւուէնի եպ. Հայկ. հին վանքեր. 399):

Երուսաղէմի մէջ միաբնակութեան դէմ հալածանքը սկսած է Յուս-
տինոս կայսեր (518—527) օրով, գործադրութեամբ իր օգնականին Յուս-
տինիանոսի, որուն կայսերական գահ ելլալէն (527) յետոյ, ուրիշ արե-
ւելեան եկեղեցիներու կարգին, հալածուեցաւ նաեւ Երուսաղէմի եկեղե-
ցին, որ հուսկ ուրեմն Քաղքեղոնի դաւանութիւնը ընդունելու հարկադ-
րուեցաւ: Հայերէն անոնք որոնք Դուրին 554ի ժողովին համաձայն կը
մերժէին Քաղքեղոնի ժողովը, հալածանքի ենթարկուեցան, (Յովհ. Կար-
43, եւ Յովհ. Գ. Պատրիարքի քուղքը առ Աբաս Կարողիկոս Աղուանից.
1893. էջմիածին) և Հայ վանքերու միաբանները, առաջնորդները և ա-
նապատականները իբր 500 հոգի, հաւաքարար դիմեցին Հայոց Յովհաննէս
Քաղքեղեան Կաթողիկոսին և հարցուցին թէ ինչ ընել պէտք է, հաւանքէ
Քաղքեղոնի ժողովին և մնալ Պաղեստին, թէ լքել իրենց վանքերը և
հեռանալ, վասնզի Յուստինիանոս կ'ապառնար Պաղեստինէն հեռացնել
Հայ, Ասորի և Ղպտի միաբնակները:

Յովհաննէս Կաթողիկոս կը յորդորէ Հայ եկեղեցականները հնազան-
դիլ քաղաքային օրէնքներուն և կրօնականներուն չհնազանդիլ: Հետե-
ւաբար «բազումք թողին զվեցասանս իւրեանց եւ զինչս ի բաց գնացին-
եւ այլք բնակեցան ի Կեսարիա (Պաղեստին) ...» (Անաստաս վրդ.) և Ծ-
ղիպոտոս (Աստուածատուր եպ. Յովհաննէսեան Պատմ. Երուսաղէմի 1890
Երուսաղէմ Ա. 96):

Բայց եթէ շատերը մեկնած են, քիչերը տոկացած և մնացած են Ե-
րուսաղէմի մէջ, ուր շնորհիւ քաղաքական շփոթներու, ինչպէս Պարսից
գրաւորմին՝ 614ին և այլն, մինչեւ արաբական արշաւը, որ փրկարար դեք
մը կատարեց ոչ-քաղքեղոնականներու համար, պահած են իրենց գոյու-
թիւնը:

Պաղեստինեան Կեսարիան, այն ատեն վարչական կեդրոնն էր Պա-
ղեստինի և ծաղկեալ և բարգաւաճ վիճակ մը ունէր: Իր վաճառական-
ները կը տարածուէին մինչեւ Ասիոյ խորքերը և Հայաստանի մէջ, ինչպէս
նաեւ Արեւմուտքի կողմերը և կ'արտածէին Կեսարիոյ թանկագին ծիրա-

նին և կը փոխանակէին տեղական ապրանքներու հետ, զոր կը ներածէին (Աղաւնուռնի եպ. Հայկ. հիմ վանքեր. 447):

Աղաւնուռնի եպ. կը մտածէ թէ այս ծաղկեալ քաղաքը եւ իր Ս. Գրոց գրականութիւնը Ս. դարուն անձամբ չէր կրնար ըլլալ Հայոց, վասնզի հոն եր ու ... Ռոզիմեն սաղանդաւոր վարդապետ լրացուց իր սուրբ գրական աօխասանքը եւ երկասիրեց Քառիջեան եւ Վեցիջեան անուամբ գործերը՝ որոնք կարելու աղբիւրներ դարձան Ս. Գրոց աղաւաղեալ օրինակները սրբագրելու գործին: ... Պամփիլիոս Բիւրիսոնացի վկան ու անոր մտերմն ու աւակերտը՝ Սուսերիոս Կեսարացի, գաղափարեցին Ս. Գրոց օրինակներ Ծորանասնից ընթիր եւ սուգահաւաք քարգմանութենէն եւ նոյն օրինակները բողոքաւել տուին Ռոզիմենի Վեցիջեան եւ Քառիջեան երկասիրութեանց վրայ, որ կը պահուէին Կեսարիոյ մասեցադարանին մէջ, եւ այդպիսի իր- նամով սրբագրուած օրինակները կը կոչուէին Պաղեստինապոլիս: ... Այս ... ընթիր օրինակներուն գոյութիւնը անձամբ չէր մեր քարգմանիչ վարդապետաց, որոնք աւակերտներ զրկեցին Պոլիս՝ Կեսարիոյ մէջ ընդօրինակուած այս Ս. Գրքին օրինակ մը ստանալու եւ քարգմանելու համար զայն: Այս կարելու դէպքը մտածել կու տայ մեզի թէ Հայերը վաղուց ծանօթ էին Պաղեստինեան Կեսարիոյ, եւ հոն կը յաճախէին Հայ վաճառականներ՝ հիմնելու առեւտրական ճիւղեր, եւ աւակերտներ՝ օգտուելու եկեղեցական եւ սուրբ գրական ուսումներէն» (նոյն. 447—8):

Սակայն դրական ոչ մէկ ապացոյց գոյութիւն ունի և սոսկ ենթադրութիւն կը մնան այս խօսքերը: Զենոբ Գլախի մէկ հատուածին մեկնաբանութիւնն ալ ոչինչ կը բացատրէ քանի որ ամբողջ ժամանակավրէպ է: Միակ դրական ապացոյցը Հայոց գոնէ ժամանակաւոր բնակութեանն Անաստաս վարդապետի վերագրեալ տողերն են, որոնք կը հաստատեն թէ Հայ վանականներ Յուստինիանոսեան շրջանի հայրածանքներէն ազատելու համար ապաստանած են Կեսարիա՝ կառավարական կեդրոնը, ուր կը յանձնարարէ դիմել Երուսաղէմի Յովհաննէս Պատրիարքը նաեւ «Հայոց իօխաններուն», որ Երուսաղէմ կը մնային, և այս չփոթնեցուն ժամանակ Հայկական վանքերու մասին կը բանակցէին Պատրիարքին հետ, և հետոք մը կը մտածէին գրաւուած վանքերը վերստանալու, և այս խնդրոյն համար դիմած էին նաեւ թագաւորին: Յովհաննէս Պատրիարք կ'ըսէ թէ «իսկ ես կոչեցի զիօխանս Հայոց եւ բազում ինչ խօսեցայ, եւ նոքա զԿեսարիա կալան բարուս, եւ ես ասեմ, թէ Կեսարիայն հանոյ է ձեզ, երբայք ի Կեսարիա եւ կացեմ...» (տես. Յովհաննէս Պատրիարքի նամակը առ Աղաւանից Աբաս Կարողիկոս):

Շատ համոզիչ են Աղաւնուռնի եպ.ի փաստերը ընդդէմ Կարապետ եպ. Տ. Մկրտիչեանի տեսութեան թէ ակնարկուած Կեսարիան Կապադովկեանն չէ այլ Պաղեստինեանը, ուր կարելի էր որ լուծուէ գոնէին Հայ իշխաններու ջանքերը, Հայ վանքերը փրկելու համար, քանի որ հոն էր երկիրին մայրաքաղաքը և այն տեղի եկեղեցական իշխանութիւնն էր որ հրնար դատել և վճարել խնդիրը, քանի որ Երուսաղէմի և շրջակայից ե-

պիկոպոստները կախում ունէին Կեսարիայէն (Աղաւնուռնի. նոյն 449—50. Տաշեան, Մ. Տուցակ. 225):

Տարուած այս աշխատութեանց արդիւնաւորութիւնը կը հաստատէ Անաստաս վրդ., որ կ'ըսէ թէ Համազասպ Կամսարական — որ կ'երեւի մէկն էր «Հայոց իօխաններուն» որոնք վանքերը փրկելու կ'աշխատէին — «ի հայրապետացն Երուսաղէմի թափեաց զՀայոց վանորայսն...» (Հայապատմ. 227—8. Երեւակ 5. Աղաւնուռնի. Միաբանք 218):

Կաղանկատուացի (Ա. 423) կը հաստատէ թէ Համազասպ եթէր տազանդ ոսկի հատուցանելով ազատած է Հայ վանքերը, որոնց թիւը 70ի կը հասնէր: Ապահովաւոր Համազասպ նախատեսութեամբ յանձնարարած է Անաստաս վարդապետի ցուցակագրել զանոնք որպէսզի ապագային նման աղէտի մը պարագային, Հայերը գիտնային թէ ինչ ունին: (Համա. նաեւ «Վասն վանորեից որ ի Ս. Քաղաքս յԵրուսաղէմ» Վենետիկ. 1896. 1—42. Սաւալան. Պատմ. Երուսաղէմի. 243—7):

Պաղեստին այդ ժամանակամիջոցին արդէն շատ ծաղկած էր թէ՛ եկեղեցականներով, թէ՛ երկրագործութեամբ և թէ՛ վաճառականութեամբ (Michaud. Խաչակրաց Պատմութիւն. Ա. 6) և լեցուն էր վանքերով և եկեղեցիներով Զ. դարուն վերջերը, ականատեսներու վկայութեամբ (Սաւալան. 243):

Երկիրին բարգաւաճումին հետեւանօք հաւանական է որ Բիւզանդեան տիրապետութեան տակ Երուսաղէմ ունեցած է բաւական նշանակելի թուով Հայ բնակչութիւն մը, որոնք կը բնակէին Հայերու յատուկ թաղերու մէջ, որոնցմէ մին կը գտնուէր Սիոնի մէջ, ուր երբեմն կը բանակէր Հռոմայեցւոց լեզէոն մը, ճիշդ Հայոց Ս. Յակոբ վանքին գիմացը, և մէկ ուրիշը՝ Պրոպատիկէի Հայոց վանքին մօտ, ուր կը բնակէին նաեւ Ասորիները (Աղաւնուռնի. Հայ. հիմ վանքեր. ԺԳ): Երուսաղէմ այդ շրջանին ունէր նաեւ Հայերու անուանով փողոց մը, Ruga Armeniorum Սիոնի ճանապարհին վրայ (նոյն. ԺԲ):

Ս. Տեղեաց յարակցաբար կարելի է յիշել նաեւ Սիւնայի վանքը, վազմի քրիստոնէական հիմնակութիւն մը, քրիստոնէական թուականին նոյնիսկ առաջին դարերուն հիմնուած, ուր յաճախ կ'այցելէին ուխտաւորները:

Այժմու Ս. Կատարինէի վանքը, կառուցուած Յուստինիանոսէն 528ին, ծագումով Յունական, իր ներքին կազմակերպութեամբ եղած է համաքրիստոնէական, և ինչպէս ամենազգի ուխտաւորներ այցելած են հոն, նոյնպէս ամէն ազգէ միաբաններ գտնուած են, անյիշատակ ժամանակներէ սկսելով, և շատ ազգեր իրենց ծէսերով և լեզուով պաշտամունք կատարած են հոն: Հայերը նաեւ ունեցած են իրենց սեփական եկեղեցիք, ուր բնիկ Հայ վանականներ, Հայ ծէսով և Հայ լեզուով պաշտամունք կը կատարէին: (Ալիշան. Աօխարհագրութիւն. 587):

Յովհաննէս Մոսքոս (Է. դար), իր «Մբոց կեանքը» գործին մէջ կը լինէ Կապադովկացի Հայ մը՝ Ստեփաննոս վանական, որ կ'ապրէր 554ին

հոն: Սինայի վանքին վանահայրերէն Անաստաս Սինայցին, է. դարուն ապ-
րած վանական մը, որ թողած է շատ մը երկեր, կ'ըսէ թէ ստովորու-
քիւնն է Հայոց, ինչպէս ամեն ոք գիտէ, յաճախակի գալ Սինայի այլ սուրբ
լեռք և յետոյ կու տայ նկարագրութիւն մը իրեն ժամանակակից երկու
Հայ վանականներու՝ Կողմայի և Եղիսէի, որոնք կը փառաւորուին, իբր
տիպարներ կրօնաւորական զոհաբերող կեանքի և երկնային կենցաղավա-
րութեան: Անոնք անձեր են որոնք աշխարհի պատրանքներէն խոյս տա-
լով՝ նուիրուած էին ճշմարիտ հոգեւոր կեանքի մը: Ստիկա վկայութիւն
մըն է թէ՛ Սինայի վրայ դարերով ապրած է Հայ վանականութիւն մը և
յարբերութիւն մշակած Հայ քրիստոնէութեան հետ, որուն պատճառով
Հայ ուխտաւորութիւն մը պարբերաբար այցելած է Սինայի վանքը, ինչ-
պէս յետագոյն ժամանակի յիշատակարաններ կը հաստատեն (*):

Է. դարուն Անաստաս վանական, կը պատմէ իրմէ առաջ կատարուած
Հայ ուխտագնացութիւնները և մասնաւորապէս կը յիշատակէ 800 Հայ
ուխտաւորներու խմբովին գալուստը և անոնց ղէպի Սինա վերելքը,
խանդավառ նկարագրութեամբ մը, որ հրաշապատում նկարագիր մը ու-
նէր: (Մկրտիչ եպ. Աղաւնունի Սինայի Արքեպիսկոպոսական արձողը եւ
Հայկական յիշատակներ. ԱՐԵԻ. 1926. Թ. 1338—9):

Անկարելի է չխորհիլ թէ թերեւս Հայեր գտնուած են նաեւ Եգիպ-
տոսի հռչակաւոր անապատներուն մէջ, Ե. դարէն սկսեալ, երբ արդէն ա-
նապատականութիւնը, Փ. դարէն սկսեալ ծաղկած, այդ և յաջորդ դա-
րերուն անօրինակ զարգացումի մը հասած էր, և երբ պատմութեամբ կը
հաստատուի թէ 553էն յետոյ, Յուստինիանոսի հալածանքներուն հետեւա-
նօք երբ Ս. Տեղեոսը Հայ վանքերը լքուած են, վանականներէն մաս մը
անցած է Եգիպտոս (տես. վերը 187) և երբ վերջապէս յետագոյն ժամա-
նակներու վաւերագիրներ ունինք, որոնք կը հաստատեն թէ Նիդրիոյ և
Սկիտէի անապատներուն մէջ կային վանքեր, որոնց մէջ Հայ անապատա-
կաններ ալ կ'ապրէին, խառն տեղացիներու և յատկապէս կը յիշուէր
Հայոց վանք մը (Աղաւնունի եպ. Անապատական կեանքը Եգիպտոսի մէջ.
ՏԱՌԻԻ տարեցոյց 1929. 39—50):

Ասոր համար կրկնակ հաւատարմութիւն մըն է քրիստոնեայ Հայաստանի
շատ վաղեմի յարբերութիւնները Աղեքսանդրիոյ եկեղեցիին հետ, (Նե-
սեբիոս. Եկեղեց. Պատմ. Զ. 517) և Ե. դարուն թարգմանիչներէն ոմանց
Աղեքսանդրիոս աշակերտութեան գացած ըլլալու աւանդութիւնը և Ա-
ղեքսանդրիոյ եկեղեցւոյ հայրապետներէն Աթանասի, Գրիգորիոսի, Թեո-
փիլոսի, Տիմոթէոսի և Կիւրեղի գործերու ընծայուած յարգը և կարեւո-
րութիւնը, և Ե. և Զ. դարերուն Եգիպտոսի մէջ Հայ գաղութի մը գո-
յութիւնը:

Երբ Արեւմտեան Հայաստանի տիրակալող Բիւզանդեան կայսրու-
թեան բոլոր ընդարձակութեան վրայ այսպէս ցրուած էին Հայերը, արե-

ւելեան բաժինին՝ Մեծ Հայքի տէր Սասանեաններու ընդարձակ երկիրին
մէջ նոյնպէս տարածուած էին, գրեթէ համանման պայմաններու մէջ,
վանդի Պարսկաստան, իր քաղաքական-աշխարհագրական դիրքովը, մեծ
նմանութիւններ ունէր Բիւզանդեան պետութեան հետ: Անոր ալ սահման-
ները ապահով չէին. նախ Բիւզանդիոն կը ներկայացնէր սպառնալիք մը՝
ճշտակայ, իր արեւմտեան սահմանին վրայ. և երկրորդ՝ Անիոսն կամ
Քուրան ժողովուրդներ՝ շարունակ խուժելու կը ճգնէին իր արեւելեան
սահմաններէն ներս, և Պարսկաստան, ինքն ալ պարտաւորուած էր միշտ
երկու ճակատի վրայ կռիւ մղել, ինչպէս Բիւզանդիոն, որ Պարսկաստանի
և Պալքանեան թերակղզին ողողել ճգնող բարբարոսներու դէմ պայքա-
րեցաւ դարերով:

Պարսկաստանի սպառնացող բարբարոսներն էին Քուշանք, որոնք կը
քնակէին հին Բակդրիոյ (այժմ Խորասան) մէջ: Իրենց գլխաւոր քաղաքն
էր Բանդ:

Առաջին անգամ Շապուհ Բ. (309—378) 368ին յարձակեցաւ Քու-
շաներու վրայ և չարաչար պարտուեցաւ (Փաւսոս. Ե. 1է): Յազկերտ Բ.
(438—457) նաեւ ստիպուեցաւ պաշտպանել իր երկիրը Քուշաններու
դէմ: Իր յաջորդներն ալ պարբերաբար կուտան են այս բարբարոսներուն
դէմ որոնք շարունակ նեղած են Պարսկաստանը:

Այսպէս, Պերոզ (457—482) իր իշխանութեան բոլոր տեւողութեան
գործ ունեցած է անոնց հետ և 468ին մեծ պարտութիւն մը կրած է, և
Քուշաններու յաջորդող Հեփթաղներու ձեռքը գերի ինկած, ու ազատելէ
յետոյ կրկին կուտան և վերջապէս անոնցմէ սպանուած է (Փարսպեցի.
154—156, ՀԱ. 1931. 594): Վազարշ (483—491) յանձն առած է հարկ
վճարել Պարսկաստանի այս անաւոր թշնամիին, խաղաղութիւնը գնելու
համար և այս հարկատուութիւնը շարունակուած է մինչեւ 545, Խոսրով
Ա. ի տեսնը (ՀԱ. 1931. 595), երբ դարձեալ պատերազմը սկսած է և մին-
չեւ 552 շարունակած, մինչեւ որ Պարսիկները յաղթած են 553ին Խոս-
րով ձեռնարկած է Բ. արշաւանքի մը և 554ին յաջողած՝ կործանել Հեփ-
թաղներու պետութիւնը հիւսիսէն Քուրքերուն և հարաւէն իր բանակ-
ներուն ճնշման տակ (ՀԱ. 1931. 607):

Հայերը, ինչպէս կուտան էին Բիւզանդացիներու կողքին, Քրակիոյ,
Իտալիոյ և Ափրիկէի մէջ՝ Աւարներու, Փոթերու և Վանտայներու դէմ,
նոյնպէս նաեւ այս հեռաւոր վայրերուն մէջ կուտան են, իբր հպատակներ
Պարսից, անոնց բանակին հետ, այս բարբարոսներուն դէմ, և Սազաստա-
նի անապատէն խուժել սպառնացող Անիոսն բարբարոսներու և հարաւէն
ապատակող թափառիկ ցեղերու արշաւուղիին վրայ բնակեցուցուած են
Պարսիկներէն, ինչպէս Բիւզանդացիներէն՝ Քրակիոյ մէջ:

Պարսից արեւելեան սահմաններուն սպառնացող ժողովուրդներուն
կատարի վայրենութիւնը և մասնաւոր երկիրին տափաստան և անապատ
և կիզանաւա հանգամանքը աչքի առջեւ ունենալով, դիւրին է մակարե-
րել թէ անտանելի էր Հայոց պէս լեռնային և ցուրտ կլիմայի մարդոց՝

(*) Այսպէս ժ. Գառուս Յովհաննէս վրդ. Բզնցի, խումբով այցելած է Սինա:

համար այդ վայրերուն մէջ հաստատուելի կամ պատերազմ մղելի՝ Հեռու-
ւաբար, հաւանական է որ շատ մը Հայ նախարարներ՝ իրենց զօրակա-
ներով, այդ անհրապոյր և հեռուոր երկիրները երթալու պարտաւորու-
թեւէն ազատ մնալու համար Հայաստանէն հեռացած և Բիւզանդական հող
անցած ըլլան, ինչպէս Թրակիա երթալ չուզողներէն ոմանք ապաստա-
նած են Պասկաստան:

Ասով հանդերձ, Հայ նախարարները իբր հպատակի պարտականու-
թիւն, երբեմն վարձատրութեան, փառքի և բարձի ակնկալութիւննե-
րով՝ սիրայօժար, և երբեմն ալ ակամայ՝ բռնադատեալ՝ կոռւած են այդ
կողմօրը:

Այնպէս որ, Հայերը, ինչպէս Բիւզանդիոնի նոյնպէս Պարսիկ բանու-
կին մէջ կատարած են կարեւոր դեր, և առանց տարակոյսի կարելի է
ըսել որ, ինչպէս Բիւզանդեան կայսեր նոյնպէս նաեւ Սասանեան արքա-
ներու բանակին մէջ՝ միշտ Հայ զինուորներ գտնուած են:

Եթէ Պարսիկ արքունական բանակին մէջ Հայեր գտնուած չըլլային,
Եղիշէ (85) Բագիբերտի ըսել պիտի չտար, իբր թէ նախարարներու ուղ-
ղուած սա խօսքը թէ, «զամենեւեան զԳեղ եւ որ ի գնդիս են չաբաշտ
կապանոք ի Սակասան քամ անցուցանել...»: Նոյնպէս կը յիշուի թէ
Խոսրով Բ. (591—628) իր մօրեղբորը՝ Վստամի դէմ մղած պատերազմին
մէջ «ոչ փոք ինչ քաղաքիս գործեալ (եր) հայակոյս զաւրացն, գոր սես-
եալ քաղաւորն՝ առաւել զաւրացայր» (Սեբիոս ԺԲ), և պատերազմէն կը
դառնար «ի թխանն ցախաւրացն Հայոց ընդ ցմա» (Յոյն):

Իսկ Պարսկաստանի սահմաններուն վրայ, ինչպէս նաեւ ապստամբ իշ-
խաններու և ցեղերու դէմ կռուելու համար Հայաստանէն փոխադրուած
նախարարական զօրագունդերու յիշատակութիւնը սւեյի յաճախ ունի
մեր պատմութիւնը:

Ղազար Փարպեցի, այսպէս, կը հաստատէ թէ է. դարուն, Սագաս-
տանի սահմանին վրայ, մին՝ 449էն առաջ և միւսը՝ 457ին, երկու պատե-
րազմներ մղուած են Հայոց մասնակցութեամբ: Առաջինը՝ Մարզիտաոթի(*)
կռիւն էր, հաւանօրէն 445—446ին կատարուած, գոյծակցութեամբ Հայ
այրուձիին որ կը գտնուէր Հայ նախարարներու գլխաւորարար Սպարա-
պետ Վարդան Մամիկոնեանի հրամանին տակ (ՀՄ. 1931. 589—90): Հոն
Վարդան ցոյց տուած էր, Յազկերտ Բ. ի ներկայութեան, մեծ քաջութիւն,
կռուելով անոր թշնամիներուն դէմ և Յազկերտ Բ. սասոր համար ապե-
րախտ չէր եղած և Վարդանի պէս Արիներու մեծ ծառայութիւններ մա-
տուցած զինուորականի մը մահուան պատճառ եղած ըլլալու սմբաստա-
նութեան ենթարկած՝ Տիգրան ուղարկուած Հայ նախարարները, բայց
մանաւանդ Վասակ Սիւնի մարզպանը:

Երկրորդը՝ զարձեալ այդ սահմաններուն վրայ այն կռիւն է որ 457էն

(*) Մարզիտ 47 փառախ հեռու Վրկանքի հրախ-արեւելեան սահմանի վրայ Վասակ
Ս. ինչու և քաղաք մը:

464, եթէ տարի, Վարդանանց շարժման մասնակից բանտարկեալ նախա-
րարները մղեցին իրենց բանտարկութենէն՝ Պերողի զահակալութենէն
յետոյ, արձակուելէն վերջը:

483էն 545 երբ Պարսիկները հարկատու էին Հեփթաղներու (վերջ
191) և այդ ճակատին վրայ խաղաղութիւն կը տիրէր, Հայ զօրքը այլուր
կռուեցաւ Պարսիկ բանակին հետ:

Այսպէս, 484ին, երբ Վաղարշի եղբայրը՝ Զարեհ կը կռուէր զահը
յափշտակելու համար, Հայաստանի մարզպան Մամիկոնեան Վահան, հե-
ռատես և նրբամիտ վարիչ մը, իբր օժանդակ Վաղարշի բանակին, Տիգր-
ան զրկեց Վրէն Վանանդեցին և Գրիգոր Մամիկոնեանը, Հայ այրուձիով
(Փարպեցի. 525—6): Տեսաւք արդէն (վերջ 152—3) թէ, Հայերը Պարսիկ
բանակին հետ կռուեցան 501—506ին, Բիւզանդական բանակին դէմ, Կար-
նոյ և Ամիթի գրաւման տեսն:

545ին, երբ Խոսրով Ա. Բիւզանդացոց դէմ յաղթական, կ'որոշէ
երկիրը փրկել Հեփթաղներու հարկատուութենէն, ինչպէս Կովկասեան
ժողովուրդները զսպել, և երբ այս առթիւ ընդհանուր զօրակոչի կ'են-
թարկէ իր բոլոր հպատակները, Հայ նախարարները կը պատասխանեն
զօրակոչին և իրենց այրուձիով և սմէն տարի կատարուած զօրանաւաք-
ներով, ութը տարի (545—552) կը կռուին հեռուոր Վրկանքի մէջ Պար-
սիկ զօրքին հետ, Հեփթաղներուն դէմ, մինչեւ կը յաղթեն (Ազիսեան.
Յղիթ. Բ. 498)

Զ. դարուն վերջերը երբ Մօրիկ և Խոսրով Բ. (591—628) համա-
ձայնութեամբ, Հայաստանը պարպելու համար, նախ Հայ զինուորական
ոյժը հեռացուցին իրենց բաժիններէն, Խոսրով, իր հրամանին հնազանդօղ
նախարարները պահեց Տիգրանի մէջ՝ իր քով, իսկ զօրքերը՝ Սպահանի մէջ
(Սեբ. ԺԱ): Հաւանօրէն ասոնք էին Պարսիկ զօրքերու հետ Խոսրովի հրա-
մանին տակ՝ ապստամբ Վստամի դէմ կռուող Հայ զօրքերը և նախարար-
ները (Սեբ. ԺԲ), ինչպէս նաեւ մասամբ ասոնցմէ էին, և մասամբ ուրիշ-
ներ, այն Հայ զօրքերը որոնք յանուանէ յիշուած և ուրիշ անուններն ան-
ձանօթ նախարարներու գլխաւորութեամբ, կռուեցան Սմբատ Բագրա-
տունիի հրամանին տակ, երբ ան 599ին Վրկանքի մարզպան կարգուելով՝
այդ կողմերուն ապստամբ ցեղերը նուաճեց (Սեբ. ԺԸ):

Հայ զօրքին ընծայուած կարեւորութիւնը, Պարսիկ վեհապետներուն
կողմէ, այնպիսի շրջանի մը ուր կրօնական պատճառներով այնքան յա-
բարբուրութիւնները խանգարուած էին երկու ազգերու միջեւ և Հայոց
նկատմամբ կասկածով կը վերաբերուէին Պարսիկները, նշան մը չէ՝ թէ
անոր որքան արժէք կու տային:

Ինչպէս Բիւզանդիոնի՝ նոյնպէս նաեւ ապահովաբար Տիգրանի ար-
քունքը, կը զնահատէր Հայոց ձիրքերը և ընդունակութիւնները, ինչ-
պէս նաեւ անոնց շինարար կարողութիւնները, և կ'ուզէր անոնց թիւը
երկիրին մէջ բազմացնել, և առիկա, թէ՛ Հայաստանը տկարացնելու և թէ՛
երկիրը շէնցնելու նպատակով:

Ասոր համար, ամէն անգամ որ Հայաստանէն, մասնաւորապէս անոր Բիւզանդական բաժինէն Հայեր, նախարար կամ ժողովուրդ, փախուտ տուած են զէպի Պարսկաստան, անոնք սիրով ընդունուած են: Արդէն տեսնաք թէ, քաղաքական պատճառներով, ինչպէս Բիւզանդական երկիրներ, նոյնպէս նաեւ Պարսկաստան խոյս տուող Հայեր գտնուած են, որոնցմով զբաղած են երկու պետութիւններն ալ՝ հաշտութեանց բանակցութիւններու ատեն:

Այս կարգին կարելի է յիշել նաեւ բազմաթիւ անձեր որոնք Բիւզանդացոց հետ խնդիր ունեցած, անոնց քաղաքականութեան ընդդիմադիր եղած կամ վերջապէս ըմբոստանալ յանդգնած են: Ասոնք իբր Պարսիկ պետութեան բարեկամ, պատրաստակամ ընդունելութիւն գտած են, ինչպէս Սոսրով Բ.էն գտան այն Հայ նախարարները որոնք Յուստինոս Բ.ի (565—578) ատեն ապստամբած էին (Գիւտերբոք. Բիւզանդիոն եւ Պարսկաստան 104—5. և ՀԱ. 1931. 471—2):

Նոյնպէս, հաւանական է որ Մօրիկի կողմէ Հայ եկեղեցիին զէմ գործադրուած հալածանքին իբր հետեւանք, երբ «մանկուց ուխտի եկեղեցեացն Հայոց փախստական զնացեալ յաւտար երկիր վարեին» (Սեբ. Թ), զոնէ անոնցմէ ոմանք Պարսկաստանի քրիստոնէաչափ կողմերը գոցած են, քանի որ Մօրիկի հալածանքէն պրծիլ ուզողներ Բիւզանդեան երկիրներ պիտի չերթային:

Նոյնպէս, չէ կարելի երեւակայել թէ Պարսիկ մայրաքաղաքին՝ Տիգրանի մէջ (Պաղատաի մօտ) Հայեր հաստատուած չըլլան, ինչպէս հաստատուած էին Բիւզանդիոն, իբր անխուսափելի հետեւանք այն յարարութիւններուն՝ որ Հայերը պարտ էին ունենալ իշխող պետութեան հետ, առանց նկատի ունենալու այն քաջողականութիւնը որ մայրաքաղաքները սովորաբար ունին հանդէպ գաւառներու կամ նահանգներու, և պէտք չէ մոռնալ թէ Հայաստան առաւել կամ նուազ չափով Պարսկաստանի մէկ նահանգն էր:

Հետեւաբար անխուսափելի էր որ շատ Հայեր զանազան պատճառներով հոն՝ պետութեան կեդրոնը դիմած ըլլան, երբեմն արքունական ծառայութեան հետամուտ ըլլալու և երբեմն ալ պաշտօնի ու փառքի ցանկութեամբ կամ բախտ որոնելու փափաքով:

Հոն, ոմանք ալ, հարկադրեալ բնակութիւն ունեցած են իբր պատանդ, ինչպէս զոր օրինակ, Վասակի երկու զաւակները և Վահան Մամիկոնեանի Վարդ եղբայրը, և այլն: Նոյնպէս, ինչպէս Բիւզանդիոն նոյնպէս նաեւ Պարսկաստան — և պէտք է ըսել թերեւս աւելի առաւելագոյն չափով — Հայաստանը գատարկացնելու աշխատած է, բռնազաղթի ենթարկելով բազմաթիւ Հայեր, զինու զօրութեամբ, և տարած բնակեցուցած է մասնաւորապէս պետութեան ծայրադաւառներու մէջ՝ սահմանազուխներու վրայ:

Յետևեցաւ արդէն թէ Շապուհ Բ., տակաւին Արշակունեաց իշխանութիւնը չկործանած, 364—367 թուականներուն, Հայաստանէն վերցու-

ցած էր Հայ և Հրեայ ստուարաթիւ քաղաքացիներ և անոնց կարեւոր մէկ մասը հաստատած Սաղաստան (=Պորասան) և Վրկանք (=Մազանդարան) և մաս մըն ալ Ասորեստան և Պուժաստան (տես. վերը 121):

Իսկ Եղիշէի (85—86) զիւցազնավէպին մէջ, Յազկերտ Բ.ի բերանը գրուած Հայ նախարարներու ուղղուած սա սպառնալիքը թէ «զամենեսեան զձեզ եւ որ ի գնդիս են՝ չարաչար կապանօք ի Սակասան օտմ անցուցանել ընդ անճանապարհ սեղիս, որ եւ բազումք ի ձեզք ի խորակի յերթալն սասակիցին եւ մնացեալն անկցին ի բերդս ամուրս եւ ի բանօս անելու: Եւ ի ձեռ աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք եւ զկին եւ զորդիս ի Պուժաստան տամ խաղացուցանել»: Կրնայ ճիշդ չըլլալ նոյնիսկ ճիշդ չէ թերեւս Յազկերտ Բ.էն բազմաթիւ Հայերու բռնազաղթի ենթարկուած ըլլալը (Յղիշէ. 349—50, 356—9) զէպի Սաղաստան և Պուժաստան, սակայն արքայից արքաներ գտնուած են որ Հայերը տարագրած են զէպի այդ կողմերը:

Եղիշէ որ, ըստ Հ. Ակիսեանի քննութեան, ժամանակով աւելի ուշ ժամանակներու, այսինքն Սոսրով Ա.ի ատեն պատահած զէպքերը Յազկերտ Բ.ի ատեն կը ներկայացնէ վիպագրաբար. զէպքերը այլափոխելով, սպանովաբար խորխտ վեհապետին կողմէ 572ին ապստամբութեան առթիւ կատարուած սպառնալիք մըն է որ Պարսիկ և Արաբ պատմագիրներէ «Բարեմոյն» տիտղոսը ստացած Յազկերտ Բ.ի կը վերագրէ: Թէեւ Սոսրով Ա.ի կողմէ կատարուած բռնազաղթի մը յիշատակութիւնը մեզի բերած չէ պատմութիւնը, բայց Յայմաւուրք (Սեպտ. 7) ունի վրկայութիւն մը, որուն համաձայն Սոսրով Ա. 536—538ին, Բիւզանդական Հայաստանի ընկերներէն բազմաթիւ Հայեր և Յոյներ խառն փոխադրած է իր երկիրին ներքին գաւառները, կ'ենթադրեմ, Սաղաստանի և Վրկանքի կողմերը, վասնզի յետոյ 599ին Սմբատ Բագրատունի երբ Մարզպան կարգուեցաւ Վրկանքի «կային յաշխարհին յայնմիկ ազգն գերեալ ի Հայաստան երկրէ, եւ նսուցեալ առ ստորոսով անապատին մեծի՝ որ ի Քուրբասանի եւ ի Դելիասան կողմանէ ... կային անդ եւ ազգ Պոքրեացն որք գերեացն մերովն արամբ: Կային անդ եւ յիսխանութեան Յուցաց եւ յխորուց կողմանէ ոչ սակաւ:» (Սեբիոս. ԺԴ):

Սերբոս, որ է. դարուն կէսերը գիրի առած է իր պատմութիւնը, կը հաստատէ ուրեմն անուղղակի Յայմաւուրքի տեղեկութիւնը, որ պատահօրէն կատարուած յիշատակութիւն մըն է և տեսակին մէջ միակը չէ սպանովաբար, վասնզի շատ հուսանական է որ Պարսիկները իրենց երկարատեւ պատերազմներուն մէջ, իրենց գրաւած քաղաքներէն բնակչութեան զերառութիւնը կատարած ըլլան: Դժբախտաբար, սակայն, մեր պատմագիրները ժյատ եղած են և չեն արձանագրած Ե. և Չ. դարերուն կատարուած բռնազաղթերը, կամ շատ անորոշ և ընդհանուր բառերով խօսած են «նոնց մասին»:

Միայն պատմութիւնը արձանագրած է Մօրիկի Հայաստանը գատարկացնելու առաջարկին հետեւանք Սոսրովի կողմէ գործադրուած բռնա-

գաղթը, որուն ենթարկուեցան առաջին անգամ 595ին եօթը նախարարական գլխաւոր տուններ, իրենց հետ ունենալով «եւ այլ բնդ նոսա ի նախարարաց»: Ասոնք կը կոչուէին Տիգրոն իրենց զօրքերով (Սեբէոս ԺԱ. և վերը 150), և «գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդով եւ դրաւու ի դուռն քաղաւորին Պարսից խոսրովու... Եւ հս սեալ նոցա յև սորեսան ի թեղի արձուցական ցանն եւ յանդիման եղեն քաղաւորին: Իսկ նա խնդութեամբ ընկալաւ զնոսա եւ երեւելի շեղութեամբ մեծացոյց պատուով եւ զմեծամեծ իշխանսն հրամայէ պահել ի դրանն արձուցի, կարգել նոցա ռոնիկս յարձուցուս՝ զալ ի թուսն իւրաքանչիւր, եւ կոչել յամենայն աւուր յիբրքիս արձուցի: Եւ զաւրաց նոցա հրաման զայր նստիլ ի Սպահան աշխարհի, եւ դարմանել զնոսա սիրով եւ ամենայն կամակաւորութեամբ» (Սեբէոս ԺԱ.):

Թէև Ասորիս (ԺԳ.) կ'զգուշանայ բացորոշ ըսելէ, սակայն որքան կը հասկցուի խօսքին կապակցութենէն, այս տարագրեալ նախարարներէն ոմանց խորհրդաւոր մահը, ոմանց սպանութիւնը (*), և մասնաւորապէս Կոստիս Ամատունիի Մրծունին դեսպան գացած ատեն դարանամուտ հեծեայններուն կողմէ «աւազակաբար» ճամբան սպանուիլը, կը կատրեցնէ անոնց զօրքերը, որոնք Սպահան կը մնային: Անոնք կ'ապաստարին և խոյս կուտան Պարսկաստանէն և Պարթեւաց (Բակդիթիոյ) կողմերը կ'երթան (Սեբ. ԺԳ.):

Մօրիկի մահէն յետոյ, երբ Խոսրով Բ. Բիւզանդիոնի դէմ անողոք պատերազմի մը մէջ մխրճուեցաւ, և Հայաստանի մէջ ալ ճակատիլ հարկադրուեցաւ Բիւզանդացիներուն դէմ, գարձեալ բռնազաղթի ենթարկեց այն Հայերը որոնք փորձած էին Բիւզանդացւոց օգնել: Այսպէս, Կարնոյ բնակիչները, որոնք Փոկասի օգնած էին այն երկեամ մի ամաց» 605—615 յետոյ, Համատան փոխադրուեցան (Յովհ. Կար. 95): Տարագրեալներուն մէջ էր, Աւանի մէջ Մօրիկի կողմէ հաստատուած հակաթոռ Յովհաննէս Կաթողիկոսը (Յովհ. Կար. 95 և Ասողիկ Բ. Բ.):

Նոյնպէս, Շիրակացիք, երբ 607ին Բիւզանդացւոց օգնեցին, մասնաւորապէս Արգինայի մէջ Պարսից վրայ յարձակելով և անսպաս օգնութիւն մը հասցնելով անոնց, Պարսիկները, երբ բերդը առին «գրազումս սրով սասակեցին եւ բազում գահավէժ լիճէին յանէ անթի, եւ կեսն ելեալ ընդ դուռնն՝ ուր բանայր ի կողմն գեոյն՝ փախսական գնային եւ զայսն ամենայն ի գերութիւն վարեցին: Եւ գերեցան յաւուր յայնմիկ ի բերդէն յայնմանէ գեւղէ ԼԳ (33): Եւ զամենայն նոյնպէս ի գերութիւն վարեցին, եւ ժողովեալ զամենայն զառ եւ զաւար գաւառից եւ զաւրն դարձան եւ գնացին յԱրպասական» (Սեբէոս. ԻԲ):

(*) Գագիկ Մամիկոնեան եւ խոսրով Վահեւուցի բնական մահուամբ կը մեռնին Տիգրոն, Մամիկոնեան արժանուած կը դառնայ Հայաստան զմտան գաւառացի» եւ ան հասնելով Գուհն, «կեցեալ սակաւ իճէ աւուրս» կը մեռնի, Սեփանոս Սիւնի լայնաբերտ վասն տանուախորտեան լեալ ընդ հաւրեղալոյս իւրում Սահակայ» կը գլխատուի, իր իսկ ազգակիցներուն մասնութեամբ (Սեբ. ԺԳ.):

Շիրակացիներու այս ստուարաթիւ բազմութիւնը, 33 գիւղերու բընակչութիւն, առանց հաշուելու բերդականները, չէ ճշդուած թէ գերուսթեամբ դէպի ո՛ւր վարուած են, սակայն կարելի է ենթադրել թէ Պարսիկներու կողմէ իբր բռնազաղթեալներու բնակավայր որոշուած տեղերը տարուած են:

Դիտելի է որ Պարսիկները, թէ՛ Հայ զօրքը և թէ՛ քաղաքային բընակչութիւնը, աւելի արեւելքի մէջ, Գուշաններու, Հեփթաղներու և Թուրքերու սահմանին վրայ կուռելու մղած կամ բնակեցուցած են և զգուշացած՝ իրենց արեւմտեան սահմանին վրայ, անոնց կրօնակից Բիւզանդացիներուն դէմ զինելէ:

Ասոնցմէ անշուշտ, ինչպէս Բիւզանդիոնի մէջ, երեւան եկած են կարեւոր դէմքեր, որոնք Պարսիկ պետութեան մեծ ծառայութիւններ մատուցած են: Դժբախտաբար ասոնց մասին մեր ծանօթութիւնները շատ քիչ են, վասնզի Պարսից հին պատմութեան վերաբերեալ գրութիւնները անհետացած են իտլամութեան շրջանին և շատ քիչ բան փրկուած է, ան ալ առաւելապէս Ֆերաուսիի գործին շնորհիւ: Հոն կը տեսնենք արդէն Հայ զինուորական տաղանդը փառաւորուած յանձին Մուշեղ Մամիկոնեանի և Սմբատ Բագրատունիի որոնք իրենց գունդերով Մօրիկի բանակին հետ Պարսկաստան գացած են, կուռելու համար Խոսրով Բ. թշնամիներուն դէմ և անոր երախտապարտութիւնը չահած, զայն հաստատելով իր հայրենի գահուն վրայ (Սարուխան. Ֆերուսի եւ Մ. Խորենացի ԶԱ. 1935, 10—11): Եթէ մնացած ըլլային Պարսիկ հին պատմիչներու գործերը, ինչպէս մեզի հասած են Բիւզանդականները, որոնցմէ կ'օգտուինք այսօր Բիւզանդական կայսրութեան մէջ երեւելի հանդիսացած Հայոց գործերուն ծանօթանալու համար, ապահովաբար պիտի ունենայինք նոյնքան գեղեցիկ շարք մը բարձրադուլեա կանգնած գինուորական քաջ պետերու և ուրիշ մեծ պաշտօնատարներու, որոնք իրենց ժամանակին և մանաւանդ Պարսիկ պետութեան փառքը կազմած էին:

Մասնաւորապէս, տրուած ըլլալով թէ Պարսիկները անխորաբար Հայերու վտանգած են կարեւոր պաշտօններ, Հայաստանի մէջ և անկէ գուրս, ամէն տարակոյտէ գուրս է թէ Հայ պաշտօնատարներու թիւը շատ ու շատ էր, սակայն անոնցմէ միայն շատ քիչերը ծանօթ են:

Այսպէս, Ե. դարուն յիշուեցաւ արդէն Վասակ Սիւնին որ նախ Վրաստանի և ապա Հայաստանի մարզպան եղաւ: Հայաստանի մարզպանութեան պաշտօնին կոչուեցան նաեւ Վահան և Վարդ Մամիկոնեան յաւորդաբար (485—509), Փիլիպպոս Սիւնեաց տէր (573) և վերջապէս Վարդապետ Բագրատունին (628—633)՝ որդին Սմբատ Բագրատունիի որ իր հօրը Պարսիկ պետութեան մատուցած անփոխարինելի ծառայութեանց համար, Խոսրով «եւ սնուցեալ ... իբրեւ զմի յորդոց իւրոց եւ եւ մեծաբաւ ամենայն դրանն արձուցի» և նշանակուած էր նախապէս մատուակարքային (Սեբէոս ԺԷ), ապա կոչուած է «Ջավիթեան խոսրով» (նոյն. ԺԸ) և հուսկ ուրեմն Մարզպան Հայաստանի (նոյն. ԻԸ):

Իսկ բուն Պարսկաստանի մէջ, գլխաւոր դէմքն է Սմբատ Բագրատունին, որուն գործերը կը մնան յիշատակուած: Ան էր որ Մօրիկի բռնագալթին դէմ ծառայեալ և ուզեց որ Հայերը փոխանակ Բրակիա երթալու իրենց երկիրին մէջ մեռնին և իրենց անկարողութիւնը ձեռք բերեն: Անիկա, ինչպէս տեսնուեցաւ մասնուեցաւ, և ձերբակալուած տարուեցաւ Պոլիս (վերը 151), ուր դատապարտուեցաւ զազաններուն առջեւ նեռուելու, և սակայն յաջողեցաւ արջը բռնցի տապալել, ցուլը եղջիւրներէն պառկեցնել և առիւծին վրան հեծնալով խոչափողէն խեղդել:

Ասոր վրայ, Մօրիկ անոր կեանքը շնորհեց (*) և հրամայեց աքսորել Ափրիկէ «եւ առնել զնա անդ ի մեզ զաւրացն՝ որ էին անդ ի բուն» (Սեբիոս. Ժ):

Սմբատ անկէ կը յաջողի փախիլ և երթալ Պարսկաստան և Սոսրովի ծառայութեան մտնել, և հաճոյանալով՝ 599ին Մարզպան կը նշանակուի «երկրին Վրկանայ» «իօխան ... ի վերայ ամենայն կողմանց այնորիկ»: Պատմագիրը (Սեբիոս ԺԲ.) կը խօսի հիացումով, ըսելով թէ Սոսրով «առաւել մեծացուցանէ պատուով եւ իբխանութեամբ. լնու զնա ոսկով եւ արծաթով, զարդարէ ի հանդերձս պատուականս եւ յերեւելիս: Տայ նմա զկամարն եւ զսուսերն լեալ հաւ իւրոյ Ռմզդի. զումարէ ի ձեռս նորա զաւրս Պարսիկս եւ զՀայաստանայս, հրամայէ զնալ յերկիր իբխանութեան իւրոյ»:

Սմբատ իր Պարսիկ և Հայ գործերով, այդ ծայրագաւառը կը զրկուի վասնզի «էին ապստամբ ի ծամանակին յայնմիկ յարքայն Պարսից երկիրն՝ որ անուանեալ կոչին Աւաղ, Ռոյեան, Ջրեան (=Ջրեան) եւ Տապարասան, զորս վանեալ նորա պատերազմաւ՝ հարկանէր սրով սուսերի եւ իծառայութիւն արքային Պարսից կացուցանէր, եւ շինեալ հաստակէր զամենայն երկիր իւրոյ մարզպանութեանն, քանզի եր երկիրն աւերակ» (Սեբիոս ԺԳ.):

Սեբիոս կը նկարագրէ նաեւ Սմբատի կռիւները Վրկանքի մէջ, մասնաւորապէս Վստամի ապստամբութեան առիթով, անոր պարտութիւնը և զօրքին ցրուիլը: Ոյս պատեհութեամբ կ'ըսէ թէ «եւ արքն այն Հայաստանայ՝ որ ապստամբեալ էին ի Սմբատայ եւ զնացեալք առ Վստամ» միւս զօրքերուն հետ խոյս տուած են և «իբրեւ զնացին նոքա յերկիրն՝ որ կոչի Գոմե (=Կամ Կոչմ, Սորասանի նահանգներէն մէկը), որ կայ անդրէն ի քիկանց Վրկանի՝ յայնմ կողմանէ սարոյն՝ որ անցանէ ընդ մեզ նոցա, եւ հասին ի գեւղն՝ որ կոչին Խեկեանդ»:

«Ընդդէմ ելանէր նոցա Շահր Վահրին, եւ Սմբատ Գուրկան մարզպան

(*) Յոյն ծամանակակից պատմագիր՝ Théophylacte Simocatta ուղղակի Մօրիկ կայսեր գործերն արձակուած ցոյց կու տայ, իսկ Սեբիոս այս ներուր կրկնէին հանդիսատեսներուն պահանջին կը վերագրէ (Սեբիոս. Ժ.): Զամիչեան՝ հեռեւելով Սամուէլ Անցիթի մէկ սխալին, տեսարանը կը տեղափոխէ Պարսից Խուսրով Բ. Բագրատին ներկայութեամբ եւ Կ. Ս. Բասմաչեան (Իսկական Պատմութիւն Հայոց, 257) ձերբակալուած ցոյց կու տայ Պարսիկներէն եւ ախորձած Ափրիկէ! որ երբեք ձեռք չէր:

նեղեմը բազմաւ, եւ զարբ Գեղում ոչ աւելի քան զերկուս հազարս. եւ եղել պատերազմ ի վերայ երկրին այնորիկ, հարին զգաւրն Պարսից, եւ փախսական արարեալ հալածական օտարին, զբազումս սպանեալ եւ զբազումս ձերբակալ արարեալ դարձան անդրէն, եւ բանակեցան մաս ի տեղի պատերազմին: Եւ արքն այն Հայաստանայք ընդ նոսա: Մեռան բազում եւ ի զաւրացն եւ ի Հայաստանայցն՝ որ ընդ մարզպանին Սմբատայ» (Սեբիոս. ԺԵ.):

Յաջորդ տարին թշնամիները կը գուժարուին ի Տապարաստան և Սմբատ ալ իր բոլոր զօրքը հաւաքելով անոնց դէմ կը պատերազմի և կը յաջողի յաղթել. «սասակեաց զամենայն սրով սուսերի եւ ապրեալքն զնացին փախսական ի տեղիս իւրեանց» (Սեբ. ԺԶ.): Ասոր վրայ «առաքեալ առ նա Բագրատին հրովարտակ մեծապէս գոհութեամբ, պատուով մեծացուցանէ ի վեր քան զամենայն մարզպանս իւրոյ տիրութեան առնելով» և իրաւունք կը շնորհէ ոսկի բաժակ գործածելու, և հազնելու «հանդիւրձս քաղաւորականս, արտախուրակս ոսկեզաւծս եւ զանգապանակ ակամբք եւ մարգարտով կարգեալ» (Սեբ. ԺԶ.):

Այսպէս, Սմբատ 599էն 607, Վրկանը կառավարելէ և բազմութիւն յաղթութիւններ շահելէ յետոյ ընդդէմ հիւսիսային բարբարոսներուն, (Սեբիոս. ԺԶ) 608ին կը զրկուի Հայաստան (Ուխտանէս Բ. 56) իրր արտասովոր արքունի գործակալ, կաթողիկոսական ընտրութիւն կատարելու և Հայոց վիճակով զբաղելու համար (Սեբիոս ԺԶ) և 609ին կը դառնայ կրկին Պարսկաստան Սոսրովի ստիպողական հրամանով (Յոյն ԺԸ), վասնզի Գուշանները դարձեալ Պարսկաստանի վրայ յարձակիլ սկսած էին: Սմբատ «Սոսրովչում» (=Բագմայաղթ) պատուանուեով և «պատմուեան եւ գղակ բեհեզեայ յոսկելոյ օծեալ», ականակապ վրան, արծաթէ դա՛, չորեք ձայնեան փողեր գործածելու և արքունի թիկնապաններէն պահապաններ ունենալու բացառիկ իրաւունքներով կը զրկուի կրկին Վրկանք:

Սմբատի կ'ընկերանային Հայ գուշակներ որոնց կը հրամայէին Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Վաստ Գոգթնացի, Սարգիս Դիմաքոսեան, Սարգիս Տրպատունի, և Մանուէլ, Արտաւազդ, Վստամ ու Հմայեակ Ապահուսիներ (Սեբիոս ԺԸ):

Սմբատ կը հալածէ Գուշանները, որոնք Սաքանին օգնութեան կ'ապաւինին: Սմբատ սակայն անակնկալ յարձակումին առջեւ նահանջեց, մինչ Պարսիկ զօրավար մը, հակառակ Սմբատի հրամանին, կը կռուի և կը պարտուի: Բարբարոսները Ռէյ և Սպահան կ'առաջանան և աւարով կը դառնան: Սմբատ վերադառնալով կը զինուի և կ'արշաւէ Գուշանաց վրայ 609ին և մինչեւ Բահլ Շահաստան կը հասնի: Գուշանաց թագաւորը մեծամարտով սպանելէ յետոյ, ու աւարի կու տայ երկիրը և կը դառնայ Սորասան (Սեբ. ԺԸ.):

Սոսրովէն նոր պատիւներ կ'ոտանայ, մինչեւ արքունի փիղը հեծցնելու չափ (Սեբիոս ԺԸ) և հանգստեան կը կոչուի իբրեւ «երրորդ նախա-

բար ի օսանալի քաղաքութեանն: Ան արքունիքին մէջ կ'ապրի 8 ասորիներ եւս, մինչեւ 617 (Սեբիոս ժԹ) շատ կարեւոր դեր կատարելով հոն, իբր հեղինակաւոր անձ (Ազգապատում 651—655 էայլն):

Այս զինուորական մեծ դէմքին և անոր նմաններուն հետ, որոնք պատմութեան անցած են, դժբախտաբար ժողովուրդին կամ ռամիկին մասին ոչ մէկ տեղեկութիւն ունինք: Բիւզանդիոնի պատմութեան մէջ տեսնուած երեւոյթն է որ հոս ալ կը կրկնուի: Սակայն անկարելի է որ ազատներուն հետ, անոնց ոչ-զինուոր հետեւորդներն ալ միասին Պարսկաստան գացած և հոն արուեստներ և արհեստներ կամ առեւտրական ասպարէզներ ընդգրկած չըլլան:

Տեսնո՞ք թէ մշակութեամբ պարապողներ կային Ասորեստան (Փարպեցի. 319): Նոյնպէս կը յիշուի թէ Յազկերտ Բ. ի հրամանով (452—454) Վրկանքի մէջ բանտարկեալ եկեղեցականները և նախարարները առանձին և անհետեւորդ չէին: Եկեղեցականներուն կ'ընկերանային «մանկուց կապելոց երիցանց» և նախարարներուն՝ իւրաքանչիւր տունէն հաւատարիմ անձեր՝ որպէսզի կարենան «արքանեկել նոցա եւ սպասաւորել ի կապանս» (Փարպեցի 255—6): Նոյնպէս տեսնո՞ք թէ Մօրիկի հալածանքներուն հետեւանօք «օտար երկիր» փախստական եղած էին «մանկուց ուխտի եկեղեցեացն» (Սեբ. Բ.):

Հոս աւելորդ թող չհամարուի դիտել ալ թէ, Սմբատ Բագրատունի վստահաբար իր շուրջը ունէր բազմաթիւ Հայեր, որոնք զինուոր չէին: Օրինակ՝ Սեբիոս (ԺԷ) կը յիշէ թէ ան իր հետեւորդներուն մէջ ունէր «առն երանելի» Միհրու Գիմաքսեան մը որ «կարգեալ եր ի վերայ օսանն իւրոյ՝ հաւասարիմ եւ կամակասար» և իր ապարանքին մէջ եկեղեցի մը ունէր մի քանի քահանաներով (նոյն), ինչ որ կը նշանակէ թէ՝ Պարսկաստանի մէջ, շատ հաւանօրէն, ամէն դասակարգէ մտրդիկ կային:

Մասնուորապէս Ասորեստան—Պուժաստանի և Վրկանք—Սաքաստանի շրջանակներուն մէջ, Հայերը ստուարաթիւ ըլլալ կը թուին, վասնզի ունեցած են եկեղեցական-հոգեւոր վարչութիւններ և կազմած՝ առաջնորդական թեմեր:

Ե. դարուն երկրորդ քառորդին, Պուժաստանի մէջ կը յիշուի գոյութիւնը Հայ գաղութի մը որ Զ. դարուն տեւողութեան և է. դարուն ըսկիզբները ղեւ կար: Գերողի ժամանակ (457—483) Հայերը որոշ է որ հոն ունէին նշանակելի թիւ մը: Երբ 454ին Վարդանանց ապստամբութեան մասնակից Հայ եկեղեցականները երկարամեայ բանտարկութենէ յետոյ նահատակուեցան (Փարպեցի 260—316), իրենց կամաւոր հետեւորդներէն երկու երէցներ, Պորէն և Աբրահամ, ականջատ, աքսորուեցան «յևսոբսան ի գաւառն որ անուանեալ կոչի Շաբուլ» պայմանաւ «կալ անդ նոցա ի հարկի եւ աւանել մեակութիւն արժուցի» (Փարպեցի. 320. և Սղիթե (*) 357—360), հոն գտան հաւատացեալներու բազմութիւն մը: Դա-

(*) Եղիթե աւելի կը ճշգրտե՞նք՝ «յերկիրն Բաբելոնացոց ի գաւառն մի գոր Շաբուլցն անուանեն» քննելով:

զար Փարպեցի (321) կ'ըսէ թէ «լուեալ ... հաւասացելոցն աշխարհին, որք յևսոբսանին էին, գերսս երանելեացն անդ ընդ առաջ էլին նոցա խնդրութեամբ եւ պատուեցին զնոսա որպէս զնախարարացն անուանեցան»: Հոն անոնք կ'ստանային հաւատացեալներու նուէրները և կ'օգնէին բանտարկեալ նախարարներուն (Փարպեցի. 320—1): Սղիթե (359) կը քրէ թէ անոնք «անդադար էին ի նամապահողութեանն ընդ նոյն Շաբուլ, ընդ Մեթուլն եւ ընդ Քաւար եւ ընդ ամենայն Ասորեստան եւ Խուժասան»: Ասոնցմէ Աբրահամ «առեալ զնորսս հարաւային կողմացն Ասորեստանեացն՝ տարեալ մասակարարեալ կապելոց ... բոս իւրաքանչիւր պիտոյց եւ արարեալ զայս այսպէս բազում անգամ կարգաւ՝ քրիստոնէից աշխարհին ... մինչեւ յարձակումն կապելոց նախարարացն Հայոց աշխարհին. անվեհեր լինէր նոցա բոսակասար ի հաւասացելոց աշխարհին տուողաց» (Փարպ. 321):

Պորէն հոն կը վախճանի, իսկ Աբրահամ «երաւաւորութեամբ հաւասացելոց աշխարհին, որք զնոսս իւրեանց եւ զարարս փոխանակ ընդ հարկին նորս գրեցին յարժուցիս՝ ցվախճան նորս եւ կասարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորս, արձակեալ զերանելի այրն՝ Եկն ի Հայս» (Փարպ. 322) և հոն եղաւ եպիսկոպոս Բզնունեաց (նոյն):

Այս վկայութիւնները ցոյց կու տան թէ Ասորեստանի և Պուժաստանի այդ շրջաններուն մէջ կը գտնուէին բուսական թուով «հաւասացեալ»ներ, որոնց համար կրնանք մեծ վստահութեամբ ըսել թէ Հայեր էին. քանի որ այդքան պատրաստակամ կը փութային նպաստել Հայ երէցներուն:

Գէտք է նկատի ունենալ նաեւ թէ «արժուցի մեակութեան» զրկուած Հայերու յիշատակութիւնը ունինք արդէն Գ. դարէն (վերը 135 և 200) և այդ կողմերը բնակող Նեստորականները՝ թէեւ քրիստոնեայ, իբր հերձուածող երկու Հայ եկեղեցական պատմիչներէն «հաւասացեալ» կոչուածով չէին կրնար ներկայացուիլ:

Անկարելի էր արդէն որ Տիգրան մայրաքաղաքին մէջ Հայ գաղութ մը գոյութիւն ունեցած չըլլար, որոշ պատճառներով, զորս բացատրեցի՝ Եւ Տիգրան, կը գտնուէր Ասորեստանի մէջ, այն ատենուան ըմբռնուածով (*):

Ե. դարուն վերջին քառորդին, Գիւտ Կաթողիկոս երբ Տիգրան կոչուելով պաշտօնէ զրկուեցաւ (475), միջոց մը մնաց հոն՝ «բազում համարձակութեամբ պատուեալ, ոչ միայն ի քահանայիցն եւ ի քրիստոնէիցն, այլ եւ առաւել ի հեթանոսացն» (Փարպեցի. 351): Ան կատարեց հոն ձեռնադրութիւններ, ոմանք եպիսկոպոսութեան և շատեր քահանայութեան կոչելով (նոյն. 351—2): Այդ քրիստոնեաները ապահովաբար Հայեր և Ա-

(*) Այսպէս Փուսոս ունի «երբայր ի յԱսորեստան առ ակրն իւր յարժայն Պարսից» (Գ. ի), եւ Սեբիոս կ'ըսէ «յևսոբստան ի տեղի արժուցեալսն անոնն, (ԺԷ), ինչպէս «յևսոբստան հասանէր (ստորով) ի բուն կայանս իւրոյ արժուցեալսն» (ԺԲ) եւ այլն:

տորինք միայն կրնային ըլլալ, վասնզի Նեստորականներու հետ Հայոց կաթողիկոսին յարաբերիլը բնաւ հաւանական չէր:

Նոյն շրջանակին մէջ էր, Պարսիկ մայրաքաղաքին մօտ, յայնկոյս Եփրատի խորով—Անտիոքիա քաղաքը՝ որ յունական-քրիստոնէական հաստատութիւններով, կառուցած էր Սոսրով Ա., 540ին Անտիոքը գրաւելէն և զայն կոտորածի և հուրի մատնելէն յետոյ, կոտորածէն ազատուող բնակչութեան համար (Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորուց եկեղեցիներին հետ. 1908 էջմիածին 122. և Dihl. Justinien. Paris. 1901. 215. Ակինեան շԱ. 1931. 470): Ըստ Օրմանեանի (Ազգապատմ. 530), այս տարագրեալներու հետ կամովին հոն հաստատուողներ եղած են, մասնաւորապէս Միաբնակներէն, որոնք Նեստորականներէն կը գարչէին և Բաղքեղոնականներէն կ'զգուշանային:

Ներելի է ենթադրել թէ այդ շրջանակին մէջ գտնուող Հայերէն մաս մը նախընտրած ըլլայ հաստատուիլ այս քրիստոնեայ քաղաքին մէջ, թէև սա այս փաստ մը չունինք:

Ամէն պարագայի մէջ, ամբողջ Ասորեստանի և Սուրբաստանի շրջաններուն մէջ Հայեր կը գտնուէին, որոնք Չ. դարուն յայտնապէս կը հնազանդէին Հայոց կաթողիկոսին և ասոր համար էր որ Քրիստափոր կաթ. (539—545) շրջաբերականով մը կ'զգուշացնէր զանոնք Նեստորականութենէ (Թովմա Արծուցի. Բ. ք), որ Բարձուամայի Զանքերովը զօրացած էր այս միջոցներուն և միշտ տարածուած էր առաւելապէս այդ շրջաններուն մէջ:

Քրիստափոր կաթողիկոս, միայն յորդորական թուղթով չէ գոհացած, այլ անձամբ ալ Պարսկաստան զացած է (Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց. ցոյց. 127) և հոն կատարած է ձեռնադրութիւններ Ասորի եկեղեցիին համար (ցոյց 123—124): Հայոց կաթողիկոսը Միջագետք, Ասորեստան և Պարսկաստան շրջած ատեն, այն տեղերը գտնուող Հայերու վրայ ալ տարածած է իր հոգածութիւնը (Ազգապատմ. 532), քանի որ Հայեր կային այդ կողմերը, ուղղափառ դաւանութեամբ, նոյնիսկ մարտիրոսութեան յանձնառու, ինչպէս կը յիշուի Հայագրի Սարգիս մը և Հայաստանցի Մեծ Թովմաս (Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց ցոյց. 134): Աւելի ըլլալով, ունինք տեղեկութիւններ թէ Հայերը այս շրջանակին մէջ քրիստոնէական կրօնքին զարգացմանը նպաստած են և Պարսիկ քրիստոնեայ եկեղեցիին կազմակերպութեան օգնած:

Նոյնպէս, եկեղեցական վիճակ մը կամ հոգեւոր հովուութիւն մը կազմակերպուած էր Վրկանքի մէջ, ուր Սմբատ Բագրատունի ըստ Սեփոսի (ժԴ.) կը գտնէր Հայ գաղութ մը «զլեզու իւրեանց մոռացան եւ գպրութիւնն ցուցանալի եւ կարգ ֆահանայութեանն պակասեալ»: Պատմիչը կը փութայ աւելցնել թէ «եիցն ազգ Կողբեացն անհաւատ, բայց ի վեայ քրիստոնէիցն ծագեալ լոյս մեծ, հաստատեալ ի հաւատս եւ ուսանեիցն գպրութիւնն եւ լեզու, եւ հաստատեալ ի կարգ ֆահանայութեան յաթարհի անդ երեց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչեալ Աբել»: (Հմտ. Յովն.

կարողիկոս 90—91. Սեփանցնոս Ասողիկ. Բ. ք, Կիրակոս Փանձակեցի 1858. 29, որոնք համանման բառերով կը կրկնեն Սեփոսի գրածը):

Նշանակելի է որ ասոնք մինչև ժԱ. դար կը պահէին իրենց գոյութիւնը ըստ Ասողիկի (Բ. ք), որ կը վկայէ թէ անոնք Աբել վարդապետէն «ուսեալ գպրութիւնն հայերէն» կան մինչեւ ցայսօր վիճակ Սրբոյն Քրիզոսի», այսինքն Հայոց կաթողիկոսին կը հնազանդին:

Ինչպէս Ասորեստանի մէջ Հայերը օգնած էին Պարսիկ քրիստոնեայ եկեղեցիին կազմակերպութեան, Վրկանքի և Սագաստանի մէջ ալ քրիստոնէութեան տարածումին օգնած են, ինչպէս Պարսիկ նոյնպէս նաեւ թշնամի բանակին մէջ:

Եղիշէ (268—9). չէ կարելի երաշխաւորել որքան ճշգրութեամբ, կը պատմէ թէ Բէլ անուն Հոն մը. Սալյանդրաց աշխարհէն, քրիստոնեայ դարձած է Հայ զինուորներէն համադրելով և գացած է Կուշանաց Արքան գրգռելու Պարսից թագաւորին դէմ: Նոյնպէս, Եղիշէ (271—9) կը պատմէ թէ, Պարսիկ Մոզակեղը կամ Գենպետը մկրտուած է:

Իսկ Փարպեցի (308—314. 314—346 և այլն) և Եղիշէ (305, 343—47.) համաձայնաբար կը հաւատեն թէ Պարսիկ ճամբարին մէջ կը գտնուէր Սուրբաստանցի մը «Սուրբիկ», որ վաճառական էր և քրիստոնեայ, կապուած Հայոց հետ և որ նահատակուած Հայ քահանաներուն օսկերոտին կ'առնէ զաղտնաբար ու կը բերէ Հայաստան:

Ասոնք կրնանք արգիւնքը համարել Հայերու քրիստոնէական եռանդին, որ հակառակ հալածանքներուն, մասնաւորապէս Պարսիկներուն մէջ քրիստոնէութեան տարածման դէմ դրուած խիստ արգելքներուն, չէ գաղթած գործելէ Անտիոքի է որ Հայերը՝ Պարսկաստանի մէջ հաւատաձաւալ գործունէութիւն ունեցած են միշտ և Պարսիկ Քրիստոնեայ Եկեղեցիին սերտ կապ պահած է Հայ Եկեղեցիին հետ: Երկու եկեղեցիներուն հետեւողները իբր դաւանակիցներ իրարու հետ կը յարաբերէին և որոշ էր թէ երկիրին շատ մը մասերուն մէջ անոնք իրարու քով կու գային, իրենց հաւատքը ամուր պահելու համար, մինչև որ անակնկալ փոթորիկ մը Արեւելքի մէջ հաստատուած կարգերը յեղաշրջեց:

Պարսիկները շատ ուշ զգացին թէ իրենց պետութեան սպառնացող վտանգը ո՛չ արեւմուտքէն՝ Բիւզանդիոնէն և ո՛չ Թուրքաստանի անապատներէն կու գար, այլ հարաւէն՝ Արաբական տափաստաններէն, ուր Արաբ թափառիկ ցեղեր, երբեմն Բիւզանդացուց և երբեմն Պարսից իշխանութեան տակ աւատական իշխանութիւններ կը կազմէին և իրենց այս կամ այն կողմ յարելով, Բիւզանդեան կայսրերու և Սասանեան Արքաներու իրարու դէմ մղած պատերազմներուն մէջ դեր մը կը կատարէին: Անոնք, օր մը միացած իսլամներու մարգարէին դրօշին տակ, Սալիֆաներու առաջնորդութեամբ, իրենց անապատներու սահմաններէն դուրս պիտի ելլէին, և իրենց թէ՛ կրօնապէս և թէ՛ քաղաքականապէս նուաճած առաջին ժողովուրդներէն մէկը պիտի ընէին Պարսիկները, որոնց զանգուածին մէջ սպորող Հայերու փոքրիկ խումբերուն ալ կեանքը պիտի յեղաշրջուէր անխուսափելի կեր-

պով, երբ մասնաւանդ նկատի ունենանք արարական արշաւանքներու նկարագիրը և ծաւալը:

Ինչ որ սակայն անժխտելիօրէն ակնհայտ էր մինչեւ այդ մեծ յեղաշրջումը, և արարական արշաւանքներու հետեւանք՝ Արեւելքի մէջ նոր գոյալիճակի մը ստեղծումը, Հայերը տարածուած էին ծանօթ աշխարհին մեծագոյն մասին տէր երկու մեծ պետութիւններուն՝ Արեւելեան Հռոմէական կամ Բիւզանդեան Կայսրութեան և Սասանեան Պետութեան անսահման տարածութիւններուն վրայ, որոնք իրենց մէջ կը պարունակէին Սպանիայէն մինչեւ Քուրքաստան (Արալ լիճ) և մինչեւ Հնդկաստան (Ինդոս գետ) տարածուած երկիրները և Միջերկրական ծովու շուրջ բոլորի երկիրները՝ գրեթէ ամբողջ:

Իսկ այս պետութիւններու սահմաններէն դուրս, հողիւ թէ մի քանի վայրեր կան ուր Հայերու հետքին կը հանդիպինք Ե-Է. դարերուն:

Արդէն տեսնուեցաւ թէ Վրաստան, իբր դրացի երկիր, շատ աւելի վաղ ժամանակներէ սկսեալ Հայ բնակչութիւն ունեցած է: Անկարելի է ենթադրել թէ այդ վաղեմի յարաբերութիւնները շարունակուած չըլլան, կրօնակից և մինչեւ 600՝ Հայ Եկեղեցիին դաւանակից և կրօնական պատերազմներու ատեն զինակից այս ազգին երկիրին հետ, երբ այնքան մօտ և դրացի էր ան Հայաստանին:

Պատմական տուիքներ կան հաստատող թէ անխորաքար Վրացիք իբր Հայ Եկեղեցւոյ պաշտօնեայ և եպիսկոպոս գործած են և Հայեր ալ փոխադարձաբար Վրաց Եկեղեցւոյ մէջ: Այսպէս, Վրաց բաժանումը կատարող Կաթողիկոսը՝ Կիւրիոն՝ ո՛չ միայն Հայոց Մովսէս Բ. Եղիվարդեցի Կաթողիկոսէն ստացած էր իր կաթողիկոսական ձեռնադրութիւնը, այլ նախապէս Արարատի քորեպիսկոպոս էր և հակառակ որ բնիկ Վրացի էր, սակայն Հայոց Հայրապետանոցին մէջ ծառայած (Ուխտանէս Բ. 4), իսկ իրեն ժամանակակից էր բնիկ Հայ Մովսէս եպ.ը որ Տաշիրք ծնած, Յուրտաւի մէջ մեծցած և անոր եպիսկոպոսարանին մէջ ծառայութեամբ յառաջացած և Կիւրիոնէն եպիսկոպոս ձեռնադրուած էր Յուրտաւի վրայ, ուր Հայեր և Վրացիք խառն կը բնակէին, և պաշտամունքը հայերէն և վրացերէն միասնաբար կը կատարուէր:

Հոն էին նաև Շուշանիկի գերեզմանը, Մծխիթայի և Մանգղեաց խաչերը, որոնց ուխտաւորութեան Հայերն ալ կը յաճախէին (Ազգապատում 600. Ուխտանէս Բ. 35. Գիրք Քղթոց 194), և ինչպէս կը հաստատուի Շուշանիկի ուխտատեղւոյն մէջ, մինչեւ Կիւրիոնի ատեն հայերէն լեզուով ալ պաշտօն կը կատարուէր (Գիրք Քղթոց. 627):

Յուրտաւ սահմանազուխի վրայ գտնուելով, գրեթէ երկու ազգերը հոն այսպէս խառն կ'ապրէին անխորաքարութեամբ և գաւառին եպիսկոպոսական աթոռին վրայ անխորաքար Վրացի և Հայ եպիսկոպոսներ կը նստէին (Գիրք Քղթոց. 179):

Հայերը, սակայն, միայն սահմանազուխներու վրայ չէին հաստատուած, այլ նաև Վրաստանի ներքին գաւառները և կարեւոր քաղաքները:

Ասոր փաստ կրնայ նկատուիլ Քիֆիսի Հայոց Կաթողիկէ անունով եկեղեցին, որուն հիմնարկութիւնը Քր.ի 600 թուականին տեղի ունեցած է (Հ. Մինաս վրդ. Բժշկեան. Ճանապարհորդութիւն դէպի Լեհաստան. 412) (*):

Իսկ աւելի հիւսիս, Կովկաս լեռներու հիւսիսային կողմը նաև, Հայերը ունեցած են հաւանօրէն բնակչութիւն և գործունէութիւն, որուն միայն զինուորական և կրօնաձաւալական մասին վրայ տեղեկութիւն հասած է մեզի:

Այսպէս, եթէ հաւատ կարելի է ընծայել Եղիշէի դիւցազներգութեան, Յազկերտ 440—441 թուականներուն, Հայոց, Վրաց, Աղուանից, Հոնաց, Կորդուաց և Ալձնեաց օգնութեամբ պատերազմած է Կովկաս լեռներուն հիւսիսակողմը գտնուած ցեղերու դէմ (Եղիշէ. 21), սակայն չէ կրցած յաջողութիւն մը ունենալ, ուստի մտածած է այդ ցեղերու թշնամութենէն ազատ մնալու համար, մնայուն բանակ մը պահել ձորայ Պահակը, և հոն շինած է քաղաք մը (հիմա Տէրպէնտ), ուր մնացած են նաև Հայ գունդեր 442էն մինչեւ 448, եթէր տարի Այս բանակը ամէն տարի կը փոխուէր (Եղիշէ. 22) և իրեն հետ ունէր շատ մը Հայ քահանաներ և Ս. Գիրքեր, քրիստոնէական պաշտամունքին համար: 449ին, ըստ Եղիշէի (35), անոնց դէմ հալածանք գործողրած է Յազկերտ և ցրուած:

Չաքարիա Հռետորի անունով Եկեղեցական Պատմութիւնը, որ գրուած է Չ. դարու առաջին կէտին, Հոնաց աշխարհին մէջ քրիստոնէական քարոզութիւնը տեղի ունեցած գիտէ Կաւատի (491—531) օրով, երբ Հռոմէական երկիրներէ գերի բերուած քրիստոնեաները կը վաճառուին Հոններուն և հոն փոքրիկ համայնք մը կը կազմեն: Ապա կը հրաւիրեն Աւրանի (Աղուանից) եպիսկոպոսն Քարտուշտ, որ թարգմանի Մխիթար, որ առած հետք քանի մը քահանայ, կ'անցնի Հոնաց գոտնէն և կը մկրտէ հոն գերիներէն շատերը. նաև Հոններէն մաս մը կը դարձնէ քրիստոնեայ: Երկու տարի ետքը, Քարտուշտ ետ կը դառնայ Հոնաց աշխարհէն և իրեն տեղ կ'ուղարկէ Մաք անունով Հայ եպիսկոպոս մը, քանի մը քահանաներու հետ: Ասիկա հոն կը շինէ աղիւսակերտ եկեղեցի մը (Հ. Ն. վ. Ակինեան. ՀԱ. 1931. 904):

Գրեթէ նոյնը կը հաստատէ 569ին գիրի առնուած հեղինակի մը մէկ գիրքը (ատորերէնէ թարգմանուած և հրատարակուած 1899ին F. J. Hamilton և E. W. Brooksէ «The Syriac Chronic Known as that of Zachariah of Mitylene» խորագրով): Անկէ կը տեղեկանանք թէ Չ. դարուն Հոնաց երկիրին մէջ՝ Աղուանից աշխարհէն և շրջականերէն մէկ քանի Հայ եպիսկոպոսներու և քահանաներու Աւետարանի քարոզութիւնը և անոնց ձեռք բերած արգիւնաբեր գործունէութիւնը, և մինչ Հայոց պատ-

(*) Սիմէոն Երեւանցի Կաթողիկոս (Ջամբա. 48—49) 1765ին գայն մկրիթի վերածուած ցոյց կու տայ: Սակայն յետոյ դարձեալ եկեղեցի յիշուած է, ինչ որ կը նշանակէ թէ վերադարձուած է:

միջինները կ'անգիտանան այս պարագաները և Մղուանից պատմիչը Մովսէս Կաղանկայտուացի կամ աւելի ճիշդ զայն շարունակողը, գիտէ թէ միայն 667—703 թուականներուն Իսրայէլ անուն եպիսկոպոս մը քրիստոնեայ դարձուցած է Կասպից ծովուն հիւսիսային կողմերը բնակող Հոնները և Հոնաց լեզուին թարգմանած՝ Աստուածաշունչը և ծիսական գիրքերը (տես Մ. Կաղանկայտուացի. Բ. 15—16, և The Encyclopaedia Britannica. Բ. 570), այս գիրքին հեղինակը գիտէ թէ Հոներէն «գաս այս տեսեալն հիւսիսային կողմը կը գտնուին հինգ հաւատացեալ ժողովուրդներ, որոնք ունին 24 եպիսկոպոսներ եւ անոնց կաթողիկոսը կը նստի Դուրիս՝ Պարսկահայաստանի մայրաքաղաքը: Անիկա կը հաւատէ թէ ինքը յսած է Ամիթի մօտ Իսնդուռիէն հիմնուած վանքին մէջ բնակող Ռեաինացի Յովհաննէսէն և խաղախորդ Թովմասէն — որոնք ուրիշներու հետ կաւասէն քերի տարուած էին յիսուն տարիէն աւելի առաջ — թէ երբ գերիները Պարսկաստան կը հասնին՝ կը վաճառուին Հոնաց և կը զրկուին Պահակէն անդին և երեսուն տարիէն աւելի հոն կը մնան, կ'ամուսնանան և զաւակներ կ'ունենան: Բայց վերջը կը դառնան և կը պատմեն թէ հրեշտակի մը թելադրութեամբ իբր թէ Կարտանատ (Ջաքարիա Հոստորի Գարտուշտը հաւանօրէն) Արրանի երկիրին եպիսկոպոսը կը յարողէ Հոնաց, 7 քահանաներով և կը մնայ 7 տարի և գիրքեր կը թարգմանէ Հոնաց լեզուին: «Այդ ժամանակները Պրոպիոս քաղաւորին կողմէ դեսպանութեան պատգոնով այն կողմերը զրկուեցաւ, բնիկները պատերազմի հրաւիրելու: Երբ ան Հոնացուկ սեղեկութիւն կ'առնէ այդ սուրբ մարդերու մասին եւ գերիներէն կ'իմանայ անոնց պատգոնները՝ փափաք կ'ունենայ տեսնելու զանոնք»: Պրոպիոս թագաւոր զանոնք կը պարենաւորէ և կը խորախուսէ:

«Ուրիշ Հայ եպիսկոպոս մը որուն անունն էր Մակու (*) (Մակար կամ Մարկոս), բարեպատեական եւ ուրիշ նպատակաւ 14 տարի վերջ կամ քիչ մը աւելի, այն կողմերը գնաց, ան շատ պատուաւոր կերպով շարժելով՝ իր հանութեամբ քանի մը քահանաներով գնաց նոյն երկիրը: Ան հոն շինեց աղիւսէ կեղեցի մը, ծառեր տնկեց եւ զանազան սերմեր ցանց, հրաւիրեց գործելու եւ շատ միջոցներ կատարեց: Երբ այս ազգերուն իշխանները կը տեսնէին այս նոր պատահարները՝ կը զարմանային նոյն մարդերուն վրայ մեծապէս հաճոյք կ'զգային անոնց մասին եւ կը պատուէին զանոնք, անոնցու իւրաքանչիւրը կը հրաւիրէին իրենց գաւառը եւ իրենց բնիկ ժողովուրդին մօտ, եւ կը խնդրէին անոնցու՝ իրենց ուսուցիչները ըլլալ, և անոնք մինչեւ հիմակ հոն են...» (Մկրտիչ եպ. Աղաւնուռի. Հոնաց առաքելի Հայ Աւետարանիչները. Սիոն 1931. 333—6):

Չ. դարուն երբ Հայերը Պարսիկներէն նեղուեցան՝ հաւանօրէն անցան Կովկասը և միացան Հոնաց թագաւորներու բռնակին: Այս ժամանակներէն սկսեալ Հայերը սկսան իբր վաճառական հաստատուիլ Կասպից ծովու:

(*) Ջաւարիա Հոստորի Մարք:

արեւմտեան և հիւսիսային եզերքները և այս ծովը թափող գետերուն եզերքը՝ կարեւոր շահաստաններու մէջ:

Ղազանէն 50 վերստ հեռաւորութեամբ Պուլկարներու հին մայրաքաղաքին աւերակներու մէջ գտնուած են Հայ արձանագրութիւններով տապանաքարեր, որոնք Չ. ինչպէս նաեւ Ք. դարերու թուականները կը կրեն և Հայկական դրամներ, որոնք կը հաստատեն թէ Հայերը վաղեմի յարաբերութիւններ ունեցած են այդ շրջանակներուն հետ (Serge Glinka. «Համառօտ պատմական տեսութիւն Հայ ազգին իր սկզբնաւորութենէն մինչև վերածնութիւն Հայկական ցեղանոցին ի կայսրութեան Ռուսաց» տես. Մասեաց Աղաւնի. 1856. 125. Karamzine. Պատմ. Ռուսաց. և Ստեփաննոս Պալասանեան. Պատմ. Հայոց. Թիֆլիս 1895. 645):

Դէպի Արեւելք, Կեդր. Ասիոյ մէջ ալ կը գտնենք այս դարերուն հայկական հետքեր, դարձեալ մասնաւորապէս կրօնական և զինուորական պատճառներով հոն տեղերը հաստատուած:

Իրաւ է թէ Կեդր. Ասիոյ բուն քարոզիչները եղած են Նեստորականները, որոնք մեծ մասամբ Միջագետքէն և Ասորի էին, սակայն իրենց մէջ Հայեր ալ կային, նոյնպէս հալածուած Բիւզանդական և Հայ Եկեղեցիէն և Պարսկաստան և Կեդր. Ասիոյ սպաստանած: Հայ վաճառականներ և քարոզիչներ ալ պակաս չեն եղած (L. Cahun. Introduction à l'Histoire de l'Asie Turc et Mongols des Origines à 1405. Paris. 1896. 108. 164. 173 և այլն):

Ինչպէս տեսնուեցաւ արդէն, Պարսկաստանի, Թուրքաստանի և Դեհլիսաստանի սնանկարներուն սահմանակից երկրամասերուն մէջ Հայեր հաստատուած էին: Է. դարուն երբ Պոսթոլ Բ. ի կողմէ Հայաստանէն տեղական եղած և Տիզբոն տարուած՝ նախարարներէն ոմանք մեռան կասկածելի մահով և ոմանք գլխատուեցան կամ դաւով սպանուեցան, իրենց Սպահան նստող զօրքերը «իբրեւ լուան զեղեալսն՝ ասպատակեալ աւերեցին զերկիրն, առին զգանձն արճուցի՝ որ ի քանն համարակարին՝ որ ի հարկաց ժողովեալ առխարհին այնորիկ, եւ նամապարհ կալեալ գնացին յամուրն ի յերկիրն Գեղմայ (արդի Գիլան) (Սեբիոս ԺԳ):

Այսպէս Հայ զօրքը կ'ապստամբի: Պերոզի զօրքը ասոնց հետէն կը հասնի «զումանս ի նոցանէ սրով սասակէին, եւ ոմանք ընդ իւրեանս իսկ սուր ելեալ՝ զի մի լիցին ձեռքակալեալ եւ ոմանք մազապուր պրծեալ անկանէին յամուր երկիրն Գեղմայ» (նոյն): Հոն կ'ուզեն ապստամբ Վստամի (տես վերը 196) ծառայութեան մտնել և չեն գտներ զայն, ուստի «նամապարհ կալեալ գնացին յերկիրն Պարսեւաց եւ երթեալ կային առաջին նորա» (Սեբիոս ԺԳ): Անոնք կ'երթան Կոմշ կամ Կոշմ՝ Նեկեւանդ գիւղը (Սեբիոս ԺԵ.) և Վստամի զօրքերուն հետ կը պատերազմին և մեծ կորուստներ կու տան (նոյն):

Վստամի սպանութենէն յետոյ, կ'անցնին Թուրքաստան և կը մտնեն Խազանին ծառայութեան տակ (հմտ. Cahun. նոյն. 108), թէև և հոն չեն ձոր, ինչպէս կը հասկցուի Սեբիոսի (ԺԲ) մէջ անկապ մնացած հաս-

ուածէն, որ հաւանօրէն այս զօրքերուն կը վերաբերի և ուր կ'ըսէ թէ քապա ապստամբեալ զճացին ի ծառայութիւն մեծին Խախաւայ արայի կողմանցն հիւսիսոյ, ի ձեռն ձեռնասանն ձեպեսիոյ. աւա զճացեալ յաբեւելից յարեւմուտս բնդ կողմանս հիւսիսոյ խառնել բնդ զաւրացն ձեպեսիոյն այնորիկ հրամանաւ բազաւորին իւրեանց Խախաւայ: Եւ ելեալ ընդ Պահոբակն ձորայ զաւրաւ բազմութեան՝ զճացին յաւզնականութիւն բազաւորին Յունացո:

Հաւանական է որ այսպիսի շարժումներ միշտ եղած են, և Հայեր թափանցած են այդ անձանօթ աշխարհները: Ինչ ինչ նշաններ ցոյց կուտան թէ Հայ վաճառականներ և նետաորականութեան յարած Հայեր, յաճախած են Պարսիկ պետութեան սահմաններէն դուրս մնացած և բարբարոս ազգերէն բնակուած Կեդր. Ասիոյ զանազուն մասերը, ասով ապացոյցը տալով Հայերու նոր երկիրներ տարածուելու և բախտ ու հանգիստ որոնելու քիչ մը արկածախնդիր յանդգնութեան, որ իրենց նկարագրիրն մէկ գիծը կազմած է հետզհետէ:

Գ.

ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(640—1040)

Է. դարուն միաստուածեան կրօնքով մը միաձուլուած Արաբ վաչկատուն ցեղեր, որոնք մինչեւ այն ատեն Արաբիոյ անապատներուն մէջ թափառիկ կեանք մը ունէին, պատմութեան սպարէզ եկան, 635ին Բիւզանդեան կայսրութեան հպատակ Արաբիոյ մայրաքաղաքը՝ Բոսորսն զըրաւելով, և առաջանալով դէպի Դամասկոս և Անտիոք:

Բիւզանդական կայսրութիւնը իզուր աշխատեցաւ կասեցնել զանոնք: Պաղեստին, Սուրիա, Ասորիք, Միջագետք, Եփրատոս, կայսրութեան ամէնէն հարուստ և ծաղկած գաւառները, գրեթէ անդարձ կորսուեցան, և Բիւզանդիոն հազիւ կրցաւ իր գոյութիւնը պահել սահմանափակուելով Փոքր Ասիոյ մէջ, թէեւ եղան ատեններ ուր իր ամբողջական կործանւած օրերու խնդիր կարծուեցաւ, և ճիշդ էր թէ անիկա կատարուած իրողութիւն մը պիտի ըլլար, եթէ ներքին պառակտումներ Արաբ ոյժը չլլատէին:

Արաբները՝ Բիւզանդական հողերէն զատ, գրաւեցին ամբողջ Պարսկաստանը, ինչպէս Աֆղանիստանը, Բուրքաստանը, Գելուճիստանը և հասան մինչեւ Հնդկաստան:

Պարսկաստան՝ Արաբ իշխանութեան ենթարկուեցաւ թէ՛ քաղաքականապէս և թէ՛ կրօնապէս և բոլորովին շնչուեցաւ:

Յանկարծական կերպով կազմուեցաւ մեծ պետութիւն մը որուն տիրապետութեան ենթարկուած էին աշխարհի քաղաքակրթութեան հնագոյն սրբանները, և կերտուեցաւ ամենակարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ ընդարձակածաւալ կայսրութիւն մը որուն պետը թէ՛ կրօնապետ և թէ՛ վեհապետ էր:

Արաբները, այս անօրինակ և յանկարծական յաջողութիւնը կը պարտէին այն ատելութեան որ կը սնուցանէին Բիւզանդեան կայսրութեան դէմ Եփրատոսի, Միջագետքի, Անտիոքի և Հայաստանի իր Միաբնակ հրպատակները, որոնք յամառօրէն կը մերժէին ընդունիլ Բագրեղոսի դասանութիւնը և հետեւաբար իբր ազատարարներ կ'ընդունէին Արաբները, որոնք Պարսկաստանը կործանելէ յետոյ իրենց բոլոր ոյժով կը մաքառէին Բիւզանդիոնի դէմ, որ, ինչպէս Դ. դարէն մինչև Է. դար Սասանեանց հետ անընդհատ պայքարի մէջ եղած էր, իբր արեւմտեան քաղաքակրթութեան և քրիստոնեայ կրօնի պաշտպան, նոյնպէս նաեւ Է. դարուն կէսերէն մինչև ԺԱ. դարուն կէսերը, միեւնոյն ձեւով՝ Արաբներուն դէմ պայքարած է: Այսպէս, Է. դարէն մինչև ԺԿ. դար, կատարուեցաւ զօտեմարտ մը Բիւզանդեան և Արաբ մեծ պետութիւններուն միջև, զրեթէ շուրջը՝ տեսակ մը հասաստուն սահմանազիծի մը, որ կ'սկսէր ծայքէն մինչև Կիլիկիա (կամ Սեւ ծովու հարաւ-արեւելեան ծայրէն՝ Պարսկաստան մինչև Իսկէնտէրունի ծոց) հետեւելով լեռնաշղթաներու և գետանովիաներու, անցնելով Հայաստանի մէջէն, որսւն վիճակած գերբ գրեթէ նոյնն էր, ինչ որ եղած էր Հոռոմ-Պարթեւական և Բիւզանդ-Սասանեան շրջաններուն: Միայն թէ այս չորս հարիւր տարիներու ժամանակամիջոցին եզաւ շրջան մը, Ը. դարուն սկիզբէն մինչև Ժ. դարուն սկիզբը, ուր բացի Կոստանդին Ե. Կոպրոնիմոսի (741—775) վաղանցուկ կերպով Կարինը գրաւելու (752) օրերէն, Բիւզանդեան բանակները, Եփրատէն Ալիս ետ քաշուած էին և հոն կը դառնային միայն Ռոմանոս Լեկաբենոսի (920—944) ատեն, նոյնիսկ յաջողելով առաջանալ մինչև Տիգրիս իրմէն յետոյ կարճ ատեն մը թէեւ Բիւզանդիոն կ'ընկրկէր Արաբ ոյժերու առջև, սակայն շուտով Նիկիոսի Բ. Փոկոս, 963ին, անդրեփրատեան հողերու վրայ կ'երեւար և Յովհաննէս Զմշկիկ (969—976) նոյնիսկ կը յաջողէր Պաղատաի խալիֆան հարկատու դարձնել թէեւ իր մահէն յետոյ ներքին ա գնապներ, ինչպէս Վարդ Սքլիրոսի և Վարդ Փոկասի ապստամբութիւնները, երկիրը ակարացուցին. բայց Բիւզանդեան կայսրութիւնը Հայաստանի սահմաններէն հեռու չվանուեցաւ և երկիրին գործերուն միշտ միջամտեց: Այնպէս որ, Հաստատան գրեթէ չորս դար եւս ապրեցաւ այն գոթախոս պայմաններով:

մէջ որ իրը եղած էին անցեալ շրջաններուն, ելեւէջներով և փոփոխութիւններով, համեմատ իր շուրջը և ներսը գործող ուժերուն փոխ-յարաբերութեանց, որոնց համաձայն, ան՝ այդ ժամանակամիջոցին, ունեցած է չորս տարբեր վիճակներ:

Ա.) Անկայուն Երջան մը (636—693), ուր Հայերը կը դժուարանան նախընտրութիւն մը ընելու Բիւզանդեան և Արաբ տիրապետութիւններէն մէկուն համար և երբեմն մէկ և երբեմն միւս կողմին կը յարին, իսկ այդ երկու պետութիւնները՝ երկիրը իրարու ձեռքէ կը յափշտակեն քանի մը անգամ:

Բ.) Արաբ վարչութեան Երջան (693—887), ուր Արաբները ուղղակի կը կառավարեն երկիրը և իրենց բռունցքին տակ կը պահեն զայն անմրցակից:

Գ.) Կես-անկախ Երջան (887—913), ուր Արաբները միայն հարկ առնելով կը բաւականան և երկիրին վարչութիւնը կը յանձնեն Հայոց, թոյլ տալով ընդ պետին կիրարկելու «թաղաւոր» տիպաւորը, առանց սակայն զայն բոլորովին անկախ ձգելու:

Դ.) Ոչ-հաւկասու Երջան (913—1040), ուր Արաբները՝ տկարացած՝ այլեւս հարկ առնելէ կը դադրին, և Հայերը՝ Բիւզանդացոց զօրանալէն և վերստին իրենց սահմանները հասնելէն քաջախերուած՝ անոնց հովանաւորութեան կ'ապաւինին և Արաբներու հետ իրենց կապերը կը խզեն:

Արդարեւ, հետեւելով դէպքերու ընթացքին, պիտի տեսնենք որոշ թէ այս փոփոխութիւնները արդիւնքն են արտաքին ազդեցութիւններու և իրենց կարգին՝ ազգակ' խել մը շարժումներու և վերիվայրուսներու, որոնք, ի մէջ այլ հետեւանքներու, զազթականութիւններու ալ պատճառ եղած են:

Այսպէս, Հայերը՝ 636ին իբր հպատակ Պարսիկներու, իրենց պարտականութիւնը կը կատարեն Յազկերտ Գ.ի (632—652) բանակին մէջ կռուելով Արաբներուն դէմ (Սեբիոս Լ), որոնք Պարսկաստանը հազի նուաճած՝ 637—8ին առաջին անգամ կ'երեւան Հայաստանի սահմաններուն վրայ, երբ երկիրը շատոնց արդէն դադրած էր միազանգուած ըլլալէ և զուրկ՝ ընդհանուր միութենէ: Իր տանուաէրները իրենց տեղական, հատուածական մասնաւոր շահերուն համաձայն ուղղութիւն մը ընդգրկած և այսպէս խաղալիկ եղած էին երկու ոյժերու միջեւ: Անոնցմէ ամանք կ'ուզէին Բիւզանդիոնի տիրապետութիւնը շարունակուած տեսնել և ուրիշներ՝ զզուած անոր մոլեռանդութենէն և նենգամտութիւններէն՝ նախամեծար կը համարէին Արաբ լուծը: Այս վերջիններէն մէկն էր Թէոփորոս Ռշտունի, երկիրին սպարապետը, որ երբ Արաբները Հայաստան հասան, դաւեց Բիւզանդացիներուն և անոնց բանակին Մարտուցէսի մէջ կոտորած մը կրելուն պատճառ եղաւ (Ղեւոնդ. Բ. 24, Սեբիոս. ԼԾ., Յուստին. 1911 Վիէննա. 244):

Այս առաջին արշաւանքին յաջորդեց, 640ին, երկրորդ մը՝ Էօմէրի խալիֆայութեան օրով, երբ իր Ապտ-էլ-Րահիմ զօրավարը, 18,000 զօրքով, մտաւ Հայաստան հարաւէն, Մոկաց նահանգէն: Արաբները առաջա-

ցան մինչեւ Դուրին՝ Հայաստանի սիրտը և զայն գրաւեցին (640 Հոկտ. 6):

Հերակլի յաջորդը Գոստանդ Բ. կայսրը (641—668), անպատմելի գոնարութիւններով յաջողեցաւ կասեցնել Արաբ առաջխաղացութիւնը, և վերստին տիրել Հայաստանի և Թէոփորոս անուն Հայ զօրավար մը իշխան կարգեց Հայաստանի: Այս զօրավարը Հայոց օգնութեամբ կրցաւ գիմարել 643ի Արաբ երրորդ արշաւանքին, որ դարձեալ մնայուն հանգամանք մը չունեցաւ, և Հայաստան մնաց Բիւզանդեան տիրապետութեան տակ: Բիւզանդացիք, սակայն, դառնացուցին Հայերը՝ անոնց կրօնական միութեան առաջարկ ներկայացնելով 648ին (Սեբիոս ԼԳ, Ազգապատմ. 717—8), այնպէս որ, երբ Արաբները մեծ պատրաստութեամբ վերստին երեւեցան Հայաստանի սահմաններուն վրայ, Սասանեան պետութիւնը վերջնապէս կործանելէ յետոյ (652), Հայք ապստամբեցան Բ. Էզանդիոնի դէմ, և Թէոփորոս Ռշտունի երկիրը Արաբ տիրապետութեան տակ դրոււ, զաշինքով մը, որուն համաձայն Հայաստան պիտի մնար եօթը տարի ապահարկ և յետոյ իր կարողութեան համաձայն տուրք պիտի տար, պիտի գահէր 15,000 հեծեալ, և պիտի վայելէր կրօնքի ազատութիւն: Արաբները կը խոստանային նաեւ օգնական զօրք ղրկել երբ Բիւզանդացիք Հայաստան արշաւէին և Հայ հեծելազօրքը շատ հեռու տեղեր չղրկել, ինչպէս նաեւ Արաբ պաշտօնեաներ չնշանակել և հարկին հաշւոյն արմատիք ընդունիլ:

Գոստանդ կայսրը երբ այս լուրը առաւ, Հայերէն վրէժ լուծելու համար Հայաստան արշաւեց և անոնց բռնի ընդունել տուււ Գազեզոնի ժողովը (652). որ Ներսէս Գ. Շինող (641—661) Կաթողիկոսը ընդունեց ձեւականօրէն՝ երկիրը ազէտէ մը փրկելու համար (Սեբիոս ԼԾ. Ազգապատմ. 724—30):

Գոստանդ՝ միայն Դուրինի մէջ պահապան զօրք ձգելով բաւականացաւ, առանց երկիրը իրապէս ամրացնելու, և դարձաւ Պոլիս, որուն կ'ապրուեային Արաբները (653): Երբ 654ին ծովուն վրայ Արաբ և Բիւզանդեան նաւատորմիկները իրարու դէմ պայքար կը մղէին, Մուսլիմէ — Ասորիքի Արաբ հրամանատարը — կը նուաճէր Հայաստանը, անկէ վտակելով Բիւզանդեան պահապան զօրքը և կը գրաւէր երկրորդ անգամ Դուրինը (654 աշուն), սակայն անգամ մըն ալ տեղի կուտար, Մուսլիմէս Բիւզանդացի զօրավարին առջեւ որ 655ին ո'չ միայն կ'աւելբէր Դուրինի բերքը, այլ կ'առաջանար մինչեւ Նախիջևան, ուր Արաբ բանակէն չարաչար պարտութիւն կը կրէր:

Արաբները վերստին կը դառնային և նոյնիսկ Կարինը կը գրաւէին (655): Երբ Բիւզանդացիք բոլորովին պարտուեցան Արաբներէն, անոնք որ հակառակ էին Թէոփորոս Ռշտունիի քաղաքականութեան, անոր միացան և Արաբներուն հնազանդեցան, սակայն երբ անոնց հեծեալները և գունդերը գաւառներուն մէջ տարածուեցան և հարկապահանջութեամբ նեղել սկսան Հայերը, որոնց հաւատարմութեան շատ վստահ չէին, ըմբոստութիւններ իրարու յաջորդեցին: Արաբները ապահովութեան համար

սկսան խլրտող գաւառներու նախարարական ցեղերէն 2000ի չափ պատանդներ վեղցնել, սակայն, հակառակ ասոր, Հայերը չվարանցան, Օթման կամ Օսման խալիֆայի (544—555) սպանութենէն յետոյ սրբ խաւովութիւններ ծագեցան Արաբ պետութեան մէջ (656), սպստամբիլ 659ին՝ զլիսաւորութեամբ Համազասպ Մամիկոնեանի և հնազանդութիւն յայտնել Պայսեր որ Համազասպը՝ Կիւրապաղատ նշանակեց Հայաստանի (Սեբեոս ԼԸ. Ազգապատում 736):

Հայոց այս ապստամբութիւնը պատճառ եղաւ որ Հայ պատանդներէ 1775ը ջարդուին Ալի խալիֆայէն, իսկ Հայաստանի ընակիչները հաւանորէն չարաչար պիտի պատժուէին, եթէ Մուսլիմէն—Բիւզանդեան պետութիւնը սղղակի սիրաէն հարուածելու գաղափարը յղացող Ասորիքի հրամանատարը և Իւմմանց հարստութեան հիմնադիրը—Ներքին խոռովութիւններէն տկարացած պետութեան վերակազմութեան ժամանակ տալու համար, հարկ վճարելու յանձնառութեամբ և Հայաստանէն հրաժարելու պայմանով Բիւզանդիոնի հետ խաղաղութեան դաշինք մը չկնքէր: Սակայն Մուսլիմէ շուտով վերակազմեց Արաբ բանակը և յաջողեցաւ գրաւել բոլոր նախապէս Պալիֆաներու հնազանդող երկիրները, ինչպէս նաեւ Հայաստանը (661) որ 659—661 կարճատեւ ազատութիւն մը ունեցաւ (Ազգապատում 736—7):

Հայաստանի վարիչները կը թուի թէ Մուսլիմէի օրէ օր աճող զօրութեան դէմ Բիւզանդացիներու տկարութիւնը տեսնելով, երկիրը կամաւորապէս անոր հնազանդեցուցին: Ներսէս Գ. Կաթողիկոս — որ իր կեանքին ամենավերջին տարին, Հայ նախարարներուն թախանձանքին անսալով, ձգեց իր յունասէր քաղաքականութիւնը և Արաբներու կողմը քարձաւ—յաջողեցաւ Համազասպ Մամիկոնեանի տեղ Հայաստանի կառավարիչ կարգել տալ՝ 661ին՝ անոր եղբայրը՝ Գրիգոր Մամիկոնեանը, որ պատանդ տարուած էր Իւմմակոս: Անոր տրուեցաւ իշխանական աստիճան և միանգամայն Հայոց զօրքին հրամանատարութիւնը, նշանակելով Հայաստանի համար չափաւոր հարկ մը, որ ինքը պիտի հաւաքէր և շրջէր Ամիրապետին:

Գր. Մամիկոնեան, անձնական արժանիքներով նշանակելի իշխան մը, թէ՛ իբր քաղաքային կառավարիչ և թէ՛ իբր զինուորական հրամանատար, ամբողջ 24 տարի (661—684) խաղաղութեամբ կառավարեց երկիրը, իմաստուն վարչութեամբ մը: Քաջալիւրեց հողագործութիւնը, արհեստները և վաճառականութիւնը, նպաստեց բարեպաշտական ու մարգարական հաստատութեանց, կառոյց, 665ին, Արուճի մէջ (այժմ Բալին, Էջմիածին գաւառին մէջ) չքնաղագեղ եկեղեցի մը Ս. Գրիգոր անունով և Եղիվարդի արեւելեան կողմը՝ իբր կրօնի և ուսման վարարան՝ վանք մը:

Իժարխտաբար Գր. Մամիկոնեանի իշխանութեան վերջերը, Հայաստանի մի քանի գաւառները վրդովուածի և ծանր զեաներու ենթարկուեցան, երբ վրացիները Բիւզանդեան յաղթանակներէն քաջալիւրեւած, Ա-

րաբներու դէմ ըմբոստացան և Պալիֆան Բաւարա զօրավարը Հայաստանի ճամբով վրաստան ղրկեց 679ին, և երբ Պալիֆ: Հայաստան արշաւեցին 684ին: Այս վարչիս արշաւանքին դէմ երկիրը Հայ զօրքով պաշտպանած ատեն, Գր. Մամիկոնեան ինկաւ պատերազմին մէջ և իր մահով վերջ գտաւ իր արքայավայել իշխանութիւնը, որ Հայաստանի համար եղած է խաղաղութեան, բարգաւաճութեան, բարօրութեան և զարգացման շրջան մը, Արաբ հովանաւորութեան տակ, ազատ Բիւզանդիոնի ազդեցութենէն, քոնի որ անոր բանակները Հայաստանէն հեռու Փոքր Ասիոյ մէջ կը մաքառէին Արաբներուն դէմ. փոփոխակի յաջողութեամբ, մինչեւ որ Արաբները՝ ուժասպառ՝ խոհեմութիւն կը համարէին 30ամեայ խաղաղութիւն կնքել, տարեկան հարկ վճարելով Բիւզանդիոնի (679ին):

Գոստանդին Պոզոնատոս (668—685) և Յուստինիանոս Բ. Պոզոնատ (685—695 և 705—711), մինչեւ 688, Արաբներու վրայ յարձակում չփորձեցին և Հայաստան կառավարուեցաւ Արաբներէ (Ազգապատում. 757), բայց Յուստինիանոս, 688ին, անձամբ Հայաստան արշաւեց, նուաճեց երկիրը, հոն 30,000 պահակազօրք գրաւ, Ներսէի Կամարականը Պատրիկ կարգեց, յաջողեցաւ Մուսլիմէի ստիպել որ հարկին չափը աւելցնէ և Հայաստանը, վրաստանը և Կիպրոսը — որոնք ամէնէն աւելի մրցութեան առարկայ եղած էին — իբր տեսակ մը «ընդհանուր տիրապետութիւն» միասին կառավարելու համակերպի:

Բայց 691ին, Բիւզանդիոն խզեց համաձայնութիւնը: Սակայն Արաբները ծանր պարտութեան մատնեցին Բիւզանդացիները Կիլիկիան Սեբաստոպոլիսի մօտ 692ին և Դուին մօտան՝ 693ին (Գեղեցի. 141): Բիւզանդացի կառավարիչը վանուեցաւ Հայաստանէն և Ապտ-իւլ-Սելիք Ամիրապետը (685—705) Հայաստանը վերածեց արաբական նահանգի մը, անոր վրայ դնելով Արաբ Ոստիկան (=կառավարիչ) մը, որուն քով Հայ Պատրիկը կամ Սպարապետը շատ երկրորդական պաշտօնեայ մըն էր, մինչ առաջ՝ երկիրին իրական պետն ան էր և Արաբները՝ երբեք չէին միջամտեր ներքին վարչութեան, միայն հարկ և հպատակութիւն կը պահանջէին Հայերէն, արշաւանքներ կը կատարէին և կը հեռանային, առանց հոն տեղաւորուելու:

Առաջին Ոստիկանը եղաւ Մուհամմէտ պին Մրուան՝ Ամիրապետին եղբայրը, որ 698էն 700, ամէն կողմ աւեր և կոտորած սփռելով Հայաստանը նուաճեց: Նախարարական տուները, վանքերը, եկեղեցիները կողոպտեց, շատերը ջարդեց, բազմաթիւ գերիներ վերցուց, անբեկեց երկիրը (Ղեւոնդ. Ե. 40), և դարձաւ Դամասկոս՝ ոստիկան նշանակելով Ապու Եշիս իպն Ապտուլլահ զօրավարը (701—703) (Ղեւոնդ. Ե. 40), որ աշխատեցաւ Հայերը սեղմելու և անոնց իրաւունքները կրճատելու, ինչպէս նաեւ նախարարական տուները քնջելու: Հայ զօրքին հրամանատար Սեբաստ Բիւրատեան Բագրատունին, 702ին ակամայ պարտաւորուած պարագլուխ դարձաւ, Վասպուրականի մէջ ըմբոստութիւն յարոյց, աշխատեցաւ շարժումը հեռուեցնել ընդարձակելով Հայաստանը ազատագրել:

և նախապէս անհեցաւ յաջողութիւններ և նոյնիսկ գործադրեց անգթութիւններ և խոստամտականութիւններ (օրինակ խոզխոզեց Գուկանքի և կեղեցին ապաստանող Արաքները, որոնք իր խօսքին վստահելով անձնատուր եղած էին Ղեւոնդ Ե. 43—48): Ելքը անորոշ և կասկածելի այս պայքարին հետեւանքներէն ազատելու համար, քանի մը նախարարներ 2000 հեծեալներու գունդով կը փորձէին երթալ Բիւզանդեան հող և որդէն հասած էին մինչեւ Արարատի դաշտը, երբ Վարդանակերտի մօտ, իրենց ետեւէն հասաւ Ոստիկանը: Հայերը խնդրեցին որ իրենց ինչքերը գրուել բաւական համարէ և իրենց թոյլ տայ հեռանալ: Ապտուլլահ մերժեց և Հայերը ստիպուեցան զէնքի դիմել և Հայաստանի սաստկաստեոյց ցուրտը իրենց օժանդակ ունենալով՝ յաղթանակ մը տանիլ Արաքներուն վրայ (703 Յունուար), ինչ որ նշան մը եղաւ որ Հայերը ուրիշ վայրերու մէջ ոտք ելլին և Արաքները վաննն Հայաստանէն՝ և իրենք Բիւզանդացիներուն օգնութեան ապաւինին, իրենց աւարէն անոնց ալ բաժին հանելով (Ղեւոնդ. Ե. 48 և այլն):

Ապտ-իւլ-Մելիք Ամիրապետը, պատժելու համար Հայերը, Մուհամմէտ պին Ոգբայ նշանաւոր զօրավարը Հայաստան զրկեց: Հայերը Բիւզանդացիներէն ունէ օգնութիւն չստանալով և վստահ թէ անկարող են գիմարելու՝ սարոսփանար կ'ուզեն ողոքել Արաք զօրավարը և անոր հնազանդութիւն յայտնել: Այս նպատակաւ բանազնաց կը զրկեն Սահակ Չորափորեցի Կաթողիկոսը (677—703), որ կը յաջողի իր առաքելութեան մէջ (703), սակայն Հայերը չեն յարգեր իրենց խոստումը, վասնզի երբ Յուստինիանոս Բ. 705ին Հայոց հրաւէրով Հայաստան բանակ մը կը զրկէ, Մմբատ Բագրատունի իր Հայ զօրքով կը միանայ Յոյն բանակին (Ղեւոնդ. Զ. 55), սակայն Վանանդի մէջ Գրաշպետ գիւղին մօտ Բիւզանդեան և Հայ բանակները կը պարտուին: Արաքները որ ականատես եղած էին թէ Քառաջնորդ զօրուն Յունաց եղին նախաբաբ Հայոց (Ղեւոնդ. Զ. 55), կը խոստանան անոնց վրայ և Ոգբայ կը գործադրէ անգթութիւններ:

Իր հրամանով, Կասմ կամ Կաշմ (=Գասըմ), Նախիջեւանի կառավարիչը, նենգութեամբ նախարարները հրաւիրեց Նախիջեւան և Խրամ ու զանոնք անզէն եկեղեցիներու մէջ համախմբելէ յետոյ, ողջ ողջ այրեց (707ին) (Ղեւոնդ Զ. 56—7, Յովհաննէս Կար. 125 և Անեփանոս Օրբելեան Ա. 180) և ուրիշ այս կարգին սոսկալի անգթութիւններ և կողոպտող գործադրեց, մեծ թուով գերիներ տարաւ և աւեր սփռեց, մինչեւ որ երկիրը կատարելապէս ուժասպառ եղաւ: Այն ատեն Հայաստան զրկուեցաւ իբր ոստիկան Ապտ իւլ Աղիզ (708—724) շիրք լսելիօֆ, ալ խորագեօ, լի երկրաւոր իմաստութեամբ, առասպելախօս, եւ առաբկու» (Ղեւոնդ. 59) անձը, որ մեղմ միջոցներով սիրաշահելու հետամուտ եղաւ: ամէնէն առաջ վերաշինեց Գուկանքը, աւելի գեղեցիկ քան առաջինը, երկիրին մէջ հանդարտութիւն հաստատեց և իր միջնորդութեամբ Կաշմի Դամասկոս տարազրած բազմաթիւ Հայերը դարձնել տուաւ (719):

Հայերը՝ յուսահատ Բիւզանդիոնէն, կը համակերպին իրենց ճակատագիրին Յովհաննէս Կաթողիկոս Օձնեցի (717—728), ամէն ջանք կ'ընէ որ անգործութիւնը պահպանուի և Արաքներու դէմ ունէ շարժում չըլլայ: Ինք անձամբ 719ին կ'երթայ Դամասկոս, ուր մեծ պատիւով կ'ընդունուի և կը յաջողի Ամիրապետէն իբր շնորհ ընդունիլ 1. հաւատքի ազատութիւն, 2. ապահարկութիւն եկեղեցականներու, 3. պաշտամունքի ազատութիւն, ի փոխարէն ապահովելով Հայոց հաւատարմութիւնը, որուն անմիջական հետեւանքը կ'ըլլայ բոլոր գերիներուն դարձը և երկիրին ընդհանուր կերպով Արաքներու տիրապետութեան ենթարկումը, երբ արդէն Բիւզանդացիք Հայաստանէն հեռու վանուած՝ գոյութեան պայքար կը մղէին (712—740):

Արաքները՝ այս շրջանին աւելի ամրացած Հայաստանի մէջ, 725ին կը ձեռնարկէին աշխարհագիրի մը՝ տուրքերու զանձումը կանոնաւորելու համար և կը պաշտպանէին երկիրը 729—731ին Խաղիւրներու արշաւանքին դէմ, և նոյնիսկ Հայ և Արաք զօրքերը միասին կը մտնէին Խաղիւրներու կամ Հոններու երկիրը և զայն կը նուաճէին (732) (Ղեւոնդ. Ը. 145):

Ամիրապետը ասոր վրայ Հայ զօրքին տարեկան 100,000 դահեկան թոշակը (=Սածիթա), որ երեք տարիէ ի վեր դադրած էր, մէկ անգամէն վճարեց և Աշոտ Վասակեանը՝ Պատրիկ նշանակեց: Մրուան խաղաղեցուց Հայաստանը, պատժելով Արաք անկարգ տարրերը, աւազակները և բարեկարգութեան թշնամիները (Ղեւոնդ. Ը. 145), սակայն Հայերը, կարծելով որ Իււմեաններու և Աբրասեաններու պայքարներէն Արաք կայսրութիւնը քայքայուած էր, դարձեալ խլրտեցան:

Այսպէս, 745ին Վալիդ Խալիֆային հրամանով Հայաստան դառնալ արտօնուած Գրիգոր և Դաւիթ Մամիկոնեանները, որոնք Աշոտի դէմ գիւտարութիւններ հանելուն համար Մրուանի կողմէ ձերբակալուած, Դամասկոս զրկուած և անկէ իման աքսորուած էին, Վասպուրականը ոտք հանեցին: Դաւիթ՝ փորձեց սպաննել Աշոտը որ դէմ էր ապստամբութեան: Աշոտ փութաց Դամասկոս՝ Մրուանէն պաշտպանութիւն խնդրելու համար: այս բացուկայութենէն օգտուելով՝ Գր. Մամիկոնեան Պատրիկ եղաւ, սակայն Մրուան հրամայեց Աշոտը վերահաստատել և Դաւիթը պատժել մահով 746ին: Ասիկա Գրիգորի ատելութիւնը սաստկացուց Աշոտի և Արաքներուն դէմ, և մտածեց օգուտ քաղելով Արաքներու ներքին պատերազմներէն և Կոստանդին Ե. Կոպրոնիմոս կայսեր 746ի յաղթանակէն, ի նպաստ Բիւզանդական տիրապետութեան շարժում ստեղծելու, Աշոտի դէմ դաւելով և նախարարները համոզելով: Նախարարները կ'ուզեն իրենց հետ ունենալ նաեւ Աշոտը, որ ի զուր կը ջանայ զանոնք տարհամոզել և ակամայ անոնց կը միանայ: Նախարարները 747ին կ'ապստամբին, Ոստիկանը կը վաննն և Տայք կ'ամրանան:

Սակայն միայն մէկ տարի գործակցութիւնը կը պահեն: Աշոտ Բագրատունի քանի մը նախարարներով կը բաժնուի և կը խորհի Արաքներու

հետ հաշտուիլ, սակայն կը մտանուի Գրիգոր Մամիկոնեանին, որ իր ընտանուած եղբորը՝ Գուրգի Ժառանգորուն, զայն կուրցնել կու առ, Կարինին մէջ ինքզինքը ճիշտան Հայոց» կը հռչակէ և Հայաստանը՝ Բիւզանդիոնի հպատակութեան տակ կը դնէ (748)։ Գրիգոր շուտով կը մեանի, սրուն կը յաջորդէ Մուշեղ Մամիկոնեան (Ղեւոնդ. Ը. 143—156), որ նոյնպէս սակաւակեաց կ'ըլլայ, ինչպէս նաեւ Հայոց այս ինքնիշխանութիւնը, վասնզի Արաբները՝ ներքին խռովութիւններու պատճառով 748էն 750 թէեւ չկրցան սեւէ ձեռնարկ ընել ապստամբ Հայերու դէմ, սակայն երբ Ապուլ Աբրաս (750—754) իր իշխանութիւնը ամրացուց, 750ին Հայաստան զրկեց իր սատական Ապու Ճավէր էլ Մանսուրը (750—752), որ նուաճեց երկիրը և Հայոց վաղանցուկ ապստամբութեան վրէժը լուծելու համար, ամենասաստիկ բռնութիւններ գործադրեց. հարկահանութիւնը կեղեքումի աստիճանի հասուց և ընկճեց երկիրը։

752ին՝ Ոստիկան եղաւ Սէզիտ որդի Ուսէյտ առ Սուլէյմի և Սահակ Բագրատունի Պատրիկ Նշանակուեցաւ (753)։ Սէզիտ շարունակեց կեղեքումը և հարստահարութիւնը, այնպէս որ երբ Կոպրոնիմոս կայսրը (741—775) Գերմանիկէ (=Մարաշ) և Մելիտինէ քաղաքները գրաւելէ յետոյ, մինչև Հայաստան առաջացաւ և Կարինը գրաւեց (752), Հայերը չհամարձակեցան իրենք ալ ապստամբիլ։ Արաբները շուտով վերագրաւեցին Կարինը, Բիւզանդեան բանակները հալածեցին (756—758), հարկապահանջութեամբ Հայերը սաստիկ նեղեցին և զանազան բռնութիւններ գործադրեցին։ Տեղ տեղ ալ ստպատակներ — ինչպէս Խաղիթներ — երեւան եկան որոնք բնակչութիւնը նեղեցին։

Հայաստան, ընկճուած և ուժասպառ, կնթարկուած էր Աբբասեանց իշխանութեան։ Սակայն Հայերը անտանելի և անհանդուրժելի հարստահարութիւններէն յուսահատած, կը փորձեն մի քանի անգամ խլրաիլ, լաւագոյն սեպելով մեռնիլ, քան այդ տեսակ պայմաններու մէջ ապրիլ։

Այս ըմբոստութիւններէն մէկն էր որ Արտաւազը Մամիկոնեան, 774ին Շիրակի Կուճարի գիւղին մէջ գաւառին հարկահանը սպաննելով թկուաւ։ Արտաւազը յետոյ գնաց Տայքի և Գուգարքի կողմը, ուր իր ետեւէն հասան Հասան ոստիկանի կողմէ զրկուած Մահմէտ զօրավարն ու Սմբատ Բագրատունի սպարապետը, Արաբ և Հայ զօրքով, և զինքը զարկին Վրաց Սամցխէ գաւառին մէջ և Հայաստանէն դուրս հալածեցին (Ղեւոնդ. 169)։

Հասան ասոր վրայ հարկահանութիւնը կը սաստկացնէ և անխնայ կը նեղէ ազոտանին ալ, ուսմիկներն ալ։ Մուշեղ Մամիկոնեան, համբերութիւնը սպառած, իր գաւառին հարկահանները կ'սպաննէ, ժողովուրդը ոտքէ կը հանէ և Արտազերս բերդը կ'ամրանայ։ Բիչ յետոյ Բագրեւանդ ալ կ'ապստամբի։ Հայերը յաջողութիւններ կ'ունենան. շարժումը կ'ընդարձակուի և Սմբատ Սպարապետ անգամ ահամայ կը միանայ ապստամբներուն (Ղեւոնդ. 173)։ Հայերէն մաս մը Կարինը կը պաշարեն, ուրիշ խուճեր ալ երկիրին զանազան մասերուն մէջ կը գործեն։

Մամիկոնեան տանուտէրը՝ Բագրատունի և Արծրունի տուները իրեն ճամախ ունենալով՝ քիչ մը ատեն կրնայ դիմադրել։ Բագրեւանդի պատերազմին մէջ 775 Ապրիլ 24ին (Ղեւոնդ 183—5), Մուշեղ գրեթէ իր բոլոր գործակիցներով կ'իյնայ։ Մնացեալները կը ցրուին և կը քաշուին ամուր տեղեր։ Հայաստան դարձեալ ոտնակոխ կ'ըլլայ Արաբներէն, միայն Բագրատունիք և Արծրունիք քաջութեամբ կը պաշտպանեն իրենց երկիրները։ Այս շրջանին, մտաւորապէս վեց տարի (780—786), շնորհիւ Արաբ պետութեան մէջ ծագած ներքին խռովութիւններուն և ապստամբութիւններուն, երկիրին գոնէ մէկ մասը ձեռքը կը մնայ Հայ նախարարներուն, որոնք չեն կրնար միութիւն մը կազմել և դիմակալել Արաբներուն, իսկ Բիւզանդացիք՝ պատեհ ժամուն օգնութեան հասնիլ, թէեւ Լեւոն Գ. Խաղիլ կայսրը (775—780) կայսրութեան հին երկիրները նորէն գրաւելու փորձ մը կ'ընէ և սահմանադրուիներու վրայ երկար կռիւներէ յետոյ, 778ին, Գերմանիկէի մօտ մեծ յաղթութիւն մը կը շահի, սակայն ոչ ինքն և ոչ ալ իր յաջորդը՝ Կոստանդին Զ. (780—802) կրնան մինչև Հայաստան առաջանալ, վասնզի Հարուն-էլ-Ռաշիտ (*) (յետոյ Աբբասեան հռչակաւոր Խալիֆան) կը յաղթէ Կոստանդինի և կ'ստիպէ զայն հաշտութիւնը գնելու, 782ին, ոչ միայն հրաժարելով Բիւզանդական Հայաստանի մէկ մասէն, այլ նաեւ՝ հանդուրժելու որ իր և իր լեզգեաններուն հանդիսատեսութեամբն իսկ, Կարինի բոլոր ամրութիւնները քանդուին։ Հարուն էլ Ռաշիտ, երբ Խալիֆա դարձաւ 786ին, արդէն Արաբները տիրած էին Հայաստանի, զոր առանց ընդդիմութեան կառավարեցին, երբեմն մեղմ և երբեմն խիստ վարուելով։

Հայերը, ապստամբեցան անգամ մըն ալ, միանալով 822ին, անխորհրդարար, Պարսիկ Սեւադա ապստամբին։ Նշանակելի է որ, հակառակ անոր որ պարտուեցան, խոտութեամբ չվարուեցան Արաբները իրենց հետ, վասնզի հաւանորէն անոնք չէին ուզեր Հայերու հետ խնդիր ունենալ այնպիսի պահու մը, երբ իրենց պետութեան զանազան մասերուն մէջ ըմբոստութիւններ կային։

Ասոնցմէ մէկն էր Բաբան Պարսիկին յարուցած ապստամբութիւնը (837) որ նպատակ ունէր Պարսկաստանը վերականգնելու։ Հակառակ անոր որ Հայերը տխուր փորձառութիւն մը ունէին, Բագարատ Բագրատունի Պարսիկը տկարութիւնը ունեցաւ անոր գործակցելու։ Արաբները այս ապստամբութիւնը նոյնիսկ Հայազօրքին օգնութեամբ ընկճեցին, իսկ Աբուսէթ Ոստիկանը (847—851) ձերբակալեց Բագարատ Բագրատունին և շղթայակապ զրկեց Պաղտատ։ Սասունի գաւառին լեռնակունները կատաղած իրենց տանուտիրոջ դէմ գործադրուած այս արարքէն՝ խուճեցին Ոստիկանին վրայ, սպանեցին զայն Մուշի մէջ և Արաբ զուռը հալածեցին Հայաստանէն (851) (Յովհ. Կար. 149—150)։

(*) Հարուն էլ Ռաշիտ փախարայ եր 780ին Արաբականի եւ Հայաստանի (Noel des Vergers «Arable» Paris. 1847. 372)։

Յալիֆան՝ զայրացած՝ պատժելու համար Հայերը, Հայաստան զրկեց Քուրք Բուզա Ոստիկանը (851—855) որ իր գործած անգթութիւններով զազրելի անուն մը ձգեց: Ան յուր Հայաստանը աւերի և սուրի մատնեց (852—853), խմբական աքսորներ կատարեց և բռնի կրօնափոխութիւններու հարկադրեց: Սմբատ Բագրատունի Սպարապետը, որ Բուզան ողորդելու յոյսով, չէր ընդդիմացած այլ գործակցած էր անոր, ինքն ալ բազմաթիւ նախարարներու հետ Պաղատատ՝ Յալիֆային մայրաքաղաքը տարուեցաւ և ուր մեռաւ՝ երկար տարիներ (855—860) բանտին մէջ մնալէ յետոյ: Այս պատճառով կոչուեցաւ Խոստովանող:

Հայերը այսպէս մնացին Արար լուծին տակ Ը. դարու կէսերէն մինչև Փ. դարու սկիզբները, մտաւարապէս 150 տարի, ենթակայ՝ Ոստիկաններու քմահաճոյքին և բռնակալութիւններուն, առանց արտաքին օգնութեան ալ յոյսը ունենալու, վասնզի Բիւզանդական պետութիւնը Հայաստանի սահմաններէն բոլորովին հեռացած էր:

Եթէ Հայերը ուղղամիտ վերաբերում մը ունեցած ըլլային Արաբներու հետ, որոնք նոխապէս Հայոց ներքին վարչութիւնը պահած և կրօնական հալածանք գործադրելէ զգուշացած էին, այս թոյլատու և բարեացակամ ընթացքը պիտի շարունակուէր ապահովաբար, մինչդեռ Բիւզանդիոնի սադրանքներուն գործիք ըլլալով, երկմիտ և անհաստատ ուղղութիւն մը բռնեցին և դաւաճանութեան կասկածին տակ ինկան: Հայոց այս յարափոփոխ ընթացքը պատճառ եղաւ որ Արաբներն ալ իրենց կասկածարելու եղանակին մէջ միօրինակութիւն չունենան, և իրենց գործադրած խտտութիւններով, առիթ ընծայեն ապստամբութիւններու, որոնք սաստիկ վայրագ և խիստ միջոցներով զսպուեցան:

Այս դաժանութեան պատճառը այն էր որ, Արաբները սաստիկ դառնացած էին, իրենց թոյլատու ընթացքը Հայերու կողմէ անուղղամտութեամբ փոխարինուած տեսնելով: Ասով հանդերձ, Հայերը հաւաքաբար խալամացնել և իրենց մէջ ձուլել չփորձեցին, միայն, խալամացողները աւելի վստահութեան արժանի և հաւատարիմ նկատելով, անոնց առաւելութիւններ և առանձնաշնորհներ տուին և յաջողեցան այսպէս կրօնափոխ ընել կարգ մը փառասէր տանուտէրներ որոնք իշխանութեան կը ցանկային, և ժողովուրդէն հատուածներ՝ որոնք տուրքերէն ազատ մնալ կ'ուզէին: Նոյնպէս, նկատելով որ ռամիկին առաջնորդները և անոնց դեկավարները ազատներն էին և յաճախ անոնք էին որ շարժման մէջ կը դնէին զանգուածները իրենց դէմ, Արաբները ամէն ջանք ըրին, նախարարները, տանուտէրները, ազնուականները, հողատէրները այնպիսի վիճակի մը մէջ դնել որ անկարող ըլլան ժողովուրդը ոտք հանելու, ռուսի անոնցմէ մաս մը երկիրէն գերեզմարութեամբ հեռացուցին, մաս մը զսոսիական պատրուակներով իբր մահապարտներ սպանեցին և ոմանց ստացուածքները գրաւելով ընչազուրկ դարձուցին: Կը խորհէին այս միջոցներով ժողովուրդը անգլուխ ձգել, իսկ ծանր հարկապահանջութեամբ՝ ժողովուրդը ազատացնել, որպէսզի ապստամբութեան վրայ մտածելու անկարող դառնայ:

որդ դառնայ՝ Եթէ Հայերը հեռու մնային Բիւզանդացիներէն, և հարկը կանոնաւոր վճարէին, Արաբ տիրապետութիւնը միայն անտեսական ինքի մը պիտի դառնար, ինչպէս եղած էր Պր. Մամիկոնեանի (661—684) ատեն. որով պիտի կարենային պահել իրենց ներքին ինքնավարութիւնը և վայելել կարգ մը առաւելութիւններ: Հայերը չհասկցան ասիկա և միշտ Բիւզանդիոնի վրայ յոյս դնելով, ինչպէս տեսնուեցաւ, քանի մը անգամներ փորձուեցան ապստամբութեան դիմելու, աւելի զգացումով քան արամաբանութեամբ, և առիթ տուին որ անհանդուրժելի խտտութիւններու ենթարկուին: Ժամանակակից պատմագիր մը, Ղեւոնդ, անշուշտ Հայկական ապստամբութիւններու ձախող վտխճանը տեսնելով «անմիջ խորհուրդ» կ'որակէ առանց ոյժի եղած շարժումը, զայն թելադրողները «խաբեբայ եւ մոլեկան» կը կոչէ ու «սասպատու մոլորեալներ կը ներկայացնէ և անոնց խօսքերը «վնասակար» և «նեղութեան խոսք» կը նշուակէ, իսկ անկէ հեռու մնացողները իբր «խոհակ և ճանճար» թէր կը ներկայացնէ (Ղեւոնդ Ը. 153. 173): Ան կը նկատէ թէ Հայերը ամէն անգամ որ ոեւէ պատճառով ապստամբութեան դիմած են, բռն միջոցներու կիրարկութիւնը անոնց անխուսափելի հետեւանքը եղած է և Հայաստանի հարկերը անտանելիօրէն ծանրացած ու տեսակ տեսակ կեղեքումներ և հարստահարութիւններ կատարուած են, մինչ առանց այդ փորձերուն—որոնք ապարդիւն մնալու դատապարտուած էին և աւելի կը ծառայէին Արաբներու զայրոյթը սաստկացնելու և անոնց տիրապետութիւնը աւելի անհանդուրժելի դարձնելու— եղած է պահեր ուր Արաբ տիրապետութիւնը Հայաստանի վրայ շատ մտկերեսային հանգամանք մը ունեցած է:

Արաբ լուծը բոլորովին ստուերի վերածուեցաւ թ. դարուն վերջերքերը Յալիֆաներու պետութիւնը ծայրագաւառներու մէջ ծագած ըմբոստութիւններէն տկարացած, անկարող դարձաւ մնայուն բանակներ պահելու Հայաստանի մէջ տեւականապէս, ինչպէս շատ մը ուրիշ երկիրներու մէջ, որոնք միայն հարկի վճարումով Պաղատատի կապուած մնացին և ամիրներու և զօրավարներու իշխանութեան տակ ճորտ իշխանութիւններու վերածուեցան և Արաբ պետութեան տուին աւատական կազմ: Կուտակալները կամ Ոստիկանները դարձան մեծ աւատապետներ, ստորադաս ունենալով բազմաթիւ ճորտեր, որոնց գործերուն իրենք չէին միջամտեր և միայն իբր այցելու հաւաքիչներ հարկերը կը գանձէին:

Բարեացակամ ոստիկանի մը իշխանութեան ատեն Բագրատունիք յաջողեցան ճորտ դառնալ Հայաստանի հողաբաժինին մէջ և ինքնավարութիւն մը ապահովել՝ հարկին վճարումը իրենք ստանձնելով: Բագրատունիք շնորհիւ իրենց չափաւորութեանը և համբերատարութեանը, դարաւոր աշխատանքով անխոնջ կերպով ընդարձակած էին իրենց տեփական կալուածները, ձեռք բերած էին յարգանք օտար իշխանաւորներուն քով և ազդեցութիւն՝ Հայ ժողովուրդին վրայ, հակառակ Արաբներուն բոլոր ջանքերուն, որոնց ձգտումն էր Հայ ազնուականու-

Թեան անճիտումը, որպէսզի միայն ստրուկներ ունենան իրենց իշխանութեան տակ:

Այնպէս որ, Ք. դարուն վերջերը, այնպիսի դիրքի մը հասան որ առանց դժուարութեան արքայական թագի տիրացան: Բայց, ինչպէս դիտել տուած է բանասէր մը, «աւելի դժուար եղաւ այդ թագը կրելը քան զայն ձեռք բերելը» (Կարապետ Սարկ. Տէր-Մկրտչեան. Պաղկեկեանքի Բիւզանդական կայսրութեան մեջ. 1938 Երուսաղէմ. 143): Իսկապէս մեծ էր Բագրատունեաց հողային հարստութիւնը, և անոնց ռազմական ոյժը, այնպէս որ, Արաբները և Բիւզանդացիք՝ ստիպուած էին հաշիւի առնել զանոնք:

Ք. դարուն Բիւզանդիոն յաջողած էր վերագրուել իր կորուսած հողերը: Վասիլ Ա. (867—886) Միջագետքէն կրցած էր առաջանալ մինչև Գ. Հայք՝ Եփրատի եզերքները. ուրկէ Բիւզանդեան բանակները 150 տարիէ ի վեր վանուած էին: Ասիկա պարագայ մըն էր որ Արաբները նկատի ունենալով, Հայերը սիրաշահելու դիտուածով՝ Աշոտ Բագրատունիի «Իշխանաց Իշխան» տիտղոսը տուին և իրենց կողմէ կուսակալ նշանակեցին Հայաստանի (859), գոհանալով միայն տուրք ստանալով: Աշոտի հաւատարմական ցոյցերը՝ որոնք գործնականապէս կը հաստատուէին — ինչպէս Շահապի ապստամբութեան (869) ատեն և այլն — վերջապէս Արաբները մղեցին Աշոտը ճանչնալու իբր «Թագաւոր» (887):

Վասիլ Ա. կայսրը ինքն ալ քիչ յետոյ թագ զրկեց անոր և զայն ճանչցաւ թագաւոր: Այսպէս, կազմուեցաւ Բագրատունեաց թագաւորութիւնը, օգտուելով նախ Արաբ պետութեան տկարութեան հետեւանօք՝ անոր աւատական կազմ ստանալէն և երկրորդ՝ Բիւզանդական պետութեան ներշնչած պատկառանքէն: Ասիկա անկախ թագաւորութիւն մը չէր, այլ հարկատու իշխանապետութիւն մը, որ նոյնիսկ դրամ հատանելու իրաւունք չունէր, մինչ Էմիրներէն շատերը, ինչպէս Հայաստանի Ոստիկանները՝ ունէին այդ իրաւունքը: Նոյնպէս, Հայաստանի մայրաքաղաքը Գուկն կը մնար Արաբներու ձեռքը և հոն կը նստէր փոխանորդը Ատրպատականի ոստիկանին, որուն իշխանութեան տակ էր Հայաստան:

Թերեւս Բագրատունիները յաջողէին ժամանակի ընթացքին ամբողջ երկիրին վրայ տարածել իրենց իշխանութիւնը, եթէ հնարաւորութիւն տրուէր իրենց՝ պահ մը անդորրութեան մէջ բնականոն կերպով զարգացնելու իրենց ոյժերը:

Բայց, դժբախտաբար, Հայաստան չունեցաւ այդ անդորրութեան ժամանակամիջոցը: Աշոտ Ա. իմաստութեամբ, երկիրին խաղաղութիւնը ապահովելու համար, դաշինքներ կնքած էր օտար տէրութեանց հետ, միեւնոյն ատեն հետամուտ ըլլալով ազգակցական կապեր ստեղծելու երկիրին իշխանական տուներուն հետ: Սակայն խոչընդոտներ պակաս չեղան իրենց առջեւ: Այնչափ հրապուրիչ էր Բագրատունեաց օրինակը որ, լայն նստարած կալուածներու տէր ուրիշ իշխաններ եւս հետամուտ եղան արքայական թագի, մեծ մասամբ գրգռուած զօրաւոր Հայաստանի մը կազմութիւնը վտանգ համարող դրացիներէ: Այնպէս որ, պատահեցան տեսակ

տեսակ դաւաճանութիւններ՝ նոյնիսկ արքայական տան մէջ, և առաւել ևս՝ դաշնակիցներուն քով: Բայց, շատ աւելի վատթարը այն էր որ, երկիրին մեծ մասը իրենց անմիջական տիրապետութեան տակ առած էին մահմետականները, որոնց հետ Հայերը սերտ գործակցութիւն չէին կրնար հաստատել: Այնպէս որ, Աշոտի մահէն (890) յետոյ, իր ստեղծել ուզած միութիւնը կարելի չեղաւ պահել երկիրին մէջ և իր գծած ուղղամիտ հաւատարմութեան ուղեգիծը չյարգուեցաւ, և Հայերը, սնխորհրդաբար գործիք եղան Բիւզանդիոնի, վտանգելով ձեռք բերուած կէս-անկախութիւնը:

Իր յաջորդին՝ Սմբատին (890—913) Գուկնի վրայ գործադրած յարձակումը (892ին) և երկու Արաբ հրամանատարները ձերբակալուած և չլթայակապ չեւոն կոյսեր զրկելը, պատճառ եղաւ որ Ափշին (891—899) Հայաստան զայ և Հայերը հնազանդեցնէ (896), հարկը վերստին վճարելու պայմանով: Սմբատի երկասյրի ընթացքը, Հայ նախարարներուն և տանուէրներուն թագաւոր դառնալու փառասիրութիւնը և իրենց՝ ազգին ընդհանուր և գերագոյն շահերուն անհասկցողութիւնը, պատճառ եղան Բագրատունեաց իշխանութեան ստորաբաժանումին, ազգին պառակտումին, ներքին կռիւներու ու պայքարներու և անհնարին աղէտներու, և վերջապէս Սմբատի եղբրական մահուան (914): Իր արժանաւոր որդին՝ Աշոտ «Երկաթ» (915—928) յաջողեցաւ Արաբներէն բոլորովին ձերբազատել երկիրը, Բիւզանդական բանակներու յաջողութիւնները ի նպաստ իրեն օգտագործելով: Բիւզանդիոն վերագրուած էր Արաբներէն, Փոքր Ասիան, Կիլիկիան, Ասորիքը, Կրէտէն, Սիկիլիան և այլն և իր բանակները հասած էին Հայաստանի սահմանները, սարսափ պատճառելով Արաբներուն:

Աշոտ, առիթէն օգտուեցաւ և 913ին հարկը դադրեցուց: Արաբները համակերպեցան Աշոտ, երբ Արաբներէն նեղուեցաւ, կայսեր դիմեց և Պոլիս երթալով ու օգնութիւն ստանալով՝ դարձաւ Հայաստան, ուր Վրաց և Ափխազաց օժանդակութեամբ Արաբները վանեց երկիրէն (920): Այսպէս, Հայերը, Վրացիները և Ափխազները, դաշնակիցներ դարձան Բիւզանդական կայսրութեան:

Արաբները, իրենց կողմը շահելու համար Հայերը, դարձեալ զիջող եղան և 922ին, Աշոտի շնորհեցին «Շահնշահ»՝ «Արքայից Արքայ» տիտղոսը, որ աննշանակ պատուանուն մը չէր, այլ նուիրագործումը Բագրատունեաց կեդրոնական պետութեան գերիշխանութեան, Վասպուրականի, Աղուանից, Վրաց և Ափխազաց քրիստոնեայ ճորտ պետութեանց վրայ, որոնք աւատական գրութեամբ արդարեւ կապուած էին Հայոց թագաւորին:

Այս կերպով, Հայաստան կրնար ամրապնդուիլ և կազմել ուժ մը, ինչ որ համաձայն չէր ո՛չ Բիւզանդիոնի և ո՛չ Ատրպատականի ոստիկաններու շահերուն: Հետեւաբար, Բիւզանդիոն աշխատեցաւ իրեն կուսակիցներ և գործիքներ (ինչպէս էր Տիկ Ամրամի պարագան) ձարելով, երկիրը իբ

կողմը շահիլ, մինչ Ատրպատականի ոստիկանները, Հայ թագաւորներուն իրենց իշխանութենէն խուսափելու, Յունաց միանալու կամ ուղղակի Պաղտատի կապուելու փորձերը, ինչպէս նաեւ հարկը դադարեցնելը, հաշտաչքով չէին գիտեր և Հայաստան արշաւելով կը կեղեքէին, կը հարբատահարէին, ու Հայ հողի վրայ նորանոր Հայ և մահմետական իշխանութիւններ կազմելով, բաժան բաժան կ'ընէին երկիրը:

Այս վիճակը միայն մէկ տեսակէտով մը օգտակար եղաւ երկիրին համար, որուն զանազան մասերուն իշխող տուները ջանացին ճարտարտուեստի ու գեղարուեստի, բայց մանաւանդ բարեպաշտական ձեւնարկութեանց մէջ գերադանցել զիրար, որով երկիրը կարճ ատենուան մէջ այնպիսի ծաղկեալ վիճակի մը հասաւ որ այդ օրերուն, ինչպէս Ասողիկ (Ք. գ) կ'ըսէ «մինչեւ հովուաց եւ անդէորդաց մեծախնայս զգեցու պատուան»: Այդ օրերուն կառուցուեցան նաեւ անհամար փառայեղ եկեղեցիներ և գեղեցկաչէն վանքեր, որոնք գալրոցական և ուսումնական մէկ մէկ կեդրոններ հանդիսացան, յունական ոճով և ուղղութեամբ:

Միւս կողմէն, երկիրին մէջ կը շեշտուէր բարքերու անկումը, որ բնական հետեւանքներէն մէկն էր Բիւզանդական մշակոյթին ազդեցութեան և ժողովուրդին քով կուտակուած հարստութեան: Ասիկա թերեւս զլիաւոր պատճառներէն մէկը եղած է երկիրին կործանումին:

Ժամանակին պատմիչները անշուշտ ասիկա նկատի ունենալով է որ բացօրոշ կ'ըսեն թէ մարդիկ, յիմարացած իրենց հարստութենէն և կեանքի վայելքներուն առատութենէն, մոռցած էին Աստուած և այդ պատճառով կը պատժուէին, և կը կրէին իրենց մեղքերուն պատիժները: Որչափ ատեն որ Հայերը պարզ լեռնականներ էին, քաջարար կը դիմադրէին իրենց թշնամիներուն, իսկ երբ դարձան փափկասուն քաղաքացիներ, իրենց կեանքը դարձաւ թանկարժէք և չուզեցին անկէ գիւրաւ բաժնուիլ, հասարակաց բարւոյն համար: Անոնք հագիւ կրցան առկալ Կովկասեան փոքր ժողովուրդներու ասպատակութեանց և ներքին քայքայումներու: Բայց երբ հարկադրուած եղան թարմ ոյժերով բարբարոսներու դէմ կանգնիլ, արդէն դատապարտուած էին ընկճուելու, մանաւանդ որ, փոխանակ իրենց սեփական ուժերուն վստահելու, կ'ապաւինէին Բիւզանդացւոց օգնութեան, և բարոյապէս սերտօրէն կը կապուէին և նեցուկ կը հանգիստնային անոնց՝ այն պայքարին մէջ որ անիկա կը մղէր այլակրօն թշնամիներուն և արեւելքէն խուժել սկսող բարբարոսներուն դէմ: Հայ ժառանգական իշխանները պատիւներ կ'ստանան կայսրերէն և կը համարուին անոնց եթէ ոչ ճորտերը՝ գէթ դաշնակիցները, բայց միշտ կառնածելի և միշտ օպառնացող բաժնուելու դաշնակցութենէն, եթէ օգնութիւն չըրկուի իրենց զօրքով և դրամով: Այս իշխանները բազմաթիւ էին: Ատոնց մէջ էին Բագրատունի թագաւորները, որոնք բոլոր Հայ իշխաններուն զօրաւորագոյններն էին և միւսնոյն ժամանակ ամէնուն գերիշխանը: «Շահնշահը» կամ «Արքայից Արքան» տեսակ մը ճորտ էր կայսրութեան, և կը կոչուէր «Հօգեւոր Որդի Կայսեր», և միշ-

խանաց Իշխան Հայաստանի»: Բացի Բագրատունի Արքայից Արքայէն, կային նաեւ Հայաստանի հողին վրայ ինն ճորտ Հայ իշխանութիւններ որոնք էին Վասպուրականի իշխանը, Արժրունեաց տան պետը, Կոգովտի իշխանը— որ նոյն տան կրտսեր ճիւղին պետն էր—, Տարսնի իշխանը, Մոկաց, Օձուների, Սխանեաց, Վայոց Ձորի, Սաչենի, Սեւորդեաց իշխանները: Կային թերեւս շատ մը ուրիշ մանր Հայ իշխանութիւններ, որոնք չեն յիշուած: Բոլոր այս Հայ իշխանները, ինչպէս նաեւ Վրացի տիրապետները, շահերը, իշխանները, նախարարները, ցեղապետները, մարզպանները ևայլն, Բիւզանդական դիւանները միօրինակարար իշխան (=Արխոնտ) անունով կը կոչէին: Միայն Վասպուրականի իշխանը բացառաբար «Իշխանաց Իշխան» կը կոչուէր և Վրաց թագաւորը՝ «Կիւրապաղատ» կամ «Բիւզանդական Պալատի Մարաջախտ»: Այս բոլոր իշխանները կը խնդրէին և կ'ստանային կայսրէն, տիտղոսներ և պատիւներ:

Նոյնիսկ Վանի ծովին շրջակայ քաղաքներու՝ Բերկրիի, Մանազկերտի, Յլաթի և Արճէշի մէջ հաստատուած մահմետական Ամիրաները ինքնաբերաբար կը ճանչնային Բիւզանդեան կայսրութեան գերիշխանութիւնը:

Այսպէս, Աշոտ Բ. Երկաթի իշխանութեան վերջերը, Ուրբները սեւէ ազդեցութիւն չունէին Հայաստանի վրայ, շնորհիւ Յովհ. Գուրգէնի, Նիկեփոր Փոկասի, Չմկիկի ևայլնի յաղթանակներուն, որոնք Բիւզանդեան կայսրութեան սահմանները մինչեւ Տիգրիս և Վանի լիճ կը հասցնէին, ընկճելով Արաբները, և Բիւզանդական ազդեցութեան ենթարկելով Հայերը:

Սակայն Հայ ժողովուրդին վերին դասերը՝ որոնք վտանգ կը տեսնէին Հայ ժողովուրդին համար, Բիւզանդացիներու կրօնական միաբարութեան ձգտումներուն և մոլեռանդութեան մէջ, Պոլսոյ ազդեցութեան գէմ կը մտքառէին: Հետեւաբար, բնաւ Հայ և Յոյն յարաբերութիւնները անկեղծ չէին և միշտ կրօնական ատելութիւնը կը շարունակուէր: Փոխադարձաբար, Բիւզանդացիք Հայոց նկատմամբ ունէին այնքան խորշնք որքան իսլամին համար: Այնպէս որ, Բիւզանդիոն չխղճահարեցաւ իր սովորական մեթոսները կիրարկելով խանգարելու Հայաստանի բարօրութիւնը և երջանկութիւնը, զոր Աշոտ Բ. յաջորդները՝ Աբաս (931—955), Աշոտ Գ. Ողորմած (955—978), Սմբատ Բ. Տիեզերակալ (979—989) և Գագիկ Ա. (989—1019) կերտեցին, երկիրը խաղաղութեան մէջ պահելով: Այս ժամանակամիջոցը եղաւ Բագրատունեաց փառքի շրջանը:

Աշոտ Ողորմած, որ այս արքայական տունը իր զօրութեան գագաթնակէտին հասուցած էր, իր մայրաքաղաքին՝ Անիի և այլ վայրերու մէջ կառոյց հոյակապ շէնքեր և մարդասիրական հաստատութիւններ: Իր և իր անմիջական յաջորդներուն ատեն Հայաստան իր քաղաքակրթական փթթումի գէնիթին վրայ էր: Շինուեցան բազմաթիւ գեղեցիկ յիշատակարաններ, նորոգուեցան ուներուած քաղաքներ և գիւղեր և կառուցուեցան բազմաթիւ վանքեր և ուրկանոցներ:

Երկիրը գրեթէ բոլորովին անկախ էր և կ'ապրէր խաղաղութեան

մէջ, որ կը խանգարուէր երբեմն հիւսիսէն բարբարոսներու արշաւանքներով, ինչպէս 950ին և 988ին, Ափխազներու կրկին արշաւանքնելով և 955—964ին՝ ներքին և արտաքին խլրտուէններով:

Աշոտ Ողորմած յաջողեցաւ իր գերիշխանութիւնը ճանչցնել Վասպուրականի, Վրաստանի և Աղուանից թագաւորներուն կամ իշխաններուն և մի քանի մասնատական էմիրներու:

Սմբատ Բ., 988ին, խիստ քաղաքագիտական գործ մը ըրաւ՝ ստեղծելով միութիւն մը Տայոց Դաւիթ Կիւրապաղատին և Վրաց թագաւորին հետ, գործակցելով նաեւ Վասպուրականի, Սիւնեաց և Աղուանից իշխաններուն և Կարսի թագաւորին հետ: Այսպէս Հայաստանի հողին վրայ գտնուող բնիկ իշխանութիւններէն կազմուեցաւ պատկառելի միութիւն մը որ յարգանք պարտադրեց Ափխազներուն, որոնք անմիջապէս խաղաղութիւն խնդրեցին:

Հայաստան, այսպէս, ունեցաւ փառքի և մեծութեան շրջան մը, որ շատ կարճ տևեց, վասնզի քիչ յետոյ Արար-Բիւզանդեան մրցակցութիւնը դարձեալ սկսաւ:

«Քանի Յոյներու զենքի գերազանցութիւնը Եփրատի արևմտեայ կողմերուն վրայ տիրութիւն զօրացած չէր, որպէսզի անոնք կարեմային ուղղակի հարուածել Հայաստանը, ան ինքզինքը ապահով կ'զգար իր լեռներուն մէջ: Նուազ ապառնալիքին տակ Արաբներուն եւ անփոյթ՝ հանդէպ Բիւզանդական վրձանգին, որ տակաւին հեռու էր, Հայերը անձնատուր եղան կեանքի վայելիքներուն, առեւտուր ըրին, փառաւոր ցեղեր կառուցին, եւ երկարեցին մանր մուկ աւասական իշխանութիւններու գոյութիւնը: Անոնք հարստացան, բայց մնացին բաժան բաժան եւ անգօր, մինչ Բիւզանդիոն օտուրակելով Վասիլ Ա-ի օրով ձեռք բերած յաջողութիւնները Արաբներու դէմ, սկսաւ յարձակիլ Հայաստանի վրայ, եւ մաս մաս խլել անոր հողերը: Հայերը հասկըցան թէ իշխանաց ալիս ոչինչ կրնար ընել իրենց պաշտպանութեան համար եւ թէ իրենք կորսնցուցած են ժամանակը ուր կրնային զօրաւոր եւ պաշտպանուելու ընդունակ պետութիւն մը կազմակերպել եւ թէ մնացեալին Յոյներու ֆայթին ետքայլ: Եւ Հայաստան կործանեցաւ Բիւզանդիոնի հասցուցած հարուածներէն, զի 885—86ի թագաւորութեան վերահաստատութիւնը իբր բարեպատեհ միջոց ծառայեցուցած էր բուսցնելու մանր իշխանութիւններ եւ հարստութիւններ եւ չէր գիտած միանալ եւ զօրանալ իր անկախութիւնը յարգել տալու համար: Այլեւ ժամանակ չունեցաւ միանալու երբ վերջապէս հասկցաւ թէ Վասիլ Ա. եւ իր հարստութիւնը, զայն փրկած էր Արաբական բռնակալութենէն, որ չէր մեռած: Խալիֆայութեան պարտութիւնը եւ անկումը Հայաստանը կը ձգէր մեկուսացած, պառակտուած եւ առանց ուեւ հնարաւոր օգնութեան Յունական ուժերու: Այսպէս, որ վերջ ի վերջոյ զայն պիտի սպաննէ» (Laurent. 294—5):

Արդարեւ, Հայաստան «անկարող եղաւ ... պաշտպանելու ինքզինքը Յոյներուն ուժերէն յետոյ, մինչ Խալիֆայութեան հետզհետէ նուազող ոյժը այլեւ չէր կրնար ազդուօրէն պաշտպանել զայն: Այսպէս, Արաբական

ժիւղապետութենէն անկախ անցաւ Բիւզանդիոնի ժիւղապետութեան, որ վստահեց Արաբներու կողմէ յարգուած իր քաղաքական գոյութիւնը: Յունական կայսրութիւնը, արդարեւ, սկսաւ կցել երկիրը կտր կտր, մաս առ մաս, յառաջացաւ երկիրին ներսերը այն չափով, ինչ չափով որ կը սկսեցան Պաղատի Խալիֆայութիւնը եւ ինչ չափով որ Հայերը կը պառակտուէին: Ի վերջոյ Յունական կայսրութիւնը տեղաւորեց իր զօրքերը Անիի մէջ, որ մայրաքաղաքն էր 885—886ին ստեղծուած Հայկական թագաւորութեան, եւ Բիւզանդական նահանգներու վերածեց ամբողջ Հայաստանը, սկսեալ Մեքիսիսիէն եւ Եփրատէն՝ մինչեւ Դուբնի մօտերը, Արաբսէն ալ հեռու, եւ մինչեւ Ուրմիայի ու համանուն լիճին օրջակայքը: Կրկին ձեռնարկելու համար Հայաստանի վերանուաման, Բիւզանդիոն՝ որ կը վախճար Հայերու փոփոխամտութենէն, իր հողին վրայ փոխադրեց թագաւորի արհանբեր, իրենց ազնուականներէն եւ հպատակներէն անոնց հետ, որոնք ուղեցին հետեւիլ իրենց թագաւորներուն կամ որոնց տարաբար անհրաժեշտ դասեց Բիւզանդիոն: Այս զանգուածային գաղթին հետեւանով, Բարձր-Հայքը առաջին անգամ ըլլալով կորսնցուց իր աւաստեպետական ոյժը, որ կրցած էր տեսլ ու հաստատուն մնալ Քրիստոսէ առաջ եօթներորդ դարէն սկսեալ. բայց դարձեալ առաջին անգամ ըլլալով, երբ այդ ոյժը անհետացաւ, Հայ ազգաբնակչութիւնը ենթարկուեցաւ օտարներու կասարեալ ժիւղապետութեան:» (Laurent. 3—4):

Բիւզանդիոն, որ երբեմն կը յաւակնէր պետը և գերիշխանը ըլլալ Եփրատէն մինչեւ Կովկասի ստորոտը տարածուող Հայ, Վրացի և Մանսիտական փոքր պետութիւններուն, չկրցաւ գնահատել կարեւորութիւնը Հայաստանի անկախ իշխանութիւններուն և ըմբռնել անոնց վերապահուած դերը՝ իր ասիական նահանգներուն ապահովութեան համար իսկ:

Ան անխորհրդաբար քանդեց իր պաշտպանութեան ամրոցները, և շատ ժամանակ չանցած՝ արդէն իսկ հետեւանքը կրեց, վասնզի կեդրոնական Ասիայէն Թուրանեան ժողովուրդներ ողողեցին Հայաստանը և մտան Բիւզանդական կայսրութեան երկիրները, ամէն տեղ պարտութեան մատնելով անոր երկչոտ բանակները և յաղթական առաջացան մինչեւ Պալիս, կատարելով Հայ և Յոյն ժողովուրդներու համար դժբախտ շրջանի մը բացումը, վասնզի այդ շրջանին Հայաստան ոչ միայն իր բնակչութենէն զիտի դատարկանար այլ իր ցեղային նկարագիրը պիտի փոխէր, իր սահմաններուն մէջ հաստատուելու տեսնելով ստուար թուով Մոնղոլեան ցեղէ բնակիչներու, և պիտի կրէր այնպիսի հիմնական փոփոխութիւն մը որ իր նմանը չէ ունեցած բոլոր նախորդ շրջաններուն, ուր ներգաղթողներու թիւը անհամեմատ քիչ եղած է, մինչ արտագաղթը միշտ տեսական և յարատեւ:

Այս տեսակէտով, Արաբ տիրապետութեան 640էն 1040 տեւող 400 տարիները, կարելի է ըսել թէ աւելի նշանաւոր եղած են, և գաղթը շարունակուած է մասնաւորապէս դէպի Քրիստոնեայ կայսեր երկիրը տակաւին մեծ զանգուածներով, վասնզի դարձեալ Հայաստան, ինչպէս նախորդ

չրջաններուն, չէ ունեցած տեւական և երկարատեւ խաղաղութիւն: Հայերը, Բիւզանդացիներէն և Արաբներէն հաւասարապէս ճնշուած և երկուքէն ալ դժգոհ, երբեմն մէկ կողմին և երբեմն միւս կողմին յարած և տեսակ մը երկմիտ ուղղութիւն ունեցած են, և երբեմն ալ չհանդուրժելով այն պատուհաններուն և չարիքներուն՝ որոնք երկիրին տիրապետները կը հասցընէին՝ կա՛մ իրենց կրօնական զգացումները վիրաւորելով, կա՛մ խիստ հարկապահանջութիւններ և կեղեքումներ գործադրելով, զէնքին փարած և ապստամբած են, յաճախ անհաւասար և անոյս պայքարի մը մասնելով, և ջախջախութեամբ ուշ կամ կանուխ:

Այս ապստամբութիւնները — ինչպէս տեսնուեցաւ — զարնուրելի հետեւանքներ ունեցած են: Արաբները ամէն մէկ հայկական խլրտում փոխադարձած են անտանելի կեղեքումներով և հարստահարութիւններով:

Ասոնց զուգընթաց և երկիրին խառնակ վիճակին իբր հետեւանք, ժողովուրդը հարուածած են նաեւ սովեր, կարօտութիւններ, և երբեմն ալ բնական աղէտներ, ինչպէս համաճարակներ և սաստիկ երկրաշարժներ:

Բարեբախտաբար այս շրջանին համար ունինք ժամանակակից Հայ պատմիչներ. ինչպէս Սեբիոս եպ. Բագրատունեանց, Մովսէս Կաղանկայտուացի, Աւետիք, Յովհաննէս Կաթողիկոս «Պատմաբան», Թովմա Արծրունի, Ստեփանոս Ասողիկ, Ուխտանէս և Արիստակէս Լաստիվերտցի, որոնք իբր ակնաստեսներ շատ կենդանի գոյներով նկարագրած են Հայաստանի դժբախտ ու երջանիկ օրերը, խօսելով այս չորս հարիւր տարիներու զանազան շրջաններուն վրայ, այնպէս որ, ամբողջ շրջանին վրայ յիսկատար գաղափար մը կազմելու համար ունէ դժուարութեան առջեւ չէ մէկը՝ եթէ հետաքրքրուի:

Հոս անշուշտ աւելորդ է ներկայացնել այն փշաքաղող նկարագրութիւնները որոնք Աւետիք, Յովհաննէս Կաթողիկոս և Թովմա Արծրունի ջրած են ներկայացնելու համար Արաբ հարստահարութիւնները և ժողովուրդի կեանքը այն սոսկալի սովին որ եթէր տարի տեւած է, և որուն ակնաստես վկան եղած է Պատմաբան Կաթողիկոսը: Նոյնքան աւելորդ է ներկայացնել ամբողջ այն սրտապնդիչ և ոգեւորուած տողերը՝ այդ պատմագիրներուն, պատկերացնելու համար երկրագործական և առեւտրական բարգաւաճումը և զարգացումը, որ երկիրը ունեցած է և շինարարութիւնները՝ որոնք երկիրին իշխողները կատարած են գրեթէ Հայաստանի ամէն կողմերը՝ խաղաղութեան օրերու մէջ: Դժբախտաբար այս երջանիկ ժամանակամիջոցները այնքան քիչ եղած են այս 400 տարիներու շրջանին, որ Հայոց գաղթին ընթացքը չէ կասած և Հայերը քարձեալ գունդագունդ և անընդհատ անցած են, մասնաւորապէս դէպի քրիստոնեայ կայսեր երկիրները, նուազագոյն չարիքը համարելով հոն իրենց սպասող դաւնութիւնները: Իսկապէս, Բիւզանդ-Սասանեան և Բիւզանդ-Արաբական շրջաններուն միջեւ չէ կարելի զգալի փոփոխութիւն մը տեսնել Հայ և Յոյն յարաբերութիւններուն մէջ: Բիւզանդ-Սասանեան շրջանին երկու պետութիւններն ալ հաւասարապէս թշնամի էին Հայաս-

տանի անկախութեան և գէշ աչքով կը նայէին անոր կրօնական ինքնուրուութեան: Արաբները մրցակից ունենալէ յետոյ ալ Բիւզանդացիք զանեցին դարձեալ իրենց հին հայեացքը դէպի Հայերը և բարեկամ չէին մեր կրօնական և քաղաքական անկախութեան և ազգին ամէնէն թանկագին և անկողոպտելի գանձերուն յափշտակութեան կը հետամտէին: Անոնք Հայ ոգին անճիտելի կը ձգտէին, և անոր միակ միջոցը կը նկատէին կամոց կամաց Հայաստանը վերածել իր բնակչութեամբ, կրօնքովը և մշակոյթովը կատարելապէս Յոյն նահանգի մը: Իրենց քաղաքականութիւնը կը խտանար Սեբիոսի սա նախատեսութեան մէջ զոր ան Մօրիկի բերանը դրած է. «Զի եթէ դո՛ւա յերկրի իւրեանց լիճիցին, մեզ հանգչել ոչ լիճի»:

Ուստի Բիւզանդիոն, հետեւողական կերպով շարունակ աշխատեցաւ Հայ տանուէրները հաստատել Բիւզանդական կայսրութեան մէջ (Aug. F. Gförer. Byzantinische geschichten. 1872. Graz. III. 361. և J. Laurent. «l'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886.» 1919 Paris. 191) և քաջալերեց Հայոց գաղթը, որ շարունակուեցաւ իսլամական տիրապետութիւնէն յետոյ, մասնաւոր այն շրջաններուն երբ Արաբները գէշ վարուեցան ժողովուրդին հետ: Հայերը եկան կայսրութեան մէջ բախտ փնտռելու՝ մղուած արկածախնդրութենէ կամ փախուստ տուած ներքին պայքարներէ և Արաբ հալածանքներէ՝ որոնցմէ խուսափել կ'ուզէին: Անոնցմէ մաս մըն ալ կայսրերը իրենք կը հեռացընէին իրենց ծննդավայրերէն՝ աւելի ապահով կերպով տիրապետելու կամ զանոնք զինուորագրելու համար իրենց քանակներուն մէջ, վարանողները հրապուրելով պատիւներով, խոստումներով և շնորհներով: Հայերը կ'անցնէին այսպէս մեծ թուով, Բիւզանդեան երկիրներ, և կ'օգնէին Հայաստանի և Հայութեան հիւժուովին, վասնզի գաղթականութիւնները, որոնք է. դարէն մինչեւ ժ.Ա. դար կատարուեցան, աւելի յամր շարժումներ էին դէպի կրօնափոխութիւն, քանի որ ինչպէս Արաբ երկիրներու մէջ իսլամական կրօնքը ընդունելով ապահարկ ըլլալու՝ նոյնպէս նաեւ Բիւզանդեան երկիրներու մէջ՝ Օրթոտոքս եկեղեցիին հպատակելով իրենց դիրք մը ապահովելու առաւելութիւնը, եթէ չէր հարկադրեր հաստատուութիւնը, զոնէ անոր կը մղէր շատերը՝ հրապուրիչ հետապատկերներով:

Բիւզանդացիք, որ կրնային օգտուելի Հայերու Արաբներու դէմ ունեցած տանուութենէն, իրենց անճան և դատապարտելի ընթացքով չեն կրցած շահիլ զանոնք, շարունակ կրօնական միութեան ինդիք յարուցանելով և անոնց կրօնական զգացումները վիրաւորելով, և երբեմն աչք գործադրելով այնպիսի արարքներ, որոնք զիրենք հաւասար ատախանի վրայ կը բերէին անոնց հետ զորս կը սիրէին «բարբարոս», «Բրիտտոսի կրօնքին թշնամի», «հեթանոս», «վայրենի» և այլն կոչել: Արաբներ, Բիւզանդացիք, ամէն անգամ որ Հայաստանը վերագրուած են Արաբներու ձեռքէն, Հայոց ճարտար համակերպութիւնը և հնազանդու-

Թիւնը յանցանք նկատած են և խստութեամբ վարուած են Հայոց հետ և որովհետեւ Հայաստան այս շրջանին շատ անգամներ մէկ տիրապետութենէն միւսը անցած է. ամէն անգամ որ Բիւզանդացիք վերստին հոն եկած են, կեղեքած են Հայերը: Օրինակի համար, երբ Յուստինիանոս Բ. 688ին նուաճեց Հայաստանը, Վրաստանը, Աղուանքը, Մարաստանը, Կեւոն զօրավարին բանակով (Թէոփանէս Խոստովանող. Ժամանակագրութիւն. 1883—5. Պօն. Ա6178, Ղեւոնդ Ե. 37 և վերը 213), ճիշդ Արաբներուն պէս, ամէն կողմ ահ ու սարսափ տարածեց: Ասողիկ (Բ. ք 101) կը հաստատէ թէ անիկա կ'աւերէ 25 գաւառներ և գերի կը վարէ 8000 տուն Հայ ժողովուրդ: Զարդուածներու թիւը չէ նշանակուած: Այս սոսկալի անգթութիւնը անոր համար կը գործադրէր, որովհետեւ Հայերը մերժած էին իր յորդորներուն անալ և ապստամբիլ Արաբներու դէմ սա առարկութեամբ թէ իրենք երբեք Բիւզանդիոնէն պաշտպանութիւն չէին գտած անցեալին մէջ և զրկանք ու լլկանք կրած էին անտեղի բռնադատութիւններով (Չամ. Բ. 372): Ասով հանդերձ, երբ իր բանակները մտն Հայաստան և այդ խստութիւնը ցոյց տուին, Հայերը սարսափահար և լքուած Արաբներէն—որոնք քաղաքային պատերազմներով զբաղած էին—պարտաւորուեցան համակերպիլ Բիւզանդեան տիրապետութեան (Ազգ. 762—3):

Բիւզանդացիք Հայաստան թողուցին 30,000նոց բանակ մը (Ասողիկ. Բ. ք. 102) հալածելու և բնաջնջելու համար Արաբները (A. Müller. Der Islam im Morgen und Abendland. 1885. Berlin Ա. 376), որոնք սպառամբութիւն մը կը նկատէին Հայերու Բիւզանդացիներու հնազանդիլը (Beladhori. Արեւալեւհերու գիրք. 1866 De Goejé, 205, Yakoubi. Պատմութիւն. 1883. Leyde Բ. 324. Ibn el Athir. Բրոնիկ. 1851—1876. Leyde. Դ. 294), այնպէս որ երբ 693ին վանեցին Բիւզանդացիները (Թեոփանէս Ա6185. Müller. նոյն Ա. 383. 414—5. վերը 213) և Յուստինիանոս Բ. ի հետ հաշտութիւն կնքեցին, հարկադրեցին զայն յանձն առնելու որ Արաբ տիրապետութեան ենթարկուած երկիրներու քրիստոնեաները հեռացնէ և բնակեցնէ Փոքր Ասիա և Քրակիա, միեւնոյն ատեն իրենց որակալութեան առարկայ ըրին իրենց տիրապետութեան տակ մնացած Հայերը և սոսկալի խժոժութիւններ գործադրեցին:

Բնական է շատ մը Հայեր շտոկալով, իրենք ալ անցան Բիւզանդեան երկիրներ և Յուստինիանոս Բ. ի տեղափոխածներուն հետ Փոքր Ասիա և Քրակիա հաստատուեցան:

Իսկ Արաբական խստութեանց անխուսափելի հետեւանքն եղաւ այն ընդհանուր ըմբոստութիւնը որ 702ին տեղի ունեցաւ (վերը 203) և այն գաղթը որ քանի մը նախարարներ, ինչպէս Սմբատ Բագրատունի, Վարդ Ռչտունի և Աշոտ Բագրատունի, 2000 հեծեակներու գունդով մը փորձեցին (վերը 214) և Արաբ ոստիկանէն արգիլուեցան (703 Յունուար), բայց 706ի Դրաչպեաի ձախողուածէն (տես. վերը 214) յետոյ «Սմբատ կիւրացալ պաղատեալ եւ նախարարքն որ ընդ նմա, զնացեալ մեկնեցան յաշխարհես, եւ

անցեալ խնդրեցին ի քաղաւորէն Յուստաց քաղաք բնակութեան եւ դադարս խաւանց իւրեանց եւ նա օայր նոցա զքաղաքն որ անուանեալ կոչի Փոյթ ի կողմանս Եգեր աշխարհին եւ բնակեցան ՚ի նմա ամս վեց» (Ղեւոնդ. Զ. 58. հմտ. նաեւ Ասողիկ. Բ. ք 128), վասնզի երբ փոխանակ դաժան Մէհմէթի Ապտ-իւլ-Ազիզ (708—724) ոստիկան կարգուեցաւ և «հաստատեցաւ յիօխանութեան»՝ գրեց հրովարտակ «դառնալ յիւրեանցական աշխարհս» և վաստահանելու համար «օայր նոցա զիր երդմամբ չափ քս սովորութեան իւրեանց», Սմբատ Բագրատունի և իր հետ գտնուող նախարարները, որոնք Փոյթ (այժմ Փոթի) քաղաքը կը մնային, համակերպեցան և Բիւզանդացոց դէմ իրենց զայրոյթը յայտնելու համար. «առիճ զքաղաքն յորում բնակեալ էին եւ զգանձս եկեղեցեացն յափեսակեալ յաւարի՝ դարձան ի Հայս հասուածեալք ի կայսերէն Յուստաց» (Ղեւոնդ. 59): Այս արարքը մեկնութեան կը կարօտի: Հստ Օրմանեանի (Ազգ. 810) Հայ նախարարները հաւանօրէն կ'ակնկալէին որ Բիւզանդեան բանակներու օգնութեամբ պիտի դառնային իրենց տեղերը, սակայն յուսախաբ եղան, վասնզի Յուստինիանոս Բ. իր երկրորդ անգամ գահ դառնալէն յետոյ գործադրած զազրելի արարքներով անժողովրդական եղած՝ շուտով քաղաքական յուզումներու տեղի տուած էր:

Այս շփոթին Փոյթի մէջ սպասող Հայերը բոլորովին մոռցուած էին և ասոր համար Ապտ իւլ Ազիզի հրաւերին պատասխանած: Սակայն եկեղեցական գանձերու աւարտութիւնը և ան ալ Զատիկի օրով կատարուելը, կրօնական ատելութիւն մասնանիչ կ'ընէ, այնպէս որ շատ հաւանական է մտածել թէ Բիւզանդացիք ո'չ միայն Հայերը լքած են անօգնական՝ Փոյթի մէջ, այլ պահանջած են Հայոց կրօնական հպատակութիւնը, ինչ որ գրգռած է անոնց ատելութիւնը: Յոյները ուրիշ կերպով վրէժ լուծել չկրնալով, նոզովքի գիր մը պատրաստեցին թի վերայ գործողացն ապիւրստութեան» և սահմանեցին որ ամէն Զատիկին այդ գիրը կարդան, վասնզի «ի օճին յայնմիկ» այսինքն 712 Ապրիլ 3ին կատարուած էր այս յափշտակութիւնը (Ղեւոնդ. 59. Ասողիկ. 128. Ազգ. 810): Հակառակ այս կրօնական ատելութեան, Արաբական լուծը այնքան անտանելի եղած է երբեմն, որ Հայերը դարձեալ նախամեծար համարած են Բիւզանդական կրօնական բռնադատութիւնները և անցած են անոնց հողերը: Այսպէս, 747—8ին Հայերու ապստամբութիւն և ինքնիշխանութիւն հռչակելու (տես. վերը 215) առթիւ, երբ Աբբաս Ամիրապետը Ապու ձավէր էլ Մանսուր Ոստիկանը Հայաստան զրկեց և սաստիկ բռնութիւններով և արիւնուշտ եղանակով մը երկու տարի շարունակ կեղեքելով Հայաստանը նուաճեց (հմտ. Ղեւոնդ Ը. 158—160 նաեւ վերը 216), Հայերը այնքան զղուանք և սոսկում զգացին որ երբ Կոստանդին Կոպրոնիմոս (741—775) կայսրը արշաւեց դէպի Հայաստան, յօժարակամ ոչ միայն հնազանդեցան, այլ նոյնիսկ սիրով համակերպեցան անոր բանակներուն հետ Բիւզանդեան երկիրներ երթալ: Կայսրը նախ պաշարեց 751ին Մելիտինէն որուն էմիրը չկրցաւ օգնութեան հասնիլ իր քաղա-

քին, վասնզի Միջագետք ապստամբած էր, այնպէս որ քաղաքը ստիպուեցաւ անձնատուր ըլլալ: Բնակիչները իրենց շարժուն ստացուածքներով ապահով տեղ մը փոխադրուեցան և յետոյ քաղաքը քարուքանդ եղաւ (E. W. Brooks. CMH. Դ. 121): Անկէ Կոստանդին շարունակեց իր նամբան դէպի Գլոտիաս կամ Գլոտիասոլիս (Claudias), որ նոյնպէս գրաւուեցաւ և բնակիչները Բիւզանդեան հող փոխադրուեցան, բայց կայսրը ձախողեցաւ Արշամուշատի առջեւ, սակայն, ինչպէս Մելիտինէն և Գլոտիասէն, նոյնպէս Դ. Հայքէն, բնակիչներ փոխադրեց Բիւզանդեան երկիրներ (Laurent. 192 և 198):

752ին կայսրը առաջացաւ մինչև Կարին և յաջողեցաւ գրաւել քաղաքը, որուն Արաբ բերդապահները գերի առաւ և Արաբ բնակիչները տեղահան ըրաւ և քաղաքը աւերեց (Brooks. CMH. 122):

Ղեւոնդ (161), կը պատմէ թէ «բազումք ի բնակչաց գաւառացի ինդրեալ յարժային զի թեկեցսն զաւուր լծոյ ծառայութեանն Իսմայիլ յանձանց եւ գնացսն զկնի նորա», վասնզի վստահ չէին անշուշտ Բիւզանդեան տիրապետութեան տեւականութեան և գիտէին թէ ինչ կ'սպասէր իրենց երբ Արաբները դառնային: Կայսրը այս ինքնաբեր պատրաստակամութեան հանդէպ անշուշտ ուրախութեամբ «սուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղիս իւրեանց խաղացին յառաջ ապաւինեալք ի զօրութիւն սերութեան հաչին եւ ի փառս Արժային, բողիք գերկիր ծննդեան իւրեանց եւ հասուածեալք անկան ի կողմն արժային բարեպատի» (նոյն): Այս Հայ և Ասորի գաղթականները Կարինէն և Մելիտինէն փոխադրուած են թրակիա, ուր ինչպէս տեսնուեցաւ (վերը 180) արդէն, տեւիլ առաջ Հայեր հաստատուած էին:

Բրօքս. Քաղաքագիտի կարծիքով, նոյնիսկ Է. և Ը. դարերուն, Պուլկարիոյ մէջ գտնուող ստուար թուով Հայերը, թագաւորին կողմէ մասնաւոր հրաւէրով եկած ճարտարապետներ կամ սահմանադրուելներու վրայ դեմեդուած կամաւորներ էին (ՀԱՅՐԵՆԻՔ. Զ. 9. 92): Պուլկար պատմաբանը իր այս կարծիքը կը հիմնաւորէ սա իրողութեան վրայ թէ Բիւրուշթիցա դիւղաքաղաքին մօտ Պուլկար եկեղեցին կը կրէ բուն իսկ Հայ ճարտարապետութեան ուժեղ կնիքը և թէ Պուլկար եկեղեցիներուն բոլորին վրայ Հայ ճարտարապետութեան ազդեցութիւնը ակնհերեւ է (նոյն), անշուշտ հետեւանք այն իրողութեան թէ անոնց կառուցանողները Հայեր եղած են: Իսկ թէ Կոստանդին Կոպրոնիմոսի թրակիա փոխադրած Հայերուն և Ասորիներուն միջոցաւ տարածուած է Պաւլիկեանութիւնը ի թրակիա (Քոնփանէս Ա6247 և Նիկիփոր 60). շատ կասկածելի է (Կար. Տ. Մկրտչեան Պաւլիկեանք. 48—50) թէ եւ Բրօքս. Կոնիպէր (Աւստրիի կրօնական գրութիւնները) աւելի առաջ երթալով այնպէս կը ներկայացնէ թէ այս գաղթը կատարուած է Պաւլիկեան աղանդը արմատախիլ ընելու համար Հայաստանէն և զանոնք իբր պատնէշ գործածելու համար Կոստանդինէն հազիւ ընկճուած Պուլկարներու և այլ Սլաւ ժողովուրդներու գէժ (Ա. Ալպոյանեան. Պուլկարիոյ Պատմութիւնը 1910 Վառնա. 9):

Կոստանդինի տիրապետութիւնը Հայաստանի վրայ կարճ տեւեց:

Ինչպէս Հայերը նախատեսեր էին, Արաբները ոչ միայն գրաւեցին Վերտին Հայաստանը, այլ Մելիտինէն առնելով անցան Միւրասը և մտան Կիլիկիա և Մելիտի ճակատամարտը շահեցան (760) Արմենեակ (Armeniac) տրապեա (strategus) Պօղոսի դէմ, որ այս պատերազմին մէջ մեռաւ: Բիւզանդեան բանակը ունեցաւ ծանր կորուստներ և 42 զլխաւոր սպաներ գերի ինկան Արաբներու ձեռքը (Noel des Vergers. Arabie. 1847. 363. Brooks. CMH. Դ. 122): Եէզրիտ վերագրուեց Կարինը և տեղահան եղած բնակչութեան տեղ Արաբ գաղթականներ բերաւ (Ղեւոնդ. 161) 756—758 թուականներուն:

Բիւզանդական բանակներու պարտութիւնը բարոյալքեց Հայերը, որոնք Արաբներու վրէժխնդրութենէն խոյս տալու համար ձգեցին իրենց հայրենիքը և անցան Բիւզանդեան երկիրներ: Այս գաղթը առաւ շարունակական հանգամանք յաջորդ հարիւրամեակին երբ Հայերը գրեթէ անպաշտպան Տիւրքիա Արաբ կեղեքումներու դէմ, որոնք սաստկութեամբ շարունակուեցան ինչպէս Եէզրիտի ժամանակը ուր ինչպէս Ղեւոնդ (166) կը նկարագրէ «յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աւսարհիս Հայոց» այնպէս որ «վախճանեաց գիւսն արձաթոյ ի յերէտս»: Այս միջոցին (758—760) դարձեալ «ոմանք ի նախարարացն Հայոց... մերժեալ լին զժառանգութիւնս իւրեանց, եւ փախսեայ անկան յաւսարհն Յունաց ապաւինեալք առ կայսրն Կոստանդին» (Ղեւոնդ. 165):

Եզրիտի յաջորդը Հասան իրեն հետ ունենալով «զուեղ բազում ի տնիկ և օրասան աւսարհիս» կու գայ Հայաստան, և հոն կ'ստեղծէ անտասնի կացութիւն մը, վասնզի այս գունդերը «առաւել դառնութեամբ յանախ գործիքն զգազագործութիւնս եւ բազմացուցանէին զաղեսս եւ գիւծութիւնս աւսարհիս, զի... սով եւ սուր եւ սասանութիւն յանախէր յազգայեցութեան նորա» (Ղեւոնդ. 168): Սովորական դարձած էին «աւսարհիս» հուրիւն հայրապետաց, այպանութիւնք եպիսկոպոսաց, գան եւ խոսանգանք քանակայից, իւրանաց եւ նախարարաց քաղանք եւ քաջայութիւնք, որում ոչ կայրացեալ հանդուրժիլ զօրազուխք աւսարհիս, հեծէին եւ հառաչէին յանհանդուրժելի քազմապէն. քանզի զուսիկ բազմութիւն մարդկան խոսանգէին ազգի ազգի շարեօք, զոմանս փոկահարութեամբ լլկէին վասն դառն հարկապահանջութեան եւ զոմանս գելարանօք եւ կախաղանօք եւ զոմանս մերկացեալ ի զգեսուցն՝ արկանէին ի մեջ լնից յաւուրս դառնասունչ մմեայնոյ եւ կարգէին ի վերայ պահապանս զի շարչարեցսն գնոսս, զոր պասմել ոչ կարեմք զաղեսիցն պասմութիւն» (Ղեւոնդ. 168—9): Երբ նախարարները տեսան «զվսանց քաղաքուսանացն հասեալ ի վերայ ինքեանց, եղին զոգի ի ձեռին իւրեանց, եւ ձեռնամուխ եղին յիս զոր ոչ կարէին վճարել, վասնզի նուազուեց էին: Այլ սակայն լաւ համարեալ զման քաջութեամբ քան զկեանս վսանգաւոր ձեռնամուխ եղին յիս քաջամարտութեան, եւ ի բաց կացին ի հնազանդութեան Իսմայիլի» (Ղեւոնդ. 169):

Արգարեւ, Հայաստան հրդեհուեցաւ Արտաւազդ Մամիկոնեանէ զբզուռած ապստամբութեամբ մը (նոյն)։ Արտաւազդ, առաջին նշանը տուողը, առաջին անգամ հալածուողը եղաւ, և ինչպէս տեառուեցաւ արգէն (վերը 216), ապաւինեցաւ Եգերացւոց երկիրը և հոն հաստատուելով իշխանութեան ալ հասաւ (Ղեւոնդ. 169)։

Մուշեղ Մամիկոնեան որ Արտաւազդի սկսած գործը շարունակեց, երբ Բագրեւանդի պատերազմին մէջ ինկաւ շատ մը նախարարներու հետ, (Ղեւոնդ. 183. վերը 216) Արաբները սկսան ասպատակ սփռել ամէն կողմ, աւերածներ ընել, եկեղեցիներ կործանել, խաչեր խորտակել, եկեղեցականներ չարչարել, ամէն բան աւերել, ամրոցներու մէջ ապաւինողները կ'ամ բռնութեամբ կ'ամ խաբէութեամբ կոտորել (Ղեւոնդ. 185)։ Այդ միջոցին Բիւզանդացիք հեռու կը մնային Հայաստանէն և Փոքր Ասիոյ մէջ կը մաքառէին Արաբներու դէմ։ Այս կռիւներու միջոցին 778ին Լեւոն Գ. Թազար կայսրը գաղթականական նոր զանգուած մը Գերմանի-կէէն (Մարուշ) բերաւ հաստատեց Քրակիա (Բրոֆ. Մորտան Իվանով Պոկովիւսան գրեքն ու հեկեաքները. 1925 Սոֆիա հրատ. Պուլկար Գիտական Ակադեմիայի. Գէորգ Մեսրոպ. ՀԱՅԿԱՐԱՆ 1931 Սոֆիա. 47)։ Ասոնք հաւանորէն Պաւլիկեան ազանդաւորներ էին, վասնզի Գերմանիկէ անոնց լիաւար կայաններէն մէկն էր։ Ասոնցմէ մաս մըն ալ Պոլիս հաստատուած ըլլալ կը թուի, վասնզի երբ Գրիւմ Պուլկար իշխանը 813ին արշաւեց Քրակիա և յառաջացաւ դէպի Պոլիս, այն տեղի Պաւլիկեանները համար-ձակեցան յեղափոխութիւն յարուցանել Օրթոտոքս հոգեւորականութեան դէմ և ծաղրել Ս. Աստուածածինի պատկերը (նոյն)։

Երբ Բիւզանդիոն Արաբներու հետ կը մաքառէր Փոքր Ասիոյ մէջ և պատահորէն իր գրաւած Եփրատամերձ գաւառներու բնակչութիւնը կը պարպէր, անդին, Հայաստան, կը դատարկանար ինքնաբերաբար, չտակա-լով կեղեքումներու։

Այսպէս, Սիւլէյման սուլթանի ատեն, 780—787ի միջոցներուն, հարկապահանջութիւնը խտապոյն աստիճանի կը հասնի, կազմակերպութեամբ-բը իր փեսային՝ Իբնդոկէ անուն Յոյն ուրացեալի մը։ Հարկը այնքան կը ծանրանայ որ շատ քան ի ձեռքին արուստ, հայրաքանգ՝ ընդ անձին իրոյ տչ լինեք բաւական գնոց։

Ոստիկանը «սասիկ դժնդակութեամբ խոսեանգէր զբնակիչս ասխար-հիս հարկապահանջմամբ։ Ան որ ժողովեալ ամենայն ճախարարք եւ ռա-միկի հանդերձ եկեղեցականօք եւ կաթողիկոսիւն որոյ անունն եր Եսայիաս (775—780) աղաչիցն թեթեացուցանել զանուր ծանրութիւն սակից զոր պահանջեր, եւ ոչ ինչ օգտէին» (Ղեւոնդ. 201)։

Արաբները «լոկեալ ընդ կողմանս կողմանս աշխարհիս պահանջողս, եւ տուեալ հրաման՝ կրկին քան զոր քս ամին պահանջէին, ի միում վայրիկեքի հաւաքել, եւ կասարէր հրամանն։ Իսկ իբրեւ այն ի գլուխ ելանէր՝ վաղվա-ղակի այլ վսանգ չարեաց խորամանկեր որդին սասանայի եւ օայր կնիք կապարեայ դնել յամենեցուն զպարանոցսն եւ առ մի մի կնիք պահանջէր

զբազում զուղայս մինչեւ հասանիլ մարդկան ի յետին օճանկութիւն յան-համբեր նեղութեանցն առ ի շարաւուր դանձեն» (նոյն. 201—2)։

Այս սոսկալի անգթութիւններէն յետոյ «իբրեւ այնպէս քափուրք ի սոսցուածոց մնացին մերկի եւ բոկի եւ սովամահի եւ ոչ գտանէին ապրուստ ամձանց, դեմ եղեալ ցարադեմ գնային փախստայ յաբարհն Յունաց, զո-րոց ասեմ լինել զքիւ մարդկանն աւելի քան զբերկոսասան հազար արանց հանդերձ կանամբք եւ մանկատու որոց առաջնորդ Եսայուհ ի տոմի Ամա-տուեաց եւ Համամ՝ որդի նորա եւ այլ ի նախարարաց Հայոց եւ նոցիք հեծելոց» (Ղեւոնդ. 202)։ Սիւլէյման զանոնք հետապնդող գունդեր կը զրկէ, որոնք փախստականներուն կը հասնին կողք գաւառին մէջ (ըստ Օր-մանեանի Գուգարաց կողբափորը կամ արդի Ղազար գաւառը. Ազգ. 901)։ Այդ 12,000 անձերէն մէկ մասը կը կոտորուի, մէկ մասը կը դարձուի, և մաս մըն ալ կը յաջողի սահմանապարտելը անցնելով իր նպատակին հաս-նիլ։

Այդ փախստականները կը հաստատուին Բիւզանդական տիրապետու-թեան տակ գտնուող Թազարաց և Եգերացւոց երկիրները, այսինքն այս-օրուան Պոնտոսեան շրջանակը կամ բուն Լազիստանի մէջ։ Կոստանդին կայսրը, կամ աւելի ճիշդ Իրենէ կայսրուհին, լաւ ընդունելութիւն կ'ընէ փախստականներուն մէջ գտնուող նախարարներուն, անոնց հեծեալները կայսերական գունդերուն կը խառնէ և ռամիկները «բնակեցուցանէր ի բարուր եւ յարգաւանդ երկրի» (Ղեւոնդ. 203)։ Համամ կը հիմնէ Համա-մաեկը (այսօր Համաշէն), և իրենց սերունդները (Համաշէնցիք) կը տարած-ուին յետոյ բոլոր Սեւ Մովու Ասիական եզերքները։

782ին խաղաղութեամբ (վերը 217) երբ Հայաստան կը նուաճուի և երկիրը կը մնայ Արաբներու ձեռքը, Կոստանդին Չ. կայսրը (780—797) 1000 երեւելիներ և իշխաններ Պոլիս կը բերէ և իբր նախատինք անոնց ձակատը խարանելէ յետոյ, կ'աքորէ զանազան տեղեր, թերեւս իր երկի-րին սահմաններուն և մանաւանդ բանակին մէջ արտակարգ կերպով կա-րեւոր տեղ մը գրաւող Հայոց օրինակ ըլլալու համար։

Ուրիշ պատմութեան մը համաձայն, որովհետեւ Հայ գունդերը ապրա-տամբած էին Իրենէ կայսրուհիին դէմ, երբ ան կը յաջողի զոպել շար-ժոււմը, Հայ զինուորներէն հազար մը Արշիպեղապոսի կղզիները և մաս մըն ալ Թրակիոյ հեռաւոր բանակատեղիները կը ցրուէ (M. Ph. Le Bas-Asie Mineure. 503), ըստ Ֆետիւանի (ԿՈՉՆԱԿ. 1935. 582), իբր խեղ ըս-տամբակ հանելով բանակէն Արմենեակ բանակութեմին։

795ին անուանուած Խոզդրմա սուլթանին կեղեքումները, մասնաւո-րապէս դատարկութիւնները և ագարակները իւրացնելու աշխատանքը, որ անտեսական քայքայումի մը կը մատնէր շատերու բարեկեցութիւնը (Յով-հաննէս Կար. 142), ինչպէս նաեւ Խազիրներու 806ին Հայաստանը երկու-ամիս աւերելը (Noel des Vergers. Arabie. Paris. 1847. 385), անհուանա-կան չէ որ պատճառ եղած ըլլան գաղթելու, թէեւ այս մասին ոեւէ ար-ձանագրութիւն չունին մեր պատմագիրները, որոնք չափազանց յոռի գոյնն-

րով ներկայացուցած են այս ոստիկանին իշխանութեան շրջանը, երբ ուրիշներ կը ներկայացնեն Հայաստանի համար խաղաղութեան շրջան մը, ուր վաճառականութիւնը զարգացած է (Ս. Ս. Գուրեան. Հայազգի կայսերի Բիւզ. Գ. իրոնի եւ Հայաստան. Հ. ԿՈՉՆ. Կ. 1929. 1064):

Լեւոն Ե. Հայկազն կայսրը (813—820), որ Պուլկարներու դէմ մաքառեցաւ (Ա. Ալպոյ. Պատմ. Պուլկարաց 10) և յաջողեցաւ վերջապէս զանոնք ընկճել 817ին, Քրիւմի մահէն յետոյ, ինքն ալ Պաւլիկեաններ տեղափոխեց Քրակիա (Բրօֆ. Ենրտան Իվանով. Երոյն):

Այդ միջոցներուն, Բաբել կամ Բաբան Պարսիկին ձեռքին տակ միացած համայնավարներ — այն ժամանակներու բացարձակեամբ Խուռամեանները (*) — 20 տարիներ խռովեցին Հայաստանը, Ատրպատականը և Խորասանի մէկ մասը, ոճիրով, հրդեհով և աւարառութեամբ: Անոնք ըստ պատմիչին աւելի քան 255,000 իսլամներ, որոնց վեցը զօրավար: Գրեթէ Մամուն Սալիֆայի (813—833) բոլոր գունդերը որ անոնց դէմ գացին, պարտուեցան: Անիկա յաղթեց Հայաստանի Ոստիկաններուն 819էն 830, որմէ յետոյ իր բախտին անիւր զարձաւ: Մի քանի ձախողութեաներէ յետոյ, 837ին, ձերբակալուեցաւ Սահլ Սմբատեանէ և յանձնուեցաւ Աֆշինի, որ զայն տարաւ Պաղատ, ուր գլխատուեցաւ (838 Յունու...) (J. Laurent. 319, Ազգապատմութիւն 928): Իր հետեւորդներէն մէկն էր Քէոփոր, որ անոր կուսակիցներուն գլուխը անցնելով կուրը շարունակեց Արարներու դէմ, ի նպատակ Յունաց, մինչ անոնցմէ ուրիշ մաս մը, Նասրի (**), առաջնորդութեամբ անցաւ Բիւզանդեան երկիր (838ին) և քրիստոնեալ եղաւ (Michel le Syrien. 79—80):

Ոմանք կը կարծեն շատ իրաւամբ թէ այդ փախստականները մեծ մասամբ Հայեր էին որ հաւասարապէս կը տառապէին թէ՛ Բաբելի և թէ՛ Մամունի խռովութիւններէն (Finlay. History of Greece Բ. 153): Գիտենք թէ Բիւզանդացիք յաճախ Պարսիկ կ'անուանէին քաղաքական ըմբռնումով նախկին Պարսկական, և հետագային՝ Արարական բաժինի Հայերը:

Բիւզանդացի պատմիչները կը հաղորդեն թէ Բաբելի հետեւորդ Պարսիկ արքայազուն Քէոփոր անցած է Բիւզանդական հող, հետը տանելով 14,000 կամ 30,000 փախստական աղանդաւոր կամ Պարսիկ վարձ-

(*) Խուռամեանք, այս անունը առած են Արապիի մօտ գտնուող Խուռամ անուն վայրէն որ կեդրոն մըն է Մազդեզականութեան: Խուռամեան Եւրոպայի ազգանունները իմաստով մը արձագանգն էր: Ասորի մասեմագիտ Գրոնիս Թելմահէ Յակոբիկ պատրիարք (812—845) իր պատմական երկին մէջ, այս Եւրոպայ կը ճկատէ Եւրոպական Եւրոպայի Մոկամա ազգանուններն գործին, որ աւելի բազմազան-բնկչավարական Եւրոպայ մըն էր կոտորակով զգեստաւորուած: Անոնք ինչեքու եւ կիսեքու հասարակաց ըլլալը կը պատահէին եւ սեփականութիւնը կը մեծէին, առտ համար կրճած արդի համայնավարներու նախահարքը համարուի:

(**) Արար պատմիչ Յարաթի՝ Նասրի օնը Բարսի անունը կը գործածէ Ազոնց կը կարծէ թէ քրեւս կարգաւ է Նասրի:

կաններ (Գեղեցի. 176): Փախստականները կը զետեղուին Սինոպի մօտ Արմենեակ զինուորական թեմին մէջ և թոյլտուութիւն կ'ստանան կնուսթեան առնելու Հոռոմ աղջիկներ: Բաբելի զօրքերը առանձին վաշտեր (տուրմա) կազմելով կը ցրուին Բիւզանդեան զինուորական բանակաթեմերու մէջ (Կեցեքիոս. 53—57. Քեոփանէս Շարայաբեալ 110—112): Գանի մը տարի յետոյ անոնք կայսր կը հռչակեն Քէոփորը, որ իբր թէ արդէն Պարսիկութեան պատիւ ստացեր էր և կնուսթեան առերձստ ոմանց՝ Քէոփորա Հայ կայսրուհիին քոյրը՝ Իրենէն և ըստ այլոց՝ անոր տալը և Քէոփորոս կայսեր քոյրը Հելենան (Ն. Ադոնց. Բագրատունեաց փառքը. ՀԱՅ-ԲՆՆԻՔ. Է. 3. 80. և Մամիկոնեան իշխանութիւն Բիւզանդական գահին վրայ Ը. 5. 74 և 7. 84—85, Գեղեցի. 176):

Ինչ կասկածներ որ յարուցուին Քէոփորի անձին մասին, անոնց մէջ յետին տեղը պիտի չընէ այն ենթադրութիւնը թէ անիկա և իր հետ փախչողները աւելի Հայեր են, քրիստոնեայ համայնք մը, որ ապաստան կը փնտռէր իր հաւատակիցներուն մօտ (Ն. Ադոնց. ՀԱՅԲՆՆԻՔ. Է. 3. 80. նոյն. Ը. 7. 86—87): Մասնաւորապէս Քէոփորի խնամութիւնը Հայ ընտանիքի մը հետ, նշանակելի է և կարեւոր փաստ մը՝ անոր հայութեան: Անարժէք չեն նաեւ բոլոր այն նկատողութիւնները, որոնցմով Բրօֆ. Ն. Ադոնց կը միտի ապացուցանել թէ Քէոփորի և Շապուհ Ամատունիի զաղթերուն պատմութիւնները իրարու հետ չփոթուած են (ՀԱՅԲՆՆԻՔ. Ը. 7. 87):

Այս Քէոփորի պատճառով — որ ըստ Հ. Գեղեցիի (176) Խորասանէն Պարսիկ իշխան մըն էր — Քէոփորոս կայսրը (828—842) Մամուն խալիֆային հետ պատերազմի բռնուեցաւ և պատերազմին սկիզբը մտաւ նաեւ Հայաստան՝ Խաղաղաց երկիրը, ուրկէ բազմաթիւ գերիներ առնելով Բիւզանդեան երկիրներ փոխադրեց: Ասողիկ (Բ. զ. 144 ապ. Պետրոսպուրկի) կը գրէ. «Սղեւ գալուս հոռոմ սիերացն ի գաւառն Բասեան եւ զբազումս խողխողեցին սրով ի վերայ յարուցեալ զիւզախաղափին Գոմաճորայ: Իսկ Քեոփորոս գնաց ի Խաղաղիս եւ ել ի Յամախ-կամուրջ եւ գերեաց զբազումս ի Հայոց հանդերձ քնսանեոք իւրեանց եւ տուեալ զհիւպատոսարութեան պատիւն, այսինքն պալուսիպատ պատերազմեան Ատոնոյ որդոյ Շապիոյ եւ քուր ի Սպիւր գաւառի: Եւ ինքն առեալ հարկս ի Քեոփորոսացեաց դարձաւ անդրէն: Եւ ապա եկեալ հոռոմդին արանցն ի Վանաց ի գիւղն Կանճախար կոտորեցան ի ձեռս Յահակայ որդոյ Իսմայիլի: Եւ ի Երոյն ամբեմուս Քեոփորոս յԱտրիս եւ կառ զբազումս Ուրբելի եւ պատերազմեացաւ քնդ Տանկաց յԱլմուսաս (Աւմուսաս) եւ յաղթեաց: Սա ի խաղալն իւրում յարեւելս կոյս ի սահմանս Հայոց առնու զՄամուրեղ Հայոց, զԱսողիկ (=Պաղիկ) եւ զՄեծկերս եւ զԱլբերգ (?) ի գաւառին Գեղամայ (=Անգեղայ?) եւ զԽոզան եւ զՂարբոյ Հայս անպատ անէ ի մարդոյ եւ յանասնոյս:

Այս քիչ մը մտք հաստատելու, ըստ Բրօֆ. Ն. Ադոնցի (Հայրենիկ Ը. 8. 102—3) լուսարանութեան, որ հիմնուած է Միքայէլ Ատորիի (Michel Le

Syrien. Գ. 88—89) տեղեկութեանց վրայ, նկարագրին է 836—837ի թէսփիլի կատարած արշաւանքին, որուն միջոցին աւերեց Ջապեղրա (Առ. զիկի Ուրբելից) քաղաքը, Հանձիթը. Արշամուշատը և հարկապահանջութեան ենթարկեց Հայաստանը: Թէոփիլոս՝ Խաղդեաց երկիրը և Դ. Հայքը գաղտարկացնելով կը փոխադարձէր Արաբները, որոնք սովորութիւն ըրած էին գրեթէ անընդհատաբար արշաւել Փոքր Ասիա և անկէ գերիններ վերջընել թէ՛ կայսրութեան երկիրները գործող ձեռքերէ զրկելով ամայացնելու և թէ՛ իրենց հարկատուներուն թիւը աւելցնելու համար:

Ասկէ յետոյ կը պատահինք ծանր տառապանք մը եւս 851էն 855, երբ Հայաստան կ'ապստամբի և Ոստիկանը կ'սպանուի: Մութէվէքիլ, Հայաստան կը զրկէ Բուղան, ձերբակալելու համար իշխանները և ազատանի (վերը 218): Անգամ մը եւս շատեր խոյս կու տան և կ'անցնին Բիւզանդեան երկիրներ (Yakoubi Qusif. 1883. Leyde. Բ. 598 և Marquartի Oiteuropaische und Ostariatische Streifzüge. 1903. Leipzig. 413—4):

Գրեթէ միեւնոյն օրերուն, 853ին, Քէոզորա կայսրունին (842—857) սկսաւ հալածանք մը Հայ Պաւլիկեան աղանդաւորներուն դէմ, և երկար ժամանակ (853—856) հալածելէ յետոյ զաննք, Պուլկարիա տեղափոխեց (Le Museon et la revue des Religions. No. 1. 2. 3. 1897. Les Arméniens Pauliciens et les modernes Bulgares Catholiques de la Philippophten. հմմտ. Յ. Քիւրտեան. ՍՍՈՆ. 1933. 250): Այս աղանդաւորները՝ ասկաւին նոր քրիստոնէացած Պուլկարիոյ մէջ մեծ դեր կատարեցին:

Ասկէ յետոյ բուսական ատեն Արաբ-Բիւզանդեան մշտատեւ պատերազմներուն ռազմավայրը Հայաստանէն հեռու փոխադրուեցաւ: Սակաթ տեղափոխութիւնները չընդհատուեցան, նոյնիսկ 859էն՝ Բագրատունեաց՝ իշխանութեան հասնելէն յետոյ ալ, գոնէ յամբօրէն, ակարացելով և ուժասպառ ընելով երկիրը, որ որքան իր անկախութիւնը ստացած, Արաբ տարսափէն չէր ազատած և դարձեալ յաճախ ոտնակոխ կ'ըլլար Ոստիկաններու բանակներէն և կ'ենթարկուէր կեղեքումներու, որոնցմէ ճոշոպրելու համար Հայերը կը գաղթէին գունդագունդ դարձեալ Բիւզանդեան երկիրներ: Մասնաւորապէս տուրքերը, զորս Հայոց իշխանը կամ թագաւորը կը հաւաքէր և կը հասցնէր Պաղատտի Խալիֆաներուն արքունիքը, յաճախ այնքան կը ծանրացնէին Ոստիկանները որ, ժողովուրդը չէր կրնար տոկալ, և կը հեռանար իր բնիկ երկիրէն, ուր զինքը կը հալածէին նաեւ ուրիշ դժբախտութիւններ, ինչպէս բնական աղէտներ:

Այսպէս, կը յիշատակուին կարճ ժամանակի մէջ իրարու յաջորդող սոսկալի երկրաշարժներ, 854ին՝ 858ին՝ 862ին՝ 869ին և 893ին, որոնք մասնաւորապէս հարուածած են Այրարատեան նահանգը և Դուին մայրաքաղաքը:

863ի երկրաշարժը գարունէն սկսեալ երեք ամիս տեւած է (Յովն. Պար. 170. Աստղիկ. 112): Ապարանքներ և պարիսպներ փլած և շատեր փլտտակներու տակ մեռած են, և բոլոր բնակիչները փողոցներ և հրապարակներ թափած են: 869ին Դուինի երկրաշարժը մէկ տարի տեւած է

և 120,000 մարդ զոհուած է աղէտին: Իսկ 893ին պատահածը աւելի սաստիկ էր քան նախորդները, (Ք. Արծ. 259): Դուին «ի հիմանց սապալեալ» կործանեցաւ, «սեղիք սրբութեանց ... զօարժմանց կիրս» կրեցին: 70,000էն աւելի մարդիկ կորսուեցան (նոյն) որոնց թաղուած անկարելի ըլլալով քիվինս եւ ի խորափիս» կը նետուէին և աղեկտուր տեսարաններ տեղի կ'ունենային, զորս Յովհաննէս Կաթողիկոս (205) յառաջ կը բերէ իբր տկանատես:

Աստղիկ (113) կը պատմէ թէ 575ին պատահած է «մահն անագից համաթսարհական», հաւանօրէն ժանտախտի մը համաճարակին ակնարկելով, ինչ որ ոչ նուազ նշանակելի աղէտ մըն էր: Իսկ շատ աւելի ծանր հարուած մը եղած է 995 Օգոս. 19ին սկսած սաստիկ երկրաշարժը որ եթէր ամիս անընդհատ շարունակուած է, գլխաւորապէս Դ. Հայք, Հաշտեանք, Խորձեան, Մոփք, Բալու և Պաղնատուն գաւառներուն մէջ, որոնք աւերակ եղան, վասնզի «բոլորովին փլան շինուածք ամենայն ի հիմանէ դրոզեալ» (Աստղիկ. 254):

Ականատես պատմագիրը կը նկարագրէ աղէտը ըսելով թէ «հերձանց լերինք եւ պատուեցան վեմք, բացան ալբիւրք յանցողի սեղիս եւ ցամաքեցան ելք սովորական ջուրց. դաւսք ծածանէին եւ լերինք որպէս թէ առ միմիանս խոնարհէին, ծխոյ ցմանութեամբ փոռոյն ծառացելոյ զօսն լքեցի, եւ ամենայն շինուածք քաղաքաց, գիւղից եւ ագարակաց սապալեալ՝ զբնակիչսն ի ներոյ առնէին՝ մեռեալս եւ կիսամեռս գնոսա առնելով: Եւ մնացելոցն կենդանեաց նիչ լալեաց եւ վայր ողբոց ի վեր բարձրանային» (Աստղիկ 255):

Այս երկրաշարժին Բալուի բերդը ամբողջովին ինչպէս նաեւ Ճապաղուր, Աթթախ և Ամիթ բերդերը քանդուած են, ինչպէս նաեւ բոլոր քարուկիր գեղեցկաչէն եկեղեցիները և ապարանքները (նոյն):

Այս ծանր հարուածները, ինչպէս նաեւ Փ. դարուն առաջին քառորդին Յուսուֆի, Նըբրի և Պէշիրի կատարած աւերումները, կտորտածները և այլ պէսպէս չարիքները, զորս մանրամասնօրէն նկարագրած է Յովհաննէս Կաթողիկոս (277—286 և 310—318), անհետեւանք չէին կրնար մնալ և կրնայ ենթադրուել թէ շատեր գաղթած են այս աղէտներուն հետեւանօք, թէեւ այս տեսակ յիշատակութիւն մը չըլլայ մեր պատմիչներէն:

Ասիկա անխուսափելի էր, մանաւանդ երբ մտաբերենք որ կտորտածին իբր հետեւանք՝ աշխատաւոր բազուկներ պակսեցան և ասոր իբր արդիւնք՝ մշակութիւնը և երկրագործութիւնը դադարման դատապարտուեցան, և երկիրը ենթարկուեցաւ սոսկալի սովի մը որ եթէր տարի (915—922) տեւած է: Բոլոր ժողովուրդը «իբրեւ զգիակուցս գունասեալս եւ լեալս դանդաչեին» և ունեւորներն ալ պարէնի սղութենէն «ի վերջին սնանկութիւն հասանին» (Յովն. Կաթ. 327): Յետին նեղութեան մէջ «զվնասակար բանջարս» իսկ ուտելու ստիպուած «յապակաւնութիւն մահու հասանին» և նոյնիսկ «զսիրելի ողբեակս» ընդ սակաւիկ ինչ բոնկաց՝ բեմամեաց» կը վաճառէին: «Ձրնկերակիցս իւրեանց գաղտակծութեամբ... ի սպանդ վարեալ» կամ

թէ «զմանկունս իւրեանց» եփելով ուտելու կը հասնէին (Յովն. Կար. 329): Պահուած ուտելիքներ մէջտեղ հասնելու նպատակով իրարու դէմ բանութիւններ կը գործուէին (Յովն. 330), Սովին և թշնամիներու շարունակական կոտորածին հետեւանօք, դիակներ անթաղ կը դիզուէին, որոնք նեխուելով չարաչար ախտերու պատճառ կ'ըլլային և դիակեր գուշաններ և գիշատիչ թռչուններ բնակութիւններու մէջ կը թափառէին, որով դեռ եւս կենդանի եղող կիսամեռներու վրայ կը յարձակէին (Յովն. 331):

Սովին կը յաջորդէր ժանտախտը, որ կը լրացնէր ինչ որ պակաս թողած էին Արարներու սուրը և սովը:

Այնպէս որ, թէեւ երկիրը մասամբ անկախ, գերծ չէ մնացած աղէտներէ և գաղթը՝ ապահովաբար շարունակուած, թէեւ առանց արձանագրութեան մնացած, բացի միակ պարագայէ մը, զոր Չամիչեան (Բ. 836) կ'արձանագրէ: Ըստ իր տեղեկութեան, Աբաս թագաւոր երբ կը մեանի 951ին, շրջակայ երկիրներու թշնամիները քաջալերուած՝ կը մտնեն Հայոց երկիրը և ասպատակ սփռելով շատ չարիքներ կը գործեն: Այս առթիւ շատեր փախտական կ'ըլլան և ոմանք իրենց տունը տեղը ձգելով կ'անցնին ուրիշ երկիրներ՝ որոնց կարգին նաեւ Բիւզանդեանը:

Իսկ երբ Արարները տկարացան, Թուրանեան ժողովուրդներու Ասիոյ խորերէն դէպի Արեւմուտք խուժուածով և գաղթաշարժով, Հայերը ակաբեկ՝ այս բարբարոս ժողովուրդներու վայրագ յարձակումէն, ոչ միայն ապաւինեցան օգնութեանը Բիւզանդեան կայսրութեան — որ Արարներու տկարանալէն օգտուելով մինչեւ Հայաստանի սահմանները ընդարձակուած էր վերստին—այլ նաեւ անոր երկիրները գաղթեցին: Հայերը բազմաթիւ էին առաւելապէս այն զինուորական գաղութներուն մէջ որոնք Բիւզանդական կայսրերը իրենց տիրապետած երկիրներուն մէջ կը հաստատէին: Արարական ոյժին առջեւ ընկճուած մը յետոյ, երբ մասնաւորապէս Հայկական զօրքերու և Հայ տաղանդաւոր զօրապետներուն միջոցով Բիւզանդական պետութիւնը նոր փայլ մը և մեծ զարգացում կ'ստանար Արեւելքի մէջ, կարեւոր շրջափոխութիւն մը տեղի կ'ունենար Փոքր Ասիոյ արեւելեան սահմաններուն վրայ, Կիլիկիոյ և հիւսիսային Սուրիոյ մէջ՝ որոնք պետութեան սահմանները կը ներկայացնէին:

Պետութեան մէջ ներմուծուած Արեւմտեան ոգին, կայսրութեան այս զարգացման շրջանին, այս սահմաններուն վրայ կը կազմակերպէր զինուորական գաղութներ, որոնք կը յանձնուէին Ակրիթներու կամ սահմանադար իշխաններու (*): Անոնք ժառանգական տէրերն էին այդ երկիրներուն:

(*) Akrites կամ Akritas կը ծագէր akra=ακρα=սահման, եզերագծ վայր բառէ: Ակրիթները ունէին որոս արտոնութիւններ, ինքնիշխան և անկախ կեդրոնական իշխանութեան միջանկրկնութիւններէ: Անոնց առաջին կազմակերպիչը եղած է Հերակլ կայսրը: Վասիլէն յետոյ սահմաններու պատգամներ մասնաւորապէս Հայերը եղած են: Ակրիթները կարելի է բազմաթիւ եւրոպական markgrafներու կամ Marquisներու եւ Ասիական Մարզպաններու կամ Փառաններու հետ:

և ունէին իրենց ձեռքին տակ հողամաս մը և բանակ մը, որուն պարտապահութիւնն էր պաշտպանել սահմանները:

Ժ. դարուն Ասիական Ակրիթեան թեմերու գլխաւոր իշխանները Հայեր էին, այսպէս Տայքի իշխանը, Ճահանի կամ Լիւկանդիոյ, Լոզանիոյ, Միլագետքի և Կապադովիոյ իշխանները: Բացի այս սահմանապահ թեմերէն, կայսրութեան նեցուկ էին նաեւ կէս-անկախ երկիրները, որոնց ժառանգական իշխանները պատիւներ կ'ստանային կայսրերէն և անոնց ձորերը կը համարուէին: Ժ. դարուն երկրորդ կէսին, զանազան Հայ իշխաններ կը մնային իբր գաշնակից Բիւզանդացուց ընդդէմ Արարներու:

Արարները երբ մինչեւ Տաւրոս առաջացան, Եփրատի երկու եզերքներուն վրայ հաստատուած Ակրիթներուն կարեւորութիւնը աւելի շեշտուեցաւ: Այս զինուորական գաղութներուն մէջ Հայերու թիւը մեծ էր և մասնաւորապէս իրենց ծառայութիւնները՝ գովուած: Այդ գաղութներուն մէջ այնքան շատ էին Հայերը որ, Նիկեփոր Փոկաս կայսեր (963—969) մէկ օրէնքը յատկապէս Հայոց կը վերաբերէր (տես. ԼՈՒՄԱՅ. Դ. տարի. Բ. 87):

Հայկական պատմութեան մէջ ուրեմն յանկարծական երեւոյթ մը կը համարուէր Կիլիկիոյ Հայ թագաւորութեան հաստատութիւնը, մինչ հիմա կարող ենք զայն մեկնել ու լուսաբանել որոշապէս քայլ առ քայլ հետեւելով այն սոսկալի պատերազմներուն որ Ժ. դարուն վարեցին Նիկեփոր Փոկաս և իր յաջորդը՝ Չմշկիկ (969—976) Կիլիկիոյ և Ասորիքի մէջ: Հոն պիտի տեսնենք թէ ինչպէս այդ կայսրերը սուրէ անցուցին, գերեցին և աքտրեցին մահմետական բնակիչները, Հայերուն տուին անոնց հողերը, վասնզի Հայերը այդ կռիւներուն մէջ ուշագրաւ դեր կատարեցին (տես. նոյն. 58):

Ամբողջ Բիւզանդական պատմութեան այդ շրջանին առանցքը կազմող պայքարը որ զահուն շուրջը տեղի կ'ունենար Թ—Ժ. դարերուն, գլխաւորապէս կը մղուէր զինուորական մեծ դէմքերու ղեկավարութեամբ, որոնք մեծ մասամբ Հայեր են և Հայ զօրքերու օգնութեամբ կը զործեն: Ժ. դարուն Հայկական զօրաբաժինները բազմաթիւ էին և մեծապէս զնահատուած կայսերական բանակին մէջ (Ch. Diehl. CMH. Դ. 738):

«Հայեր այդ օրջանին գերագանց գունդերն էին եւ իրենց զօրաբաժինները նշանաւոր հանդիսացեր էին արդէն Նիկեփոր Փոկասի ասեմ Սուրիոյ մեզ», ինչպէս մասնաւորապէս Ապուլֆարաճի տեղեկութեանց վրայ հիմնուելով կը հաւատտէ Schlumberger (L'Épopée Byzantine. Ա. 115):

Մասնաւորապէս Կիլիկիան գրաւող բանակը կը բաղկանար մեծ մասամբ Հայերէ, որոնք ամէն ճակատամարտներու մէջ իրենց քաջութեամբ հրաշքներ կը կատարէին:

Նիկեփոր վճռած էր որ իր գրաւած երկիրներուն մէջ այլեւս մահմետականներ չբնակին, ուստի հին բնակիչները կամ կ'արտաքսէր կամ

բունի գաղթել կու տար, և անոնց տեղ կը բնակեցնէր իր զօրականները, որոնց մեծամասնութիւնը Հայ էին: Գիլիկիոյ մէջ ալ նոյնը պատահեցաւ: Մակեդոնական բնակիչներուն մեծագոյն մասը Ասորիք գաղթեց, մէկ մասն ալ Նիկեփոր տեղափոխեց կայսրութեան ուրիշ կողմերը, ուր անոնք կամ իրենց որդիները, հաւատափոխ ըլլալով ձուլուեցան տիրող ազգի մէջ: Այսպէս, երբ Նիկեփոր Մօիսը և Տարսոնը գրաւեց 965ին, հետոցան Տարսոնի իսլամ բնակիչները, իսկ անոնք որ մնալ ուզեցին, ընդունեցին քրիստոնէութիւնը: Նիկեփոր այրեց բոլոր իսլամական յիշատակարանները և գիրքերը (Յագութ. Մոսուամ էլ Պիլլատան. տես. Գ. Մըսրիանի Վեճայաթ էլ Ասեան. 63—65):

Նոյնպէս կը յիշուի թէ նոյն Նիկեփոր կայսրը Մելիտինէի դարաւմէն յետոյ զայն դատարկացուցած է իր իսլամ բնակիչներէն և ինչպէս 'ի Գիլիկիա, նոյնպէս նաեւ հոն լեցուցած է ասիական միաբնակ քրիստոնեայ ժողովուրդներ, զանոնք պատուար ընելու համար՝ Բիւզանդեան պետութեան Արեւելքի Դանուբը եզող Եփրատի այս կամրջագլուխին վերայ: Նոյնիսկ կը յիշուի թէ անիկա դրդած է Անտիոքի Յակոբիկեաններու Պատրիարքը որպէսզի յորդորէ իր կրօնակիցները որ գոն և բնակի աւերակ դարձած այս քաղաքը: Կայսրը հանդիսաւորապէս կը խոստանար չվերսկսիլ քաղաքդոնականութեան հալածանքները, խոստում մը որ քաղաքեց առիական այդ ժողովուրդը կարճ միջոցի մէջ Մելիտինէն իր աւերակներուն վրայ շատ աւելի փառաւոր կերպով վերականգնելու, ինչ որ քաղաքականապէս ահագին նշանակութիւն ունէր, վասնզի ասով Բիւզանդեան պետութիւնը պաշտպանի դեր ստանձնած պիտի ըլլար Արեւելեան քրիստոնեայ ժողովուրդներու վրայ և թէ սպասուած՝ արեւելեան սահմաններու պաշտպանութիւնը, որ անձնուիրութեամբ պիտի ընէին այդ փոքր սակայն արիասիրտ ժողովուրդները: Սակայն Օրթոտոքս կղերջխանգարեց այդ ծրագիրը, վասնզի Ասորիները հալածուեցան (Գեղեցի. 228—9) և ինչ որ ճիշդ էր Ասորիներու համար, ճիշդ էր նաեւ Հայոց համար:

Նոյնպէս, Յովհաննէս Չմշկիկ, 962ին, տակաւին Արեւելեան բանակի իրամանաւոր, երբ Արաբական երկիրները կը նուաճէ, Հայեր կը բռնակեցնէ Սեբաստիոյ նահանգին մէջ և Արաբներէն նոր առնուած Եփրատացուց շրջակայքը գանուող ամրոցներու, ինչպէս Մամբրէի, Տըլուքի (Այնթապի մօտ) և այլնի մէջ (հմմտ. A. H. Sayce. Les Hétéens. Histoire d'un empire oublié. Paris. 1891. 250):

Անտիոք նաեւ այս օրերուն Հայ գաղթականներ ընդունած պիտի ըլլայ, վասնզի Բօլլատեանց կողմէ հրատարակուած նոյն դարու վկայարանութեանց մէջ (Չամ. Բ. 858—9) կը յիշատակուի ժ. դարուն վերջին Կէսին Հայաստանէն հոն փոխադրուած Հայեր:

Չմշկիկի յաջորդը՝ Վասիլ Բ. (976—1025), հաւատարիմ հետեւող ասոր քաղաքականութեան կամ աւելի ճիշդը, Բիւզանդեան պետութեան և Օրթոտոքս եկեղեցիին ընդգրկած ուղղութեան, օգտուելով այն փայլէ

որ ինքն կրցաւ տալ պետութեան դէպի Ասորիք և դէպի Հայաստան իր բանակներուն յառաջացումով, իրեն սպաւինող Հայերը քաղաքեց, ասոնց տեղեր տուաւ, նենգ դիտումով մը որ Հայերը հասկնալէ հետուէին: Անոր նպատակն էր ջնջել և տկարացնել Հայ իշխանութիւնները, որպէսզի Հայերը օրթոտոքսացնել դիւրին ըլլար, իսկ Հայ իշխանութեանց ջնջումէն յետոյ՝ Հայերը տեղափոխեց, որպէսզի օրթոտոքս զանազաւաններու մէջ անոնք սուղուին և անոնց տեղը փորձեց լեցնել Պուլկարներ:

Այսպէս, կը յիշուի որ Ասորիքի մէջ Արաբները երբ կը լքեն իրենց բնակավայրերը, չուզելով քրիստոնեայ պետութեան ենթարկուիլ, անոնց տեղերը Հայեր կը բնակեցնէ, ինչպէս, օրինակի համար, Սուրիական Կեսարիոյ կամ Chaizarի (Որոնդէս գետին վրայ) մէջ, զի Արաբ բնակչութիւնը լքած էր քաղաքը: Վասիլ, անոնց տեղ, բերաւ հոն տեղաւորեց 999ին, Հայ գաղթականներ որոնք վերստին ծաղկեցուցին քաղաքը (G. Schlumberger. l'Épopée Byzantine à la fin du dixième Siècle. Paris. 1851):

Ժ. դարուն անցքերուն վրայ խօսելով, Միքայէլ Ասորի (Michel Le Syrien Գ. 198) կը հաստատէ այս իրողութիւնը. ըսելով թէ «Այդ դարուն երբ Յոյները կը գրաւէին Արաբներէն Կապադովկիոյ, Հայաստանի (Իմաֆոք Հայք) եւ Սուրիոյ մեզ քաղաքներ, կը քաշէին եւ կը բերէին Մեծ Հայաստանէն ժողովրդեան բազմութիւն մը: Անոնք կը հաստատուէին այդ տեղերը եւ կ'աճեին»:

Վասիլ Բ.ի այս քաղաքանութիւնը իր խորքին մէջ ահարկու սխալ մըն էր որ իր աղէտալի հետեւանքները ունեցաւ թէ՛ Հայաստանի և թէ՛ Բիւզանդիոնի համար, վասնզի Հայ իշխանութեանց ջնջումը ի վերջոյ անխուսափելի դարձուց՝ Հայաստանի ոտնակոխումէն յետոյ՝ բարբարոսներու Բիւզանդեան երկիրներն ալ մտնելը, հակառակ Վասիլի ձեռք առած կանխահոգ միջոցներուն և իր յաջորդներուն ջանքերուն, որոնք մինչև 1045 հազիւ զօրեցին տոկալ թշնամիներու յարձակման, շնորհիւ ընդ տարրերու անձնուիրութեան:

Սէ Բիւզանդիոն դէմ առ դէմ եկաւ բարբարոս Արեւելքին, երբ արդէն քանդուած էին Հայկական բարձրաւանդակին պատուարները՝ Հայ անկախ պետութիւնները, որոնք այնքան եռանդով պաշտպանած էին իրենց երկիրը:

Յոյները գձուձ հաշիւներով և տխմարութեամբ ո՛չ միայն քանդեցին կայսրութեան պաշտպանութեան այդ գեղեցիկ ամրութիւնները, այլ նաեւ ինայողութեան անուշով արձակեցին 50,000 Հայ և Վրացի զինուորները որոնք երկիրը կը պաշտպանէին (Գեղեցի. 287): Այս պատճառով, իրաւամբ ամբաստանուած է Կոստանդին Մոնոմախոս (1042—1054), որ կայսրութեան պաշտպանողական ոյժը պակսեցնելով Փոքր Ասիոյ մէջ, անոր գուռները բացած է բարբարոսներու առջև (Kékaumenos. Strategicon. 1896. Petersbourg. Մ. Աստալիատէս, Պատմ. Bonn. 1853. 44 և 80, Կենգ-

բինս Բ. 609. Չոնարաս ԺԷ. իը. 647. Կլիկաս. 598) և աւերակ դարձուցած է երկիրը (Փսիլլոս. 240, Kékaumenos. ՄԾ) զինուորական ծառայութիւնը և տեղական պահակազօրքերը (միլիս) փոխարինելով տուրքով մը :

Յոյները անմտութիւնը ունեցան նաեւ կրօնական հալածանքներով և ծանր հարկերով Հայ ազգին ատելութիւնը գրգռելու և բարբարոսներու զօրքը այս կերպով եւս դիւրացնելու : Այսպէս, զանազան շիւ հաշիւներով զինաթափ ըրին կայսրութեան արեւելեան սահմանը և պատճառ եղան սի աղէտներուն զորս շատ լաւ նկարագրած է ժամանակակից ողբասոց պատմագիրը, Արիստակէս Լաստիվերոցի, որ Մոնոմախոսի վրայ գրելով, կ'ըսէ թէ «միտ ուսելեաց եւ բւիպելեաց պարապեալ, զաղբիս մեծացուցանէր եւ զգանձս, որ ի հարկաց ամենայն աշխարհաց ժողովէր, զոր պարտքեր ի պէս հեծելոց բաշխել եւ բազմացուցանել հեծելագօրս ընդդէմ բեմամեաց՝ որ զաշխարհս ի խաղաղութեան կարէին պահել յաղթելով բեմամեացն, որպէս առնէր երանելին Վասիլ յիսուն ամ թագաւորեալ, ետ ի բեմամեաց համարձակեցաւ յաշխարհն նորա մտանել իսկ սա զգանձս զոր ժողովէր, ի բոզից ծախսն վճարէր եւ ոչինչ ցաւէր նմա աշխարհի աւերումն... : Վասն որոյ համարձակեալ բեմամեացն որպէս գայլք փաղցեալք սրբ յորժամ գտանն զհօսն առանց պահապանի՝ յանխնայ կոտորեն, նոյնպէս եւ ՚ի սորա ժամանակս եղել յարեւելից եւ յարեւմտից առհասարակ կործանումն Քրիստոնէից...» (Լաստիվերցի. 1844 Վեներիկ. 72) :

Ասով հանդերձ, պէտք է նկատել թէ մինչեւ Իսահակ Կոմնենի գահէն հրաժարումը (1059), Բիւզանդական բանակը մնացած է լաւ և իր զօրավարները բաւական (Laurent. Byzance et Les Turcs Seldjoucides dans l'Asie Occidentale jusqu, en 1081. Paris. 50—55) : Սակայն բարբարոսներու ճնշումը այնքան զօրաւոր էր որ, Բիւզանդիոնի ջանքերը անբաւական կու գային յաճախ պաշտպանելու Հայաստանը, որուն բնակիչները, ատելով հանդերձ Յոյները, նորէն Բիւզանդական երկիրներ զաղթել կը պարտաւորուէին, ուր անոնք կ'ընդունուէին և կը տեղաւորուէին, և նոյն իսկ կ'ստանային ճորտական իշխանութիւններ, միշտ նենգ դիտումներով, որոնց վախճանական նպատակը ուրիշ բան չէր եթէ ոչ Հայերը հնազանդեցնել Պոլսոյ Տիեզերական Պատրիարքին :

Արդարեւ, ԺԱ. դարուն, երբ ասպարէզ կու գան վայրենի ու զազանարոյ Սելջուկ տապաւակները, և ճեղքելով Կեդր. Ասիայէն մինչեւ հոն ասրածունած երկիրները, Հայաստանի արեւելեան կողմը կը հասնին, Հայերը դարձեալ կ'ապաւինին Բիւզանդական կայսրութեան երկիրները, ուր այս անգամ կը զաղթեն զանգուածներով :

Հազիւ բարբարոս Սելջուկներու առաջին հարուածները Հայաստանի արեւելեան ծայրագաւառին՝ Վասպուրականի վրայ զգալի եղած, Սենեքերիմ Արծրունի թագաւորը (1003—1026+), վաչկատուն և վայրագ ցեղերու կողմէ զօրծաղրուած արշաւանքներէն տաղնապած և Վասիլի զօրութենէն հրապուրուած, որոշեց իր երկիրը Յոյներուն ընծայել և իր

ժողովուրդին հետ զաղթել Բիւզանդեան երկիրներ (1016) : Իր Դաւիթ որդին Պոլիս եկաւ այս առաջարկը Վասիլ Բ.ի ներկայացնելու համար : Վասիլ ընդունեց, հաւանօրէն իր մտադրութեանց համաձայն գտնելով զայս : Յոյն ժամանակակից պատմագիր Կեդրենոսի համաձայն, Սենեքերիմ Յունական հողեր կ'անցնէր 400,000 հպատակներով, աւելով Վասիլի 10 քաղաք, 1000 գիւղ և 72 բերդ :

Միջայէլ Ասորի, որ ժամանակով շատ ուշ չէ, զի հազիւ 100 տարուան շրջան մը զինքն կը բաժնէ այդ տեղափոխութեան ատենէն, կը պատմէ թէ «1300ից (=990) սկսաւ Հայոց գաղբը Մեծ Հայքէն եւ ամենեկն առաջ Կապադովկիոյ Երջանէն : Եւ Վասիլ կայսրն է որ Հայոց ձեռքէն առաւ Սենեքերիմ թագաւորին երկիրները եւ առնց փոխարէն տուաւ Կապադովկիոյ Սեբասիան : Հայերը բազմացան այս կողմերը եւ անկէ է որ տարածուեցան բոլոր Կապադովկիան, Կիլիկիան եւ Ասորիք» (*) (Michel Le Syrien. Գ. 133) :

Այս տեղափոխութեան յիշատակութիւնը կ'ընեն նաեւ Հայ պատմագիրները ժամանակագրական կարգով Լաստիվերոցի (14), Ուռհայեցի (57—59), Սամուէլ Անեցի (104), Վարդան (92), Կիրակոս (53), Սմբատ (46), Թովմա Արծրունի (345—6) և վերջապէս Յայսմաուրք. ամէնքն ալ գրեթէ համաձայնութեամբ կը հաստատեն որ Սենեքերիմ ստացած է «Սեբասիան եւ որ տուրջ գնովաւ գաւառք» (Լաստի. 14) : Սեբաստիան, որ կը տրուէր Սենեքերիմի, արդէն կ'իտահայ բնակչութիւն մը ունէր (Գեղեցբ. 263) և այս զաղթականութեամբ անիկա կը դառնար բոլորովին Հայ քաղաք մը :

Յունական նենգութեամբ երբ Բագրատունեաց թագաւորութիւնը և Հայ միւս իշխանութիւնները հեռզհեռէ անշքացան և ջնջուեցան, Հայերու դէպի Կապադովկիա խուժումը, կամայ կամ սկամայ աւելի մեծ համամտութիւն առաւ Գիտենք պատմութենէն թէ Յովն. Սմբատ, դառնացած Վասիլ Բ.ի դէմ, որ իրեն դէմ հանած էր իր Աշոտ եղբայրը — անշուշտ Հայ թագաւորութիւնը սկարացնելու դիտումով — դէմ ելաւ կայսր, Վրաց Գէորգի թագաւորին հետ, սակայն չարաչար պարտուելով, պարտաւորուեցաւ ինքն ալ Բիւզանդիոնի գերիշխանութեան ենթարկուիլ և յանձն առնել՝ իր մայրաքաղաքը՝ Անին կտակել Յունաց (1022) : Ազգը, որ անգիտակ էր այս անխորհուրդ և ազգադաւ կտակէն, իր մահէն յետոյ ընդդիմացաւ Անիի յանձնումին, որուն համաձայն կուտակեցութիւն մը ստեղծել յաջողած էին Յոյները :

Վեոտ Սարգիս. Բիւզանդական ոսկիէն և նենգութենէն շլացած, Հայաստանի մէջ ստեղծեց անսխորժ գրութիւն մը և կուտակեցական պայ-

(*) Հայերէն թարգմանութեան մէջ (Միխայէլ Ասորի. 1871. 411) որ համառօտութիւն մըն է, այս հաստատելիս, սակայն սա տղերք նոյն կը հաստատեն շարժառեգութեան Հայոց, որ յաւուրս Վասիլ կայսրի եկեալ էին ի Վասպուրականէ և բնակեալ ի Սեւաստ եւ ի Կեսաբիտ եւ ի Խաւատանէթ, եւ բաճացեալ ունէին զբազում տեղիս :

քարներ, որոնք նպաստեցին Հայ և Յոյն առեկռթիւնը սրելու, վասնզի յոյն քաղաքականութեան գործիք եղողներուն և անոնց հակառակորդներուն պայքարը տեսակ մը քաղաքային պատերազմի ձեւ առաւ:

Հայրենասէրներ՝ կը մաքառէին Անիի պաշտպանութեան և Հայ առեկռթեան համար, մինչ կային ուրիշներ որոնք երկիրը յունական տիրապետութեան տակ դնել կը ցանկային:

Հայոց մեծամեծները միացան և թագաւոր կարգեցին 18 տարեկան Գագիկը, որ ազգային կուսակցութեան պետերէն՝ Գրիգոր Մագիստրոսի հետ յաջողութեամբ կռուեցաւ Սելջուկներուն դէմ: Բայց հազիւ թէ կոստանդին ամրացաւ գահուն վրայ, 1044ին նենգութեամբ Գագիկ Բագրատունին կանչեց Պոլիս և տարի մը յետոյ Յոյները Անին առին:

Գագիկ, Կեսարիոյ մօտ Պիլու քաղաքը ստացաւ, իբր ճորտ Բիւզանդեան պետութեան և պատուաւոր աքսորի մը դատապարտուեցաւ: Բագրատունեաց այս վերջին շառուիղը որ կը փոխադրուէր Արգէտի շուրջը, անշուշտ մինակը չէր որ եկաւ հոն հաստատուի: Եթէ Սենեքերիմ Արծրունիի պէս անագին բազմութիւն մը չունէր իր հետը, սակայն անշուշտ ունէր իր հաւատարիմ հետեւորդները, որոնք իրեն հետ պէտք է տեղափոխուած ըլլան Կեսարիոյ մօտերը:

Գագիկի տեղափոխութենէն յետոյ ուժերը ջլատուեցան և բնիկ Հայ իշխաններէն, շատեր հեռուեցան հեռացան, և ստուարացուցին Հայերութիւնը Բիւզանդական երկիրներու մէջ: Այսպէս, Կարսի թագաւորը՝ Գագիկ զգալով իր տկարութիւնը բարբարոս անեղ հոսանքին սուջեւ, ինքն ալ իր տէրութիւնը տուաւ Բիւզանդիոնի և փոխարէնը առաւ Մամիղաւ քաղաքը (Ուռհայեցի. 130—131, Սամուէլ Անեցի 109), նոյնպէս Արգէտի ստորոտը և Կիլիկեան Տաւրոսի երկրամասին մէջ, որ շուտով Հայ ազգին համար երկրորդ հայրենիք պիտի դառնար: Այսպէս վերջ կը գտնէին Հայ թագաւորութիւնները, Հայաստանի հողին վրայ և կը փակուէր Արաբական տիրապետութեան շրջանը:

Ինչպէս տեսնուեցաւ պատմութեան էջերուն այս թղթատումէն, Հայ և օտար պատմիչներ, արձանագրած են պատմաբար և անցողակի գաղթերը զանազան խումբերու կամ պատմած են դէպքեր որոնք մակարեւորաբար մեզի ենթադրել կուտան ուրիշ տեղափոխութիւններ, կատարուած «Հայոց աշխարհ»էն դէպի Բիւզանդեան երկիրներ: Բայց ասոնք բացարձակ կերպով հեռու են ամբողջ պատկերը ներկայացնելէ գաղթային հոսանքին, որ մէկով երկուքով չէ կատարուած՝ այլ գունդագունդ և զանազան խումբերու կերպով, և կարծես թէ լեցուցած է Բիւզանդական երկիրները Հայերով: Եթէ այսպէս չըլլար, անըմբռնելի պիտի մնային շատ մը իրողութիւններ, դէպքեր, երեւոյթներ և շարժումներ որոնք Բիւզանդական սահմաններուն մէջ տեղի ունեցան, Հայերու մասնակցութեամբ, անոնց ներշնչումով և անոնց գերազօր ու ուժեղ ազդեցութեան շնորհիւ: Առանց Հայկական տարրին գերակշռութեան, կայսրութեան հողերուն վերայ, բացարձակ կերպով անմեկնելի է է. դարէն սկսեալ Հայոց անփո-

խարինելի ազդեցութիւնը, որ հետզհետէ շարունական և հետեւողական բարձած է, ինչպէս կը դիտէ Բրոք. Պըսըլ (The Roman Empire from 81 to 1081. London. 1910. 340): Արդարեւ այս շրջանին «մեծ բանակաբեմբուն հրամանատարներ անոնք էին, օրհնադրական, զինուորական, էլեւժական բարեմորոգումներուն մէջ իրենց դերը ունեցան, նամապատեմբան եւ վանական կուսակցութեան դիմ անդադար կուրեցան» (նոյն. 110), և այսպէս ոգի ու կեանք տուին բովանդակ կայսրութեան, զայն երիտասարդացնող տարրը հանդիսանալով:

Ձի կար մարդ մը որուն մէջ Հայերը փայլած չըլլային, չի կար ապարէզ մը ուր Հայը ինքզինքն ցոյց տուած չըլլար, չի կար գործ մը, աղէկ կամ գէշ, որուն մէջ Հայերը մասնակցութիւն մը ունեցած չըլլային: Անոնք գրաւեցին երկար ատեն ո՛չ միայն կայսերական գահը, անշուշտ իրենց ցեղակիցներու մեծ ոյժին վրայ յենած, այլ գրաւեցին ցամաքային և ծովային բոլոր զինուորական բարձրագոյն պաշտօնները. անոնք բազմեցան Օրթոթոքս եկեղեցւոյ Տիեզերական պատրիարքութեան գահուն, ինչպէս նաեւ շատ մը թեմերու եպիսկոպոսական աթոռներուն վերայ. անոնք փայլեցան նաեւ մտաւորական մարզին մէջ, և վերջապէս ցոյց տուին ելեւմտական և վարչական ձիրքեր:

Այսքան հզօր ու տարածուած ազդեցութիւն մը ինքնին մակարեւել կուտայ Հայերու անսովոր թիւ մը, որ արդէն մինչեւ է. դար մեծ համատարութիւն ստացած էր:

Պըսըլ իրաւամբ սա ապշեցնող յայտարարութիւնը կ'ընէ իր պատմութեան աւարտական գլուխին մէջ (Ժ, 465) «Անկարելի է համառօտակի հրաժեշտ սալ այս ցեղին որուն բնածին հաստատուն յասկանիւթներ կայսրութեան վրայ իրենց անցնելի դրոժը սպաւորեցին, աւելի քան կիսով չափ երկիրն բնակչութեան տեղը լեցուցին, եւ հնարաւոր բոլոր մեծ աւասական վերկենցալումը կ'ունենեանց եւ Պալետոլոքեանց որով կրցաւ տարուակել, տեւել «Հոռոմ» սիրապետութիւնը դեռ իբր կես հազարամեակ մը եւս:

Պատմական իրադարձութեանց շրջապակապութիւնը խորապէս ուսումնասիրողները քաջ խելամուտ են քե ի՛նչ մեծ նշանակութիւն ունեցաւ Արեւմտեան քաղաքակրթութեան համար այս հինգ դարերու տաճարած ժամանակամիջոցը՝ Արեւելեան հոսանքներու խուժումն պահպանուած՝ որով ժամանակ ունեցաւ ուժ կապելու եւ բարգաւաճելու մինչեւ այն օրը երբ Կ. Պոլիսի անկումը աւելի մօտ բերաւ իրեն սպառնացող փոքորիկը:»

Արդարեւ, կենսական ու քաղաքակրթութեան պատմութեան համար ամենաբարձր նշանակութիւն ունեցող այս գերը կատարեցին Հայերը, իբր վարիչները և առաջնորդները այդ մեծ պետութեան և մանաւանդ անոր զինուորական ոյժին առաջնը: Եթէ իրենց որակական բարձր արժէքը ծնունդ տուաւ զեկավարներու, իրենց թիւն էր ապահովաբար որ այդ մեծ դէմքերուն թիկունքը, մանաւանդ անոնց մեծ մասին յենակէտը հզօղ բանակին շարքերը լեցնող տարրը:

Այնպէս որ, Հայերու թուական գերազանցութիւնը անժխտելի էր բովանդակ կայսրութեան մէջ:

Կրնայ առարկուել թէ նախընթաց դարերու Բիւզանդեան երկիրներ փոխադրուած Հայերը սոճած են և անոնք կատարած՝ այդ շատ ազդեցիկ գերը, որ է. դարէն ժԱ. ունեցած են Հայերը կայսրութեան մէջ: Սահայն այս կարծիքը ճիշդ չի կրնար ըլլալ, վասնզի մինչեւ Չ. դար կայսրութեան մէջ գտնուող Հայերը, շատոնց օտարացած էին իրենց ազգութենէն: Անոնցմէ մաս մը, Գ. դարէն սկսեալ, դուրս մնացած էր անկախ Հայաստանի սահմաններէն, և առաջին օրերէն Յոյներէն կրօնապէս չէր բաժնուած և յարած՝ Հայաստանեայց անկախ եկեղեցիին, իսկ Հայաստանի այն մասին Հայերը որոնք Բիւզանդիոն խլած էր Պարսիկներէն և անոնք որ Պարսկահայաստանէն գաղթած էին, սահող երկար ժամանակամիջոցին մէջ ընկնուած էին յունական ձեռնարկներով և հալածանքներով, և ընդունած՝ Պոլսոյ դաւանանքը, ինչպէս նաեւ հնազանդած՝ կայսրութեան ընդհանուր օրէնքներուն և կաղմակերպութեանց, և յունացած:

Չ. դարուն երբ Հայաստան բաժնուեցաւ Բիւզանդացոց և Պարսից միջեւ, Կաթողիկոսը մնաց Պարսից կողմը: Եւ Բիւզանդիոն որ փորձած էր Ե. դարուն իսկ իրեն հպատակ Հայերը հանել Հայոց կաթողիկոսին իրաւասութենէն (Սորենացի. Գ. ծէ), և նոյնիսկ կարգած էր Հաւուկ Կուկուրուցի. 80), անգամ մըն ալ փորձեց, իրեն հպատակ Հայերը անջատել: Այսպէս, ինչպէս տեսնուեցաւ (վերը 149), Մօրիկ, Յունական բաժինին, Կաթողիկոս նշանակեց Յովհաննէս Բագարանցին (590—611) (Սեբրիս. Թ. 85. Ասողիկ. 87. Յովհաննէս Կար. 93—95) որ, ինչպէս Սեբրիս բացորոշ կը հաւատէ, կապուած էր ուղղակի Պոլսոյ Յոյն պատրիարքութեան: Նոյն կացութեան մէջ էին մասնաւորապէս Բիւզանդական Հայաստանի, բայց մասնաւոր արեւմտեան Փոքր Ասիոյ և մասնաւորապէս Փոքր Հայքի Հայոց եպիսկոպոսները, վասնզի ուրիշ կերպ չէին կրնար ընել, իրենց հօտին հետ իրենք ալ կայսերական եկեղեցիին միութենէն անբաժան մնացած և ստացած կամ աւելի ճիշդ՝ ձեռնարկուած ըլլալով:

Այսպէս, Բիւզանդական կայսրութեան Հայերուն և իրենց պարսկական ու սպասարական Հայաստանի եղբայրներուն միջեւ կրօնական պատճառներով՝ քաղաքական սահմանադրութիւններէն աւելի լուրջ բաժանում մը ստեղծուած էր և գոյութիւն չունէին այն սովորական յարաբերութիւնները և կապերը որոնք առհասարակ ունին տարբեր պետութիւններու հպատակող նոյն ցեղին պատկանող անձերը: Հայաստանի մէջ Հայ-Հռոմէները նման բուն Յոյներու, կ'անարգուէին, վասնզի իրապէս Յոյներէն տարբեր զգացում մը չունէին հանդէպ Մեծ Հայքի իրենց ցեղակիցներուն (հմտ. Laurent 195—6):

Այս Հայերը՝ Պարսից բաժինի և Հայ եկեղեցիին հաւատարիմ Հայերէն կը նկատուէին ուրացողներ, վասնզի իրենց հաւատափոխութեամբ, իրենց ազգութենէն հեռացած, Յոյն կը նկատուէին նոյնիսկ է. դարէն ա-

աջ: Ուստի անկէ յետոյ գաղթող Հայերն էին որ կրնային իբր Հայ դեր մը կատարել կայսրութեան մէջ, ուր անշուշտ նախապէս գաղթող և Հայ-Հռոմ դարձած Հայերն ալ դեր կատարած են, առանց սակայն իբր հայապատկան իրենց գործը յատկանշուելու և մասնաւորուելու:

Ասոր համար է որ կարելի է պնդել առանց սխալած ըլլալու երկիւղին, թէ է. դարէն մինչեւ ժԱ. դար, Հայոց գաղթը, Հայաստանէն դէպի Գրիստոնեայ երկիրներ, շարունակուած է աւելի մեծ թափով մը և Հասիքը գունդագունդ դիմած են «Հռոմ» երկիրներ որոնց «Յոյն» բնակչութիւնը կը նուազէր շարունակ, անդադար պատերազմներու, ծանրացող անտանելի սուրբերու, հողային անարդար դրութեան և կեղեքումներու հետեւանօք: Այս անհանդուրժելի պայմաններուն զուգընթաց՝ իբր հետեւանք բարքերու ապականութեան, մանկասպանութիւնները և վիժուումները գաւառներու մէջ կ'ստեղծէին բնակչութեան նուազում, զոր մօտակայ Հայ առոյգ և բազմածին տարրը յօժարութեամբ կու գար դարմանել, լեցընելով այդ պակասը, հեռանալով իր երկիրին մէջ տիրող Արաբներու բռնութիւններէն և կեղեքումներէն (հմտ. Գ. Ֆնագլեան. 2. ԿՈՉԱԿ. 1935. 582): Այսպէս Հայերը կ'ունենային արտասովոր աճում մը Բիւզանդեան կայսրութեան ամէն մասերուն մէջ, ուր իրենց սխաղաղ թափանցումը, միմիայն բացառիկ ձեռնբեցութեամբ, արժանիքով օժտուած նշանաւոր անհատներու կամ արչաւախումբերու եկւորութեամբ չեղաւ, այլ զանգուածներու տեղափոխութեամբ (Յոյն): Եստ որոշ է որ է. դարու կէսէն յետոյ երբ Արաբները Հայաստանի հողին վրայ ոտք դրին և սկսան իրենց ճնշումները և կեղեքումները, Հայերը դարձեալ իբր փրկութեան կայան դիմեցին Եփրատի արեւմուտքը տարածուած երկիրները, հակառակ անոր որ դառնացած էին Բիւզանդիոնի գէմ: Մասնաւորապէս Հայաստանէն դէպի Բիւզանդեան երկիրներ գաղթը մեծ համեմատութիւններ առաւ երբ Ը. դարուն կիսուն Կոստանդին Ե. Կոպրոնիմոսի ձախողութենէն (760) յետոյ Հայերը Արաբներու ձեռքը մնացին: Գոտմութիւնը դժբախտաբար շատ քիչներուն գաղթը կը յիշէ մինչ անոնք թիւ և համար չունին: Ասոր համար զարմանալու չէ, վասնզի Հայ և Վրացի իշխանները, ռեւէ ծանր ձախողութեան պարագայի, իբր գերագոյն ապաւէն սովորական բան մը կը համարէին Բիւզանդեան հող անցնիլը (Laurent. 192), ինչ որ մեր պատմիչները իբր անկարեւոր իրողութիւն մը պէտք չեն տեսած յիշատակելու:

Ասկէ զատ, նախարարական տունները հաւանօրէն չէին ուզեր յիշել իրենց անդամներուն Բիւզանդեան երկիրներ անցքը, տեսակ մը նուազութիւն համարելով այս փախուստը, և որովհետեւ առհասարակ պատմագիրները, նախարարական տուններու հետ կապ ունեցած կամ անոնցմէ վարձուած էին, զգուշացած են պատմել իրենց պետերուն փախուստը, թէպէտեւ ստէպ ստէպ և բազմաթիւ գաղթող նախարարներ և իշխաններ եղած են:

Անոնք անցած են սահմանադրութիւն իրենց ընտանիքներով, հետեւորդ-

ներով և զինուորներով, և յաճախ նոյնիսկ իրենց հպատակներուն մտ
 մասով: Իրենց օրինակին հետեւած պէտք է ըլլան նուազ կարեւոր տա-
 նուաւորներ և բազմաթիւ ստակականներ: Ամէն պարագայի մէջ, անվիճիկ
 է թէ Բիւզանդեան երկիրները ընդունած են տեւականօրէն Հայ գաղթա-
 կաններ, մեծամասնութեամբ նախարարներ, ազնուականներ և զինուոր-
 ներ: Այս Հայ մեծամեծները կու գային քրիստոնեայ կայսրութեան հոգե-
 բուն վրայ վերջնականապէս հաստատուելու կամ ժամանակաւորապէս ա-
 պաստանելու: Երկու պարագային ալ, իրենց եկած ատեն, հոն կը գտնէին
 փութկոտ ընդունելութիւն մը: Կայսրը զանոնք կ'ընդունէր իր իրեն վե-
 բադարձող հպատակներ, և անոնց պետերուն կու տար դրամ, բնակավայր
 և պատիւներ, ինչպէս նաեւ արքունական պալատին մէջ պաշտօններ: Ա-
 նոնց կը վստահէր բանակներ և նահանգներ, և կը հաստատէր զանոնք
 Կապադովկիայէն և Փոքր Հայքէն մինչեւ Սպեր, Գուգարք և Կողքիօ
 եզերքները՝ սահմանադրութիւններու վրայ, ուրկէ անոնք կրնային սպանալ
 կամ դիմադրել Արաբներուն, և ընդհանուր կերպով անոնց զինավարժ-
 ներէն կը հայթայթէր իր բանակներուն գերազանց զինուորներ: Կայսրը
 հասարակ ժողովուրդէն գաղթականներուն կու տար բնակութեան և մշա-
 կութեան հողեր և սուսնաձայնորհներ, զօրացնելու համար Արաբ սահմա-
 նադրութիւն վրայ Հայ տարրը՝ որ հետզհետէ կը գրաւէր Տաւրոսի ամբողջ
 երկայնքը:

Հոն, այդ դարանակալ սպասումի և մշտատեւ կռիւներու ու յարձա-
 կումներու կեանքը, պաշտպանութեան տեւական ճիգերը, լայն սապարէզ
 կը բանային Բիւզանդեան երկիրներ գաղթող և զանոնք լեցնող մարտա-
 կան ոգիի տէր, վստահները արհամարհող և արկածներու սիրահար Հա-
 յերու առջեւ: Այսպէս, անընդհատ յարաբերութիւն կար Բիւզանդիոնի և
 Հայաստանի միջեւ և միշտ տեղափոխութիւն բնակչութեան դէպի Բիւ-
 զանդեան երկիրներ, որոնց մասնաւորապէս Եփրատի արեւմտեան կողմի
 երկիրները կը լեցուէին Հայերով: Տակաւին է. դարուն Մելիտինէի և
 Կեսարիոյ միջեւ տարածուած լեռնային շրջանակը հայաբնակ երկիրներու
 ծիրին մէջ կը համարուէր, և Կապադովկիան ունէր շատ ստուար Հայ
 բնակչութիւն, այնպէս որ երկիրը՝ Հայաստան կը նկատուէր, ինչպէս կը
 հաստատէ հայատեաց և նախապաշարեալ Յոյն մը (Sathas. Les exploits de
 Degenis Akritas. Paris. 1875. LXIX) որ Ը. դարուն սկիզբները գրած է
 թէ Հայերը՝ «յոյն կայսրութեան եփացած զաւակներ, գրաւած էին Կապա-
 դովկիան, հոն հիմնած էին զինուորական գաղութներ եւ նուսասացրելու
 համար ազգային սարք, հարկադրած էին իրենց անուց բոլոր նահանգիս»:
 Այս տողերը թէեւ չարամիտ ոգիով գրուած, շատ հեռու չէին ճշմարտու-
 թենէ: Հայերը՝ Հայաստան շինած էին այդ հողերը և Ժ. դարուն առաջին
 կիսուն, Փոքր Ասիոյ մէջ ծայրէն միւսը, Հայաստանէն մինչեւ Բիւզան-
 դիոն, բոլոր քաղաքներու մէջ առհասարակ հաստատուած էին Հայերը,
 Հայաստանի սահմաններուն մօտ շատ աւելի ստուարաթիւ և հեռուները
 աւելի նօսր:

Ապահովաբար այս պատճառով է որ նոյն դարուն ապրող Յոյն պատ-
 մագիր Կեդրենոս ո'չ միայն Կապադովկիոյ այլ նաեւ Պոնտոսի համար
 «Հայաստան» բառը կը գործածէ, երբ այլեւս գաղթած էին գործածութենէ
 բոլոր Փոքր Ասիոյ քաղաքային բաժանումներուն հայկական յորջորջում-
 ները և Արմենեակ բանակաթեմը՝ գոյութենէ, հակառակ որ Բիւզանդեան
 Ասիական գաւառներու բնակչութեան իսկական մեծամասնութիւնը Հայեր
 էին Կոստանդին Միքանածին (Քեմուրայի. 19), նոյնպէս Ժ. դարուն, կը
 հաստատէ թէ Կողոնիոյ երկիրը (Գոյլ կամ Լիւկոս գետին հովիտը) բը-
 նակուած էր Հայերէ, և Կեսարիոյ և Մելիտինէի միջեւ գտնուող Լիկան-
 քոս քաղաքը, ի վաղուց հետէ հայկական քաղաք մըն էր, որուն անունն
 իսկ կը հաստատէր ազգութիւնը (Յոյն. 33):

Պոնտոսի — որուն մասը կրնայ համարուել Կողոնիան — հայացումը
 նաեւ կը հաստատուի Ռոմանոս Լեկաբենոս կայսեր (920—944) ժամանակ
 պատահած Պոնտական ապստամբութեան մը փորձէն, որուն գլխաւոր դե-
 բակատարները Հայեր էին: Խաղաղաց և Պոնտոսի կառավարիչ Հայ Վար-
 ղան Վուզ կամ Վարդ Բոյլ տեղացի Հայ հարուստներուն ապստամբելու
 խորհուրդ կու տայ՝ խոստանալով օգնութիւն ընձեռնել: Հարստութեամբ
 մեծահաշակ վաճառական մը, Տաճատ «Ճանճ» Բարբերդցի Աղբիանոս Խաղ-
 ախցիին հետ միանալով՝ յարձակեցաւ Բարբերդի վրայ, տիրեց և հոն ամ-
 բացաւ, սակայն Յովհաննէս Գուրգէն կամ Կուրկուսաս հռչակաւոր Հայ
 զօրավարը, այս ապստամբութիւնը ընկճեց:

Աղբիանոս — որ աներն էր Ռոմանոս կայսեր Կոստանդին արղւոյն —
 բռնուելով իր աչքերը կորսնցուց, իսկ Տաճատ «Ճանճ» Յովհ. Գուրգէ-
 նէն ապահովութիւն առնելով որ իրեն զիտի չհասնի, զնաց Պոլիս,
 ուր վար դրուեցաւ կայսեր անձնապահ գունդին մէջ իբր պարզ զինուոր:
 Հզարտ վաճառականը սովորական զինուորի մը փոխուած տեսնելով ինք-
 զինքն և պահապան այն մարդուն՝ զոր սպանել ուզած էր, փախչիլ փոր-
 ձեց, սակայն չյաջողեցաւ Բռնուեցաւ և ի պատիժ՝ աչքերը կորսնցուց:
 Իսկ Վարդ Բոյլ, գթութիւն գտաւ և վանք դրկուեցաւ: Իսկ Պոնտոսի
 կառավարիչ եղաւ դարձեալ Հայ մը՝ Թէոփիլէ Գուրգէն, մեծ հայրը՝ Յով-
 հաննէս Չմշկիկի:

Իսկ Փոքր Հայքի, այսինքն Եփրատէն Ալիս տարածուած հողերու
 մէջ, մասնաւորապէս Ը. դարէն յետոյ, Հայ նոր գաղթականներու գոյու-
 թիւնը անով կը հաստատուի որ, Սեբաստիոյ, ինչպէս նաեւ Հայաստանի
 սահմանամերձ քանի մը գաւառներու մէջ կը գտնենք այդ և յաջորդ
 դարերուն Հայեր որոնք ամուր փարած են իրենց կրօնքին և ցոյց կու
 տան ուժգին ընդդիմութիւն Բիւզանդիոնի կրօնական միութեան ծրա-
 դիրներուն, և ասով կը դառնան փուշ՝ Յոյն կղերին աչքին: Բան մը որ
 չէր կրնար ակնկալուել Արմենեակ թեմին մեծամասնութեամբ Հայ-Հո-
 սոս բնակչութենէն, որ արդէն շատոնց նոյնիսկ իր Հայ ծագումը մոռ-
 նալ սկսած էր:

Յատկապէս Ժ. դարուն Նիկեփորի և Չմշկիկի՝ Սեբաստիոյ շրջակայ-

քը, Կիլիկիա, Կիւսիտային Սուրիա և Եփրատացւոց երկիր տեղաւորած Հայերը, հաւատարիմ հակաքաղաքական դաւանութեան, Վասիլ Բի առնն, 986ին, առանձնապէս հալածուեցան Սեբաստիոյ մոլիւնանդ մետրապոլիտէն, որ այդքան բազմաթիւ անձերու օրթոտքսանալէն հարուստ հատոյթներ կ'երազէր հաւանաբար:

Ասողիկ (Գ. Ի) կը նկարագրէ թէ ինչպէս այս անշնորհ մետրապոլիտը «զբռնութիւն ի ձեռն առեալ՝ սկսաւ ցանցել զփահանայս վասն հաւատոյ՝ եւ զգլխաւոր փահանայս Սեբաստիոյ փաղափն երկաթեղէն կապաճօֆ հասուցանէր ի դուռն քազաւորին. եւ ի բանսի շարչարեալ զաւագն եփցանց զԳարբիէլ սպանին, զի եր այր ձեր եւ իմաստիւ լի եւ փառապիկն ի հաւաստ աստուածելէն»: Սակայն ընդդիմադրողներուն հետ տկարացողներ ալ կը գտնուէին, «անցեան փահանայք եւ երկու եպիսկոպոսուցն Սեբաստիոյ եւ Լառիսոյ» (*) Սիոն եւ Յովհաննէս ի ձեռն ճոյն մետրապոլիտ ընկալան զժողովն Քաղեֆոնի ի բաց կալով ի միաւորութեանն Հայոց: Եւ յայնմհետք արգիլին զժամաձայն Հայոց ի փաղափն Սեբաստիոյ մինչեւ ցգալ քազաւորին Վասիլ յաշխարհն արեւելից» (Ասողիկ. Գոյն):

Ասկէ դիւրին է հետեւցնել թէ Արարներու արշաւանքէն յետոյ Արմենականներու քովը Փոքր Հայոց մէջ հաստատուած են շատ մեծ թուով Հայեր, և ունեցած՝ իրենց յատուկ եպիսկոպոսներն ու եկեղեցիները: Նոյնիսկ կայսրութեան մայրաքաղաքին մէջ կազմուած ըլլալ կը թուի Հայ համայնք մը, իր յատուկ եպիսկոպոսով, վասնզի Լեւոն Ղրամադիկոս կը յիշէ թէ 967ին հոն «Բիւզանդացւոց եւ Հայոց միջեւ կռիւ տեղի կ'ուցենայ եւ փաղաքանակ (Պոլսոյ) Հայերէն ցասեր կը վիբաւորուին» և նոյն գծախտութեան կ'ենթարկուի նաեւ Հայոց եպիսկոպոսը:

Ապահովաբար այս կռիւը կրօնական վէճերու հետեւանք էր: Նոյնպէս իրենց դաւանանքը և եկեղեցական կազմակերպութիւնը պահած ըլլալ կը թուին այն գաղթականները զորո Չմշկիկ 962ին բերաւ հաստատեց Եփրատացւոց երկիրին շրջակայքը, Մամբրճի, Տըլուքի, Եդեսիոյ և այլ շրջակայ Արարներէն նոր առնուած երկիրներու մէջ, ուր արդէն գտնուող Ասորի և Նեստորական տարրերու հետ այդ Հայերը կազմեցին ստուարաթիւ ոչ-քաղաքական համայնքներ, որոնք նոյնպէս հալածանքի մատնուած են:

Մակար Անտիոքի Յոյն Գաորիարքը (+995) իր Մեղուանց գործի մէջ (228) կը հաւատէ թէ Կիլիկիա, Միջագետք և Հայաստան գտնուող Հայ և Ասորի եկեղեցականները որոնք կը խօսէին հայերէն և ասորերէն և երկու ազգութեանց դպրութեան ծանօթ էին, կը սորվէին նաեւ յունարէն՝ վիճաբանութեան համար: Ասիկա կը հաստատէ թէ կար երկու տարրերուն միջեւ հակահարաբիւն և վէճ: Արդարեւ, Մակար Գաորիարքինքը կը պատմէ թէ Հայերը և Ասորիները Քաղաքանի ժողովէն յետոյ

(*) Լառիսա հաւանօրէն արգի Ազիզիյէն է Կեսարիոյ արեւելեան կողմը (Պատմ. Հայ-Նեստորից. 417—422):

բոժնուած են ընդհանուր եկեղեցիէն, իսկ մաս մը միացեալ Տնացած է և ասոր համար միւսներէն Մայթ կոչուած: Այս վերջինները «ուղղափառ» էին ըստ Սիմոն Սքանչելագործի վանքին վանահայր Նիքոն անապատականի վկայութեան, ուստի Մակար կը գրէր Երուսաղէմի պատրիարքին և վանահայրերուն որ անոնց հետ կարելի էր ի հոգեւորս հաղորդիլ, ինչպէս ինք և իր կղերք կ'ընէին: Մակարի տողերէն կը հասկցուի թէ այդ Հայ-Հոռոմները կամ Մայթերը — որոնց ընթերցուածները հայերէն էին և համաձայն բովանդակութեամբ Յոյն Եկեղեցիին — հալածուած են միւս ոչ միացեալ Հայերու հետ շփոթուելով և ինքն պէտք տեսած է միջամտելու (Աստուածատուր եպ. Տ. Յովհաննէսեան. Պատմ. Երուս. Ա. 97—98):

Յոյները՝ Սեբաստիոյ, Անտիոքի և Երուսաղէմի շրջանակներու մէջ այս հալածանքները գործադրած ատեն, միաժամուռակ Հայոց Սաչիկ Արշարունի կաթողիկոսը (972—992) յուճադաւան գարձնել փորձեցին (Ասողիկ. Գ. Ի և Իա) — որպէսզի բոլոր Բիւզանդեան կայսրութեան Հայերը պետութեան դաւանութեան հնազանդեցնեն —, սակայն չյաջողեցան, վասնզի հակաքաղաքականութեան մէջ թրծուած Հայերը ուժգին ընդդիմութիւն ցոյց տուին: Սաչիկ կաթողիկոս ոչ միայն դաւանափոխ չեղաւ, այլ նոյնիսկ համարձակեցաւ գրել Սեբաստիոյ մետրապոլիտին որ հալածանքը դադարեցնէ (Ասողիկ. Գ. Իա) և աւելին ըլլալով՝ իր ժամանակները աւելի տարածուած Հայ գաղթականներուն յատուկ եպիսկոպոսներ ձեռնադրեց, որպէսզի անոնք ամուր մնան իրենց դաւանանքին մէջ: Այսպէս, Ասողիկ (Գ. Իա) կ'ըսէ թէ «իսկ յաւուրս Տեառն Սաչկայ՝ Հայրապետի Հայոց սփռեալ ցարածեցաւ ազգս Հայոց զկողմամբն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսուցն յԱնթիոք Ասորուց եւ ի Տարսոն Կիլիկեցուց եւ ի Սուլըմայ» (*) եւ յամենայն գաւառսն յայնոսիկ» (**):

Ասոնք փառտեր են թէ Բիւզանդեան պետութեան գրեթէ ամէն կողմերը, մասնաւորապէս Փոքր Հայք, Կապադովկիա, Պոնտոս, Ասորիք և Կիլիկիա, ինչպէս նաեւ Պոլիս, հաւաքուած էին, բաւական ստուար թուով Հայեր, որոնք ամուր կը պահէին իրենց հաւատքը և ունէին Անտիոքի, Տարսոնի, Սուլըմայ, Սեբաստիոյ, Լառիսայի և Կիլիկեան ուրիշ վայրերու, և նոյնիսկ Պոլսոյ մէջ եպիսկոպոսներ:

Տրանսալի գիտուն՝ Laurent, յաջորդ ժԱ. դարուն վրայ խօսելով կ'ըսէ թէ, Հայերը «կը գրաւէին կայսրութեան արեւելեան նահանգները: Կը կազմէին բնակչութեան գրեթէ ամբողջութիւնը Իբերիոյ (ճիւսիսային Եփրատի հովիտ) եւ Միջագետքի (հարաւային Եփրատ) բնակչուն որոնք զուտ

(*) Հաւանօրէն Սեյիմուցիա, երբմն Տրայանուպոլիս, եւ այժմ Սեյիմի քաղաք, որ Իսաւրիոյ մէջ է եւ նաւահանգիստ (Ազգ. 1138):

(**) Այս երեք հազմներուն շուրջ՝ հաւանօրէն Կիլիկիոյ մէջ պիտի ըլլային այն վայրեր որոնք յատուկ եպիսկոպոսներ ունեցած են: Այս կարծիք հաստատելու համարմանը ունի յաջորդ դարուն յիշուած Կիլիկեան քաղաքի մէջ Մարտի եւ այլ վայրերու մի քանի աւազնորութիւններուն գոյութիւնը:

Հայ երկիրներ էին: Բայց անոնք կը բնակէին նաեւ մեծ թուով Սփրաֆ արեւմտեան երկիրը, ուր գաղթականներ եկած էին անոնցմէ: Անոնք գրաւած էին Տաւրոսը, Մելիթիքէի, Սեբաստիոյ, Կապադովկեան Կեսարիայ, Տարսուսի, Հիւսիսային Սուրիոյ եւ Եղեսիոյ երկրին միջեւ: Մելիթիքէն Սեբաստիա, Փոքր Հայոց մէջ, Հայերը ամեն ասեմ խիստ շատ էին, բայց Միջին Դարուն անոնք դարձան բացարձակ տերրայս երկրին» (Byzance et les Turcs Seldjucides dans l'Asie occidentale jusqu'en 1081. 1914. Paris. 67):

Այս վիճակը ժառանգութիւնն էր նախորդ դարերու, մանաւանդ ժ. դարուն: Հայաստանի դրացի երկրամասերու մէջ և նոյնիսկ աւելի Կասաբլանքը, Հայերու այսքան մեծ թիւ մը ունենալը, բնական հետեւանքն էր շարունակուող անընդհատ գաղթերուն, սակայն ինչ որ դիտելի է սա է որ միայն Արաբ տիրապետութեան տակ զտնուող Հայաստանի ի մասնաւորի արեւելեան նահանգներու — ինչպէս Այրարատի և Վասպուրականի — Հայ բնակչութիւնը չէ որ քրիստոնեայ կայսեր երկիրը կ'անցնէր, այլ նաեւ Բիւզանդեան Հայաստանի և անոր սահմանակից Դ. Հայքի, Փոքր Հայքի, Պոնտոսի, Կապադովկիոյ և նոյնիսկ Փոքր Ասիոյ արեւելեան մասերուն մէջ մինչեւ է. դար այնքան զանգուածօրէն վաղուց հաստատուած և Հայ-Հռոմ դարձած կամ ոչ, Հայերն ալ իրենց կարողին դէպի արեւմուտք կը շարժէին:

Հայերու այս ամբողջական շարժումը դէպի Արեւմուտք, որ իրական մարդկային զանգուածներու մակընթացութեան մը կամ խաղաղքի մը երեւոյթը և գաղթաշարժի մը բնոյթը առած էր, արմատական փոփոխութիւն մը առաջ բերուաւ Բիւզանդական կայսրութեան բնակչութեան մէջ, որ ինչպէս Պրսլը (117) կը դիտէ, Ը. և Թ. դարերուն արագ արագ փոփոխութիւն կրած է, վասնզի հետզհետէ վերի դասերը Հայերէ բաղկացած են և ստորին դասերը Սլաւներէ: Այս տեսակ հսկայ փոփոխութեան մը տեղի տալու համար, Հայերը պէտք էր որ խոշոր զանգուածներով անցած ըլլային կայսրութեան երկիրները, ինչպէս գեղեցիկ կերպով կը ներկայացնէ J. Laurent ըսելով թէ «Հայերը, արաբ աշխարհակալութենէն սկսեալ՝ դադրած չէին մեծ թուով գաղթել դէպի Բիւզանդեան կայսրութիւն: Ոմանք հոն հարստացան, եղան մեծ հողատեր-կալուածատերեր, հրամայեցին բանակներու եւ գաւառներու, զլուխը անցան կայսերական կառավարութեան եւ նոյնիսկ բարձրացան, ոչ առանց փայլի, Պոլսոյ կայսերական գահը: Բայց գաղթականներու մեծ մասը նախընտրեալ հաստատուեցաւ Սփրաֆ արեւմտեան եւ մօտակայ նահանգներուն մէջ, Մելիթիքէի, Սեբաստիոյ եւ Կեսարիոյ միջեւ: Բնակչութիւնը հոն այնքան մեծ չափով խառնուած եր Հայերու հետ, որ այդ երկրամասին անուրը դրուեցաւ Փոքր Հայք, յետոյ կառավարութիւն Արմենեակներու: Արաբ աշխարհակալութենէն յետոյ ամեն տարի կրկնուող արշաւանքները, որոնք կը կատարուէին բոլոր սահմանագլուխին վրայ, մեծ մասամբ ամայացուցած էին երկիրը: Բիւզանդիոն նաեւ յօժարափոյր ընդունած է Հայերը որոնք կ'ուզէին հոն հաս-

տանիլ: Հոն եր նաեւ որ հաստատուեց, իբր ինքնավար նորոտեր եւ իր իսկ պատշաճութեան համար, Հայ բազաւորները եւ ազնուականները, երբ համոզուեցաւ թէ պարտէր զանոնք հեռացնել իրենց լեռներէն: Հոն եկան միացան նաեւ բոլոր անոնք որ վտարուեցան Բարձր Հայքէն, ըլլա՛յ քրական արշաւանքներով, ըլլա՛յ իրենց հայրենակիցներուն անոնց նոր ստացուածքին մէջ միանալու փափաքով: Հայոց այս բարունակական համախմբումը, իրենց պետերուն արկածախնդիր եւ աշխարհակալական ոգին մղեցին զանոնք, տարածելու իրենց հաստատութիւնները դէպի հարաւ, ընդմէջ Կապադովկիոյ եւ Սիւրիոյ, Ժ. եւ ԺԱ. դարերուն Յոյներէն վերագրուած եւ մեծ մասամբ անապաս եւ աւերակ գտած երկիրներուն մէջ: Այս նոր Հայաստանի նորոտեան իշխանութիւնները շատ տուտով իրենց սահմաններուն մէջ առին Մելիթիքէի, Սեբաստիոյ եւ Կեսարիոյ երջանակը, գրաւեցին արեւմտեան Տաւրոսի երկու գաղթափերը, յետոյ՝ Կիլիկիան, Տարսուսը եւ Եղեսիան: Հայկական գաղութները թափանցեցին նոյնիսկ մինչեւ Անտիոք եւ Ուրոնդեսի ճամբով՝ մինչեւ Սիւրիական Կեսարիա: Փանի մը տարուան մէջ, Հայ ազգային կազմակերպութիւնը տարածուեցաւ նաեւ Տաւրոսի, Սիւրիոյ եւ Միջերկրականի միջեւ գտնուած երջանին վրայ, որ եղաւ Հայերուն համար նոր հայրենիք մը, ուր անոնք բարունակեցին, կայսեր վտանգանքեան տակ, իրենց բազմազան գոյութիւնը, որ այլեւս անհնար դարձած եր իրենց ցեղային հնադարեան բնակավայրին մէջ: Անոնք հոն կազմեցին, կայսրութեան համար, ընդդէմ Թուրքերու, պատշաճութիւն մը որ կրնար ուժեղ ըլլալ, եթէ Հայերուն եւ Յոյներուն միջեւ նւարտապետ բարեկամական գործակցութիւն մը անկարելի դարձած չըլլար, երկու ժողովուրդներու խառնուածքին հակադրութեամբ եւ իրենց անցեալ վէներուն յիշատակով: Հայերը Տաւրոսի մէջ բարունակեցին ներքին պառակտումները, վտանգաւոր կուռազանութիւնը եւ այլամեծ ազգայնականութիւնը, որոնք մինչեւ այն ասեմ պատճառ եղած էին իրենց տարութեան եւ դժբախտութեան: Յունական հողին վրայ անոնք բարունակեցին մնալ նոյն հետ եւ անհնազանդ նորոտեր, աւելի հոգածու իրենց ազատութեան եւ անձնական տիրութեան, քան կարգապահութեան եւ զոհաբերութեան: Անոնք զգուշացան խնամով Յոյներու խառնուելէ, պահեցին իրենց տարանջատը, նաեւ կները, բարբերը, լեզուն եւ կրօնքը, յամառօրէն մերձեցին յարիլ Կ. Պոլսոյ կրօնական դաւանանքին: Իրենց նոր հայրենիքին մէջ՝ անոնք համախմբուեցան իրենց նախնիքի իշխաններուն կամ յանդուրձան ու յաջողակ զինուորներուն շուրջ, որոնք սովորաբար ըստ իրենց հին եւ անտարբարան ազգային աւանդութեան, իրարու դէմ կուռեցան, եւ որոնք փայլեցին աւելի յաճախ կայսեր դէմ որքան անոր կողմին: Բիւզանդական կառավարութիւնը, փորձելով իրենց աւաններուն (fiefs) մէջ հաստատել այս անտարբարեղի արկածախնդիրները, Պոլսոյ պատրիարքին հնազանդութեան ենթարկել այս այլակրօն ֆրիսոնները, եւ նպատակութեան ու կարգ կանոնի վարձեցնել այս խռովարար ու կռուատեր նորոտերը (vassal) աւելի եւս իրենց դէմ զրգոնց զանոնք: Իր յարաբերութիւնները Տաւրոսեան Հայաստանի հետ ի

վերջոյ յանգեցան միայն հայրայրելու հայկական իօխանապետութիւններէն քանկագին օժանդակներ բրկական արեւաւնիին, երբ անոնք կ'անցնէին այս լեռներու կիրճերէն» (1071). (Laurent. 4—6):

Արդարեւ, Հայերը սրամտած ընդդէմ Յոյներու, որոնք զիրենք կը հայածէին կրօնական պատճառներով: Ղիւրացուցին Սելջուկեանց արշաւը: Եւ իրենց թուական զգալի գերակշռութիւնը որ ունէին — ինչպէս տեսնուեցաւ — արեւմտեան Փոքր Ասիոյ, Սեբաստիոյ, Կեսարիոյ, Մելիտոնէի և Տաւրոսի շուրջը, համարձակութիւն տուաւ անոնց անջատօրէն և առանձին, զիմադրելու թրջական արշաւանքին կամ միանալու անոր ինքնակամ, բոլորովին անկախ Պոլիսէն, մասնաւոր Ռոմանոս Դիոգիսէօի մահէն (1071) յետոյ (հմմտ. Laurent. Byzance et les Turcs. 67):

Իսկ ընդհանուր կերպով համոզուելու համար թէ այդ 3—4 դարերու ընթացքին Հայերը ինչ անփոխարինելի դեր կատարած են Բիւզանդեան երկիրներու մէջ, խառնուելով անոր կեանքին ամէն մէկ գրուագիծերուն, մասնաւորապէս բերելով իրենց մասնակցութիւնը այն զիւցազնամարտին որ անիկա մղեց ընդդէմ այլակրօն անողոք թշնամիներու և բարբարոս զանազան ազգերու, բաւական է ակնարկ մը նետել Բիւզանդեան պատմութեան վրայ: Հոն պիտի հանդիպինք Հայ դէմքերու որոնք իրենց գերազանց արժանիքներով և կարողութիւններով կամ իրենց քաջագործութիւններով ու ըմբոստական կամ յեղափոխական արարքներով նշանաւոր հանդիսացած են:

Միայն սա իրողութիւնը, որ 610էն 1056, Բիւզանդիոնի կայսերական գահուն վրայ բազմող զանազան ազգէ կայսրերուն երեք քառորդը Հայեր են (*), խիստ յստկանշական է և գաղափար մը կրնայ տալ Հայոց դիրքին և կարեւորութեան վրայ: Ահա ցուցակը այդ Հայածին կայսրերուն, որոնցմէ քիչերը ժառանգական իրաւամբ և շատերը՝ արժանեօք գրուած են Բիւզանդական գահը:

- 610—641 Հերակլ (**)
- 641 Կոստանդին Գ. և Հերակլ Բ.
- 641—642 Հերակլէս
- 641—642 Դաւիթ Տիբերիոս, գահակից
- 642—668 Կոստանդ Բ. (***)
- 646—652 Գրիգորիս, գահակից

(*) Հ. Կարապետ վր. Տէր Սահակեան, միայն 14 կայսրերու եւ 6 քաղաքահանգներու վրայ կը խօսի իր Հայ Կայսերք Բիւզանդիոնի երկհատ աօխաստիրոսեան մէջ (Վենետիկ. 1905) որոցմէ առաջինը՝ Մորիկ (580—602), կանուխ է բան արարական օրհանգ, մինչ իրականին մէջ 610էն մինչև 1056 Բիւզանդիոնի գահուն վրայ բազմած են 40էն աւելի կայսրեր որոնց 30էն աւելին Հայեր են:

(**) Ասիկա իրեն կին առաւ իր Բուզանդիկը եւ հետեւաբար Հայ՝ Մարտին:

(***) Ամուսնացած է Վաղեմիոս Արեւիկեի Հայ գորավարին ազգան հետ, որուն անունը չէ յիշուած:

- 668 Մժեժ, յափօսակիչ
- 668—685 Կոստանդինոս Դ. Պոգոնատոս (Pogonat=Մօրուսի)
- 668—682 Տիբերիոս Գ., գահակից իր եղբորը Կոստանդին Դ.ի հետ
- 668—682 Հերակլ Գ., գահակից » » » »
- 685—695 և 705—711 Յուստինիանոս Բ.
- 705—711 Տիբերիոս Ե., գահակից իր հօրը Յուստինիանոս Բ.ի հետ
- 711—713 Փիլիպիկոս Վարդանէս կամ Վարդան Փիլիկ (Filipicus Bardanes)
- 717—741 Լեւոն Գ., Իսաւրացի Կոնան
- 741—774 Կոստանդին Ե. Կոպրոնիմոս
- 742—744 Արտաւազդ, յափօսակիչ
- 742 Նիկեփոս, գահակից հօրը Արտաւազդի հետ
- 790 Ալեքս Մուսեղ, քաղաքահանգ
- 803 Վարդան Բ. Թուրք (քաղաքահանգ)
- 808 Արեւիկը գանձապահ (»)
- 813—820 Լեւոն Ե. Հայկազն (*)
- 813—820 Սմբատ կամ Կոստանդին, գահակից հօրը Լեւոն Ե.ի
- 820—829 Միքայէլ Բ. Թլուստ (Le Bégue)(**)
- 820—824 Թովմաս (քաղաքահանգ)
- 829—842 Թէոփիլոս (***) (?) ի մօրէ առանց կասկածի Հայ
- 842—857 Թէոփորոս, միակեան կայսրուհի
- 842—867 Միքայէլ Գ.
- 856—866 Վարդ Մամիկոնեան, գահակից իր քեռորդուոյն Միքայէլ Գ.ի հետ
- 867—886 Վասիլ Լ. Մակեդոնացի (***)
- 868—879 Կոստանդին, գահակից հօրը՝ Վասիլ Ա.ի
- 886—912 Լեւոն Զ. Իմաստասէր (****) գահակից 870էն սկսեալ հօրը՝ Վասիլ Ա.ի
- 886—912 Աղեքսանդր
- 912—959 Կոստանդին Է. Միրանաձին (*****) (Porphyrogénète)

(*) Ասոր կինը՝ Թեոդոսիա եւս Հայ էր եւ ազդիկը քաղաքահանգ Արեւիկը գանձապահի:

(**) Իր հայութիւնը կասկածելի է: 826ին ամուսնացած է իր առաջին կնոջ Թեկլայի մահէն յետոյ եւ փոստիկէի հետ որ ազդիկն էր Կոստանդին Զ.ի եւ կնոջ գեղանի Մարթնա կայսրուհիին որ Հայ էր: Եւ փոստիկէ արգելափակուած էր Իրենէ կայսրուհիին Փիլիպիկոյի կուսակց մեծ վանին մէջ: 830ին Միքայէլի մահէն յետոյ եւ փոստիկէ դարձեալ վանք Բաւուցաւ:

(***) 821 Մայիս 12ին ամուսնացած է Թեոդորոս Մամիկոնեանի հետ, որ ապրած է մինչև 867:

(****) Առաջին կինը՝ Մարթա Հայ էր (867), զոր յետոյ արձակեց ամուսնամալու համար Եւստիպիայի հետ (Morgan. 285):

(*****) Լեւոն Ե. Իմաստասէրի չորս կիներէն երկրորդը՝ Զոյէ (894—896) Հայ էր:

(*****) Ամուսնացաւ 919 Ապրիլ 27ին Հեղինէի հետ որ ազդիկն էր Իմամանու Հայ կայսր: Կայսրուհի էր 919էն 961:

- 920—944 *Ռոմանոս Ա. Հեկաբենոս*
- 920 *Քրիստափոր, գահակից հօրը Ռոմանոս Ա.ի հետ*
- 927 *Սեփան » » » » »*
- 927 *Կոստանդին » » » » »*
- Ռոմանոս » մեծ հօրը » » »*
- 959—963 *Ռոմանոս Բ.*
- 963—969 *Նիկեփոր Փոկաս*
- 969—976 *Յովհաննէս Չմշկիկ (*)*
- 976—1025 *Վասիլ Բ. Պուլկարասպան*
- 976—1028 *Կոստանդին Ը.*
- 1028—1034 *Ռոմանոս Գ. Արկիւրոպուլոս*
- 1054—1056 *Թէոդորա (**)*

Հայերը, սակայն միայն կայսրեր և կայսրուհիներ չեն տուած Բիւզանդիոնի, այլ նաեւ բազմաթիւ քաջ ռազմիկներ, հռչակաւոր զօրավարներ. վարիչ քաղաքական ղեմքեր, նշանաւոր և հեղինակաւոր մտաւորականներ, Յոյն եկեղեցիին ծառայող կրօնաւորներ, նոյնիսկ շրջանին սկզբնաւորութենէն, այսինքն Հերակլի օրերէն սկսեալ, երբ արդէն հայկական ազդեցութիւնը բաւական չեղաւ և էր Այդ ազդեցութիւնը որ դարերու ժառանգութիւնն էր, հետզհետէ աւելի զգալի կ'ըլլար, այն համեմատութեամբ որ Հայերու թիւը կ'ստուարանար կայսրութեան մէջ: Եւ որովհետեւ այդ շրջանին ամէն տարի կրկնուող Արաբ արշաւանքներուն ղեմ պետութիւնը պաշտպանող այժմ զինուորականութիւնն էր, ան կը ներկայացնէր ամէնէն ազդեցիկ դասը, որուն համակրութեան կը կարօտէին կայսրերը, րեքքին ու արտաքին ապահովութեան համար:

Հայերը՝ վերջին խօսքը իրը եղող այս դասակարգին մէջ իշխող թիւունէին, վասնզի Բիւզանդեան բանակին զօրքերը առնուած էին մասնաւորապէս հայաբնակ շրջաններէ և մեծամասնաբար կը բաղկանային Հայերէ, իրենց գլուխ ունենալով Հայ զօրապետներ, և ասոր համար էր որ ազդեցիկ էին, մասնաւորապէս երբ Արաբները այնքան զօրաւոր էին և ան ուսարսափ կը պատճառէին: Ասոր համար, Բիւզանդեան պատմութեան մէջ կը հանդիպինք ամէնէն աւելի ռազմական մարզին մէջ փայլող Հայերու: Ինչպէս իրաւամբ դիտել կու տայ Գելցեր (208), այդ շրջանին Հայ զինուորական տաղանդն էր որ կը վարէր Բիւզանդեան արքունիքը՝ գրեթէ բոլոր կայսրերու ալ իշխանութիւնը անուանական դարձնելով:

(*) Չմշկիկ 971ին ամուսնացաւ առաքինի Թէոդորայի հետ, որ աղչիկն էր Կոստանդին Սիրամածին Հայ կայսր Հեղինէ Հայ կնոջմէն ծնած և որ արգելափակուած էր Ռոմանոս Բ.էն վաճի մը մէջ, 769ին:

(**) Ասոր հայր Չայէ իր Սիրամածին յայրդարար գահը պարզեց 1028էն 1060 ամուսնուրեամբ երեք կայսրերու՝ Ռոմանոս Գ.ի (1028—1034), Միխայլ Գ. Պափլագանցիի (1034—1041) և Կոստանդին Թ. Մանուկասի (1042—1054):

Իբր Հայ կայսրուհի յիսնից Գաբի Մարիամ՝ Կոստանդին Զ.ի (780—797) կիներ՝ 783էն 795, և թեկա՝ Միխայլ Ա. Ռաֆաէի (811—813) կիներ:

Երբ Արաբները պատմութեան կը խառնուէին Հոռոմ կայսրութեան երկիրները արշաւելով, իբր կայսր կ'իշխէր Հայ ծագումով Հերակլ, որ Պարսից ղեմ յաղթական պատերազմներու շարքով մը, պետութիւնը փրկած էր կործանումի վտանգէն (վերը 157):

Հերակլ, որ իր շուրջը Հայեր ունէր, կարեւոր պաշտօններով (տես. վերը 171) չկրցաւ նոյն յաջողութեամբ կոռելի Արաբներու հետ, որոնց ղեմ 634ին առաջին անգամ զրկեց Վահան (*) (Baanes) Մամիկոնեանը (**), իրեն կցորդ հրամանատար տալով Տրիթուքիտը (ԿՈՉՆԱԿ. 1935. 173): Դամասկոսի պաշարման ատեն Վահան իր զօրքերուն կողմէ կայսր կ'ողջունուի, սակայն Հերակլի մէկ պաշտօնատարին՝ Մանսուրի խաղովը ծանր պարտութեան մը կը մատնուի և իր բանակը կը քայքայուի ըստ Եւստիքիոս Պատրիարքի Տարեգիրքին (Ազաւնուհի եպս. Հայ. հից վաճ. 1935. 173): Վահան փախուսաւ կու տայ և կը քաշուի Սիոնա, ուր վանական կը դառնայ Անաստաս անունով. և կը գրէ Դուռիթի վեցերորդ Մաղմոսին մեկնութիւնը, ինչպէս հաւանօրէն նաեւ Երուսաղէմի Հայ վանքերուն ցուցակը (տես. Ազաւնուհի եպս. ցոյց. ԺԵ—ԺԶ): Նոյն թուականին Վահանի որդին կը հրամայէր Եմեսիա (Հոմա) գտնուող Բիւզանդական զօրքերուն (Գ. Տնտգլեան. 2. ԿՈՉՆԱԿ. 1935. 173):

Հերակլ, այս ձախողութեան վրայ կը կազմակերպէ նոր բանակ մը, որուն մէջ հասարակ վարձկաններու հետ, Հայերը և Արաբները մեծ թիւ մը կը ներկայացնէին: 636ին Եւրոպայի ճակատամարտին մէջ Արաբները զատալիք եղան — հաւանօրէն չուղելով կոռուի իրենց ազգակիցներուն ղեմ — և Հայերը տարին պատերազմին ծանրութիւնը (C. H. Becher. CMH. Բ. 348) և «Հոռոմեացիները, հակառակ ՀԱԹ աղեղնաւորներու քաջարի կռիւից, յաղթուեցան» (Davis. A Short History of The Near East): Այս պատերազմին մէջ ինկաւ Վահան Հայ զօրավարը, զոր Հերակլ երբեմն զրկած էր Եգիպտոս իբր կառավարիչ Աղեքսանդրիոյ, Օգոստոս տիրոջ սով (ԿՈՉՆԱԿ. 1935. 173):

Հերակլի մահէն յետոյ երբ իր Բ. կինը՝ Մարտինա՝ ջանաց իրեն ապահովել իշխանութիւնը՝ զրկելով Հերակլի որդիները, ժողովուրդը (Brooks. CMH. Բ. 391) կամ աւելի ճիշդ՝ բանակը (Գելցեր 125) ծառայաւ և հարկադրեց որ կառավարութիւնը թողու իր խորթ աղուն՝ Կոստանդին Բ.ի (+641 Մայիս 26):

Վաղենտինոս Արշակունին (տես. վերը 171) Սկուլարիոսներու (***)

(*) Արաբ պատմագիրներ, ինչպէս Աղեքսանդրիոյ Եւստիքիոս պատրիարք (Ժ. դար), որ ծանօթ է Սայիս Իպն ալ Պատրիկ անունով, իր արաբերէն Տարեգիրքին մէջ Մահաւան անունով կը յիշատակէ: Թէոփանէս Baanes կը կոչէ, ինչ որ Վահանի հետ նոյնացնել զիրեն է: Տնտգլեան (ԿՈՉՆԱԿ. 1935. 173) սխալմամբ Վարդան կը կարգայ այս անունը:

(**) Saint Martin կը կարծէ ճշդի Վահանի Մամիկոնեան ազգանունը (ես. Lebeau. Hist du Bas Empire. ԺԱ. 208), մինչ 2. Նեբրէս վրդ. Ակիմեան Խառխառուի կը համարէ Վահանը (ՅԱՌԱՋ. 1931. ք. 1481):

(***) Սկուլարիոս փոխարեակազմ առուճով կը նշանակէ ճեւատարիք պահակախի սառական իմաստով եզրափակ:

հրամանատարը, ինքզինքին տալով Հերակլի զաւակներուն պաշտպանի դերք մը, կը կատարէ խիստ կարեւոր դեր, և կը յաջողի Կոստանսը (641—668) գահ բարձրացնել և երբ Մարտինա կը փորձէ դարձեալ դաւել Կոստանսի և իրեն դէմ, ոտքի կը հանէ Կապադովկեան բանակը և ժողովուրդը, գլխաւորութեամբ Քէոզոր Հայ զօրավարին (Brooks. CMH. Բ. 381), որ կ'աճապարէ դէպի Պոլիս, պատժելու համար Մարտինան, բայց Մերակոյտը զայն կը կանխէ (642 Դեկտ.):

Այսպէս, Հայ զինուորական ոյժին և առաւելապէս Հայ զինուորներու ճնշումով Կոստանս դարձաւ միակ գահակալ (Քեոփանէս. Ա.6136) և ցոյց տուաւ իր անընկճելի կորովով և ինքնուրոյն բնաւորութեամբ՝ թէ իբրեւ իշխող արժանի էր իր ծանր պաշտօնին: Իսկ այս անցքերուն գլխաւոր դերակատարները՝ Վաղենտինոս և Քէոզոր Հայ զօրավարները՝ Արարներու դէմ ալ երկիրը պաշտպանեցին:

Վաղենտինոս Արչակունի 643ին դարձաւ Պոլիս, 3000 հոգինոց պահակախումբով մը, և պահանջեց Կոստանս կայսրէն որ իրեն տայ Կեսարի աստիճան: Բայց արտայայտուող մեծ ընդդիմութեան հետեւանքով, ան ինքնաբերաբար հրաժարեցաւ իր տիրոջէն, բայց ստացաւ մայրաքաղաքին զօրաց հրամանատարութիւնը և իր աղջիկը կնութեան տուաւ Կոստանսի (Brooks. CMH. Բ. 392):

Երկու տարի յետոյ, սակայն, Վաղենտինոսի բռնակալական արարքները առաջ բերին ժողովրդային խռովութիւն մը, որուն ընթացքին ձերբակալուեցաւ և գլխատուեցաւ (Քեոփանէս. Ա.6136): Մայրաքաղաքին զինուորական հրամանատարութիւնը տրուեցաւ 646ին Քէոզորին (Brooks. CMH. Բ. 392):

Կոստանսի ժամանակ Հայկական բանակաթեմի զօրավարներն են Մժէժ, Վասակ Պատրիկ, Շապուհ Աբարասդիկան, և այլն: Ասոնցմէ Մժէժ (Քեոփանէս և Ամասաս կը ճանչնան Միթիթ կամ Միթիթինոս կամ Mazizius անունով) իբր «բաջ անձ մը» (*) կը յիշուի որ 648ին Կոստանս կայսրը իր հետ Իտալիա տարաւ:

Կոստանս, որ Սիկիլիոյ Սիրակուսա քաղաքը բնակավայր ընտրեց, իրեն նեցուկ ունենալու համար Սիկիլիա տեղաւորեց Արեւելքի մէջ կորսուած նահանգներու բազմաթիւ փախստականները (Գեղցեր. 130), որոնցմէ կը սերէին յաջորդ շրջանի գրեթէ բոլոր Պապերը (Գեղցեր. 131): Հաւանական է որ այս գաղթականներուն մէջ կային նաեւ Հայեր կամ կայսրը իրեն հետ ունէր մեծ թուով Հայ զինուորներ (**) որոնց հրամա-

(*) Քեոփանէս, Ամասաս, Չոմարաս, Ժ. 19 եւ 20. Մամաւ եւայլ հիմերէն եւ Տ. M. Brooks, Գեղցեր եւ Մոլկան, կը հաստատեն թէ ան Հայ էր: Հայ պատմիչներ կ'ամփոփեն:

(**) Գտնուած են Մարմանէ Սիկիլիոյ Հայ լեզուներու դասաւորի մը եւ երկու Հայ հիւպատոսներու կնիքներ, որոնք պեղուած ապացոյցներ են թէ մեծ թուով Հայ զինուորներ կային հոն:

նատարն էր թերեւս Մժէժ, որ եօթը տարի կայսեր հետ Ֆրանկոսա, և անոր սպանութենէն (668 Յուլիոս 15) յետոյ, զինուորներու պահանջով, հոն կայսր հռչակուեցաւ (Brooks. CMH. Բ. 395): Քէոփանէս կ'ըսէ թէ Մժէժի արտակարգ գեղեցկութիւնը դեր կատարած է այս հռչակումին մէջ, սակայն իր կայսրութիւնը ուրիշ տեղ չէ ընդունուած և կարճ իշխանութիւն մը ունեցած է: Կոստանսին Գ. Պոզոնատ, որ իր հօրը բացակայութեան Բիւզանդիոնի մէջ զայն տեղակալած էր, մեծ նաւատորմի ղով մը Սիկիլիա գնաց և ձերբակալեց Մժէժը և իր դաւակիցներով Կոլիս բերելով սպաննեց:

Հայկական բանակաթեմին զօրավարութեան պաշտօնին մէջ Մժէժի յաջորդած է Վասակ Պատրիկը, իսկ ասոր՝ Շապուհ Աբարասդիկան, որ Ամասունի ըլլալ կ'ենթադրուի: Ասիկա «զարմանայի դաւադրութեամբ մը ... քիչ մնաց պիտի գտուէր Բիւզանդական գահը: Շապուհ ... կը խոստանայ Աբարաց խալիֆա Մուավիյի հարկատու ըլլալ իրեն՝ եթէ յաջողի կայսրութիւնը բաժնիլ: Այս նպատակով Սարգիս Ստրատիպոս կը դրէ Գաճակոսի համաձայնութիւնը գլուխ հանելու: Յաղթական դարձին՝ պալատին վերակացու ներքինիէն կ'սպանուի Սարգիս: Շապուհ արկածի մը կը հանդիպի եւ դաւը կը դեբեւանայ» (Գ. Ֆրանկեան. ԿՈՉՆԱԿ. 1935. 174) (*):

Կոստանսի իշխանութեան շրջանի Հայ զինուորական այս մեծ դէմքերուն առընթեր կը յիշատակուի նաեւ անունը Հայ մտաւորականի մը՝ Դաւիթ Բազաւանցիի, որ «փիլիսոփայ» տիրոջը կը կրէր և հաւանօրէն յուսնական կրթութիւն առած էր: Դաւիթ կը յիշուի թէ 648ին Կոստանսի և Պիւսոս պատրիարքի կողմէն Հայաստան զրկուած է որպէսզի իր ազգակիցները համոզէ յուսնաւանութեան, սակայն չէ յաջողած:

Հերակլեան փառաւոր ընտանիքին վերջին կայսրը եղաւ այլասերած Յուստինիանոս Բ., որ իր յոռի վարչութեան համար բողոքներու տեղի տուաւ: Առաջին անյաջող ապստամբութիւնը յարոյց Հայ մը՝ Սմբատ, (Սարբատիոս) (ԿՈՉՆԱԿ. 1935. 174) որուն յաջորդեցին յետոյ ուրիշներ, որոնց հետեւանօք կայսրը, 695էն 705, տասը տարի, կորսնցուց իր գահը և տեղը տուաւ ասիական պատերազմներու մէջ մարզուած զինուորականի մը՝ Լեոնի (**) և ապստամբ ծովակալի մը՝ Ապսիմարոսի, որ Տիրեքիոս անունը առաւ: Յուստինիանոս յաջողեցաւ 706ին վերագրաւել իր գահը Պուլկար և Սլաւոն զօրքերով և օգնութեամբ Վարազբակուր Հայ զինուորականին (Քեոփանէս 373), որ Օփսիկիոնի կոմս, այսինքն Բիւզանդեան բանակներու ղամէնէն կարեւորին՝ հրամանատար նշանակուեցաւ: Վարազբակուր

(*) Michel Le Syrien Բ. 451 եւ Քեոփանէս Խոս. 344, կ'ըսեն թէ Շապուհ 661ին անցած է Արարներու կողմը, եւ Փոքր Հայք՝ արարական իսլամութեան ենթարկած, ինչ որ թերեւս աւելի նաւասական է:

(**) Լեոն կամ Լեոնդ 690ին կամ անկէ ալ առաջ կը վարէր Ամասունի գործարի պատեր: Հաւանական է որ Հայ ծագում ունեցած ըլլայ:

յետոյ սպանուեցաւ Յուստինիանոս Բ.ի հետ (G. Schlumberger. Sigillo-
graphie de l'Empire Byzantin. 249), երբ անոր յիմարութիւնները կրկին
տախթ տուին որ տապալի Հայ յայտնի զինուորականի մը՝ Փիլիպպիոս
Վարդանէսի կամ Վարդան Փիլիպի կողմէ: Պերգամոնի Հայ ազնուական-
ներու գաղութէն (վերը 178) Նիկեփոր Պատրիկի այս որդին (Brooks.
CMH. Բ. 412), ճարտասան, աստուածաբանութեան մասնագէտ, կրօնաւոր
ըլլալու տեղ զինուոր եղած էր, և ունէր երազը կայսր դառնալու, իր
մանկութեան օրերուն մէկ հէքեաթէն մղուած, որուն համեմատ արծիւ մը
իւր թեւերով ծածկած էր զինքը արեւէն: Այս պատճառով, 702ին աքսոր-
ուած էր Քէֆալոնիա (Թեոփանէս 569), ուրկէ 710ին տեղափոխուած էր
Քերսոն, ուր ապստամբ ժողովուրդէն հռչակուած էր կայսր Փիլիպպիկ
(ձիասէր) կոչուածով, և ծովէն արշաւելով Պոլիս (711 Հոկտ. 24), Պոնտոսի
մէջ հետապնդած էր Յուստինիանոսն ու իր հետեւորդները և զանոնք
սպաննած, ինչպէս նաեւ անոր անչափահաս միակ զաւակը՝ Տիբերիոսը՝
Պոլսոյ մէջ:

Այսպէս, վերջ դասաւ Հերակլեան Հայկական ծագմամբ տոհմը, որուն
սպառումէն յետոյ, Ը. դարուն սկիզբէն, բնաւ արգելք չի կար տեսէ ձեռ-
ներէց, կորովի և քաջարի զօրականի մը կայսերական գահ բարձրանա-
լուն: Յեղ, ծագում կարեւորութիւն չունէր: Այս պատճառով իսկ, «Ը. դա-
րէն մինչեւ ԺԱ. դար, Բիւզանդիոնի գահը բարձրացաւ Հայ կայսերու շարք
մը, ո՛չ ժառագական իրաւունքով իբր պայագաս, այլ բնութեամբ իրենց
բազուկները, կորովի եւ ուրիշ գերագանց ձեռքերուն արժանիքովը նամբայ
հարթելով իրենց դէպի բարձրագոյն դիրքն, վեհագոյն արքայ: Անխաղի
եղբայրացաւում մը չեղաւ այն յաջորդութեան, մերք ուրիշ ցեղէ(*) գահա-
կալներ եղան, բայց այդ երեք դարերուն մէջ ամենամեծ թիւը հայազգիներ
եղան, եւ երբ գահուն վրայ չէին՝ գահին շուրջն էին ուրիշ կապերով,
գահին մօտերն էին միշտ, երբեմն իբր խնամի (փեսայանալով, կայսեր աղ-
ջիկը կնութեան առնելով, կամ կայսեր իրենց փոյրը տալով կնութեան) եւ
յանախ իբր թեկնածու: ... Եւ էիչ նսանակալից չի հանրութեան մէջ տիրած
այն համոզումը (առակի կարգ անցած) թէ Բիւզանդիոնի կայսր ըլլալու
համար Հայ ծագում ունենալը մեծ յանձնարարութիւն է (F. W. Bussell-
նոյն. 409) նոյնիսկ եական պայման՝ յաջորդութեան սաստրող» (Գ. Փնազ-
լեան. Հայագրիքներ ի Բիւզանդիոն. Հ. ԿՈՉՆԱԿ. 1935. 77—8):

Մասնաւորելով խօսքը Ը. դարուն վրայ, Պրսել իրաւունք ունէր զայն
գերադրապէս «Հայերու դարը» կոչելու, վասնզի Ը. դարուն սկիզբը Հա-
յոց ազդեցութիւնը կը զանուէր իր զէնթիւն վրայ: Ամէն կողմ կը վեր-
տային Հայ նշանաւոր զէմքեր արքունիքին մէջ և թէ դուրսը՝ պետական
անխիւն շուրջը:

Այդ դարուն «Հելլենական ցեղը շատ ստորագաս դիրք մը կը գրաւէր

(*) Իոթ, Եգար, Սլաւ, Պարսիկ եւ նոյնիսկ Արաբ ծագումով կայսրեր ունեցած է
Բիւզանդիոն:

կայսրութեան մէջ: Քաղաքական վարչութեան մէջ գերակշիռ դեր ունեցն
տախտիները, ու մասնաւորապէս Հայերը, որոնք ստանձնած էին նաեւ
զինուորական բարձրագոյն հրամանատարութիւնները: Լեւոն Իսաւրացիի
(717—741) բնանիքը, կ'ըսուի թէ Հայկական ծագում ունէր...: Լեւոն Ե.
(813—820) Հայ մըն էր...: Բազմաթիւ քագապահանջ սպասամբներ, որոնք
կայսր տիտղոսը գրաւեցին, մեծ մասամբ Հայեր էին: Արեւազդ, որ ապրա-
սամբեցաւ իր աներիոր Կոստանդին՝ Ե.ի (741—745) դէմ, Հայ մըն էր: Ա-
լեքսիս Մուսեղ, խեղդամահ եղած 790ին Կոստանդին Զ.ի (780—797) հը-
րամանով, Վարդան, «Թուրք» կոչուած որ բմբոսացաւ Նիկեփոր Ա.ի
(802—811) դէմ, Արեւալի, Լեւոն Ե.ի աներհայրը, Հայեր էին: Այդ ժամա-
նակին, Բիւզանդական կայսրութեան մէջ զսեղուղ Հայերէն շատեր կը
պահանքէին քրիստոնեայ աշխարհի ամենէն հռչակաւոր գերագասուններուն
եւ իրենց հաստատած կապերը Կ. Պոլսոյ Հռոմէական բնկերութեան մնա-
ցորդներուն հետ, ուր ծագման ազնուականութիւնը պարճանք մըն էր եւ կը
փնտռուէր, ապացոյց է թէ՛ ասիական ազդեցութիւնը խաւարեցուցած էր
Հռոմէականը՝ Յոյն կայսրութեան կառավարութեան մէջ» (G. Finlay. His-
tory of the Byzantine Empire):

Անժխաւելի և պայծառ իրողութիւն մըն էր թէ Հայերը կը կազմէին
Փոքր Ասիոյ բնակչութեան իրական մեծամասնութիւնը և Հայ զօ. քերը՝
երկար տանն՝ Բիւզանդեան բանակներուն ծաղիկը (Պրսել. 391): Շատ
տեղամ Հայկական թեմի զօրապետներու անհամամտութիւնը բաւական
եղած է կայսրերու իշխանութիւնը առ ոչինչ համարելու, և հակառակէն՝
Հայերու հաւանութիւնը անխուսափելի պահանջ՝ կայսր մը իր գահուն
վրայ պահելու: Իսկ եթէ մեծ բարեկորագիչ կամ յանդուգն յեղաշրջիչ
Լեւոն Գ. Իսաւրացի (717—741) և իր որդին՝ Կոստանդին Ե. Կոպրոնիմոս
(741—774) կրցան տոկալ գահուն վրայ և գործադրել իրենց ծրագրերնե-
րը, ասիկա ալ կը պարտին Հայ զինուորներու համակրութեան: Թէեւ
զժուար է ճշդել որոշակի Լեւոն Գ. Իսաւրացիի ծնողքը, սակայն ինչպէս
Պրսել (335) կ'ըսէ, ան աներկբայօրէն կապեր ունէր Վանի լիճին և Կով-
կասի միջեւ գտնուած երկիրին հետ, և իր կանխագոյն կեանքը, պաշ-
տօնը և յաջորդութիւնները Հայաստանի հետ կապակցութիւն կը մատնա-
նչեն և անհերքելի է թէ Հայաստանը կը ներկայացնէր նկարագրով ու
գաւանանքով: Իր ազգականները Հայ են և Լեւոն ինքզինքը ազգա-
կից կը հռչակէր Հայոց (Պրսել 113), ինչ որ կը նշանակէ թէ Հայ ոյժե-
րու կը յենուր:

Հայ գաղթականներու թիւին տարապայման աճումը պատճառ եղաւ
որ Լեւոն Գ. Իսաւրացի զբաղէր նաեւ հողային հարցով, որ կայսերական
վարչութեան վերանորոգութեան տեսակէտով ամենամեծ նշանակութիւն
ունէր, և մասնաւոր կարեւորութիւն այն ընկերային բարեկորութիւն-
ներուն մէջ որ Հայ միտքը կը յղանար: Լեւոն իր կայսերակից որդիին
հետ կազմեց «Հնարութիւն»: Օրինացքը, որուն երկրագործութեան վերա-
բերալ մասը (nomos georgikas) կը կանոնաւորէր հողատէրերու և ազատ

հողատէր գիւղական համայնքներու յարաբերութիւնները վարձակալներու հետ: Ատոր պէտքը բացայայտ է թէ ծնունդ առած էր արտակարգ անու- մէն օտար գաղթականներու որոնց մէջ Հայոց դերը մանաւանդ ի Փոքր Ասիա չէր կրնար աննշմար մնալ:

Այդ օրէնքէն կը հասկցուի թէ գաղթականները պարզապէս հողին հետ միացած գաղութներ են, անձնապէս ազատ ըլլալով, մինչ ընկիւնները անձնական ազատութենէ զուրկ՝ հողատէրին սեփականութեան մաս կը կազմէին (Գեղցեր. 155. Պատմ. Հայ Գեսարիոյ. 369): Հողային դրութեան այս մեծ բարենորոգումը զոր Լեւոն Իսաւրացի գործադրեց, անկումի դի- մող երկիրին նոր կեանք, բարօրութիւն բերաւ իսկ իր որդւոյն՝ Կոստան- դինի օրով լրացաւ երկիրին նորոգ վարչական և իրաւական կազմուածքը՝ Օրէնք, վաճառականութիւն, երկրագործական նոր օրէնք, ելեւմուտք- ամէն ինչ խնամով վերադննուելով յարմարացուեցան նոր պայմաններուն: Ընկեցիկ մանուկներու անկելանոցն ալ, իր տեսակին մէջ ժամանակին համար մեծ նորութիւն՝ իր օրով հաստատուեցաւ:

Այս երկու վեհապետներուն, Լեւոն Գ. և որդիին՝ Կոստանդինի, զօ- րեղ անհատականութիւնն ու ձեռներէց գործունէութիւնը, Բիւզանդական կայսրութեան ամէնչն ճգնաժամային մէկ պահուն՝ արգիլելով չարաչա- հութիւնը, մենաշնորհը և կեղեքումը, յառաջ բերին վերականգնում մը որ դարերով յետաձգեց բարբարոսներու յաղթական մուտքը ի Բիւզան- դիոն (Պըսըլ. 98).

Բոլոր այս բարենորոգումներուն մէջ «Հայոց սարգիսնակ թիւապետու- քիւնը» խիստ շահագրգռական կը գտնէ Պըսըլ (110), որ կը հաստատէ թէ Ը. դարուն Հայք կը ներկայանան ժառանգ Հռոմէական աւանդին: Հերակլիան տան անհետացումէն յետոյ յաջորդող կայսրերու տառն ալ ա- պահովաբար Հայերը պահած են իրենց գործօն մասնակցութիւնը արքու- նական և զինուորական մարզերու մէջ, երբ մանաւանդ կայսերական դա- հուն վրայ կը գտնուէին Հայեր:

Այսպէս, Փիլիպպիկոս Վարդանի (711—713), Անաստասի (713—717) և Լեւոն Գ. Իսաւրացիի (717—741) ժամանակակից՝ կը յիշատակուի ան- սուտ վաւերագիրներով (*), անունը «Դաւիթ Հիւպատոսի և Բագաւուրա- կան սեղանւոյն կենառի» կամ «Երանկիւնառի» որ կը թուի ըլլալ Հայ և Յոյն դպրութեանց հմուտ կամ սիրող անձնաւորութիւն մը, որմէ մեծա- պէս օգտուած է Ստեփանոս Սիւնեցի Հայ մատենագիրը (Ազգ. 864. Զար- բանէլեան Հայ հիմ դպրութեան պատմ. 1897. 489—90, Դուրեան. Պատմ. Հայ մասնագրութեան 143—144) Պոլսոյ մէջ իր ուսումը կատարելա- գործելու գացած ատեն (711—717) կատարած թարգմանութիւններու մէջ զայն գործակից ունենալով: Դաւիթ Հիւպատոս նոյն պաշտօնով ծա-

(*) Դիոնեսիոս Արիպպագոսի, Կիւրեղի Պարապոմոնի Գիրքից, Նեմեսիոսի «Շաղագա բնութեան մարդոյ» գործերուն Սեփանոս Սիւնեցիի բարգմանութեանց 712- 716. 717 բուկալանով յիշատակուեցան: (Թարգ. Նախնեաց. 888. 519. 371 եւայլն):

այսմ է, ինչպէս կը տեսնուի, երեք կայսրերուն ալ հաւատարապէս: Այս ժամանակներուն մէջ իբր զինուորական մեծ դէմք մը կը յիշուի նաեւ «պատրիկ, կիւրոպաղաս եւ կոմս կայսերական աստուածապահ Ոփսիկիո- նի» Արտաւազդ զօրավարը, որ երբեմն գործակիցն էր Լեւոնի և յետոյ փեսան (Աննա աղջկան ամուսինը): Ան, իր փեսին՝ Կոստանդինի հետ, որ նոյնպէս Հայ էր, Լեւոն Գ. ի մահէն (741) անմիջապէս յետոյ թեկնածու կը հանդիսանայ գահուն, իրեն աջակից ունենալով Հայերը, որոնց մաս- նաւոր համակրանքին վստահելով ապստամբեցաւ 742ին Մարաշ ծնած՝ Հայ ազատանիի տիպար այս հրամանատարը: Անիկա առանձին չէր, այլ ունէր ազդեցիկ ազգականներ, հօրեղբորորդի մը՝ Պատրիկ Տրդատ, որ Բիւթանական սահմանագլուխը կը պաշտպանէր: «Domestic» բարձրաս- անիւն զօրագլուխը՝ նոյնպէս Արտաւազդ անունը ունէր, և իր գլխաւոր պաշտօնեան և ընկերն էր Պատրիկ Վախտանգ (Բագտանգիոս), ուրիշ Հայ մը: Այս պայքարին մէջ թէպէտ վերջ ի վերջոյ յաղթող եղաւ Լեւոն Ի- սաւրացիի որդին՝ Կոստանդին, սակայն երկու տարի մ. յրաքաղաքը ձեռ- քը մնաց Արտաւազդին, այս Հայ կայսեր, որ տարօրինակ յաջողութիւն մը ունեցած է (Գեղցեր. 161. Պըսըլ 113) անշուշտ շնորհիւ Հայերու, ո- րոնց կարեւորութիւնը միշտ օրէ օր աւելի կը շեշտուէր:

Գաղափար մը տալու համար ըսեմ թէ 772ին Փոքր Ասիոյ 5 բանա- կաթեմերէն միայն մէկուն՝ Արմենեակին հրամանատարն էր Հայ մը՝ Վար- դան, իսկ վեց տարի յետոյ անոնցմէ չորսին, ինչպէս Անատոլեանին՝ Ար- տաւազդ Մամիկոնեան (*), Բուկկելարեանին՝ Տաճատ Անձեւացի (**), Ար- մենեակին՝ Վարազդիտոց Բագրատունի, և Ուսիկեանին՝ Գրիգոր Մուշե- ղիկ Մամիկոնեան (***) : Ուրեմն բացի Թրակեսեան Փոքր թեմէն, միւս բոլորը կը գտնուէին Հայ զօրավարներու հրամանին տակ, և ամէնը կը ներկայացնէին 100,000 հոգինոց ուժ մը որ 778ին Լեւոն Գ. ի (774—780) պարգեւեց յաղթանակ մը:

Լեւոն Գ. ի ժամանակ տակաւին կը յիշուին իբր զինուորական մեծ գէմքեր Վարդ (Bardas) Պատրիկ, որ 791ին մեռաւ Պուլկարներու դէմ պատերազմին մէջ, և ուրիշ Վարդ Պատրիկ մը, Արմենեակ թեմին զօ- րավար, Արժրունի տունէն, որ հռչակաւոր պիտի ըլլար իր զաւակով որ գահ պիտի բարձրանար Լեւոն Ե. Հայկազն անունով: Նոյնպէս 765էն

(*) Արտաւազդ՝ 774ին Հայաստանի ապստամբութեան ազդեցութեան օտարն է (վերջ 216) որ յետոյ եզերացուց երկիրը խոյս տուաւ:

(**) Տաճատ 760ին Հայաստանէն Բիւզանդիոն անցած եւ 22 տարի ծառայած է կայ- սեր, մասնաւորապէս Պուլկարներու դէմ կռուելով: Իրենէ կայսրուհիի ասեմ, 782ին, ստիպ- ուեցաւ խոյս տալ Արաբներու Բոլ, ուր մեծ բնդուեցաւ իր Գոսաւ և Հայաստանի Պատրիկ եղաւ: 784ին Խազրներու եւ Հոնաց դէմ մղուած պատերազմին մէջ մեռաւ Բագարաս Սպարապետի և Ներսէի Կամարականի հետ (Վեւոն. 160—1):

(***) Ն. Աղանց (ՀԱՅԹԵՆԻՔ. Ը. 5. 76) կը հեղէ Վարազդիտոցի եւ Գրիգորի անձ- նաւորութիւնները:

սկսեալ գործօն դեր կը կատարէր Վարդան Պատրիկի որդին՝ Կոստանդին, իբր Սպարթար և կայսեր Պրոտոսդրատոր, որ ապա եղաւ պալատական հեծեալ գունդերէն մէկուն՝ Նիկոլոբատորներու պետ և Դոմեոզիկոս Վարդ Արծրունի և Կոստանդին, միանալով Գրիգոր Մամիկոնեանի, Որոսիկեան բանակի հրամանատարին, որ այն ատեն թղթատարական Լոզոթեա (հաղորդակցութեան պաշտօնեայ կամ այսօրուան ներքին գործոց նախարար) էր, և ուրիշ Յոյնի մը, 782ին Իրենէ կայսրուհիին դէմ կազմուած դաւադրութեան մը նախաձեռնարկ եղան։ Սյսպէս, Լեւոն Դ-ի ատենէն ստղին, Բիւզանդեան կայսրութեան մանաւանդ Ասիական մասին մէջ զինուորականութիւնը ձեռքն էր անձնուէր Հայերու խումբի մը, որ իր կամքը հարկադրել գիտցած է յաճախ Ասոր շատ կարկառուն օրինակը տեսնուեցաւ Ը. դարու վերջերը, երբ Իրենէ կայսրուհին, որ իր ամուսինին՝ Լեւոնի մահէն յետոյ, խնամակալ նշանակուած էր անոր տակաւին մանուկ որդիին՝ Կոստանդին Զ-ի (780—797), իբր Աթենացի, ձգտում ցոյց տուաւ ուժեղացնելու Հելլէն տարրը։

Ան, ջերմ պաշտպան Օրթոտոքսութեան և պատկերապաշտութեան, հեռացուց Հայ մարտական ոյժերը և շրջապատեց արքունիքը Յոյն ապիկար և նենգամիտ ներքինիներով, որոնց ազդեցութեան տակ վերահաստատեց պատկերներու պաշտամունքը (787ին), և սակայն իրեն դէմ ելաւ Հայ պահակազօրքը որ պատկերներու բուռն հակառակորդ էր։ Կայսրուհին հնարիմաց դաւով մը մայրաքաղաքէն հեռացուց այդ պահակազօրքը, սակայն այս անգամ ալ իր դէմը գտաւ Արմենեակ զօրաբանակը, որ պահանջեց օրինաւոր կայսեր իրաւունքը ընդդէմ իր ոճրագործ և բռնակալ մօրը։ Իրենէ, զայրացած, Արմենեակ զօրքը հանդարտեցնելու համար զրկեց Մամիկոնեան Ալեքսիս-Մուշեղը, պահակազօրքին Սպարթարը և Դրուսագարը, բայց Մուշեղ որ ներքուստ համակիր էր անոնց, միացաւ Հայ բանակին ողջունելու համար Կոստանդին Զ-ը միակ կայսր։ Սյսպէս, Հայ զօրքին կամքը յաղթեց։

Ինչ յետոյ դարձեալ նոյն երեւոյթը կրկնուեցաւ։ Երբ Կոստանդին Զ-ի հաւատարիմ պաշտպանը՝ Ալեքսիս-Մուշեղը—զոր Արմենեակ զօրքերու հրամանատար նշանակած էր — զրպարտութեամբ մը կուրցնել տուաւ այնքան ապերախութեամբ, այդ բանակը, զայրացած, ապստամբեցաւ։ Չայն հանդարտեցնելու համար Կոստանդին Զ. զրկեց Թրակեան զօրքերու Հայ հրամանատար Կոստանդին Արտաշիրը, որ յետոյ անձնապահ բանակին հրամանատարը և կայսեր մտերիմը դարձաւ և բոլորովին պաշտօնէ հանուեցաւ երբ կայսրը զահրնկէց եղաւ (797) ոլորքներով իր մօր՝ Իրենէի, որ այս անգամ ալ իր դէմը գտաւ դարձեալ Հայ կամքը և իր իշխանութենէն զրկուեցաւ։

Իրենէ չեղեցաւ այն քաղաքական և կրօնական շաւիղէն զոր դժած էին իր նախորդները և ծառայեց յունական շահերու, անտեսելով Հայերու հեղինակութիւնը որ իր ոյժը կ'ստանար բանակէն, մանաւանդ Արմենեակ բանակաթեմէն, որուն զօրքերը կը բաղկանային մեծ մասամբ։

Հայերէ և կը գտնուէին հրամանատարութեան տակ Հայ զօրավարներու սրնք էին և մնացին մինչև վերջը զինուորական արուեստին անդերտազանցելի վարպետները։ Այս զօրաբանակը, որ սկիզբէն իսկ, կայսրութեան ազգական ոյժերուն փայլն էր, քանիցս ծառայեաւ Իրենէի դէմ, որ չկրցաւ սիրաշահիլ զայն և ատոր համար իսկ չկրցաւ տեւակունացնել իր իշխանութիւնը՝ զո՛հ երթալով իր ձախող քաղաքականութեան։

Դաւակցութեամբ արքունի եօթը ներքինիներու, որոնցմէ մէկն էր վերոյիշեալ Գրիգորը՝ Մուշեղիկի որդին, գահը յափշտակեց Նիկիփոր (802—811) և կործանեցաւ Իսաւրեան հարստութիւնը՝ 85ամեայ իշխանութենէ մը յետոյ։ Նկատելի է որ այս անգամ փոխանակ զինուորականութեան, քաղաքային պաշտօնատարներու ղեկավարութեամբ կը կատարուէր այս յեղափոխութիւնը։ Գործող ուժերու փոխ-յարաբերութիւնները նախատեսել կու տար Իսաւրեան տան Հայ յաջորդներ, սակայն դիպուածով մը պարզապէս Իրենէէն յետոյ գահուն տիրեց Նիկիփոր Ա. Լոզոթէա (Nicéphore Legothète), որ հոն բարձրացաւ անշուշտ կայսրութեան ամէնէն ուժեղ տարրին՝ Հայազգի զօրականներու հաճութեամբ կամ գաւակցութեամբ։ Ասոր ապացոյց կրնայ նկատուիլ սա իրողութիւնը որ, Նիկիփոր իսկոյն նորանշան քայլ մը առաւ՝ Վարդան Մամիկոնեան (*) մը կարգելով Արեւելքի մէջ բացառիկ ստեղծուած նոր պաշտօնի մը՝ որ է Միասպարապետ (Monostrategos) հինգ բանակաթեմերու — հակառակ քաղաքական պաշտօնատարներու նախանձոտութեան, տեսակ մը զինուորական գիկտատորութիւն — Ասիոյ սահմանազուլուխները, և ի հարկին ներքին խաղաղութիւնն ալ ապահովելու համար (Պրսլլ. 398—9)։ Սակայն ժողովրդային համակրութիւնը Նիկիփորի կողմը չէր և հետագային ատելի գարձաւ իր կեղեքիչ արծաթասիրութեան և ձեռք առած կարգ մը տընտեսական խիտ կարգադրութիւններուն համար, որոնց մէջ անշուշտ մեծ դեր ունէր իր կորովի ելեւմտական Հայ նախարարը՝ Արշաւիր Գանձապահը։ Մասնաւորապէս եկեղեցական կալուածները տուրքի ենթարկելու որոշումը մեծ դժգոհութիւն յառաջացուց, և պատճառ եղաւ որ Վարդան Միասպարապետը, պետութեան առաջին զինուորական դէմքը, իրեն ենթակայ բանակներուն կողմէ կայսր հռչակուի (803 Յունիս 19ին)։ Վարդան, իբր մարդ, իր ազնուական բնաւորութեամբ, վայելուչ շարժուածքներով, արդարամտութեամբ և անշահասիրութեամբ հակապատկերն էր

(*) Մամիկոնեան տոմից պատկանիլը կարծիք մըն է որ յայտնած են Գառնիկ ձեզլեան եւ Կուրաւ Շալուկաբեժէ (Le Hes des Princes. 75)։ Կարգ մը պատմագիրքեր Վարդանի տուած են անյայտ պատճառով մը «Թուրք» կոչումը, որ բաւ է Աղոցի հաւաճօրէն Բեռսեի նախաին վրայ Թուրքերու հետ կուած բլլալուց համար տուած է (2ԱՅՏԵ-ՆԻՔ. Ը, 5. 78), սակայն կրճայ սխալ ընթերցում մըն ալ բլլալ, վառգի Սիմեոն Լոզոթեի պատմ քաղաքականութեան մէջ «Թուրք» օճը կը կարդացուի «Կուր» (Sroznovski. Petersburg. 1905. 66. եւ 2ԱՅՏԵՆԻՔ. 6ոյց)։ Կուրս կրճայ 6ոյցը բլլալ Կուրեի կամ Թուրքի անուանից հետ, որ Մամիկոնեանց մէջ յաճախուած անուն մըն էր, կամ պարզապէս իբր «Թուրք» այս անունը կրճայ տուած բլլալ։

Նիկեփորի, որով սիրելի եղած էր ամէնուն: Անիկա նկատուած էր կայսրութեան լաւագոյն ուազմագէտը՝ Արաբներու դէմ նշանաւոր յաղթանակներով (G. Schlumberger. Les Iles des Princes. 75):

Վարդանի շարժումը, որ իր խորքին մէջ Հայկական էր, չյաջողեցաւ, հաւանօրէն անոր համար որ Արմենեակ թեմը չէզոք զիրք բռնեց (Բրոֆ. Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՓ. Ը. 5. 78, G. Schlumberger IP. 74): Կ'երեւի թէ Քրիզոր որդի Մուշեղիկի, այդ միջոցին զօրավար Արմենեակի, չուզեց գէմ ելնել Նիկեփորի, որուն բարձրացման նպատակով և գործակից եղած էր (Ն. Ադոնց. 60): Վարդան իր ճակատագիրին համակերպեցաւ և կրօնաւորուած Սափա անունով, առանձնացաւ Բաղի կղզին (803 Սեպտ. 8ին) իր շինած վանքը, վստահելով Նիկեփորի խոստումին թէ իր և զործակիցներուն կեանքին պիտի խնայուի: Կայսրը սակայն չպահեց իր խոստումը և կուրցուց իր երբեմնի նշանաւոր սպարապետին աչքերը (804), ինչ որ անասման զգուանք առաջ բերաւ, հակառակ այն կեղծ վիշտին և սուտ երդումներուն որ Նիկեփոր կ'ընէր ինքզինքն անմասն ցոյց տալու համար ոճիրին (IP. 82): Վարդան, հանդուրժեց մեծ քաջութեամբ այս կենդանի մեռելով վիճակին և իր օրերը վերջացուց ամէնէն խոստմբեր համբերութեան մը մարդանքին մէջ, սպառած զրկանքներէ, որբութեան համբաւով (IP. 83): Յոյն եկեղեցին զայն իր սուրբերուն կարգը դասեց:

Նիկեփոր, սակայն, Վարդանի ձախողած ձեռնարկէն յետոյ հանգիստ չգտաւ, վասնզի 808ին դարձեալ Հայ մը, իր էլեւմտական նախարարը՝ «Արեաւիք Գանձապահը եւ Պատրիկը, բարեպաօս եւ ամենահմուտ անձը» (Թեոփանէս Խոսովանոզ 750) ծառայաւ անոր դէմ: Արշաւիր, գիտուն անձ մըն էր, վասնզի իր գանձապահի (quaestor) պաշտօնը կը պահանջէր զբական և օրէնսգիտական որոշ պատրաստութիւն, խմբագրելու համար օրէնքները և շարադրելու՝ կայսեր թղթակցութիւնները: Ասիկա իր շուրջը կրցաւ հաւաքել բազմաթիւ ձերակուտականներ և բարձրաստիճան հոգեւորականներ, սակայն դաւադրութիւնը յայտնուեցաւ և յեղաշրջման փորձը վիժեցաւ: Արշաւիր վանք մը նետուեցաւ և իր համախոհները պատժուեցան:

Արշաւիրի Թէոդոսիա ազնկան ամուսինն էր Լեւոն զօրավարը՝ որդին Վարդ Արծրունիի (վերը 265—6) որ Նիկեփորի ժամանակ զինուորական փայլող դէմքն էր: Անիկա 802ին Վարդան Միասպարապետին հետ Փոքր Ասիա զրկուած էր իբր Հայ գունդերու հրամանատար և ապա անոր յաջորդած էր իբր «Սպարապետ Արեւելից»: 811ին անփութութեան մը համար պաշտօնանկ կ'աքսորուի, սակայն 10 ամիս յետոյ ներման կ'արժանանայ Միքայէլ Ռանգարէ կայսրէն (811—813), որ մեծ համարում ունէր իր վրայ և առաջարկած էր Լեւոն «Հայազգի Պատրիկը, արեւելեան բանակին զօրավարը, բազասիք ու ուժեղ մարդը» (Կեդրեցոս 43) ընտրել Կայսր փոխանակ իրեն, սակայն ան վարանած էր: 813ին, երբ Միքայէլ Պալկարական պատերազմին մէջ ցոյց տուաւ իր անկարողութիւնը, զօր-

քը և ժողովուրդը բուռն կերպով պահանջեցին որ ամենաընդունակ զօրավար Լեւոն Հայը «պաօսպանէ հայրենիքն օսաներ եւ ազատէ քրիստոնեայ սերունդները»: Այս փափաքը կատարուեցաւ, երբ Լեւոն, որ Արմենեակ և Կապադովկեան բանակները իր հրամանին տակ ունէր, 813ին Ադրիանուպոլսոյ ճակատամարտին մէջ դաւաճանեց և ապահով յաղթութիւն մը պարտութեան վերածեց (IP. 27): Քանի մը ամիս յետոյ (Դեկտ. 25) իր Սմբատ զաւակը, Աւգուստ, զահաժառանգ-զահակից ըրաւ Կոստանդին անունով (Թեոփանէս Շար. 41. Կեդրեցոս 26):

Լեւոն Ե. եղաւ նշանաւոր վեհապետ մը, օժտուած բազմակողմանի ընդունակութիւններով: Առաջնակարգ զինուորական, ազատեց մայրաքաղաքը Պուլկար գրաւումէն և կոտորուց ոչ միայն անոնց ներխուժումը — բան մը որ չէին կրցած ընել վերջին կայսրերը — այլ նաեւ պարտաւորեց Պուլկարները հաշտութեան մը որ իրմէն յետոյ 60 տարիէն աւելի պահուեցաւ: Միայն ասիկա բաւական էր յիշատակելի դարձնելու իր իշխանութիւնը:

Անիկա, 816ին, ազատեց Սիկիլիան Արաբներէն: Բայց Լեւոն երեւելի եղաւ նաեւ իր վարչական կարողութիւններով: Իր արդարադատութեան մասին առասպելներ կը պատմէին: Զերծ էր արծաթասիրութեան տարածուած արատէն և առատաձեռն էր: Դժբախտաբար քաջութեան և կորովին հետ ան ունէր նաեւ նենգութիւն, տգիտութիւն և աւելորդապաշտութիւն՝ գերազանց աստիճանով: Նախապէս կատաղի հալածանքի ենթարկեց Պատկերապաշտները (IP. 64—65), սակայն 816ին անցաւ անոնց կողմը և ժողովով վերահաստատեց 754ի հակապատկերամարտ որոշումները և նոզովեց Պատկերամարտները՝ որոնք հալածանքի առարկայ եղան: Ասոր համար ժողովուրդը զինքը որակեց նախատական Քամելիոն (գեոմետրիկ) կամ Ամաղեկացի կոչումով: Լեւոն Հայկազն չարաչար հայածեց նաեւ Պաւլիկեանները՝ վասնզի անոնք ալ գրեթէ Պատկերամարտներու գաղափարակից էին (Բրոֆ. Կոնիպէր. Առխարհի կրօնական դրուքիւճճեր):

Լեւոն Ե. Հայկազնի իշխանութեան շրջանը ծանօթ է իբր զինուորական, կրօնական և դատական վերակազմութեան ժամանակ մը, ուր կը փայլին բազմաթիւ Հայեր: Կայսրը և Հայ կայսրուհին՝ Թէոդոսիան, իրենց շուրջը ունէին բազմաթիւ Հայ պաշտօնատարներ, զինուորական և քաղաքային: Ասոնց մէջ գոնէ երկուքը կը ներկայացնեն մեծ կարեւորութիւն: Մին՝ Մանուէլ Մամիկոնեանը, զոր Լեւոն, անմիջապէս որ գահ բարձրացաւ 813ին, Հայկական բանակաթեմին զօրավար կարգեց և միևնո՞ղ՝ անոր կղբայրը՝ Մարինոսը, որ Բիւզանդեան նաւատորմիդին Տորմապետի (Տուրմարք=ծովակալ) պաշտօնի մէջ պահեց (810ին Նիկեփոր այս պաշտօնին կոչած էր):

Այս նշանակելի դէմքերէն զատ, Պուլկարներու դէմ մղուած պատերազմին խառնուեցան նաեւ Հայերը իբր անոր զոհերը կամ յաջողութեան սատարողները: Կայսրութեան եւրոպական բաժինին մէջ Հայեր կային արդէն, վասնզի շատ հինէն հոն հաստատուած էին Հայ զինուորա-

կան գաղութներ, որոնց թիւը կ'աւելնար հետզհետէ: Ասկէ զատ, հոն բերուած աղանդաւոր Հայերը Օրթոտոքս եկեղեցիին դրօշին տակ առնելու և երկիրը լեցնելու համար (վերը 160—2. 174. 180. և 230): Այս շրջանները՝ Ք. դարուն սկիզբը այնքան լեցուն էին Հայերով որ, նոյնիսկ գաւառին ամէնէն կարեւոր քաղաքին՝ Անդրիանուպոլսոյ քաղաքապետը Հայ Բանդրատուգա(*) անուն իշխան մըն էր, և Հայերը հոն ունէին, 813ին, Մանուէլ անունով Հայ եպիսկոպոս մը: Պուլկարները, 813ին Ազրիանուպոլիսէն՝ տասնեակ հազար և 814ին՝ մինչեւ Արկատիոպոլիս ասպատակներ տարածելէ յետոյ, իրենց դարձին, տարին 50,000 գերիներ, որոնց մէջ, ինչպէս կ'երևի, աննշան չէր Հայերու թիւը, վասնզի ոչ միայն քաղթողներուն առաջնորդները Հայեր էին այլ նաեւ աւարին և կողոպուտին իբր մաս կը յիշուին մասնաւոր կերպով Հայկական բանուածներ, ազնիւ գորգեր, զգեստեղէններ և պղնձեղէններ (Բրօֆ. Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ. 1931. 8. 90): Տարուած գերիներուն մէջ էր նաեւ Հայոց Մանուէլ եպո.ը, որ իրեն վիճակակից Յոյներէն և Հայերէն ոմանց հետ Պուլկարներու մէջ քրիստոնէութիւն տարածելու փորձ ըրաւ և նախապէս կողոպուտէն իր դարձակիցներուն հետ (Կոստանդին Միրանածին):

Լեւոն 817ին յաղթելով, Պուլկարներուն Ազրիանուպոլիսէն տարուած գերիները իրենց տեղերը դարձուց, որով Հայերն ալ դարձան հոն, սակայն հաւանորէն Պուլկարներու քով մնացողներ ալ եղան: Ամէն պարագայի մէջ, այս հոն գաղութը հոն դրական կամ ժխտական դեր կատարած է Լեւոնի ժամանակ, երբ ան կը մաքառէր Պուլկարներու դէմ:

Լեւոն Ե. Հայկազն, 820 Դեկտ. 25ին իր երբեմնի դէնքի ընկերով՝ Միքայէլ Թլուաթի սոսկալի զաւազրութեամբ սպանուեցաւ: Իր մայրը և կէնը Մերանց (Despoton) վանքը զրկեցին և չորս գաւակները ներքինացուցին:

Նիկեփորոս Պարիարք (806—815), որ լաւ զգացումներ չունէր և չէր կրնար ունենալ հանդէպ Լեւոնի, իբր կատաղի հակառակորդ անոր եկեղեցական քաղաքականութեան և այս պատճառով իսկ աթոռազուրկ եղած, երբ լսեց Լեւոնի մահը, գոչեց պետութիւնը կորսնցուց ամբարիշտ իշխան մը, բայց հանրային շահուն մեծ պաշտպան մը» (Գեներիոս. 17, Թեոփանես Եւր. 30. Ետու Տիլէ. ՄՄ. Գ. 38), ինչ որ մեծազոյն գովեստն էր, որ կարելի էր լսել թշնամիէ մը:

(*) Բանդրատուգա անունը հաւանորէն ազաւազում մըն է Հայ ուրիս անունի մը: Ամէնէն աւելի Բանդրատուգի բառը կը յիշուի: 2. Միքա Բժեկեան (Ճանապարհորդութիւն ի Լեւոնաւան. 215) եւ 2. Ղուկա Իճնիճեան (Աշխարհ. 2. 27) երկուքն ալ հաւաստապէս նոյն բաներով կը գրեն թէ այնպէս ի գիրս թէ ի սկիզբն Ք. դարու Բաղաբապետ Ազրիանուպոլսոյ էր ետպագրուած Բանդրատուգա իշխան, սակայն չեն բեր թէ ո՞ր գիրին մէջ: Կոստանդին Միրանածին (Բանակապետ. Ա. 9) ժ. գաւառ սկիզբը կը յիշէ այս անունով իշխան մը որ Միքայեփի մէջ բերդի մը տէր էր: Անիկա ճախարհի Բիզանդական բանակին գորակար էր եւ Պուլկարեան Պոլսու Չարք (852—888) ասոր ձեռքէն կատարուելով առած էր Ազրիանուպոլսոյ:

Իր սպանիչին և յաջորդին՝ Միքայէլ Բ. Թլուաթի (820—829) ազգութիւնը յայտնի չէ, սակայն որոշ է թէ Ամորիայի աղանդաւորներէն էր: Բրօֆ. Ն. Ադոնց, նկատելով թէ ան ծառայած է Հայ զօրավարի քով և ընկերակիցն էր Լեւոնի և Քամայի և կայսր դատնալէն յետոյ շրջապատուած մնաց Հայերով, կը հետեւցնէ թէ Պաւղիկեան Հայ մըն էր (ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 6. 105): Այս տեսութեան ուժ տալ կը թուին իր անսարքերութիւնը դէպի պետական եկեղեցին և Պատկերապաշտութեան հակառակութիւնը, որոնք նշաններ էին թէ անիկա խմորուած էր Պաւղիկեան հակակեղեցական հայեացքով: Իր այս ուղղութիւնը և մասնաւորապէս Լեւոն Հայկազնի պէս արժանաւոր անձ մը — որ սիրելի էր ժողովուրդին — սպաննած ըլլալու ոճիբը, զինքն անժողովրդական ըրած էին: Մեծ խոհեմութիւն և շրջանկատութիւն պէտք էր որպէսզի մեղմէր հանրային կարծիքը: Այս պատճառով, խստութեամբ չվարուեցաւ Լեւոնի ընտանիքին հետ, և ջանաց մտենալ Հայ շրջանակներու, որոնք անշուշտ համակիր չէին իրենց ազգակիցը սպանողին: Հետեւաբար ուղեց ձեռք առնել կամ իր կողմը շահիլ Իսաւրեան տան վերջալոյսին Բիւզանդիոն հաւաքուած Հայ նախարարական ամէնէն գլխաւոր և ազդեցիկ տուներ: Մամիկոնեան մեծ ընտանիքը, որ Ը. դարուն կէսերը կալուած ու կացան ունեցած էր Պափլագոնիա (ԿՈՉՆԱԿ. 1935. 592): Այս ընտանիքը գրեթէ 36 տարի կայսերական բարձր պաշտօններու և զօրապետութեան մենաշնորհը ունեցած էր և իր գաւակները, իբր արժիւններ, վաղուց կը ճախրէին կայսերական թագին շուրջը (Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ. 5. 78): Անոնք իբր Հայ իրենց գոյութիւնը պահած էին միայն իրենց մէջ ամուսնութիւններ կընքելով (Պարզ. 166), ինչ որ կը հաստատէ թէ բազմանդամ էին: Նիկեփորի և Լեւոն Հայկազնի իշխանութեան ատեն, արդէն նաւատորմին ծովակալը և բանակներու ամէնէն կարեւորին՝ Արմենեակին հրամանատարը, Մարինոս և Մանուէլ Մամիկոնեան եղբայրներն էին: Ըստ Գեներիոսի, ասոնցմէ Մանուէլ, ամբողջ Արեւելքի մէջ քաջարի և հնարկու պատերազմիկի համբաւ հանած էր և Բիւզանդեան բանակներուն ջիղն ու կորովն էր:

Իսկ ըստ Թէոփանէս Եւրայարեալի (որ Կոստանդին Է. ի օրով կը գրէր և այլևս պատճառ չունէր չողորթութիւն), Մարինոս «ոչ անցան կամ անձանօք բախտի» իր կարգին ուժ մը կը ներկայացնէր իբր ծովակալ նաւատորմին: Այս երկուքը, իբր պետութեան ամէնէն ազդեցիկ անձերը, կը կազմէին գլխաւոր սպանալիքը, վասնզի անոնց հակառակութիւնը կրնար վտանգել Միքայէլի զանը: Ուստի կայսրը չէզոքացնելու համար Մանուէլը և Մարինոսը, որոնք իրենց նեցուկ ունէին Մամիկոնեան մեծ ընտանիքը, զօրաւոր բանակ մը, նաւատորմիցը և բոլոր Հայ զանգուածները, որոնց համակրանքին պէտք ունէր, ինչպէս նաեւ մեղաւորներու համար իր ոճիբին ներշնչած ատելութիւնը, խնամիրացաւ ասոնց հետ, իր Թէոփիլոս գաւակին կնութեան աննկով Մարինոս ծովակալ

կային աղջիկը Թէոդորան, որ հռչակաւոր էր իր սքանչելի գեղեցկու-
եամբ (*):

Անոնց հետ կապ հաստատելով և իր զաւակը Թէոփիլոսը՝ Հայ կնոջ
հետ ամուսնացած օրը (821 Մայիս 12) Աւգուստ-Թագաժառանգ հռչակե-
լով (Փետրգ Վսնական. 790) Միքայէլ կը յուսար Հայերու վրդովուծը
հանդարտեցնել, սակայն ի զուր եղաւ իր ջանքը, վասնզի ատելութիւնը
չստ խոր էր:

Թոմաս ծեր զօրապետը, որ զինուորներէն շատ սիրուած էր և Լեւոն
Հայկազնի և Միքայէլ Թլուատի հետ Վարդան «Թուրք»ի (Մամիկոնեան)
սպաթարներէն մէկը եղած էր, 822ին ապստամբեցաւ Փոքր Ասիոյ մէջ:
Պահուն բռնի տիրելու յաջորդական երկու փորձերը զէջ օրինակ եղեր
էին, և Թոմաս սակէ խրախուսուած՝ փորձեց իշխանութիւնը կորզել իր
ձախկին զինակցին ձեռքէն, որուն անտղովրդականութեան գիտակ էր:
Թոմաս, Հայու զաւակ (Գեներալ. 8) և մանկութենէն ընկերակից Լեւոն
Հայկազնի, էր համակրելի, ընկերական և քողաքացի կրթութեամբ, հա-
կառակ որ «սկիւրքանման եր ծագումով» (Գեներալ. 32):

Ըստ Բրօֆ. Ն. Ադոնցի (ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 6. 106), Թոմաս և Միքայէլ
Թլուատ՝ Վարդան «Թուրք»ի փեսաներն էին, և անոր հետ՝ 803ի ազը-
տամբութեան ժամանակ, Թոմաս չբաժնուեցաւ Վարդանէն և անոր անձնա-
տուր ըլլալէն յետոյ փախաւ Աբարներու քով, ուրկէ վրէժը լուծելու
համար Լեւոնի սպանութեան և յազուրդ տալու՝ Միքայէլի դէմ իր
որոմտութեան (Քեոփանես Եար. 50), շարժումը սկսաւ 821 Գեկտմբի-
րին, Աբարներու թոյլտուութեամբ Անտիոքի Պատրիարքէն 822ին կայսր
օծուելէ յետոյ: Թոմաս յաջողեցաւ շահիլ իր կողմը «Հայաստանի թեխա-
նութիւնը, հաղղեաց թեխանութիւնը եւ Արմենիական քիմի զօրավարը»,
և «սարժեցաւ Պարսկաստանէն, ունենալով հետը Սարակիստներ, Պարսիկ-
ներ, Իվերներ, Հայեր, Ափսազներ եւ ուրիշ այլազան ցեղեր» ըստ Մի-
քայէլի նամակին (Monsi. XIV. 417): Իր գործակիցներուն մէջ էր նաեւ
Փրիզոր Պետրոս զօրավարը, որ Լեւոն կայսեր քեռորդին էր և հետեւա-
բար Հայ (Քէոփանէս Եար. 57): Այնպէս որ, ըմբոստութիւնը առակելապէս
Հայկական էր:

Այստամբական շարժումը մեծ ծաւալ ստացաւ. Թոմաս գրեթէ
բոլոր երկիրին տիրացաւ, առաջացաւ մինչև Պոլիս և պաշարեց մայ-
րաքաղաքը (823): Թոմայի խռովութիւնը տեւեց երեք տարի (821—824):

(*) Թէոդորայի գեղեցկօրիւնը նայիսկ աշխարհաշահ էր: Գրեթէ Գրեթէ Գրեթէ
Մանուս ամիրապետին (815-850) պատգամաւոր Եանիս-ար-Ղազար, որ արժանիակն եր-
օսմաւոր բանասեզծ մքն էր, եր 839ի Քիզանդիոն եկաւ, 70 տարեկան ծերունի մքն էր,
բայց պահած իր առեական կարգը. այն աստիճան որ, բարձր կը պատգաւէր Քիզանդ-
եան արժանիքին մէջ: Այս բանասեզծը, ի սեւ Թէոդորա կայսրուհիին, զմայլանէն այլա-
յաւ, խելք, ուրիշ կարուստ է: Բանասեզծը մասնաւորապէս գերաւած է կայսրուհիին սե-
ւարակ այբեւէն: (Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 5. 73. The History of the Mohammedan
Dynasties in Spain by Ahmed Ibn Mohammed Al-Mokkari P. 414-5):

Յաջողութիւնը մեծ էր և անշուշտ պիտի յաղթանակէր և գահը գրաւէր,
եթէ կռնակէն անակնկալ կերպով չհարուածէր Պուլկար Թագաւորը՝ Մոր-
տագոն, որ մեծ զօրքով եկաւ Թոմայի դէմ և փրկեց Միքայէլը վերա-
հաս անկումէն (Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 6. 110): Թոմաս վերջապէս անձ-
նատուր եղաւ և սովորական տանջանքներով սպանուեցաւ:

Միքայէլի որդւոյն և յաջորդին՝ Թէոփիլի (829—842) ատեն Հայերը
գրեթէ ամէն ինչ էին: Սիստ փառաբանուած բայց իրապէս աննշան այս
վեհապետը, ենթարկուած էր իր կնոջ՝ Թէոդորայի և անոր ազդեցիկ ըն-
տանիքին — որ գրեթէ երկիրին բոլոր գործօն դէմքերուն հետ ուղղակի
և անուղղակի խնամութիւններ հաստատած էր — ազդեցութեան: Թէոփիլ,
որ կատարելապէս անհասկացողութիւնը ունէր ժամանակին պահանջները
ըմբռնելու, իր ամենագէտի յաւակնութեամբը և մեծութեան ցնորքովը
կողմէր անձնապէս վճռել զինուորական, ինչպէս կրօնական հարցերը, և
եթէ ինքնազուլու ձգուէր, թերեւս մեծ աղէտներու տեղի տար. բարե-
բախտաբար Թէոդորա և մանուսանդ անոր հօրեղբայրը՝ Մանուէլ Մամի-
կոնեան, իր ժամանակին ամենանշանաւոր դէմքը (*), զինք կառավարե-
ցին: Մասնաւորապէս Մանուէլ՝ Թէոփիլի իշխանութեան գլխաւոր սիւնը
եղաւ:

Անիկա, Լեւոն Ե. ի և Միքայէլի օրերէն արդէն երեւելի հանդիսացած
իր զինուորական տաղանդովը, իր առանձնոցէն բերուեցաւ Աբարներու
դէմ պատերազմը վարելու համար և նշանակուեցաւ «Սպարապետ Արե-
ւելից», պահելով սքոյներու (պալատական հեծեալ գունդի) տոմսդիկի
պաշտօնը զոր իր եղբորորդին՝ Վարդի կրտսեր որդին և տեղակալը՝ Անդ-
իգոնոս (Հայ Յոյն անուանակոչմամբ) իրօք կը վարէր (ՀԱՅՐԵՆԻՔ. Ը.
12. 60): Մանուէլ ոչ միայն շահեցաւ փառաւոր յաղթանակներ, այլ քանի
մը անգամ փրկեց Թէոփիլի կեանքը և բարձր պատիւներու արժանացաւ:
Կայսրը, որուն «աւելի զազնաւորն եր քան հպասակը» (Պըսըլ), զինքը կը
կոչէր յաճախ «բարեբար եւ փրկիչ» (Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 6. 114):
Մանուէլի այս բացառիկ դիրքը շատ նախանձը գրգռեց պալատականնե-
րուն, «եւ այն մարդը», կը գրէ պատմագիրը, որ նակասեր եր բիւրաւոր
բեմամիներու դէմ եւ ազատ եր կայսեր կեանքը. բնկնուեցաւ մի քանի
վասոզի անձերու քուրքեան առջեւ» և փախաւ Աբար ամիրապետին քով
(830), սակայն եթէր ամիս յետոյ դարձաւ, երբ Թէոփիլ զղջաց: Թէոփիլ
մեծ պատիւներով և գրկաբաց ընդունեց մեծ զօրավարը և անոր տուաւ
Մագիստրոսի և Սքուլարիոս Դոմեստիկոսի տիտղոսները: Ն. Ադոնց (ՀԱՅ-
ՐԵՆԻՔ. Ը. 7. 83—4) կը կարծէ թէ Մանուէլի դարձը դիւրացուցած է
Լեւոն Հայկազն կայսեր սպանիչները պատժելու որոշումը, որ նպատակ
ունէր գոհացում տալու և սիրաշահելու պետութեան գործօն ոյծերը՝ Հա-

(*) Ձիմը գովեստով կը յիշեն Գրամադիկոս, Սիմոն Մագիստոս, Գեներալիս, Կեդ-
րեւոս, Ջոնարա: Գեցեր իր վրայ կը խօսի առանց բնկու թէ Հայ էր: Վարդան պատմիչ
կը յիշէ զայն իբր Մամիկոնեան (77):

յերը՝ Մանուէլ իր դարձէն յետոյ Արաբներու դէմ 18 անգամ եւս ճակատեցաւ, Թէոփիլի իշխանութեան ատեն:

Թէոփիլի իշխանութեան շրջանին փայլող Հայերուն մէջ նշանաւոր էր նաեւ Ալէքս-Մուշեղ Հայ նշանաւոր դէմքը, որ իր եղբորը՝ Թէոդոսի հետ նոյնպէս Մամիկոնեան տոհմէն էր, բայց ոչ Մանուէլի և Թէոդորայի ընտանիքէն: Ալէքս-Մուշեղ հաւանորէն թոռն էր այն համանուն անձին որ 792ին ըմբոստացաւ (վերը 264): Ասիկա երեւելի հանդիսացաւ Սիկիլիան պաշտպանելով, և Բիւզանդիոն կոչուեցաւ ընդունելու համար հետզհետէ «Պատրիկ», «Հիւպատոս», «Մագիստրոս» (որ միշտ մասնաւոր պատիւ մըն էր) և հուսկ յետոյ «Կեսար» տիտղոսը (*), որ չէր գործածուած Կոստանդին Ե-ի ժամանակէն ի վեր: Նշանուեցաւ կայսեր ազնկան հետ և կրկին գնաց Սիկիլիա, իբր տեղւոյն զօրագլուխ և դուքս (Գրքըւ. 406), և պաշտպանեց կղզին: Նախանձորդներ զրպարտեցին նաեւ զինքը, ոմանք ըսելով թէ Սիկիլիան Արաբներուն պիտի մատնէ, և ուրիշներ՝ թէ գահի կը ցանկայ:

Ալէքս-Մուշեղ ապահովելու համար յօժարութիւն յայտնեց վանք քաշուելու, բայց Թէոփիլ չթողուց: Սակայն երբ իր աղջիկը և անոր կինը՝ Մարիամ մեռաւ, շնորհազուրկ ըրաւ, բանտարկեց և ինչքերը զերուեց, և յետոյ թէ՛ ազատ արձակեց, թէ՛ ինչքերը վերագարծուց, ի վերջոյ, Ալէքս-Մուշեղ, կամովին կրօնաւոր եղաւ և կառոյց վանք մը, ուր ապրեցաւ և թաղուեցաւ (Թեոփիսիս Եւր. 109): Թէոդոսի իր եղբայրը, որ իր կարգին նշանաւոր Պատրիկ էր, վերջը նոյն վանքը մտաւ և առաքինի կեանքի հրաշալի օրինակ տուաւ:

Թէոփիլի կայսրութեան շրջանի պայտատական առաջնակարգ դէմքերէն էին նաեւ Կոստանդին և Թէոդոս Բարուցիկ Հայ եղբայրները: Կոստանդին ամուսնացած էր Թէոդորայի Սոֆիա քրոջ հետ: Պատրիկ էր և պալատական չորս գունդերէն մէկուն, որ կը կոչուէր Վիգլա, պետը՝ զըրունգարն էր, պաշտօն որ գրեթէ միշտ Հայ զօրականներու ձեռքն էր: Կոստանդին, որ Մագիստրոս ալ եղաւ, հօրեղբայրն էր Փոտ պատրիարքին: 838ին Ամորիայի պաշարման ատեն Արաբներու ձեռքը գերի ինկող 42 նշանաւոր զօրավարներէն մէկն էր որ անոնց հետ ընդունեց մարտիրոսութեան պատկը 845 Մարտ 6ին (Թեոփիսիս Եւր. 175. 132): Իսկ Թէոդոս, դեսպան զրկուեցաւ Լուի Բարեպաշտի մօտ՝ Պրանսա և մեռաւ իր առաքելութեան ընթացքին՝ 840ին (Յոյն. 135):

Թէոփիլի կայսրութեան շրջանին կը յիշուի նաեւ անունը Լեւոն-Սմբատ Հայուն, որ կայսեր Պրոտովեստարն (հանգերձապահը) էր և դատաւոր եղաւ երկու մասնաւոր դէպքերու մէջ:

Թէոփիլ կայսրը երբ մեռաւ (842 Յունուար 20), գահուն տիրացաւ Թէոդորա՝ իր կինը, որ կայսրը, երեք ուրիշ անձերու հետ ճնդգամու եւ

(*) Թեոփիսիս Եւրայաբեալ (106) կ'ըսէ թէ կայսր անոր համար սեպծած էր Անթիպոս Պատրիկոսեան սիդոսը (Bury. Imperial Administration, 263):

խնամակալ՝ նշանակած էր, իր հազիւ երեք տարեկան որդւոյն Միքայէլ Գ. Արաբիոսի կամ Հարբեցողի: Չափազանց նշանակելի է որ չորս խնամակալներէն (régent) երեքը՝ Թէոդորա, իր հօրեղբայրը՝ Մանուէլ Մամիկոնեան և եղբայրը՝ Բարդաս կամ Վարդ Հայկազն Հայեր էին և միայն չորրորդը՝ Թէոկրիստ Լոզոթեոս՝ Յոյն էր: Մանուէլ և Վարդ ոչ թէ իբր թագուհիին ազգականները՝ այլ իրենց անհատական արժանիքով կոչուած էին այս պաշտօնին, սակայն դժբախտաբար վանուեցան: Թէոդորա, ամբարհաւած և ինքնաւստահ, կը սիրէր իշխել և հրամայել: Անկախութեան և ինքնիշխանութեան տենչը մղեց զայն թօթափել խնամակալներու ճնշող լուծը:

Մանուէլ և Վարդ թէեւ ազգական և ազգակից երկիւղալի էին, իբր ինքնուրոյն նկարագրի տէր և արդէն ազդեցիկ անձեր, իսկ Թէոկրիստ ներքինին՝ իր համակերպող հաւատարիմ սպասաւորի հլութեամբ ամէնէն անվտանգն էր, ուստի անիկա գերագոստուեցաւ և ան որ ո'չ մըտաւոր կարողութիւն, ո'չ զինուորական ձիրք ունէր և ո'չ ալ բաւական խոնմ էր զգալու համար իր նուաստութեան չափը (Թեոփ. Եւր. 202), և իր դրանիկի բարձր դիրքը պահելու համար քսութեանէ և խարդաւանքէ զատ զէնք չուներ, նենգութեամբ և զրպարտութեամբ չէզոքացուց իր վտանգաւոր մրցակիցները: Պրոտովեստարոս (առաջին Մագիստրոս) Մանուէլ ռազմադաշտերու ձեր առիւծը, որ բնաւ վարժ չէր դարանամուտ գործունէութեան և անընդունակ էր խարդախութեան, երբ զգաց իր շուրջը լարուած դուրերը, հակառակ անոր որ սահմանուած էր իշխող դէմքը ըլլալու խնամակալութեան, իր անսովոր անշահխնդրութեան համար, որով մերժած էր՝ ժողովուրդին փափաքին հակառակ՝ կայսերական փառքը (Կենեսիս. 77—78) — որուն համար ուրիշներ ոճիրներ կը գործէին — լաւագոյն համարեց տեղի տալ և հեռանալով պալատէն, իր վանքի վերածած տան մէջ առանձնացաւ:

Մանուէլի չէզոքացումէն յետոյ, 843ին, պալատէն, հեռացաւ նաեւ Վարդ, Թէոկրիստի քսութեամբ և Թէոդորա ձեռք առաւ իշխանութիւնը և իր բոլոր ուժով նետուեցաւ քաղաքականութեան մէջ: Գէտք է ըսել թէ Մամիկոնեան կայսրուհին, ցոյց տուաւ կարողութիւն մը որուն կրնային նախանձիլ շատ մը կայսրեր: Թէոդորա, 821էն մինչև 857, իր խնամակալութեան վախճանը, Բիւզանդիոնի ամէնէն տիրական դէմքը եղած է: Տակաւին իր ամուսինը ողջ էր երբ նաւատէր դարձած էր և շատ յարգի ապրանքներ կը բերէր Բիւզանդիոն (Կենեսիս. 76. Թեոփ. Եւր. 88. Ն. Աղ. 205. Հի. Յի. 10. 100—101) ոչ թէ ընչաքաղցութեամբ այլ անտեսագիտական հաշիւներով: Իր նպատակն էր քաջալիբել ծօղային առեւտուրը, ըմբռնելով անոր կարեւորութիւնը: Այս յանդուգն գործը և նախանձեղութիւնը — բացառիկ երեւոյթ իր ժամանակներուն համար և պերճաբոս վկայական իր մտաւոր կարողութեան — ապացոյց մըն էր միեւնոյն ատեն թէ կայսրուհին կը հետաքրքրուէր պետական գործերով, հետեւաբար անփորձ և համբակ չէր, երբ տէրութեան ճակատագիրը ձեռք

առաւ և վարեց տիրական կերպով: Շառաւիղ առաջնակարգ զինուորական ընտանիքի մը, ունէր Մամիկոնեան տոհմին յատկանիշները: Կանացի արտակարգ հմայքը՝ այդ տիրական զէնքը, ընտանեկան սրբութեան խորանին մէջ ծաղկած, երբեք հրապարակ չհանուեցաւ փառասիրական և քաղաքական նպատակներով: Թէոդորան, պարկեշտ ու առաքինի, իր վայելած ժողովրդական համակրանքը կը պարտէր իր անբասիր վարքին: Թէոփիլ կայսրը, որ ի բնէ հակում ունէր զեխութեան և շուայտութեան, չափաորոշած էր շնորհիւ իր կնոջ սրբակեցութեան, վասնզի ան մեծ ազդեցութիւն ունէր իր վրայ:

Թէոփիլ գրեթէ պարպած էր պետական գանձարանը փառայեղ շէնքեր կառուցանելով հսկայական գումարներով, իսկ Թէոդորա ելեւմտական աշխուժ քաղաքականութեամբ կրցաւ լեցնել զայն, այնպէս որ, երբ ձգելով պալատը մենաստան պիտի քաշուէր, տեսնուեցաւ որ կայսրուհին ամբարներ էր 1090 կենդինար ոսկեդրամ (94,176,000 ոսկի ֆրանք) և երեք կենդինար արծաթ (Գեոգրաֆիկոս 90. Թեոփանես Շար. 171—2): Իր իշխանութեան շրջանին եթէ ուրիշ շլացուցիչ գործեր չկան, եթէ արտաքին թշնամին չէ ընկեռած կամ շախմատուած, դոնէ պետութեան սահմանները չեն նեղցած և ի զուր տեղը արիւն չէ թափուած (ՀԱՅՐԱՆԻՔ Ը. 10. 103): Իր միակ տկարութիւնը եղաւ չափազանց տարուիլը իր ամենազօր ներքինի նախարարէն՝ Թէոկրիտէն, որ յաջողեցաւ այսօրէն շնորհով և իմաստութեամբ լեցուն կին մը վրիպեցնել և իրեննեւորէն, իր Հայ շրջապատէն, բաժնել: Եթէ չենթարկուէր այդ ներքինիին և անոր միջոցաւ Յոյն կղերին ազդեցութեան, այսօր պատմութեան մէջ աւելի բարձր անուն մը պիտի ձգէր: Թէոկրիտ, որ գործիք էր Մեթոտիոս եպս.ի ձեռքը, կրցաւ համոզել կայսրուհին որ եթէ Պատկերապաշտութիւնը չվերահաստատուի, գահը պիտի վտանգուի: Եւ կատարի Պատկերամարտ կայսեր կինը դարձաւ մոլեռանդ Պատկերապաշտ՝ հակառակ տիրող Հայկական տարրին և իր բոլոր Հայ մերձաւոր ազգականներուն, որոնք ամէնն ալ համոզմամբ Պատկերամարտ էին:

Հակառակ որ Պատկերամարտութիւնը Օրթոտոքս եկեղեցիին մէջ կայունցած դրութիւն դարձած էր և Պոլսոյ պատրիարքական գահուն վրայ կը նստէր Հայազգի Յովհաննէս Բերականապէտ (Գրամադիկոս) (832—843), որ Պատկերամարտ մըն էր, նորէն արծարծուեցաւ պատկերներու հարցը: Յովհաննէս պատրիարք, որ որդին էր աստղաբաշխ Բագրատ (յուշնական կոչումով Բակրատիոս) Սկիաստէսի(*), որ 792ին մեռած էր Պոլսկարաց պատերազմին մէջ (Թեոփանես Ա6284) և եղբայրն էր Արշաւիր

(* Սկիաստէս բառը հայերէն շարժուող կառուցուած է, ինչ որ անհաւանակամ չէ: Ն. Ազոնց (ՀԱՅՐԱՆԻՔ. Բ. 3. 93) բնականակ կը պնդէ թէ կը ճանակէ եզուեակը եւ անպակ մըն էր որ կը տուէր Ազոնցի: Ն. Ազոնց կը կտրուէ թէ Բագրատ Հայաստան աւան է:

Պատրիկի, նմանապէս աւսումնասէր և դիտուն անձ մը, Պոլսոյ ամէնէն ազնուական ընտանիքներէն Մասիորգանեաններէն (Կամսարական): Յովհաննէս պատրիարք իբր գիտուն՝ ժամանակին բոլոր լուսամիտ և կրթուած մարդոց պէս Պատկերամարտութեան յարած էր և Լեւոն Հայկազնի օրերէն սկսեալ գործօն կեանք ունեցած էր իբր կայսեր խորհրդականը (Թեոփանես Շար. 435), որքան ատեն որ ան Պատկերամարտ էր: Յովհաննէս Պատրիարք, անյողողող իր համոզումներուն մէջ, տեղի չտուաւ սպառնալիքի առջեւ և հալածուեցաւ եկեղեցիէն ու քաղաքէն (Գեորգ Վանական. 811), իսկ Մեթոտիոսը պատրիարք դարձաւ (843 Մարտ 11), ինչ որ կը նշանակէր պարտութիւնը Պատկերամարտութեան, որ նախարձակ ճառագայթն էր Պաւղիկեան զօրաւոր շարժման, որ ուրիշ բան չէր եթէ ոչ անդրանիկ փորձը մտցնելու բանականութեան ճիշդ եկեղեցիէն ներս և անոր լոյսով մտքերելու և զտելու կրօնական զգացումը՝ եկեղեցական ծէսերու և անըմբռնելի խորհուրդներու ծանրութենէն:

Պատկերապաշտութեան հետ ընդդէմ միտքի և խիղճի ազատութեան, կը վերահաստատուէր կղերին տիրապետութիւնը և անոր ազդեցութեան տակ, Թէոդորա չարաչար կը հալածէր Պաւղիկեանները, որոնք Ս. Գիրքին քրիստոնէութիւնը կը կանգնեցնէին աշխարհականացած պետական ուղղահաւատութեան դէմ:

Պաւղիկեանք՝ մեծ մասամբ Հայեր, հաստատուած Եփրատի ձորին մէջ, Կողոնիա և Մելիտինէ քաղաքներուն միջեւ գտնուած Փոքր Հայքի շրջանակին մէջ, է. դարուն հալածուելի սկսան, սակայն խստաբարոյ հերձուածողները ցոյց տուին կատարի դիմադրութիւն մը, պաշտպանելու համար իրենց կրօնական համոզումները: Մուսնուրի (Տերոսիմ) անմատչելի լեռներուն կռիւնով, անոնք յաճախ յարձակողականի կը ձեռնարկէին և կ'սպաննէին իրենց հալածիչները որոնք իրենց արիւնոյտութեամբ ետ չէին մնար միջնադարեան հաւատաքննիչներէն: Անոնք նոյնիսկ զինեալ ապստամբութեան դիմեցին և Տրապիզոնի մօտ՝ լեռնագուռառներու մէջ՝ իրենց սեփական հանրապետութիւնը հիմնեցին: Ը. դարուն ըսկիզբը Հայաստանի, Կապադովկիոյ և Պոնտոսի կողմերը տարածուած այս ազանդին հետեւողներէն շատերը Միքայէլ Ա.ի (811—813) և Լեւոն Ե.ի (813—820) ատեն հալածանքներէն ազատելու համար անցան սահմանին միւս կողմը և Արաբներէն օգնութիւն խնդրեցին: Բիւզանդիոնի դէմ և ստացան՝ վասնզի Արաբ տեսակէտներուն հաշտ էր տկարացնել Բիւզանդեան կայսրութիւնը:

Անոնք հիւրընկալեցին ամէն կողմէ եկող փախստական Պաւղիկեանները որոնք հաստատուեցան Կապադովկիոյ Արգէոս լեռան շուրջը և հոն հիմնեցին երեք քաղաքներ, Տիփրիկիա (=Տիվրիկ), Արաբկիր և Կիւրիւն, որոնք երեքը միասին կը կոչուէին «Եռաքաղաք» կամ «Տրիպոլիս»: Անոնցմէ կարեւոր հատուած մը փախուաւ առաւ Մելիտինէի էմիրին քով, որ զանոնք տեղաւորեց Մելիտինէի մօտ Argoun ամրոցին մէջ:

(Պետրոս Սիկիլիացի. ԽԱ): Ասոնք առին Յաստաօֆ(*) անունը և իրենց պետն էր Սարգիս Հայր: Իսկ երբ Պաղկեկեան շարժումը դէպի Արեւմուտք կանգ առաւ, անոնցմէ մաս մը քաջաւեցաւ Հայաստան և հիմնեց Թ. դարուն վերջերը նոր կեդրոն մը Մաղկոտն գաւառին Թոնդրակ կոչուած տեղը և ստացաւ Թոնդրակեցի անունը:

Բայց Տիվրիկ՝ հին օճախը Պաղկեկեան հաւատալիքներու, միշտ անոնց գլխաւոր կեդրոնը մնաց: Մի քանի Պատկերամարտ կայսրեր իմաստութիւնը ունեցան անոնց բաւական լայն ազատութիւններ տալով սիրաշահելու, որպէսզի արաբական ներխուժումին դէմ պատուար հանդիսացող այս կենդանի ամբողջութիւնները չքանդուին: Թէոդորա, Պատկերապաշտ, իր հալածանքներով զարհուրելի կերպով հարուածեց զանոնք: 835էն սկսեալ 100,000 Պաղկեկեանք մորթազերծ եղան կամ գլխատուեցան (Հ. Բարսեղ Սարգիսեան. Ուսում. Մանիքեա-Պաղկեկեան Թոնդրակեցիներու ազանդիմ. 46), բայց կարելի չեղաւ բնաջնջել զանոնք, վասնզի իրենց գոյութիւնը պահեցին տակաւին երկար ատեն: Օրթոտոքս եկեղեցին, սակայն, երախտապարտ մնաց Թէոդորայի, որ ոչ միայն հալածեց Պաղկեկեանները, այլ նաեւ նպաստեց Պուլկարներու և Պաղարներու քրիստոնէութեան դարձին, որոնք իր օրով եղան: Ասոր համար Օրթոտոքս եկեղեցին զինքը սուրբերու կարգը դասեց և ցարդ կը տօնէ իր յիշատակը:

Թէոդորա, նաեւ կարեւոր պատերազմներ մղեց Արաբներու և Սլաւներու դէմ և ամէն կերպով իր իշխանութիւնը յիշատակելի դարձուց: Սակայն երկար չկրցաւ իշխել: 856ին, Թէոկրիտոսի սպանութեամբ վերջ գտաւ իր խնամակալութիւնը, և իշխանութիւնը ձեռք առաւ անուանապէս իր որդին Միքայէլ Գ. Արքայի, որ ոչ ընդունակութիւն ունէր և ոչ ալ ցանկութիւն զբաղելու պետական գործերով որոնք թողած էր իր մօրեղբորը՝ Վարդ Մամիկոնեանի, որ աւելի կորովի դէմք մըն էր քան իր քոյրը՝ Թէոդորան: Ինչպէս Գեղցեր (179—180) կը գիտէ, անկա իբր «գերմարդ», վեր կրօնքի և բարոյագիտութեան ամէն վարանումներէն—սորոնցմէ կ'ազդուին մարդիկ—պաղարիւն, սուանց ամենադոյզն խիղճի խայթի, ի կատար կ'ածէր օգտակար յանցանք մը: Երբ Թէոդորա հեռացուց զինքը պալատէն, մօտեցաւ գահուն օրինական ժառանգին և իր քեռորդին՝ Միքայէլի և անոր հաւանութեամբ, օգտակար նկատուած ոճիրը գործեց և պալատին չար ոգին՝ Թէոկրիտոսը մէջտեղէն վերցուց:

Վարդ, ինք ստանձնեց կայսեր դիւանադպիրին (Կանիկլիոնի քարտուղար) և Սքոյներու Դոմեստիկի պաշտօնները, իսկ լոգոթետութիւնը տուաւ իր փեսին՝ Սմբատի: Ան նաեւ հռչակուեցաւ Կեսար (862) և որովհետեւ Միքայէլ անզաւակ էր, առանց ճիգի, իրերու բնական ընթացքով, օր մը հաւանական էր որ կայսր դառնար:

(*) Պետրոս Սիկիլիացի Instabilis=Անհաստաօֆ կը կոչէ զանոնք, իսկ Հեռուածոց գիրք՝ Ազգիաճաօֆ (Հ. Բարսեղ Սարգիսեան. Ուսում. Մանիքեա-Պաղկեկեան Թոնդրակեցիներու ազանդիմ. 45):

Վարդ, օժտուած էր իր բարձր դիրքին պահանջած յատկութիւններով: Թշնամի գրիչներու իսկ վկայութեամբ կը հաստատուի իր վարչական մեծ ձիրքերը, արդարադատութիւնը և անկաշառութիւնը: Հպարտ էր իր ոյժին և արժանիքին գիտակցութեամբը: Գիտէր թէ ինչ կը նշանակէր ամբոխի աչքին իշխանաւորին շուքն ու շքեղութիւնը, և ևստի կը սիրէր նաեւ պերճութիւնը և փառայեղ շրջապատը: Ան վարեց պետական գործերը, այնպիսի հմտութեամբ և յաջողութեամբ որ, տհաճութեան և բողոքի շնուկ իսկ չի կար: Աննման է իր բեղուն գործունէութիւնը կրթական ասպարէզին մէջ և իրապէս արժանի ամէն գովեստի և հիացման՝ իբր գիտութեանց և դպրութեանց բարեկամ:

Քրիստոնէութիւնը կործանելով հեթանոս աշխարհայեացքը, չէր ինայտ նաեւ հեթանոս գիտութիւններու և մտաւոր խոշոր արդիւնքներու: Ս. Գիրքն յայտարարուած էր իմաստութեան աղբիւր և անոր հեղինակութիւնը ոյժ մը, որուն առջեւ պէտք էր տեղի տային և ծածկուէին ձեռագիրներու մէջ պահուած որոնող միտքերու լաւագոյն վաստակները, Հելլէն իմաստութեան աւանդները: Մեռած էր գիտութեան կենդանի շունչը և ծաղկած աստուածաբանութեան անպատեղ ծառը, և չորցած՝ հին իմաստասիրութեան ատոք սերմերը: Դարերով մարդկային ըննող և յաւաղողէմ միտքը մնացած էր շղթայուած կրօնական նախապաշարումներուն ստրկական նկուն վիճակին մէջ: Ըմբոստութեան նշանները երեւացին առաջին անգամ Թ. դարուն և անոր նախակարապետները Հայերը հանդիսացան, ինչպէս բովանդակ Արեւելքի նոյնպէս մոլեռանդ Բիւզանդ գիտնի մէջ:

Վարդ քայլ անբարոյական հանճարը, կ'ըսէ Հ. Գեղցեր (192), որուն համար բոլոր իր նման մարդիկը լոկ քարեր էին իր խաղի օսիսակից վրայ, գոնէ ազնիւ եռանդ մը ունէր գիտութիւններու համար: Անիկա հիմնեց փիլիսոփայութեան, լեզուագիտութեան եւ բնական գիտութեանց համար սեսակ մը բարձրագոյն դպրոց, ուր նախկին պատրիարք՝ գիտուն Յովհ. Քերականի աօակեցները կ'ուսուցանէին փիլիսոփայութիւն, ֆեռականութիւն, հարսասանութիւն, երկրաչափութիւն եւ աստղագիտութիւն: Անիկա փորձեց բարձրացնել նաեւ իրաւագիտութիւնը: Ուրիշ հեղինակ մը (ՄՀ. Գ. XXII 710) կը գրէ. «բոս ժամանակագիրներու, Վարդ Կեսար (856—866) վերակենդանացուց ոչ-կրօնական գրականութիւնը որ անհետացած եւ կորուսած էր բազում արիներէ ի վեր կայսրերու բարբարոսութեան եւ զգիտութեան ետեսէն: Վարդ Կեսար իւրաքանչիւր գիտութեան գպրոց մը սահմանեց որոշուած սեղի մը վրայ: Գիտականներ հաւաքեց Մագնաւբայի պալատին մէջ, առասածեռնօրէն անոնց ապրուստը ապահովեց եւ հրամայեց ձրի կրթութիւն տալ իրենց աօակեցներուն: Ժամանակագիրները կ'եզրակացնեն բնելով որ Վարդի անձնական գործը այնչափ լաւ արդիւնք տուաւ, որ օրէնսգիտութիւնը վերականգնեցաւ»:

Վարդ, որ ուսեալ և կրթասէր էր և կը գնահատէր դասական գրականութեան արժէքը, այսպէս հանդիսացաւ Թ. ժխաւարին դարուն մէջ ա-

մեճեճ լուսամիջ կառավարողը» (Գըսըլ), որ տեսնելով թագնուած գիտու-
թեան նորարողը ծիւրը, անոնց զարգացման համար էիննեց Գոյսոյ
համալսարանը և հոն դասախօսելու հրաւիրեց դարուն ամենանշանաւոր
մեծ փիլիսոփան Հայազգի Լեւոն մեծ գիտնականը (ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 12. 58
—9), որ եղբորորդին էր քերականագէտ Յովհաննէս պատրիարքի (վերը
271): Լեւոն ոչ միայն հմուտ էր փիլիսոփայութեան, ճարտասանութեան
և քերթողական և քերականի արուեստներուն, այլ նաեւ առաջինն էր որ
ուշադրութիւն դարձուցած էր մոռացութեան արուած բնական գիտու-
եանց վրայ և կատարելութեան հասուցած երկրաչափութիւնը, աստղա-
բաշխութիւնը, ուսողութիւնը (մաթեմատիկա) և մինչեւ իսկ երաժշտու-
թիւնը: Ան շատ բան կը պարտէր իր գիտուն հօրեղբոր, որուն ազդեցու-
թեամբ անշուշտ հոգեւոր կոչում ստացաւ և Թեսաղոնիկէի եպիսկոպոս
եղաւ երեք տարի (840—843): Սակայն, իր հօրեղբորը անկումէն յետոյ
ինք եւս ստիպուեցաւ թողուլ իր աթոռը, և ինչպէս կը թուի, նոյնիսկ
եկեղեցականութիւնը—որուն համար մասնաւոր սէր և հակում չունէր—
և նորէն դարձաւ ուսուցչութեան:

Լեւոն բեղմնաւոր դործունէութիւն սենեցաւ և հասուց նշանաւոր ա-
շակերտներ, որոնցմէ մէկ քանիները նոյն դպրոցին մէջ դասախօսեցին:
Մագնաւրայի համալսարանը անժխտելի փառքի կոթող մըն է Վարդի լու-
սաւոր անունին:

Վարդի դրական յատկանիշներէն մէկն էր նաեւ անձնական քաջու-
թիւնը որ ցոյց տուաւ պատերազմներու մէջ:

Իր խնամակալութեան շրջանին փայլող զինուորական ամէնէն զըլ-
խաւոր դէմքն էր իր եղբայրը Պետրոնաս, Սքոլաներու Դոմեոգիկը, որ
863 Սեպտ. 3ին շահեցաւ Արարներու դէմ Գոսնի (=Գոսնտա) պատմա-
կան յաղթանակը, ուր սպանուեցան Մելիտինէի էմիր Էօմէրը, Պաղիկ-
եաններու պեա՝ Կարբէասը և Տարսոնի էմիր՝ Ալի Իպն Սահիա էլ Ար-
մէն Հայ զօրավորը—երեք դաշնակիցներ, որոնք մեծ դժուարութիւն կը
պատճառէին կայսրութեան— և երկար ատենի համար ապահովեց Արե-
ւելքի խաղաղութիւնը (ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 11. 101): Իր բարձր և պատաս-
խանատու պաշտօնը և իր ցոյց տուած ռազմագիտական կարողութիւնը
նշան են թէ Մամիկոնեան տան այս անգամը կարող անձ մըն էր, որ ըս-
տացաւ Մագիստրոսութեան պատիւ (Յոյն. 104), և կերպով մը գլխաւոր
սիւնն ու նեցուկը եղաւ Վարդի, որուն երկու զաւակները նաեւ կարեւոր
պաշտօններ ունէին: Անդրանիկը՝ (անունը անծանօթ) որ Միտապարպեա
էր արեւմտեան մի քանի բանակաթեմերու, վաղամեռիկ եղած է 862էն
առաջ, իսկ կրտսերը՝ Անդիգոն—ինչպէս տեսնուեցաւ (վերը 271)—մանուկ
հասակէն կարգուած էր սքոլներու դոմեոգիկ, այսինքն պալատական հեծ-
եալ զունդի զօրապետ: Այսպէս, Վարդ շրջապատուած էր բոլոր իր ազ-
գակիցներէն և ազգականներէն, սակայն ունէր նաեւ կատարի հակառա-
կորդներ: Անոնցմէ մէկն էր Հայազգի Կոստանդին Մանեակ (*) Պատրիկը,

(*) Մանեակ բնակիչն Եսեմաւոր դէմքը կը յիշուի Բիւզանդեան պատմութեան մէջ:

որ իր Ֆիզիքական և հոգեկան փայլուն ձիրքերով, առաջանալով Վիդիխ
Դրունգար (հրամանատար անձնապահներու) եղած էր և ստացած Պատրի-
կի և Լոգոթետի աստիճան: Երբեմն անձնական բարեկամ Թէոփիլ կայ-
սեր՝ անոր Միքայէլ որդւոյն ատեն, կը մասնակցէր կրկէսի խաղերուն և
պալատական անցուղարձերու մէջ ազդեցիկ դեր կը կատարէր: Անիկա
մասնակից էր և համաձայն Պատկերամարտ Յովհաննէս Քերականագէտ
Պատրիարքի զաննկէցութեան և հակառակած էր 858ին Իգնատիոսի
սապալումին, որուն կողմնակից էին երկու Հայ պաշտօնատարներ, Վա-
հան Անգորէս Պատրիկ և Լեւոն Լալակոն, Նումէրեան գունդին զօրա-
վարը:

Կոստանդին աշխատած էր փրկելու Թէոկրիստի կեանքը Վարդի և իբ
զաւանակիցներու ձեռքէն, և չէր յաջողած:

Վարդի եկեղեցական քաղաքականութիւնն է որ ամէնէն աւելի քըն-
նադատուած է իր ժամանակակիցներէն, որոնք զինքը կը նկատէին պատ-
ճառ եկեղեցիին վրդովումին տասը տարի (859—869), մինչ իրականու-
թիւնը այն է որ Իգնատիոս Պատրիարք (847—858 Նոյեմ. 28 և 867—
878) նախազգալով որ ինքն իբր բարեկամը և պաշտպանեալը Թէոկրիստի,
չէր կրնար Վարդի բարեկամութիւնը վայելել, փորձած էր սապալել
Վարդը՝ որ աւելի ճարպիկ քան ինք, գահընկէց ըրաւ Իգնատիոսը և
տեղը դրաւ աշխարհական Փոռը, որ քանի մը օրուան մէջ (20—24
Դեկտ. 858) ստացաւ բոլոր եկեղեցական աստիճանները և բարձրացաւ
պատրիարքական աթոռ:

Փոռ, իր դարուն ամէնէն լուսաւորուած միաքերէն մէկը, ամենագէտ
և հանելի վարուողութեամբ (Գըսըլ, 173) պետական անձ մըն էր և պա-
լատական (պրոտոպաթար=սուսերակիր և պրոտո-ասիկրիտ=առաջին
քարտուղար) և սիրելին Վարդի՝ որպէս գիտուն և զարգացած գլուխ:

Փոռ Հայ էր և ազգական Վարդի, զի եղբայրն էր անոր Իրենէ քրոջը
ամուսնոյն Սարգիս Պատրիկի և եղբորորդին Կոստանդին և Թէոդոս Բարու-
ցիկ եղբայրներուն (վերը 272) ու քեռորդին՝ Արչաւիր Պատրիկի և Մա-
գիստրոսի (*) (ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 12. 65), որ ամուսնացած էր Թէոդորա կայս-
րուհին երեք քոյրերէն Իրենէի հետ:

Փոռ ասգեղ եւ բեմամական կրճով պաշտօնակն պատրիարքին բարե-
կամները եւ կողմնակիցները հալածելէ յետոյ, վարեց իր պատրիարքու քիւնը
իսկապէս արժանավայել եւ օտս մեծ փառով» (Գեղցեր. 188), վասնզի
անիկա ոչ միայն Օրթոտոքս եկեղեցիին վերջնական կազմակերպութեան
և ինքնուրուութեան մեծ գործաւորը, այլ նաեւ անոր դաւանանքին քա-
րողիչը և նշանաւոր մատենագիր մը եղաւ: Գործերը որ մնացած են իր-
մէն, կը հաստատեն իր լայն ծանօթութիւնները և խորապէս մշակուած

(*) Կը կարծուի ըլլալ Կամարական ցեղէն, որով Փոռ ի մօտէ եւս կ'ըլլայ Հայ
(ՀԱՅՐԵՆԻՔ. Ը. 5. 74): Ոմամ Արեաւիքը՝ Վարդի փեսան, անոր քրոջ՝ Կալս-Մարիայի հետ
ամուսնացած կը կարծեն:

Մաւրիան) և իր եղբորորդին(*) Ասիւայան (Ասիլէոն), դաւել ամենակարող
 կեսարին կեանքին դէմ: Այս սպանութեան համամիտ էր կ'երեւել կոս-
 տանդին Մանեակ (վերջ 278) որ կը պաշտպանէ կայսեր կեանքը և վերջ
 կու տայ այդ առթիւ պատահած արիւնահեղութեան: Սակայն տարի մը
 յետոյ, երբ Վասիլ՝ որ կեսար դարձած էր՝ նոյն դաւակնիցներով սպաննեց
 նաեւ Միքայէլ կայսրը, ինք որ սղգականն էր Վասիլի (Կենեսիոս) և ա-
 նոր փառաւոր կայսրութեան առաջին շրջանին բարեկամն ու խորհրդա-
 կանը և աջակիցը եղաւ, չկրցաւ Վասիլի ծրագրած ոճիրին արգելք ըլ-
 լալ:

Վասիլ տիրացաւ կայսերական գահուն՝ ընկճելէ յետոյ այն ապստամ-
 բութիւնը զոր Լոգոթետ Սմբատ յարոյց 866ին, յուսախաբ Վասիլէն՝ որ
 ամէն իշխանութիւն ինքն ձեռք առած և զինքը թրակէսեան բանակին
 հրամանատար նշանակելով մայրաքաղաքէն հեռացուցած էր: Այս ապս-
 տամբութեան մէջ Սմբատի հետ էր Ոփսիկիոնի հրամանատարը՝ Հայազգի
 Պէգանի որդի Գէորգ Ստրադելատ (Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ. Թ. 9. 135—
 6): Այս շարժումը զսպեց Նիկեփոր Մալինոս զօրավարը՝ որ կը պատկա-
 ճէր Հայ ազնուատոհմ ընտանիքի մը:

Վասիլ Ա. էն (867—886) յետոյ, Բիւզանդական կառավարութիւնը, որ
 եթէ ոչ ուղղակի գէթ անուղղակի Հայերու սեփականութիւն դարձած էր,
 այլևս ուղղակի Հայերու իշխանութեան կ'ենթարկուէր և յաջորդաբար,
 շուրջ դար ու կէս, (867—1025) Հայերը թէ՛ կը կառավարէին Ա-
 րեւելեան Հռոմէական կայսրութիւնը — որ այդ շրջանին իր զէնթին
 վրայ էր — թէ՛ կը պահպանէին անտեղիտայի կորովով մը արեւմտեան
 քաղաքակրթութիւնը արեւելեան բարբարոսութեան դէմ՝ իբր ճշմարիտ
 արիւնքի վերահաստատողներ (Restitores Orbis):

Շուրջ Տիւրկ կ'ըսէ թէ «Բիւզանդեան կայսրութիւնը անօրինակ մէկ
 բախտով դար ու կէս շարունակ իրարու յաջորդող միապետներու շարք մը
 ունեցաւ, որոնք գրեթէ ամենքն ալ նշանաւոր եղան...: Կորովի եւ խստա-
 սիրտ մարդիկ, անվարան եւ անգուր, սիրական հզօր կամեերով՝ աւելի հե-
 տամուտ երկիւղ ներքնջելու քան սիրուելու, բայց ամենքը կայսրութեան
 մեծութեան բուռն նախանձախնդիր, մեծանուն զօրականներ, որոնց կեանքն
 կ'անցնէր բանակներու մէջ զինուորներու հետ, ուր կը սիրեն կայսրութեան
 զօրութեան աղբիւրը սեսնել, իմաստուն կառավարիչներ, յամառ, անկուն,
 որ վարանիլ չեն գիտեր, երբ հասարակաց բարիքին համար պէտք է գործել:
 Ունայն ծախսերու սիրահար չեն, իրենց միակ հարսութիւնն է աւելցնել
 ազգային հարսութիւնը: Պալատական պերհանքն ու հարսութիւնը, շուրջ
 ու բափօսները զիրենց կը հետաքրքրէին այն չափով, ինչ չափով որ այդ
 բոլորը կը ծառայէին քաղաքական նպատակներու եւ կը պահպանէին

(*) Ասոր համար Յոյն պատմագիրներ (Սիմեոն Մագիստրոս եւ Գէորգ Վա-
 նական) մերք Սմբատի եւ մերք Վասիլի եղբորորդի բռնած են: Ն. Ադոնց կը հաստատէ
 Վասիլի եղբորորդի ըլլալը (ՀԱՅՐԵՆԻՔ. Թ. 9. 140):

կայսրութեան ու կայսեր վարկը: Փառքի սիրահար ու սիրեցնից լի մե-
 ծութեան ծարաւով, անոնք ուզեցին Բիւզանդեան կայսրութիւնը դարձնել
 Արեւելի մեծ պետութիւնը, միանգամայն հելլենականութեան ու օրթոսոֆ-
 սութեան ախոյեանը ... իրենց զինական սխալներով, իրենց նկուն
 դիւանագիտութեամբ, կառավարելու հմտութեամբ անոնք իրագործեցին ի-
 րենց երազը եւ այդ ժամանակները դարձուցին իրական վերածնութեան
 օրջանը Բիւզանդեան կայսրութեան երկարատեւ պատմութեան»:

Հիմնաւոր կամ անհիմն, Վասիլի Հայ արքայական (Արչակունի) ծա-
 դումը, որ գոհացում կու տար Արեւելքի ազնուականութեան ի նպաստ
 ընդհանուր զգացումին — այն ատեն տիրական Բիւզանդիոնի մէջ — և որ
 զօրեղազոյն սպացոյցն էր թէ թ. դարուն ամբողջովին կառավարութիւ-
 նը գրաւուած էր Հայ անհատականութեան և աւանդական ձիրքերուն վը-
 րայ բարձր համարումէն (Պըսըլ 341), մեծապէս նպաստած է իր գահը դը-
 րաւելու ձեռնարկին:

«Այս եղանակը որով ան գահին սիրացաւ, Վասիլի ամենաքեթել խրդ-
 անհարութիւն չէր պատճառած: Ան կը պահպանէր այն հանճարեղ բայց չա-
 փագանց ուժեղ նկարագիրներուն, ինչպէս էին Սիլլա, Քիողերիս, Գլովիս,
 Նաբոլեոն Ա., որոնք անօգուտ սպանդ չեն ընէր, բայց օգտակար եղեւնա-
 գործութիւնը կը կատարէին կամ կատարել կուտան հոգեկան ամենամեծ հան-
 դարսութեամբ իբր հակասագրական անհրաժեշտութիւն» (Գեյցեր. 194—5):

Վասիլ Ա., առաջնորդուած այս ոգիէն, հանդիսացաւ Բիւզանդեան
 կայսրերու ամէնէն նշանաւորներէն մէկը, և փառքը եղաւ այդ գահուն,
 սոյ միայն իր զինուորական յաղթանակներով, այլ նաեւ պետութեան վե-
 րանորոգութեան համար իր ըրած ձեռնարկներով: Ան տուաւ բանակին
 նոր կազմակերպութիւն և զինուորական ծառայութեան պայմանները բա-
 րեփոխեց, ինչպէս նաեւ վերակազմեց դատարանները և հողային ու ուրիշ
 տուրքերը որոշելու և հաւաքելու դրութիւնը:

Այս վերակերտիչ աշխատութեան մէջ իրեն զլիաւոր գործակիցներն
 եղան զլիաւորապէս Հայ զինուորական և քաղաքային պաշտօնատարներ:
 Մայրաքաղաքին եպարքոն (քաղաքապետ և ոստիկանապետ) էր Վարդ
 Կեսարի և Քէողորայի եղբորը՝ Պետրոնասի որդին՝ Մարիան: Հետեւաբար
 (օտարներէ կազմուած գունդին պետ) էր Արտաւազդ և պալատական հեծ-
 եալ գունդերուն՝ Սքոլաներու Դոմեստիկն էր իր եղբայրը՝ Մարիանոս
 Կալ: Իր քովն էր նաեւ իր միւս եղբայրը՝ Սմբատ:

Միայն, չպաշտպանեց Փոտը, որ չէր սիրուած իր աւանդապաշտ ժա-
 մանակակիցներէն և բոլոր Վարդի հակառակորդներէն: Հետեւաբար իր
 առաջին գործերէն մէկը եղաւ զայն պաշտօնանկ աքսորել և Իզնաթոսը
 վերահաստատել (867 Նոյեմ. 23), այն յոյսով որ ասով նաեւ Հռոմի հեռ-
 իրաւախոհ ըլլալ կարելի պիտի ըլլար: Քիչ յետոյ, սակայն, Փոտը նշանա-
 կեց իր զաւակներուն դատարարակ և երբ Հռոմի ամբարտաւանութիւնը
 տեսաւ՝ վերտօն Պատրիարք ըրաւ (877—886) և քաջալերեց որ անիկա
 իրագործէ Յոյն Եկեղեցիին կատարեալ ձեռքադառումը Հռոմէականէն:

Ժ. դարուն, Հայկական այս ազդեցութիւնը դարձեալ կար և կը մընար, մասնաւորապէս Կոստանդին Միրանածինի ատեն, որ ըստ Հ. Գեղեցիկի մարմնացուցած էր «Le roi règne, mais il ne gouverne pas» (Թագաւորը կը թագաւորէ, բայց չի կառավարեր) սկզբունքը: Թէ՛ անչափահաս և թէ՛ չափահաս, ան երբեք չէ կառավարած և չէ կարելի ժխտել, որ սիկա պետութեան համար բարեբախտութիւն եղած է, որովհետեւ երկիրին ճակատագիրը մնացած է աւելի ընդունակ ձեռքերու մէջ: Ըստ Գեղեցիկի, այս երեւոյթը միայն Կոստանդինի շրջանին յատուկ չէր, այլ Հայկական հարստութեան բոլոր կայսրերը, բացի երկուքէն միայն, անուանապէս կառավարած են երկիրը, և «կառավարութեան դեկր յանձնուած երկրի գիւնուորակն բարձրագոյն խորհուրդի արտակարգ ընդունակ և գործունեայ զինուորակազինեալն որոնք մեծ մասամբ ՀԱՅԿԱՅՈՒՆ ծագմամբ մարդիկ էին» (Գեղեցիկ. 208):

Ասով հանդերձ, դիտելի է որ Կոստանդին Միրանածին, որ կայսերական գահուն վրայ գտնուեցաւ զրեթէ կէս դար (913—959), բոլորովին անընդունակ և ապաշնորհ մէկը չէր: Թէպէտ զինուորականի տաղանդ և վարելի կորով չունէր, սակայն իր պետութեան մեծագոյն միջոցն էր: Պատմաբան էր, բանաստեղծ, երաժիշտ, շարականներու հեղինակ, լաւ ճարտարագետ, ճարտար մեքենագործ, անմրցելի մետաղագործ, քիչ մըն ալ արձանագործ, քաջ նաւագէտ, իր դարուն լաւագոյն նկարիչը, բոլորն ալ ինքնօգնութեամբ: «Բոլոր կայսրերու մեջ ամենագիտնականը» որպէս անուանուած Կոստանդին Միրանածինը, որ կը կարծուի թէ նաեւ գիտէր հայերէն և կը պարծենար իր Հայ ծագումով, գրած է Վասիլի կենսագրութիւնը, Եղեցիկի դաստառակին պատմութիւնը, բանակաթեմերու վրայ անգին գրութիւն մը, կայսերական արարողութեանց ծիսարան մը, բժշկական, երկրագործական երկեր և օրինագիրք մը, և այլն: Կոստանդին նաեւ իր շուրջը հաւաքած էր գիտուններու և գրողներու խումբ մը, որոնք իր յանձնարարութեամբ կ'երկասիրէին այն մեծ մասամբ քաղուածոյ գործերը որոնցմով փորձեց ան նպատակ իր ժամանակակիցներուն և ապագայ սերունդին մտաւոր զարգացմանը: Այս գիտնականներու կազմին մէջ վստահութեամբ կարելի է դասել Միքայէլ Գ. Արքիդի ժամանակակից ազդեցիկ Հայ Կոստանդին Պատրիկի (վերը 278) երկու զարգացած զաւակները՝ Թովմաս և Գեներիոս (Լեւոն Ղրամադրիոս. 249): Թովմաս նշանաւոր դեր կատարած է Կոստանդին Է.ի մանկութեան ատեն, իբր Լոգոթետ: Բայց յետոյ իրեն արուած է Պատրիկ տիտղոսը: Նոյնիսկ Միրանածին կայսրը իր պատմագրութեան մէջ կը յիշատակէ Թովմաս Պատրիկը իբր անկաշառ պաշտօնեայ և իբր նշանաւոր գիտնական (Ձերտիկանս Հիւր. Byzantinische Studien. 1876): Իր որդին էր Յովսէփ Գեներիոս՝ Բիւզանդացի պատմագիրը, որ Կանիկլիոնի շարտուղար էր, այսօրն դիւանապետ Կոստանդին Միրանածինի ժամանակ: Գրած է Լեւոն Ծ., Միքայէլ Բ., Թէոփիլոս, Միքայէլ Գ. և Վասիլ կայսրերու պատմութիւնը, որ ըստ Յ. Հիրշի, զերծ չէ կողմնակալ ոգիէ մը (ՓՈՐՁ 1877.

339—344): Գեներիոսի գործը պէտք է գրուած ըլլար 945—950ի միջոցներուն՝ Կոստանդին Է.ի հրամանով և անոր նուիրուած (նոյն):

Դարձեալ Հայերն էին ուրեմն գլխաւոր մշակողները այն մտաւոր շարժումին որ առնթեր պերճանքին և շքեղութեան կը փթթէր Ժ. դարուն, Բիւզանդեան կայսրերու «Սրբազան պալատ»ին՝ դաւադրութեանց այդ նողկալի բոյնին մէջ, առանց սակայն դադարիլէ երկիրին վարչութիւնը և զինուորական ոյժը իրենց ձեռքը ունենալէ:

Արդարեւ, 917ին, Պուլկարաց դէմ պատերազմին ցամաքային զօրքին հրամանատարը՝ Լեւոն Փոկաս և ծովակալը՝ Ռոմանոս Լեկաբենոս (*) էին, երկուքն ալ Հայ, որոնք իրարու դաւեցին և Ռոմանոս իբր մատնիչ պիտի կուրցուէր եթէ Չոյէ թագուհին — անոր պաշտպանը և պաշտողը, վասնզի երիտասարդ և գեղեցիկ էր — չփրկէր: Երկու մրցակիցներէն յաղթանակը մնաց, աւելի կեղծաւոր և անխիղճ Ռոմանոսի, որ 919 Մարտ 15ին կայսրութեան խնամակալ եղաւ, և Լեւոն Փոկաս, որ արեւելեան գունդերով կայսրը «բռնաւորին ձեռքէն ազատել» փորձեց, ձերբակալուելով իր աչքերը կորսնցուց: Կոստանդին Միրանածին չափահաս հուշակուցաւ և ամուսնացաւ Հեղինէի հետ որ աղջիկն էր Ռոմանոսի որ այս առթիւ ստացաւ «Թագաւորահայր»ի ստաիճանը և իր հրամանատարութիւնը տուաւ իր Քրիստափոր զաւակին:

Թուլամորթ Կոստանդին չուտով իր կորովի աները անուանեց կեսար (920 Սեպտ. 24) և քիչ յետոյ՝ զահակից (920 Դեկտ. 17): Այսպէս, անգամ մը միահեծան կայսր դառնալէ յետոյ, Ռոմանոս յաջորդաբար զահակից ըրաւ իր երեք զաւակները և մէկ թողը, իսկ պատրիարքական տեղին ալ իր ընտանիքին սեփականելու համար իր 26 տարեկան որդին՝ Թէոփիլակոսը (**) եկեղեցական ըրաւ և յետոյ՝ պատրիարք (947): Այսպէս, Ռոմանոս իր տիրակալութեան 25 տարիներուն (920—944), Միրանածինի «կայսր» տիտղոսէն և գիրքերէն զատ ոչինչ թողուց և կ'ըսեն թէ զայն կը համարէր սոսկ իր արքունի պատմաբանը:

Ռոմանոս՝ իր Հայ շրջապատով, ունեցաւ զովելի գործունէութիւն մը, մաքառելով կղերին դէմ զոր կ'ուզէր պետութեան հլու կամակատար ընել: Պայքարեցաւ նաեւ կալուածատէրներուն դէմ, որպէսզի փրկէ աղքատները հարուստներու ճնշումէն, վասնզի համոզուած էր թէ պետութեան սահմանները պաշտպանելէն նուազ պարտականութիւն չէր անոնց պաշտպանութիւնը բռնակալներու դէմ (Գեղեցիկ. 217): Այս նպատակով

(*) Ռոմանոս խեղճ զինուոր մըն էր Ռեմենակեալ քսմէն, ռամիկ դաւէն (Abbe Albert Vogt. CMH. Գ 61) և որդին էր Հայասան ծնած Թէոփիլակոս Ավասակոսի (Théophylacte Abestactus = Հայ կոչումով բոս ոմանց Վասակ Գարեղեան) որ 870ին պատրիարքի մէջ Վասիլ կայսր կեանք փրկած էր (Լուիքրանց Կրմանայ եպս.— դեպակն Օրոն կայսր.— Գ. Բ.):

(**) Թէոփիլակոս՝ որ հետեւ էր եկեղեցական կոչում ունենալէ, աւելի զուարճաւոր մըն էր որ մասնաւորապէս ձեռք կը սրէր: 2000 ձի ունէր և մեծաւ ձիէն ինճալով (966 Փետ. 27):

(959 Նոյեմ. 9) և յետոյ սիրային յարաբերութեան մտած՝ ժամանակին հերոսը Նիկեփոր Փոկասի հետ, որ Հայ, Թրակացի և Մակեդոնացի զօրքերով ծովահէններու դէմ մեծ արշաւանք մը կատարած էր 961ին (*) և Կրէտէի իսլամ բնակչութիւնը դուրս քշած կամ քրիստոնէացուցած էր, և ապա սնցած էր Ասիա, օգնելու համար իր Լեւոն եղբօրը, որ 960ին մեծ ջարդ մը տուած էր Արաբներուն Գաղափոյ մօտ, և առաջացած էր մինչեւ Հալէպ, տիրելով 55 բերդերու և բազում քաղաքներու (962):

Թէոփանօ, անոր կը խոստանայ կայսրութիւնը և կը թունաւորէ իր ամուսինը՝ Գալոն Փետրոն (գեղեցիկ տղայ) կոչուած այլասերած, մեղկ և թոյլ Ռոմանոս Բ.ը, որ իր մահուան օրը (963 Մարտ 16) կը կտակէ իր Վասիլ զուակին որ Նիկեփոր միշտ զօրավար մնայ: Ռոմանոս Բ.ի սենեկապետը՝ Յովսէփ Բրիգաս (Brugas) Գատրիկը, որ ամէն ինչ էր պալատին մէջ, նախազգարով վտանգը՝ կ'ուզէ շլացուցիչ խոստումներով շահիլ Նիկեփորի երկու զօրավարները՝ Գուրգէնը և Չմշկիկը, և զայն չէզոքացընել, սակայն անոնք դաւը կը պարզեն իրենց պետին և զայն կը հարկադրեն Գոլտոյ վրայ քալել (Abbé Albert Vogt. CMH. Գ. 71) և իրենց Հայ զօրքերով կ'օգնեն որ անիկա գահը յափշտակէ 963 Օգոս. 16ին և քիչ յետոյ ամուսնանայ Թէոփանոյի հետ:

Նիկեփոր կը բանայ Բիւզանդեան կայսրութեան համար փառքի նոր շրջան մը, որուն գլխաւոր դերակատարները դարձեալ Հայերն են, որոնք «վարանդի կամ ւստորուած ազատանիք, արկածախնդիրներ՝ փախսական մահմետական հալածանքներէ կամ բախս փնտրող կայսրութեան երկիրներու մէջ, կարելի էր ամենուրեք սեսնել, քե՛ր Բիւզանդիոնի եւ քե՛ր բանակներու մէջ: Ամեն սեղ կը գնահատուէր անցնց ուղղական արժանիք» (Rambaud. L'Empire Grec de dixième siècle. Constantin Porphrogénète. Paris. 1870):

Այսպէս, Ժ. դարուն վերջին կէսին և ԺԱ.ին առաջին քառորդին, որ կը ներկայացնէ Բիւզանդեան պետութեան իսկական զէնթը (Գեղցեր 226), արքունիքը և բանակը, ինչպէս նաեւ գործօն եկեղեցականութեան մէկ կարեւոր մասը կը բաղկանար Հայերէ կամ Հայ-Հռոմէներէ, որով իշխողները ստիպուած էին հաշիւի առնել Հայերու հայեացքը, մասնաւոր անոնց զինուորական ոյժը, որ այդ շրջանին կերպով մը պատուհաս դարձաւ, Հոսմի Գրեղորեան գունդերու պէս: Հետեւաբար Հայոց նկատմամբ սելջուկի վերաբերում մը կամ բացասիկ բարեացակամութիւն մը, կայսրերու և զօրավարներու համար պարտաւորիչ եղած էր գրեթէ Նիկեփոր Փոկաս, երբ դեռ զօրավար էր Միջագետքի մէջ, միշտ Հայ զօրքը շփացուցած է: 962ին կը տիրէ Արաբ քաղաքի մը, բնակիչներուն ներում խոստանալով, սակայն իր Հայ զինուորները գերիներուն մէջ գանուող 300 կիներուն վրայ կը յարձակին և Արաբները ասոր համար զէնքի կը

(*) Կրէտէի գրուած անձ, հետաւոր հանդիսացած Նիկեփորի բանակին մէջ զբոսուող Հայեր, իրենց արիւնքուստ Յիւրազիոյ:

գիմեն (Ապուլֆարած. Սուրիական Քրոնիկ. 199): Նիկեփոր փոխանակ Հայ զինուորները պատժելու, անոնց իրաւունք կուտայ և կը ձգէ որ Արաբ գերիները ջարդեն: Իսկ կայսր ըլլալէն յետոյ, Հայ հոկաներէ բազմացած իր անձնապահ գունդը, որ ատեն մը գժտած էր ծովային զօրքերուն հետ, օր մը Ս. Սոփիայէն ելած ատեն կը հանդիպի անոնց: Զօրքերը իրար կը նախատեն, և իրարու վրայ կը յարձակին սուսերամերկ և կ'սկսին իրար ջարդել: Նիկեփոր այնքան կողմնակալ կերպով Հայերը կը պաշտպանէ որ Բիւզանդիոնի բնակիչները կ'սկսին վախնալ թէ մի գուցէ կայսրը Հայոց վրէժխնդրութեան զոնէ գիրենք, որովհետեւ ժողովուրդն ալ յաճախ առիթ կ'ունենար Հայ անձնապահներու և զինուորներու հետ կռիւ ընելու (Հ. Կ. Տէր-Սահակեան. Հայ Կայսրեր Բիւզանդիոնի. Վենետիկ. 1905 Բ. 228—231):

Նոյնպէս, 967ին, Լեւոն Ղրամադիկոսի յիշած մէկ կռիւն, ուր Գոլտոյ Հայերէն շատեր կը վերաւորուին (տես վերը 250), Նիկեփոր կը միջամտէ և կը փրկէ Հայերը, ոչ թէ անոր համար որ իրեն ցեղակից էին, այլ ապահովաբար անոր համար որ անոնք ուժ կը ներկայացնէին:

Նիկեփոր, որ իսկական զինուորական մըն էր, ըստ Գէորգ Վանականի «եքեւաց իբր կայծակ եւ սլացաւ Հռոմայեցոց թեմամբներուն դիմ... կործանեց, այրեց, գերի վարեց բարբարոսներու քաղաքները եւ երկիրները, բիւրաւոր թեմամբներ ջարդեց եւ սարածեց Հռոմայեցիներու իբխանութիւնը եւ ոյժը: Կը սարսեթն Աբաբները, կը դողային Հայերը եւ Աուրիները: Սարակիսները կը ցահանջէին եւ Քուրքերը կը փախչէին եւ Հռոմայեցիները կը սիրապետէին անոնց սեղերը եւ երկիրները եւ Փոկասի անունը ամենուն համար սարսափելի էր»:

Արդարեւ, Նիկեփոր անձամբ գնաց Արաբներուն դէմ (964), և տիրեց Մելիտինէի և Կիլիկիոյ և զանոնք Հայերով լեցուց (վերը 239—40): Նիկեփոր Եղեատրայէն անդին անցաւ և Միջագետքը աւերի մատնեց, և ապա Գոլտո դարձաւ յաղթանակ կատարելու:

Յաղթեց նաեւ Գուլկարներուն: Իր նախկին գործակիցները, Յովհաննէս Գուրգէն և Չմշկիկ, իր հըրամանին տակ շարունակեցին պայքարը անողոք թշնամիին դէմ:

968ին «յանդուգն եւ ցաղանդաւոր Միխայիլ Բուրգես (Բուրցես) կամ Ալբոնի Հայ զօրավարը, սակաւաթիւ զօրով Անիոն գրաւեց հակառակ կայսր հրամանին, որ այս յաղթանակը իրեն վերապանել կ'ուզէր: Այս պատճառով ինկաւ Նիկեփորի աջէն եւ Գոլթա կ'ապրէր իբրեւ բանսարկապան իր բնակարանին մէջ» (ՂՈՒՄԱՅ. Ե. Բ. 75): Իրեն հետ պատժուեցաւ նաեւ Կիլիկեան ձմերանոցներէն Միքայել Բուրգէսի օգնութեան համար Գետրոս Փոկաս զօրապետը:

Նիկեփոր Փոկաս, կազմակերպած էր օտար վարձկաններէ ընտիր բանակ մը որուն կորիզը Հայերը, Վրացիները, Սլաւները և Ռուսերը կը կազմէին: Զափազանց ուշագրաւ է որ Նիկեփոր, որմէ կը մնայ պատեկազմական արտեստին վրայ գիրք մը, յատկապէս զբաղած է Հայ զին-

ւորներով, որոնք կ'երեւի թէ գոհ չեն ձգած զինքը երբ իբր պահապաններ կը գործէին, վասնզի կը ձանձրանային և անհագութիւն կ'ընէին^(*)։ Իսկ յարձակման համար անհրաժեշտ կը գտնէր Հայ գունդերը, որոնք եռանդով և ճարտարութեամբ կը կռուէին և ողջ ողջ գերիներ կը բերէին և տանջելով՝ տեղեկութիւններ կ'ստանային թշնամիին ուժին վրայ։

Այս շատ հետաքրքրական գնահատութիւնները, միեւնոյն ատեն գազափար մը կու տան Հայ զինուորներու Բիւզանդեան բանակին մէջ գրուած կտրեւոր գիրքին վրայ։

Նոյնպէս հետաքրքրական է այն նոր օրէնքը որ սահմանեց Հայկական fundiներու՝ այսինքն կայսեր ծառայութեան մէջ գտնուող Հայ վարձկան զինուորներու թոշակի տեղ անոնց ստացած հողային կայուածներու համար, վասնզի անոնց տէրերը չէին կատարեր իրենց յանձնառութիւնները (Abbé Albert Vogt. CMH. Գ. 76)։

Նիկեփոր, իր առաջին մտահոգութեան առարկայ ըրած է բանակը։ Զինուորական ծախքերը անագին գումարներու կը հասնէին և ժողովուրդը կտառով էր ճնշման տակ ծանր հարկերուն զորս կայսրը բարգաժ էր քաղաքացի ժողովուրդին վրայ։ Նիկեփոր Փոկաս, հակառակ անոր որինքն Կապադովկիացի էր և կը պատկանէր մեծ կայուածատէր ընտանիքի մը, փորձեց կասեցնել ընդարձակումը մեծ ստացուածքներուն, արգիւյշու համար հողին համադրուումը (Ջաֆարիա. Գ. 296 և այլն. Schlumberger. Nicéphore Phocas. 396)։ Անիկա կղերն ալ ստիպեց իր հարուստ ստացուածքներէն բաժին հանելու պետութեան ծախքերուն։ Որպէսզի իր զինուորներուն հայրենասիրութիւնը գրգռէ, կը պահանջէր որ «յակրժներու գէմ մղուած պատերազմներու ժամանակ բոլոր սպանուածները նահատակ հուշակուէին։

Նիկեփոր, որուն զինուորները զինքը կ'ստատուածացնէին, և որ միայն մայրաքաղաքին մէջ չէր սիրուած, զի վայրագ մարդու համբաւ ունէր, 969 Դեկտեմբեր 10ին, զոհ գնաց դաւադրութեան մը և իրեն յաջորդեց Չմշկիկ, օտար երկինքի տակ գործող մեծագոյն Հայը, «իբր դարուն մեծագոյն զօրավարն ու ֆաղաֆագեթ» (Գեղցեր) և «Թիւզանդիոնի կայսրուն մեջ ամենեկն ֆաջր եւ քերես ամենեկն լաւը» (Schlumberger. L'épopée Byzantine à la fin du dixième siècle. — Jean Tzimiscès — Les Jeunes années de Bazile II. Le Tueur de Bulgares. 969—789 1896. Paris. 314)։

Վաղեմի զինուոր, փայլիլ սկսած էր այն օրերէն ի վեր ուր Կոստանդին կայսեր հրամանով Վասիլ Ներքինին, Ռոմանոս Լեկաբէնի ապօրէն գաւակը, Արեւելք գացած և կազմակերպած էր Արեւելեան (Անատոլիան)

(*) Նիկեփոր այս փորձառութիւնը կ'երեւի Հայաստան ստացած է, վասնզի հոն կազմած էր բնիկներէն մասնաւոր զուեղեր պահպանութեան համար, սակայն անոնք բռնակ կ'ստանային եւ իրենց պատժին անուաղիր էին։

բանակաթեմը, զայն երեք թեւերու բաժնելով։ Առաջինը՝ Վասիլ իրեն վերապահած էր, երկրորդը՝ առւած էր Լեւոն Փոկասի և երրորդը՝ Յովհաննէս Չմշկիկի, որ յաջողագոյնը հանդիսացած էր։

«Յովհաննէս Չմեկիկի անունը այն ատեն հոշակուած էր արդէն արողը Արեւելի մէջ։ Երկար տարիներէ ի վեր այս անվներ զինուոր, որ պէտք էր օր մը ինքն ալ կայսերական թագ կապէր եւ ոչնչացնէր ժամանակի մը համար Ռուսերու նորածին զօրութիւնը, փառքով կը ծածկէր իր անունը Յոյն-Արաբական բոլոր պատերազմներուն մէջ։ Ոչ մէկ ատեն «Նիկեփոր Գոմեպոլի» անունէն յետոյ աւելի սարսափ չէր տարածած Սարակիսներու երկիրներուն մէջ։ Անիկա Հայ շատ ազնուական ցեղէ մըն էր^(*), ծնած Հիբրոպոլիս ֆաղաֆ...։ Իր իսկական անունն էր Չմեկիկ, որ Յոյները Յիմիսիկս դարձուցին։ Անիկա Հայկական պատերազմաւէր Գուրգեններու կամ Կուրկուսներու ցեղէն էր, որ կայսրութեան արդէն այնքան մեծ մարտիկներ տուած էր։ Միեւնոյն ատեն, անիկա մօր կողմէն ազգական էր Նիկեփոր Փոկասին, որուն հետ քաղաքացիով կատարել հակապատկեր էր։ Միեւնոյն այն ատեն նա Նիկեփորի հետ ամենայալ յարաբերութիւններու մէջ եղած էր եւ նոր վերջացուցած էր անոր հետ միասին Կիլիկիոյ եւ Ասորիի արեւաւանդը։ Բանակի կեանքը եւ միասին անցուած վրասնգները, զայն սերտ բարեկամական կապով կապէր էին այս ֆաջրն հետ, որ օր մը սպանել պիտի տար այնքան անգրութեամբ իր իսկ այժիմ առջեւ, որ օր մը սպանել պիտի տար այնքան անգրութեամբ իր իսկ այժիմ առջեւ, որպէսզի անիկ իւր կիներ եւ թագը։ Յովհաննէս Չմեկիկը քերես ամենափայլուն մարմնացումն էր այս ժամանակին պատերազմական արիւրքեան։ Առանց երկիւղի, յանդուգն համարձակութեամբ եւ անհամեմատելի ամենութեան տէր, օժտուած ամենամեծ եւ ամենազիւսաւոր զինուորական արժանիքներով, զինուորները կը պատկանէին զայն։ ... Անոր զիւսաւոր բերութիւնն էր ցոփութիւնը։ Ան մղեցին սիրով կը սիրէր կիները եւ համադամ կերակուրները։ Այս նշանաւոր պատերազմիկը այն ժամանակ (963ին) Պատրիկ էր եւ ստադեպոս ասիական Անատոլիական մեծ բեմին։ Անիկա եկած էր Նիկեփորին յարելու իր նահանգին զօրաց զուլար անցած։ Ուրիշ նշանաւոր զօրագու իր, Հայկական ծագումով, կը գտնուէր բանակին մէջ։ Անիկա էր Ռոմանոս Գուրգենը, այդ անունով յայտնի պատերազմիկ տուէն, որ երկու սերունդէ՞ ի վեր նշանաւոր էին Փոկասներու հետ միայն կայսեր»

(*) Papatigopoulos որ նոր Յունաստանի Կիպրոս կը համարուի, իր հեղինակած բազմահատոր «Հիլլիսական պատմութեան» մէջ Չմեկիկի վրայ խօսելով կ'ընդունի թէ ան «կը պատկանէր Հայկական այն մեծ բնաանիքներէն միայն որոնք իրենց հակառակորդը Արեւելի քրիստոնեայ կայսրութեան հետ միացուցին եւ ինքնօրէն յոյացորեցին Ը. դարէն մինչեւ ԺԲ. դար, ու նմանապէս եանդիստացան լուսազոյն տարրը զինուորական այն անուանի ազնուապետութեան, որուն շնորհիւ Բիւզանդիոն զօրացաւ, ունեցաւ եւ փառաւորութեամբ։

Իսկ Abbé Albert Vogt (CMH. Գ. 69) կ'ըսէ թէ Գուրգեն կամ Կուրկուս եւ Չմեկիկ բնաանիքներ, Փոկաս բնաանիքն հետ որ Կապադովկեան ծագումն էր իրապէս մեծ նմարու ունէր, Փոքր Ասիոյ ամէնէն ազնուական բնաանիքներէն մէկն էր։

բական բանակներու առաջնորդութեան մէջ Սարակինոսներու դէմ վարուած պատերազմներուն: Ռոմանոս Գուրգէնը Կապադովկիոյ բնմին ստրղելիոսն էր» (Schlumberger. Nicéphore Phocas. 276—79):

Ռոմանոս Բ. ի սպանութենէն յետոյ (963 ին) Նիկեփոր Չմշկիկի տուաւ Մագիստրոսի աստիճան և Անատոլեան զօրաբանակին հրամանատար կարգեց: Այս պաշտօնին մէջ անուշիկ կոտորած տուաւ Արաբներուն (963) որոնք դարերով չմոռցան Շումուշտիկիինի (իրենց կոչուածով) անունը: Անհասաւ մինչև Տարոս, ուր Բիւզանդեան կայսրութիւնը իրեն նեցուկ ունէր Ակրիտները (սահմանապահ իշխանները) և կէս անկախ երկիրները, որոնց ժառանգական իշխանները պատիւներ կ'ստանային կայսրէն և անոր ճորտերը կը համարուէին: «Այս օրջանին, կ'ըսէ Շիլմպէրտէ, Հայերը մեծ դեր կը խաղային Բիւզանդիոնի մէջ...: Եաս Հայեր նշանակելի կերպով յաջողութիւն ունեցած էին Յոյներու մէջ:»

Չմշկիկի փառքը նախանձը կը գրգռէր Կիւրապաղատ Լեւոն Փոկաս Սպարապետին և կայսեր եղբորը, որ զրպարտութեամբ յաջողեցաւ Չմշկիկը պաշտօնանկ աքտորել տալ իր ծննդավայրը: Սակայն Չմշկիկ որ Թէոփանոյի սէրը վայելած էր, անոր հետ յարաբերութեան մտաւ և դատով սպանեց Նիկեփորը, գործակցութեամբ Միքայէլ Բուրգէս ստրաղտոսին, Անտիոքը նուաճողին, որ ապերախտութեամբ շնորհազուրկ եղած էր, Լեւոն Պետրասիմոս Պատրիկին, Թէոդոր Սեւին կամ Յովհան Անցիլպոթէոդորոսին (Jean Anzpothéodoros), Լեւոն Վալանդէտին (Balantès = Վահան) կամ Աբալանդէտին և Իսահակ իշխանին (Վահրամի որդի) և ուրիշ զօրավարներու, ամէնքն ալ Հայ:

Չմշկիկ իշխանութիւնը ձեռք առաւ 969 Գեկտ. 25 ին, և կայսր հրահակեց գահուն օրինաւոր ժառանգները՝ Վասիլ Բ.ը և Կոստանդինը և ինքն բաւականացաւ՝ առաջին նախարարի աստիճանով և կայսերական տիտղոսով: Ինչպէս Նիկեփոր Փոկաս, նոյնպէս նաեւ Չմշկիկ, իրեն նեցուկ ունենալ կ'ուզէր Հայերը, պետութեան այս գերագոր տարրը: Ասով միայն կրնայ մեկնուել իր կայսրութեան երկրորդ առասու պարձակած այն հրամանը որով իր տիրութեան բոլոր Հայերը ազատ կը կացուցանէր օտրքե (*):

Նոյնպէս իր ամուսնութիւնը Կոստանդին Միրանածինի աղջկան Թէոդորայի հետ 971 ին մեծ գոհունակութիւն պատճառեց Պոլսոյ մէջ, վասնզի Վասիլ Ա. ի օրինական սերունդը գահուն վրայ կը վերահաստատուէր (Abbé Albert Vogt. CMH. Դ. 81):

Չմշկիկ ժողովուրդին համակրանքը գրաւեց նաեւ իր գրեթէ շուրջ ընտանոթեամբ՝ հակառակ Նիկեփորի Շահեցաւ Եկեղեցականութիւնը՝ Պատրիարքին խորհուրդով՝ ջնջելով Նիկեփոր Փոկասի սեղմիչ օրէնքները:

(* Շիլմպերտէ (EB. I. 26) կը կարծէ թէ Հայկական կամ Արմենական բնմի բրնակիները հարկերէն ազատած է առակ իր գոտի բարձրագոյն տարրուան համարքէն ժամանակագիրները այդ սահմանափակումը չեն յիշեր:

ըր, և լքելով իր անձնական բոլոր հարստութիւնը՝ ի նպաստ աղքատներու և Պոլսոյ գլխաւոր ապաստանարաններէն մէկուն (EB. Ա. 16): Նոյնպէս, 969 ին, Թելուգրութեամբ Անտիոքի Հայազգի Թէոդորոս Կողոնիացի Պատրիարքին (*), Ֆիլիպուպոլսոյ շուրջը ամայի հողամասեր տարագրեց Կարնոյ և Մելիտիէի շրջաններուն Պաւլիկեանց մնացորդները, որպէսզի անոնք չկարենան ապրել (նոյն. 28—30. Կեդրեցոս, Սիլիթես, Զ. Բարսեղ Սարգիսեան. Ուսումն. Մսնիքա-Պաւլիկեան. 46, Բ. օ. Յոր. Հ. Բարսեղ Սարգիսեան. 47—48) և Պոլսոյ շուրջը (Dr. E. Tachellat. 1927. հրատ. Պուլկ. Le Museon et la Revue des Religions No. 1—3. 1927. հրատ. Պուլկ. Կրթ. Նախ. Սօֆիա. 104):

Թերեւս իր Հայ ծագումին պատճառով, մասյլ մոլեռանդութեամբ մը չվարուեցաւ այդ համայնքներուն հետ, ինչպէս կը պահանջէին խոտակրօն Յոյները, այլ հետեւեցաւ խիստ ընդունակ Կոստանդին Ե. ի օրինակին, Յոյն, Հայ, Ասորի բազմաթիւ աղանդաւորներ, ինչպէս նաեւ միաբնակ Հայեր և ասիական ժողովուրդներ փոխադրելով Թրակիա ուր անոնք աւելի օգտակար էին Հեմուսի անցքերուն պաշտպանութեան համար քան Ասիոյ մէջ, ուր Արաբները՝ բաժան բաժան եղած՝ իրարու դէմ կը պատերազմէին՝ Պալիֆաներու քայքայուած պետութեան մնացորդներու մասին: Չմշկիկ, կղերին գոհացում տալու երեւոյթին տակ, Սարգիսեան նոյն (46): Չմշկիկ, կղերին գոհացում տալու երեւոյթին տակ, քաղաքական շահեր կը հետապնդէր, վասնզի Ժ. դարուն Պուլկարներու, Ռուսներու և Հունգարացիներու շարունակական արշաւանքները ստիպողական կը դարձնէին պետութեան եւրոպական ռահմաններուն պաշտպանութեան մասին միջոցներ ձեռք առնելը:

Անուրանալի է որ — ինչպէս Հ. Կերէն Սոնտոն դիտել կու տայ — Հայ Պաւլիկեանները քաղաքական զօրաւոր ազդակ մըն էին, քանի որ իբր յանդուգն և քաջ մարդիկ, զետեղուած առաւելապէս Պոլսոյ և անոր շրջակայքը զանազան բերդերու և ամուր վայրերու մէջ՝ զօրաւոր թուաւ մըն էին արշաւող թշնամիներու դէմ (Սիմոն. 1933. 251): Չմշկիկ նոյնպէս Պոլսոյ պահպանութիւնը յանձնեց Պաւլիկեաններու: 3000 ազգութիւն Պոլսոյ պահպանութիւնը, բազմաթիւ ու օրջակայքի բազմութիւնը սարսաու մոլեռանդ զինուորներ, բազմաթիւ յարողները սուրբ ուժով կը զինուորագրէին կը մասնակից, իրենց աղանդին յարողները սուրբ ուժով կը զինուորագրէին: Միւս կողմէն իրենց վարդապետութեան ծաւալումով Պալիկեան բերակողքին ընկերային կազմակերպութիւնը հիմնովին կը քայքայէին՝ քաղաքներով դասակարգային կոիւ, բարոյական արժեքներու ուրացում եւ ժողովուրդին հոգիին մէջ կը ներարկէին անիւխանական սկզբունքներ» (Հ. Կ. Սոնտոն. Պատմ. Պուլկարացի):

Ուրեմն Չմշկիկ, որ պետութեան ամրապնդումը այժի առջեւ ունէր, հակառակ արդիւնքի մը հասաւ, վասնզի Պաւլիկեան աղանդաւորները՝

(* Հ. Կ. Տեր-Սահակեան. (Հայ Կայսրի Բիւզանդիոնի Բ. 178) այս օրջակայքի խորհրդանշանները կը վերագրէ Պոլսոյ Պատրիարք Պալիկեանի (+970 Յունուար 16):

Բոկոմիլեանն նոր կերպարանափոխութեան տակ հսկայական յառաջդիմութիւն ունեցած էին Պուլկարիոյ մէջ, և քաղաքական նպատակներու ալ ծառայել սկսած, նոյնիսկ Չար Սիմէոնի (893—927) օրերէն սկսեալ, վառնդի անիկա, հակառակ անոր որ Յովհաննէս Պատրիարք իր Թագադրութեան ատեն երկուր ճառով մը խրատած էր զինքը Պաւլիկեան «զառնուելի աղանդին յառաջդիմութեան դէմ դնել» և ինքը խոտաացած էր բոլոր ուժովը ընդդիմանալ, երբ գրաւեց Բլովտիվի նահանգը, Պաւլիկեան քարոզիչներու մուտքը թոյլատրեց և մեծ դիւրութիւններ տուաւ անոնց Մակեդոնիոյ և Պուլկարիոյ մէջ, Բիւզանդիոնի դէմ ըլլալու համար (Աթանաս Գրայէֆ. 1928 ՊՈՒԼԿԱՐԱՆԱՅՈՒՆ ՏԱՐ. 27 և 2. Կերէն Սոնժոն. Hist. de la Bulgarie. 133):

Եւ որովհետեւ իր մղած երկարատեւ և անազորոյն պատերազմները և անոնց հետեւանք հանդիսացող թշուառութիւնը, սովը և համաճարակները, նպաստաւոր պայմաններ ստեղծած էին այս աղանդին սերմերուն ընձիւղման, ծիրարձակման և ծաւալման համար (Յ. Պօղոսեան. ՓԱՐՈՍ) հազիւ քրիստոնէայ դարձած այդ երկիրին մէջ ուր զանազան առաքելութիւններ այնքան սաստիկ կը մրցէին (վերը 280):

Չար Սիմէոնի յաջորդ, անջիղ և կամազուրկ Չար Բէթերի ատեն (927—968), Երեմիա կամ Պոկոմիլ անուն Պուլկար քահանայ մը, Պաւլիկեան աղանդին սկզբունքները բարեփոխելով և այն ատենուան Պուլկար խոնարհ, բազմատանջ և իրաւազուրկ դասակարգին կրօնական և ընկերային ըմբռնումներուն յարմարցնելով, տարածեց քարոզութեամբ իր հայրենակիցներուն մէջ և արտակարգ յաջողութիւններ ձեռք բերաւ Պուլկարներու և Յոյներու մէջ (Գեւրգե. 235):

Այսպէս, մեծ մասամբ Հայերէ բազկացեալ Պաւլիկեան աղանդաւորներուն ցանած սերմերը չափէն աւելի բեղմնաւորուեցան Թ. դարուն վերջերը և մասնաւորապէս Ժ. դարուն սկիզբները (Ե. Իվանով. ՀԱՅԿԱՐԱՆ 46), վասնզի այս շրջանին մասին ժամանակակից Գօլմայի տուած տեղեկութեան համաձայն, հոգեւորականութեան մէջ կը տիրէր հաճոյքը վայելքի, իրենց կեանքը չէին պատշաճեցնէր իրենց քարոզութիւններուն և կ'անցընէին ոչ օրինակելի կեանք մը և զեխութեան ու շուայտութեան մէջ ընկղմած, կը կողոպտէին անպաշտպանները: Կղերը անփոյթ կը հովանաւորէր և ուժ կու տար զեկալարներու կողմէ քարոզուած սա տեսութեան թէ Թագաւորները և մեծատունները կոչուած են Աստուծմէ, այնպէս որ, տառապեալ և կեղեքուած ժողովուրդը սիրով կ'ունկնդրէր Պաւլիկեան կամ Պոկոմիլեան քարոզիչներուն, որոնք իր հոգիին կը խօսէին (Աթանաս Գրայէֆ. Երկ. 27):

Այսպէսդ, իւրաւ զարգացաւ ըզդիմադիր շարժումը և Պոկոմիլեան (*)

(*) Բրժ. Կոնիպեր իր «Աշխարհի կրօնական գրութիւնները» գործին մէջ կ'ըսէ թէ, Պաւլիկեան անունը փոխեցին և Պոկոմիլ կոչուեցան եւր Աստուածաբանաց պաշտամունքը ճշմանակալ պաւսկան բռա մըն է, իսկ Բրժ. Ճոմ Յիսի իր

աղանդը այնքան տարածուն հանգամանք մը առաւ որ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ Պուլկար պատմութեան համար (Յ. Պօղոսեան. ՓԱՐՈՍ), որ յաջորդ դարերու ընթացքին վերածուեցաւ եղաւ պատմութիւնը Պաւլիկեանց (Բրժ. Կոնիպեր):

Հայերը, ըլլային անոնք Միաբնակներ, Պաւլիկեաններ, Միասլեաններ կամ Պատկերամարտներ, համախոհ էին Պուլկարներու հետ, գոնէ սա տեսակէտով որ դէմ էին Յոյն եկեղեցիին և ասոր համար սիրով կը հիւրընկալուէին Պուլկարիոյ մէջ:

Այսպէս Հայերը, ուղղափառ կամ աղանդաւոր Պուլկարիոյ մէջ բազմացան և հիմնեցին բազմաթիւ գիւղեր, որոնք միջին դարու յիշատակարաններ և գրազէտներ կը յիշեն: Այսպէս կը յիշուին, Արմեկոնժոր գիւղը Պիթոլիայի մէջ, Արմեկնցա վայր մը Բիլլոյի վրայ Կայն: Իսկ այժմ ծանօթ են Երմեկոյժ՝ հայկական, Երմեկոյժ՝ հայկական, Լիրինայի մէջ, Երմեկոյժ՝ Հայեր, Նիկոբոլիայի մէջ, Արմեկնքի՝ Հայեր, Կապրովոյի շրջանը, Երմեկնի՝ Տոպրիչի շրջանը (ՀԱՅԿԱՐԱՆ. 48): Նոյնպէս Սօֆիայի գիւղերուն մէջ կան Երմեկնա և Երմեկնօ անունով անձեր, ինչպէս Լոմ զաւառին Մէտքովից գիւղին մէջ կ'ապրէր Երմեկնովի անունով ծանօթ բազմանդամ և հարուստ ընտանիք մը (Յ. Պօղոսեան. ՓԱՐՈՍ):

Ասոնք դժուար է ըսել թէ Պաւլիկեաններու թէ հին կամ նոր Հայ քաղաքներու աստաններ էին (հմտ. Յ. Քիւրտեան ՍԻՈՆ. 1933. 278—9), մինչ կան ուրիշներ որոնք որոշ կերպով ցոյց կու տան իրենց Պաւլիկեան ծագումը, ինչպէս Փաւլիքիքի (Թրնովոյի նահանգին մէջ), Կօրնօ-Փաւլիքիքի (=Վերին Պաւլիկեանք), Տոլնօ-Փաւլիքիքի (=Ստորին Պաւլիկեանք) (Լոմէզի շրջանին մէջ) (Բրժ. Երտան Իվանով ՀԱՅԿԱՐԱՆ 44—45) և Պոլովիքի (=Պօղոսաշին), Թորոս և Գալիքիքի գիւղերը, որոնք անկասկած Պաւլիկեանց շրջանէն մնացած են (Յ. Պօղոսեան. ՓԱՐՈՍ): Այս վերջիններէն Կորնօ-Փաւլիքիքի շրջակաները գտնուած առանց խաչի քարերով հին գերեզմանները փաստ մըն է թէ հոն ապրած են երբեմն Պոկոմիլներ կամ Պաւլիկեանք (Բրժ. Ե. Իվանով. Երկ. 27):

Պուլկարիա տեղափոխուած Հայերը, որոնց մէկ մասը մնացած է Պուլկարներու մէջ և մաս մըն ալ տարածուած զանազան կողմեր, չեն ծառայած Յունական շահերու. ո՛չ զինուորապէս օգտակար ըլլալով և ո՛չ ալ կրօնապէս միանալով Օրթոտոքս Եկեղեցիին, այլ աւելի քաջալերած են անջատողական միտումները:

Չմշկիկ ինչ որ չկրցաւ քաղաքագիտութեամբ ընել, յետոյ զէնքով կատարեց՝ զինուորապէս նուաճելով Պուլկարները:

«Սկզբնաւորութիւնը Նիւ-Ինկլիքնի» գործին մէջ կ'ըսէ թէ «Պաւլիկեաններու Մտնիլեան աղանդը Ը. դարուն Հայաստանէն եկաւ Թրակիա եւ Բան սեբուրգ կարեւոր դեր խաղաց Արեւելեան կայսրութեան պատմութեան մէջ: Պուլկար լեզուով իբր Պոկոմիլներ ծանօթ են անոնք, Յունարէն լեզուով կը կոչուէին «Կարաքի» կամ «Մաքրակրօն»:

կոխ եղան: Աճիկա մեծամեծ յաղբուքիւնք սարաւ եւ քրիստոնեացեալս սուրբ մանգաղի պէս կը հնձէր:

Գրաւուած վայրերու բնակիչները, որոնք մեծ մասամբ իսլամ էին, սարսափի առաջին տպաւորութեան տակ կը հնազանդէին, սակայն գրաւական մը չի կար թէ անոնք հաւատարիմ պիտի մնային: Թերեւս Չմըշ-կիկ, ինչպէս տեղ տեղ ըրած էր (Մ. Ուռհայնցի. 31), այդ բնակչութիւնը վանէր և քրիստոնեայ բնակչութիւն հաստատէր այդ տեղերը, եթէ հիւանդանալով 975ին չպարտաւորուէր դառնալ Բիւզանդիոն՝ Արեւելք թողլով Միքայէլ Բուրգէս կամ Ալբորճի (Վուրց) զօրավարը:

Չմշկիկի իշխանութեան շրջանին կառավարութեան ամէնէն գլխաւոր դէմքն էր Վասիլ Ներքինին, Ռոմանոս Ա. Լեկարէն Հայ կայսեր արտակարգ ընդունակ, բայց նաեւ չափազանց անյապ, ապօրինի զուակը, որ Ռոմանոս Բ.ի ժամանակ մեծ դեր խաղացեր էր, ապա ժամանակ մը ետ վանուած էր Բրինգաս ներքինիէն, որուն անկման և Նիկեփորի գահ բարձրանալուն մեծապէս նպաստած էր: Նիկեփորի ատեն առաջնակարգ դիրք ունէր, բայց Լեւոն Կիւրապաղատի՝ կայսեր եղբոր առաջ ստիպուած տեղի տուաւ: Չմշկիկի դաւադրութեան ժամանակ սպասողական դիրք բռնեց, ապա միացաւ անոր:

Չմշկիկի կայսր դառնալէ անմիջապէս յետոյ Վասիլ Ներքինին ձեռքը կեդրոնացաւ քաղաքային իշխանութիւնը, վասնզի եղաւ առաջին նախարար (Proèdre), մեծ սենեկապետ (Parakeimomenos) և Ծերակոյտի Նախագահ:

Այս պաշտօնները վարեց ան նաեւ Վասիլ Բ.ի երիտասարդութեան տարիներուն: Այս յանդուգն, իմաստուն, անսահման եռանդի տէր, բայց ապականուած, խտտափրփ, անխիղճ ու անյապ փառասէր մարդը, իր ժամանակին ամէնէն հետաքրքրական անձնաւորութիւններէն մէկն էր: Բնաւորութեամբ խռովարար, դիւրափոփոխ, արկածախնդիր, բայց յանգուգն, վճռական, գոռոզ, պատերազմասէր, շնայելով իր ներքինի վիճակին, 944ին զօրագլուխն էր բարբարոսներու գունդին և իր դարուն նշանաւոր զօրավարներէն մէկը: 958ին պետն էր Անատոլեան բանակին և յաղթող Սարակինոսներուն: Ունէր մեծ հարստութիւն և ընդարձակ հողեր, որովհետեւ Պոլիսի մէջ՝ ապստամբութիւն կազմակերպեց Նիկեփորի ատեն, իր 3000 ստրուկներէն խումբ կազմելով (Ն. Քարամեսան. ԼՈՒՄԱՅ. Գ. ք. 89. և Ե. ք. 146):

Չմշկիկ որ զինուորական մըն էր, վարչական գործերը վստահեցաւ այս մարդուն, որուն առաջին գործը եղաւ կայսեր գահակալութիւնը ծանուցանելով հրամայել որ ամէն մարդ փակուած մնայ իր տունը, և հաւաքոյթներ չկատարուին: Անկարգութիւնը և կողոպուտը սպառնաց պատժել անմիջական գլխատուով: Ամէն ոք համակերպեցաւ վասնզի գիտէր որ ըսածը գործադրող մարդ էր անս Այնպէս որ, Վասիլ յաջողեցաւ ութը օրուան մէջ վերակազմել պետութիւնը, որուն մէջ յետոյ ինքն անսահման իշխանութիւն պիտի ունենար: Իր խորհուրդով էր որ Չմշկիկ

չառ բան զոնեց Եկեղեցիին, որպէսզի օծում ստանայ և իսպառնուս (առաքելապատիւ) հրատարակուի: Ինքն էր խորհուրդ տուողը որ իր սիրուին՝ Թէոփանոն զոնէ թագին: Առանց իր չափաւորիչ դերին, Չմշկիկ, ինչպէս առատաձեռնութեամբ իր անձնական հարստութիւնը՝ նոյնպէս նաեւ պետական գանձը պիտի սպառէր: Այս ազդեցիկ մարդը, եկաւ ատեն որ երկիւղ պատճառեց Չմշկիկի որ ուզեց ընկճել զայն:

Փոկաս, Սքելերոս, Գուրգէն և այլն զինուորական տոհմերը, իշխող դիրք ստացած էին նախնազներու մէջ թէ՛ իրենց ունեցած անսահման կալուածներով և թէ՛ իրենց անձնուէր կուսակիցներով: Հետզհետէ հին Հռոմէական զինուորական և պաշտօնակալական պետութիւնը կ'ստանար միջնադարեան աւատական կազմ: Չմշկիկ կ'երեւի լաւ ըմբռնած էր թէ աւատականութիւնը և մեծ կալուածատիրութիւնը, որդեր էին որոնք կը կրծէին պետութեան արմատները: Ասոր համար աշխատեցաւ տապալել կրծէին պետութեան ամէնէն ազդեցիկ տանուէրը, Վասիլ Ներքինին, որուն օգտութեան ամէնէն կ'աղքատանար և զինուորները արիւնաքամ կ'ըլլատին, ինչպէս կ'ըսէր Չմշկիկ: Իր այս մտածութիւնը անկասկած սարսափ կը պատճառէր Վասիլի և իր նմաններուն, որոնք պիտի ուզէին իրեն դէմ ելլել: Ասոր համար էր որ ստեղծուեցաւ ժողովրդական այն զրոյցը թէ կայսեր բարկութենէն սարսափած՝ պետական ամենակարող նախարարը՝ Վասիլ՝ թունաւորած է զայն (A. Vasilev. CMH. Գ. 148. EB. Ա. 314. Գեղցեր 241):

Չմշկիկ պարզապէս յանկարծամահ եղած էր (976 Փետր. 10): Վասիլ Ներքինին, փրկուած սպառնացող պատուհասէն, իր Ծերակոյտի Նախագահի, Սենեկապետի և առաջին նախարարի հանգամանքներովը, ինքնիշխան վեհապետ հռչակեց Վասիլ Բ.ը (976—1025), որ այդ թուականէն խոն վեհապետ հռչակեց Վասիլ Բ.ը (976—1025), որ այդ թուականէն յետոյ իրական իշխանութիւն վարեց: Վասիլ Ներքինին այս անգամ թոյլ չտուաւ որ Փոկասի և Չմշկիկի պէս զօրավար մը «ինամակալ» դառնայ և իր ձեռքը առնէ գործերը, կարծելով որ պիտի կարենայ Վասիլը զնել իր գիտնական հօրը վիճակին մէջ, մինչ թոյլ հօր զօրեղ կամքի տէր որդին, առաջին օրէն սկսաւ կասկածով դիտել անոր գործունէութիւնը և ծրագրեց ինքզինքն ձերբազատել անկէ, վասնզի չէր ուզեր անուանական կայսր ըլլալ, ինչպէս եղած էին իր նախորդներէն ոմանք:

Սակայն յաջողելու համար 13 տարիներու պէտք ունեցաւ Վասիլ Բ. հրաժարեցաւ բոլոր արքունական զուարճութիւններէն և իրեն պէս երիտարդի մը համար արտասովոր եղող լրջութեամբ մը ինքզինքը նուիրեց զինուորական արուեստին և վարչական գործերու: Ետևով իր շրջապառնակական արուեստին և վարչական գործերու: Ետևով իր շրջապառնակական ինքնապատկերին որ կ'աշխատէր ստորնայնել կայսերական իշխանութիւնը, գրաւելով Չմշկիկի տեղը: Վասիլ Բ. ցոյց տուաւ թէ ինքը սոսկ «ծիրանածին» մը չէր և ոչ ալ արամադիր զիջելու իր իշխանութիւնը սեւէ մէկուն:

Ասոր համար հարկադրուեցաւ նախ մաքառել Արեւելից սպարապետ

Վարդ (=Բարտաս) Սքլերոս կամ Սիկլաոս (=Խիսա) Հայազգի գորապետին և Չմշկիկի աներձագին հետ, որ այդ մեծ կայսեր իշխանութեան նեցուկներէն մէկը եղած էր (վերը 300): Այս զօրավարը 976ին ապստամբեցաւ գործակցութեամբ Միքայէլ Պուրցէսի, վասնզի երկուքն ալ Վասիլ Ներքինիի թելադրութեամբ, իբր զահուսն սպառնացող վտանգներ, իրենց պաշտօններէն հանուած էին:

Սքլերոս, որուն հետն էր բանակը և նաւատորմիղը(*), յաջողութեան համար ամէնէն առաջ պէտք ունէր զինուորի զոր առատօրէն տուին իրեն Արաքները և մանաւանդ Հայերը (Abbé Albert Vogt. CMH. 7. 85, EB. Ա. 358) որոնք փութացին զինքը կայսր ճանչնալու:

Կայսրութեան ճորտ Հայերը, զանգուածային կերպով ոտք ելան Վարդ Սքլերոսի ի նպաստ, Մելիտինէէն մինչեւ Վանի լիճը և Վրաստան, երբ այս զօրավարը անոնց առաջարկեց 976ին քալել Պոլսոյ վրայ և իրեն կողմը շահեցաւ Տարոնի, Մոքսի և Վրաստանի իշխանները: Իր հեծելազօրքը կը բաղկանար Հայերէ և Վրացիներէ:

Սքլերոսի շարժումը, որ բովանդակ պետութիւնը տակնուվրայ բրու և ճգնաժամային տագնապներու մատնեց Վասիլ Բ.ի իշխանութիւնը(*), իր խորքին մէջ Հայկական շարժում մըն էր, վասնզի իր կուսակիցները և զինուորները առաւելապէս Հայեր էին: Ասոր համար էր որ այդ տագնապին առեւն Հայ կը նշանակէր Սքլերոսի կուսակիցս Այս պատճառով Հայերը առեւի եղան և առաջին անգամ Սքլերոսի դէմ զրկուած Պետրոս Փոկաս զօրապետը մասնաւորապէս աններող ոգի ցոյց տուաւ հանդէպ գերի ինկող Հայ զօրքերու զորս շարաշար կ'սպաննէր: Իսկ հանդերձապան Ներքինի Լեւոն զօրավարը և Յովհան Պատրիկը, նոյնպէս Հայ գերի զինուորները սպանելէ զատ, Փոքր Հայքի և Կապադովկիոյ գիւղերը և քաղաքները հրկիզեցին և գերի վարեցին Սքլերոսի զինուորներուն ընտանիքները, որպէսզի անոր զօրքերը — որոնք այդ շրջաններէն էին — վհատած՝ լքէին զինքը (EB. Ա. 384): Սքլերոսի այս շարժումը զսպեց Վարդ (Բարտաս) Փոկաս, Նիկեփոս կայսեր եղբայրը, որուն կոչում ըրաւ կայսրը՝ Վասիլ Ներքինիին խորհուրդով: Սքլերոս ապաստանեցաւ Արաքներու քով, չորս տարուան ուժգին մաքառումէ մը յետոյ: Ութը տարի յետոյ, 987ին, անիկա դարձեալ սպարէզ եկաւ, երբ Վարդ Փոկաս, որ իր ձեռքը պահած էր «Արեւելից սպարապետութիւնը», ինքն ալ ապստամբեցաւ դաւակցութեամբ Վասիլ Ներքինիին, որ ամէն ինչ էր պալատին՝ ինչպէս Փոկաս բանակին մէջ, և կը նախազգար անշուշտ թէ կայսրը կ'ուզէր փրկուել իրենցմէ, քանի որ կ'ուզէին իր կամքին իշխել, մին զինքն հետու պահել փորձելով վարչական գործերէ, իսկ միւսը՝ զինուորականներէն:

(*) Սիլբուս Յուստորմիդիճ ծովակալ կարգած էր Միխայէլ Քուրթի Հայր (978):

(**) Սիլբուսի եւ Փոկասի ապստամբութեանց մասին մանրամասնութեանց համար տեսե՛ք Սոխմբերցի գործը կամ Պատմութիւն Հայ Եկեղեցիոյ (317—324 եւ 410—1):

Այսպէս, պետութիւնը մասնաւորապէս ծանր տագնապի մը, երեք իրատու մրցակից կայսրերու պատճառով, երեքն ալ Հայ Վասիլ Բ. գէշ կացութեան մէջ էր, զի երկու միւսները համաձայնած էին և շատ հաւատարմաբար է որ յաջողէին եթէ Փոկաս չդուռէր Սքլերոսի Վասիլ Ռուսերու նախան է որ յաջողէին եթէ Փոկաս չդուռէր Սքլերոսի Վասիլ Ռուսերու (989), օգնութեամբ Զախչախեց Փոկասի բանակը և զինքն ալ սպանեց (989), իսկ ծերունի Սքլերոսի հետ հաշտուեցաւ (Abbé A. Vogt. CMH. 7. 88): Վասիլ անընկճելի կորովով մը այսպէս կրցաւ զսպել իրեն գէմ յարուցուած զինուորական ըմբոստութիւնները, որոնց գլխաւոր զերահատարները, ինչպէս տեսնուեցաւ, Հայեր էին:

Վասիլ Բ. այս ապստամբութիւնները ընկճելէ յետոյ դիւրաւ կրցաւ վերջ տալ Վասիլ Ներքինիի, այդ ամենազօր պաշտօնեային տիրապետութեան և յաւակնութեանց, դիւանական կտրուկ և կարճ դատաւարութեամբ մը զրկելով զայն իր բոլոր պաշտօններէն և աստիճաններէն: Յարութեամբ մը զրկելով զայն իր բոլոր պաշտօններէն, որով կարող չունիս գրաւուեցաւ անոր առասպելական հարստութիւնը, որով կարող էր բոլոր բանակը կերակրել: Վասիլ կայսրը թոյլ տուաւ նաեւ որ մայրեղաքաղաքին խուժանը կողոպտէ անոր պալատը և զինքն ալ աքսոր զրկեց (985ին):

Վասիլի ատելութիւնը այնքան մեծ էր պետութեան այս երբեմնի տմենազօր պաշտօնատարին դէմ որ, անոր շինած վանքը հիմնայատակ կործանեց: Մերունի ներքինին սիրտին ցաւէն մեռաւ:

Ինչ որ Չմշկիկ փորձած էր և չէր կրցած, Վասիլ Բ. իրագործեց, պետութեան սեփականելով ինչ որ այդ պաշտօնատարը պետութենէն կուտարձակէր: Վասիլ Բ. այս ուղղութեամբ ուրիշ ձեռնարկներ ալ ըրաւ, երբ 989էն յետոյ բացարձակ ինքնիշխան գործել սկսաւ: Օրինակի համար, 995ին մայրաքաղաք հրաւիրեց սահմանապահ պարոններէն Սւտաթէոս Մալեյենոսը, որ անսահման կալուածներ ունէր և շրջապատուած էր անհամար հետեւորդներով: Անիկա այլեւս չտեսաւ իր Կապադովկեան դղեահարկը և իր մահէն յետոյ յարքունիս գրաւուեցաւ իր հարստութիւնը:

Իբր թէ Վասիլ Բ. բառացի և ամենայն ճշգրտութեամբ հետեւած էր անոր խրատին որով նահանգներու ազնուականութեան վրայ իշխելու համար կը յանձնարարէր հարուստներէն արիւն առնել, որպէսզի անոնք չզօրանան և վտանգաւոր չդառնան:

Նոյնպէս, կը պատմուի թէ Վասիլ Բ. հրամայած է կործանել զղեատկը պաշտօններու և աստիճաններու հասած հարուստի մը, որ իր հայրենի գիւղին ամբողջ հողը գներ էր: Այդ հողը անիկա նորէն գիւղացիներուն բաժնեց:

Երբ Վասիլ Բ. մասամբ ընկճեց հողատէր ազնուականութիւնը, 996ին հրատարակեց օրէնք մը որ չափազանց խիստ էր: Իր պապը, Ռոմանոս, գիւղական կալուածներու անվաճառելիութիւնը օրինադրած էր, սակայն այս օրէնքը միայն թուղթի վրայ ձևացած էր: Վասիլ ջնջեց մեծամեծներու կալուածատիրական իրաւունքները և հրամայեց որ գրաւուին 40 տարիներէ ի վեր մեծամեծներէն բռնադրուեալ պղտիկ ստացուածքները

(Ասողիկ. Գ. իր և իգ) և ստիպուեցաւ հաշտութիւն խնդրելու: Այս նպատակով, Վասիլ Սեբաստիոյ մետրոպոլիտը կը զրկէ Պուլկարիտ: Եւ որովհետեւ Սամուէլ Վասիլի քոյրը կը պահանջէր, կայսրը իրեն ծառայողներէն մէկուն կինը զրկեց այդ կղերականին հետ: Երբ խաղը հասկըցուեցաւ, մետրոպոլիտը խարոյկի դատապարտուեցաւ (Ասողիկ 60) և Բրոֆ. Բացարով. ԱԶԴԱՐԱՐ 1929 Մայիս 21): Սամուէլ, զայրացած, Պուլկար և Հայ զօրքով յարձակեցաւ Մակեդոնիոյ և Թրակիոյ վրայ և 1002ին գրաւեց Ադրիանապոլիսը, սակայն քիչ յետոյ տեղի տուաւ Այսպէս, փոփոխակի յաջողութիւններով, 999էն մինչեւ 1014 տեւեց պատերազմը՝ մինչեւ որ Վասիլ Բ. 1014ին տուաւ վճռական հարուածը, անհամար թուով Պուլկարներ սպանելով և առնելով 15000 գերի, որոնց բոլորն ալ կուրցնելով դարձուց Պուլկարիտ՝ հարիւր կոյրի մէկ միականի առաջնորդով: Սամուէլ Չար աշաղուրկներու այս հսկայ թափօրը տեսնելով՝ սրտին ցաւէն կաթուածահար մեռաւ (1014 Սեպտ. 15):

Վասիլ Բ., որ պուլկարներու դէմ գործադրած իր անօրինակ խտուածիւններուն համար կոչուեցաւ «պուլկարասպան» (բուլկարոքթոնոս), մինչև որ Պուլկարիան բոլորովին չընկճեց, վերջ չտուաւ պատերազմին: Սամուէլի յաջորդեց իր որդին Ռատոմիր: որ տարի մը յետոյ՝ 1015ին սպանուեցաւ դաւաճանութեամբ Յովհաննէս Վլատիսլաւէն (Սամուէլի Ահարոն եղբորը որդին): Վլատիսլաւ յափշտակեց թագը և հակառակ անոր որ Յունաց կողմնակից էր, Պորեարներու ճնշման տակ շարունակեց պատերազմը և 1016—1017ին կուռեցաւ յաջողութեամբ, սակայն Դիւռախլիոնի (=Դեուկիա=Տրալ=Տիւրացցո) առաջ, զոր պուլկարները պաշարած էին, ինկաւ Օխրիտայի այս վերջին Չարը (1018): Պորեարները, Դաւիթ պատրիարք, Վլատիսլաւին կինը՝ Մարիամ թագուհին, և ամենէն մեծ զօրապետը՝ Պոգտան՝ խաղաղութիւն առաջարկեցին, պայմանով որ ճանչցուին իրենց առանձնաշնորհները: Վասիլ, յաղթական, դարձաւ Պոլիս, Մարիամ թագուհին և Ռատոմիրի քոյրերը և բազմաթիւ Պուլկար իշխաններ, իբր գերի հետը առած:

Պուլկարիա վերջնապէս նուաճուած էր:

Պուլկարիոյ նուաճման գործին մէջ Վասիլ Բ.ի գլխաւոր գործակիցները եղած են Հայերը: զորս ինքն ալ իր նախորդին պէս փոխադրած էր Թրակիա 988ին (Ասողիկ. Գ. ի): Ասոնցմէ մեծ մասամբ կազմուած են զինուորական գունդեր, պատերազմելու համար Պուլկարներու, Ռուսերու և Հունգարացիներու դէմ, իսկ փոքր մաս մըն ալ գործածուած՝ երկիրը մշակելու, ինչպէս կը յիշատակէ Ասողիկ (Գ. ի), ըսելով թէ Վասիլ Բ. «կաւեցաւ յազգէն Հայոց որ ընդ իւրով քաղաւորութեամբ՝ անցուցանել թ Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն զի շինեցսն գերկիրն»:

Ասիկա բացայայտ կը հաստատէ թէ Հայերը դեր կատարած են Պուլկարիոյ, Մակեդոնիոյ և Թրակիոյ մէջ, և որոշապէս ի վեր կը հանէ այդ գաղթականութիւններուն զինուորական հանգամանքը: «Իրենց երկրէն հեռու Հայ պետերու եւ զինուորներու այսֆան գործօն մասնակցութիւնը, այդ

որանի Բիւզանդական բոլոր պատերազմներուն մէջ, այս հետաքրքրական օրջանին, նուազ օսմեկան երեւոյթներէն մէկը չէր» ինչպէս կ'ըսէ Schlumberger (EB. Բ. 54—55):

Այսպէս, կը յիշուի Հայաստանէն նոր եկած Kékaumenos անուն Հայ մը, որ 980ին մասնակցած է Սամուէլ Չարին դէմ մղուած պայքարին, վասնզի անիկա կը գրաւէր այդ պահուն Թեսալիոյ մեծ մասին վրայ տարածուած Helladeի թեմին Ստրատիկոսի խիստ կարեւոր պաշտօնը և պաշտպանած էր Լարիսան՝ Սամուէլի դէմ: Իր թոռը ձեռագիրի մը մէջ (պահուած Մոսկուայի Սինոդին մատենադարանը՝ բերուած Ս. Թոռնիկի Կիմնած Աթոսի Իբերեան վանքէն) կը պատմէ թէ իր մեծ հայրը հաստատուելով այս երկիրը, Սլաւ ընտանիքներու դրացի եղած է և ամուսնութեամբ Պուլկար ընտանիքներու խառնուած (EB. Ա. 623—626):

Նոյնպէս, Վասիլի կը գործակցէին ընդդէմ Սամուէլի Գրիգոր Տարոնեցի Մագիստրոսը և Թեսալոնիկէի կառավարիչը, որ իր քովը ունէր իր Աշոտ որդին և Սահակ Հանձիթոյ իշխանը, որոնք երբ Վասիլ յաջողեցաւ գրաւել Վեուիան, հոն ձգեց Հայ զօրքով, և ինքը աւելի առաջացաւ: Իր մեկնումէն յետոյ, Պուլկարները քաղաքը պաշարեցին: Գրիգոր արիւթեամբ կուռեցաւ և սպանուեցաւ պատերազմին մէջ, իսկ Աշոտ և Սահակ գերի ինկան Սամուէլ Չարին ձեռքը (996), որ Աշոտը փեսայացուց իրեն և Դիւռախլիոն քաղաքին կուսակալ կարգեց (Ասողիկ. Գ. 14 և 17, Կեղրեմոս, Սկիլիքես, Ջոնարաւ. Ժէ. Գ. 7—9. Չամ. Բ. 875. և Գեւոր. 256): Սակայն Աշոտ լքեց այդ պաշտօնը և 997ին Բիւզանդիոն ապաստանեցաւ իր կնոջ հետ, իր հօրը մահուան վրէժը Պուլկարներէն լուծելու համար և քաղաքը մատնեց Բիւզանդացուոց (Գեւոր. 256 և EB. Բ. 143—144): Աշոտ Պոլսոյ մէջ զօրապետ կարգուեցաւ և իր կինը՝ նաեւ իշխան Հեղինէ կայսրուհիին, որ կինն էր Վասիլի գահակից եղբորը՝ Կոստանդինի:

Պուլկարական պատերազմին մասնակցած են նաեւ Լեւոն Մելիսիոս (EB. 662), զոր Վասիլ բանակին ետին պահած էր, զի ոխ ունէր անոր դէմ, և «Վես, Հիւպատոս, դատաւոր Վիլուսի եւ Կիպիւրեմոգեսի» Յովհաննէս Արտաւազդեան (Schlumberger Sigillographie. 262) և թերեւս շատ մը ուրիշներ, որոնք չեն յիշուած և անձանօթ կը ձևան:

Իսկ Հայ զօրքը, որով այնքան հպարտ էր Բիւզանդական բանակը, այս ճակատին վրայ գործած է, ինչպէս այլուր: Ասողիկ կը հաստատէ թէ կայսրը Հայ հետեւակազօրքին կողմէ փրկուած է երբ սխալ թելադրութեամբ մը 986 Օգոստ. 17ին նահանջած և ապաստանած է Ճիլիպէ: Բոլոր առնք կը հաստատեն թէ մեծ թոռով Հայեր կային Բիւզանդական Եւրոպայի մէջ, և հոն կը կատարէին կարեւոր դեր, իբր զինուորական գաղթականութիւններ: Այս իրողութեան իբր մէկ կարկառուն ապացոյց կրնայ մէջ բերուիլ նաեւ Վենետիկի Միսիթարեանց քով պահուած 1007ին գրուած Բերուիլ նաեւ Վենետիկի Միսիթարեանց քով պահուած 1007ին գրուած Աւետարանի մը յիշատակարանը. որ կ'ըսէ «Ենտրիալեմ Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին սկսա եւ Կիրակոս երեց մեղաւոր եւ անարժան գրիլ հա-

մարձակեցայ եւ գրեցի զՍուրբ Աւետարանս զայս ի բուսկանութեանս Հա-
յոց ՆՄՁ) = 456 + 551 = 1007) ի գաւառին Մակեդոնոյ ի քաղաքին որ կոչի
Անտոնապոլիս ի բազաւորութեան Վասիլին որ ունի զաթոռն Կոստանդնու-
պոլսի: Արդ որք ընթեռնուի Սուրբ զԱւետարանս զգրիչս յիւրեցեք եւ խնդ-
րեցեք մեղաց թողութիւն:

«Եւ ես Յովհաննէս Պոռփուսպարս (*) բազաւորի եւ Պոռփմոսս
Գուկիս Թորոսակիս ճորսս որ գրել ետու զՍուրբ զԱւետարանս իմ հոգ-
եացս յիւստակ եւ ձեռնաց եւ ամեն ազգի:

«Արդ որք ընթեռնուի զՍուրբ սուրբ Աւետարանս պոռփ(ս)մոսիս մեղաց
թողին (թողութիւն?) խնդրեցեք, որ Աստուած զնա երկնից արժայութեանն
արժանի արասցէ եւ արցեցն մալսել զերանաւեռն ձայնն որ ասէ. Եկայք ար-
հնեայք Հաւր իմոյ:

«Արդ ուր եւ քաղաք(ս)եցի Աւետարանս զպոռփմոսն յաղաքս յիւ-
ցեք որ Աստուած պանծացէ խաղաղութեամբ ընդ երկայն աւուրս եւ յիս ա-
օթի փոխելոյ երկնի արժայութեան արժանի արասցէ եւ սիկնոջն պոռփմո-
սին կնոջն մեղաց թողութիւն եւ իւր ձեռնացն եւ իւր որդեացն որ ըն-
թեռնուի մեղաց թողութիւն խնդրեցեք: Քրիստոսի փառք յաւիտեանս ամեն:»
(Հ. Բ. Սարգիսեան. Մայր ցուցակ Վեցեթիկի. Ա. 510—518):

Այս յիշատակարանը կը հաստատէ թէ ժԱ. դարուն Կ. Պոլսոյ, Ա.
Պոլսոյ և Մակեդոնիոյ մէջ Հայ զինուորական և երկրագործական գա-
ղութներ գոյութիւն ունէին, առանց որուն անմեկնելի պիտի մնար Հայ
բարձրաստիճան զինուորականի մը, Հայ քահանայի մը և հաւանօրէն Հայ
եկեղեցիի մը գոյութիւնը Ա. Պոլսոյ մէջ: Յիշատակարանին մէջ յիշուած
անձերէն մէկն է նաեւ ժԱ. դարուն սկիզբը, իբր 1000ին, Ֆիլիպպոսպոլ-
սոյ կուսակալի պաշտօնակատար Հայազգի իշխանաւորը՝ Գաորիկ Թէոդո-
րական, որ Թէոդորական յայտնի ընտանիքէն պէտք է ըլլայ (*): Ֆիլիպքի
այս Հայազգի դուքսին ազդեցութեան տակ կը գտնուէր նաեւ Ադրիա-
նապոլիսը, ուր 1007ին՝ իր օգնականը՝ Յովհաննէս Պրոքսիմոս, գրել
տուած է այս Աւետարանը:

Բոլոր այս Հայերը, ինչպէս տեսնուեցաւ, ծառայած են անկեղծու-
թեամբ կայսրութեան, և եթէ իրենցմէ ոմանք նպաստած են Բիւզանդ-
իոնի թշնամիներուն յաջողութեան, պատճառը այն է որ Օրթոտոքս կը-
ղերը չէ ունեցած երկիրին վիճակին գիտակցութիւնը և հալածած է Հա-
յերը, որոնք դառնացած, անցած են Պուլկարներու կողմը:

(*) Այս բարձր հաստատեցն ճոյն է Յճ. Պոռփուսպարսիս բառին հետ որ կը ճա-
նաչուի որպէս սուսերակիր կամ արդի թիկնապահը, որով զինուորական կարեւոր պա-
ճօն մը ցոյց կու տայ:

(**) Այս ընթացիկը մէկէ աւելի բարձր պատճառներ տուած է Բիւզանդիոնի, ինչ-
պէս Սամուի պարագայէ Գեորգ Թեոդորակոսը 1028ին, Լոմպարտիայի քաղաքին՝ Վասիլ
Թեոդորակոսը 1038—1043ին եւ Պրոքսիմոս Կոստանդին Թեոդորակոսը (Ն. Աղանց. La sa-
mille de Theodorakan. Byzantion. 1934. 161—170. եւ ՀԱ. 1936. 429, Ներսէս Գառապ-
նան. Հայ Մամուլ):

Ասոնց ամենակարկառուն օրինակներէն են «կոմսոմաքսերը (վերը 306—7)
որոնցմէ մէկն էր Սամուէլ, որ այնքան եռանդով աշխատեցաւ Պուլկարիոյ
փրկութեան համար, իր շուրջը ունենալով ուրիշ Հայեր՝ Արզարեւ, Սա-
մուէլի գրեթէ ամբողջ ընտանիքը, սպայակոյտը և զինուորները բաղ-
կացած էին մեծ մասամբ Հայերէ: Իր եղբորորդին էր Ալուսեան (*), իսկ
իր թոռն էր, ըստ Քաջարովի, Պատրոս (Բեգրի) Տելեան և իր ազգականը՝
Բրուսեան, որոնք հետո Պուլկարական անուներ ըլլալէ, հայաստիպ կը
թուին ըլլալ (Ներսէս Գառապեան. ՀԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՆՈՅԸ. 1938. 53):

Իր զօրականներու սերունդէն կը յիշուի նաեւ Գեգարմէն (= Գեղար-
մէն) անուն Հայազգի մատենագիր մը, որ ըստ Վասիլևսքիի, հեղինակն
է ռազմական և մարդկային գիտելիքներու վրայ գրուած երկասիրու-
թեան մը, որուն ձեռագիրը ի պահ կը մնար Մոսկուայի Սինոդին Մատե-
նադարանին մէջ (ճոյն):

Վասիլ Բ., ինչպէս Եւրոպայի նոյնպէս Ասիոյ կողմը իր մղած պա-
տերազմներուն մէջ, իրեն օժանդակ ունեցած է Հայ զօրքեր և պետեր:
Այսպէս, կը յիշուի թէ երբ 994ին Ասորիք արշաւեց, իրեն հետ ունէր
«Հայազօրք», որոնցմէ անունով միայն ծանօթ է Թորոս մեծ իշխան Հաչ-
տենից, իսկ Գալանոս Մագիստրոսը Արաբներու յաղթած է Յոյն, Հայ և
Վրացի զինուորներով (Ասուլիկ. Գ. լե. լէ. և խբ և Չամ. Բ. 876): Նոյն-
պէս կը յիշուի թէ 986ին Արմենեակներու թեմին պետն էր Լեւոն Լայա-
կոն Հայ զօրապետը, որ յետոյ անուանուած էր Հայաստանի նահանգապետ
կամ Կիւրապաղատ և ինքզինքն կ'անուանէր «Դուքս Հայոց» (Shlum-
berger. Sigillographie. 296): Երբ 996ին Արաբները Բասեան նահանգին
եկեղեցիները աւերեցին, յարձակեցաւ անոնց վրայ և զանոնք հալածեց
Հայաստանէն և առաջացաւ մինչեւ Թէոդոսպոլիս (Կարին): Լեւոն յար-
ձակած է նաեւ շրջակայ երկիրներուն վրայ և աւերած է զանոնք, Քաթա-
բալոն զօրավարին հետ (Muralt. Chronographie Byzantine. 483):

Սակայն, ինչպէս Եւրոպայի նոյնպէս Ասիոյ մէջ, Հայերէն շատեր դէմ
կանգնեցան կեդրոնական իշխանութեան և ինչպէս Եւրոպայի մէջ ապրա-
տամբ Պուլկարներու՝ Ասիոյ մէջ ալ, անցան Արաբներու կողմը կամ ա-
լակցեցան և օժանդակեցին Սքլերոսի, Փոկասի և այլ ապստամբութիւն-
ներու: Հայերու Բիւզանդեան կեդրոնական իշխանութեան դէմ ցոյց տուած
այս յայտնի ատելութիւնը առանց պատճառի չէր:

Հայ և Յոյն անխուլ պայքար մը գոյութիւն ունէր շատոնց Բիւզանդ-
եան պետութեան մէջ, հակառակ անոր որ «Հայերը Բիւզանդիոնի մէջ եր-

(*) Ալուսեան, որ եղբայրն էր Յովհաննէս Վասիլայի եւ որդին՝ Ահարոնի (Սա-
մուէլի եղբոր), դիպուածով մը Սելյուկեան իր ուսուցիչին՝ Սքրասիայի հետ Հայաստան
կ'անցնի եւ հոն կ'ըլլայ Թեոդոսպոլսոյ կառավարիչ (ՀԱՆԻԵՍ. Ֆիլիպք. 1918 Ա. արք. Բ.
1): Ալուսեան որ գիտէր հայերէն, Հայու արագով ծագուած, 1040ին կ'անցնի Պուլկարի,
ուր բազաւոր կը հաշակուի (Կեղրեմոս. Բ. 531. Գաւ. Հ. Կար. Տ. Սահակեան. ԲՉՄԳ.
1906. 65):

կիրից բնիկներն էին որքան Յոյները, եւ իրենց եռանդով ու անձնուր-
բութեամբ կայսրութեան, ինչպէս նաեւ իրենց փառաւոր գործունեութեամբ
եւ անբաղձաբեղի քաջութեամբ, կը ներկայանային իբր նեմարիս կազմա-
կերպողները այն բարդ հիմնարկութեան որ եր Բիւզանդիոնը» (Ն. Արոնց.
Les fonds historiques de l'Épopée Byzantine Digenis Akritas. 200):

Այս տեւական պայքարին ներքին շարժառիթն էր առաւելապէս նա-
խանձը, վասնզի Հայերը, Թ. դարէն սկսեալ մասնաւորապէս, աէր դարձած
էին պալատին ու եղած՝ պետութեան վարիչները և հրամանատարները՝
բանակին և նաւատորմին: Հայերէ կը բաղկանար նաեւ բարձր ազնուա-
կան դասակարգը և անոնք էին բոլոր մեծ հողատէրերը: Յոյները ստո-
րադաս վիճակի մէջ մնացած էին: Ասոր համար Հայերը ատելի դարձած
էին: Կասիա անուն միանձնուհի մը, որ ապրած պէտք է ըլլայ Թ. դարուն
կէսերը, կ'ըսէ թէ «Հայոց զարհուրելի ազգը պատր է եւ շարաբարոյ
վերին աստիճանի, այլ եւ խելացնոր, փոփոխամիտ եւ նախանձոտ, խիստ
փոռած եւ լի նենգութեամբ, օտտ սեղից է ըստ անոնց համար իմաստա-
սէր մը թէ «Հայերը շար են, որքան ասեմ որ հոչակ չունին, աւելի շար
կը դառնան երբ մեծութեան կը հասնին, հարստացաւով հիմնովին շար, իսկ
երբ նաեւ մեծ հարսութիւն եւ պատիւներ ձեռք կը բերեն, չարերէն անե-
նաչար կը հանդիսանան» (ՀԱ. 1901. 130): Այս խօսքերը Յոյն ատելու-
թեան արտայայտութիւնն են և բոլորովին ալ ձրի չեն, վասնզի Հայերը
դաւանանական արարքներ, մատնութիւններ և այլ ապաշտորհ գործեր ը-
րած են, ինչպէս նաեւ բովանդակ կայսրութիւնը իրենց արին մէջ առ-
նելէ յետոյ, չարաչար վարուած են իրենց ստորադասուած Յոյներուն հետ:
Բայց պէտք չէ մոռնալ, ինչպէս իրաւամբ դիտել կու տայ Laurent (By-
zance et les Turcs. 51) թէ Յոյները յաճախ տեղի տուած են, հալածելով
Հայերը կրօնքի համար: Այս հալածանքը չափազանց շեշտուած է ԺԱ. դա-
րուն, երբ Բիւզանդական կղերին թելադրութեամբ նոր թափ առած է
ան: Արդարեւ, ԺԱ. դարը նշանաւոր եղած է Հայերու դէմ, ինչպէս Թ.
դարը Պաւլիկեաններու և ԺԲ.ը՝ Պոկոմիլիներու դէմ գործադրուած հա-
լածանքներով (Շառլ Տիհլ. CMH. Դ. 737): Շառլ Տիհլ, որ կը կարծէ թէ
հաւատածաւարական աշխատանքը մէկէ աւելի անգամներ հալածանքի
երեւոյթ առած է (նոյն), կը խորհի թէ Հայոց դէմ յարուցուած հալ-
ածանքը արդէնք չէ ուրիշ բանի եթէ ոչ այն ջանքերուն որոնք կատար-
ուած են քաղքեղոնականութեան հպատակեցնելու բոլոր ոչ-քաղքեղոնա-
կան տարրերը կամ Օրթոտոքս հաւատքին մէջ ընկրուելու Միաբնակու-
թիւնը: Ասով շատ դիւրին կրնայ մեկնուիլ Ասորիներուն ալ Հայոց հետ
հաւաստարապէս հալածանքի առարկայ ըլլալը: Այս հալածանքները մասնա-
ւորապէս շատ սաստկութեամբ գործադրուեցան Յոյն կղերին կողմէ Փոքր
Հայքի և Արմենեակ թեմին ստուարաթիւ Հայ բնակիչներուն դէմ, որոնք
ոչ միայն բռնութիւններու ենթարկուեցան, այլ նաեւ բռնազաղթի տե-
ղափոխուելով Թրակիա և Մակեդոնիա:

Հայերը, հետեւաբար, կրօնական մարդորութենէ և վարչական ձե-

ւապաշտութենէ խուսափելու համար, ինքզինքնին տուած էին ազատ, յա-
րափոփոխ և թափառիկ կեանքի և ուր որ իրենց սուրով կրնային լաւ
ապրիլ, անդադար պայքար կը մղէին, իսկ երբ աւազակութիւն չընէին,
քաղաքային պատերազմներու կը մասնակցէին (Laurent. Byz. et Turcs.
52): Այսպէս, կայսրութեան սահմանադրուիները պաշտպանել կոչուած
ճորտերուն նախասիրած զբաղումները դարձան ասպատակութիւնը և մար-
գասպանութիւնը, որոնց ամբողջ ընտանիքին անդամները միասին կ'եր-
թային և երբ բռնուէին ու պատժուէին, իրենց ճորտական հողերը կը
յանձնուէին ուրիշներուն, որովհետեւ յանցապարտ պետին բոլոր ժառան-
գորդները անոր պէս կը պատժուէին և օրէնքով չէին կրնար իրենք ըս-
տանալ այս հողերը (Ջաֆարիա Գ. 291):

Նիկեփոր Փոկաս, իրենց պարտականութեանց մէջ թերացող աւատ-
ները (fief) երբ հարկադրեց դրամ վճարելու վարձկաններ զինուորագրե-
լու համար և երբ անոնք խոյս տալու համար այս սուրքէն անցան Արաբ
երկիրներ, հրամայեց առանց պայմանաժամ տալու գրաւել անոնց սեփական
ինչքերը, ինչպէս նաեւ աւատները այդ նուէրը նկատելու որոնք անհե-
տացած էին երեք տարիէ ի վեր և անոնց տեղը դրաւ աւելի արժանաւոր-
ներ (Ջաֆարիա. Գ. 290—1. Schlumberger. Nicéphore Phocas. 394): Մին-
չեւ իսկ Բիւզանդեան Հայ աստիճանաւորներուն մէջ կը տեսնուին մար-
դիկ որոնք աւազակային հակումներ ցոյց կու տան: Իրենց ամէնէն հոչա-
կաւոր զօրավարները չէին խնայեր ո'չ իրենց հայրենակիցներուն և ո'չ
ալ եկեղեցիներուն: Յովհաննէս Գուրգէն, Բիւզանդացոց ծառայող մեծ
Հայ մը, Ռոմանոս Լեկաքենոսի ատեն աւարի տուաւ, իրապէս բոլորովին
Հայ երկիր մը՝ Բասենը, այն պատրուակով որ անիկա Սարակիստներու
հնազանդած էր (Կոստանդին Միրանածին. Վարչութիւն Կայսր. 198): Նոյն
Յովհաննէս Գուրգէն, ըստ Լեւոն Սարկուազի (Թ. Ե. 148), Ռուսերու դէմ
պատերազմի մը մէջ յափշտակած էր եկեղեցիներէն թանկագին անօթներ
և առարկաներ (EB. Ա. 134):

Նիկեփոր Փոկասի բոլոր արշաւանքներուն մէջ, Բիւզանդեան բանա-
կին ծառայող Հայերը, ուշադրութիւն կը գրաւէին իրենց աւառարու-
թեանց յաջողութեամբ և առատութեամբ (Ապուլֆարաճ. Սուրիական Քը-
տնիկ. 200—201): Նիկեփոր Փոկաս, որ այնքան չփացուցած էր Հայերը,
եկաւ ատեն որ չկրցաւ հանդուրժել, և 965ին օրինակելի դաս մը տուաւ
Հայոց որոնք յարձակած էին գրաւուած քաղաքներէն մեկնող կարաւան-
ներու վրայ: Չարկաւ զանոնք, կտրեց անոնց ձեռքերը և քիթերը (Ա-
պուլֆարաճ. 202. Schlumberger. Nicéphore Phocas. 498): Տեսանք ար-
դէն թէ ինչպէս Հայ գունդեր կը նպաստէին շատ մը զօրավարներու յա-
րուցած յեղափոխութիւններուն և կը քաջալերէին շատ մը ուրիշներու
յաւակնութիւնները ու կը խրախուսէին գահը գէնքով գրաւելու ձգտում-
ները:

Հայերը յաճախ կը քաջալերէին յեղափոխութիւնները զորս կը սի-
րէին և կը կազմէին անշուշտ մեծ մասը այն մարդոց որոնք այլուսանաք,

Վատիկի մահէն յետոյ՝ իր գահակիցին և յաջորդին՝ Կոստանդին Ը. ի (1026—1027) առանձին կառավարութիւնը, որոշ կերպով կը զանազանուէր նախորդ կառավարութիւնէն, իսկ Կոստանդինի մահէն յետոյ, երբ Բիւզանդիոնի գահը կը մնար իր երեք աղջիկներուն, Եւտոկիայի, Թէոդորայի և Զոյէի, գահավիժումը կ'սկսէր։ Զոյէ, հորը կարգադրութեան համաձայն, ամուսնացաւ Ռոմանոս Արկիրոսի հետ, որ բաւական յարգուած ձերակուտական մըն էր, և ծագումով հայ և Արծրունի։ 52 տարիէ ի վեր առաջին անգամ էր որ ոչ-ձիրանածին մը գահ կը բարձրանար, ոչ թէ զինուորներու կամքով՝ այլ տարբեր եղանակով մը որ սովորական չէր Բիւզանդիոնի համար։ Իր Հայ ազնուական ծագումը միայն բաւական չէր կայսերական գահը ապահովելու համար։ Ուստի, Ռոմանոս աշխատեցաւ ժողովրդականութիւն շահիլ զերիները փրկանքով ազատելով, պարագի համար բանտարկեալներուն ընդհանուր ներում շնորհելով և մասնաւոր անհատներու պահանջներուն զոհացում տալով՝ գանձարանէն։ Ազնուականութիւնը և բարձր հոգեւորականութիւնը շահեցաւ զաղբեցնելով այն օրէնքը որով հարուստները կը հարկադրուէին վճարել հարկահանութեան շրջանակի մը մէջ աղքատներու չվճարած տուրքերը, և կղերը՝ անոր եկամուտները աւելցնելով։

Զոյէ կայսրուհին, որ սաստիկ կը նախանձէր իր իմաստուն և կամքի տէր քրոջմէն՝ Թէոդորայէն, զայն մեղսակից ամբաստանեց դաւադրութեան մը և հարկադրեց որ վանք մտնէ։ Իրեն հետ աքսորուեցան բարձր ազնուականութեան բազմաթիւ անդամները իբր մասնակից այդ դաւադրութեան (1031)։ Ասոնցմէ մէկն էր Գէորգ Վարազ-վաչէ Հայր։ Ռոմանոսի մահէն յետոյ, Զոյէի ընտրութեամբ կայսր եղաւ Միքայէլ Դ. Պափլագոնացին (1034—1044)։ Երկար ատենէ ի վեր ոչ-Հայ մը կայսր եղած չէր։

Հայ զինուորականութիւնը տկարացած, իր ազդեցութիւնը չէր կրնար ի գործ դնել։ Հայ զօրապետներու յիշատակութեան այլեւս չենք հանդիպիր։ Հազիւ կը յիշուի Առմէնուբուլոս զօրավար մը որ կը զրկուի Սերպ Ստեփանոս Պոյիթսլաւ ապստամբին դէմ և կը պարտուի (EB. Գ. 312)։ Ընդհակառակը աւելի կը հանդիպինք Հայ դժգոհներու, ինչպէս Գրրիգոր Տարոնեցիի, որ Սերպ-Պուլկար շրջանակներու ապստամբութեան մը—տուրքերու առթիւ պայթած—կը մասնակցի և ձերբակալուելով՝ անգութ եղանակով մը կը մահացուի (EB. Գ. 310—1)։

Միքայէլ Դ. ի մահէն յետոյ, Զոյէ պառաւ կայսրուհին ամուսնացաւ Միքայէլ Ե. Կալափաղէի հետ, որ մինչեւ այն ատեն Կեսար էր։ Ասիկա իր բարերարունին վանք արգելափակեց։ Մայրաքաղաքին ժողովուրդը սոք ելաւ. Միքայէլ Ե. ապալեցաւ 1042 Ապրիլ 20ին, և ամբողջ Ս. Սոփիա բերաւ Թէոդորան, որ 10 տարիէ ի վեր վանքն էր և Զոյէի հետ կայսրուհի հռչակեց (1042 Ապրիլ 22)։

«Այն ատեն սկսաւ երկու պառաւներու օտորփնակ քաղաւորութիւնը, մին արդէն երկիցս այրի, քեւ առաջին անգամ ամուսնացած ժամանակ

այ՝ սկսած եր խոնարհիլ դեպի հորիզոնը, միւսը՝ անդրանիկը, եօրանատունամայ պառաւ, կեանքը վանքերու մէջ անցուցած, մին՝ անկարգութեանց անձնասուր, ոմիրներու հետ ընթացեցած. միւսը՝ աւելի ողջախոն, բայց լի վանական կեանքէ յառաջ եկած նախապաշարուսներով եւ ծայրայեղ ջերմեաներու քանակէն մը բոլոր սկարուքիւններով» (IP. 184)։

Թէոդորա և Զոյէ մօր մը գորովովը կը գործէին։ Միրանածին պառաւները զոյգ դատարան կ'իջնէին, ձերակոյտին կը նախագահէին և հրամաններ կ'արձակէին։ Անոնք ներքին կազմակերպութիւնը հիմնովին բարեփոխել ձեռնարկեցին օրէնքով մը՝ որով խստիւ կ'արգելուէր տէրութեան պաշտօններուն առեւտուրը։ Այս համերաշխ գործակցութիւնը հազիւ երկու ամիս (1043 Ապրիլ 21—Յունիս 11) տեւեց, վասնզի Զոյէ կը նախանձէր Թէոդորայի որուն նախապատուութիւն կու տային մոլեռանդ Բիւզանդացիք։ Զոյէ զայն մեղուսացնելու համար Մերակոյտին յայտնեց թէ երկու կին անկարող են կառավարելու և պէտք էր որ իրենցմէ մէկը ամուսնանար, վասնզի վստահ էր թէ Թէոդորան չէր ամուսնանար՝ սրբութեան համբաւին մէջ մեծագոյն փառքը տեսնելով։ Արդարեւ, անիկա վանք քաշուեցաւ և Զոյէ, իր բազմաթիւ յիմարութիւններու շարքին ամենամեծը գործադրեց լոկ քաղաքական ամուսնութեամբ միանալով Կոստանդին Թ. Մոնոմախոսի հետ որ կայսր (1042—1055) դարձաւ (Գեղեցիք. 280)։

Կոստանդինի կառավարութիւնը տէրութեան վերջին երջանիկ շրջանն էր, սակայն անիկա կայսեր արժանիքէն չէր։ Ինքն բացարձակ հակազինուորական էր և կը խնայէր զինուորներու ռոճիկները և անսաման կը ծախսէր շինութիւններու և գիտութիւնները զարգացնելու համար։ Հասիքը՝ մինչեւ այն ատեն փայլուն զինուորականներ, այլեւս ապարէզ չուէին և ասոր համար է որ կը ցանցառի իրենց յիշատակութիւնը։ Այդ շրջանին պատմութիւնը մեզի կը բերէ անունը Սմբատիոսի մը, ապահովաբար Հայ իր անունէն դատուելով, որ իբր պատուիրակ կը զրկուի Իտալիա՝ Մանիակէս զօրավարին ապստամբութեան առթիւ։

Հայերը երբեմն այնքան սերտիւ միացած և անձնուէր տարր մը, այլեւս կասկածելի կամ անվստահելի դարձած են և երբ 1044 Մարտ 9ին ժողովրդային յեղափոխութիւն մը կը ծագի Պոլսոյ մէջ, «Լեւանցեր, Իսլամներ և ՀԱՅՅԵՐԸ» դուրս կը հանուին (Abbé Albert Vogt. CMH. Գ. 109) իբր օտարներ այն քաղաքէն ուր քիչ առաջ իրենք ամէն ինչ էին։ Այս հակահայ քաղաքականութեան մէկ ուրիշ արտայայտութիւնն էր այն նենգութիւնը զոր Մոնոմախոս ի գործ դրաւ վերջ տալու համար Հայ Բազրատունեաց թագաւորութեան, Գագիկը Պոլիս հրաւիրելով և գահէ զրկելով։

Պաշտօնակալութեան և կղերին այս սխալ քաղաքականութեան դէմ ծառայաւ Հայ զինուորական դէմք մը՝ Լեւոն Թոռնիկ, որ կը կարծուի Բազրատունի մը ըլլալ (Abbé Albert Vogt. CMH. Գ. 110)։ Ան, կը թուի թէ որանեղած Մոնոմախոսի Հայաստանի մէջ հետեւած քաղաքականութեանն,

փորձեց ասպալիել զայն, և վերջ տալ պաշտօնակալներու իշխանութեան, Ա. Պոլսոյ մէջ գլուխը անցնելով դժգոհ, պաշտօնանկ և շնորհազուրկ զինուորականութեան: Ասոր համար անիկա ունէր նաեւ անձնական շարժառիթներ: Ինք զարմիկն էր կայսեր և խիստ մտերիմը՝ անոր Euprepia քրոջը, որմէ հետացնելու համար Թոռնիկը, Կոստանդին զայն կը զրկէ գաւառները իբր Ստրադիկոս և ի վերջոյ կ'ստիպէ վանք մտնել (ճով. 111): 1047 Յունիս 15ին, Թոռնիկ իր գործակիցներէն Ա. Պոլսոյ մէջ կայսր կը հռչակուի (ճով. 6) և կը քայլէ Պոլսոյ վրայ (Կեդրեմոս, Քլիկաս, Ձոնբաւ և Ուոնայեցի 118—9): Մոնոմախոս կը յաջողի դրամով իր կողմը շահիլ անոր մարդիկը և միւս կողմէն զինուոր հասցնել և վերջապէս գերի բռնել Թոռնիկը և կուրցնել զայն (1047 Դեկտ. 24) (CMH. 7. 111 և EB. Գ. 500—520): Թոռնիկի գլխաւոր գործակիցն էր իր ազգականը՝ Յովհաննէս Վաստացեալ:

Չոյէ կը մեռնի 1050ին և սրտոց կարգը կը դասուի և Կոստանդին Մոնոմախոս կը կառավարէ երկիրը մինչեւ իր մահը (1055 Յունուար 11): Թէոդորա, «Միրանածիններու վերջինը», կը փութայ Բիւզանդիոն և կ'ընդունուի ժողովուրդէն իբր կայսրուհի և երկու տարի (1054—1056) կը վարէ երկիրը: Իր մահուան ատեն (1056 Օգոստ. 30) կայսերական ատիճան կու տայ ծերունի զօրապետ և ծերակուտական Միքայէլ Չ. Ստրատիոտիկոսին որ միայն մէկ տարի կ'իշխէ:

Հայ կայսերական տան հաւատարմութիւնը և սէրը, որուն չօչափելի ապացոյցները վայելիք էին Հայկական հարստութեան վերջին շառաւիղները՝ Չոյէ և Թէոդորա, այլեւս գոյութեան իրաւունք չունէին: Նոր կայսեր նկատմամբ ոչ մէկ յարգանք ունէր զինուորականութիւնը, ուստի զօրուոր յեղափոխութիւն մը յարոյց, միանալով մեծ մասամբ Փոքր Ասիացի մեծ հողատէրերու: Կայսր հրատարակուեցաւ 1057 Յունիս 8ին Պափլագոնիոյ մէջ Իսահակ Կոմնենոսը, որ իր կողմը ունէր Հայ պզտիկ ճորտ իշխանութիւնները (EB. Գ. 787): Ան առաջացաւ մինչեւ Նիկիա և յաղթեց կայսերական գունդերուն: Միքայէլ հրաժարեցաւ և Իսահակ կայսր օծուեցաւ 1057 Սեպ. 2ին (նոյն. 788): Ասիկա վերադարձ մըն էր գէպի այն օրերը ուր զինուորները կը վճռէին կայսրութեան բախտը և բանակներ կը կատարէին ընտրութիւնը:

Նւ ինչպէս տեսնուեցաւ, Արարներուն դէմ պայքարի քառադարեան շրջանին, զինուորականութեան մէջ ամէնէն ազդեցիկ տարրը Հայերն էին: Սակայն ո՛չ ճշմարիտ և ո՛չ ալ ուղիղ է կարծել թէ Բիւզանդիոնի մէջ Հայազգիները նշանուոր հանդիսացած են լոկ զինուորական ասպարէզի մէջ:

Հայերը Բիւզանդիոնի տուած են նաեւ վարչական կարող դէմքեր: օրէնսգէտներ, գիտուններ, հեղինակաւոր եկեղեցականներ և ուրիշ արժեքաւոր անհատներ, ինչպէս վաճառականներ, արհեստաւորներ և արհեստագէտներ, միայն թէ ուրիշ մարդերու մէջ գործողներու յիշատակութիւնը պատմագրական հին ըմբռնումներու համաձայն շատ ցանցաւ է: Քէմպրի՛ի

քրօֆէտորներէն Steven Runciman իր «Բիւզանդական Քաղաքակրթութիւնը» գործին մէջ կ'ըսէ թէ ոչ մէկ ազգ, բացի Սլաւներէն, այնքան մեծ դեր խաղացած է Բիւզանդեան կայսրութեան պատմութեան մէջ, որքան Հայերը: Այս աճուս ցեղը, հոսելով դուրս իր նեղ հովիտներէն, իր անճարին ծաղկումին համար հող գտած է կայսրութեան լայնածիր դաշտերուն մէջ: Թ. և Ժ. դարերուն, հոն, կարծես թէ Հայերն էին միայն որ կը գործէին, կը շարժէին, կը տնօրինէին: Ամբողջ կայսրութիւնը կը դանուէր Հայոց ձեռքը: Ըստ Բընսիմէնի, ժամանակ մը, ոչ միայն Բիւզանդիոնի իշխանուհիները և աւագանին հայկական արիւն կը կրէին, այլ քաղաքները լեցուած էին Հայ վաճառականներով: «Հայերը ոչ միայն իրենց (Բիւզանդիոնի) պարգեւած էին բազմաթիւ կորովի կայսեր, այլ եւ մեծ մասը իրենց լաւագոյն գործի մարդոց»:

Հայերը ունեցած էին նաեւ կարեւոր ազդեցութիւն մը Բիւզանդիոնի արուեստին և գիտութեան վրայ:

Հայերը անշուշտ շատ բան առին Յոյն մշակոյթին այդ մեծափայլ միջավայրէն, կարգաւարքէն, լեզուէն. վերջապէս քաղաքական և պետական յօրինուածքէն, սակայն իրենք ալ իրենց հետ բերին Բիւզանդիոնի կամար նոր կորով, նոր ու տարբեր սկզբունքներ, մասամբ ընդդէմ, մասամբ իրենց հայրենիքին մէջ ունեցած կեանքէն ներշնչուած, և այս սկզբունքները հետապնդեցին մինչեւ վերջը իրենց ընդգրկած նոր հայրենիքին մէջ և սպաւորեցին աստիճանով մը Բիւզանդականին վրայ:

Անժխտելի է օրինակի համար Հայկական ճարտարապետութեան ազդեցութիւնը Բիւզանդականին վրայ: Հայերը, սասանեան և պարթեական քաղաքակրթութեանց հետ չփման մէջ, մշակած էին հայկական արուեստ մը, մասնաւորաբար ճարտարապետութիւն մը, որ եկաւ նոր շունչ մը տալու Բիւզանդականին:

Ապահովաբար եթէ այլ մարդերու մէջ ալ պրպտումներ ըլլան, երեւան պիտի գան ուրիշ յայտնութիւններ և պիտի հաստատեն Հայաստանի ազդեցութիւնը Բիւզանդիոնի վրայ, մինչ յաճախ այնպէս ներկայացուած է թէ Հայաստանն է որ ազդուած է Բիւզանդիոնէն:

Բընսիմէն բացարձակ կը յայտարարէ թէ՛ «Հայաստանի ազդեցութիւնը Բիւզանդիոնի վրայ աւելի մեծ էր, քան փոխադարձ ազդեցութիւնը»: Ասիկա հեռու չէ ճշմարտութիւն մը ըլլալէ:

Քաղաքակրթութեան պատմութեան տեսակէտով, մասնաւորապէս Միջին Դարուն՝ հոկայական նշանակութիւն ունէր կրօնական կեանքը, որ ներշնչարանը և աղբիւրը կը հանդիսանար, դարուն ոգիին համաձայն՝ զաստիարակութեան և ուսման, ինչպէս նաեւ ընտանեկան և ընկերային կեանքի բարեշրջման: Հոն, այդ մարդին մէջ էր որ իրարու դէմ կը կանգնէին և կը մաքառէին յառաջդիմականութիւնը և յետադիմութիւնը:

Հայերը, Բիւզանդիոնի վրայ իրենց գերազանց ազդեցութիւնը ի գործ դրին, ցոյց տալով թէ՛ Բիւզանդական եկեղեցւոյ հովանիին տակ և թէ՛ անկէ դուրս, յառաջդիմական ոգի և ծառայեցին մարդկային քաղաքա-

կրթութեան: Այսպէս, այս չորս հարիւր տարիներու շրջանին, անոնք զորոնցին պաշտօնական եկեղեցիին հովանիին տակ, ինչպէս նախընթաց դարերուն, երբ Հնդկանրական եկեղեցիին տուած էին — ինչպէս տեսնուեցաւ—Ս. Բարսեղի, Գր. Նազիրանդացիի և այլնի պէս ղէմքեր և իրենց կը գրաւէին առհասարակ արեւելեան Փոքր Ասիոյ և Փոքր Հայքի եպիսկոպոսական աթոռները:

Թ. և Ժ. դարերուն, դարձեալ կայսերական՝ այսինքն Յոյն Օրթոտոքս եկեղեցիին մէջ, Հայերը կը կատարեն շատ կարեւոր դեր մը, երբ արդէն եկեղեցին ազանդաւորական խմորումներու հետեւանօք տագնապի մէջ էր: Զափազանց ուշադրաւ է որ նոյնիսկ Յոյն Տիեզերական Պատրիարքական Աթոռին վրայ կը բազմին Հայ Պատրիարքներ, որոնք մանաւանդ իրենց բարձր ծագումով և ցոյց տուած յառաջդիմական ոգիով ծանօթ են:

Այսպէս, կը յիշուին.

1. Յովհաննէս Է. Բերականազէտ (Կրամադիկոս) Սինկելլին (834—843),
2. Փոռ, որ երկիցս (858—867 և 878—886) Պատրիարք եղաւ,
3. Ստեփանոս՝ (եղբայր Լեւոն Իմաստասէրի) (886—889 Մայիս 17 +),
4. Թէոփիլակոս (որդի Թոմանոս կայսեր) (933—956 Փետր. 27 +),
5. Սերգիոս (Փոռի սերունդէն) (999—1018):

Անշուշտ կային նաեւ ուրիշ Հայ ծագումով Պատրիարքներ, որոնց ցեղը անյիշատակ մնացած է: Իսկ եպիսկոպոսական աթոռներու եւս մասամբ Հայերէն գրաւուած ըլլալը սնկասկած է: Արդէն տեսնուեցաւ (վերը 129—30) թէ ինչպէս կայսերական եկեղեցիին կապուած էին ընդհանուր կերպով՝ Փոքր Հայքի և Բիւզանդական Հայաստանի Հայ-Հոռոմ գտնուածներու եպիսկոպոսները, սակայն Անատոլեան ուրիշ շրջաններու եպիսկոպոսական աթոռներուն վրայ ալ Հայեր պէտք է գտնուած ըլլան — թէեւ շատ պատահօրէն յիշուած—Բիւզանդեան պատմութեան այս շրջանին ուր պետութիւնը իրականութեան մէջ հայկական էր թէ՛ իր բնակչութեան մեծամասնութեամբ և թէ՛ իր վարիչներով: Այսպէս, դիպուածով կը յիշուի Թ. դարուն կէսերը, Պոլսոյ այնքան մօտ և պատմական նշանակութիւն ունեցող Նիկիոյ արքեպիսկոպոսութեան աթոռին վրայ Հայազգի Վահան կամ Յովհան եպիսկոպոս մը, ժամանակակից Փոռի, որ անոր գրած թուղթերը տարած է Հայոց Զաքարիա կաթողիկոսին և Աշոտ Թագաւորին 864—7ի (Չամ. Բ. 685 և Ազգ. 974—7 Վարդան. 82—85. Ասողիկ. 145. Կիրակոս. 45. Գիրք Թղթոց. 279—294):

Իսկ Անտիոքի այն պատմական և քրիստոնէական յիշատակներով կարեւոր պատրիարքական աթոռին վրայ նոյնիսկ Ը. դարուն կէսերը, 752ին, կը գտնենք «Թէոդորոս, որդի Վիքարիոսի, Փոքր Հայքէն» (Թեոփագես. 427 և 430), և Ժ. դարուն՝ Չմշկիկի ժամանակակից Հայազգի միւս Թէոդորոս Կողմնիացին, որուն խորհուրդով, 969ին, Չմշկիկ Ասիայէն Տիւրիպէի շուրջը տեղափոխեց Պաւղիկեանները, և իրարու յաջորդող երկու Մակարները, որոնցմէ վերջինը առաջինին եղբորորդին, 995էն 1000

այդ աթոռին վրայ ձալէն յետոյ Եւրոպա անցաւ, Ս. Տեղեաց ողբալի՛ վիճակը ներկայացնելու համար:

Յիշուեցաւ արդէն (վերը 278) թէ Յովհաննէս Բերականազէտի եղբորորդին՝ Լեւոն, իր ժամանակին ամէնէն մեծ իմացականութիւններէն մէկը, որ յետոյ Վարդ Մամիկոնեանի հիմնած Պոլսոյ համալսարանին ուսուցչապետն եղաւ, նախապէս երեք տարի (840—843) արքեպիսկոպոս էր Թեսաղոնիկէի: Նոյնպէս պատմութենէն ծանօթ է թէ Լեւոն Ե. Հայկազն կայսեր երկու ներքինացած զաւակները՝ Վասիլ և Գրիգոր, եկեղեցական ասպարէզը ընդգրկեցին և մեծ անուն շահեցան՝ իրենց առաքինի վարքով: Մին ասոնցմէ՝ պատմական աթոռի մը՝ Եփեսոսի արքեպիսկոպոսն էր (ԿիՉեւ. Կ 1935, 581): 847ին երկուքն ալ թեկնածու էին Պոլսոյ պատրիարքութեան, սակայն նախապատուութիւնը տրուեցաւ Միքայէլ Ռանդաբէի որդի խօսակրօն Իզնատիոսի, զոր Լեւոն ներքինացուցած և վանական դարձուցած էր:

Բիւզանդական պատմութիւնը կը բերէ մեզի յիշատակութիւնը նաեւ կրօնական քարոզչութեան, առաքելութեան և նահատակութեան յանձնառու ղէմքերու, որոնք Հայեր էին, և որոնք պաշտօնական եկեղեցիին փառքին նպաստեցին: Ասոնցմէ մէկն է Նիկիտաս, Պատկերամարտութեան նահատակներէն մէկը, որուն յիշատակը կը տօնէ ցարդ Յոյն եկեղեցին 13 Հոկտ. ին: Անոր վարքագրութեան մէջ ըստուած է թէ մնած է Պափլագոնիա 763ին և Պոլիս եկած՝ 780ին: Ան ազգական էր Թէոդորա Հայկայսրուհիին, ուրեմն Հայ ծագումով (Acta Sanc. Գ. 448) և Մամիկոնեան տունէն:

Յիշենք նաեւ Նիկիտոս Պոնտացին, մականուանեալն Միտանոյիտէս (= Ապաշխարեցէք), Հայ նախարարական ցեղէ մը, որ կրօնաւորած էր Պափլագոնիոյ Ոսկեքար վանքին մէջ, և ապա Հայաստան գացած էր Յոյն գաւանութիւնը քարոզելու (Abbé A. Sevestre. Dictionnaire de patrologie ou répertoire des écrivains des douze premiers siècles de l'Eglise. 1851—55. Paris. Դ. 90., Կղեմէս Գալանոս. Միաբանութիւն Հայոց Ս. Եկեղեցւոյն քնն մեծի Ս. Եկեղեցւոյն Հռոմայ. 1690 Հռոմ. 213., Օրմանմանեան Ազգ. 1186): Ասիկա բիւզանդական բանակին հետ կրէտէ գնաց Նիկեփորի արշաւին ատեն և տեղւոյն իսլամ բնակչութիւնը քրիստոնէութեան դարձնելու համար 20 տարի աշխատեցաւ: Յետոյ անցաւ Աքայիա և Եպիւրոս, և այդ տեղերը եւս քարոզելէ յետոյ մեռաւ Պելոպոնէսի մէջ, 998ին: Ասոր համար Յոյն և Կաթոլիկ եկեղեցիները սրբոց դասակարգը անցուցած են զինքը և Նոյեմ. 26ին կը տօնեն յիշատակը: Նոյնպէս գտնուած են Հայեր, որոնք կրօնական հիմնարկութեանց՝ մասնաւորապէս վանքերու հիմնադիր եղած են: Տեսանք արդէն թէ Վարդան Մամիկոնեան միապարագետը Անատոլեան հինգ բանակներուն, որ յետոյ կայսրութեան պիտի ձգտէր (803), Պոլսոյ մերձակայ Իշխասար կղզիներէն Բոռթիի (Գնալը) մէջ շինած էր վանք մը (վերը 266), նաց Կղզիներէն Բոռթիի (Գնալը) մէջ շինած էր վանք մը (վերը 266), ինչպէս Մանուէլ Մամիկոնեան, Թէոդորայի եղբայրը, կառուցած է իր ան տեղւոյն վրայ փոքր մենաստան մը ուր ինքն առանձնացաւ (վերը 275)

և հոն թաղուեցաւ (Քեոփանոս Եւրայարեալ 163): Այդ «Մենաստան» կամ «վանք Մանուէլի» կամ «Մանիկերա» կոչուած հաստատութիւնը (այժմ Բէֆէլի Մէշլիտ, Պոլսոյ Սալմա-Քօմրուք թաղին մէջ) Փոս Պատրիարք և ապա Գէորգ Լակայինոս, նորոգեցին (Du Cange. Constantinopolis Christiana. Դ. 158): 999ին այս վանքին առաջնորդ էր Սերգիոս, Փոսի սերունդէն, որ Պատրիարք եղաւ (Տոք. Պատպատի ԲԱՆԱՍԷՐ Ա. (1899) 46-49 և 119-120. Ն. Ադոնց. ՀԱՅՐԵՆԻՔ Ը. 10. 93): Իսկ ուրիշ Մամիկոնեան մը՝ Ալէքս Մուշեղը՝ փետայ կայսերական, տեսնուեցաւ թէ ինչպէս զգուած աշխարհէն՝ վանք քաշուեցաւ (վերը 272):

Քէոփիլ կայսրը անոր նուիրեց Քրիստոպոլի (Սկիւտար) կայսերական վանքը, նաեւ մերձակայ երկու վանքեր, որոնց մօտերը կը գտնուէին Անթերիոս կոչուած վայրը՝ յատկացուած պետական զինանոցներու: Ալէքս Մուշեղ օր մը պտոյտի ատեն շատ հաւնեցաւ այդ տեղին և ցանկութիւն յայտնեց սեփական մենաստան ունենալու և իր յիշատակը անմահացնելու: Քէոզորայի միջնորդութեամբ յաջողեցաւ պարզել ստանալ կայսրէն հողը և շինեց հոյակապ մենաստան մը, ուր մինչեւ իր մահը մնաց և հոն թաղուեցաւ: Իր գերեզմանը մինչեւ ԺԱ. դար կը մնար հոն անեղծ (Քեոփ. Եւր. 109): Հոն թաղուեցաւ նաեւ իր Քէոզոս եղբայրը, նշանաւոր պատրիկ, որ Ալէքս Մուշեղի կառուցած վանքը մօտ էր և հոն մեռած (վերը 272): Յիշուեցաւ նոյնպէս թէ Չմշկիկի ամենազօր նախարարը, Վասիլ ներքինին, կառուցած էր վանք մը զոր Վասիլ Բ. հիմնադրած կործանեց (վերը 305) և թէ Հայ-Հոռոմները Պոլսոյ մօտերը՝ հաւանօրէն Մարմարայի ափական եզերքին ունէին Պորտոն վանքը՝ ուր մեռաւ Փոս պատրիարք (վերը 285):

Ասոնցմէ զատ անշուշտ բազմաթիւ են Հայեր, որոնք յունադաւան դառնալէ յետոյ կրօնական երկիւղածութեամբ կառուցած են բազմաթիւ նման հաստատութիւններ կայսրութեան զանազան վայրերը: Այսպէս, կը յիշուի նշանաւոր մենավայրին՝ Աթոս Լեռան (Այնօրոս) Հայ-վրական Իվերոնի (Iveron=Վրաց) համբաւաւոր վանքը, որուն հիմնադիրը եղած է Քոռնիկ, (EB. 418-9. CMH. Դ. 90) ըստ Schlumbergerի, հաւանօրէն մէկը Յովհաննէս և Քոռնիկիոս անուն երկու վանականներէն, որոնք իմանալով 976ին Սքլերոսի յարուցած քաղաքային պատերազմին լուրերը Աթոս լեռնէն, ուր քաշուած էին, եկան և իրենց զէնքերը ի սպաս դրին Վասիլ կայսեր: Ասոնցմէ մէկը, նախկին զօրապետ Գաւիթ, Տայոց Կիւրապազատին, Վարդ Փոկասի կողմէ զրկուեցաւ Գաւիթի մօտ որպէսզի զինուոր հաւաքէ: Այս երկու նախկին վանականները քաջաբար կառուցան Քոռնիկիոյ (Ալիսի շուրջը) ճակատամարտին մէջ (979 Մարտ 24) և ասոնցմէ Քոռնիկ, այն ոււարով որ ձեռք բերաւ հոն, շինեց Աթոս լեռան վրայ այդ վանքը, որ ըստ Ռուման բժիշկ Յովհաննէս Գոմֆենոսի (Հ. Ղուկաս Ինճիճեան Աւետար. Ե. 40), նախապէս գոյութիւն ունէր և շինուած էր Ռոմանոս Բ. ի (959-965) կնոջը՝ Քէոփանէի և զաւակներուն՝ Վասիլ Բ. ի և Կոստանդին Ը. ի կողմէ, թերակղզին Ս. Աթանասի կողմէ 962ին մենավայրի վերածուելէն անմիջապէս յետոյ (Գեղեցի. 451-2): Ըստ Ad-

bé A. Vogtի (CMH. Դ. 90) Վասիլ Բ. 980ին իր սահեայ հրովարտական բաւականէն աւելի ճոխացուցած է այս վանքը, որ յետոյ նորոգուած է, protospathaire Գէորգ Վարազվացիի (Barasbatzé ըստ Schlumbergerի և Vazrazvatzé ըստ J. Laurentի) կողմէ որ նոյնպէս Վրական ընտանիքի մը կը պատկանէր մօր կողմէ և Եղեօիոյ հրամանատար եղած էր 1028ին և ինչպէս տեսնուեցաւ (վերը 316) 1031ին, իբր դաւադրութեան մը մասնակից, աքսորուեցաւ (Laurent. Byzance et les Turcs. նաեւ EB. Դ. 198 և 202. Չամ. Բ. 915-918):

Ըստ Յովհաննէս Գոմֆենոսի, դարձեալ Վրացի Աշոտ իշխան մը հոն շինած էր մատուռ մը: Ինճիճեան (Աւետար. Ե. 40) իրաւամբ դիտել կու տայ թէ Քոռնիկ և Աշոտ անուները ցոյց կու տան թէ անօք Հայ իշխաններ էին, թերեւս Վրաստան հաստատուած և յունադաւանութեան յարելով անոնց խառնուած: Իբրեան այս վանքին մէջ հաւանական է որ Հայ միտաբաններ ալ գտնուած են:

Նոյնպէս երկու Հայեր՝ Գրիգոր Բակուրեան և եղբայրը՝ Աբաս, շինած են 1084ին Պաշտովայի վանքը, որ Ֆիլիպէի հարաւ-արեւելեան կողմը Ռոտոբ լեռներու հանդիպակաց Ասենովկրատի (նախկին Սթանիկոզ) մօտ կը գտնուի: Այս վանքը Ռիլոյէն ետքը՝ ամէնէն հինը, ամէնէն նշանաւորը և եկամտակիրը՝ ամէնէն հարուստն է Քրակիոյ վանքերուն: Վանքին հիմնադիրներուն իւղաներկ մեծադիր նկարները ցարդ կը ձանձաւ դամբարան-մատուռին մէջ՝ յունարէն արձանագրութիւններով (Ներքին Գասապեան. ՀԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՑՈՑԸ. 1938. 54):

Գրիգոր Բակուրեան՝ որ Ալէքս Կոմնէնի ատեն Պոլսոյ մէջ հասած էր պետական բարձր դիրքի (Սեբաստոս և Մեծ Դոմեդիկոս), ծագումով Հայ էր, բայց ցարդ ճանչցուած է իբր Վրացի՝ Հայ (Ուսուցիցի. 177. Չամ. Բ. 978) թէ օտար բազմաթիւ հեղինակներէ, վասնզի ծնած է Տայք-Կարալքի մէջ և յարած՝ յունադաւանութեան: Բիւզանդացիք զինքը նշանակած են Կարսի և Ուխտեաց շրջանին կառավարիչ: Ինքն է որ Կարսը յանձնած է Վրաց Գէորգ Բ. թագաւորին (Ալիշան. Այրարատ. 84):

Շնորհիւ իր դիրքին և մատուցած ծառայութեանց՝ մեծ ազդեցութիւն և իրաւունքներ ձեռք բերած է Բիւզանդիոնի մէջ, նուէր ստանալով մասնաւորապէս ընդարձակ գեոքիններ Պաշտովայի շրջակայքը մինչեւ Սերէզ, Տրամա և այլն (Ներքին Գասապեան 60):

Գրիգոր Բակուրեան այս վանքը կառուցած էր Պոլսոյ Ամենայն Սրբոց վանքին յատկազօրով և նմանութեամբ և անոր ապագայ բոլոր պէտքերը կանխապէս հոգաց և պատրաստեց: «Լեւելի գեմուած միջոցիս, կը գրէ ան, արդէն փափաք ունէի այն սեսակ հաստատութիւն մը հիմնելու եւ արեւմուտք անցնելով չմտցայ զայն, միտ յիշողութեանս մէջ կը պահէի մինչեւ որ յաջողեցայ վերջապէս կանգնել այս գեղեցիկ սաճար, անոր մօտ վանականներու պատարարներ եւ իմ մահկանացու մարմնոյս գերեզմանը»: Ռուս պատմագիր Սօքոլօֆ իր «Monastire Georgien à Byzance» գործին մէջ յատուկ էջեր նուիրած է Պաշտովայի վանքին ներքին կանոնա-

գիրին՝ զոր կը նկատէ արդարակարգով և իմաստուն մարդու գործ (Վէա — Վարամ Արծրունի. ԱՊԱԳԱՅ. 1917. Թ. 1): Ան վանքը անկախ հուշահատ էր և անոր կտակած՝ իր բոլոր կալուածները: Կանոնագիրը, երեք լեզուեայ էր, յունարէն, հայերէն և վրացերէն, իսկ ինքն ստորագրած էր հայերէն (Ներսէս Գասապեան. Գոյն. 56—7): Այս վանքն ալ ունեցած է Հայազգի միաբաններ (նոյն 57—58): Այս հուշակաւոր մենաստանը մեծ դեր կատարած է Թրակիոյ և Մակեդոնիոյ մէջ, վասնզի Բահուրեան հոն կղերանոց մը բանալով ուսման և գիտութեան ծաւալման նպատակով է (Վէա. ԱՊԱԳԱՅ. 1917. Թ. 1):

Իսկ եկեղեցիներ կառուցած են գրեթէ Հայ կայսրերէն շատեր: Մասնաւորապէս Լեւոն Զ. Իմաստասէր (886—912) Պոլիսը օժտած է յաջորդաբար մեծած իր երեք կիներու անունին նուիրուած երեք եկեղեցիներով:

Այսպէս, գտնուած են Հայեր որոնք ուժ ու նեցուկ եղած են Յոյն-Բիւզանդական ուղղահաւատութեան և պաշտօնական եկեղեցիին, անոր փառքին և մեծութեան համար աշխատելով, ինչպէս գտնուած են ուրիշներ, որոնք Բիւզանդական եկեղեցիին խաւարամիտ յետադիմութեան և մոլեռանդութեան դէմ մաքառած են, առաջնորդ հանդիսանալ նկրտելով կրօնական վերանորոգութեան և դարձած են աշխարհի քաղաքակրթութեան պատմութեան մէջ գերազանց նշանակութիւն և կարեւորութիւն ունեցող շարժումի մը նախակարապետները: Անոնք եթէ չկրցան խաւարամտութեան յազթել, սակայն ցանեցին սերմեր, որոնք յետոյ բեղմնաւորութեան և վերանորոգութեան մեծ շարժումին ծնունդ տուին: Ուստի բոլորովին անհետեւանք և ապարդիւն չեղան իրենց ճիգերը և ջանքերը, այլ հսկայ հետեւանքներ ունեցան ապագային:

Այս շարժումը թերեւս հակաղղեցութիւնն էր այն ճնշումներուն զորս Բիւզանդիոնի վարիչները գործադրած են պետութեան բաղկացուցիչ աղբերուն վրայ, այդ այլազան ազգերէն և ցեղերէն «Բիւզանդացի» արուեստական ազգը կազմելու համար՝ մէկ կրօնքով և մէկ լեզուով, Եկեղեցին գործիք ծառայեցնելով քաղաքականութեան: Սակայն չեն յաջողած վասնզի մարդկային միտքը՝ ազատ իր ճախրանքներուն մէջ, տեւէ ճնշում կամ կաշկանդում չի ճանչնար մտածումի մարդին մէջ և չի կրնար ուղուած կաղապարը առնել: Այսպէս, ազատ մտածողներ, յղացած են Եկեղեցւոյ «ուղղափառ» վարդապետութեանց դէմ, ուրիշ տեսութիւններ և կարծիքներ, որոնք իբր աղանդներ և հերձուածներ դատապարտուած են պաշտօնական եկեղեցիէն, վասնզի անոնք կ'սպառնային քանգել կրօնքով կերտուած Բիւզանդացիներու միութիւնը: Ուստի զայրոյթով և քիչ մըն ալ սարսափով՝ դիտուեցան Բիւզանդիոնի կողմէ բոլոր այն ազատ մտածութիւնները որոնք միութիւնը կ'եղծանէին և բաժանումներ առաջ կը բերէին, և հալածուեցան, ինչպէս է. դարէն առաջ, նոյնպէս նաեւ անկէ յետոյ: Հայերը արդէն պետութեան դաւանանքէն բաժնուած էին, արեւելեան միջանի ազգերու հետ, մերժելով Քաղքեգոնի ժողովը, և ասոր համար՝ տեսութեան առարկայ եղած:

Արարները, գրաւելով կայսրութեան Միաբնակ (Monophysite) նահանգները, ինչպէս Հայաստանը, Սուրիան, Եգիպտոսը եւայլն, Բիւզանդական կայսրութեան հիւանդ մարմինը կազդուրելու նպատակին, վասնզի իր կտրատուած սահմաններուն մէջ մնացող բնակչութիւնը ամենատուար մեծամասնութեամբ պետութեան կրօնքին կապուած էր: Սակայն նոր աղանդներու ծագումը, որոնք կը ծնէին Փոքր Ասիոյ, Ասորիքի և Հայաստանի պէս աղանդաւորական շարժումներու գերազանց որորաններուն մէջ, պետութիւնը նորէն խռովեցին:

Է. դարէն յետոյ, մասնաւորապէս իրարու կցորդ և իրարու հետ ներքին կապակցութիւն մը ունեցող երկու աղանդներ, Պաղիկեանութիւնը և Պատմաբանութիւնը մեծ զբաղում և յուզում պատճառեցին Բիւզանդիոնի: Այս երկու աղանդներէն առաջինը, ինչպէս տեսնուեցաւ, հայկական էր և միշտ Հայաստանի և Հայոց մէջ զօրաւոր եղած իսկ միւսը՝ որ անկէ անանցուած ըլլալ կը թուի, աւելի Անատոլեան նահանգները խռոված:

Այս աղանդները կը թուին սնանիլ աւելի հին դարերու մէջ ծրնունդ առած խմորումներէ: Հաւանորէն Պաղիկեանները մէկ ծլարձակումն են Բ. և Գ. դարուն Որդեգրականներուն, որոնք Անտիոքի եպիսկոպոս՝ Պաղոս Սամոստացիին բանագրութիւն յետոյ ցրուեցան և գաղանթ կամայնքներ կազմեցին Արեւելքի մէջ: Հայաստանի մէջ Որդեգրականք վաղեմի ժամանակներու մէջ յայտնուած, առին Մծղնէ, Պայղակեան, Մանիքեան, և այլուր Մեսալեան և այլ անունները, և միջանի անգամ Մանիքեան, և այլուր Մեսալեան և այլ անունները, և միջանի անգամ (Հ. անհետացած ըլլալու պատրանքը տուին և դարձեալ երեւան եկան (Հ. Բարսեղ Սարգիսեան. Ուսումնասիրութիւն Մանիքեան—Պաղիկեան Քոնստանդնուպոլիսի մասին. Ստամբուլ 1938. Վեհափայտ. 47): Բոլոր երեւոյթները ցոյց կուտան թէ Հայ հողի վրայ տարածուած ամէն աղանդ, ինչ անուն որ ալ առած և ինչ փոփոխութիւններ և երանգներ ալ որ ստացած ըլլայ միեւնոյն արմատէն ծագում առած է (Կար. եպ. Տ. Մկրտիչեան. Հայոց եկեղեցւոյ Պատմութիւնը Ա. 207): Այս աղանդները, յաճախ ծնունդ ազատ մտածումի, ընդհանրապէս դէմ էին եկեղեցական նուիրապետութեան և անոր ստեղծած ու շահագործած ժողովարարութեանց:

Է. դարուն վերջերը և Ը. ին սկիզբները Բիւզանդեան կայսրութեան տահմանամերձ այլեւայլ շրջաններուն մէջ հին Մեսալեաններէն սկսաւ նման հակաեկեղեցական շարժում մը, որ Արարներու երեւան գալէն յետոյ մասնաւոր թափ մը առած ըլլալ կը թուի (Կար. եպ. Տէր Մկրտիչեան. Պաղիկեան Բիւզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածալիք երեւոյթներ Հայաստանի մէջ 1938. Երուսաղէմ 174): Այս աղանդաւորները կը կրէին Պաղիկեան ընդհանուր անունը (Գոյն. 174), և գլխաւորապէս իրենց մէջ կը համրէին բազմաթիւ Հայեր, այնպէս որ եթէ Պաղիկեան աղանդը Հայ հանճարի գիւտ չէ, ինչպէս կը պնդէ Հ. Բ. Սարգիսեան (Գոյն. 38) գէթ Հայ հողին վրայ աւելի խոր արմատ ձգած և ըն-

դարձակ շտապիչներ տարածած է (նոյն. 38): Արդարեւ այդ շտապիչներէն մէկն էր Պասկերամարտութիւնը, վասնզի, ինչպէս կը դիտէ Տ. Միլերտիչեան եպօ. (Պալդիկեանք եւայն 181), Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսը (717—728) կողմէ Պալդիկեանց մասին բռնաձեռնները ցոյց կու տան թէ Պասկերամարտութեան գաղափարին համար մթնշուղորտը պատրաստ էր այն ժամանակները: Անոր օրորանը Ասիան էր, ինչպէս կը հաստատեն բոլոր գիտունները անխտիր և շատ հաւանօրէն անոր գաղափարաբանութեան մէջ շատ կարեւոր դեր կատարած էր Պալդիկեանութիւնը կամ Հայ միաբնու հայկական անհանդարտ և որոնող իմացականութիւնը: Մեծ ազդեցութիւն ունեցած ըլլալ կը թուի անոր բանաստեղծութիւնը մէջ նաեւ մանկատական կրօնքը որ դէմ եղած է պատկերներու և արձաններու և իսլամներու այս հակակրօնութիւնը պատկերներու և սուրբերու պաշտամունքին դէմ, խորունկ տպաւորութիւն ըրած էր Բիզանդացի զարգացած դաստակարգին վրայ, որոնց մէջ եպիսկոպոսներ ալ կային: «Նախապատմանց տիրապետութիւնը եւ մեակոյթի փայտումը պատմական բոլոր ժամանակաց մէջ քերես ամենամութ օրջանը կ'ընէին է. դարը» (Բրօք Պիլլերի), և Պալդիկեանութիւնը և Պասկերամարտութիւնը երկուքն ալ Հայ միաբնու արգասիքները, այդ խաւարին մէջ փայլատակող լոյսերը եղան, որոնք «Արեւելք ցնցեցին եւ Արեւմուտք լուսաւորեցին» (Կիպարն): «Երոզութիւնն այն է որ է. դարուն կետերէն ի վեր Հոռոմեական կայսրութեան մէջ դաստիարակութիւնը պատուած էր խաւարով եւ որ, եթէ չըլլար Պասկերամարտութեան ներմուծած հակազդեցութեանց նոր ոգին, հարաւային արեւելեան ծերոպան եւ Փոքր Ասիան ալ պիտի փայտեցին օգիտութեան եւ ապականութեան այն միտնոյն խաւարին մէջ ուր ծերոպա փայտը յաջորդ դարերու ընթացքին...: Արդարեւ, Ը. դարուն վախճանին՝ մեծ թիւ մը կը կազմէին դաստիարակեալ եւ ուսեալ մարդիկ, միջնդեռ Ը. դարուն սկիզբէ մէկ հաս դաստիարակեալ նշանաւոր մարդ չի կար» (Բրօք Պիլլերի. Յեռնագոյն Հոռոմեական կայսրութեան պատմութիւնը Բ. 434—7):

Արդէն, Բիզանդական կայսրութեան մէջ, մանաւանդ անոր արեւելեան սահմաններուն վրայ, կ'ապրէին ժողովուրդներ որոնց մէջ քարոզուած և ընդունելութիւն գտած էր անձէս քրիստոնէութեան մը գաղափարը, ինչպէս էր Պալդիկեանութիւնը, որուն յարած էր ի մէջ այլոց պետութեան ամէնէն ուժեղ և գործօն տարրերէն մին հանդիսացող Հայերէն ստուար թիւ մը: Իսկ Պասկերամարտութիւնը, որ Պալդիկեանութեան հետ այնքան սերտ աղերս ունէր, և իր խորքին մէջ եղծում մը բառնալու հարց չէր, այլ ամբողջ Օրթոտոքս Եկեղեցիէն ներս տեղի ունեցած վերանորոգչական մեծ շարժում մը, հին կայսրութիւնը վերակազմելու ձգտումով (Pappariopulo. Histoire de la civilisation Hellénique. 1878. Paris. Գ. նաեւ Տ. Միլերտիչեան. Պալդիկեանք. 177—8), գրեթէ անոր շօք հիւստիւն ունէր, վասնզի Չենոնի օրով (474—491) փորձ մը եղած էր այդ ուղղութեամբ (Pappariopulo. նոյն. 189) և Փիլիպպիկոս Հայ կայսրը (711—713) մինչև իսկ ձեռնարկած էր սահման

մը դնելու պատկերներու շարաշար գործածութեան դէմ (նոյն): Գաղափարը ուրեմն նոր չէր, մանաւանդ Փոքր Ասիոյ մէջ, ուր անիկա հասունօրեայ ըլլալ կը թուի Լեոն Գ. Իսաւրացի (717—741), ծագումով հաւատարմէն Հայ և Ասորիքէն, ինքն ալ յարեցաւ ասիական նահանգներու խորքը և իր ծննդավայրին շուրջը ծնունդ առած այս շարժումին և 726ին Պասկերամարտութեան դէմ հրովարտակ մը արձակեց և ամբողջ կղերը իր դէմ հանեց:

Այն պայքարը որ Լեոն Գ. բացաւ պատկերներու դէմ՝ ոչ թէ իբր նորութիւն այլ իր ծաւալուն, սկզբունքային ընդլայնումը նշանակութիւն և խորունկ ներգործութիւն ունեցաւ պետութեան քաղաքական կեանքին վրայ: Գաղափարին և եկեղեցական վարչութիւնները, որոնք երկար ատեն Բիզանդեան կայսրութեան մէջ իրարու գործակցած էին այնքան անձնայատուկ կերպով մը, պահ մը իրարու դէմ ելան: Պատկերամարտութեան շարժումը պատճառ եղաւ որ երկու վարչութեանց բարձրագոյն պաշտօնատարները — որոնց մէջ էին նաեւ եպիսկոպոսները — կայսեր սեփական իրաւունք համարէին Եկեղեցին պահպանելու և կառավարելու իշխանութիւնը, իսկ ստորագուս կղերը, մանաւանդ վանականութիւնը, ժողովուրդին համակրութեան ապաւինած, ժխտէր աշխարհական իշխանութեան հոգեւոր գործերու միջամտութեան իրաւունքը: Այնպէս որ, ժողովուրդը երկուքի բաժնուեցաւ և երկարատեւ պայքար մը տակնուրվարեց երկուքի բաժնուեցաւ և երկարատեւ պայքար մը տակնուրվարեց: Ըրաւ պետութիւնը և ցնցեց պետական եկեղեցիին բարոյական չէնքը:

Այս յառաջդիմական և յեղափոխիչ մեծ շարժման մէջ, որ աշխարհի պատմութեան համար այնքան կարեւոր հետեւանքներ ունեցած է, ուշագրաւ է որ Հայերը ստուար մեծամասնութեամբ ջերմօրէն համակիր էին այն կողմին որ կ'ուզէր պատկերները խորտակել և վանական կղերը հատուածել: Եւ կասկածի տակ չէ որ Պասկերամարտութիւնը իր ոյժը կ'ստանար գլխաւորաբար պետութեան բաղկացուցիչ տարրերուն մէջ այնքան ուշագրաւ տեղ մը գրաւող Հայերէն, որոնք իբր բանակին ալ մեծամասնութիւնը, շատ անգամ վճռական ազդեցութիւն ի գործ կը դնէին — ինչպէս տեսնուեցաւ — կայսրերու որոշումներուն և քաղաքականութեան վերաբերյալ, և յաճախ իրենց վճռատու կամքով գահ կը բարձրացնէին Հայ զօրավարներ որոնք իրենց համաձայն և համախոհ էին: Եւ գիտե՛լիք է որ բոլոր Պասկերամարտ կայսրերը Փոքր Ասիայէն էին, և կը ծառայէին զիրենք գահ բարձրացնողներու կամքին:

«Եւ աս՝ հակառակ Յոյն Օրթոտոքս Եկեղեցիին ասելութեան, քրեանութեան, զի Հայազգի կայսրերը՝ Պասկերամարտ՝ անոգո՛ր բուն հակառակ կողմեր հանդիսացան Յոյն եկեղեցիին իբխանասիրութեան, ամուլ վակեանութեան, նախահաւատութեան փառաբանութեան գիւմ, միջնդեռ եղանակներու գանակալներ, օրինակ իրենք բագուհին, եկեղեցիին մոլեռանդ պատգամը եւ հլաւ հպատակք՝ որ ամենասասքիկ անհաս ընդդիմութիւն գտաւ Հայ զօրաբանակէն (Busell. 125): Հայազգի կայսրերը եւ Հայ բանակը

(Armeniac) ասոր դեմ բերին իրենց պարզամիտ, մաքուր հոգի բարեպաշտութիւնը որ աս կը նմանէր, ըստ Քրոֆ. Պրսրլի, Քրոմուէլի եւ իր Օրկարակող (Ironside) զինուորներուն կրօնական ոգիին: Քանակը (կամ ամենեւեպ ազգեցիկ բանակաբեմերը՝ Armeniac եւ Anatolian) պատկերներու (Ikon) ջնջումը կը պահանջէր (նոյն. 132): Հայագրի կայսրերը բանակին այս կամքը գոնացնելու հետեւումս եղան, եւ այսպէս բերեւս նպաստեցին կայսրութեան վերակենդանացման» (Պրսրլ. 114):

Հետեւաբար, Հայերը «իրենց ցեղին անջնջելի դրոսը տպաւորեցին նաեւ Բիւզանդիոնի կրօնքին վրայ: Եւ Հայ ոգիին բնիկ արտայայտութեանն եղող նանրապաշտութեան եւ պատկերապաշտութեան դէմ հակառակութիւնը փոքր մաս չունեցաւ Բիւզանդիոնի մէջ վերակենդանացման շրջանը յառաջ բերելու եւ լծացուած ու անկումը արգելելու (Պ. Յնտզըրեան. ԿՈՉՆԱԿ. 1935. 604):

Շատ բացորոշ է թէ է. դարէն մինչեւ ԺԱ. դար, Հայերու շնորհիւ լուրջ ընդդիմադրութիւն մը գոյութիւն ունեցաւ երկու մրցակից դաւանանքներու, երկու մրցակից կառավարչական մեթոտներու միջեւ: Մէկ կողմը կը ներկայացնէր աններող Օրթոտոքսութիւնը, խաղաղասէր սկզբունքներով՝ կոթնած պալատական ազդեցութեան, իսկ միւս կողմը՝ բանակին գլուխը եղողները, կը ներկայացնէին զուարթ աշխարհիկ կենցաղասիրութիւնը, հակակղերական եւ հակավարդապետական եւ սահմանագլուխներու վրայ՝ աշխուրջ՝ յարձակողական քաղաքականութիւն:

Հայերը, այսպէս, կը հանդիսանային ոչ միայն նոր ուղղութեան մը առաջնորդները, այլ կարեւոր բարենորոգումներու յղացողները: Արդէն է. դարէն մինչեւ ԺԱ. դար սահող ժամանակամիջոցին, որ Բիւզանդեան պատմութեան ամենէն նշանաւոր ժամանակամիջոցն է, ինչպէս յաճախ շեշտուեցաւ, Հայերը կատարած են անգնահատելի դեր մը, որուն միայն աղօտ ուրուագիծը կարելի եղաւ տալ (*) եւ ասիկա իսկ բաւական է կարծեմ ցոյց տալու թէ ինչպէս մանաւանդ Ը. դարու սկիզբէն ասդին Հայոց ազդեցութիւնը շարունակական եղած էր եւ անայլայլ (Պրսրլ. 340) իբր հետեւանք թէ՛ իրենց հետզհետէ աճող թիւին, մինչեւ հասնելու աստիճան բնակչութեան մեծամասնութեան, թէ՛ իրենց ամենուրեքութեան եւ թէ՛ իրենց բարձր որակին: Այնպէս որ, է. դարէն մինչեւ ԺԱ., դար, Բիւզանդեան պատմութիւնը իրականութեան մէջ Հայերու պատմութեան մը վերածուած էր. վասնզի Հայերն էին որ կը կառավարէին պետութիւնը եւ անոր գլխաւոր յենակէտ եկեղեցին, անոնք էին որ իբր զինուոր կը պաշտպանէին երկիրին սահմանները, եւ իբր մտաւորական՝ առաջնորդ կը

(*) Եթէ Բիւզանդիոնի մէջ Հայոց դերը լիակատար կերպով ներկայացնել ուզուէր, հարկ պիտի բլլար բազմապատկել այս հասարակ ծաւալը: Ներկայացուածը սուեւրագիծ մըն է սոսկ, պարզելու համար անոց ներգործական դերը եւ քուելու համար անոց ներմուծած նոր զազափարները, որոնք Հայաստանէն կը բերէին: Յառաջիկային կը յուսամ առիթ ունենալ աւելի մանրամասն ներկայացնելու Հայոց դերը Բիւզանդական պետութեան մէջ:

հանդիսանային ժողովուրդին բարոյական, իմացական եւ ընկերային բարեշրջման: Ասոնք, արդէն վաղուց, շատ առաջ քան 640ին Արարներու Հայաստան մտնելը, սկսած էին զազթել դէպի Բիւզանդեան երկիրներ ուր ունէին խոշոր թիւ մը, մասնաւորապէս խիտ զանգուածներ անոր արեւելեան սահմանագլուխներուն վրայ, ինչպէս Փոքր Հայք, Պոնտոս, Կապադովկիա, Արեւելեան Փոքր Ասիա, բայց միշտ ենթակայ ձուլման եւ ընկլուզուելու Բիւզանդականութեան մէջ: Իսկ է. դարէն մինչեւ ԺԱ. դար մէկ կողմէ Հայաստանի մէջ ճնշուած Հայերը ապաստանեցան դէպի քրիստոնեայ կայսեր երկիրները, անվերջ ու անվախճան եւ զանգուածային կերպով, միւս կողմէն՝ Բիւզանդեան պետութեան ներքին պայմանները եւ անոր եւրոպական սահմանախլուրէին վրայ երեւցող բարբարոսները պատճառ եղան որ Հայերը բռնադատուին փոխադրուելի դէպի Արեւմուտք, նոյնպէս խոշոր զանգուածներով, եւ այսպէս, ցեղը իր ամբողջութեամբ դէպի Արեւմուտք շարժի եւ պետութեան մէջ ամենուրեք տեղաւորուի (վերը 252): Այնպէս որ, եկաւ ատեն որ, Հայերը եթէ պետեղաւորուի (վերը 252), Այնպէս որ, եկաւ ատեն որ, Հայերը եթէ պետութեան բոլոր նահանգներուն մէջ մեծամասնութիւն չէին — թէեւ շատ տեղեր էին — զոնէ պետութեան տիրող եւ ամենէն ազդեցիկ ասորը կը ներկայացնէին, բոլորովին պատմական անսովոր երեւոյթի մը առջեւ դրնելով աշխարհը, վասնզի տիեզերական պատմութեան մէջ գրեթէ բոլորովին չտեսնուած եւ տարօրինակ պատահար մըն է որ ազգի մը զաղթականները դրացի երկիրի մը մէջ մեծամասնութիւն ըլլան եւ տիրող դասակարգը դառնալու աստիճան դիրք ու ազդեցութիւն ձեռք բերեն:

Ըստ Քրոֆ. Պրսրլի տեսութեան, Հայերը այդ հրաշքը գործեցին, միեւնոյն ատեն այդ չորս հարիւր տարիներու շրջանին պատմութիւնը զննելով ոչ նուազ նշանակելի հետեւեալ երեւոյթներուն առջեւ —

- 1.— Հայերը յաջորդեցին ու տեղն ու պաշտօնը գրաւեցին Պանոնիոյ եւ Իլլիրիոյ բնիկ եղող ինքնակալներուն (250—678) եւ կայսրութեան Արեւելեան սահմանները պաշտպանողներն եղան:
- 2.— Հայ ցեղը, կորովի, ձեռներէց, բազմածին եւ աւանդական առաքինութիւններով օժտուած, հոծ զինուորական ոյժ մը կը կազմէր, որուն համար կայսրութեան prestigeը եւ Յոյն քաղաքակրթութեան պահպանումը կարեւար էր բանակներուն առատօրէն ոյժ եւ նպաստ նուիրուելէն:
- 3.— Բելիսարիոսի ժամանակին սակաւաթիւ անկանոն օտարացեղ զինուորական ուժերուն յաջորդեցին գաւառական բանակաթեմերու բնիկ զօրախումբերը:
- 4.— Կայսրութիւնը իր կենդանութիւնը կը պարտէր ոչ այնքան քաղաքական պաշտօնատարներու օգտակար ապաստարկութեան որքան Հայ եկւորներու եւ զաղթականներու բերած նոր աւագութեան եւ բարեմիտ ծառայութեան:
- 5.— Այս քաջամարտիկ տարրը՝ հորմէ որդի զինուորական արուեստի եւ արիութեան քաջավարժ, անգուլ անհաշտ կռիւ մղեց Յոյն Օրթոտոքսութեան:

թեան, վանականութեան և պատերազմի յատկացեալ գանձարանը վախճ պահող պաշտօնատարներուն դէմ:

6.— Ներխուժող ցարրին (Հայոց) բոլոր հողին «աւատական» էր, այսինքն մեծ կշիռ, յարգ կու տար ծագումի, տոհմի, հողային կալուածներու և հետեւորդներու:

7.— Աւատականութիւնը կը խմորէ և կը կերպափոխէ Յոյն հաստատութիւնները, ընծայելով մեզի Փոկասի, Չմշկիկի և Վասիլի մեծափառ դիւցազնավէպը, և անվերջ թեկնածութիւնը որոշ ազնուատոհմ ընտանիքներու, եթէ ոչ կայսերական գահին տիրանալու՝ գոնէ իրօք իրենց ազդեցութեան և խնամակալութեան ենթարկելու դայն:

8.— Թէպէտ ընդհանուր առմամբ գահին բարձր մթնոլորտին մէջ, ցեղ և բնիկ նախապաշարունակներ անհետի կը միտին, Բիւզանդեան ինքնակալները Հայ են՝ իսկական ծագումով կամ անսխալելի համակրութեամբ:

9.— Արեւելեան սահմաններուն ուժեղ բանակները գլխաւոր (եթէ ոչ անյեղի) որոշիչներն են կայսերական յաջորդութեան, և կ'երեւան յաջորդ պարտադրող՝ սպառող հարստութիւն մը կամ քաղաքականութիւն թելադրող՝ անձարակ գահակալի, 700էն մինչեւ Կոմնենեանց գահակալութիւնը (հմտ. Գառնիկ Տնտգլեան. Հ. ԿՈՉՆԱԿ. 1935. 604—606):

Բացորոշ էր թէ Հայ գաղթականներ վերանորոգած և նոր արիւն ներարկած էին Հռոմէական սպականութիւններու մէջ հիւժող Բիւզանդիոնի բնակչութեան և անոր տոկունութիւն և նոր կեանք պարգեւած:

Ենորհիւ այս Հայ արիւնին էր որ Բիւզանդական կայսրութիւնը կատարեց իր պատմական ամէնէն աւելի փառաւորուած ու ամէնէն դրուատուած արեւմտեան քրիստոնեայ քաղաքակրթութեան պաշտպանի դերը ընդդէմ Արեւելքի բարբարոսներուն:

Սւ այս պղտիկ փառք մը չէ Հայ ցեղին համար՝ ընդհանրապէս և իր դժբախտ այլ սակայն ձեռներէց գաղթականներուն համար՝ մասնաւորապէս:



Հռոմէական կայսրութեան երբեմնի մեծ մայրաքաղաքը՝ Հռոմ, տեսնուեցաւ (վերը 124—129) թէ պատահօրէն եղած էր բնակավայրը սակաւաթիւ Հայերու, երբ տակաւին կայսրութիւնը չէր բաժնուած երկուքի, իսկ անոր երկուքի բաժնուելէն յետոյ տեսնուեցաւ թէ (վերը 107) ինչպէս Հայերը նպաստած էին Բիւզանդիոնի տիրապետութեան ենթարկելու համար Իտալիան՝ զոր յաճախ Հայեր իբր Էքսարք կառավարած էին, Ռափեննան իրենց նստոց ունենալով (վերը 172) և տեւականօրէն երկու գար հոն մնացած էին Հայ զինուորներէ բաղկացեալ գունդեր (վերը 174): Նոյնպէս տեսնուեցաւ (վերը 176) թէ Չ. դարուն արդէն Հայ վահառականներ Իտալիա, Տրանսա, Սպանիա և Ափրիկէ մտած էին, ինչպէս նաեւ Հայեր փոխադրուած էին Կիպրոս (վերը 164):

Է. դարէն յետոյ, մասնաւորապէս Ը. և Թ. դարերուն, այս երկիրները Արաբական արշաւանքներու առարկայ եղան և նուաճումի ենթարկուեցան: Այսպէս, Կիպրոսի, Կրէտէի, Սիկիլիոյ և Հարաւային Իտալիոյ տիրապետութիւնը մրցութեան առարկայ եղաւ Բիւզանդիոնի և Արաբներու միջեւ, մինչ հիւսիսային Ափրիկէ, Է. դարուն իսկ, անդարձ կորսուեցաւ Բիւզանդիոնի համար:

Կիպրոս, Եգիպտոսէն և Սուրիայէն յետոյ առաջին երկիրն է որ Արաբ յարձակման առարկայ եղաւ 648ին, և գրեթէ մինչեւ 958, ուր վերստին Բիւզանդիոնի տիրապետութեան ենթարկուեցաւ, բազմաթիւ անգամներ Բիւզանդիոնի և Արաբներու կողմէ տրուած առնուած է (Կիպրոս կղզիք. ԱՄԷՆՈՒՆ ՅԱՐԵՑՈՒՄՆԵՐ. 1927. 202): Տակաւին Մօրիկի ատեն հոն փոխադրուած Հայերը (վերը 164) եթէ այդ երկարատեւ պատերազմներու միջոցին չեն կրցած պահել իրենց գոյութիւնը, վստաբազմներու միջոցին չեն կրցած պահել իրենց գոյութիւնը, վստաբազմներէն կարելի է մտածել թէ Նիկեփոր Փոկաս, ինչպէս բոլոր Արաբներէ գրաւած երկիրներուն իսլամները վանած և քրիստոնեաներ լեցուցած է, նոյնը պէտք է ըրած ըլլայ Կիպրոսի համար և հոն փոխադրած՝ ի մէջ այլոց Հայեր: Չմշկիկ, ինչպէս ուրիշ տեղեր, հոն ալ Հայեր փոխադրած է, և ինչպէս տեսնուեցաւ, կղզին գրաւուած է Հայու մը կողմէ և ունեցած է Հայ կառավարիչներ (վերը 284):

Կիպրոսի վիճակակից եղած է նաեւ Միջերկրականեան միւս մեծ կղզիք՝ Կրէտէ, ուր ոտք դրած են Արաբ ծովահէններ 825ին և աւելի քան 130 տարի հոն մնացած՝ բոլորովին իսլամացնելով կղզին, մինչեւ որ 961ին Նիկեփոր անձամբ արշաւելով հոն, առաւելապէս Հայ զօրքերով, գրաւած է կղզին և ինչպէս այլուր՝ հոս ալ քրիստոնէացուցած է երկիրը, Հայ սուրբի մը քարոզչութեամբ (վերը 292):

Աշխարհագրական համանման դիրքի մը և պայմաններու մէջ էր նաեւ Սիկիլիա, ուր արդէն Կոստանս կայսրը տեղաւորած էր Արեւելքէն փախստական ժողովուրդներ — ի մէջ այլոց նաեւ Հայեր — և Է. դարուն կէսերը հոն կը գտնուէին Հայ զինուորներ, հրամանատարութեամբ Մժէժի, որ զինուորներու պահանջով կայսր կը հռչակուէր 668ին և եղբրական մահ մը կ'ունենար (վերը 258—9): Հոն կը գտնուէին նաեւ այդ դարուն Հայ պաշտօնատարներ: Նոյնպէս կը յիշուի թէ Իրենէ կայսրուհիին դէմ երբ 793ին Հայկական բանակաթեմին զինուորները կ'ապստամբին, և այս ապստամբութիւնը մեծ դժուարութեամբ կը զսպուի (Թեոփանէս 724—5 կամ Հայ Կեսարիա. 356), Կոստանդին կայսրը Գոլոսոյ մէջ 794 Յունիս 4ին բռնուած հազարաւոր գերիներէն իւրաքանչիւրին երեսը «սեւադեղով դրոսմեալ կը նեղակէ «Հայ նեղակու» եւ կը ցրուէ զանոնք Սիկիլիա եւ ուրիշ կղզիներ» (Թեոփանէս 725):

Ը. և Թ. դարերուն Փոքր Ասիան խռովող Պաւլիկեան շարժումը, ինչպէս հազարաւոր Հայերու Պուլկարիա փոխադրութեան, նոյնպէս նաեւ Սիկիլիա, Իտալիա և այլուր տարագրութեան պատճառ եղած է: Բրօք. Եորթան Իվանով (ՀԱՅԿԱՐԱՆ. 50) կ'ըսէ թէ «794 բուիք Կոստանդին Զ.

կայսր գաղթեցուց մեծ ազգաբնակչութիւն մը Սիկիլիա: 885 թուականին Իսալիոյ մէջ յայտնուեցան Պաւղիկեան լեզոններ իրենց առաջնորդ սարկաւազուհիին հետ: Ուրիշ Հայեր եւ Պաւղիկեաններ արդէն շատ կանուխեցան ստրածուած են իբր վաճառականներ Միջերկրականի եզերքները, մասնաւորապէս Իսալիոյ եւ Ֆրանսայի նաւահանգիստները: Տայմացիայի եւ Պոսնայի մէջէն թափանցեցին Պոկոմիլեան եւ Տրակովիոսեան եկեղեցիներու աղանգակիցները: Երբ 1040ին զսպուեցաւ Փեթեր Տելեանի ասպատակութիւնը Մակեդոնիոյ մէջ Յոյներուն եւ Նորմանացիներուն կողմէ, ազգաբնակչութեան մէկ մասը, մասնաւորապէս Պաւղիկեաններն ու Մակեդոնացիները փախան Իսալիա: Արեւմտեան բրոնիկները, ԺԱ. դարէն այլեւս աստ անդ կը յիշատակեն Իսալիոյ եւ Ֆրանսայի մէջ վճանգաւոր աղանգաւորներ, ինչպէս Վերոնայի, Քոթիցոյի, Քուլուզի, Օրլեանի մէջ եւ այլն: Անոնք կը կոչուին զանազան անուններով, Մանիֆէականներ, Քաթարներ, Պուլկարներ, Պաւղիկեաններ, Ալպիկեաններ, Հերետիկոսներ, Պատանիներ եւ այլն»:

Ուրիշ Պուլկար հեղինակ մը (Աթանաս Բ. Գրայէֆ. 1928 ՊՈՒԼԿԱՐԱ. ՀԱՅՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ. 29) կը հաստատէ թէ Պաւղիկեան աղանդաւորները Պուլկարիայէն ուրիշ երկիրներ գացած են: «Պուլկարիայէն դուրս Պոկոմիլիոյն (Պոկոմիլեան աղանգը) ստրածուեցաւ եւ խոր արմատ ձգեց Պոսնայի, Խուաթիոյ, Հիւսիսային Իսալիոյ, Ֆրանսայի մէջ ու կը տեսնուին նաեւ հետեւեք Ալպիոնի, մաս մը եւս Ֆրանսիոյ մէջ: Իսկ անոր ոչնչացման համար մղուած կռիւր եւ Պապերէն գրգռուած խաչակրաց շարժումը հարաւարեւմտեան Սերպիայի յուզած է շուրջ երեք դար»:

Այսպէս, կը հաստատուի թէ ինչպատ հոգիներու փրկութեան կամ լուսաւորութեան, ծագում առած Պաւղիկեան շարժումը, որ Ը. դարու վերջին մասին՝ իր սիրտը և սկիզբն ունէր հարաւ Հայաստանի մէջ, աղանդաւորներու փոխադրութեան պատճառով, տարածուեցաւ ո՛չ միայն Պուլկարիա այլ անկէ Սերպիայի մնացեալ մասերը, ուր հսկայ դեր մը կատարեց քրիստոնէութեան բարեկարգչական առաջին մեծ շարժումներուն մէջ, Լուտերէն աւանուազն 6—7 դար առաջ: Նման ուրիշ Հայերու պարկեշտ առեւտրականներ, աշխատաւորներ և քաջ զինուորներ, սնունք միեւնոյն ատեն ոգեւորուած էին նաեւ միոթոնարական խանդավառութեամբ: Այնպէս որ, Պուլկարիայէն բովանդակ Սերպիա տարածեցին Պաւղիկեան վարդապետութիւնը և յարուցին Յոյն և Լատին ամենազօր եկեղեցական և քաղաքական իշխանութեանց դէմ Բողոքականութեան առաջին մեծատարած յեղափոխութիւնը: Անոնք տիրական ուժ մը կազմելէ յետոյ Պուլկարիոյ, Սերպիոյ և շրջակայ երկիրներու մէջ, իրենց հետեւորդները տարածուեցան հարաւային Ֆրանսայի և հիւսիսային Իտալիոյ մէջէն ծագեալ նահանգներուն մէջ և զանաք իրենց գաւառներէն ենթարկեցին և նախակտրակները եղան այն մեծ շարժումին որ աշխարհի քաղաքակրթութեան պատմութեան ամէնէն փառաւոր մէկ էջը կը կազմէ, իբր մարդկային միաբնի դարաւոր կաշկանդութիւնէն մէկուն շրջապագերծումը

և անոր սլացքին՝ աւելի թափ ու թռիչք տալու ազդակը: Այսպէս, Վերանորոգութեան մեծ շարժումը որ Սերպիայի պիտի կերպարանափոխէր իր անսխալ թոյն յեղաշրջմամբ, ուղղակի և բացարձակ արգասիքն էր Հայ միաբնի. քանի որ Հայ Պաւղիկեանց Հայաստանէն դէպի Սերպիա փոխադրութիւնը իսկական պատճառն էր Միջին Դարու եկեղեցական և նոյնիսկ քաղաքական պատմութեան մէջ, ամէնէն շահեկան և բեղմնաւոր դէպքերու յաջորդական շրջանի մը, որ պիտի գար յանգիլ Վերանորոգութեան Լուտերով ձեռք բերուած յաղթանակին, որուն սաղմերը մեր երկիրին մէջ ծլարձակուած էին: Իրապէս Գրիստոնեայ Հայաստանի պատմութեան մէջ չէ կատարուած շարժում մը, որ այնքան խոր և համատարած ազդեցութիւն մը գործած ըլլայ Սերպիայի ո՛չ միայն կրօնական, այլ քաղաքական և քաղաքակրթական պատմութեան վրայ, որքան գործած է Հայ-Պաւղիկեան աղանգը, որ հայութեան հոգեկան ներաշխարհին ամենահարազատ արտայայտութիւնը և Հայոց ազատականութեան ամէնէն կարկառուն նշանն էր: Այս շարժումը միեւնոյն ատեն, կարեւոր ազդակ մը եղաւ, քարոզչական խանդավառութեամբ ոգեւորուած այդ Հայերուն տարածուելու դէպի Սերպիայի երկիրներ, որոնց մէջ անշուշտ առաջին տեղը պիտի գրուէր Իտալիա, մանաւանդ՝ անոր բիւզանդեան իշխանութեան ենթակայ մասը, ուր դժբախտաբար հանդարտ կեանք մը չունեցան, երկիրը շարունակ պատերազմներու թափարկումով ըլլալուն համար: Մասնաւորապէս այն Հայերը որոնք Սիկիլիա հաստատուած էին 795ին Կոստանդին Զ.ի կողմէ, իրենց հոն տեղաւորուելէն քիչ յետոյ ինքզինքնին դասն Արաբ տիրապետութեան տակ, վասնզի Արաբները Սիկիլիան գրաւեցին: Բիւզանդացիք 819ին ետ առին, սակայն այս անգամ ալ Տուուարք Euphemius դէմ ելաւ Կրէկորոս Պատրիկեանի և զայն պարտուած մարտերով և սպանելով՝ ինքզինքը հռչակեց Սիկիլիոյ տէր: 826ին Սիկիլիա կ'երթայ Կոստանդին Պատրիկեանը նոր ուժերով, սակայն Catachia մէջ կը պարտուի և ինքն ալ կ'սպանուի: Այս ուժեղ ապստամբը զսպելու կը յաջողի Հայ մը, որ Արաբները կը կոչէին Պալատու Euphemius կը փախի Ափրիկէ, Արաբ էմիրէն օգնութիւն խնդրելու համար: Արաբները կ'ընծայեն այս օգնութիւնը և 827 Յունիս 15ին ցամաք կ'ելան ի Մազզարա (Mazzara) և կը յաղթեն Պալատայի, որ խոյս կու տայ իննա (=Castrogiovanni) և անկէ Քալուպրիա՝ ուր քիչ յետոյ կը մեռնի (E. W. Brooks. CMH. Գ. 135): Սարակիոնները 878ին Սիկիլիոյ ամէնէն գլխաւոր քաղաքին՝ Միրակուսայի կը տիրեն և վերջնականապէս հան կը հաստատուին, սակայն ասով չեն բաւականանար, և շարունակ կ'արշաւեն Իտալիոյ հարաւային գաւառները, երբ հիւսիսայինները ոտնակոխ կ'ըլլային և կը նուաճուէին հիւսիսէն եկող զանազան ժողովուրդներու կողմէ:

Բիւզանդիոն ի զուր կը մաքաւէր պահելու համար իր ստացուածքները և ասոր համար շարունակ կռիւի մէջ էր, անշուշտ Հայ գործադարներու հրամանին տակ գանուող Հայ զինուորներու ալ մասնակցութեամբ:

որոնցմէ մէկուն Բրոտոսպար Սմբատիկի յիշատակը պահած է պատմութիւնը: Ան 890ին տիրած է Ապուլիոյ և 891ին Իտալիոյ արեւմտեան ժողովները՝ Բենեւենտ քաղաքին, որուն չորս տարի կառավարիչը կ'ըլլայ (Ալիշան. Սիսական. 456): Իրեն կը յաջորդեն՝ իբր կառավարիչ Բենեւենտի՝ Գէորգ և Վարչակ (նոյն): Ուրիշ տեղեկութեան մը համաձայն, Սմբատիկ կը մեռնի 892ին և չի կրնար շարունակել իր աշխարհակալութիւնները Իտալիոյ մէջ (Հ. Կ. Տէր Սահակեան. Հայ Կայսերք Բիւզանդիոնի Ա. 239):

Վասիլ Բ. տեսնելով որ հիւսիսային Իտալիոյ տիրապետութիւնը վրասանգուած է, փոխանակ Ռովեննայի՝ Պարին կը դարձնէ արեւմտեան կայսերական ստացուածքներու մայրաքաղաքը, ուր կը հաստատէ վարչական նոր կարգեր, որոնց համաձայն Իտալիա պիտի ունենար իբր փոխարքայ քաղաքի մը փոխանակ եփարքի:

Բիւզանդացիք, որ կ'ուզէին իրենց իշխանութիւնը տեւականացնել, երկիրին տիրապետութեան մրցակից միւս երկու ոյժերը՝ Արաբները և Հիւսիսային ժողովուրդները իրարու դէմ կը հանէին երբեմն, անոնցմէ մէկուն հետ զինակցելով ընդդէմ միւսին: Այսպէս ըրաւ, օրինակի համար, Վասիլ Բ., որ Արաբները դրամով իրեն կողմը շահեցաւ ազատօրէն կռուելու համար Գերմաններու դէմ, որոնց Օթոն Բ. կայսրը—որ ամուսինն էր իր քրոջ Թէոփանոյի—Իտալիան կը պահանջէր իբր ժառանգութիւն: Վասիլ Իտալիայէն բոլորովին պիտի վանուէր, Տարենտոնի մօտ իր կորուսած վեց ճակատամարտներուն հետեւանօք, եթէ Արաբները ճարտարութեամբ մը Օթոնը կռնակէն չզարնէին: Օթոն Բ. նոյնիսկ գերի ինկաւ Յունաց ձեռքը, սակայն կրցաւ խոյս տալ և ազատիլ (983ին):

Ինչպէս բոլոր Բիւզանդեան պատերազմներուն, նոյնպէս ասոնց խառնուեցան Հայերը: Այսպէս, 982ին կը յիշատակուի անունը՝ «Սերադիկո Մակեդոնիոյ, Թրակիոյ եւ Լոկոպատիոյ» (=Ապուլիա) Բրոտոսպար Սմբատիկոսի, որ ապահովարար տեղակալներէն մէկն էր Քաթափան (Catepano) Kaloeyr Delphinasi(*) որ գլխաւոր վարիչն էր 982—3 տարիներուն Գերման արշաւանքներու դէմ մղուած պայքարին (EB. Ա. 533-537—8):

Սմբատի վստահուած շրջանակին ընդարձակութիւնը, Պոլսոյ սահմաններէն մինչեւ Իտալիա, եթէ անուանական տիրադոս մը չէր, ցոյց կու տայ թէ անիկա որչափ կարեւոր դէմք մըն էր:

Իժմախտարար Բիւզանդացւոց ջանքերը վերջնական յաղթանակով մը չպսակուեցան, վասնզի Արաբները որ անոնց օգնած էին Գերմանները վանելու համար, իրենց դէմ ելան, և երբ 1009ին Պարիի ժողովուրդը սպաննեց Սարգիս զօրավարը, յարձակեցան և գրաւեցին քաղաքը և մեծ

(*) Պարիկ, որ Վաղ Փոկաթի ապստամբութեան անց 988ին երաւուարիս (Սկիւտար) առաջացող բանակին հրամանատարն էր կոյր պարիկ Նիկիփոս Փոկաթի հետ (EB. Ա. 698):

թուով գերիներ Սիկիլիա տարին: Յովաննէս Ամմերոփուլոս վերադրանք քաղաքը, իսկ Ասթոն զօրավարը՝ Պարիի բանակին հետ Տարենտոն քաղ Արաբներու դէմ, սակայն պարտուեցաւ և սպանուեցաւ:

Հայ Յովաննէս Կուրկուաս քաթափանը երբ մեռաւ, Վասիլ Բ. անոր տեղը, զօրաւոր բանակի մը գլուխը, Պարի ղրկեց Misardonites կոչուած Բրոտոսպարէր Վասիլ Արկիրոսը, որ Սամոսի սարաղիկոսն էր (Կեդրեմոս Բ. 457): Նոր Քաթափանը պաշտօն ունէր իր սաղմին մէջ խեղդելու Մեյլիսի ապստամբութիւնը: Իրեն կ'ընկերանար, իբր իր երկրորդը, Քեֆալանիոյ թեմին Սարաղիկոս Լեւոն Թոռնիկոս նոյնպէս Հայ զօրավարը, համանուն հոշակաւոր ընտանիքէն որ Kontoleon (=պղտիկ Լեւոն) կը կոչուէր իր կարճ կազմին համար: Երկու Հայ-Հոռոմ զօրավարները Իտալիա ցամաք ելան 1010 Մարտին, և Պարին գրաւեցին 1011 Յունիսին երկու ամսուան պայքարէ մը յետոյ (EB. Բ. 543—5):

Վասիլ Արկիրոսի կը յաջորդէ իբր քաթափան իր եղբայրը՝ Լեւոն, որ քիչ յետոյ կ'սպանուի (1015 Նոյեմ.), և տեղը կը ղրկուի 1017 Մասիոն վերոյիշեալ բրոտոսպար Լեւոն Թոռնիկոսը (EB. Բ. 562—3), որ հաւանօրէն դարձած էր Պոլիս, վասնզի Lupus protospathaireի Քրոնիկը որ միայն տեղեկութիւն կու տայ այս բարձր պաշտօնատարներուն անկը որ միայն տեղեկութիւն կու տայ այս բարձր պաշտօնատարներուն անկը որ միայն տեղեկութիւններուն վրայ, կ'ըսէ թէ «ցամաք ելաւ» 1016ի գարնան ի Պարի «ղրկուած ճեպընթաց կերպով կայսրէն ըլլալու համար Քաթափան»: Ատիկա կը կրէ առաջին հարուածը Մելիտի դաշնակիցներուն Մինչեւ իր երթալը, հոն էր Լեւոն Փատեմոս, որուն եկաւ միանալ Լեւոն Թոռնիկոս պարտուեցաւ և իր տեղակալը սպանուեցաւ: Նորմանացիք կ'ստուգեան տէր դարձան և երկու տարի իշխեցին: Երրորդ պարտութենէ մը յետոյ (1017ի ամառ), «քաթափան» Թոռնիկոս ետ կոչուեցաւ իբր անկարող և վատ (EB. Բ. 566—7):

Սակայն իր յաջորդները իրմէ աւելի կարող չհանդիսացան պահպանելու համար Բիւզանդեան կայսրութեան Իտալական թերակղզիին վրայ ունեցած ստացուածքները:

Արաբները հարաւին և բարբարոս ժողովուրդները՝ հիւսիսային Իտալիոյ մէջ տեղաւորուեցան և հոն գտնուող Հայերը կա՛մ տեղացիներու հետ խառնուեցան կա՛մ այլուր տեղափոխուեցան: Սակայն հաւանական է թէ միշտ Հայ և Հայ-Պաղարկեան առեւտրականներ, ինչպէս Զ. և Է. դարերուն, նոյնպէս նաեւ Է.—Փ.Ա. դարերուն Իտալիա, Տրանսա և Սպանիա երթեւեկ ունեցած և հոն տեղերը հաստատուած և ապրած են:

Ալիշան (Հայ Վեցե. 14) կը խորհի իրաւամբ թէ Հայ զօրակոսներու և զօրավարներու հետ իրենց ազգականները և ազգակիցները կրնան ինչ եկած ըլլալ Իտալիա, ոչ թէ կուտելու այլ շահու համար, քանի որ Հայոց մէջ վաճառականութեան ոգին բնածին էր, և Հայաստանի և Իտալիոյ միջեւ առեւտրական յարաբերութիւններ գոյութիւն ունէին այն ատեն, վասնզի Վենետիկցիք մինչեւ Դոնին կ'երթային, երբ այդ քաղաքը

հական բնակութիւնը, որ յաճախ յիշուեցաւ, ինչպէս կը թուի, սոսկ ժամանակաւոր չէ եղած Իւմմեանց շրջանին: Ս. Բարսեղի ճառերուն թարգմանութիւններէն երկաթագիր օրինակի մը մէջ, Գրիստոսի ծննդեան վերայ գրուած ճառին թարգմանութենէն ետքը՝ հետեւեալ ծանօթութիւնը գրուած է «Դաւիթ թարգման Տարօնացի» զնառս զայս յետոյ դարձոյց ՚ի յունէն ՚ի հայ բարբառ, ի Դամասկացոց քաղաքին, հրամանաւ Համազասպայ Կուրապաղասի Մամիկոնեից տեառն» (Հայկ. հին դպրութեան պատմ. 1897 Վենետիկ. 455): Այս յիշատակարանը, եթէ կեղծիք մը չէ, կը հաստատէ թէ Դամասկոսի մէջ Հայեր կային, որոնցմէ ոմանք նոյնիսկ մտաւորական գործերով կ'ըզբաղէին: Նոյն առնել կը հաստատէ թէ Դամասկոս պէտք է գացած ըլլայ, նաեւ Համազասպ Մամիկոնեան, (որդի Դաւիթի) հաւանօրէն Թոքեդորոս Ռշտունիի հետ՝ որուն փեսան էր ինքը (Սեբրիու ԼԵ.) և թերեւս Դամասկոսի մէջ իր շահած բարեկամներուն շնորհիւ, իր աշակերտը մահէն (656) — որ Դամասկոս պատահեցաւ — յետոյ, ինքն կարգուած է Իշխան Հայոց: Այս անձն, որուն մասին չէ ուզած արտայայտուիլ Ղեկնդ, ըստ Սեբրիուի էր «այր առաքինի յաւնեայն դէմս, բայց ընտանեացն եւ ընթերցասէր եւ ուսումնասէր, եւ ոչ քս հայրենի ազգին վարձ եւ կիրք հրահանգաւ զիմուտական վարժից, ոչ մտեալ ի նակաւս, եւ ոչ տեսեալ զդէմս բռնամտաց»: Մամիկոնեանց այս ժառանգը, որ զուրկ էր աշխարհապաշտանակ բարքերէն և սովորութիւններէն «սկսաւ նախանձել ի բնութիւն հայրենի տանն քաղաքեան» (Սեբրիու ԼԵ.) և հակառակ անոր որ իր երեք զաւակները և եղբայրը պատանդ էին Դամասկոս, 656ին ապրտամարտութեան մը զլուխն անցաւ և տեսնուեցաւ (վերը 212) թէ ինչ ազատի մը պատճառ եղաւ և երկիրը ինչ սոսկալի պատուհասի ենթարկեց: Համազասպի պէտ ուրիշներ ալ ապահովաբար գացած են Դամասկոս, և ինչպէս անորը — որուն դիպուածով կը տեղեկանանք — հաւանօրէն չէ նշանակուած:

Դաւիթ Պաղտատի մէջ գտնուող Հայոց, անոնց թիւը կրնայ ենթադրուիլ թէ աւելի շատ պէտք է եղած ըլլայ, վասնզի Աբբասեանց տիրապետութիւնը աւելի տեւական եղած է:

Հոն, ինչպէս կը հետեւեցաւ, Ասորիները կը մատակարարէին Հայոց կրօնպէտքերը, վասնզի Գր. Արթուրեանի երբ բանաին մէջ կը մտնի (վերը 349) «բարի խոստովանութեամբ», «քրիստոսասէր» անձեր, խալիֆային կը դիմեն մարմինը ստանալու համար և ոչ միայն պատուով կը թաղեն, այլ «զոր մահուան սրբոյն ամենայն Ասորեստանի տեսնալէն անտաւ ուրախութեամբ» կը մեծարեն (Քովմաս Արժ. 182): Նոյնպէս երբ Սմբատ Խոսրովանող Սպարապետը և Վասպուրականի Տիգրանը՝ Հոնիփսիմէ հոն մեռան (վերը 350), «քաղեցան փառաւորագէտ քս օրինի քրիստոնէից յուխե՞ Յակոբից, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, եւ զխոստովանողական անուն սօսցեալ փառաւորեցան յերկրի» (Արժ. 234): Յովհաննէս Կաթ. (165) նոյնիսկ կը հշտէ անոնց թաղուած վայրը որ էր «վկայարան սրբոյն Դանիէի Մարգարէի»: Հաւանական է որ Պաղտատի մէջ կային մեծ

թուով Նեստորականներ, որոնց հետ սակայն Հայերը երբեք պիտի չուզէին կրօնական յարաբերութիւն ունենալ:

Դուրս Խալիֆայութեան կեդրոնէն — ուր կերպով մը հարկադրեալ համախմբուած էին — Արաբ պետութեան միւս մասերուն մէջ ալ Հայեր հաստատուած են թէ ոչ, հետազօտելի խնդիր մըն է:

Մեր պատմագիրները այնքան սեւ գիծերով ներկայացուցած են Արաբ տիրապետութեան շրջանին դէպքերը որ, անոնց ընթերցումը այն սպաւորութիւնը կը թողու թէ այդ շորս դարերու ժամանակամիջոցին Հայաստան դժոխքի մը վերածուած էր և Հայերը անկէ գունդագունդ կը հեռանային քրիստոնեայ կայսեր երկիրները ապաստանելու համար: Ասիկա ճիշտ չէ:

Ընդհակառակը, մասնաւորապէս իրենց կրօնական ազատութիւնը պահուելու իրաւունքով — քանի որ Բիւզանդացիք չարաչար կը հալածէին Հայերը կրօնական պատճառներով — շատ մը Հայեր Արաբ կայսրութեան սահմաններուն մէջ ապրիլ նախամեծար համարած են, և ապահովաբար կարեւոր դիրքեր գրաւած են կայսրութեան ինչ ինչ մասերուն մէջ:

Արաբ ցեղին արշաւող, նուաճող և պատերազմիկ նկարագիրը, և մանաւանդ թափառիկ ու հաստատուն բնակութեան զուրկ պատկանելի անցնելու նկատի առնելով, շատ զարմանալի է իրենց աշխարհակալութեանց անմիջապէս յաջորդող շրջանին իսկ, իրենց բարձր քաղաքակրթութեան մը հասնիլը, գիտական ու գրական մեծ արգասիքներ ցոյց տալը և գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուածներ կառուցանելը: Մասնաւորապէս թափառիկ ժողովուրդներու մէջ ամէնէն անմշակ մնացած գեղարուեստին՝ ճարտարապետութեան զարգացումը, և անապատներու մէջ լարուած առժամեայ վրաններու և առաւաւելն հիւղակներու յաջորդող պայտաններու ճոխութիւնը և մզկիթներու ճարտարապետական նուրբ ոճը, ինչպէս նաեւ գիտութեանց և դպրութեանց համար տարուած խնամքը, յափշտակող, աւարառու և կեղեքող ցեղին յանկարծական կերպով քաղաքակրթ ազգի փոխակերպուելը կը մտնան ինչ, ինչ որ անըմբռնելի է: Հետեւաբար գաղտնիք մը կար կամ թաքուն ուժ մը, որ փթթող այդ բարձր քաղաքակրթութեան թուիչը կուտար: Անիկա հին ու պատկանելի քաղաքակրթութեանց որորանը հանդիսացող, այնքան կրօնքներու յղացման վայրը եղող, այնքան դուանական նրբութիւններ և աղանդաման վայրը եղող, այնքան դուանական նրբութիւններ և աղանդաշուած Հոսմի ուժին և Նոր-Հոսմի (Բիւզանդիոն) կրօնական հալածանքներուն տակ, Արաբական հովանիին ներքեւ իր մտածումի ազատութիւնը կ'ապահովէր և փոխադարձաբար ինքն ալ կը նպաստէր անոր փառքի և մեծութեան: Ոչ-քաղքեղանական քրիստոնեայ Հայոց, Ասորեաց և Եգիպտացոց և այլն հակակրթութիւնը ընդդէմ Յունաց, մեծապէս դիւրացուցաւ Արաբ աշխարհակալութիւնները, իսկ Արաբներու կրօնական լայնախոհու-թիւնը, որով քիչ անգամ հալածանքի ենթարկեցին Հայերը, Յակոբիկանները, Նեստորականները և Խալիֆաները — այն ալ խալիֆաներէն ոմանց

Թարկուած են: Այս առթիւ կը յիշուի թէ դժբախտ Ասորիները մեկ խումբերով գաղթած են մահմետական երկիրներ (Գեղցեր. 270): Անոնց հետ ապահովաբար Հայեր ալ պէտք է գաղթած ըլլան, վասնզի նոյնքան առեւտրի էին, մանաւանդ որ, ինչպէս Գեղցեր կը դիտէ, ընդհանուր առմամբ տէրութիւնը կորսնցուցած էր հետեալներուն տաճած համակրանքը:

Բոլոր այս տեղեկութիւնները որոնք առհասարակ օտար աղբիւրներէ քաղուած են, ցոյց կու տան թէ Արաբ տիրապետութիւնը ինչպէս Հայաստանի նոյնպէս նաեւ անկէ դուրս հայաբնակ դարձած երկիրներու, ինչպէս նաեւ իրենց իշխանութեան ենթարկուած այն աշխարհամասերուն մէջ ուր Հայեր հաստատուած էին նախապէս, չէ եղած ան որ ներկայացուցած են մեր պատմագիրները՝ կրօնական մօլդուանդութեամբ, բնաւ չտեսնելով անոր նպատակը կողմերը:

Արաբները՝ անժխտելի իրողութիւն է որ — հակառակ տիրող նախապաշարումին — շատ քիչ անգամ կիրարկած են բռնի կրօնափոխ ընելու գրութիւնը զոր Պարսիկներն ու Բիւզանդացիք այնքան շատ անգամ դորձադրեցին: Ասոր գլխաւոր ապացոյցը այն է որ, բոլոր կրօնական հալածանքներէն ճողպարիլ ուզողները անոնց քով ապաստանած են: Եթէ Արաբ տիրապետութեան տակ Հայերը բռնի կրօնափոխութեան հարկադրուելու վտանգը նշմարէին, բնական է անոնց քով ապաստան պիտի չփնտռէին Բիւզանդական հալածանքներէն խոյս տալով, վասնզի ամէն պարագայի մէջ եթէ երկու կրօնքներուն մէջ ընտրութիւն մը ընել պէտք ըլլար, անշուշտ Հայերու նախընտրութիւնը դէպի Օրթոտոքսութիւնը պիտի ըլլար:

Արաբներու կրօնական լայնմտութեան երկրորդ կարկառուն փաստն է իրենց տարածուն կայսրութեան մէջ նախապէս գտնուած Հայերու, անվրդով իրենց կեանքը շարունակելը և իրենց գոյութիւնը պահելը: Երբ Արաբները Պարսիկ տէրութիւնը նուաճեցին է. դարուն կէսերը, Հայեր կային Շապուհ Բ. ի օրերէն սկսեալ փոխադրուած Միջագետքի, Ասորեստանի, Խուստանի, Վրկանքի և Սագաստանի մէջ:

Մանաւորապէս Միջագետքի, Ասորեստանի և Խուստանի մէջ Ե. դարէն սկսեալ կը բնակէին բաւական ստուար թուով գաղթականներ որոնց Քրիստոսափոր կաթողիկոս (539—545) զգուշացնող շրջաբերական մը գրած էր (վերը 202) և անձամբ ալ այցելած: Նոյնպէս տեսնուեցաւ թէ Սմբատ Բագրատունի 599—600ին կեդրոնական Ասիոյ մէջ, Թուրքաստանի և Դելհաստանի սահմանին վրայ, գտած էր Հայ գաղութ մը (վերը 202), որ իր գոյութիւնը պահած էր ըստ Ասողիկի մինչև ԺԱ. դարուն սկիզբը, ուր գրած է ան իր պատմութիւնը, վասնզի որոշապէս կը վկայէ թէ «կան մինչև ցայսօր վիճակ Սբոյն Քրիզոսի»: Ասիկա զարմանալի պէտք չէ թուի, վասնզի Արաբ տիրապետութեան տակ, այդ շրջանակին մէջ քրիստոնէութիւնը չէ ընկճուած, այլ աւելի զօրացած է: Ը. դարուն վերջերը Պարսիկ քրիստոնեաներու Պատրիարքը Տիմոթէոս Ա. (780—823) նոր թեմեր հիմնած է Պարսկաստանի այս հեռաւոր սահմաններուն

վրայ և քրիստոնէական քարոզութեան նոր ապարէզներ բացած՝ մինչև անգամ Հնդկաստանի, Թուրքաստանի, Չինաստանի և Եմենի մէջ (հմտտ. O. Braun. Ein Brief des Katholikos Timotheus. I. ի թերթին Oriens Christianus. 1901. 309—313 և Baumstark. Geschichte des Syrischen Literatur. 217): Մար Յիզաիբուզտ, Կուստանի երէցն և քորեպիսկոպոսը, որ 781ին Սի-Նգանֆուի նշանաւոր Նեստորական արձանագրութեան հեղինակն է, Բալխի երէցին որդին էր (հմտտ. J. Marquart. Osteuropaische Streifzüge. 283): Ըստ Հ. Ներսէս վրդ. Ակիմեանի (ՀԱ. 1931. 404), ասոնք կը հաստատեն թէ Չ. և յաջորդ դարերուն տարածուած էր քրիստոնէութիւնը, գլխաւորաբար Նեստորական քարոզիչներու կողմէ, Պարստանէութիւնը, գլխաւորաբար Նեստորական քարոզիչներու կողմէ, Պարստանէի հեռաւոր սահմաններուն վրայ, ուր նոյնպէս անարգել կրցած էին ապրիլ Հայերը՝ որոնք Պարսիկ տիրապետութեան շրջանին հոն հաստատուած էին: Ասողիկի վկայութիւնը ասիկա կը հաստատէ, մինչ ընդհակառակը Կիրակոս Գանձակեցի ժ. Գ. դարուն, հակառակ որ Ասողիկի Վրկանքի և Սագաստանի Հայոց մասին գրածները բառ առ բառ կ'ընդօրինակէ, կը ջնջէ մինչև իր օրը մնացած ըլլալու այդ բացատրութիւնը:

Ուրեմն պարզ է հետեւցնել թէ բարբարոս ժողովուրդներու արշաւանքներու ատեն անոնք ջնջուած էին, մինչ Արաբ տիրապետութեան բոլոր տեւողութեան (Ե. դարէն մինչև ԺԱ. սկիզբը) անոնք կը մնային ասիական Հայ և ուղղակի ընդհանրական կաթողիկոսին իրաւասութեան տակ:

Այս շրջաններուն մէջ Հայոց գոյութիւնը է. դարէն մինչև ԺԱ. դար պահուած ըլլալուն անուղղակի մէկ փաստն ալ կու տայ Յովհաննէս Կաթողիկոս իր պատմութեան մէջ: 926ին Բիւրականի բնակչութեան Նըսրի կողմէ կոտորուելուն նկարագրութեան մէջ կը յիշէ եկեղեցական նահապետներու անունները, որոնց կարգին «Երանելի այրն Ասուծոյ Սողոմոն, որ ի Սագասան աշխարհէ եկեալ բնակէր առ մեզ խստամբեր վարուի, եւ առաքինացաւ կարգով քաղաքավարէր ի մարմնի իբրեւ անմարմին, եւ զնա ի նմին ժամու գլխասեալ, ասուածապայծառ եւ անհաւելի լուսեղանգ պսակաւն պսակեցաւ» (Յովհ. Կաթ. 437):

Ասիկա կ'ապացուցանէ թէ հոն ժ. դարուն ասիական կար Հայ գաղութ մը որմէ Սողոմոն եկած էր Հայաստան, Յովհաննէս Կաթողիկոսին քով և անոր դասակարգին միաբանած: Յովհաննէս Կաթողիկոսի այս անցողակի յայտնութիւնը և Ասողիկի այդ թանկագին ասոյրը, կարեւոր փաստեր են, Հայոց Արաբ երկիրներու մէջ վայելած կրօնական ազատութեան, որուն վրայ կրնայ աւելցուել նաեւ առեւտրական ազատութիւնը, որ շատ դուրս է հետեւցնել Արաբ տիրապետութեան հանգամանքներէն:

Մանաւորապէս Բագրատունեաց թագաւորութեան օրերէն մնացած յիշատակարաններ, մանաւանդ քաղաքաց քաղաքն Անի, իր ճոխութեամբը և բազմածախս պերճանքովը, ցոյց կու տայ թէ Հայերը կրցած էին իրենց սեփական բարձր քաղաքակրթութիւն մը ստեղծագործել, և մանաւանդ անտեսական փայլուն գրութիւն մը ապահովել, ինչ որ երկիրին

կ'ըլլային նաև առաջառանակերով: Ապահովութեան համար, երթեկները կը կատարուէին կարաւաններով: Կառավարութիւնն ալ, ինչպէս կը թուի, հոգածու էր ճանապարհներու ապահովութեան: Աշոտ Ա. բնաշինչ ըրաւ Վանանդի, Գուգարքի և Ուտիքի մէջ երեւան եկած աւազակային խումբերը և առեւտրականներու կատարեալ ապահովութիւն ներշնչեց (Յովն. Կաթ. 177):

Այս պոզոսաներու եզերքին է անշուշտ որ նոր բազմաթիւ քաղաքներ ծագում առին և երկրագործական գիւղերը առեւտրական կեդրոններու վերածուեցան (Ասողիկ. Գ. գ. 147—8. կամ վերը 24) և ինչպէս Եագութ (1179—1229) (հր. Wüstenfelt. 1866—1873. Leipzig. Ա. 222) Արաբ աշխարհագիրը, Հայաստանի մէջ երկար ատեն ապրող՝ Իպն Վաղի՛ էլ էսպահանի անուն մատենագիրի մը տուած տեղեկութիւններուն վրայ հիմնուած՝ կ'ըսէ, Հայաստանի մէջ 118 իշխանութիւններ կային և ասոցմէ միայն Սահպ էս Սէրիբի (*) երկիրը 18,000 գիւղ կը պարունակէր, իսկ միւս իշխանութիւններէն իւրաքանչիւրը՝ 4000է աւելի կամ քիչ պակաս (Գէորգ Մըսրիսան. Իպն Խալիֆան. 16): Իսկ Իպն Տագի՛ և էլ-Գազվինի միայն Երասխի հովիտին մէջ 1000 փոքր և մեծ քաղաքներու գոյութիւնը կը վկայեն (ԺՈՂ. ՁԱՅՆ. Թ. 568): Յովհաննէս կաթողիկոս (176) կը պատմէ թէ Աշոտ Ա. բազմաթիւ քաղաքներ և գիւղեր հիմնած է, իսկ բոլոր ժամանակակից պատմագիրները բազմաթիւ քաղաքներու, ինչպէս Գուհինի (Թ. Արծ. 259), Արծնի (Լասիվեցցի. ԺԲ. 53 կամ վերը 24), Կարսի (Լաս. ԺԵ. 61), Մելիտինէի (Լաս. ԻԱ. 92), Անիի (Լաս. ԻԳ. 109), Կարնոյ (Պեդրեմնու. Բ. 577, W. Heyd. Geschichte des Levantchandelis im Mittelalter. 1879 Stuttgart. Ա. 45) և Պարտաւի (Michel le Syrien. Գ. 145) մասին գովեստներ կը շոյակն, իբր չէն և բարգաւաճ վայրերու:

Այսքան բազմաթիւ քաղաքներ և գիւղեր ունենալը՝ երկիրի մը համար, նշան էր բարգաւաճ առեւտուրի, ճոխ արդիւնաբերութեան և ծաղկեալ երկրագործութեան: Անժխտելի է ուրեմն, որ Արարական տիրապետութեան շրջանին Հայաստան կը վայելէր առաւելութիւններ և ունէր անտեսական բարօրութիւն: Ասոր համար էր անշուշտ որ Արարները Հայաստանը կը համարէին իրենց ամէնէն հարուստ շրջաններէն մէկը և Հայերը խիստ գո՛ էին Վասիլ Մակեդոնացի կայսեր ժամանակ իրենց նիւթական բարեկեցութենէն: Դէպի 875, Թովմա Արծրունի, (Գ. ԺԹ. 345) արձագանգ այդ ընդհանուր գոնուակութեան, կ'ըսէր թէ Վասպուրականի Դերենիկ իշխանին օրով քառաւելոյր եւ առասանայր օր քս օրէ առ օրեւոքիւն եւ խաղաղութիւն ասխարհիս, օրնել եւ քսածել եւ խնամել գաւթաբնս, եւ դադարումն լինէր յաւուրս սոքա հննից եւ ասպասակաց ի վե-

(*) Հս Գ. Մըսրիսանի «Գահու Յէր» կը նշանակէ: Եագութի այս բացատրութիւնը կը պատկանի ապահովարք Բագրատունաց թագաւորութեան երկիրին որ արգառն Հայաստանի մէկ մասին կ'իջեռ միայն:

այ երկրիս եւ քաղաքայնչապէս բարեմեւանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի եւ երկիւղ եւ կասկած եւ ոչ ուսեմ»: Ուրիչ պատմիչ մը, Ասողիկ (Գ. գ. 147—8), Աշոտի և Մմբատի Թագաւորութեան շրջանը կը ներկայացնէր իբր բարօրութեան և լիութեան շրջան մը (վերը 24), ուր նոյնիսկ մարդիկ կը յղփանային և անզգամութեան կը մղուէին:

Դուին քաղաքը, որ Թ. Պարուն Հայ վաճառականութեան ամէնէն կարեւոր կեդրոնը և ամբողջ հայկական արդիւնաբերութեան շտեմարանն էր, Թովմա Արծրունիէն (259) կ'որակուէր «տահասան ... մարդախիթ պարսպաւոր պասնիօֆ պատուարեալ եւ տուրեւառիկ վաճառականութեամբ, եւ ազգի ազգի պղծութեամբ յղփացեալ», ինչ որ կը հաստատէ թէ՛ ան, չնորհիւ իր առեւտրական ընդարձակ յարաբերութեանց հարստութեան, չնորհիւ իր առեւտրական ընդարձակ յարաբերութեանց հարստացած էր և իր բնակչութիւնը՝ «յղփացեալ», անշուշտ նիւթական ճոխութեան և բարօրութեան հետեւանքով: Հոն կը փոխանակուէին: Բիւզանդական—Պարսկական պատերազմներու շրջանին, ըստ Պրոկոպիոսի (De bello Persico Բ. 25 կամ վերը 69), Հնդկաստանի, Իբերիոյ, Պարսկաստանի և Քասպիական զանազան երկիրներու ապրանքները, վասնզի ան Կարինէն — Հոռմէական զանազան երկիրներու ապրանքէն, 8 օրուան ճամբայ էր: Անոր Բիւզանդական Հայաստանի մայր քաղաքէն, 8 օրուան ճամբայ էր: Անոր բնակչութիւնը այնքան հոծ էր որ, 893ի երկրաշարժին, մէկ անգամէն այնտեղ մեռան 70,000 հոգի (Արծ. Գ. իր. 184):

Հայկական առեւտրական խոշոր կեդրոն մըն էր նաև Արտանոյ, որ թէև աւելի փոքր բայց կարեւոր շահատան մըն էր Կովկասեան ազգութեւ աւելի փոքր բայց կարեւոր շահատան մըն էր Կովկասեան ազգութեւ րու համար (Wekhoucht. Descript. geogr. de la Georgie ed. Brosset. 117. Աբու el Kassim. 26): Հոն Հայ վաճառականները կը հանգիպէին Վրացի, Եգիպտացի, Ափխազ և այլ Կովկասեան ազգերէ առեւտրականներու: «Տրապիզոնի, Իբերիոյ, Ափխազիոյ եւ բոլոր օրջակայից ապրանքներ հոն կու գան: Այս ապրանքներէն կ'առնուէր կարելու տուր և սուրբ մը» (Գոստանդին Օրբանաճիւն. Վարչ. ԽԶ. 208):

Ինչպէս Արտանոյը հիւսիս-արեւմտեան, այնպէս ալ Պարտաւ, հիւսիս-արեւելեան ազգերու համար մեծ շահատան, առեւտրական կեդրոն և հրապարակ մըն էր: Պարտաւի շուկան փարոսախ մը երկարութիւն ունէր և կ'անուանուէր Կուրկիս, կամ աւելի ուղիղը՝ Կիւրակէ կամ Կիրակնորեսայ (էլ-Իսթախրի. Իպն Հաւալ. Եագութ):

Արդէն տեսնուեցաւ թէ Հայաստանի վաճառականութիւնը ունէ շրջանի այնքան մեծ փայլ մը չէ ունեցած (վերը 19—20), բայց Հայաստանի արտաքին աշխարհին հետ առեւտուր ունեցած է միշտ (վերը 83—84) և Բագրատունեաց շրջանին Հայաստանէն կ'արտածուէին հացահատիկներ, շինութեան փայտ, ոչխար, ձի, մետաղ, գորգ, ներկեր և այլն (վերը 23):

Աւելորդ է կրկնել թէ Հայաստանի արտաքին վաճառականութեան հիմը երկրագործութիւնը և խաշնարածութիւնն էին (վերը 85), որոնք շատ բարձր զարգացման հասած էին: Արարական շրջանին ալ, Յովհաննէս կաթողիկոսի և այլ պատմիչներու վկայութեամբ, երկրագործութեամբ

Թաւիշ հիւսուածեղէններ, ձեռակերտ զարդարուն վարագոյրներ, ծածկոցներ և կահաւորումի այլ առարկաներ կ'ողողէին Հայկական և օտար հրապարակներ: Նշանաւոր էին հայկական ոսկեհիւս կամ արծաթահիւս դետայակները կամ դիպակները:

Աւելի թանկագին կտորները մետաքսէ ոսկեհուռ էին, զորս կանայք կը նախշէին ասեղնագործ (Յովհ. Կար. 201): Այս ծաղկեւոր գունագեղ մետաքսեղէն ծանրագին կերպասները [արար. պուզետուց] կը մրցէին Բիւզանդական գործուածքներուն հետ: Մետաքս կերպասներու պատրաստութեան գլխաւոր կեդրոնը Դուինն էր (Laurent. 38):

Գալով Հայկական գորգերուն, համաշխարհային համբաւ ունէին: Անոնք, Թապարիստանի գորգերուն հետ կը զարդարէին բոլոր արքայական և իշխանական պալատներուն սրահները: Իսլամական աշխարհին մէջ այս գորգերը ծանօթ էին արմանի [հայկական] անունով: Եւսուաֆ, 920ին, իր Սալիֆային՝ Մուքթատիրին զրկեց Հայաստանէն գորգ մը որ 60 կանգուն երկարութիւն և 60 կանգուն լայնութիւն ունէր [Յ. Քօփճեան. ԺՈՂՈՎՈՒՐԻ ԶԱՅՆ Թ. 573]: Արաբներու Հայաստանէն իբր տարեկան տուրք գանձած նիւթերու ցանկին մէջ կար 20 գորգ (Laurent. 161):

Հայերու մէջ զարգացած արհեստ մըն էր նաեւ մետաղագործութիւնը: Հայերը կը շինէին գլխաւորապէս զէնքեր (Ղեւոնդ- 169): Նշանաւոր էին նաեւ իրենց պղնձեղէնները որոնք մինչեւ Քրակիա և Մակեդոնիա կը զրկուէին [վերը 268]: Հայ ոսկերիչները նաեւ շատ հմուտ էին իրենց արհեստին [Քօփճեան. ԺՈՂՈՎ. ԶԱՅՆ 573]:

Հայ առեւտուրը Բագրատունեաց օրով գործունէութեան շատ ընդարձակ հորիզոններ գտած էր իրեն համար, վաճաղի Հայաստան յարաբերութեան մէջ էր ուրիշ երկիրներու հետ և Հայերը՝ որոնց միտքի հորիզոնը ընդարձակուած էր, առեւտուրի համար նոյնիսկ կ'երթային հեռաւոր վայրեր: Հայոց առեւտրական նպատակով ամէնէն շատ յաճախած վայրերէն մէկը Պոնտոսը և մանաւանդ անոր կեդրոնը՝ Տրապիզոնն էր, որ արեւելքի և արեւմուտքի միջեւ Բիւզանդական արտածութեանց և ներածութեանց կեդրոնական հրապարակն էր և Բիւզանդական ապրանքներու ամէնէն մեծ վաճառատեղին՝ Սեւ ծովու վրայ: Հոն, տարին քանի մը անգամ մեծ տոնավաճառներ տեղի կ'ունենային (Masoudi. Prairies. Բ. 3): Ոչ միայն Եգերացի, այլ նաեւ բազմաթիւ Արաբ, Բիւզանդացի, Հայ, Վրացի և այլ առեւտրականներ կը հաւաքուէին այս հռչակաւոր շահատանը զանազան գնումներ և վաճառումներ ընելու համար (Էլ-Իսթախրի և Իպի Հաւազալ): Բիւզանդացիք անագին տուրք կ'աւելնէին այս տոնավաճառներու եկած ապրանքներէն [Կոստանդին Միրանաձին. Գայրուքեան Վարչ. 207. Heyd. Ա. 92. Journ. of the Asiat. soc. XIV. 2. 526. և Տօք. Քօփճեան. 1912 ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ 139]:

Առանց հաշուելու, վաղեմի ժամանակներէ սկսեալ, Պոնտոս հաստատուած հոծ Հայութիւնը, որ նոյնիսկ հայացուցած էր երկիրը [վերը 249],

Արաբական շրջանին, Հայ վաճառականներ ապահովարար շատ երթեւեկ ունէին Տրապիզոն, առեւտրական պատճառներով, վաճաղի այդ ուղիով էր որ Բիւզանդիոն կը ներածէին Հայ վաճառականները. դիպակներ, մետաքս կերպասներ և ոստենկար նախշուն կերպասներ (Istakhri. 188. Քօփճեան. ԺՈՂՈՎ. ԶԱՅՆ. 569) և փոխադարձաբար Հայաստան կը բերէին Բիւզանդական ապրանքները, որոնք Տրապիզոն կը բերուէին ծովի ճամբով և անկէ կը փոխադրուէին Կարին և անկէ Դուին: Այս պատճառով, Տրապիզոն և շրջակայքը, Է. դարէն մինչեւ ԺԱ. դար, Հայեր գաղթած են և կ'երևի թէ կրցած են պահել իրենց դաւանութիւնը, վաճաղի 1022ին Պետրոս Գետադարձ Կաթողիկոս երբ Տրապիզոն այցելեց, հոն գտաւ Հայ գաղթականութիւն մը յասուկ աղօթատեղիով [ԲԶՄԳ. 1901. 273. Տաշեան. Մայր-ցուցակ. 92]:

Դէպի հիւսիս արտածութեանց կայանն էր Արաբներու Պապ իւլ Ապպա կոչած քաղաքը (հիմա Տէրպէնտ), որ Կասպից ծովուն մօտն էր: Իսկ դէպի Արեւելք, հաղորդակցութեան ճամբուն վրայ կը գտնուէին Արտազիլ, Մարաղա, Ռայ և այլ մեծ շահատանները (Էլ-Իսթախրի. 183. Ibn Haukal. 241. Եագութ, Էլ-Գազվինի և այլն), ուր տեղերը շատ հաւանօրէն Հայեր հաստատուած պէտք է ըլլան: Նոյնպէս դէպի հարաւ Հայերը քանի որ մինչեւ Պաղատա կը տանէին Հայաստանի ցորենը և Սուրիա՝ երկիրին ձիերը և ոչխարները, կարելի է իրենք ալ կ'երթեւեկէին, և այսպէս իբր միջնորդներ Արեւելքի և Արեւմուտքի առեւտրական յարաբերութեանց և արտածիչները Հայաստանի զանազան արդիւնաբերութեանց, կը յարաբերէին մերձաւոր և հեռաւոր, բայց մանաւանդ բոլոր ասիական երկիրներու հետ (վերը 84):

Յոյց տալու համար թէ Հայ վաճառականը ի՞նչ ընդարձակ սահմաններ ունէր իրեն գործունէութեան իբր դաշտ Բագրատունեաց առան, ըսենք թէ անոնք նոյնիսկ Հնդկաստանի հետ կը յարաբերէին, վաճաղի առանց անոր դժուար է հաւատալ թէ Մմբատ Տիեզերակալ թագաւորը կարենար շքեղ «տալ շքի շնորհակց ընդ բիւր» մի գանձուց ... պըլօր (=բիւրեղեայ) կանքեղ» Անիի Մայր-Եկեղեցիին համար (Մատ. Ուսուսիցի 179):

Հայերու Արաբ տիրապետութեան ներքեւ զանուզ երկիրներու մէջ ըլլայ առեւտրական, ըլլայ այլ առիթներով հաստատուելուն փաստ կրնայ նկատուիլ նաեւ այս շրջանին Ատուրայ ծովեզերքը (Սուրիա) և Կիլիկիայ շրջանակին մէջ Հայերու աճումը (վերը 362—3), Ք. դարուն սկիզբը՝ 809ին՝ առաջին անգամ Հայերու Սիս հաստատուիլը (Սիսուան. 210) և համբաւաւոր Տարսուսի և պատմական Անտիօքի հայաբնակ կեդրոններ գտնալը, երբ արդէն Բիւզանդական սահմաններու մէջ Հայերը մեծ բազմութիւն մը կը ներկայացնէին: Սուրիա սահայն գօտեմարտի բոյն մըն էր Բիւզանդեան և Արաբ կայսրութիւններուն համար որոնք միշտ իրա-

(*) Լեօ քրնզ բիւրջ կը կարգայ զԼ. բիւրջ եւ քանիք արժէք կը նշանակէ 80,000 ոսկի (Հայկ. աղագրութիւն Բ. 444):

րու ընդհարած են, մանաւանդ Ը. դարէն յետոյ երբ Արքայական խալիֆայութեան մայրաքաղաքը Պաղատա փոխադրուեցաւ և Սուրիան ծայրագաւառ մը դարձաւ, մինչ իւրմեանք Դամասկոսը իրենց մայրաքաղաք ունենալով, ուժով ձեռքով մը կը պաշտպանէին այդ սահմանազուխը:

Թ. դարէն յետոյ, երբ Խալիֆայութիւնն ալ պառակտեցաւ, Սուրիա դարձեալ կռուախնձոր մը եղաւ, այս անգամ, թէ՛ իսլամ պետութիւններու և թէ՛ Բիւզանդիոնի միջեւ: Այսպէս, երբ 868ին Ահմէտ իպն Թուլուն ապստամբեցաւ Եգիպտոսի մէջ, և ինքզինքը անկախ Սուլթան հռչակեց, Եգիպտոս, հազիւ դարձած անկախ պետութիւն, ցոյց տուաւ իր փառասիրութիւնները զոր Փարաւոններու ժամանակ ունեցած էր և փորձեց տարածուիլ Նեղոսի հովիտին, ինչպէս նաեւ Ասիոյ մէջ: Նուպիոյ քրիստոնեայ թագաւորութիւնը դիմադրեց անընկճելի կորովով մը, բայց Պաղեստին և Սուրիա անոր ընծայեցին դիւրին յաղթանակներու դաշտ մը և Թուլուն գրաւեց մինչև Եփրատ տարածուող երկիրները (868—883):

Թուլունի մահէն յետոյ իր թոռներուն մէջ երկպառակութիւն ինտրով, Սուրիա և նոյնիսկ Եգիպտոս կրկին Արքայական տիրապետութեան ենթարկուեցան (905): Սակայն կարճ տեւեց այս նուաճումը. վասնզի Յաթիմեանք, 925ին, Եգիպտոսի մէջ ապստամբեցան և քաշի մը յաջորդական նուաճումներէ և ապստամբութիւններէ յետոյ, 968ին վերջնականապէս վանեցին Եգիպտոսէն Արքայականները և առանձին խալիֆայութիւն մը կազմեցին: Արաբներու այս ներքին պայքարէն օգտուելով է որ մասնաւորապէս Նիկեոսիոյ Փոկաս (963—969) և Չմշկիկ (969—976) նուաճեցին Կիլիկիան ու Սուրիան և յառաջացան մինչև Պաղեստին, սուրէ անցընելով, գերելով և վտարելով իսլամ բնակիչները (վերը 239—241 և այլն), և անոնց տեղը քրիստոնեաներ՝ ի մէջ այլոց Հայեր՝ գետեղելով: Այսպէս, Կիլիկիա և Սուրիա մեծ թուով Հայ բնակիչներ ունէին, երբ Յաթիմեանք վերջնապէս նուաճեցին Սուրիան և մինչև Կիլիկիա յառաջացան:

Արաբ խալիֆայութեան միութեան քայքայումը և Արաբ-Բիւզանդական փոփոխական յաջողութիւններով պայքարը, որուն գլխաւոր թատերավայրը Միջերկրականեան երկիրներն էին, Հայոց համար երկու նշանակելի արդիւնք առաջ բերին:

Ա. Արաբ կեդրոնական կառավարութեան տկարանալը պատճառ եղաւ որ պետութեան ծայրագաւառներուն մէջ կէս-անկախ ճորտ իշխանութիւններ կազմուին, էմիրներու և Ամիրաներու իշխանութեան տակ և խալիֆայութիւնը աւատական կազմ ստանայ: Այսպէս, վաղուց հայաբնակ շրջանակներու մէջ, ինչպէս Մալաթիոյ, Հալէպի, Նիքիտերտի, Ատրպատականի և այլնի մէջ երեւան եկան անկախ էմիրներ որոնք նոյնիսկ խալիֆաներու դէմ պայքարեցան: Այս երկիրներուն մէջ գտնուող Հայերը, օգտուելով անոնց տկարութենէն, անոնց լեռնային մասերուն մէջ իրենք ալ իրենց կարգին կէս-անկախ ճորտութիւններ ձեւացուցին և իրենց այդ

գիրքին շնորհիւ ապաստանի վայրեր հանդիսացան՝ մասնաւորապէս ԺԱ. դարէն յետոյ բարբարոսներու առջեւէն խոյս տուող Հայոց, որոնց մէկ կարեւոր մասն ալ ապաստան գտաւ, Բիւզանդական սահմանազուխին վրայ, Բիւզանդեան կայսրերու կողմէ կազմուած սահմանապահ ճորտ իշխանութիւններու (Ակրիս) երկիրները, որոնք լեցուեցան Հայերով, և ապիթ ընծայեցին այդ իշխանութիւններու ձերբազատման, թէ՛ Բիւզանդեան և թէ՛ Արաբ իշխանութիւններէն:

Բ. Յաթիմեան խալիֆայութեան գոյութիւն աննշույն հետեւանօք, Արքայական և Յաթիմեան խալիֆայութիւններու միջեւ բացուած պայքարը ընդարձակեց Հայ գաղթականութեան շրջանակը, և պատճառ եղաւ որ Հայերը փոխադրուին Պաղեստին և Եգիպտոս և բազմաան այդ տեղերու սակաւաթիւ Հայ գաղութները:

Արդէն տեսնուեցաւ թէ Հայերը կարեւոր դիրք մը ունէին Երուսաղէմի մէջ Բիւզանդեան տիրապետութեան տակ, սակայն այդ դիրքը վըրտանգուած էր Յունական անհանդուրժողութեան պատճառով, մասնաւորապէս 551ի Պոլսոյ ժողովէն յետոյ: Այնպէս որ, ինչպէս բոլոր Միաբնակ քրիստոնեաները՝ նոյնպէս նաեւ Հայերը՝ 636ին՝ Երուսաղէմի գրաւումով ազատեցան Յոյն եկեղեցիին ճշնումներէն և կազմակերպեցին իրենց համար առանձին հոգեւոր վարչութիւն, որ յետոյ Պատրիարքական տիտղոսն ալ կիրարկել սկսաւ:

Արաբները՝ միշտ կասկածոտ Բիւզանդացիներու նկատմամբ և իրենց աշխարհակալութեան շրջանին օգտուած Միաբնակներու դէպի Յոյները ունեցած ատելութենէն և դէպի իրենց ցոյց տուած համակրանքէն, ի սկզբան բարեացակամութեամբ վարուած են Միաբնակ քրիստոնեաներու հետ, որոնց մէջ Հայերը ամէնէն աչքառու տեղը կը գրաւէին:

Երուսաղէմ՝ Օմար խալիֆային (634—645) անձնատուր եղաւ 636ին, քառամսեայ պաշարումէ մը յետոյ, Սոփրոնիոս պատրիարքի միջնորդութեամբ ապահովագիր մը ստանալով: Եթէ հաւատ կարելի է. ընծայել Ապուլ Եամն էլ Օլէյմի(*) պատմագիրին (Ել Էնիս էլ Կելիլ Ֆի բարիխիլ

(*) Սաւալան եւ Սիոն վրդ. Մանուկեան (Սիոն. 1937. Հայ Երուսաղէմ յոգևած) այս պատմիչը կը յիշեց Ջէֆիէտափն կամ Ջէֆիէլափն անունով որ իբր թէ Յուրուսիւն Երուսաղէմի անուն գործ մը ունեցած է: Սաւալան կը յիշէ Շէլյու իւլ Համբալի անուն ուրիշ պատմիչ մը որ ճոյն է իր այլուր յիշած Ջէֆիէտափն հետ, ինչպէս կը տեսնուի: Աստուածատուր եպ. իր գործին մէջ իբր իր աղբիւրներէն մէկը կը յիշէ Ել Ել ձէլի արարացիին Պատմագիրին Երուսաղէմի եւ Գեբրաթի գործը, որ ըստ իրեն, կը կոչուի ճաւ Խարիս էլ Համալի կամ Համպլի:

Շեռնիս Գ. Գեորգ Կրուդեանի ինքնագրեան, ի վիճակի եմ բնուել թէ Երուսաղէմի եւ իր պատմիչներն ալ Եոս կարեւորաբար ընծայելով հանդերձ այս հեղինակին գործին, չեն կրցած ո՛չ իր անունը եւ ո՛չ ալ իր գործին անունը հիշող ճերմկայացնել: Իր բուն անունն է Ջէլեւտափն Ապաւերբահման պին Մուհամմէտ պին Ապաւերբահման էլ Օլէյմի կամ Ապուլ Օման Ապաւերբահման պին Մուհամմէտ Մուհիտափն էլ Օլէյմի էլ Յալափի էլ Համպալի եւ եղած է Երուսաղէմի գաղթ եւ կը պահպանէ Համպալի ազանդին: Ապրած է հին. 860—928 եւ Գր. 1456—1522 թուականին: Իր իրական անունն

նորոգեցին սրբավայրերը: Քր.ի 1000 թուականին, աշխարհի կատարածին կամ վախճանին սարսափը, Երուսաղէմ բերած էր ուխտաւորներու հսկայ բազմութիւն մը: Հարուստ և մեծափարթամ իշխաններ առատ նուէրներ կը բաշխէին սրբավայրերուն, անոնց նորոգութեան համար՝ տարսափած վերջին դատաստանի տանջանքներէն:

Աշխարհի վախճանը չհասաւ, սակայն Պաղեստինի քրիստոնեաները այդ օրերուն ենթարկուեցան անլուր դժբախտութիւններու, վասնզի Յաթիմեան էլ-Հաքիմ Պիւմրիլլահ (996—1021) Ազիզի որդին և յաջորդը, որ իր յիմարական և իրար հակասող հրամաններով նշանաւոր եղած է, չարաչար հայածեց քրիստոնեաները (*):

Գուլիէլմոս եպ. Տիւրացի կ'ըսէ թէ անկարելի է պատմել այդ ժամանակի հաւատացեալներուն կրած չարչարանքներուն տեսակները (Սաւալան. 284): Հաքիմ՝ Երուսաղէմէն կը հալածէ քրիստոնեաները և Արեւելքի կողմերը կը ցրուէ (նոյն): Անիկա նոյնիսկ իր յօրեղբոր՝ Որեատէս Պատրիարքին աչքերը հանել և Ս. Յարութեան տաճարը և ուրիշ եկեղեցիներ քանդել կու տայ 1007ին, վասնզի Միսրնակ և Երկաթնակ քրիստոնեայք փոխանակ իրենց դաւանարանական և ծիսական վէճերը մոռնալու և ինքնամփոփուելու այդ տարին պատահած Մուզաթիկին պատրուակով, իրարու հետ վէճի և կռիւի բռնուած էին: Այս առթիւ սուրէ անցուեցան նաեւ Ս. Յարութեան տաճարին մէջ հաւաքուած 10,000 քրիստոնեաներ (Ուռհայեցի. 53. Սմբատ Գուեսուսապլ 24—25): Այս դժնդակ փորձութեան ժամանակամիջոցին, Հայերը կը յաջողին ձեռք բերել հրովարտակ մը 1015 թուականով, որով Պալիֆան կը յայտարարէր թէ «Հրամայեցինք Մեսրոպ Եպիսկոպոսին՝ արեւայիսկոպոս ըլլալ Երուսաղէմի Հայոց վրայ, պատուով վերադառնալ հազարացիքն անոր եւ զայն վերաեստուչ կարգեցինք անոնց բոլոր կալուածներուն վրայ, եւ իրսն ու իր վանքերն ամեն նեղութիւն վերցուցինք, ո՛չ ոք թող համարձակի վանքերն ձեռքէն և ուրիշ բան պահանջել, եւ եթէ մէկը յանդգնի մեր հրամանին հակառակ օտրմիլ՝ պիտի պատժուի, արգիլուած է յանրաւի ծանրանալ վանքերուն վրայ՝ նորանոր օտրմիլ սահմանել կամ աւելցնել, անիրաւութիւններ ու զրկանքներ ընել: Ըստ իրենց կամքին թող փակեն ու բանան վանքին դուռը՝ եթէ որ ուզեն, եւ թող ոչ ոք հակառակի ասոր: Որչափ ասեմ որ վանքին միաբանները ուզեն՝ Մեսրոպ Եպիսկոպոսն իրենց վրայ օտր եւ իշխան թող ըլլալ, եւ եթէ որ չուզեն զայն, իշխանութենէն վար առնեն իրենց ազատ ընտրութեամբ եւ իրենց վաղեմի սովորութեան հաւատարմութեամբ: Ո՛չ ոք թող հակառակի այս հրովարտակին:» (Յ. Յովհաննէսեանց Առտուածատուր եպո. Պատմ. Երուսաղէմի Ա. 123):

Հաքիմի յաջորդին՝ Քահիրի (1021—1036) ատեն, քրիստոնեայք ժա-

(*) Իր կենսագրութիւնը որ Իպն Խալիֆան գրած է (Քր. Մատրան բարգմանած է իր գործին մէջ 101—106) կարողալ կը բաւէ գաղափար մը կազմելու համար իր արտաբերած մասին, որով անհաւաստակեօն միտ մը կը մասնագետնէ:

ժանկաւոր կերպով կը նպաստուորուին: Քահիր քրիստոնեայ կայսրերու հետ խաղաղութեան դաշինք կը կնքէ և կ'արտօնէ Ս. Յարութեան տաճարին նորոգութիւնը (1048): Իր մեծ մայրը՝ Մարիամ (Ազիզի կինը) և Կոստանդին Մոնոմախոս կայսրը, տաճարին նորոգութեան ծախքին համար զրամ կը հաւաքեն (Գուլիէլմոս եպ. Տիւրացի. Ա. Սաւալան. 292): Սակայն երկիրը կը գտնուէր անհաստատ վիճակի մէջ, վասնզի Յաթիմեանք և Արքատեանք իրարու հետ կը պայքարէին Երուսաղէմի տիրապետութեան համար և քաղաքը մերթ մէկ և մերթ միւս կողմին ձեռքը կ'անցնէր: Այս առկապան պայքարին մէջ Քահիր կը յաջողի 1062ին յառաջանալ մինչեւ Լաւոզիկէ, ուրկէ կը հրամայէ Երուսաղէմի բերդերը նորոգել: Քաղաքին քաղաքապետը այս շինութեան ծախքերուն համար կը կարտահարէ և յետին թշուառութեան կը մատնէ քրիստոնեայ ընկալուածները, որ Կոստանդին Դուկաս կայսեր կը դիմէ որպէսզի նիւթապէտ օգնէ: Կայսրը կը հաւանի, պայմանով որ Քահիր միայն քրիստոնեաներու թոյլատրէ իրենց ծախքով կառուցուած պարիսպներուն մէջ ընկելու ու համարձակ իրենց կրօնքը պաշտել: Պալիֆան կ'ընդունի այս պայմանները, առանց հարկերը շնորհելու և կայսրը Կիպրոսի հասոյթներէն կը հայթայթէ պահանջուած ծախքերը: Այսպէս, քրիստոնեաները կ'ամփոփուին Երուսաղէմի պարիսպներուն մէջ (Lebeau. Histoire de Bas Empire. գիրք 28):

Այս օրերուն, սակայն, երեւան կու գան Արեւելքի մէջ Սելջուկները և ամէն ինչ տակնուվրայ կ'ընեն: Տակաւին անոնք Պաղեստինի սահմանները չհասած, Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոս (1066—1105), 1067—8ին Երուսաղէմ կ'այցելէ (Ուռհայեցի. 326. Սամուէլ Աճեցի. 120. Վահրամ Բարբուցի և Վարդան Հայկազն ԲՁՄԳ. 1873. 268. Աղաւունի Միաբանք. 78—79): Քիչ յետոյ Սելջուկի Մելիքշահի (1072—1092) տեղակալներէն մին կը գրաւէ Պաղեստինը (Սաւալան. 294), ուր այս վայրերի ժողովուրդին կողմէ կը գործադրուին խժեթութիւններ, կողոպուտներ և կեղեքումներ, մասնաւորապէս ուխտաւորներու դէմ: Ասոնց արձագանքը կամ հակազդեցութիւնը եղան Պաղեստինի նորոգութիւնները: 1099ին Պաղեստինը մտան Երուսաղէմ, բոլորովին նոր շրջան մը բանալով Պաղեստինի պատմութեան համար:

Արաբական տիրապետութեան շրջանը, որ 636էն 1097 չորս դարերու ժամանակ մը կ'ընդգրկէ, հակառակ յուսալից սկզբնաւորութեան մը, նըպաստաւոր չեղաւ Պաղեստինի հայութեան և հայկական կրօնական հաստատութեանց համար:

Արաբներու Պաղեստին մուտքէն քիչ առաջ, Անաստաս վրդ.ի կազմած ցուցակին համաձայն, Հայերը հոն ունէին 70 վանքեր, մինչ անոնց իշխանութեան ատեն անոնց թիւը 15ի իջաւ, վասնզի Յոյները ընաւ առիթ չփոխացուցին գրաւելու համար Հայ վանքերը, ոեւէ պատրուակով և միջոցով: Հայ վանքերու անշքացման նպատեցին նաեւ Արաբներու հարձակումները: Հայ վանականները պահանջուած հարկերուն ծանրու-

Թիւնն ալ վրդովուեցաւ Արեւմտեան քրիստոնէութեան ընդդէմ Իսլամ-
ներու բացած արշաւանքներովը, որոնք Արաբները քրիստոնէութեան դէմ
գրգռելու հանգամանք ունէին:

Արաբ տիրապետութեան քիչ յետոյ Սելջուկեանք կը յաջորդեն և
հանգամանքները բոլորովին կը փոխուին:

* *

Արաբները երբ Եգիպտոսի կը տիրէին, ո՛չ միայն Եգիպտոս, այլ
նաեւ Սուտան և աւելի հարաւ՝ Կեդր. Ափրիկէի մօտերը և Նեղոսի աղբե-
րակաց շուրջը, Եթովպիա կամ Հապէշիստան, ամբողջովին քրիստոնեայ
էին, և կը գտնուէին ամէնքն ալ Աղեքսանդրիոյ աթոռին իրաւասութեան
տակ (*):

Քաղքեղոնի ժողովէն յետոյ, Արեւելեան ուրիշ ազգերու հետ Հապէշ-
ները Միազաւան մնացին և կապուած՝ Աղեքսանդրիոյ Խպտի պատրիար-
քութեան: «Հայերը եւ Խպտիները իբր հակաաղբեղանակաճներ միշտ կը
անցեր է նաեւ Հապէթիստան, որովհետեւ այդ երկիրը կրօնապէս ենթա-
կուած էր Խպտիներու պատրիարքին» (Բրօք. Տուրայէվ. ՀԱՅՐԵՆԻՔ. Բ. 1.
143):

Այսպէս, կը յիշուի որ Զ. դարուն Եւթաթիոս անուն Հապէշ տուրք
մը, որ Եթովպիոյ լեռներուն մէջ հռչակաւոր վանք մը և միաբանութիւն
մը հաստատած էր, կ'երթայ Հայաստան և հոն կը մեռնի (Յ. Նալբանդ-
եան. ԱՐԵՒ. 1935 Փետր. 15): Փոխադարձաբար է. և Ը. դարերուն Հայ
կրօնաւորները Հապէշիստան գացած և հոն կանգնած են Հայկական ե-
կեղեցի մը, վանքի մը շրջափակին մէջ (նոյն): Նոյնպէս կը կարծուի որ
եթէ ոչ մեծ թուով գոնէ սակաւաթիւ Հայեր Եգիպտոսի ճամբով Եթով-
պիա եկած են (նոյն), առեւտրական նպատակներով կամ կրօնական քա-
րոզչութեամբ, ինչպէս ուրիշ երկիրներ գացած էին: Անշուշտ այս յարա-
բերութիւններու հետեւանք է որ հայերէն գիրքեր թարգմանուած էին
Հապէշ լեզուին (Բրօք. Տուրայէվ. ՀԱՅՐԵՆԻՔ. Բ. 1. 143) և Ս. Գրիգոր
Լուսաւորիչ, Հաբիսիմէ և Գայիանէ կոյսերը կը տնուէին (նոյն) Ը.—Թ.
դարերէն առաջ, Հապէշ եկեղեցիին մէջ, թերեւս Խպտիներէն առնելով:

Այնպէս որ, անհաւանական չէ ենթադրել թէ Արաբ տիրապետութեան
շրջանին Ասորիքի, Պաղեստինի և Եգիպտոսի Հայերէն ոմանք, Եթովպիոյ

(*) Քրիստոնեայ եղած էր Եթովպիա 340—341ին Տիւրացի Մետոպիոսի եւ իր ազ-
գականներուն՝ Փրամանթիոսի եւ Եփեսոսի միջոցաւ, որով զի ինկած էին Հապէթներու
ձեռք՝ երբ կը դառնային Հնդկաստանէ: Առօցմէ Փրամանթիոս, որ Հապէթներ կը կոչեմ
Քէաթիէ-պէտէեան (Լուսաւորիչ) Ս. Արամատէն ձեռնադրեալ առաջին եպիսկոպոսը
եղած է Հապէթ եկեղեցիին: Ե. դարուն վերջեր Աւետարանը կրկին փառագլուծ
իջնեակ արքայ միջոցով, որով հաւանաբար Ասորիէն եկած էին, խուսափելով Քաղի-
զանական պայտրներէ (Բարգէճ Եպ. Կիլիկեան. Գրական Յարեցոյց. 1929. 60):

քրիստոնեայ Միազաւան երկիր մը ըլլալէն հրապուրուած գացած ըլլան
հոն Նոյնպէս կարելի է խիստ հաւանական համարել որ Պաղեստինեան քա-
րոզիչներ թափանցած ըլլան այս հեռաւոր երկիրը, ուր ժԱ. դարէն ա-
ռաջ, կը յիշուի թէ այցելած է Եւտոփիոս անուն Հայ եպիսկոպոս մը,
իւր աշակերտներուն հետ միասին, կրօնական առաքելութեամբ (Բրօք.
Տուրայէվ. ԱՐԵՒ. Թ. 1269. 1923 Ապրիլ 23): Նման առաքելութիւններ
աւելի առաջ և վերջը կրնան կատարուած, և նոյնիսկ առեւտրականներ
յանդգնօրէն հոն թափանցած կրնան ըլլալ, նկատի ունենալով Հայոց ձեռ-
ներէցութիւնը, որ մինչեւ Հնդկաստան կը տարածէր թէ՛ իր կրօնական
և թէ՛ իր առեւտրական նախաձեռնութիւնը:

Արդարեւ, ինչպէս տեսնուեցաւ (վերը 101—102, 139—140), Հայերը
չառ հին ժամանակներէ սկսեալ յարաբերութեան մէջ եղած էին Հնդկաս-
տանի հետ, և Հայ կամ Քաղդէացի վաճառական մը՝ Քովմաս Գանակ,
թերեւս Պաղեստին մը ըստ Gibbonի (The Decline and fall of the Ro-
man Empire. 1913. Ե. 54—55), Արաբական շրջանին, 780ին հոն հասած
էր (վերը 140) և քրիստոնէական վարդապետութեան նորոգիչը եղած էր
Հնդկաստանի մէջ (Journal Asiatique. 1834 London. 475): Նոյնպէս տես-
նուեցաւ [վերը 375] Բագրատունեաց շրջանին, երբ Հայաստան խաղա-
ղութեան և բարդաւաճման շրջան մը կը բոլորէր, Հայ վաճառականներ
Հնդկաստանի հետ յարաբերութիւն կը մշակէին: Անիի Մայր Եկեղեցիին
համար «ի Հնդկաց, ընդ բիւր մի գանձուց, երկոսասան լիւր» կշիռով բե-
հաւար արուած բիւրեղեայ ջահը (Ուռ. 179), ասոր մէկ փաստն էր: Դժբախ-
տաբար, աւելի մանրամասնութիւններ չկան:

* *

Հարաւսկողմեան այս երկիրներէն դուրս, դէպի հիւսիս կը տարած-
ուէին ուրիշ շրջաններ, ուր նաեւ Հայերը պէտք է գաղթած ըլլան Յայտ-
նի է որ Հայաստանի հիւսիսային կողմը մինչեւ Կովկասեան լեռներուն
ստորոտը ապրած են Հայոց հետ ամենասերտ յարաբերութեան մէջ եղող
ժողովուրդներ, որոնց բնակավայրին և մեր Հայերնիքին սահմանները
յաճախ իրարու շփոթուած և բնակիչները իրարու խառնուած են:

Ասոնցմէ Հայոց մերձաւորագոյն են Աղուանք. որոնք կը բնակէին
Կասպից ծովուն արեւմտեան եզրերը, այժմեան Շիրուան և Տաղիստան
քաւաններուն մէջ, մինչեւ Տէրպէնտ, ուր կը վերջանայ Կովկասեան շրջ-
թան՝ իջնելով դէպի Կասպից ծով: Անոնց երկիրը Հայաստանի քաղաքա-
նուած, ձուլուած Հայոց հետ որ, դժուար է անոնց երկիրը գաղթաւոր
մը համարել: Նոյնպէս մեզի դրացի և մերձաւոր ժողովուրդ մըն էին
Վրացիք, որոնք կը բնակէին Կովկասեան լեռնաշղթային ստորոտը Սեւ
ծովու արեւելեան եզրերէն մինչեւ Աղուանից աշխարհ տարածուած երկ-
րամասին մէջ: Անոնք, ինչպէս տեսնուեցաւ (վերը 136 և 204), շատ մը

սահմանային գաւառներու մէջ Հայոց հետ խառն, քով քովի կ'ապրէին, և իրենց երկիրին զանազան ոչ-սահմանային նահանգներուն մէջ ալ ամենահին ժամանակներէ սկսեալ Հայեր հիւրընկալած էին (վերը 205):

Հաւանական է որ եթէ Վրացիք եւս Աղուանից պէս կրօնական միութիւնը պահած ըլլային Հայոց հետ, երկու ազգերը իրենց բնակակցութեան հետեւանօք իրարու հետ ձուլուած պիտի ըլլային, բայց 608ին Վրացիները Քաղքեղոնականութեան յարելով՝ Բիւզանդական եկեղեցիին ազդեցութեան ենթարկուեցան, և հակառակ անոր որ Հայերը և Վրացիները իրենց տեւական շփումներուն հետեւանօք չզաղրեցան իրարու վրայ ազդելէ, սակայն իրենց առանձին գոյութիւնը պահեցին:

Արաբները երբ Հայաստանի վրայ արշաւեցին, ինչպէս բացատրուեցաւ (վերը 205), Վրաստանի մէջ Հայերու կարեւոր թիւ մը արդէն կ'ապրէր, թէեւ շատ կասկածելի է որ անոնք անվրդով մնացած ըլլային, քանի որ կրօնական բաժանում առաջ եկած էր երկու ժողովուրդներուն միջեւ:

Հայ եկեղեցիին հակաքաղքեղոնական դիրքը պատճառ մըն էր որ Հայերը բախումներ և բուռն վէճեր ունենային Վրացիներու, ինչպէս Յոյներու հետ, և Վրաստանի Հայերէն շատեր, ինչպէս Բիւզանդեան երկիրներու մէջ պատահած էր, հարկադրուէին Քաղքեղոնականութեան յարելու: Այս վէճերը նոյնպէս առիթ տուին որ շատ մը Հայեր, որոնք ակնկալութիւններով կամ համոզմամբ, այդ դաւանանքին յարած էին իրենց Մայր-Հայրենիքին մէջ և այս պատճառով իսկ հալածուած՝ Հայադաւաններէն, ստիպուէին հեռանալու երկիրէն և մեծ մասամբ գաղթելու Վրաստան, որուն Հայաստանի սահմանակից գաւառներուն մէջ բնակող հազարաւոր Հայերը, կրցան բաւական ատեն պահել իրենց ազգային լեզուն և աւանդութիւնները, բայց հետզհետէ ձուլուեցան Վրաց ժողովուրդին մէջ, երբ իրենց բնակավայրերը՝ Վրաց քաղաքական իշխանութեան տակ անցան և Վրաստանի մաս կազմեցին (Բրոֆ. Ն. Մառ «Արկաուն» Մոնկոլական կոչումը Բրասոնեաներու՝ Հայ-Քաղքեղոնականներու հարցին կապակցութեամբ, ՎիՉԱՆՏԻՅԱԿԻՅ ՎՐԵՄԵՆՆԻԿ. Պետերսպուրկ. XII. (1906) 17—24. (ուսերէն) և ՀԱՅՐԵՆԻ ՏԱՐԵՑՈՅԸ. 1938. 56 և Սարուխան Վրասան եւ Հայերը. ՀԱ. 1932. 579): Այս Վրացած Հայերու կարեւոր շրջանները եղած են Կախէթի մէկ մասը, Գուգարք նահանգին Գլարշք գաւառը և ամբողջ Տայք նահանգը կամ Ճորոխի հովիտը (Ն. Մառ. Գոյն):

Արաբները 642ին Հայաստանէն անցնելով արշաւեցին նաեւ մինչեւ Գուգարք և մինչեւ Կովկասեան լեռնաձորները և արեւելեան Վրաստանը իրենց տիրապետութեան ենթարկեցին, բայց արեւմտեան Վրաստան աննուաճ ձևաց մինչեւ 732, Մրուան Բ. խալիֆային ատեն:

Վրաստան, սակայն, իր աշխարհագրական դիրքէն օգտուելով, շուտով իր անկախութիւնը գտաւ, 861ին, շնորհիւ Բագրատունիներուն, որոնցմէ Վասակ՝ որդի Աշոտի և եղբայր Սմբատ սպարապետին (Ղևոնդ. 144, 146)

իր մասնակից 774ի Հայկական ապստամբութեան, Արեւելի ճակատամարտին մէջ [775] երբ Հայք կը պարտուին, կ'ապաստանի Վրաստան, վրէժ-խնդրութենէ խոյս տալով և հոն՝ Գլարշք—Տայքի մէջ կը հիմնէ Արտասխնդրութենէ խոյս տալով և հոն՝ Գլարշք—Տայքի մէջ կը հիմնէ Արտաստայի իշխանութիւնը: Ասկէ կը սերին Արտաստայի Բագրատունիները (Յոյն Մարկուարդ. Վրական Բագրատունեաց ծագումը. Թրգ. Հ. Մ. Հապոզեան. 1913 Վիէննա. 101—150), որոնք մերթ Բիւզանդացուց և մերթ Արաբներու գերիշխանութիւնը կ'ընդունէին և իբր ամիրապետին աւատառուները՝ Հայաստանի իրենց ցեղակիցներուն քաղաքականութեան կը հետեւէին և ձեռք կը բերէին կէս-անկախութիւն մը: Նոյնպէս Սպարի մէջ, որ Բագրատունիներու հին բնագաւառն էր, Բագրատունի իշխանութիւնն որ Բագրութիւն առաւ, վասնզի Թէոփիլոս կայսրը դէպի Սաղաթք կատարած զոյութիւն առաւ, վասնզի Թէոփիլոս կայսրը դէպի Սաղաթք կատարած իր արշաւանքին միջոցին, գաւառին տանուտիրոջ, Աշոտ Բագրատունիի (որդի Շապուհի որ մեռած էր 823—824ին պատերազմի մէջ և եղբորորդի Աշոտ Մսակերի) կու տայ ամբողջապապարիկ (Ասոդիկ. 144) տիրոջը, և զայն կը զարձնէ Բիւզանդեան կայսրութեան սահմանապահ իշխաններէն մէկը: Իր սերունդէն Իշխանիկ Բագրատունի, Բուզայի արշաւանքին ատեն, Բիւզանդացիներէն կ'առնէ Արամանեակ բերդը և իր քով ապաստան փնտռող Վասպուրականի Գուրգէն Արծրունի նախարարը կը հիւրընկալէ (Թովմա Արծրունի. 218):

Տայքի Բագրատունիներու նախահայր՝ Վասակի թոռը Աշոտ կ'ստանայ Վիրքը և Բիւզանդիոնէն կը պատուուի Գլարապաղատութեամբ (Վարդան. 79) և այսպէս ձեռք կը բերէ իր անկախութիւնը: Վրական Բագրատունիներ այսպէս նախ կ'իշխեն Վիրահայքի(*) մէջ և ապա իրենց իշխանութիւնը կը տարածեն բովանդակ Վրաստանի վրայ: Վրական Բագրատունիները ճորտերն էին Հայ կեդրոնական իշխանութեան որուն պետը, ոչ թէ իբր անուանական տիրոջս այլ իրաւամբ կը կրէր «Շահնշահ» (Արքայից Արքայ) պատուանունը:

Հայ-Վրական յարաբերութիւնները, որքան որ վրդովուած էին կրօնական պատճառներով, միշտ սակայն յարաբերութիւնները պահուած և երկու երկիրները շփում ունեցած են իրարու հետ, այնպէս որ, երբ Արաբները հարաւէն Հայաստան խուժեցին, հաւանական է որ շատ Հայեր ապաստան փնտռեցին Վրաստան, մանաւանդ մինչեւ 732, երբ դեռ անիկա կը մնար աննուաճ: Այսպէս, նոյնիսկ Արաբ արշաւանքներու սկիզբը, ինչպէս որ ներսէս կաթ. Իշխանցի 653ին Պոլիս խոյս տալէ յետոյ, երբ կը գառնայ Հայաստան, Տայք կ'առանձնանայ վեց տարի (Սեբիոս 232), կատարանայ Հայաստան, Տայք կ'առանձնանայ վեց տարի (Սեբիոս 232), կատարելի է որ Արաբներու հակառակորդ կուսակցութեան պատկանող նախա-

(*) Հայեր այս կոչումով կը հանդիպին իրենց այն սանսնագաւառը որ Վրաստանի եւ Հայաստանի մէջեղը կը գտնուէր եւ գոր թէ՛ Հայք եւ թէ՛ Վրացիք իրենց կը համարէին: Վրացիք զայն կը կոչէին Մէտիտք (Մէտիտքի = Վրացիներու բնակավայր) բայց Գաւ Սոմիտք որ կը նուանուէր Հայնոց (Սարախան. Վրաստան եւ Հայերը ՀԱ. 1932. 580):

բարներ եւս, իրենց հետեւորդներով ապաստանած ըլլան Վրաստան, այս է ուրիշ առիթներով, թէեւ մեր պատմագիրները այս մասին լուռ կը մնան, Միայն Ղուկոսը (170) կը յիշէ թէ Ը. դարուն վերջերը, Պէքեր և Հասան աստիկաններուն գործադրած բռնութիւններուն չհանդուրժելով, երբ Արտաւազը Մամիկոնեան (174ին կ'ապստամբի (տես. վերը 216) կուժայրի հարկանանք սպաննելով, «որ ինչ գտանք ի ձեռին նորա (հարկահանին) առեալ՝ համբառնայր ամենայն օամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց առխարհին, եւ քնդ նմա ամենայն նախարարք աբխարհիս»: Նշանակելի է որ պատմագիրը, Արտաւազի և իրեն հետեւորդներուն Հայ աշխարհէն Արարներէն հալածուելը պատմելէ յետոյ, կ'ըսէ թէ «նորա երթեալ պատճառքին յաբխարհին նգերացւոց եւ ստանայր անձամբ զիբխանութիւն անձին իւրոյ ի վերայ նգերացւոց եւ ի վերայ Վեոթոյ՝ որ են Վիրք» (Ղուկոս 170): Ուրեմն Վրաստանի և Եգեբրատանի մէջ Արտաւազը Մամիկոնեան իշխանութիւն մը ձեռք կը բերէր, իսկ իրեն հետ եղող նախարարները շատ հաւանօրէն հոն կը հաստատուէին, իբր ապահով վայր: Ինչպէս տեսնուեցաւ (վերը 389), անոնցմէ մէկն էր Վասակ Բագրատունի, որ հիմնադրեր եղաւ Արտանոյշի Բագրատունի իշխանութեան:

Նոյնպէս Յովհաննէս Պատմագիր կաթողիկոսը ինքն կը պատմէ թէ 915էն մինչեւ 922 եթէր տարի տեւող սովի միջոցին, երբ Աշոտ իր տէրութեան սահմաններուն մէջ արիական քաջութեամբ կը վանէր Սարահինոսները, կուռելով նաեւ ընդդէմ Գուգարաց և Վրաց որոնք «ապիրաս խորհեին զնմանէ», հալածանքներու վտանգներէն ինքզինքը զերծուցանելու նպատակով ապաստանած է Ատրնեբսեհ Վրաց թագաւորին մօտ, որմէ «բազում հիւրամեծաբարութեամբ եւ առասածնոց ռոնկօք» պատուաբերեցաւ (Յովհ. Կար. 332): Երբ իր դժբախտ և ցանուցիր հօտը սովի և քաղցի մահաշուկ տառապանաց ներքեւ ընկնուած և տասանորդուած ատեն, կաթողիկոս մը իր անձին փրկութիւնը կը փնտռէր Վրաստանի մէջ, ապա ուրիշներ որքան արդեօք հեռացան Հայաստանէն և ապաստանեցան Վրաստան, որ այդ միջոցին, ինչպէս կ'երեւի, Հայաստանի պէս սովի մասնուած չէր:

Ժ. դարուն, երբ Բագրատունեաց կեդրոնական թագաւորութիւնը, որ Շիրակի մէջ հաստատուած էր, կը տկարանար, վասնզի կը գոնուէր այն մեծ ճանապարհին վրայ ուրկէ սովորաբար կ'անցնէին բոլոր աշխարհները, կը զարգանային և կը զօրանային Վրացական իշխանները՝ հորաւային Ափխազիայի և Բագրատունիներու կրտսեր ճիւղը՝ Տայքի և Բասենի մէջ և այս վերջինները, հեռանալու համար արշաւող ժողովուրդներու այս անցքէն, կ'առիպուէին յառաջանալ դէպի Կովկասեան լեռնաշղթան, հոն փնտռելու համար իրենց ապահովութիւնը (Յ. Ջաւրեան Ուրուագիծ Վրասանի պատմութեան. ՅՈՒՍԱԲԵՐ. ԻԶ. տարի. թ. 136), որ զիւրաւ ձեռք չբերին, վասնզի Վրաստանի մէջ երկար ժամանակ կռիւներ մղեցին՝ մասնաւորապէս Ափխազիոյ տէրերուն դէմ, մինչեւ որ շարք մը պատահարներէ յետոյ, և շնորհիւ Էրիսթավա (=Իշխան) Մարուչիցէի քաղաքա-

կան ճարպիկութեան, յաջողեցան Ափխազիոյ, Քարթալինիայի և Բասենի տնջատ իշխանութիւնները միացնել Բագրատ Գ. Բագրատունիի մականին տակ (նոյն): Ասիկա որդին էր Քարթալինիայի Կիւրապաղատ Գուրգէնին, և ժառանգած էր նախ 989ին Ափխազիան իր մօրմէն, որ Ափխազեան իշխանուէի մըն էր և ապա 994ին՝ Բասենը տեղւոյն Կիւրապաղատ Բագրատ Բագրատունիի մահէն յետոյ: Այնպէս որ, երբ իր հայրը կը մեռնի 1008ին, իր անձին վրայ կը միանան Քարթալինիայի, Ափխազիայի և Սպերի իշխանութիւնները (Յ. Ջաւրեան նոյն), և կը հռչակուի թագաւոր Միացեալ Վրաստանի և կը զուռնայ հիմնադրեր Վրացական Բագրատունէր Վրաստանի և կը զուռնայ հիմնադրեր Վրացական Բագրատունէր արքայական հարստութեան (նոյն), որ անշուշտ իրեն յենարան ունէր Վրաստանի Հայ հոծ բնակչութիւնը որ Քիֆլիսի, ինչպէս նաեւ Քարթալինիայի և Կախեթիայի (Արեւելեան Վրաստան) հարաւային մասերուն մէջ գոյութիւն ունէր [Յ. Ջաւրեան. նոյն. թ. 184], այնպէս որ, այդ շրջանակները, մէջը առնելով Քիֆլիսը, որ իրենց տիրապետութեան ենթարկուած էր 645ին իսկ, Արարները ուղղակի Հայաստանի մաս կը համարէին:

Արդարեւ, իրենք որ Բիւզանդացւոց պէս Հայաստանը չորս մասի բաժնած էին, անոնց նման Ա. Բ. Գ. և Դ. Հայք անուանելով, բայց բոլորովին տարբեր սահմաններով, Բ. Հայքի մաս կը համարէին Վրաստանը և Կովկասեան լեռներու արեւմտեան ստորոտը (Իպլն Խորհատեպա. 93. Laurent. 300):

Վրացական ժամանակագրութիւնը՝ Քարթլիս Յիսովրէբա (=Վրասանի կեանք) գրեթէ նոյնը կը հաստատէ երբ կ'ըսէ թէ Արարները գրաւեցին Սոմխեթին [աւայաստան, անշուշտ Վիրահայք=Գուգարքը ակնարկելով] և Քիֆլիսը:

Նշանակելի է որ Հայ տարրը իր ոյժը նաեւ Վրաստանի մէջ ցոյց տուած է, ո'չ միայն երկիրին իշխանութիւնը ձեռք բերելով, այլ ծառայելով նաեւ երկիրին այլապէս: Անտարակուսելի է որ Վրաստան շատ բան կը պարտի Հայոց: Մասնաւորապէս անժխտելի է որ Վրական մտաւորական կեանքին և հին գրականութեան ստեղծողները և սնուցանողները Հայերը եղած են:

Վրական հին գրականութիւնը որ Ե. դարուն սկիզբ առած է, շնորհիւ Ս. Մեսրոպի, ծաղկած է Վրաստանէն դուրս, Երուսաղէմ, Սինա, Անտիոք և Սեւ լեռան Վրացական վանքերուն մէջ: Այս շրջանին Վրացիները կատարած են Աստուածաշունչի և եկեղեցական գիրքերու ասորերէնէ և հայերէնէ թարգմանութիւնները, որոնք թերեւս պատճառ եղած են Հայ լեզուին բառամթերքէն շատ բաւերու վրացերէնի փոխանցման:

Իսկ Ը. և Թ. դարերու, Վրական գրականութեան Բ. բեղմնաւոր շրջանը կը բացուի, մասնաւորապէս Վիրահայքի մէջ փթթում մը ունենալով: Այս շրջանին Վրացիք կը տիրէին այն գաւառներուն, որոնց Հայ ազգաբնակչութիւնը Քաղքեղոնական էր և Հայ եկեղեցիէն բաժնուած էր Վրացիք այդ տեղերու Հայկական նշանաւոր հին վանքերը, Իշխան, Շատ-

Նոյնպէս, կը յիշուի թէ Հուզէյֆա երեք արշաւանք ըրած է որոնց վերջինը Օսման խալիֆայի սպաննութեան տարին՝ 656ին (Իպն Խալսուն. Ը. 137. Մորքման. 68—69):

Այս միջոցին Աղուանից գահուն վրայ կը գտնուէր Ջուանչէր թագաւորը, որդին՝ Վարազ-Գրիգորի, որ տակաւին պատանի, գտնուած էր Յազկերտ Գ.ի (632—652) բանակին մէջ երբ ան կը կուռէր Արարներու գէմ (Կաղ. Բ. Ժբ.):

Պարսից պետութեան կործանումէն (652) յետոյ անիկա դարձած էր իր հայրենի երկիրը և երբ Կոստանդ Բ. (641—668) 652ին արշաւած էր Հայաստան անկէ վանելու համար Արարները, Ջուանչէր եւս հնազանդած էր անոր և իր հրովարտակով տէր հռչակուած զի սահմանացն Վրաց մինչեւ ի դուռնս Հոնաց՝ միահեծան նոխուրեամբ իբր սէր եւ մինչեւ ցգեսն Սրախս» (Կաղ. Բ. Իա.): Ասոր իշխանութեան շրջանին, հաւանօրէն 656ին, լսելով Արար տէրութեան մէջ ծագած խռովութիւնները, Սազիրք կ'արշաւեն դէպի հարաւ և կը մտնեն Աղուանից աշխարհը, սակայն Ջուանչէր թագաւորը կը յաջողի անոնց յաղթել և ձորոյ Պահակէն անդին քշել (Կաղ. Բ. Իգ.): Քիչ յետոյ անոնց թագաւորին հետ խաղաղութեան դաշինք կը կնքէ (Կաղ. Բ. Իգ.) և կը փետայանայ անոր Այս առթիւ կ'ստանայ 120,000 ոչխար և 7000 ձի, և իրեն կը դարձուին՝ 1200 գերիներ:

Հոս նկատելի է որ պատմագիրը չ'ըսեր թէ Սազարներու թագաւորին աղջիկը քրիստոնեայ չէր:

Ջուանչէր կ'սպանուի 681—2ին և իրեն կը յաջորդէ իր եղբորորդին Վարազ-Տրդատ, որուն իշխանութեան առաջին տարին իսկ Վարազանի Հոներու իշխանը՝ Աղբիղութուէլ կ'արշաւէ դէպի Աղուանք, իր փեսին Ջուանչէրի սպանութեան վրէժը առնելու համար (Կաղ. Բ. Իգ. 368 և ՀԱ. 1912. 522): Վարազ-Տրդատ պատգամաւոր կը զրկէ Աղուանից Եղիազար կաթողիկոսը և իր հաւատարմութիւնը կը յայտնէ և ոճիրին իր անմասն ըլլալը կը հաւատէ: Եղիազար կաթողիկոս կը յաջողի իր առաքելութեան մէջ: Ժամանակակից պատմիչը հոս կը յարէ թէ ան «յաւելեալ եւ այլ բանս ասուածայինս զանգիտականս՝ մեծեցուցանէր զնա յերկիրը եւ ի սէրն Ասուծոյ, եւ նուանէր զմիսս նորա ի հաւատարմից եւ ի սէր անկախի» (Կաղ. Բ. Իգ. 362):

Ե. դարուն վերջերը և Զ.ի սկիզբները Հոներու լուսաւորութիւնը Հայոց ձեռքով Ասորի երկու պատմիչներու կողմէ քանի որ հաստատուած է (վերը 206), Կաղանկայտուացիի այս խօսքերը կը թուի թէ աւելի բընայթը ունին անոնց քրիստոնէութեան ընդունումին անգիտակ և անձանօթ չըլլալը հաստատելու. մինչ եթէ հաւատ ընծայուի անանուն հեղինակի մը, որուն գրութիւնը կցուած է Մովսէս Կաղանկայտուացիի գործին (տես. Բ. 1է—16է, 363—405), Սազարք գեռ այդ թուականին քրիստոնեայ եղած չէին, և 684ին լուսաւորուեցան, երբ Վարազ-Տրդատ իբր հաշտութեան պատուիրակ զրկեց, իբր թէ նոյն Եղիազար կաթողիկոսի հաւանութեամբ, զի հեռաբնակ աթաբնն Հոնաց, Մեծ Կուռնից (Արցախ) առաջնորդ իս-

րայէլ եպիսկոպոսը, որ Աղուանից, Լփնաց և Ճղբաց երկիրներէն անցնելով կը հասնի «ի դուռն Չողաց որ է մեծ ի Գարբանց» և անկէ Վարազան: Հոն կը դիմաւորուի Հոնաց իշխանէն և մեծ ընդունելութիւն կը գտնէ: Իսրայէլ եպոս. քաջալերուած ասկէ, կը յաջողի Հոները դարձի բերել (նոյն. 373—380), մասնաւորապէս շահիլ «առնն Ասուծոյ բարեմիթ իօխանն մեծագան Աղբիղու Թուէլ բանակօքն» (նոյն. 380) և անիկա կը շինէր «ի սեղիս սեղիս եկեղեցիս եւ մեծացուցանէր զպաթիւ քահանայից Ասուծոյ»:

Հոնաց իշխանը իր աւագանիին հետ խորհրդակցութեամբ կը փափաքի որ Իսրայէլ եպոս. Մնայ իրենց երկիրը որպէսզի «լուսաւորեսցէ» և ըլլայ «սեսուչ եւ վարդապետ կանգնելով ի Վարազան քաղաքիս ... գաբոռ հայրապետական» (նոյն 394) և այս առթիւ թէ՛ պատգամաւորներով և թէ՛ գիրով կը բանակցի Սահակ Կաթողիկոսի և Գրիգոր Մամիկոնեան Հայոց իշխանին հետ, ինչպէս նաեւ Աղուանից Եղիազար Կաթողիկոսին և Վարազ-Տրդատ թագաւորին հետ, որոնք կը հաւանին պարբերաբար Իսրայէլ եպիսկոպոսը զրկելու:

Այս պատմութիւնը եթէ ստոյգ է, պէտք է Իսրայէլ եպ.ի քարոզութիւնը նկատել երկրորդ լուսաւորութիւն մը կամ դէպի հիւսիս քրիստոնէական քարոզութեան նոր շրջանակի մը մէջ տարածումը: Սակայն տարիկա ալ շատ հաւանական չէ, վասնզի ժամանակակից պատմագիր Ղեւոնդ կը հաստատէ թէ նոյնիսկ այդ նոյն թուականին (684ին) ուր իբր թէ Իսրայէլ եպոս. իբր հաշտութեան պատուիրակ գացած է, անգամ մըն ալ Սազիրք կը փորձեն դէպի հարաւ արշաւել, և կը մտնեն Հայաստան [վերը 213]: Այս արշաւանքին մէջ «սպանին ի պատերազմին զիօխանն Գրիգոր [իմա՛ Մամիկոնեան] եւ բազումս ի նախարարացն եւ զիօխանն Վրաց եւ Աղվանից: Եւ ինքեանքն ասպատակ սփռեալ ի վերայ աթաբնիս Հայոց, առին զբազում զաւառս եւ զաւանս եւ առեալ ՁԳԵՐՈՒԹԻՒՆ զնացին յաթաբնն իւրեանց» (Ղեւոնդ. Գ. 35. հմմտ. նաեւ Ասողիկ. Բ. Բ. 101): Ուրեմն այս անգամ եւս Սազիրք, ըստ վաղեմի բարբարոս սովորութեան, Հայաստանէն կը վերցնէին գերիներու բազմութիւն մը զոր կը տանէին անշուշտ իրենց երկիրը:

Այս գերեվարութիւնը շարունակուած է նաեւ շրջանին տեւողութեան որչափ ատեն որ Արարները փորձած են նուաճել Սազարները և անոնց բնակակից ժողովուրդները և անոնք փոխադարձաբար՝ Արար երկիրները առպատակել և այս առթիւ Հայաստանէն անցած:

Արար պատմագիրներ, արդարեւ կը հաստատեն թէ գրեթէ երկարատեւ պայքար մը գոյութիւն ունեցած է Արարներու և այս բարբարոս ժողովուրդներու միջև: Այսպէս, 710ին Մէսլէմէ կը քալէ Արարապատկանի սահմանազուլիսին վրայ բնակող Թուրքերու դէմ և մինչեւ Տէրպէնս կը հասնի՝ բազմաթիւ քաղաքներ և բերդեր նուաճելով (Իպն իլ Արբի. Գ. 227 և Իպն Խալսուն. Գ. 71), բայց կ'երեւայ թէ Կովկասեան լեռները չ'անցնիր: Հաւանօրէն նոյն արշաւանքին կ'սկիսուի Ղեւոնդ (Զ.

64), նկարագրելով թէ ինչպէս Արաքները կը փորձեն նուաճել այս հիւսիսային ասպատակ ժողովուրդները: Համաձայն իր տեղեկութեանց, 716թ տակնները Միւսլիմ զօրավար կ'առաջանայ մինչեւ Տէրպէնտ և կը հալածէ Սազարները: Յետոյ կ'անցնի Ճորայ Պահակը [արդի Տէմիր Սան Շուրան] ասպատակ սփռեալ յաշարհն Հոնաց, եւ երբեք բանակէ մերձ առ Քարգու (նիմա Քարխու) քաղաքի Հոնաց: Իսկ բնակիչք աշխարհին իբրեւ տեսնի զհեճն, որ զարթոցեալ հասանէր ի վերայ նոցա, վաղվաղակի ազդ առնէին արեային Խազրաց որ անուանեալ կոչէր Խախան: Իսկ նորա առեալ ընդ իւր զբազմութիւն զօրացն եւ զամենայն յազբանդամ ճակատուցն իւր, որոց արիւթիւն զօրութեան հոչակեալ էր առ ամենայն ազգս, եւ եկեալ բանակէր մերձ առ նմա»:

Երկար կռիւէ յետոյ Միւսլիմ կը պարտաւորուէր եւ դառնալ «բողոքեալ զաղխս բանակին, զհարճս եւ զժառայս եւ զաղախնեայս եւ զայլ խառնիքս անճան» և հազիւ մազապուր կ'ազատի անոնց ձեռքէն: Եւ այսպէս «կորագլուխ» կը դառնայ «լի ամօրով» Հոնաց աշխարհէն (Ղեւոնդ. Զ. 64—65):

Եղիտ իպն Ապտ էլ Մէլէք [720—724] ամիրապետին օրով, 722—3թն, Արաք բանակ մը Սազարներու երկիրը կը մտնէ Հայաստանի ճամբով՝ Քապիպ Մէհրանի հրամանատարութեամբ: Սազարք Գրքնազաց ազգէն և Թուրքաց այլեւայլ ցեղերէն օգնութիւն գտնելով, Արաքներու դէմ կը ճակատին «Քարանց Մարգ» ըսուած տեղը: Պատերազմը արիւնուշա կ'ըլլայ և բազմաթիւ իսլամներ կ'սպաննուին: Սազարները անոնց բանակատեղին կը գրաւեն և ինչ որ կը գտնեն կը կողոպտեն (Իպն իւլ Աքիր. Ե. 44—45 և Իպն Խալսուն. Գ. 83): Սազարք այս յաղթութենէն քաջալերուած, մեծ բազմութեամբ Հայաստան կ'արշաւեն: Այն ժամանակ Ամիրապետը Հայաստանի ոստիկան կ'անուանէ Ճեռան էլ Հաքիմի (Իպն իւլ Աքիր. և Իպն Խալսուն. նոյն) և բաւական զօրք կը զրկէ անոր որպէսզի պատերազմի Սազարաց և այլ թշնամեաց հետ: Ճեռան գէպի Սազարաց երկիրը կը յառաջանայ և Սազարք Տէրպէնտ կը դառնան և հոն կ'սպասեն:

Ճեռան Կուր գետը կ'անցնի, և իրազեկ դառնալով որ իր բանակին մէջ գտնուող լեռնականները իր շարժումները կը մատնեն, խաղի մը կը բերէ զանոնք, և անակնկալ կերպով Տէրպէնտ անցնելով ասպատակ կը սփռէ Սազարներու երկիրին մէջ (նոյն): Ասպատակները ետ կը դառնան մեծ աւարով: Այն ատեն Սազարները իրենց արքայորդիին հրամանատարութեամբ Արաք բանակին վրայ կը յարձակին Բան գետին քով և արիւնուշա ճակատամարտ մը տեղի կ'ունենայ: Սազարները կը պարտուին և կը նահանջեն: Արաքները մեծ թուով գերի կ'առնեն և կ'առաջանան և կը հասնին Պուլկարաց երկիրը և զանոնք փախուստի կը մատնեն [723 Յոգոս.] (նոյն): Սակայն յաջորդ տարին՝ 724թն, Արաքներու բախտը կը փոխուի և շարաշար կը պարտուին: Ճեռան օգնութիւն կը խնդրէ և Հիշամ իպն Ապտ էլ Միւլէք խալիֆան [724—743], օգնութիւն կը խոս-

տանայ: Հաւանօրէն այս օգնութեամբ Ճեռան, 724—5թն, Ալանաց երկիրը կ'արշաւէ և Պուլկարաց երկիրէն անդին շատ քաղաքներ և բերդեր կը նուաճէ և բազում աւար կ'առնէ (Իպն իւլ Աքիր. Ե. 50): Կ'երեւի այդ միջոցին իբր Հայաստանի ոստիկան իրեն կը յաջորդէ Ալ Հարթ իպն էմք էլթայ [724—5], որ Հեզկիներու դէմ կը կռուի (Պելասիուրի Մորթման 30] և Ալանաց երկիրը արշաւելով հարկատուութեան կ'ենթարկէ զանոնք և հաշտութիւն կը կնքէ (Իպն իւլ Աքիր Ե. 54):

726 թուականին «դարձեալ ամբոխ յուզէր ի կողմանցն հիւսիսոյ, քանզի մեռաւ արեայն Խազրաց որ Խախանն կոչէին: Իբրեւ ետես մայր նորին որոյ անունն էր Փարսիթ, հրաման տայր զօրավարին որ Քարմազ կոչէր, զօր բազում գումարել ի վերայ աշխարհիս Հայոց: Եւ միաբանեալ էլանէին ընդ աշխարհն Հոնաց եւ ընդ Պահակն Ճորայ ընդ երկիրն Մախսաց, ասպատակէին յաշարհն Փայսակարան. անցանէին ընդ գետն Երասխայեկիրն Պարսից, աւերէին զԱրսաւէս եւ զԳանձակ Շահասուն եւ զգալեանն որ Արքիւրագուան կոչի, եւ զասպատար ոմն Փերոզ եւ զՌմիզդ Փերոզ: Եւ ի դիմի հարան զօրքն Իսմայիլի, եւ Ջառայ (Ճեռան) ոմն անուն զօրավար նոցա, կոտորէին զամենեւին ի սուր սուսերի, եւ ինքեանք ասպատակէին ի գաւառն Ջարեւանդ. եւ պաշարէին զամրոցն որ անուանեալ պասակէին ի գաւառն Ջարեւանդ. եւ զգերեալսն ի սրոյն բողոքին կոչի Ամպրիոսիկ. եւ զաղխ բանակին եւ զգերեալսն ի սրոյն բողոքին մերկ ի քաղաքն Արսաւէս: Եւ մինչդեռ մարտնչէին ընդ ամրոցն Ամպրիոսիկ՝ յանկարծակի գունդ մի ի զօրացն Իսմայիլացոց եւ զօրավար նոցին օրկ՝ յանկարծակի գունդ մի ի զօրացն Իսմայիլացոց եւ զօրավար նոցին եւ անուն զօրավարին նոցա Սեթ Հարաթի (=Սայիդ իպն Ալի Հարաթի ՂԱ. 1906. 359), անկանէր ի վերայ բանակի նոցա սակաւ արամբ, եւ զբազումս հարեալ սասակէր ի սուր սուսերի իւրոյ, եւ բափէր զգերեալսն ի սրոյ նոցա: Վաղվաղակի հասանէր գոյժ աղմկին առ զօրսն որ պահէին զամրոցն Ամպրիոսիկ եւ իբրեւ լուան զշարխն որ հասին ի վերայ նոցա, բողին զբերդն, զոր պաշարեալ էին, եւ հասին ի վերայ հինին որ եկեալ էր ի վերայ բանակին նոցա: Ռում ի դիմի հարեալ նոյն զօրքն՝ հարկաւորէ ի նոցանք բազում հարուածս եւ յափեակէին ի նոցանք զճեան դրօշին որ էր պատկեր պղնձի, զոր դեռ եւս ունին առ ինքեանս գունդ Հարաթեայ, իբրեւ զպատիւ քաջութեան նախնեաց իւրեանց: Եւ յետ այնորիկ առաքէ իօխան Իսմայիլի զՄալիմ՝ զեղբայր իւր բազմութեամբ զօրաց ի թիկունս օգնականութեան զնդին Հարաթեայ: Եւ իբրեւ եկն Մալիմ եւ երիկունս օգնականութեան զնդին Հարաթեայ: Եւ իբրեւ եկն Մալիմ եւ երիկունս օգնականութեան զնդին Հարաթեայ, եւ մարտ պատերազմին. քանզի ստացաւ յաղթութիւն Սեթն. զի զոմանս հարեալ էր ի կոտորման սրոյ, եւ զոմանս փախսական արարեալ, եւ զաւար եւ զգերութիւն բափեալ, բազում բռնամտնոք կոտորեալ խոտանգէր զնա, եւ կամէր սպանանել, այլ ոչ կոտորեալսն յոտանգէր զնա, եւ հրաման. քանզի ազգասոմն նորա յարուցեալ բարձրաբեր յանդիման տալ հրաման. քանզի ազգասոմն նորա յարուցեալ բարձրացուցանէին զաղաղակ: Եւ ոչ իօխեաց ի կամս անձին իւրոյ, այլ լուռ եղեալ արգելոյր ի յարհրդոց իւրոց, եւ դառնայր առ իօխանն Իսմայիլի» (Ղեւոնդ. Ը. 131—2):

Պելասիուրի կը հաստատէ ինչ որ Ղեւոնդ պատմած է ըսելով որ Հի-

չամ իպն Ապտ իւլ Մելէք ամիրայետը [724—743] Մէսւրամ իպն Ապտ իւլ Մելէքը Հայաստանի ոստիկան կը նշանակէ: Ասիկա իբր առաջապատ կը զրկէ Սայիտ իպն Ամր իպն Ասվատ Ալ-Հարաշին որ կը ճակատի Խազարներու դէմ և կը վանէ զանոնք Վարդանակերտէն զոր պաշարած էին: Խազարք կու գան Մէսմէա [=Մայմազ] [Ատրպատական]: Սայիտ կը պատրաստուի պատերազմի, բայց Մէսւրամ ոստիկանէն գիր մը կ'ստանայ որով կը յանդիմանուէր, որ իր ժամանումէն առաջ Խազարներու դէմ արշաւած էր և իրն էր գերագոյն հրամանատարութիւնը (Պելասնուրի. Մորթման. 32):

Մէսւրամ երբ Հայաստան եկաւ, ինքն առաջացաւ դէպի Կովկաս, նախ նուաճեց Վրաստանը և կոտորեց բնակիչները: Նոյնպէս նուաճեց Աղուանից [Շիրուանը], Մաքութներու, Լեզկիներու երկիրները և Տապարիստանը (Պելասնուրի. Մորթման 32. Սագուպի. ՀԱ. 1904. 53), և կը ճակատի Վարդանակերտի մէջ Խաքանին հետ (Սագուպի ՀԱ. 1904. 53): Մէսւրամ կը յաջողի Խազարները հալածել մինչև Պապ էլ Ապվալ [Տէրպէնտ] և կը գրաւէ այդ քաղաքը անձնատուութեան հարկադրելով հոն նստող 1000 տուն Խազարները, որոնց տեղ 14,000 Ասորիներ բնակեցուցանանց ոռոճիկ սահմանելով (ՀԱ. 1904. 53 կամ Մորթման 31—32):

Սագուպի, իր «Աբբասեաններու Պատմութիւնը» գործին մէջ, յաւելուածաբար կ'ըսէ թէ Խազարք ունէին 10,000 խլամ գերիներ, զորս կ'ազատէ Սայիտ. ինչպէս նաեւ կը տիրէ բազմաթիւ քաղաքներու: Այս պատերազմին մէջ կ'սպանէ նաեւ Խաքանին որդին, որուն համար սատարիկ կը գայրանայ Հիշամ և զինքը կը պատժէ (հմտ. նաեւ իպն իւլ Աքիր. Ե. 56):

Մէսւրամայի հետ էր այս պատերազմներուն մէջ Մրուան իպն Մուհամմէտ (728—734), որ յանկարծակի Խազարներուն վրայ հասնելով մեծ ճակատամարտ մը տուաւ և յաղթեց անոնց (Պելասնուրի. Մորթման 33):

Մէսւրամ կը շարունակէ թուրքերու դէմ պատերազմը և բազում աւար և գերի կ'առնէ 728—9ին (Իպն իւլ Աքիր. Ե. 58): Յաջորդ տարին անիկա կը պատերազմի դարձեալ թուրքերու դէմ Ալանաց Դրան մօտերը և Խաքանը կը պարտաւորէ ետ քաշուելու, յետոյ ինքն ալ կը քաշուի (նոյն. Ե. 61):

729—30ին թուրքերը կը մտնեն Ատրպատական և Հարիթ իպն Էօմէր, անոնց դէմ ելլելով զանոնք կը վանէ (Իպն իւլ Աքիր. Ե. 62):

730ին Ճեռան էլ Հաքիմի կրկին ոստիկան կը զրկուի Հայաստան և կ'արշաւէ Խազարներու երկիրը և անոնց Պէյտա քաղաքը կ'առնէ և ետ կը դառնայ (Իպն իւլ Աքիր. 62): Ասկէ գրգռուած թերեւս, Խազարք փոխադարձաբար հարաւ կ'արշաւեն և Արաքսը անցնելով Հայաստան կը մտնեն: Ճեռան էլ Հաքիմի անոնց դէմ կ'ելլէ և Խազարները կը վանէ Արապիլի կողմերը, սակայն զանոնք հետապնդած ստան ետօրեայ ճակատամարտի մը մէջ ինք կ'սպանուի և զօրքն ալ կը ջարդուի 730ին (Իպն իւլ Աքիր. Ե. 62):

Մրուան իպն Մուհամմէտ, որ իբր ոստիկան Հայաստանէն Ատրպատական փոխադրուած էր, Ալանաց դուռէն Խազարաց երկիրը կը մտնէ: Ապու Եէզրա Իււէյիմն և Տէրպէնտի մօտակայ լեռներու թագաւորները հոն կը զրկէ և Խազարաց երկիրին մէջ Սլաւաց գաւառն ասպատակելով՝ 20,000 գերի կը բերէ Կախէթ, սակայն անոնք ժամանակ մը յետոյ կը փորձեն խոյս տալ և կը ջարդուին (Պելասնուրի. Մորթման. 33):

Այս պատերազմներուն Հայերն ալ իրենց մասնակցութիւնը բերած են Արարներու կողքին, վասնզի Ղեւոնդ [144—145] կը պատմէ թէ 729—731ին, «զօր բազում գումարէր Մրվան՝ որդի Մահմէթի, եւ առնայ ընդ իւր զիօխանն Աոնս հանդերձ նախարարօքն եւ նոցին հեծելով: Եւ միախուր զիօխանն Աոնս հանդերձ նոնաց: Եւ մասուցեալ ընդ քաղաքին (*), բանեալ ասպատակեին յախարհն Հոնաց: Եւ մասուցեալ ընդ քաղաքին (*), հարին զզօրս քաղաքին եւ առին զքաղաքն: Իբրեւ զսինքն բնակիչք քաղաքին զհեցն որ զօրացաւ ի վերայ նոցա, եւ զի առաւ քաղաքն, բազում ի քաղաքացուցն զինչս իւրեանց խորոց ծովուն մասնէին եւ ծովավեժ խեղճամահ առնէին: Իսկ զայլ բազմութիւն եւ զաւարն առեալ զօրացն իսմայելի հանդերձ իօխանաւն Աոնսով՝ դառնայ Մրվանն ի կողմանցն Հոնաց մեծաւ յաղթութեամբ եւ բազում աւարաւ: Եւ իբրեւ հասանէր ի օհաստանն Պարսաւ՝ որոցէր ի գերելոցն եւ յաւարէն հնգեակս եւ առաքէր իօխանին իւրեանց Հեւայ (724—743), եւ զգացուցանէր նմա զիս յաղթութեանն:

Իսկ նորա ընկալեալ զընծայս աւարին՝ մեծապէս շնորհակալութիւն մատուցանէր Մրվանայ եւ զօրաց նորա, եւ նախաքէր զեղբայրն Մալիմ օրինակ բերելով զքաղութեամբ յաղթութիւնն Մրվանայ: Իսկ նորա պատասխանեալ ասէր. «Ինձ ոչ էր մարս պատերազմի ընդ մարդկան այլ ընդ Աստուծոյ, բայց նմա ընդ անբան անասունս»: Իսկ Մրվանն զմնացեալ աւարն հանդերձ գերելովք բաբէրէր զօրացն իւրոց. զայր մասն Աոնոյ եւ այլոց պատուաւոր նախարարացն, ծառայս եւ աղախնայս»:

Արաբ պատմագիրներ կը պատմեն թէ Խազարաց թագաւորը Մրուանի այսպէս յաճախ իր երկիրին մէջ ըրած ասպատակութիւնները տեսնելով և անոր զօրաց թիւն ու զօրութիւնը ստուգելով կ'ահաբեկի, և երբ Մրուան պատգամաւոր կը զրկէ և զինքն կը հրաւիրէ որ կա՛մ իսլամութիւնը ընդունի, կա՛մ պատերազմի իր դէմ, թագաւորը կը պատասխանէ թէ իսլամութիւնը կ'ընդունի, և կը խնդրէ որ մէկը զրկէ իրեն իսլամութիւնը քարոզելու: Մրուան կը կատարէ անոր խնդրոնքը և իր թագաւորութիւնը կը ճանչնայ Մրուան, որ ետ կը դառնայ՝ տանելով իր հետը բազմաթիւ Խազարներ, զորս Մամուրի և Շապիրանի մէջտեղը Լեզկաց երկիրին գաշտերուն մէկուն մէջ կը բնակեցնէ (Պելասնուրի. Մորթման. 34):

748—750 թուականներուն Արաբ կայսրութիւնը խռովութեան մատնուեցաւ: Աբրահանը 750ին տէր դարձան խալիֆայութեան, և Արաբ

(*) Քաղաքին անունը չէ տուած: Ըստ Շահնազարեան վրդի հաւանօրէն թարգմ:

տիրապետութեան դէմ ըմբոստացող բազմաթիւ երկիրները նուաճեցին Էայաստան անոնց շարքին մէջ էր (վերը 216) և նուաճուեցաւ Ապտալուս Ապու Ճաֆէր էլ Մանսուր ոստիկանին (750—752) կողմէ: Իսկ երբ Մանսուր ինքն Խալիֆայ եղաւ, Հայաստան զրկեց Եզրա իպն Ուսէյա առ Սալամի ոստիկանը (752ին), որ Ալանաց դուռն առաւ և անոր շուրջ գրե- նուող ցեղերը նուաճեց և հարկատու ըրու: Մանսուր հրաման զրկեց Ե- զրաի որ Խաղաւրաց թագաւորին հետ խնամութիւն և դաշինք կնքէ: Ե- զրաի այս հրահանգին համաձայն Խաղաւրներու թագաւորին աղջիկը (ըստ Ղեւոնդի քոյրը՝ Սաթուհը) կնութեան առաւ (Պեղատեղիի ՀԱ. 1904. 54), որմէ արու զաւակ մը ունեցաւ, սակայն ծննդաբերութեան ատեն մայր ու զաւակ մեռան: Խաղաւրաց թագաւորը սպանութենէ մը կասկածելով, Կուր գետը կ'անցնի և Արար տիրապետութեան տակ գտնուած բազմաթիւ գա- ւառներ ոտնակոխ կ'ընէ և աւարի տալով կը մեկնի (Ղեւոնդ Ը. 163— 164):

Պատմագիրը որ ժամանակակից է, այս առթիւ կ'ըսէ թէ «եւ հաւա- քեալ զբազմութիւն գերեսասնեացն եւ աւար բազում՝ դարձան ի բնակու- քիւնս իւրեանց:» Եւ ակնարկելով Եզրաի անկարողութեան, կը յարէ «եւ ոչ կարաց բնգոսախոս պատագրոսն այն համբառնալ զգլուխն իւր որ ու- ցեք զթխանութիւն հրամանատարութեան աօխարհիս Հայոց, այլ միայն զօղեալ իբրեւ զանբան կալով՝ ոչ ինչ բուեք նմա կործանումն աօխար- հիսն» (Ղեւոնդ. 164):

Այս միջոցին [752ին] Բիւզանդեան բանակները մինչեւ Կարին կը յառաջանան, Արարները՝ հազիւ կրնան խոռովուած երկիրը հանդարտեցնել Բիւզանդական բանակները վանելով, ինչպէս նաեւ բնակչութիւնը նեղող ասպատակներէն — որոնցմէ մէկ մասը Կովկասէն իջած Խաղիրներ էին — մաքրելով, թէեւ մինչեւ 775 Հայաստան շարժումի մէջ էր և հազիւ նուաճուեցաւ [վերը 216—217]:

Հարուն էլ Ռաշիտի խալիֆայութեան [786—809] ատեն, Հայաստանի ոստիկան կը նշանակուի 798—9ին Սայիտ իպն Սալիմի, որուն պաշտօ- նավարութեան շրջանին [799—800ին] Պապ-էլ-Ապվալի բնակիչները կ'ըմբոստանան և կ'ապստամբին կառավարիչին դէմ, վասնզի Սայիտ իպն Սալիմը այդ քաղաքին հրամանատարը՝ Նաջմ իպն Հաշիմը սպաննեց: Ա- սոր վրայ Հայուն (?) իպն ան Նաջմ կ'ապստամբի, Սայիտի կողմէ Պապ-էլ Ապվալի դրուած կառավարիչը կ'սպաննէ և Խաղաւրաց Խաղանին կը գրէ: Խաղաւրաց թագաւորը անհամար բազմութեամբ անոր օգնութեան կու գայ և կը յարձակի իսլամներուն վրայ, կը ջարդէ և անքիւ բազմու- քիւն մը գերի կը օսնի և մինչեւ Կուրի կամուրջը կը յառաջանայ, կը ջարդէ այրերը, կ'այրէ երկիրը, կ'սպաննէ կիները և աղաքը (Յագուպի- Բ. 515—519 հմտ. էք-Քապարի Գ. 648. և ՀԱ. 1912. 720):

Քանի մը տարի յետոյ, 806ին, Խաղիրք դարձեալ կ'արշաւեն Հայաս- տան և երկու ամիս կ'աւերեն Հայաստանը (Noel des Vergers. Arabie. 387), սակայն այս անգամ ալ տեւական նշանակութիւն մը չունենար ի-

րենց արշաւանքը: Ք. և ժ. դարերուն այլեւս անոնք չեն յիշուիր, կամ գէթ Հայաստան չեն արշաւեր, վասնզի Հայաստան այլեւս ինքնավարու- թիւն ձեռք կը բերէր և շրջակայ իշխաններուն, նոյնիսկ Ափխազներու թագաւորներուն հետ կը զինակցէր և զօրաւոր ոյժ մը կը ներկայացնէր, որ նոյնիսկ Արարները Հայաստանէն հեռացնելու կը յաջողէր Ալոտ Եր- կաթի ատեն, 920ին (վերը 221):

Բագրատունեաց շրջանին միայն 950ին և 988ին երկու անգամ կը յիշուի որ Ափխազները Հայաստանը աւրշուած են:

Ինչպէս օտար և Հայ պատմիչներու այս իրարու քով բերուած տե- ղեկութիւնները ցոյց կու տան, Հայաստան իր աշխարհագրական դիրքին բերմամբ ոտից կոխան եղած է Կովկասեան այս բարբարոս ժողովուրդ- ներէն որոնք միշտ ձգտած են այս լեւնաշղթային անցքերէն դէպի հա- րաւ խուժել, և ինչպէս տեսնուեցաւ, Հայերը պարտաւորուած են իրենց երկիրը պաշտպանել, երբեմն առանձին և երբեմն իրենց գերիշխան Ա- րարներու հետ գործակցելով: Եւ ինչպէս տեսնուեցաւ, այս ժողովուրդնե- րը հնօրեայ սովորութեան համաձայն մեծ թուով գերիներ տարած են Հա- յաստանէն իրենց երկիրները, ուր անոնք իբր քաղաքակիրթ ու քրիս- տոնէութեամբ լուսաւորուած ժողովուրդի մը զաւակները, կրօնածաւալ առաքելութեամբ և քաղաքակիրթիչ դեր մը կատարած են միանգամայն, այս կիսավայրենի ժողովուրդներուն մէջ քրիստոնէութիւն տարածելու աշխատելով, ինչպէս նաեւ ուսուցիչ հանդիսանալով ծառամշակութեան, երկրագործութեան և խաշնարածութեան, ինչպէս Ատորի ժամանակագիր- ներ կը հաւաստեն (վերը 206):

Նոյնպէս տեսնուեցաւ որ Հայերը սոսկաւորական շարժառիթներով, ինչպէս հին ատեն, նոյնպէս նաեւ Արարական տիրապետութեան շրջա- նին, այս խորհրդաւոր երկիրներուն մէջ երեւցած են: Էթ-Քապարի իր «Յիեզերական Պատմութիւն» գործին մէջ Կովկասեան լեռներու «զառի- վայրերուն վրայ բնակողները, բնիկ չեն» կ'ըսէ և անմիջապէս կը յարէ թէ «Հայերն ալ միայն անցուզառձ կ'ընեն» (Մորթման. 53): Ասիկա կը նշանակէ թէ է. դարուն դեռ, Հայերը Տէրպէնտէն անդին երթեւեկ ու- նէին, սպանովարար սոսկաւորական նպատակներով և ինչպէս տեսնուեցաւ (վերը 207 և 337), այս շրջանին առեւտուր ընելու կ'երթային մինչեւ է- թիլի [=Վոլկա] և Քամի գետնախառնունքի վրայ գտնուող Պուլկար քաղաքը:

Չարմանալի է որ Հայերը սկսեալ ամէնէն ուշ Ե.—Չ. դարերէն, քա- ղաքակիրթիչ դեր մը կատարելով այս բարբարոս ժողովուրդներու մէջ, կը կանխեն Արեւելքի քրիստոնեայ քաղաքակիրթութեան պաշտպան պե- տութիւն Բիւզանդեանը, որ հազիւ է. դարուն անոնց հետ յարաբերու- թեան կը մտնէ, երբ անոնցմէ հատուածներ, ինչպէս Պուլկարները, Ա- ւարները և այլն, կը մտնեն Պալքանեան թերակղզին և Խաղաւրները կը տեւաւորուին Սեւ ծովու հիւսիսային եզերքները և Խրիմ: Այդ յարաբե- րութիւնները նախապէս բացարձակ թշնամական էին. միայն Ը. դարուն

էր որ բարեկամականի փոխուեցան, երբ Յուստինիանոս Բ. կայսրը (685—695 և 705—711), ինքն Ը. դարուն առաջին տարիներուն (Գեղեցիկ 144) և Հեւոն Խաւարացի կայսրը (717—741) իր որդւոյն Կոստանդինի համար կնութեան առին «խաջան»ին [*] աղջիկները [Գեղեցիկ. 154], իսկ 710ին Փիլիպիկոս Վարդան Հայ զօրավարը երբ Քերսոն ապստամբեցաւ և Սաղարներու օգնութեան դիմեց, անցաւ ապստամբներուն գլուխը և նաեւ զէպի Պոլիս և գրաւելով քաղաքը, կայսր հռչակուեցաւ (Գեղեցիկ. 164 և վերջը 260): Իսկ իբր քաղաքակրթիչ և լուսաւորող հազիւ Ք. դարուն սկիզբէն է որ Բիւզանդացիք կը գործեն անոնց մէջ: Այսպէս, այդ դարուն սկիզբը առեւտրական յարաբերութիւններու կը մտնեն անոնց հետ [Գեղեցիկ 175] և նոյն դարուն կէսերը Քէոզորա Մամիկոնեան Հայ կայսրուհիին [843—857] հրամանով, ինչպէս Պուլկարներու նոյնպէս նաեւ Սաղարներու մէջ քրիստոնէութիւնը տարածելու համար Բիւզանդիոնէն ղրկուած քարոզիչներ կ'երեւին (վերջը 276), երբ Հայերը արդէն երեք հարիւր տարի առաջ այդ ժողովուրդները քրիստոնեայ ընել փորձած էին: Այսպէս, Հայերը, ինչպէս այլուր նոյնպէս նաեւ այս գրեթէ անծանօթ և խորհրդաւոր երկիրներուն մէջ ալ ցոյց կու տան իրենց յառաջընթաց և նախաձեռնարկ ոգին, որ նկարագիր մը դարձած էր իրենց համար:

Հայերը, այսպէս, է. դարէն մինչեւ ՅԱ. դարուն սկիզբը, այն ժամանակամիջոցին ուր իրենց Մայր-Հայրենիքը ինչպէս նաեւ գրեթէ ամբողջ ծանօթ աշխարհը կը գտնուէին Արաբ և Բիւզանդական ազդեցութեան տակ և էին պայքարի առարկայ, կը տարածուէին Ասիոյ, Եւրոպիոյ և Աֆրիկէի ամէն կողմերը, մասնաւորապէս ամէնէն կարեւոր կեդրոնները և կը կատարէին անփոխարինելի դեր մը, պատուաբեր ոեւէ ազգի:

Այս չորս դարերու տեւողութեան, որ այնքան նշանաւոր շրջան մըն է աշխարհի՝ բայց մանաւանդ քաղաքակրթութեան պատմութեան համար, մասնաւորապէս Բիւզանդեան կայսրութիւնը կը ներկայանար ամէնէն ընդարձակ և կարգաւորեալ պետութիւնը և կը մատուցանէր աշխարհի քաղաքակրթութեան պատմութեան ծառայութիւն մը որ իր նմանը չէ ունեցած բոլոր մարդկային պատմութեան մէջ, վասնզի ոչ միայն ժառանգորդը կը հանդիսանար հելլենական վաղեմի բարձր մշակոյթին, այլ մեծ պաշտպան և ախոյեան քրիստոնեայ քաղաքակրթութեան: Բիւզանդիոն, այդ փառաւոր պայքարին մէջ իրեն օժանդակ և ձեռնուռ ունէր Հայ ազնուականները իրենց հետեւորդ Հայ գաղթականներու զանգուածներով, որոնք իրենց Մայր-Հայրենիքէն կայսրութեան սահմանները ապաստանած՝ հոն կը վերցնէին գլխաւոր ծանրութիւնը այն պայքարին որ այդ կայսրութիւնը մղեց անվհատ խուժող բարբարոսներու և այլ լակրոն հեթանոսներու դէմ:

(*) Խալիպ կը Յօանակէ Երագուարո եւ այսպէս կը կոչուէին Աւարներու, Հոնաց եւ Սլաւներու վեհապետները ընդհանրապէս (Revue des deux Mondes. 1855 Ապրիլ 218): Ասիկա ալ պատճառ մըն էր որ այս ժողովուրդներ իբրեւ հեթանոսներ:

Արագարեւ, Հայերը Բիւզանդական կայսրութեան մէջ, ինչպէս տեսնուեցաւ, եղան շրջաններ որ ամենայն ինչ էին, և ունէին վճռաատու և տիրական դեր մը, վարիչները և ղեկավարները, և նոյն ատեն ամէնէն ազդեցիկ և գերիշխող տարրը հանդիսանալով դարերով այն պերճ ու շքեղ պետութեան, որ ազգային միաւոր մը չէր, այլ պետական ըմբռնում մը, ուր շատ մը ազգեր իրենց մշակոյթը ձուլած էին, Հելլենական քաղաքակրթութեամբ, քրիստոնեայ կրօնքով և Յոյն լեզուով միաւորուած:

Բիւզանդիոն, մասնաւորապէս մարդկային ամենաբարձր մշակոյթի վառարանը հանդիսացաւ և պաշտպանեց քրիստոնեայ քաղաքակրթութիւնը և ընկերութիւնը, անժխտելիօրէն Հայկական սակայն յանիրաւի «Մակեդոնական» որակուած կայսերական հարստութեան մը իշխանութեան տակ, 867էն 1056, շնորհիւ դիւցազնական մաքառումներուն իրարու յաջորդող Հայ կայսրերու և Հայ անզուգական զօրապետներու, որոնց թեւը և թիկունքը Հայաստանէն Բիւզանդեան երկիրներ անցնող ստուարաթիւ Հայերն էին: Այսպէս, Հայերը իրենց ներոյժ ոգիով, Փոքր Ասիոյ վրայ իրենց դրոշմած ցեղային և ժառանգական յատկանիշներով և իրենց թիւի առաւելութեամբ, այդ ցեղերու խառնուրդ պետութեան մէջ, ինչպէս տեսնուեցաւ, խաղացին առանձնայատուկ և նշանակելի դեր մը:

Բիւզանդեան քաղաքակրթութիւնը, որուն ստեղծագործութեան մէջ այնքան մեծ դեր կատարած էին Հայերը, կայսրութեան մեծ կեդրոնէն, Բիւզանդիոնէն՝ ուր այս շրջանին Հայը գերիշխող տարրը կը ներկայանար, իր ճառագայթները տարածած է բարբարոս ժողովուրդներու մէջ, անոնց վրայ դնելով դրոշմը իր մշակոյթին, որ գերիշխող եղած է բովանդակ Արեւելքի մէջ:

Այս լուսաւորութեան ճառագայթներու թափանցումին մէջ ալ նուազ գեր չեն կատարած գաղթական Հայերը, որոնք Բիւզանդական պետութեան սահմաններէն ալ դուրս ելած, և տարածած են իբր ջահակիրներ՝ գաղափարներ, որոնք Հայ միտքին յղացումներն էին և որոնք սերմերը ետ դան, ինչպէս տեսնուեցաւ, աշխարհի քաղաքակրթութեան պատմութեան մէջ ամենամեծ նշանակութիւն ունեցող շարժումներու, ինչպէս Վերանորոգութեան (Réforme) պէս բեղմնաւոր և մեծ շարժումի մը, որ անկիւս նաղարձ մը հանդիսացաւ տիեզերական պատմութեան մէջ:

Որքան արկածախնդիր բախտախնդրութիւնը, դիրքի ու հարստութեան հետապնդութիւնը, և առեւտրականին սուր հոտառութիւնը, նոյնքան նաեւ անշահախնդիր գաղափարապաշտութիւնը և գաղափարատարածութիւնը, Հայերը առաջնորդեցին երկիրէ երկիր, և ցեղին աշխարհագրական տարածականութիւնը արտասովոր ընդարձակութեան մը հասուցին, այս շատ շահագրգռական և նշանակալից ժամանակամիջոցին մէջ, ուր քրիստոնեայ աշխարհը իր գոյութիւնը վտանգուած տեսնելու մղձաւանջը ունէր և իսլամականը՝ կրօնական եռանդի արտակարգ թափով մը յանդգնութեանց գերազանց օրինակ մը կու տար և ամբողջ աշխարհը գրաւել կ'սպառնար:

Այս պատմական մեծ շրջանին Հայ գաղթականներու կը հանդիպինք մենք հիւսիսէն հարաւ բեւեռական շրջաններու պատկանող Իսլանա կղզիէն մինչեւ խաւարակոռն Ափրիկէի խորերը՝ Եթովպիա և արեւելքէն արեւմուտք՝ Գեղրոնական Ասիոյ տափաստաններէն մինչեւ ծայրագոյն արեւմուտք՝ Մարոք և Սպանիա, այն ատենուան ծանօթ աշխարհին միւս ծայրը, միշտ յանդուգն այլ պարկեշտ վաճառականի և խիզախ ձեռնարկուի դերի մէջ, նուիրուած օտեղծագործ աշխատանքի, եռանդուն գործունէութեան, նոր գաղափարներու քարոզչութեան և խաւարի մէջ թաղուած զանգուածներու լուսաւորութեան, գործեր ամէնքն ալ պատուաբեր ամէն կերպով իրենց անհատականութեան և իրենց հաւաքականութեան:

Հայերը, ուրեմն, այս չորս դարերու ընթացքին նաեւ ցոյց տուին իրենց ցեղին յատուկ և ժառանգական յառաջընթացութեան և նախաձեռնութեան ոգին, և խիզախ և յանդուգն նկարագիրը, յաւիտենական անկորնչելի յատկանիշերը Հայուն, որոնք զինքը ապրեցուցին իր Մայր-Հայրենիքին բարձրաբերձ սարերուն և խոր հովիտներուն մէջ, ինչպէս նաեւ անոր սահմաններէն հազարաւոր մղոններ հեռու, իբր գաղթական, մեծ մայրաքաղաքներու խառնարանին, շահաստան քաղաքներու ետուն ու կեանքոտ թոհուբոհին կամ անծանօթ և անկոխ աշխարհներու անյայտութեան մէջ, անեղծ պահելով իր ցեղային նկարագիրը, նոյնիսկ այն պարագային որ ան միջավայրին պահանջներուն անխուսափելի հարկադրանքին տակ, կը պարտաւորուէր զոհել իր ազգային և կրօնական ինքնութենէն շատ բան: Այսպէս, հողմակոծ նետուած և ցրուած աշխարհի զանազան մասերուն մէջ, թէպէտեւ օտար՝ հազիւ հաստատուած անհիւրընկալ փոքրու և հեռաւոր և անծանօթ աշխարհներու մէջ, Հայերը ցոյց տուած են կարողութիւններ և ձիրքեր, որոնք զիրենք առաջնորդած են բարձագոյն դիրքերու, երբ մանաւանդ անոնք զնահատուած և խրախուսուած են երկիրին իշխանութիւններուն կողմէ: Հայերը՝ բացի այն պարագաներէն ուր իրենց հաստատուած երկիրներու բնիկները ատելութեամբ վերաբերուած են իրենց հետ և ստիպած որ այլամերժօրէն միայն իրենց անձին օգուտ հետապնդեն, անձուիրաբար նուիրուած են իրենց նոր հայրենիքին՝ որ իրենցը նկատել սկսած են ժամանակի ընթացքին, և աննախանձաբար ծառայած՝ անոր մեծութեան և փառքին, և այսպէս կատարած են յաճախ պանծալի և փառաւոր դեր մը, ամէն կերպով սխրալի և պատուաբեր շիրենք ծնող ցեղին:

ՀԱՄԱՈՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս գիրքին աղբիւրը ծառայող շուրջ 350ի չափ հրատարակութիւններէն յաճախ յիշուած ոմանց համար գործածուած են հետեւեալ համառոտագրութիւնները:

Ազգ. = Ազգապատմութիւն Հայ Ուղղափառ Եկեղեցւոյն անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած: Մաղաքիա Արքեպ. Օրմանեան տպ. Կ. Պոլիս և Երուսաղէմ. 1912—1927: Երեք հատոր:

ԲԶՄԳ. = ԲԱԶՄԱՎԷՊ հանդիսարան, բանասիրական, գրական, գիտական, բարոյական: Վենետիկի Մխիթարեանց հրատարակութեամբ. 1843—1939, 97 տարի:

Գեյցեր = Համառոտութիւն Բիւզանդական կայսրերի պատմութեան. Հ. Գեյցեր. Գերմաներէնից թարգմանեց. Մեսրոպ վրդ. Տէր Մովսէսեան. Վաղարշապատ. տպ. Ս. Էջմիածնի. 1901:

ՀԱ. = ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ Հայագիտական Ուսումնաթերթ. Վիեննայի Մխիթարեանց հրատարակութեամբ. 1887—1939. 53 տարի:

Չամ. = Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ յամի տեառն 1784, ըստ աւանդելոց այլևայլ մատենագրաց. յօրինեալ ի Հայր Միքայէլ վրդ. Է Չամչեանց կոստանդինուպօլսեցւոյ, յաշակերտէ ամենապատիւ Տն. Մխիթարայ մեծի աբբայի Վենետիկ. 1784—85. երեք ստուար հատորներ:

Bussell = The Roman Empire from 81 to 1081. by F. W. Bussell. London. 1910.

CMH. = The Cambridge Medieveal History New-York. The Macmillan Company 1923. չորս ստուար հատորներ:

EP. = L'Epopee Byzantine à la fin du dixième siècle. Gustave Schlumberger. երեք ստուար հատորներ. հրատարակուած Բարիկ 1896—1905. տասնամեակի ընթացքին:

Gibbon = History of the decline and fall of the Roman Empire by Gibbon. London 1913.

IB. = Les Iles des princes. Le palais et l'Eglise des Blachernes. la grande Muraille de Byzance. par Gustave Schlumberger. 1925. Paris.

Laurent=L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquête Arabe jusqu'en 886. J. Laurent. 1919 Paris.

Michel le Syrien = Chronique de Michel Le Syrien. Patriarche Yacoubit d'Antioche (1166—1199). Editée pour la première fois et traduite en français par J. B. Chabot. 1890—1906. Paris. *Զորս հատորս*

Morgan=Histoire du peuple Arménien. Jacques Morgan. 1919. Paris.

ԾԱՆՕԹ.— Դիտելի է որ աղբիւրներու յիշատակութեան մէջ բնաւ տարի, հասոր, մաս, դպրութիւն, գլուխ, տպագրութիւն, եջ հայլն բառերը չեն գործածուած, և այսպէս մեծ տեղ խնայուած է:

